



ՍԻՒՆԵԱՑ ԱԾԽԱՐՀԻ ԲԵՐԴԵՐԸ

Թ-ԺԴ դարեր

Վրա Զարեան



Արա Զարեան
Վերականգնող ճարտարապետ

Արա Զարեանը ծնուել է Հռոմում, Յուլիսի 20-ին, 1956-ին: Յաճախել է Հռոմի Քրիստոֆորո Կոլոմբոյի անուան միջնակարգ դպրոցը իսկ 1963-ին ընտանիքով հայրենադարձուել է Խորհրդային Հայաստան, որտեղ Երեւանում՝ մէկ տարի առաջ, տեղափոխուել էր պապը՝ հայ մեծ բանաստեղծ, գրող Կոստան Զարեանը: 1963-1974 թուականներին սովորում է Երեւանի Ն. Կ. Կրուպսկայայի անուան հայկական միջնակարգ դպրոցում: 1975-1980 թուականներին Երեւանի Կարլ Մարքսի անուան Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետի ուսանող է: 1980-ին ամուսնանում է: Երկու արու զաւակի հայր է: Նոյն թուականին ընդունւում է Հայաստանի ճարտարապետների միութիւն: 1983-1986 թուականներին ՀՍՍՀ ԳԱ-ի Արուեստի ինստիտուտի պատմութեան տեսութեան բաժնի ասպիրանտուրայի «Միւնեաց աշխարհի բերդերը» թեմայով ասպիրանտ է: 1980-1990 թուականներին աշխատում է ՀՍՍՀ յուշարձանների պահպանման եւ օգտագործման վարչութեան «Հայվերանորոգնախագիծ» ինստիտուտի «Զանգեզուր» արուեստանոցում որպէս վերականգնող ճարտարապետ: 1992-ին տեղափոխւում է ծննդավայր՝ Իտալիա եւ մինչեւ 1996 թուականը աշխատում է Վենետիկի Հայ մշակոյթի ուսումնասիրման ու վաւերագրման կենտրոնում որպես ՕԷՄՄԷ հրատարակչութեան խմբագրապետ: 1992-1996 թուականներին վերականգնում է ճարտարապետի հայկական դիպլոմը Վենետիկի Ճարտարապետութեան համալսարանական ինստիտուտում եւ պետական քննութիւն յանձնելուց հետո դառնում Վենետո նահանգի ճարտարապետների պալատի անդամ: 1996 թուականից աշխատում է որպէս ազատ ձեռներէց: Հայաստանում իրականացրել է բազմաթիւ եկեղեցիների չափագրութիւններ, պահպանման ու վերականգնման նախագծեր: Իտալիայում նախագծել է *ինտերյերի* կահաւորում, կազմակերպել է մշակութային ուղեւորութիւններ դէպի Հատաստան, դասաւանդել է տարբեր բուհերում, ձեւաւորել է ճարտարապետութեան եւ որմնանկարների ցուցահանդէսներ, վենետիկեան ճարտարապետական հինգ բիենալէների Հայկական տաղավարի յանձնակատարն է եղել: Հրատարակել է տասնեակ յօդուածներ, մասնակցել բազմաթիւ գիտաժողովների ու հինգ գրքերի հեղինակ է: Վերջին տարիներին մասնակցել է հայկական եկեղեցիներում որմնանկարների ուսումնասիրման ու վերականգնման աշխատանքներին:

Յիշելով հօրս՝ ճարտարապետ Արմէն Զարեանին,
որի խորհուրդով սկսեցի ուսումնասիրել
Սիւնեաց աշխարհի բերդերը

... Ամրոցները վայր են ընկնում. բերդերը այրւում են
Արարատի կատարին արեւը փշրել է իր ադամանդները ...

Կոստան Զարեան
Արեւմուտք – Քաղաքներ
Սարգիս Խաչենց - Փրինթինֆո, Երեւան, 2022, էջ 159

Arà Zarian

THE FORTIFICATIONS OF THE SYUNIK REGION

9th-14th CENTURIES

ԱՐԱ ԶԱՐԵԱՆ

ՍԻՆԵԱՑ ԱՇԽԱՐՀԻ ԲԵՐԴԵՐԸ

Թ-ԺԴ ԴԱՐԵՐ

Հ.Բ.Ը. Միութեան ՎԱՀՐԱՄ ԱՊՏԱԼԵԱՆ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Երեւան, 2026թ.

Հրատարակութիւն
Հ.Ք.Ը. Միութեան ՎԱՀՐԱՄ ԱՊՏԱԼԵԱՆ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Գնահատիչ յանձնախումբ
Գերապայծառ Լեւոն Արք. Զեքիեան (Պատուոյ Անդամ)
Վիգէն Լեւոն Աղդարեան
Արծուի Բախչինեան
Յովիկ Էօրտէքեան
Դոկտ. Վաչէ Ղազարեան
Դոկտ. Անդրանիկ Տագէսեան

Համակարգող **Ցոլակ Ապտալեան**

ՀՏԴ 94(479.25):72(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)+85.11(5Հ)
Զ 370

©Արա Զարեան, 2026

Ամէն իրաւունք վերապահուած է հեղինակին
Ոչ մէկ մասնակի կամ ամբողջական հրատարակութիւն թոյլատրելի է առանց գրաւոր արտօնութեան

ISBN 978-9939-976-41-9

Ներկայ աշխատասիրութիւնը կը վայելէ երաշխաւորութիւնը Ալեքսանդր Թամանյանի անուան ճարտարապետութեան ազգային թանգարան-ինստիտուտի 16.12.2024-ին տեղի ունեցած գիտական խորհուրդին

Առաջաբան՝ ճարտարապետութեան դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Հայկազուն Գրիգորեան

Գրքում քննարկւում են պատմական Սիւնիք նահանգի ռազմական ճարտարապետութեանն առնչուող բազմաթիւ տեսակէտներ ու ռազմավարական սկզբունքներ, որոնք առնչւում են ոչ միայն առանձին բերդամրոցների յօրինուածքներին, տիպաբանութեանն ու կառուցողական յատկանիշներին, այլ ուսումնասիրուած ու ներկայացուած են Սիւնիքի թագաւորութեան, առանձին իշխանական տների, բդեշխութիւնների ինչպէս նաեւ վանական համալիրների ռազմա-պաշտպանական համակարգերն ու դրանց առանձնայատկութիւնները: Ուսումնասիրուել են պատմական Հայաստանի ռազմավարական համակարգերն ու Սիւնիքով անցնող առեւտրական ու ռազմական նշանակութիւն ունեցող ճանապարհների ռազմապաշտպանակ սկզբունքները: Քննութեան են ենթարկուել նաեւ ռազմական ճարտարապետութեանն առնչուող այնպիսի կառոյցներ, որպիսիք են վանք-ամրոցները, մելիքական ամրապատ պալատները, քարաւանատները, բերդշէնները:

Հասցէագրուած է հայ ճարտարապետութեամբ ու պատմութեամբ հետաքրքրուողներին:

Հրատարակութիւն Հ.Ք.Ը. Միութեան

ՎԱՀՐԱՄ ԱՊՏԱԼԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Շապիկին՝ Էրդիչ ամրոցը, դարձին՝ Սմբատաբերդ ամրոցի մուտքի վերակազմութիւնը

Առաջին հրատարակութիւն, Երեւան, 2025

Հրատարակուած նիւթի մասին լրացուցիչ տեղեկութիւնների համար՝
arazarian@gmail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 11
ԱՌԱՋԱԲԱՆ 17
ՀԵՂԻՆԱԿԻ ԽՕՍՔ 23

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
1.1. ՍԻՒՆԻՔԸ Թ–ԺԴ ԴԱՐԵՐՈՒՄ. ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՒՈՐՈՒԱԾ՝ ՍԻՒՆԵԱՑ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ, ԱՒԱՏԱՏԻՐԱԿԱՆ, ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ, ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԲԴԵՇԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ Ի ՅԱՅՏ ԵԿԱԾ ՌԱՉՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԲԵՐԴԱՄՐՈՑՆԵՐԻ ԵՒ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՉՄԱՒՈՐՈՒՄԸ) 29

1.2. ՍԻՒՆԵԱՑ ՆԱՀԱՆԳԻ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՈՒ ԲԵՐԴԵՐԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՄ ԵՒ ԱՐԴԻ ԳԻՏԱՀԵՏԱՉՕՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ 61

1.3. ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՌԱՉՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ: ՍԱՍԱՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՌՈՄԷԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱՆՁԱՏԻՉ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ, ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԵՒ ՍԱՀՄԱՆԱՓԵՐՁ ԾՐՁԱՆՆԵՐԻ ՌԱՉՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ) 67

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
2.1. ՍԻՒՆԵԱՑ ԱՇԽԱՐՀԻ ՌԱՉՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ (ՀԱՄԱԵՐԿՐԱՅԻՆ, ՆԵՐՆԱՀԱՆԳԱՅԻՆ, ՄԻՋԳԱՒԱՌԱՅԻՆ, ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՌԱՉՄԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ) 87

2.2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ԱՄՐՈՑԱՇԻՆԱԿԱՆ 11 ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ 107

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
3.1. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳԱՒԱՌ [ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԵՒ ՍՈՒԹ(Դ)Ք] ԳԱՒԱՌԻ ՎԱՐՉԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 143

3.2. Սեւանի միակենտրոն պաշտպանական համակարգ 150
3.3. Սեւանի ամրոց 150
3.4. Բերդկունք ամրոց (Աղկալա, Սպիտակ բերդ) 150
3.5. Դուլին–Պարտաւ ճանապարհի, Կոթ–Զոդի լեռնանցք եւ Կոթ–Սելիմի (Սուլեմա) լեռնանցք ճանապարհահատուածի ռազմապաշտպանական համակարգը 165
3.6. Ալբերդ ամրոց 165
3.7. Մաքենեանց վանք-ամրոց 165
3.8. Ազատ քաղաք 167

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

4.1. ՎԱՅՈՑ ՁՈՐ ԳԱՒԱՌ (ՎԱՅՔ ԿԱՄ ԵՂԵԳԵԱՑ ՁՈՐ). ՎԱՐՉԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ (ԿԱՐԵՒՈՐ ՌԱՁՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ, ԱՄՐՈՑՆԵՐՆ ՈՒ ՎԱՆՔ-ԱՄՐՈՑՆԵՐԸ) 173

4.2. Դուին–Պարտաւ ճանապարհի Վայոց ձոր գաւառով անցնող Ուլիայ Նորաշէն–Սելիմի լեռնանցք ճանապարհահատուածի պաշտպանական համակարգը 179
4.3. Արբայ (Ղալա Թափա կամ Ուլիայ Նորաշէն ամրոց) 187
4.4. Արփայ (Արենի) ամրոց 188
4.5. Էրդիչ ամրոց 189
4.6. Նորաշէն ամրոց 189
4.7. Ապանայ ամրոց 189
4.8. Ծատին վանք-ամրոց 190
4.9. Սուլեմա (Սելիմ) ամրոց 191
4.10. Պոօշեան իշխանական տիրոյթի պաշտպանական համակարգը 213
4.11. Բոլորաբերդ (Պոօշաբերդ) ամրոց 214
4.12. Եղեգիք (Սմբատաբերդ) ամրոց 234

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

5.1. ՀԱՐԱՒԱՅԻՆ ՍԻՒՆԻՔ. ԾՂՈՒԿՔ, ԱՂԱՀԵՁՔ ԵՒ ՀԱԲԱՆԴ, ԲԱՂՔ ԵՒ ՁՈՐՔ, ԱՐԵՒԻՔ ԵՒ ԿՈՎՍԱԿԱՆ ՁԱՀՈՒԿ (ՇԱՀԱՊՈՒՆԻՔ) ԵՒ ԵՐՆՋԱԿ (ԳՈՂԹ ՈՒ ՆԱԽԻՋԵՒԱՆ) ԳԱՒԱՌՆԵՐ 259
5.2. ԾՂՈՒԿՔ ԳԱՒԱՌ 262
5.3. Շաղատ քաղաքաւանի պաշտպանական համակարգը 263
5.4. Սիւնի բերդաքաղաքի գծային պաշտպանական համակարգը 264
5.5. Բորտի ամրոց 264
5.6. Վասակաբերդ ամրոց 265
5.7. Որոտնաբերդ-Որոտնավանք երկկենտրոն պաշտպանական համակարգը 290
5.8. Որոտնաբերդ ամրոց 291

5.9. ԱՂԱՀԵՁՔ ՈՒ ՀԱԲԱՆԴ ԳԱՒԱՌՆԵՐ 309
5.10. Խոժոռաբերդ ամրոց 310
5.11. Քաշաթաղ ամրոց 310
5.12. Բարկուշատ ամրոց 312
5.13. Անդոկաբերդ ամրոց 313
5.14. Պահուբերդ ամրոց 314
5.15. Քաշունի ամրոց 314
5.16. Ձագաձոր կամ Հաբանդ ամրոց 315

5.17. ԲԱՂՔ ԵՒ ՁՈՐՔ ԳԱՒԱՌՆԵՐ 336
5.18. Բաղաբերդ ամրոց եւ Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգը 337

5.19. ԱՐԵՒԻՔ ԵՒ ԿՈՎՍԱԿԱՆ ԳԱՒԱՌՆԵՐ 359
5.20. Կաքաւաբերդ ամրոց 359
5.21. Մեղրի ամրոց 360
5.22. Գրհամ ամրոց 362

5.23. ԳՈՂԹՆ ԵՒ ԵՐՆՋԱԿ ԳԱՒԱՌՆԵՐ 378
5.24. Խոսրովի դղեակ ամրոց 378
5.25. Երնջակ ամրոց 379

5.26. ՃԱՀՈՒԿ ՈՒ ՇԱՀԱՊՈՒՆԻՔ ԳԱՒԱՌՆԵՐ 393
5.27. Ճահուկ ամրոց 393
5.28. Շահապունիք ամրոց 395
5.29. Նախիջեւան գաւառ 395
5.30. Խրամ ամրոց 395
5.31. Ազնաբերդ ամրոց 396

5.32. ԱՄՐՈՑԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹԻՒՆՆԵՐ
(ՍԻՒՆԻՔԻ ԲԵՐԴԱՄՐՈՑՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ 17 ԲՆՈՐՈՇԻՉ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ) 406

5.33. ՍԻՒՆԵԱՑ ԱՄՐՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԱՅԻՆ ԵՒ ՅԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ
ՅՕՐԻՆՈՒԱԾՔԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ
(ՉՈՐՍ ՅՕՐԻՆՈՒԱԾՔԱՅԻՆ ԵՒ ԵՐԵՔ ՅԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ).....412

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
6.1. ԱՄՐՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ 424
6.2. Պարսպապատեր 424
6.3. Բուրգեր, աշտարակներ 425
6.4. Մուտքեր 426
6.5. Դիտանոցներ, հրականատներ, նետանցքեր 426
6.6. Մարտահարթակներ 427
6.7. Զինանոցներ, պահակակէտեր, շտեմարաններ, մշտական կայազօրի համար նախատեսուած կացարաններ,
պալատական համալիրներ, մթերանոցներ, ջրամբարներ, ջրատարներ, գաղտնուղիներ, անցախուցեր,
գաղտնարաններ, գետնափոր պահեստարաններ, ստորգետնեայ անցումներ, բանտեր 427

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....444
ABSTRACT/RIASSUNTO...446/447
SUMMARY.....448
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ.....450
ԲԱՌԱՐԱՆՆԵՐ.....459
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԱԾ ՔԱՐՏԷԶՆԵՐ.....459
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ.....461
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ.....463
ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.....474
ՊԱՏԿԵՐՆԵՐ.....474
ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ.....491
ԳԾԱԳՐԵՐ, ՀԱՆՈՅԹՆԵՐ, ՉԱՓԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.....492
ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՔԱՐՏԷԶՆԵՐ.....496
ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ.....500
ԱՄՐՈՑՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ.....502



Նորավանք, գահին բազմած Սուրբ Կույսը Քրիստոսը ծնկներին, կողքերին՝ հրեշտակապետերը

ЧЛНЭЛБЛЮЛ

Արա Զարեանը հայ ճարտարապետութեան պատմութեան, տեսութեան, գործնականի ուսումնասիրութեան եւ այս ասպարէզի ձեռքբերումների հանրահռչակման գործին նուիրուած տեսաբան ճարտարապետներից մեկն է:

Նրա պատմատեսական հետազօտութիւնների լայն շրջանակի կարեւոր մաս է կազմում միջնադարեան Հայաստանի ճարտարուեստը, մասնաւորապէս Սիւնեաց աշխարհի բերդաշինութիւնը, ինչին նուիրուած է ներկայացուող ստվարածաւալ եւ չափազանց արժէքաւոր ուսումնասիրութիւնը:

Արա Զարեանի *Սիւնեաց աշխարհի բերդերը Թ-ԺԴ դարեր* հետազօտութիւնը հիմնուած է իր կողմից ջանասիրաբար արուած չափագրութիւնների, հաւաքուած պատմատեսական հարուստ նիւթերի համակողմանի եւ մանրակրկիտ ուսումնասիրութիւնների, կատարուած դաշտային աշխատանքների, լուսանկարչական եւ հաւաքչական հարուստ նիւթերի վրայ:

Սիւնեաց աշխարհի բերդերը Թ-ԺԴ դարեր աշխատութեան առարկան միջնադարեան Հայաստանի Սիւնիք աշխարհի բերդամրոցներն են, իրենց պաշտպանական համակարգերով, որոնք ցաւոք, մանրամասն եւ համակողմանի մինչ այժմ չեն ուսումնասիրուել: Այս առումով՝ Արա Զարեանի ուսումնասիրութիւնը իր տեսակի մէջ առաջինն է:

Հետազօտութիւնը բաղկացած է վեց գլխից[01], որոնցից առաջինում ներկայացւում է պատմաաշխարհագրական (նաեւ հասարակական-տնտեսական) իրավիճակներով պայմանաւորուած՝ Սիւնեաց իշխանական տների, աւատատիրական, գաւառական կենտրոնների, նախարարութիւնների եւ բդեշխութիւնների առաջացմանը զուգահեռ ի յայտ եկած ռազմավարական նշանակութեան բերդամրոցների եւ պաշտպանական համակարգերի կազմաւորումը, թուարկւում են Սիւնեաց նահանգի ամրոցների ու բերդերի յիշատակութիւնները, պատմագրական աղբիւրներում եւ արդի գիտահետազօտական աշխատութիւններում: Պարզաբանւում են վաղ միջնադարի համապետական, ռազմավարական ծրագրերը (Մեծ Հայքի թագաւորութեան պաշտպանական համակարգերը, Սասանեան Պարսկաստանի եւ Հռոմէական կայսրութեան տարանջատիչ քաղաքականութեան հետ կապուած վարչատնտեսական կարեւոր կենտրոնների, հաղորդակցման ուղիների, սահմանամերձ շրջանների ռազմապաշտպանական ծրագրերը):

Երկրորդ գլխում մանրամասն վերլուծւում են Սիւնեաց աշխարհի ռազմավարական, պաշտպանական սկզբունքները (համաերկրային, ներնահանգային, միջգաւառային, տեղական նշանակութեան ռազմապաշտպանական, ինչպէս նաեւ պաշտպանական կառոյցների ամրոցաշինական 11 սկզբունքները՝ ըստ նշանակութեան), Սիւնեաց ամրոցների կառուցուածքային ու յատակագծային չորս տիպաբանական յօրինուածքները եւ երեք յատակագծային առանձնայատկութիւնները:

Երրորդ գլխում հեղինակը մանրամասն անդրադառնում է Գեղարքունիք գաւառի (Գեղարքունիք եւ Սոթ[ղ]ք) վարչաաշխարհագրական բնութագրերին, ներկայացնելով Սեւանի, Բերդկունքի, Մակենյաց վանք-ամրոցը եւ այլ ամրոցներ:

Չորրորդ գլուխը նուիրուած է Վայոց Ձոր գաւառի ռազմավարական համակարգերի, ամրոցների ու վանք-ամրոցների ուսումնասիրութեանը: Մանրամասն անդրադարձ

01.Ուսումնասիրութեան առաջաբանում հեղինակը խոստովանում է «... այս գիրքը պէտք է լոյս տեսնէր առնուազն 25 տարի առաջ, եւ Սիւնիքի բերդամրոցների մասին իմ ուսումնասիրութիւնը գրեթէ աւարտուած էր, սակայն՝ անձնական, ընտանեկան ու աշխարհաքաղաքական զանազան հանգամանքների պատճառով այն ամբողջացրել, վերանայել, լրացրել ու համակարգել եմ միայն այս տարի: 1983-90-ին Սիւնեաց աշխարհում կատարած պրպտումները, ուսումնասիրութիւններն ու փաստագրութիւնները եղել են կարեւոր այն հիմնական աղբիւրը, որի հիման վրա շարադրել ու պատրաստել եմ ամբողջ նիւթը...»:

է արուել Վայոց Ձոր գաւառի (Վայք կամ Եղեգեաց ձոր) վարչաաշխարհագրական բնութագրի (կարեւոր ռազմավարական համակարգերի, ամրոցների ու վանք-ամրոցների)՝ Արբայ, Արփայ, Էրդիճ, Նորաշէն, Ապանայ, Բոլորաբերդ եւ այլ ամրոցների յօրինուածքային առանձնայատկութիւններին:

Հինգերորդ գլխում Արա Չարեանն անդրադարձել է հարաւային Սիւնիքի Ծղկունք (Այլախ), Աղահեճ[ջ]ք (Քաշաթաղ) եւ Հաբանդ, Բաղք եւ Ձորք, Արեւիք (Դաշտոն) եւ Կովսական, Ճահուկ (Ծահապոնք), Երընջակ [Գողտն ու Նախիջեւան (Նախճաւան)] գաւառներին, ներկայացնելով Շաղատ, Սիւնի, Բորտի, Որորտնաբերդ, Վասակաբերդ եւ այլ քաղաք-ամրոցների, բերդաքաղաքների եւ ամրոցների պաշտպանական եւ յօրինուածքային առանձնայատկութիւնները: Առանձին ներկայացուած են նաեւ Աղահեճ(ջ)ք (Քաշաթաղ) եւ Հաբանդ գաւառների ամրոցները (Քաշաթաղ, Ձագաձոր եւ այլն), ինչպէս նաեւ Բաղք եւ Ձորք, Արեւիք (Դաշտոն) եւ Կովսական, Գողթն եւ Երընջակ, Ճահուկ (Ծահապոնք), Նախիջեւան գաւառների ամրոցները (Գրհամ, Երընջակ, Խրամ եւ այլն): Հինգերորդ գլխի կարեւոր մաս է կազմում նաեւ 5.32 բաժնում ներկայացուած ուսումնասիրութիւնը, որտեղ հեղինակը գիտական հիմնաւոր մեկնաբանութիւններով ներկայացնում է վերը նշուած գաւառների ամրոցներում տեղ գտած ամրոցաշինութեան սկզբունքները եւ օրինաչափութիւնները (Սիւնիքի բերդամրոցների ճարտարապետաշինարարական առանձնայատկութիւնների 17 բնորոշիչ գործօնները):

Ուսումնասիրութեան վեցերորդ գլխում հետազօտողը անդրադարձել է ամրոցների պաշտպանական տարրերին՝ ներկայացնելով պարսպապատերի, բուրգերի եւ աշտարակների, մուտքերի, դիտանոցների, հրակնատների, նետանցքերի, մարտահարթակների յօրինուածքային ձեւերի եւ գործառոյթների առանձնայատկութիւններն ու դրանց վերլուծութիւնը:

Գրքում քննարկման նիւթ է դարձել նաեւ տարածաշրջանի նահանգային, գաւառային, իշխանական առանձին կալուածների, Սիւնեաց թագաւորութեան մայրաքաղաքի, առանձին հոգեւոր կենտրոնների, առեւտրական եւ ռազմական նշանակութեան ճանապարհների ռազմապաշտպանական համակարգերի առկայութիւնը: Ուսումնասիրուել են վաղմիջնադարեան Հայաստանի կարեւորագոյն պաշտպանական համակարգերը, որոնք համեմատուել են Սիւնիքում Թ-ԺԴ դարերի նմանատիպ կառոյցների հետ: Առանձին բաժնով տրուած են Սիւնեաց բերդամրոցների տեղընտրութեան, շինութիւնների կառուցողական սկզբունքները եւ յատակագծային օրինաչափութիւնները՝ հաշուի առնելով տուեալ տեղանքի աշխարհագրական միջավայրի իւրայատկութիւնները:

Սիւնեաց աշխարհի բերդերի ուսումնասիրութեան արդիւնքում հեղինակը կարողացել է դասակարգել, տեսակաւորել, համախմբել, տարանջատել տարբեր բերդամրոցների յօրինուածքային, ճարտարապետական, շինարուեստի եւ դրանց կառուցման ու տեղընտրութեան նպատակներն ու գործառութային նշանակութիւնները, համաձայն որոնց ռազմական բոլոր շինութիւնները տեսակաւորուել ու խմբաւորուել են ըստ պատկանելութեան: Քննարկուել են նաեւ Մեծ Հայքի թագաւորութեան պաշտպանական համակարգերը՝ կապուած Սասանեան Պարսկաստանի եւ Հռոմէական կայսրութեան

տարանջատիչ քաղաքականութեան հետ, վարչատնտեսական կարեւոր կենտրոնների, հաղորդակցական ուղիների, սահմանամերձ շրջանների ռազմապաշտպանական ծրագրերը: Առանձնացուել են պատմական Սիւնիքի բերդամրոցների ճարտարապետաշինարարական 17 բնորոշ գործօնները, պաշտպանական կառոյցների ամրոցաշինական 11 սկզբունքները՝ ըստ նշանակութեան ու գործառութեան, եւ ամրոցների կառուցուածքային, յատակագծային յօրինուածքների 4 տիպային ու 3 յատակագծային յատկանիշները: Առանձին-առանձին ներկայացուել են Սեւանի միակենտրոն պաշտպանական համակարգը, Որոտնաբերդ-Որոտնավանք երկկենտրոն պաշտպանական համակարգը, Պոծշեան իշխանական տիրոյթի պաշտպանական համակարգը, Բաղաբերդ ամրոցի ու Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգը, Վայոց Ձորով անցնող Դուին-Պարտաւ ռազմական ճանապարհի պաշտպանական համակարգը, Ծաղատ քաղաքաւանի պաշտպանական համակարգը եւ 32 բերդամրոցների առանձին ուսումնասիրութիւններ: Կազմուել է ամրոցների տերմինաբանական պատկերազարդ բառարան, որտեղ ներկայացուել են ամրոցների, բուրգերի, աշտարակների, հենապատերի, անցուղիների, ջրամբարների, դարպասների, հրակնատների եւ այլ առանձին տարրերի մասին մանրամասն բացատրութիւններ:

Հիմնական եզրակացութիւններում՝ ընթերցողը դիւրութեամբ կարող է առանձնացնել տարածաշրջանի ամրոցաշինութեան եւ ռազմապաշտպանական համակարգերի կառուցման կարեւորագոյն առանձնայատկութիւնները եւ օրինաչափութիւնները:

Ուսումնասիրութեան նիւթ արուած եզրակացութիւնները ամբողջացուած են հարուստ գրականութեան ցանկով, քարտէզներով, հեղինակային գծագրերով եւ լուսանկարներով, ծանօթութիւններով, տերմինաբանական բառարաններով, համառօտագրութիւններով եւ յաւելեալ այլ նիւթերով, որոնք վկայում են հետազօտուող նիւթի հանդէպ ճարտարապետի հավակնոտ տրամադրուածութեան ու մասնագիտական խորը գիտելիքների մասին:

Ուսումնասիրութիւնը աւարտւում է անգլերէն եւ իտալերէն ամփոփագրերով:

Յանուն ճշմարտութեան հարկ է նշել, որ այս ուսումնասիրութիւնը Արա Զարեանի գիտաստեղծագործական ուղու առաջնեկը չէ: Արա Զարեանը 1980-ին աւարտելով Երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը, անմիջապէս աշխատանքի է անցել Երեւանի «Հայվերանորոգնախագիծ» ինստիտուտում եւ ընթերցողների լայն շրջանակներին յայտնի են նրա այնտեղ իրականացրած շուրջ 25 ճարտարապետական յուշարձանների վերականգնման նախագծեր, ներառեալ պատմական աղբիւրների ուսումնասիրութիւններ, հնագիտական պեղումներ, չափագրութիւններ, եկեղեցիների վերականգնման, վերապահպանման նախագծեր, եւ շինարարական աշխատանքների վերահսկողութիւնը: Հայաստանում նրա կատարած նշանակալի վերականգնողական նախագծերից են Կոթավանքի X դար տաճարը, Մաքենիսի միաբանութեան ճարտարապետական համալիրի VII դարի բազիլիկը, Վանեանի վանական համալիրի VII դ. բազիլիկը, Դափնոց վանքի Սբ. Գէորգ եկեղեցին եւ սեղանատունը, VII-XII դդ. (բոլորն էլ Գեղարքունիքի մարզ), Մաքրավանքի Սբ. Աստուա-

ծածինը, XIII դար, Սոլակ մայրավանքի եկեղեցին XIII դար (երկուսն էլ Կոտայքի մարզ), Որոտնավանք եւ Վահանաւանքի վանական համալիրները, VII-XIII դդ. (երկուսն էլ Սիւնիքի մարզ) եւ այլն։

Արա Չարեանը 1996 թուականին աւարտել է նաեւ Վենետիկի համալսարանական ճարտարապետական ինստիտուտի ճարտարապետութեան ֆակուլտետը, պաշտպանել գիտական թեզը եւ ստացել ճարտարապետութեան դոկտորի երկրորդ աստիճան՝ «Հայկական բարձրաւանդակի բնական միջավայրը եւ շրջակայ միջավայրի եւ ճարտարապետութեան փոխազդեցութիւնը, ճարտարապետական աւանդոյթի ժառանգականութիւնն ու շարունակականութիւնը» թեմայով։ Հայաստանի ճարտարապետների պալատի (1984) եւ Վենետիկի ճարտարապետների միութեան (1997) անդամ է։ 1996-ից շարունակաբար հանդիսացել է Վենետիկի ճարտարապետական բիենալէների հայկական հինգ տաղավարների համակարգողը (Ա. Հ. Գրիգորյանի հետ համատեղ)։ 2022-ից Իտալիայի տարբեր քաղաքներում կազմակերպել ու ձեւաւորել է հայկական եկեղեցիներում պահպանուած որմնանկարների վերականգնման ու պահպանման աշխատանքների վերաբերեալ լուսանկարչական ցուցահանդէսներ, հանդէս եկել դասախոսութիւններով, որտեղ ներկայացուել են վերջին տասնամեակում կատարուած բազմաթիւ եկեղեցիներում որմնանկարների պահպանական վերականգնման աշխատանքներ (որմնանկարի վերականգնող մասնագէտ բելգիուհի Քրիստին Լամուրէի հետ)։ 1995-ից կազմակերպել է դէպի ՀՀ, Արցախ եւ պատմական Հայաստան (Թուրքիա, Իրան, Վրաստան) բազմաթիւ մշակութային ճամբորդութիւններ իտալացիներին ներկայացնելով հայոց պատմութիւնը, ինագիտութիւնն ու ճարտարապետութիւնը։ 1997-ին հիմնել է իր արուեստանոցը Վենետիկ-Միրանոյում։

Նախագծային գործունութեանը զուգահեռ զբաղուել է ճարտարապետութեան պատմութեան եւ տեսութեան հիմնախնդիրներին ուղղուած գիտահետազօտական աշխատանքներով, Հայաստանում եւ արտերկրում կազմակերպուած գիտաժողովներում հանդէս է եկել տասնեակ զեկուցումներով, հրատարակել է բազմաթիւ գրքեր[02]։

Արա Չարեանի այս չափազանց կարեւոր ուսումնասիրութիւնը, որ ամփոփուած է ներկայացուող գրքով, ինչ խօսք, մեծ ներդրում է հայոց ճարտարարուեստի գիտական ուսումնասիրութեան ասպարէզում։

Արուած է հսկայական աշխատանք միջնադարեան Հայաստանի ռազմապաշտպանական համակարգի իմացութեան, նրա գիտատեսական վերլուծութեան, գնահատման եւ ներդրումների հեռանկարային ակընկալիքների բացայայտման ուղղութեամբ։

Արա Չարեանի այս ուսումնասիրութիւնը գալիս է հաստատելու, որ ի դէմս նրա մենք գործ ունենք Չարեան ընտանիքի լաւագոյն նուաճումները շարունակող անխոնջ մտաւորականի, ճարտարապետ-հետազօտողի հետ։

Աշոտ Հայկազուն Գրիգորեան
Ճարտարապետութեան դոկտոր, պրոֆեսոր

02.Արա Չարեանի գրչին են պատկանում՝ *Vagharshapat*, Documenti di architettura armena, N°23, OEMME Edizione, Venezia, 1998, 155 pp. *Արմէն Չարեան, ճարտարապետ, հետազոտող, մտավորական*, Երեւան 2009, 368 էջ. Քրիստին Լամուրէի համահեղինակութեամբ՝ *Որմնանկարների վերականգնումը վաղ քրիստոնեական հայկական մի շարք եկեղեցիներում*, «Տիգրան Մեծ» հրատարակչութիւն, Երեւան, 2019, 330 էջ. Քրիստին Լամուրէի համահեղինակութեամբ՝ *Հաղպատ-Սբ. Նշան եկեղեցու, 976-991 թթ., Ժ.Ժ-ԺԳ դդ. որմնանկարների պահպանում վերականգնում*, «Տիգրան Մեծ» հրատարակչութիւն, Երեւան, 2020, 394 էջ. Քրիստին Լամուրէի համահեղինակութեամբ՝ *Դաղի վանք, 1214 թվականին կառուցված կաթողիկե եկեղեցու 1297 թվականի որմնանկարի պահպանական վերակագնում*, «Տիգրան Մեծ» հրատարակչութիւն, Երեւան, 2021, 484 էջ եւ այլն։



Թանահատ, թռչունը ձագի հետ պատկերաքանդակը

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՕՍՔ

Այս գիրքը պէտք է լոյս տեսներ առնւազն 25 տարի առաջ, երբ Սիւնիքի բերդամրոցների մասին իմ ուսումնասիրութիւնը գրեթէ աւարտուած էր, սակայն անձնական, ընտանեկան ու աշխարհաքաղաքական զանազան հանգամանքների պատճառով այն ամբողջացրել, վերանայել, լրացրել ու համակարգել եմ միայն հիմա: 1983–90-ին Սիւնեաց աշխարհում կատարած պրպտումները, ուսումնասիրութիւններն ու փաստագրութիւնները եղել են կարեւոր այն հիմնական աղբիւրը, որի հիման վրայ շարադրել ու պատրաստել եմ ամբողջ նիւթը: Հարկ եմ համարում նշել, որ անցեալ դարի իննսունական թուականներին սարերում ու լեռներում կատարած ուսումնասիրութիւնների ընթացքում GPS համակարգ, Google Earth, Google Map, առցանց արդիական համակարգ եւ ԱԹՍ (Անօդաչու Թռչող Սարք) չեմ ունեցել, ուստի բերդերի տեղերը գտել եմ տպագիր քարտէզների, տեղացիների ցուցումների հիման վրայ, իսկ անհրաժեշտ բոլոր չափումներն ու չափագրութիւնները արել եմ ձեռքով՝ ճարտարապետ ընկերներիս օգնութեամբ: Որքան հնարաւոր է եղել, ճշտել ու ստուգել եմ հաւաքուած ամբողջ նիւթը՝ գիտակցելով, որ միանգամայն հնարաւոր են արդիական միջոցներով արուած լրացուցիչ ճշգրտումներ: Յամենայն դէպս, այս աշխատութիւնը համարում եմ կարեւոր ներդրում Սիւնիքի ռազմապաշտպանական, բերդամրոցների ճարտարապետաշինարարական առանձնայատկութիւնները բացայայտելու ուղղութեամբ: Անշուշտ, կը լինեն այլ ուսումնասիրութիւններ ու հետազօտութիւններ, որոնք կը գան լրացնելու իմ՝ ջանասիրաբար ու նուիրումով կատարած այս աշխատանքը:

Պատմական Հայաստանի եւ մասնաւորապէս Սիւնեաց աշխարհի միջնադարեան պաշտպանական կառոյցների շինարարական, ճարտարապետական արժեւորման ու ռազմավարական համակարգերի վերաբերեալ ուսումնասիրութիւններ եւ առանձին մենագրութիւններ գիտական շրջանակներում սակաւաթիւ են: Այս առումով՝ թերեւս բացառութիւն են Հայկական Կիլիկիայի ամրոցներին նուիրուած կարեւոր ու լուրջ ուսումնասիրութիւնները:

Սիւնիքի պատմաճարտարապետական արժէքները լուսաբանող հայ եւ օտար պատմիչների, ինչպէս նաեւ արդի շրջանի պատմաբանների աշխատութիւններում բերդամրոցները յիշատակուած են ռազմական տարբեր ընդհարումների եւ պատմական անցքերի բերումով, ճշտագրուած են շատերի դիրքադրութիւնները, սակայն այս առանձնայատուկ շինութիւնների կառուցուածքային, ճարտարապետական վերլուծութիւնը հիմնականում բարձիթողի է:

Սիւնեաց նահանգի եկեղեցական, ժողովրդական ճարտարապետութիւններին նուիրուած աշխատութիւնները լրացնելու նպատակով յոյժ կարեւոր է դառնում տարածաշրջանի բերդամրոցների եւ պաշտպանական տարբեր կառոյցների հիմնովին ուսումնասիրութիւնը:

Աշխատութիւնը բաղկացած է վեց գլուխներից, որոնք կարելի է բաժանել երեք հիմնական թեմաների: Առաջինը ներառում է Սիւնիքի պատմաաշխարհագրական ակնարկը, յիշատակարանները, վաղմիջնադարեան համապետական ռազմական ծրագրերը, երկրորդը՝ Սիւնիքի ռազմավարական պաշտպանական սկզբունքները եւ ամրոցների յատակագծային յօրինուածքների վերլուծութիւնը, երրորդը՝ Սիւնիքի առանձին գաւառներում պահպանուած ու մեր ուսումնասիրած ամրոցները եւ ամրոցաշինութեան սկզբունքներն ու օրինաչափութիւնները: Վերջում զետեղել ենք

անուանացանկեր, ռազմական ճարտարապետութեան տերմինների բառարան, ծանօթագրութիւն, օգտագործուած գրականութեան ցանկ, անգլերէն ամփոփագիր:

Հետազօտել ենք Սիւնեաց աշխարհի պատմական բոլոր գաւառների (Գեղարքունիք, Սոդք, Վայոց ձոր, Ծղուկք, Աղահեճք, Հաբանդ, Բաղք, Զօրք, Ճահուկ, Երընջակ, Կովսական, Արեւիք, Նախիջեւան, Գողթն) բերդերի, առանձին իշխանական տիրոյթների, նախարարութիւնների բդեշխութիւնների, Սիւնեաց թագաւորութեան շրջանի, առեւտրական կարեւոր ճանապարհների, նահանգի նշանաւոր քաղաքական, վարչական, հոգեւոր, մշակութային կենտրոնների ռազմապաշտպանական համակարգերը: Մանրակրկիտ կերպով ուսումնասիրել, չափագրել եւ լուսանկարել եմ առաւել նշանաւոր եւ ցայսօր համեմատաբար բարւոք պահպանուած մի շարք ամրոցներ ու պաշտպանական տարբեր բնոյթի կառոյցներ:

Կազմել եմ Սիւնեաց աշխարհի բոլոր գաւառների պաշտպանական հիմնական կառոյցների տեղադրական քարտէզներ եւ գաւառների պաշտպանական համակարգերի վերլուծական, բացատրական գծագրեր: Ուսումնասիրութեան շրջանակներն ընդլայնելու եւ առնչուող թեմային համադրելու նպատակով քննարկել ենք վաղմիջնադարեան Հայաստանի ռազմապաշտպանական, համապետական նշանակութեան մի շարք կարեւոր համակարգեր, ինչպէս նաեւ ամրոցաշինական մի շարք սկզբունքներ:

Սիւնեաց աշխարհի ամրոցների վերաբերեալ առկայ ուսումնասիրութիւնները մեծ մասամբ պատմական յիշատակութիւններ են: Գրեթէ բոլորովին բացակայում են Սիւնեաց աշխարհում յիշատակուած շուրջ 9 տասնեակի հասնող կառոյցների (այսօր դրանցից միայն 25–30 են պահպանուել տեսողական ուսումնասիրութեան համար անհրաժեշտ չափով) շինարարական, ճարտարապետական, տեղընտրութեան սկզբունքների եւ կառոյցների տիպերի մասին վերլուծութիւնները: Արդի գիտնականներից Սիւնիքի ամրոցների դիրքադրութեան բացայայտմամբ եւ պատմական անունների վերականգնմամբ ու ստուգաբանութեամբ զբաղուել են Թ. Հակոբյանը, Հ. Հովհաննիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Ղարագյոզյանը եւ ուրիշներ: Ստեղծուած իրավիճակը թերեւս բացատրւում է ուսումնասիրուող կառոյցների տեղադիրքի դժուարամատչելիութեամբ եւ վատ պահպանման աստիճանով: Այլ է պատկերը, երբ խօսքը վանք-ամրոցների, բերդերի վերածուած եկեղեցիների, քարաւանատների, մելիքական ապարանքների, պալատների, մենաստանների մասին է: Հիմնականում ուսումնասիրուել են հոգեւոր, աշխարհիկ կամ հասարակական կառոյցներ, իսկ նրանց ռազմապաշտպանական մաս կազմող տարրերը՝ ամրապատեր, բուրգ-աշտարակներ, անցախուցերով մուտքեր, հրակնատներ, մարտահարթակներ, զինանոցներ եւ այլ բնոյթի յատուկ շինութիւններ, հիմնովին չեն ուսումնասիրուել:

Հետազօտութիւնը ներառում է նահանգի աշխարհագրական տարածքը՝ ներառեալ Գողթն եւ Նախիջեւան գաւառները, որոնք Սիւնիքի կազմի մէջ եղել են միայն կարճ ժամանակահատուածում: Կարեւոր է եղել տարբեր բնոյթի քարտէզների քննութիւնը, դրանց համեմատութիւնը, ինչպէս նաեւ տեղում հետազօտութիւնները՝ ամրոցների դիրքադրութեան ճշտումները, դրանց յայտնաբերումը, չափագրումը, լուսանկարահանումը: Ամրոցների ճարտարապետաշինարարական, դիրքադրութեան եւ տեղընտրութեան սկզբունքներն ուսումնասիրելիս կատարել եմ համընդհանուր

վերլուծութիւն եւ համեմատութիւն Հայաստանի այլ նահանգների, գաւառների, ինչպէս նաեւ Վրաստանի, Կիլիկիայի բերդամրոցների հետ:

Սիւնեաց նահանգի պաշտպանական կառոյցների վերաբերեալ ուսումնասիրութիւնը նախ եւ առաջ հիմնւում է սոյն տարածքը յիշատակող պատմիչների (Փավստոս Բիւզանդ, Եղիշէ, Մովսէս Խորենացի, Մովսէս Կաղանկատուացի, Յովհաննէս Ե. Դրասխանակերտցի, Ամանիայ Շիրակացի, Կիրակոս Գանձակեցի, Պրոկոպիոս Կեսարացի, Մատթէոս Ուռհայեցի, Ստեփանոս Օրբելեան, Յովհաննէս Շահխաթունեանց, Սեբէոս Կաթողիկոս, Ղեւոնդ Ալիշան) թողած սկզբնաղբիւրների եւ ժամանակակից պատմաբանների (Գ. Գրիգորյան, Հ. Եղիազարյան, Հ. Խալփախչյան, Թ. Ջուհարյան, Թ. Յակոբյան, Ա. Խ. Մնացականյան, Մ. Հասրաթյան, Ա. Ղարագյոզյան, Հ. Ութմազյան, Ա. Խաչատրյան, Լ. Կիրակոսյան, Տ. Սահակյան, Ա. Ասլանյան, Ս. Երեմյան, Ա. Այվազյան, Բ. Հարությունյան, Ա. Սարգսյան, Բ. Պիատրովսկի, Ա. Ալպագո Նովելլո, Արմէն Զարեան, Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Լ. Մկրտչյան) աշխատութիւնների հիման վրայ:

Մեր կարծիքով՝ Սիւնիքի մասին ամենակարեւոր աշխատութիւնը ԺԳ. դարի պատմիչ Ստեփանոս Օրբելեանի «Պատմութիւնն տանն Սիսական» կոթողային գործն է: Հեղինակն անդրադառնում է Սիւնիքի աշխարհագրական բնութագրին, տարածաշրջանում կազմաւորուած նախարարական տներին, Սիւնեաց թագաւորութեան շրջանին եւ Օրբելեան իշխանական տան պատմութեանը: Մեր ուսումնասիրութեան համար կարեւոր է ընդգծել, որ Ստ. Օրբելեանն իր աշխատութեան Գ. գլխում, Սիւնիքի թագաւորութեան շրջանում, յիշատակում է 24 նշանաւոր բերդեր եւ նկարագրում է նրանց զգալի մասի տեղադրութիւնը: Մեզ հետաքրքրող միւս կարեւոր աշխատութիւնը Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» հատորն է, որտեղ պատմիչը Սիւնիքի տարածքում յիշատակում է 69 բերդերի անուններ:

Սիւնեաց աշխարհի պաշտպանական կառոյցների ուսումնասիրութեան համար ամենակարեւոր գծագրական նիւթը չափագրութիւններն են, հնագիտական պեղումների միջոցով ի յայտ եկած յատակագծային ճշտումները, անօդաչու սարքերի միջոցով կատարուած եռաչափ տեղահանոյթները: Միջնադարեան Հայաստանի միայն հատուկենտ ամրոցներ (Ամբերդ, Բջնի, Կայան, Բերդաւան, Մեղրի) ունեն իրենց չափագրութիւնները, իսկ Սիւնեաց բերդերից հիմնականում Սմբատաբերդը, Մեղրի, Աբանայ, Ճահուկ եւ Երնջակ ամրոցներն են, որ իմ ուսումնասիրութեան շրջանում չափագրուած եւ լուսանկարուած են եղել: Արխիւային հետազօտութիւնները երեւան են բերել 1930-ական թուականներին Տարագրոսի կատարած Բոլորաբերդի եւ Սմբատաբերդի սխեմատիկ չափագրութիւնները: Ուսումնասիրութեան ընթացքում չափագրել եմ Որոտնաբերդ, Բոլորաբերդ, Բաղաբերդ, Սմբատաբերդ, Մեղրի (վերջին երկուսը՝ լրացումներով), Բերդկունք (Աղկալա), Վասակաբերդ, Եղեգնաձոր, Արբայ, Սուլեմա, Ագարակաձոր, Քյոշք, Վայս ամրոցները: Ինչ վերաբերում է վանք-ամրոցներին, քարաւանատներին, եկեղեցի-ամրոցներին, մենաստաններին ու մելիքական ապարանքներին, ապա օգտուել եմ յուշարձանների պահպանման ու օգտագործման գրլխաւոր վարչութեան արխիվի չափագրութիւններից եւ սոյն թեմայով հրատարակուած նիւթերից:


Պաշտպանական կառոյցների լուսանկարչական նիւթի զգալի մասն արել եմ գիտարշաւների ժամանակ: Օգտուել եմ նաեւ Հայաստանի պատմութեան ազգային

թանգարանի, Յուշարձանների պահպանման ու օգտագործման գլխաւոր վարչութեան դիւաններում եղած սեւանկարներից եւ էլեկտրոնային առցանց նիւթից: Պատմական լուսանկարներից հետաքրքրական են 1930–40-ական թուականներին Ա. Ճիրոյանի, Պ. Գրիգորյանի, Վ. Փափազյանի, Ա. Շահինյանի, Գորուսի, Տարագրոսի՝ Սեւանի ամրոցի, Պոօշաբերդի, Աղքենդի, Վասակաբերդի, Բաղաբերդի, Սմբատաբերդի, Որոտնաբերդի, Հալիձորի բերդի, Աղկալայի պատմական նկարահանումները: Կիլիկիայի ամրոցների լուսանկարների վերատպութեան համար օգտուել եմ Ռոբերտ Էդվարսի, Դվիզոլ Ֆոնդեկերեկովի գրքերից, վրացականների համար՝ Պ. Զաքարայի, Վ. Բերիձեի, Կ. Մելիտաուրի գրքերից, հիւսիսային Կովկասի ամրոցների համար՝ Ա. Գոլշտեյնի, իսկ Հայաստանի տարածքի համար՝ Հ. Միքայէլ Յովհաննէսեանի, Արա Բերկեանի աշխատութիւններից եւ Վենետիկի Հայ մշակոյթի ուսումնասիրման ու վավերագրման կենտրոնի դիւանից:

Սիւնեաց նահանգի բաւական ընդարձակ տարածքում (20.687 քառ. կմ, ՀՀ տարածքը՝ 29.800 քառ. կմ, սակայն Նախիջեւան, Գողթն, Երնջակ, Ճահուկ, Աղահեճք եւ մասամբ՝ Հաբանդ, Բաղք, Կովսական գաւառները դուրս են մնացել այժմեան ՀՀ վարչական տարածքից) առկայ պաշտպանական կառոյցներն ուսումնասիրել եմ՝ հաշուի առնելով նրանց կառուցողական, ճարտարապետական, ռազմական, տեղընտրութեան, դիրքադրութեան առանձնայատկութիւնները, ինչպէս նաեւ բացայայտել եմ տարբեր պաշտպանական կառոյցներից բաղկացած կարեւորագոյն համակարգերի առկայութիւնը՝ ընտրուած ժամանակահատուածի ամբողջ ընթացքում:

Քննարկել եմ տարածաշրջանի նահանգային, գաւառային, իշխանական առանձին կալուածների, Սիւնեաց թագաւորութեան մայրաքաղաքի, առանձին հոգեւոր կենտրոնների, առեւտրական եւ ռազմական նշանակութեան ճանապարհների ռազմապաշտպանական համակարգերի առկայութիւնը: Այս առումով՝ ուսումնասիրել եմ վաղմիջնադարեան Հայաստանի կարեւորագոյն պաշտպանական համակարգերը, որոնք համեմատել եմ Սիւնիքում Թ–ԺԴ դարերի նմանատիպ կառոյցների հետ: Առանձին բաժնով քննարկել եմ Սիւնեաց բերդամրոցների տեղընտրութեան, շինութիւնների կառուցողական սկզբունքները եւ յատակագծային օրինաչափութիւնները՝ հաշուի առնելով տուեալ տեղանքի աշխարհագրական միջավայրի իւրայատկութիւնները:

Գրքի վերջում զետեղել եմ հայկական միջնադարեան մանրանկարչութեան մէջ հանդիպած պաշտպանական ճարտարապետութեան՝ ամրոցներին ու բերդերին յատկանշական տարբեր տարրերի պատկերագրութիւններ՝ ամրոցների աշտարակներ, դիտակէտեր, պարսպապատեր, դրանց վերին հատուածների ատամնաշարեր, դարպասներ, մուտքեր, տարբեր յօրինուածքի հրակնատներ, ամրոցներին իւրայատուկ պատերի շարուածքների բնորոշ նկարուածքներ եւ այլն: Յոյս ունեմ, որ պատկերների այս հաւաքածուն կը հետաքրքրի հայկական ձեռագրերով ու մանրանկարներով զբաղուող մասնագէտներին, որոնք կբացատրեն այս իւրօրինակ երեւոյթի իմաստը: Մի բան պարզ է. միջնադարեան ձեռագրերում հայկական ամրոցներին բնորոշ զանազան տարրերի նկարչական, ոճաւորուած պատկերագրութիւնը պայմանաւորուած է ձեռագրերի կերտման ժամանակ հայկական լեռնաշխարհում բազմաթիւ ամրոցների առկայութեամբ:



Դադիի վանք, Արզուխաթուն իշխանուհու որդիներ Հասանն ու Գրիգորը

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.1 ՍԻՆԻՔԸ Թ-ԺԴ ԴԱՐԵՐՈՒՄ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

(Հասարակական-տնտեսական իրավիճակով պայմանաւորուած՝ Սիւնեաց իշխանական տների, աւատատիրական, գաւառական կենտրոնների, նախարարութիւնների եւ բդեշխութիւնների առաջացման հետեւանքով ի յայտ եկած ռազմավարական նպատակներով բերդամրոցների եւ պաշտպանական համակարգերի կազմաւորումը)

Մեծ Հայքի 15 նահանգներից իններորդը՝ Սիւնեաց «աշխարհը» կամ «երկիրը», գտնւում էր Հայկական լեռնաշխարհի[1] արեւելեան շրջանում եւ, ըստ «Աշխարհացոյց»-ի, Հարաւ-արեւմուտքից մինչեւ Հարաւ-արեւելք, սահմանակից էր Վասպուրականի Նախիջեւան, Գողթն[2] եւ Պարսպատունիք գաւառներին, Արեւմուտքից մինչեւ Հիւսիս-արեւմուտք՝ Այրարատի Շարուր, Արած, Ուրծ, Ոստան Հայոց, Կոտայք, Մազազ եւ Վարաժնունիք գաւառներին, հիւսիս-արեւելքից մինչեւ հարաւ-արեւելք՝ Արցախի Քուստի, Փառնես, Կողթ, Բերդկունք, Վայկունիք, Մեծ Առանք, Բաղկան եւ միւս Հաբանդ[3] գաւառներին (պատկ.1,2.1): Սիւնիք անունը պատմութեան մէջ յիշատակւում է Սիսական (պարսկական աղբիւրներ), Սիսաջան կամ Սիսէճան (արաբական աղբիւրներ), Սիւնիք (Մովսէս Խորենացի), Սեւունիք, Սիւնիս (Ղեւոնդ Ալիշան, յունական, բիւզանդական աղբիւրներ), Սիւնական աշխարհ (Կորիւն) եւ Սիւնաստանիք (Մովսէս Կաղանկատուացի) անուններով:

Ծագումնաբանական իմաստով՝ Սիւնիք անունը ըստ Մովսէս Խորենացու[4], սերում է Գեղամի որդի Սիսակ անունից (Սիսական)[5], ըստ Ղ. Ալիշանի՝ աւանդական Սեւակ նահապետից, որից յետագայում առաջացել է Սեւորդեաց ազգը, եւ որի անունով էլ թերեւս Գեղամայ լիճը վերանուանուել է Սեւանայ լճի: Պրոֆ. Գր. Ղափանցյանի[6] ուսումնասիրութեան համաձայն՝ Բաղ տեղանունից են առաջացել Սիւնիքի Բաղք գաւառանունը եւ Բաղաբերդ ամրոցի անունը: Թ.Խ. Յակոբյանի կարծիքով[7]՝ Սիսական անուան առաջացումը կապուած է Ք.ա. Ը–Է դարերում Անդրկովկաս արշաւած սակերի հետ, որտեղից եւ «Սիսական» (Սիւնիք) անունը: Ս.Տ. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատութեանը կցուած քարտէզում Սիսական անունը կիրառուել է նոյն նահանգի Ծաղկունք գաւառի համար, եւ ամբողջ նահանգը կոչուել է այս անուամբ: Ըստ Ա.Ս. Ղարիբյանի՝ Սիւնիք անունն առաջացել է այս լեռնաշխարհի հնագոյն սի ցեղանուանումից՝ սի+սու=սի+ունի=Սիւնի: Լեզուաբանն այն կարծիքն է արտայայտում նաեւ, որ սակ արմատը կարող էր ձեւաւորուել եւ դառնալ զոկ եւ ձագ[8]:

Սիւնիքի աշխարհագրական միջավայրի մասին լիարժէք պատկերացում ունենք, քանի որ այն մեծ մասամբ մտնում էր Խորհրդային Հայաստանի եւ ներկայիս Հայաստանի Հանրապետութեան տարածքի մէջ (պատկ.2,3): Սիւնիքի մարզը համընկնում է ՀՀ Սեւանի, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի, Վայքի, Վեդու, Եղեգնաձորի, Սիսիանի, Կապանի, Գորիսի եւ Մեղրու շրջաններին (պատկ.4): Սիւնիքի հարաւարեւելեան հատուածն այժմ համընկնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Բերձորի (Լաչինի) շրջանին (պատմական Արցախ նահանգ, պատկ.5), իսկ հարաւարեւմտեան հատուածը՝ Նախիջեւանի տարածքին (պատմական Նախիջեւան գաւառ): Ֆիզիկաաշխարհագրօրէն այս ընդարձակ տարածքը կազմուած է բազմագագաթ լեռնաշղթաներից, խոր ու ոլորապտոյտ գետահովիտներից, լեռնանցքներից, գահավէժ ձորերից, անտառապատ բլուրներից եւ բարձրաւանդակի ճեղքուած քներով հոսող արագահոս լեռնային գետերից: Սիւնեաց լեռնաշխարհի սահմանները ձգւում են Արարատեան գոգաւորութիւնից արեւելք՝ միջլեռնային խոշոր իջուածքի տեղում առաջացած Սեւանայ լճի (Գեղամայ լիճ, Գեղարքունեաց ծով, Գեղամայ ծով) աւազանից մինչեւ Արաքսի (Երասխի) հովիտ: Սիւնիքը բոլոր կողմերից պարփակուած է լեռնաշղթաներով. Հիւսիս-արեւմուտքում Այրարատ նահանգից բաժանուած է Գեղամայ լեռնաշղթայով, Հարաւ-արեւմուտքում՝ Վայոց ձորի լեռնաճիւղերի հարաւային ծայրով, Հարաւում՝ Սիւնիքի, Բարկուշատի եւ Մեղրու լեռնաշղթաներով, որոնք կազմում են միջլեռնային գոգաւորութիւններ, լեռնավահաններ, սարաւանդներ, կիրճեր: Այս լեռնաշխարհն իր բարձրութեամբ գերիշխում է Անդրկովկասի եւ Միջագետքի դաշտավայրերի վրայ, գերազանցում է Իրանական (միջին բարձրութիւնը՝ 1.400մ) եւ Անատոլիական (միջին բարձրութիւնը՝ 800–1.200մ) բարձրաւանդակներին: Մակերեւոյթի ծածկոյթի ամենամեծ տատանումները Զանգեզուրում են. բարձրագոյն կէտը Կապուտջուղ լեռնաշղթան է (3.908մ), իսկ ցածրագոյնը՝ Մեղրու կիրճը[9] (390մ): Սիւնեաց բարձրաւանդակը պսակող բարձր լեռնագագաթներից են Մեծ Իշխանասար լեռը (3.550մ), Ծղուկք լեռը (3.581մ), Գոգի լեռը (3.120մ), Վարդե-

1. Հայկական լեռնաշխարհը, իր գերիշխող դիրքի շնորհիւ, տարբեր հեղինակներ անուանել են «լեռնային կղզի» (К. Рихтер, *Землевидение Азии*, СПб, 1956, I), «բնական ամրոց» (R. Blanchard, *L'asie Occidentale*, t. VIII, Paris, 1929): Սիւնեաց աշխարհի անմատչելիութիւնը ցոյց տալու համար յաճախ այն կոչուել է «անառիկ», «անձուկ»: Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1986, էջ 197:

2. «...Նախիջաւան եւ Գողթն գաւառները VIII դարի սկզբին դուրս են եկել Վասպուրականի կազմից եւ մինչեւ Սիւնիքի (Բաղքի) թագաւորութիւնը (987), անցել են մերթ Սիւնիքին, մերթ Վասպուրականին...»: Հ.Մ. Ութմազյան, *Սիւնիքը IX–X դդ.*, Երեւան, 1958, էջ 97–102:

3. «Աշխարհացոյց»-ի մէջ յիշատակւում են երկու Հաբանդ գաւառներ. մէկը Սիւնիքում էր, միւսը՝ Արցախում. եղել են սահմանակից եւ բաժանուել են միմիանցից հարաւ-արեւելքում Աղաւնոյ գետահովտով, իսկ Արեւելքում՝ Արցախի լեռնաշղթայով:

4. Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ ակադեմիկոս Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1968, էջ 91–92:

5. «...Անառարկելի է, որ Սիսական անունը ծագել է ավելի ուշ...»: Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1986, էջ 191:

6. Проф. Гр. Капанцян, *Историко-лингвистичекое значение топонимики древней Армении*, Երեւանի պետ. համալսարանի «Գիտական աշխատութիւններ», 1940, հ. 14, էջ 380–381:

7. Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1964, էջ 27: Նոյնի, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1986, էջ 70:

8. Ա.Ս. Ղարիբյան, *Համառօտութիւն հայ բարբառագիտութեան*, Երեւան, 1941, էջ 31:

9. Ա.Բ. Բաղդասարյան, *Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրութիւն*, Երեւան, 1971, էջ 395:

նիսի լեռը (3.522մ), Քաշաթաղ լեռը (2.901մ), Աժդահակ լեռը (3.597մ) եւ այլն (պատկ.6):

Հարուստ է նաեւ Սիւնեաց աշխարհի ջրագրութիւնը: Կան բազմաթիւ մեծ ու փոքր գետեր, որոնք սկիզբ են առնում լեռնաշղթաների բարձր գագաթներից եւ վտակների միջոցով կազմում արագահոս, լեռնային գետեր: Սիւնիքով հոսող գետերի մեծ մասը (չհաշուած Սեւանայ լիճ թափվող գետ ու գետակ)՝ Գաւառայ գետը, Արգիճին, Վարդենիսը, Մասրիկը, Ձկնագետը, Մարմարիկը, պատկանում է Մայր Արաքս գետի աւազանին: Արաքս գետի աւազանին են պատկանում նաեւ Երնջակ (Ալինջաչայ), Աչաղվայ (Հագարի), Արփայ (Արփաչայ), Որոտան, Քարկուշատ, Ողջի, Մեղրի, Նախիջեւան (Նախչաւանչայ) գետերը: Այս գետերի մէջ թափվում են բազմաթիւ վտակներ, որոնց հուներն ու անունները մանրամասնօրէն ներկայացուած են Ղ. Ալիշանի «Սիսական» աշխատութեան մէջ[10] (պատկ.7):

10. Ղեւոնդ Ալիշան, *Սիսական*, Վենետիկ, 1893, էջ 4:

Վերը նկարագրուած լեռնային նահանգը վաղ ժամանակներից եղել է կարեւոր ռազմական շրջան եւ այդ պատճառով դարերի ընթացքում անընդմէջ ենթարկուել է ռազմականացման քաղաքականութեանը:

Սիւնիքի պաշտպանական ճարտարապետութեան առաջացումն ու զարգացումը բխում են տուեալ ժամանակաշրջանի քաղաքական եւ իրաւատնտեսական ընթացքը պայմանաւորող հանգամանքներից: Սիւնիքում ամրոցաշինութիւնը յատուկ էր իշխանական տոհմերին, քանի որ այստեղ տիրում էին Սիւնեաց իշխանները: Մինչ Սիւնեաց իշխանական տների, աւատատիրական եւ գաւառական կենտրոնների ստեղծումը՝ Սիւնիքի քաղաքական կառուցուածքը կազմաւորել են առանձին նախարարութիւններ: Այս շրջանում Հայաստանը բաժանուած էր նախարարական տների՝ տոհմերի միջեւ: իւրաքանչիւր նախարարութիւն ունէր իր աւագը՝ նախարարը: Տոհմական կալուածներն անցնում էին սերնդից սերունդ՝ ժառանգաբար, աւագութեան կարգով, սակայն այս շրջանում սկսեցին առաջ գալ նաեւ սեպուհներ, որոնք, հաշուի չառնելով ժառանգականութիւնը, ցանկանում էին անջատուել նախարարութիւններից եւ դառնալ ինքնուրոյն միաւորներ: Յետագայում այս միաւորը դարձաւ այն կարեւոր նախապայմանը, որի հիման վրայ առաջացան բազմաթիւ իշխանական տներ: Սիւնիքը, որպէս առանձին նախարարութիւն, պատմութեան մէջ յիշատակւում է Դ. դարից: Նրա սկզբնաւորման մասին ստոյգ տուեալներ չկան[11], սակայն յայտնի է, որ, վաղ միջնադարից սկսած այն բաղկացած է եղել երկու ճիւղերից՝ «Հայկազունք» եւ «Սիսակունք»[12]: Առաջինը տիրում էր Գեղամայ լճի աւազանին, միւսը՝ Սիւնիքի կենտրոնական մասին: Վաղ միջնադարից սկսած՝ Սիւնիքի քաղաքականութեանը բնորոշ էր կենտրոնական պետութիւնից անջատուելու ձգտումը: Չնայած այս հանգամանքին՝ Սիւնեաց նախարարութիւնը եղել է բաւական հզօր ու լաւ կազմաւորուած եւ ռազմապաշտպանական կառոյցների ու բնական խոչընդոտների շնորհիւ արգելք էր դարձել արեւելքից դէպի պետութեան կենտրոն տանող միակ հնարաւոր ուղղութեանը, որը պայմանաւորուած էր նրանով, որ Սիւնիքը աշխարհագրօրէն բաւական հեռու էր կենտրոնական Հայաստանի միւս շրջաններից: Թ. դարից սկսած Սիւնիքում հանդէս են գալիս արդէն գահակալ իշխաններ, որոնք ունէին սեպուհական ժառանգութեան իրաւունքով իրենց բաժին հասած տիրոյթներ ու կալուածներ:

11. Ն. Ադոնց, *Հայաստանը Յուստինիանոսի ժամանակաշրջանում*, Երեւան, 1987, էջ 57:

12. Ըստ Մովսէս Խորենացու ծագումնաբանութեան՝ Սիսակը յայտնի նախարար Հայկի սերնդից է, որը եղել է Սիւնիքի առաջին նահապետը, եւ որի անունով երկիրը կոչվել է Սիւնիք, իսկ նրա սերունդները՝ Սիւնեցիներ: Հ.Մ. Ուլթմազյան, նշ. աշխ., էջ 33:

Իշխանական տների կողքին տուեալ ժամանակաշրջանում, որպէս սոցիալ-քաղաքական միջավայր ձեւաւորող տարր, եղել են վանական կալուածները, որոնք իշխաններից անկախ աւատատիրական կազմաւորումներ էին եւ ունէին իրենց հարկատու բազմաթիւ գիւղեր, աւաններ[13]: Եթէ վանքերի նախնական, ձեւաստեղծ տարրերը քրիստոնէութեան առաջին շրջանում եղել են անապատներն ու մենաստանները, որտեղ ճգնել են սիւնակեացները, գբակեացները[14], ապա Թ–Ժ արերում կազմաւորուած վանական հաստատութիւնները եւ մասնաւորապէս եպիսկոպոսանիստ խոշոր հոգեւոր կենտրոնները դառնում են աւատատիրական, հասարակական, տնտեսական յարաբերութիւնների անբաժանելի մասնիկը:

13. Սիւնեաց հոգեւոր կենտրոն Տաթեւը XIII դարում ունեցել է 32 պատկան գիւղեր: Գր. Գրիգորյան, *Սիւնիքի վանական կալուածատիրութիւնը IX–XIII դարերում*, Երեւան, 1973, էջ 41 (ծնթգր. 79):

14. Սիւնակեացները եւ գբակեացները անապատականներ են, որոնք աղօթում էին սիւների վրայ կամ խորը փոսերի մէջ: Գր. Գրիգորյան, նշ. աշխ., էջ 21:

Այսպիսով՝ Բ. դարի սկզբից մինչեւ Թ. դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանում

քայքայւում է Սիւնիքի նախարարութիւնը եւ առաջ են գալիս Սիւնեաց իշխանական տները: Սիւնիքի գահակալ իշխանների պատմութեան մասին մեզ մանրամասնօրէն տեղեկացնում է Սիւնեաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելեանը: Ըստ նրա թողած տեղեկութիւնների՝ Սիւնիքի իշխանութիւնն սկզբնաւորւում է «իշխանաց-իշխեցող» Վասակով, որը 821-ին Բաբեկի[15] օգնութեամբ դիմադրում է Սիւնիք ներխուժած Սեւադա իբն-Աբդլ-Համիտ ալ Գահհաֆ զօրավարին եւ ազատագրում երկիրը: Վասակի երկու որդիները հօր մահից (821) յետոյ, որպէս ժառանգութիւն, ստանում են Սիւնիքի կալուածները: Աւագ որդուն՝ Փիլիպպէին, բաժին է ընկնում Սիւնիքի մեծ մասը եւ գահերեցութիւնը, իսկ կրտ. որդուն՝ Սահակին՝ Գեղամայ գաւառը, որը շուտով դառնում է առանձին իշխանութիւն (պատկ.8):

Սահակ գահակալ իշխանը քաղաքականապէս կողմնորոշուել էր դէպի Բագրատունիների զօրեղացած թագաւորութիւնը: Այսինքն՝ ներառուել էր ռազմական, քաղաքական այն չիրագործուած ծրագրին, ըստ որի՝ ամբողջ Հայաստանը պէտք է միաւորուէր Բագրատունիների թագաւորութեան ներքոյ (պատկ.9): 831–832-ին, Սահակի մահից յետոյ, Գեղարքունիքում իշխում է նրա աւագ որդին՝ Գրիգորը[16]: Եղբօր՝ Փիլիպպէի մահից (844) յետոյ Սիւնիքի կենտրոնական մասի իշխան է դառնում նրա կրտսեր ժառանգ Բաբկենը: Գրիգոր Սուփան Ա-ն, յարմար առիթ գտնելով, ցանկանում է գահերեց իշխանութեան ժառանգութեան մաս կազմել: 849–851-ին իշխանական այս երկու ճիւղերի միջեւ տեղի է ունենում ճակատամարտ, որի ժամանակ սպանւում է Գեղամայ իշխան Գրիգոր Սուփանը, որին յաջորդում է նրա աւագ որդին՝ Վասակը (Գաբուռ մականունով), իսկ Բաբկենին, որը մահանում է 852-ին ոչ բնական մահով, յաջորդում է նրա եղբայր Վասակը (Իշխանիկ մականունով): Յետագայում, 853-ին, Բուղայի՝ Սիւնիք արշաւանքի ժամանակ, Վասակ Գաբուռը Բագրատունիների հետ շարունակած իր քաղաքականութեան շնորհիւ կարողանում է արշաւանքի ուղղութիւնը կենտրոնացնել գահերեց Վասակ Իշխանիկի դէմ՝ այդ կերպ խնայելով Գեղարքունիքը: Բուղայի արշաւանքն աւարտւում է նրանով, որ գերեւարւում են Վասակ Իշխանիկը, նրա եղբայր Աշոտն ու մայրը: Քաղաքական այս ընդվզումներն աւարտւում են նրանով, որ Վասակ Գաբուռը հասնում է իր նպատակին եւ դառնում Սիւնեաց իշխանութեան գահերեց: Այսպիսով՝ Թ. դարում գոյութիւն ունեցող Սիւնիքի երկու քաղաքական կենտրոնները, տարածքային եւ քաղաքական դրդապատճառներից ելնելով, միաւորւում ու կազմում են մէկ «իշխանական պետութիւն»[17], որին հովանաւորում եւ աջակցում էր Աշոտ Բագրատունին (պատկ.10):

Վասակ Գաբուռի միիշխանութիւնը երկար չի տեւում. նա մահանում է 850-ին, իսկ մինչ այդ գերութիւնից ազատուած Վասակ Իշխանիկը Բագրատունիների աջակցութեամբ վերականգնում է նախկին կալուածքն ու գահերեցութեան իրաւունքը Սիւնիքի կենտրոնական գաւառների վրայ: Այս դէպքերից յետոյ վերականգնւում են Գեղարքունիքի եւ կենտրոնական Սիւնիքի իշխանութիւնները, սակայն այն տարբերութեամբ, որ Բագրատունիները Գեղարքունիքի հանդէպ արդէն ունէին ժառանգական իրաւունք, այդ իսկ պատճառով այն Ժ. դարի առաջին քառորդում դառնում է նրանց կալուածքը եւ անջատւում Սիւնիքի տարածքից: Վասակ Գաբուռի մահից յետոյ Գեղարքունիքի իշխան է դառնում նրա երեց որդին՝ Գրիգոր Սուփան Բ-ն, իսկ Վասակ Իշխանիկի մահից (890) յետոյ նրան յաջորդում է եղբայրը՝ Աշոտը: Այս իրավիճակում, ի յայտ են գալիս Սիւնեաց նահանգի մասնատման երրորդ փուլի դրդապատճառները, քանի որ Վասակ Իշխանիկի որդին՝ Փիլիպպէն, նոյնպէս իրաւունք ունէր հայրենական ժառանգութեան: Արդիւնքում ստացւում է այնպէս, որ կենտրոնական Սիւնիքի Հաբանդ եւ Շնհեր գաւառներն ստանում է Փիլիպպէ Բ. իշխանը, իսկ Բաղք, Վայոց ձոր, Ծղուկք, Ճահուկ գաւառները՝ Աշոտ իշխանը: Այս գահակալները նոյնպէս հաւատարիմ են մնում Բագրատունեաց նորաստեղծ թագաւորութեանը, որի արքայ էր օծվել Սմբատ Բագրատունին 885-ին[18]: Սիւնեաց իշխանների վասալական կախումը կենտրոնական թագաւորութիւնից ունէր նաեւ ռազմական նշանակութիւն, քանի որ սպասվում էին

15. Բաբեկը Ատրպատականի, Արցախի, Աղվանքի, Սիւնիքի, Փայտակարանի ազգային-ազատագրական շարժումների առաջնորդն էր, որը բազմիցս կռուել է արաբների դէմ: Հ.Մ. Ութմազյան, նշ.աշխ., էջ 34–74:

16. Գրիգորն ունէր նաեւ Սուփան մականունը: Հ.Մ. Ութմազյան, նշ.աշխ., հավելուած:

17. Հ.Մ. Ութմազյան, նշ.աշխ., էջ 86:

18. Ի դէպ, 891-ին Սմբատ Բագրատունու թագադրմանը մասնակցել են նաեւ Սիւնեաց եպիսկոպոս Տէր Յովհաննէսը եւ Վասակ Իշխանիկի եղբայրը՝ Աշոտը: Ստեփանոս Օրբէլեան, *Սիւնիքի պատմութիւն*, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Ա.Ա. Աբրահամյանի, «Սովետական գրող», Երեւան, 1986, էջ 176–177:

արաբական նոր արշաւանքներ, իսկ Սիւնիքն իր աշխարհագրական դիրքով սահմանակից էր Ատրպատականի արաբական էմիրութեանը: Սիւնեաց նահանգի իշխանական տների յետագայ ընդլայնումը կապուած էր կենտրոնական Սիւնիքի Բաղք գաւառի գահակալ իշխանների ներկայացուցիչ Ջագիկ Ա. իշխանի հետ, որից եւ սկսւում է ձեւաւորուել 970-ական թուականներին հիմնուած Բաղաց թագաւորութիւնը՝ Կապան մայրաքաղաքով (պատկ.11):

Բացի Վասակ գահերեց իշխանի տոհմական իշխանութեան երկու ճիւղերից՝ Փիլիպպէ Ա. եւ Սահակ, ըստ Ստ. Օրբելեանի վկայութիւնների՝ Սիւնիքում գոյութիւն են ունեցել եւս երեք ինքնուրոյն գահակալ իշխանների ճիւղեր. գահակալ իշխան Գրիգորի տունը, Կովսական-Քաշունիք գահակալ իշխանների տունը եւ Բաղքի Ջագիկեանների գահակալ իշխանների տունը[19]: Այս հինգ ճիւղաւորումները Սիւնիքում կազմաւորուել են դեռ Թ. դարի առաջին կէսին: Հաւանական է, որ նշուած ժամանակաշրջանում Սիւնեաց իշխանական երկրի ինքնուրոյն իշխանութիւնները եղել են 18-ը[20]: Վերը նշուած հինգ տոհմական տները դարձել են ինքնուրոյն աւատատիրական միաւորներ՝ շնորհիւ միւս իշխանական տների հետ ունեցած երկարատեւ հասարակական-քաղաքական մրցակցութեան, եւ հաստատել իրենց գերիշխանութիւնն ու ժառանգական իրաւունքները: Այս հանգամանքը մեզ համար շատ կարեւոր է, քանի որ բացատրում է երկրում գոյութիւն ունեցող ներքին քաղաքական իրավիճակը, որն անխուսափելի է դարձրել խիստ ամրացուած շրջանների անհրաժեշտութիւնը:

19. Հ.Մ. Ուլթմազյան, նշ.աշխ., յաւելուած:

20. Հ.Մ. Ուլթմազյան, նշ.աշխ., էջ 26–27 (տողատակ 2):

Ժ. դարում Սիւնիքի յետագայ քաղաքական իրավիճակն անմիջականօրէն կապուած է Բագրատունեաց թագաւորութեան արտաքին քաղաքականութեան հետ, եւ չնայած որ Սիւնեաց իշխանները համառօրէն լուծումէին իրենց նահանգի ներքին հարցերը, այնուամենայնիւ, Սմբատ թագաւորի եւ Ատրպատականի էմիրի միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները բախտորոշ եղան Սիւնիքի համար: 909-ին քաղաքական իրավիճակը ծայրաստիճան սրւում է. Յուսուֆը կազմակերպում է արշաւանք՝ նպատակ ունենալով Նախճաւանով հասնել Դուին: Մինչ արշաւանքը, Սմբատ թագաւորը մերժում է Գագիկ Արծրունուն Նախիջեւանի հարցում, եւ այն անցնում է Յուսուֆին: Վերջինս վրճռական դեր է խաղում Սիւնիքի յետագայ ճակատագրում, քանի որ Գագիկ Արծրունու խորհրդով, Յուսուֆը Նախիջեւանը գրաւելուց յետոյ շարժւում է դէպի Սիւնեաց աշխարհ՝ նպատակ ունենալով չեզոքացնել Սիւնիքի իշխաններից սպասուող հնարաւոր հակահարուածը: Սիւնեաց գահերեց իշխան Սմբատի մահից (909) յետոյ նրան յաջորդող Աշոտ իշխանը, տեղեկանալով սպասուող ներխուժման մասին, կազմակերպում է պաշտպանութիւն:

Նախիջեւանում Յուսուֆի զօրքերին միանում են Գագիկ եւ Գուրգէն Արծրունիների գնդերը, եւ բանակը արշաւում է Սիւնիք: Անհաւասար մարտում Սիւնեաց իշխանները, տեսնելով, որ պարտութիւն են կրում, թողնում են երկիրը եւ հեռանում Նախիջեւան, Վասպուրական եւ Գուգարք: Գեղարքունիքի գահակալ իշխան Գրիգոր Սուփան Բ-ն, հասկանալով անխուսափելի պարտութեան մօտեցումը, անձնատուր է լինում Յուսուֆին առանց կռւի: 909–910-ին Յուսուֆի արշաւանքի հետեւանքով սպանւում եւ գերեՀարւում է Սիւնեաց իշխանների մեծ մասը՝ բացի Սմբատ գահերեց իշխանի կրտ. եղբայր Վասակից, որին յաջողւում է փախչել գերութիւնից: Սմբատ թագաւորին գերելուց հետո, որն ամրացել էր Կապոյտ ամրոցում, Յուսուֆը շարժւում է դէպի Սիւնեաց երկրի միակ անառիկ մնացած ամրոց Երնջակը, որտեղ ապաստանել էին Սիւնեաց իշխանների կանայք: Երկարատեւ, յամառ պաշտպանութիւնից յետոյ ամրոցն ընկնում է թշնամու ձեռքը, ամբողջովին աւերւում ու թալանւում:

Սիւնեաց գահակալ իշխանների տապալումից յետոյ թւում է թէ երկիրը պէտք է մասնատուէր, սակայն դա տեղի չի ունենում: Նահանգի հարաւարեւելեան գաւառների, մասնաւորապէս՝ Բաղքի եւ Կովսականի իշխանները, որոնք փախուստի չէին դիմել, կենտրոնացնելով շրջակայքում մնացած ուժերը, սկսում են հակահարուած հասցնել Յուսուֆի զօրքերին, ետ գրաւել տանուլ տուած շրջաններն ու ամրոցները: Սիւնեաց

իշխանների ազատագրական շարժումը գլխաւորում էր հայոց թագաւոր հռչակուած Աշոտ Բ-ն (Երկաթ)։ Յուսուֆի դէմ որոշ յաջողութիւնների հասնելուց յետոյ Սիւնիք են վերադառնում Սմբատ գահերեց իշխանը, Գեղարքունիքի Գրիգոր Սուփան Բ. իշխանի եղբայրը՝ Վասակը, Սմբատ գահերեցի եղբայրներ Սահակը, Բաբկենը, Վասակը եւ Գրիգոր Սուփան Բ-ի միւս եղբայրը՝ Սահակը։

Այսպիսով, Յուսուֆի՝ Սիւնիք կատարած արշաւանքից յետոյ, Հայոց թագաւոր Աշոտ Բ. Բագրատունին վերականգնում է Սիւնեաց իշխանական տները։ Ժ. դարի առաջին կէսին Սիւնիքը բաժանւում է երեք իշխանութիւնների՝ Գեղարքունիքի գահակալ իշխանութիւն, Վայոց ձորի գահերեց իշխանութիւն եւ Զագիկեանների գահակալ իշխանութիւն (պատկ.12)։

Գեղարքունիքի իշխան է դառնում Գրիգոր Սուփան Բ-ի կրտ. եղբայր Վասակը[21], որը, սակայն կարճատեւ է իշխում գաւառին, քանի որ շուտով գերւում է Աշոտ Բ թագաւորի հրամանով եւ փակւում Կայան[22] ամրոցում։ Յովհաննէս կաթողիկոսի բոլոր բանակցութիւնները Աշոտ Բ. թագաւորի հետ անարդիւնք են աւարտւում, եւ շուտով Գեղարքունիք գաւառն անցնում է Ծիրակի Բագրատունիներին։ Այսպիսով, Ժ. դարի առաջին կէսին Գեղարքունիքը դադարում է առանձին իշխանութիւն լինելուց եւ փաստօրէն դուրս է գալիս Սիւնեաց աշխարհի տիրակալութիւնից։

Այլ ճակատագիր ունեցաւ Վայոց ձորի գահերեց իշխանութիւնը, ուր վերադարձել էին Սմբատ գահերեց իշխանի եղբայրները՝ Սահակը, Բաբկենը եւ Վասակը։ Վերջինս պատերազմում է Գողթնի էմիրութեան դէմ՝ նպատակ ունենալով ետ վերցնել գաւառը եւ միացնել Սիւնիքին։ Պատերազմական երկարատեւ գործողութիւններից յետոյ Սիւնեաց բանակը պարտութիւն է կրում։ Վայոց ձորի գաւառները բաժանւում են Սահակի, Բաբկենի եւ Վասակի միջեւ։ Կալուածների մեծ մասն անցնում է Սմբատին, իսկ Սահակը տիրում է արեւելեան մասին, որի կենտրոնը դառնում է Բաղքը։ Բաբկենը, որը դժգոհ էր մնացել կալուածների բաժանումից, շուտով մեկնում է Նախճաւան եւ գանգատւում Նըսր զօրավարին, որը խաբէութեամբ բանտարկում է Սահակին ու Վասակին եւ գրոհում է Սիւնիքի վրայ՝ նպատակ ունենալով գերել Սմբատ իշխանին եւ տիրել նրա կալուածներին։ Սմբատ իշխանն ամրանում է Վայոց ձորի Եղեգիս «մայրաքաղաքում» եւ ամրացնում գաւառի բերդերը՝ Սմբատաբերդը, Պոօշաբերդը, Հրասեկան, Արփան։ Նըսրը, տեսնելով Սմբատի կազմակերպած պաշտպանութիւնը, որոշում է զէնքի չդիմել եւ հաշտութիւն կնքել։ Պայմանագրի համաձայն՝ Սմբատը Նըսրին տալիս է բազմաթիւ նուէրներ, իսկ վերջինս բանտից ազատում է Սահակ եւ Վասակ եղբայրներին։ Վայոց ձոր գաւառը նոյնպէս մասնատւում է իշխանութիւնների, եւ կենտրոնական Սիւնիքում առաջանում են չորս ինքնուրոյն իշխանական տներ։ Ժ. դարի առաջին քառորդին Զագիկեանների իշխանութեան տակ էր Սիւնիքի Քաշունիք գաւառը (Բաղքի հիւսիսարեւելեան մասը) ու Կապան քաղաքը։ Այս ժամանակաշրջանի Սիւնիքն իր տարածքով ամենամեծն է եղել նահանգի ողջ պատմութեան մէջ, սակայն Ատրպատականի արշաւանքներից (909–920թթ) յետոյ այն նորից մասնատւում է. Գեղարքունիք գաւառն անցնում է Բագրատունիներին, Երնջակը, Նախիջեւանը եւ Գողթնը՝ արաբներին։ Սիւնեաց մնացած գաւառներում իշխանական տները բաւական մասնատուած էին, իսկ Սմբատ գահերեց իշխանի մահից յետոյ Սիւնեաց աշխարհի վարչաքաղաքական կենտրոնը տեղափոխւում է Բաղք, եւ Ժ. դարի երկրորդ կէսին ձեւաւորւում է Կապանի կամ Բաղքի թագաւորութիւնը։

Այսպիսով, Սիւնիքում Ժ. դարում գոյութիւն ունէին 4 առանձին իշխանութիւններ, որոնք ռազմական ճարտարապետութեան միջամտութեան կարիք ունէին (պատկ.13).

1. Վայոց ձոր եւ Ճահուկ գաւառներ. իշխում էր Սիւնեաց տէր Սմբատ իշխանը,
2. Կենտրոնական Սիւնիքի Ծղուկք եւ Բաղք գաւառներ. իշխում էին Սահակ եւ Բաբկեն իշխանները,
3. Հաբանդ գաւառ. իշխում էր Փիլիպպէ Դ. Սիւնին,
4. Քաշունիք գաւառ եւ Կապան քաղաք. իշխում էին Զագիկեանները։

21. Ըստ Հ.Մ. Ուլթմազյանի հետազոտութիւնների՝ Գեղարքունիքի իշխան է դառնում նաեւ Սահակը, որը տիրում էր Գեղարքունիքի ծովափնյա գաւառներին։ Հ.Մ. Ուլթմազյան, նշ.աշխ., էջ 117–118։

22. Կայան (Կայեան, Կայեն) ամրոցն այդ ժամանակ պատկանում էր Բագրատունեաց թագաւորութեանը. գտնւում էր Գուգարք նահանգի Ջորփոր գաւառի հարաւարեւմտեան մասում՝ Սանահին եւ Հաղբատ վանքերի միջեւ։ Ամրոցը կառուցուել է Ժ–ԺԲ դարերում. առաջին իշխանը եղել է Աշոտ թագաւորի աները՝ Սահակ Սեւադան (922)։ Ամրոցի աւերակները մինչեւ օրս պահպանուել են Հաղբատ գիւղի հարաւարեւմտեան կողմում՝ Դեբեդ գետահովտի բարձր հրուանդանի վրայ։

Ատրպատականի արշաւանքների դադարից յետոյ հնարաւորութիւն է ստեղծւում խաղաղ, ստեղծագործ աշխատանքի, եւ այդ շրջանում աշխուժանում են կենտրոնախոյս ուժերը: Սիւնեաց իշխանական տներն ստանում են ինքնուրոյնութիւն եւ անկախութիւն: Սիւնիքի տարածքից անջատուել էին Գեղարքունիքը, Երնջակը, Նախիջեւանը, իսկ Տաթեւի վանքը, որպէս Սիւնեաց աշխարհի հոգեւոր կենտրոն, ժամանակաւորապէս կորցրել էր իր նշանակութիւնը: 958-ին, երբ մահանում է Սիւնիքի Յակոբ եպիսկոպոսը, Բաղքի իշխան, Զագիկեանների ներկայացուցիչ Ջեւանշեր Բ-ն, իր արքունանիստ Կապան քաղաքում ընդունում է Անանիա կաթողիկոսին եւ, կնքուած պայմանագրի համաձայն, Տաթեւի թեմի առաջնորդ ընտրում Վահան Բ-ին: Նորընտիր կաթողիկոսը վերականգնում է Տաթեւի կալուածներն ու հեղինակութիւնը: Շուտով երկրի քաղաքական կեանքում Զագիկեանները բաւական վճռական դեր են խաղում. Բաղքում սկսում են կենտրոնանալ Սիւնեաց իշխանական տների բոլոր կարեւոր ուժերը (պատկ.14): Դրան պէտք է աւելացնել նաեւ այն, որ 900-ական թուականներին մահանում է Վայոց ձոր իշխանական տան վերջին ներկայացուցիչը՝ Վասակ Դ. իշխանը[23]: Կենտրոնական Սիւնիքում իր իշխանութիւնը պահպանել էր Սահակի որդի գահերեց Սմբատ Բ-ն, որը տիրում էր նաեւ Վայոց ձորին եւ Ճահուկին: Սմբատ Բ. իշխանը յետագայում ամրանում է այնքան, որ Բաղքում իրեն հռչակում է թագաւոր, այսպիսով, Սիւնեաց աշխարհում 970-ականներին Բաղաց թագաւորութեան[24] հիմքն է դրւում (պատկ.15): Այս մասին Ստ. Օրբելեանն ունի հետեւեալ վկայութիւնը. «Այդ առաջին թագաւորեաց ի Սիսական աշխարհս արին եւ քաջն, հզօր եւ բարեպաշտ արքայն Սմբատ՝ որդի Սահակայ՝ եղբօրն Սմբատայ, որք էին որդիք բարեպաշտին Աշոտոյ՝ եղբօր մեծին Վասակայ որ իշխանիկ կոչիւր...»: Սիւնիքի թագաւորութեան հիմնադրման տարեթուի մասին կայ մէկ այլ կարծիք, ըստ որի՝ Սիւնեաց գահերեց իշխան Վասակ Դ-ն մահացել է 976–980-ին, իսկ 974-ին, ըստ Մաթեւոս Ուռհայեցու, Հայաստան արշաւած հայազն Չմշկիկ կայսեր դէմ դուրս է եկել 80.000-անոց բանակ, որի կազմում էր նաեւ Կապանի Փիլիպպէ թագաւորի զօրագունդը: Այստեղ պատմագիրը նկատի ունի ոչ թէ Սիւնեաց թագաւորին, այլ Արցախի արքայիկներից մէկին[25]: 980-ին Սմբատ գահերեց իշխանը Ատրպատականի ամիրայի օժանդակութեամբ իրեն հռչակում է թագաւոր[26]:

Ժ. դարում Սիւնիքի թագաւորութեան մասն են կազմել Ծղուկք (գաւառի հարաւային մասը), Ջորք (Կապան), Արեւիք, Կովսական (Գրհամ), Բաղք եւ Հաբանդ գաւառները (պատկ.15): Ինչպէս արդէն տեսանք, Գեղարքունիքը պատկանել է Անի-Շիրակ Բագրատունեաց թագաւորութեանը, Վայոց ձորը, Այլախը (Ծղուկքի հիւսիսային մասում) եւ Աղահեջքը 989–1020-ին գրաւել էր Գագիկ Ա. թագաւորը, իսկ Գողթն, Նախիջեւան ու Երնջակ գաւառները մաս են կազմել Արաբական էմիրութեան (պատկ.16):

Սիւնիքի թագաւորութեան հիմնադրմամբ շարունակւում է անջատողական քաղաքականութիւնը կենտրոնական թագաւորութիւնից, բայց շուտով, երբ այն կորցնում է Ատրպատականի հովանաւորութիւնը, Սմբատ գահերեց իշխանն ստիպուած էր դաշինք կնքել Սմբատ Բ. տիեզերակալի հետ: Սմբատ Բ. տիեզերակալի մահից յետոյ 990–992-ին նրան յաջորդած Գագիկ Ա. Բագրատունեաց թագաւորն արշաւում է Սիւնիք եւ գրաւում Վայոց ձոր, Ճահուկ եւ Այլախ գաւառները[27]: Եթէ նկատի ունենանք նաեւ այն հանգամանքը, որ Բագրատունեաց թագաւորութիւնը տիրում էր Սիւնիքի թագաւորութեան հիւսիսային շրջաններին եւ Արաքսի հովտին, ապա պարզ է դառնում, որ Սիւնեաց նորաստեղծ թագաւորութիւնը Հիւսիսից եւ Արեւմուտքից Բագրատունեաց թագաւորութեան ճնշման տակ էր:

Ստեղծուած իրավիճակը թելադրում էր ունենալ բազմաթիւ ամրացուած շրջաններ: Ըստ Ստ. Օրբելեանի վկայութեան՝ Սիւնիքի թագաւորութիւնն ունեցել է 43 բերդ, որոնցից նշանաւոր էին 12-ը, 48 վանք եւ 1.008 գիւղ[28]: Ռազմական նկատառումներով կառուցւում են նոր ամրոցներ եւ վերանորոգւում գոյութիւն ունեցողները: Արաբ հեղինակ Իբն-Ալ-Ֆակքիհն իր «Գիրք երկրների մասին» աշխատութեան մէջ վկայում է, որ Խոսրով Անուշիրվանը Սիւնիքում կառուցել է տուել մի շարք բերդեր եւ ամրոցներ,

23. Ըստ Բ.Հ. Հարութիւնյանի՝ «...Վասակը մինչեւ իր մահը, որը հաւանաբար, տեղի է ունեցել 976–980 թթ. միջեւ, եղել է սոսկ գահերեց իշխան...»: Բ.Հ. Հարութիւնյան, *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 3, Երեւան, 1976, էջ 117:

24. Պատմիչներն այն կոչել են «թագաւորն Կապանին», «Բաղաց», «Սիւնեաց» կամ «Սիւնեաց եւ Բաղաց» թագաւորութիւն: Կապանի թագաւորութիւն անունը ճշմարիտ է մինչեւ 1003-ը (Ա.Ձ. կրտ.): Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 40:

25. Բ.Հ. Հարութիւնյան, *Հայ ժողովրդի պատմութիւն*, Երեւան, 1976, հ. 3, էջ 117:

26. Բ.Հ. Հարութիւնյան, *Սիւնիքի թագաւորութեան հիմնադրման տարեթիւը*, «ԲԵՀ», № 1, Երեւան, 1969, էջ 146–149:

27. Թ.Խ. Հակոբյանի կարծիքով՝ արշաւանքը տեղի է ունեցել 1003-ին: Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1963, էջ 196:

28. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 36–37: *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարպետի լուսաբանեալ*, Վենետիկ, 1862, էջ 140–141:

որոնց թւում ՝ Շահպոնիքը[29]: Թագաւորութեան շրջանում են վերակազմուել Մեղրի (Ժ–ԺԲ դարեր, Արեւիք գաւառ), Գրիամ (Ժ–ԺԸ դարեր, Կովսական գաւառ), Բոլորաբերդ (ԺԲ. դար, Վայոց ձոր գաւառ) եւ մի շարք այլ ամրոցներ:

988-ին Սիւնեաց Սմբատ թագաւորի (թագաւորել է տասնմէկ տարի) մահից յետոյ նրա գահին է բարձրանում որդին՝ Վասակը, իսկ եղբայրը՝ Սեւադան, դառնում է իշխանաց իշխան: Իշխանական տների մասնատման ու անընդհատ փոփոխման հետ կապուած՝ Սիւնեաց տան հոգեւոր թեմի՝ Տաթեւի վանքի եպիսկոպոսի գերիշխանութիւնը նոյնպէս փոփոխւում է:

Սիւնիքի հոգեւոր կենտրոնները նախքան թագաւորութեան հիմնադրումը եղել են երեքը. Գեղարքունիքում՝ Մաքենեաց վանք-ամրոցը (պատկ.17), Վայոց ձորում՝ Ցախացքարը (պատկ.18), եւ կենտրոնական Սիւնիքում՝ Տաթեւի վանք-ամրոցը (պատկ.19): Թագաւորութեան շրջանում Տաթեւի թեմը վերականգնում է իր կալուածները եւ նոյնիսկ տիրապետութեան տակ առնում Սիւնիքի կազմի մէջ չմտնող Վանանդ, Որդուատ, Նախիջեւան, Ջուղայ եւ Գողթն գաւառները[30]: 1040-ին մահանում է Վասակ թագաւորը եւ քանի որ չ'ունէր արու զաւակ, գահ է բարձրանում նրա փեսաներից Սմբատը, որը յայտնի է Աւագ Աշոտեան անունով: Վերջինս թագաւոր կարգուելուց յետոյ Եղբօրը՝ Գրիգոր Աշոտեանին, հռչակում է իշխանաց իշխան: Հազիւ թագաւորական գահին բարձրացած՝ Սմբատը Սիւնիքի անվտանգութիւնն ապահովելու համար պատերազմում է Լոռիի թագաւորութեան վրայ յարձակուած Աբուլ-Ասվարի դէմ եւ հասնում առաւելութեան: Շատ չանցած՝ 1044-ին, Ատրպատականի զօրքերը ներխուժում են Սիւնիք՝ նպատակ ունենալով կողոպտել արդէն մեծ հռչակ ու համբաւ վայելող Տաթեւի վանքի մեծաքանակ հարստութիւնը: Նոյն թուականին մահանում է Սմբատ Աշոտեանը, նրան փոխարինում է տղան՝ Գրիգորը, որը, Արցախի իշխանութեան հետ քաղաքական իրավիճակը բարելաւելու ձգտումով, ամուսնանում է Մեծն Սեւադայի դուստր Շահանդուխտի հետ: 1064-ին[31] սելջուկները Մելիքշահի եւ նրա վեզիր Նիզամ ալ-Մուլքի հետ արշաւում են Սիւնիք: Գրիգոր թագաւորը հաշտութիւն կնքելու համար ստիպուած նրանց է զիջում որոշ շրջաններ: 1084-ին մահանում է Գրիգոր թագաւորը, եւ քանի որ նա չունէր արու յետնորդ, գահի ժառանգ է դառնում նրա կնոջ՝ Շահանդուխտ թագուհու եղբայրը՝ Սենեքերիմը: Դիւանագիտական ունակութիւնների շնորհիւ՝ Սենեքերիմ թագաւորը կարողանում է կարգաւորել Սիւնեաց թագաւորութեան արտաքին քաղաքականութիւնը. նրան յաջողւում է վերականգնել թագաւորութեան տարածքից ժամանակին կորցրած որոշ տիրոյթներ (օրինակ՝ Կովսական գաւառը): Ծաւալում է շինարարական գործունէութիւն Որոտնավանքում, Վահանաւանքում, Տաթեւում: Ստեղծագործ եւ խաղաղ գոյատեւումը շուտով ընդհատում է Գանձակի սելջուկեան կուսակալութիւնը, որը 1094-ին, նպատակ ունենալով թուլացնել Սիւնիքի թագաւորութիւնը, կազմակերպում է զինուած յարձակում: Թագաւորութեան մայրաքաղաք Կապանը պաշարելուց յետոյ Բաղաբերդ ամրոցի պատերի տակ դաւադրութեամբ սպանւում է Սենեքերիմը (նոյն 1094-ին), որին յաջորդում է նրա որդի Գրիգոր Բ-ն: Սելջուկեան զօրախմբերը, նախապատրաստուելով նորից գրաւելու Սիւնիքը, ԺԲ. դարի սկզբից նախ տիրում են Արցախի հայկական իշխանութիւններին, ապա 1103-ին Չորթմանի առաջնորդութեամբ, խաբէութեամբ գրաւում Սիւնեաց մայրաքաղաք Կապանը[32], իսկ Բաղաբերդը գրաւելու փորձերը անյաջողութեան են մատնւում (պատկ. 20): Տիրելով թագաւորութեան մայրաքաղաքին՝ սելջուկեան զօրախմբերը զարգացնում են իրենց զաւթողական գրոհները եւ 1104-ին գրաւում Որոտանը, որը թագաւորութեան հիւսիսային սահմանային ամրոցն էր, 1105-ին՝ Բղենը: Ատրպատականի Ելտկուզ ամիրան, շարունակելով սելջուկեան արշաւանքները Սիւնիք, 1126-ին գրաւում է Բաղակու քար ամրոցը, 1152-ին՝ Շլորուտը, 1157-ին՝ Մեղրին, իսկ վրացիներին յաղթելուց յետոյ՝ 1166–69-ին գրաւում Սիւնեաց թագաւորութեան Գրիամ, Գեղի, Կաքաւաբերդ ամրոցները[33]: 1166-ին վախճանւում է Գիրգոր թագաւորը, եւ Սիւնեաց թագաժառանգ է հռչակւում նրա դուստր Կատայի ամուսինը՝ Հասանը, որը ծնունդով Խաչենի իշխանական տոհմից էր:

29. Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1963, էջ 197: Սիւնիքի նշանաւոր բերդերի թւում յիշատակւում են հետեւեալ ները. Որոտն (Ծղուկք գաւառ), Բղեն եւ Կկոց քար (Բաղք), Բաղաբերդ, Բաղակու քար, Գեղի, Շլորուտն եւ Կապան (Ջորք), Գրիամ (Կովսական), Կաքաւաբերդ, Կարճեւան եւ Մեղրի (Արեւիք):

30. «...Սիւնիք, Բաղք, Արեւաց տունն, Որդուատ, Արքուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջուղայ որքա~ն Երասխայ գետն հատանէ, Ճահուկ, Վայոց ձոր խաչերոյ խոռովն, Գեղաքունի կոզայ բակովն, Երիշատ, Ջաղացաձորն, եւ Փորակն իսկ ...բոլորովին... Հաբանդ գաւառ... նաեւ Վանանդ եւ Գողթն բոլորովին...»: Ստեփաննոս Օրբէլեան, *Պատմութիւն Նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 310–311:

31. Նոյն թուականին Մելիքշահի հայրը՝ Ալփասլանը, յարձակւում է Դուինի վրայ եւ այն հանձնում իր տեղակալներին: *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 3, Երեւան, 1976, էջ 478:

32. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1910, էջ 333–335:

33. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1910, էջ 335–336:

Սիւնեաց թագաւորութիւնը վերանում է 1170-ին, երբ սելջուկեան թուրքերը դարձեալ խաբէութեամբ պաշարում են Կապանից Բաղաբերդ ամրոց տեղափոխուած (1103) մայրաքաղաքը:

Սիւնիքի թագաւորութիւնը գոյատեւել է 183 տարի (987–1170)[34] (պատկ.21): Սիւնեաց իշխանների մեծ մասն ապաստանում է Վայոց ձորի ամրոցամերձ շրջաններում, իսկ ազատանին արտագաղթում հարեւան նահանգներ: Այս շրջանում բազմաթիւ Սիւնեցիներ գաղթում են Վրաստան եւ համալրում վրաց արքունական բանակը: Ծուտով, վրաց թագաւոր Գեորգի Գ-ի գահակալութեան շրջանում (1156–1184), վրաց արքունիքում հաստատուած Զաքարէ եւ Իվանէ եղբայրներն սկսում են ազատագրական արշաւանքները Հայաստանի տարբեր նահանգներ եւ 1211-ին սելջուկներից ազատում են Սիւնիքի Ծղուկք գաւառը: Զաքարեանները հնարաւորութիւն ստեղծեցին, որ հայրենազուրկ իշխանական տների ներկայացուցիչները հաստատուեն ազատագրուած գաւառներում: Այսպես՝ Օրբելեանների տոհմի ներկայացուցիչ Լիպարիտի աւագ որդի Էլիկումը, Նախիջեւանի, Ճահուկի եւ Բալասրահի գործակալ-զօրագլուխ կարգուելուց յետոյ, մասնակցում է 1184-ի Գանձակի ճակատամարտին, որտեղ սպանւում է: Նրա որդի Լիպարիտ Օրբելեանը յետագայում ազատագրում է Գեղարքունիքը, Որոտանը, Բարկուշատը եւ «Սիւնեաց եւ այլ բերդերոյն»[35]: Այս եւ ուրիշ յաջողութիւնների համար Լիպարիտ իշխանն Իվանէ Աթաբեկից ստանում է Հրաշկաբերդը (Հրասեկայ բերդ, Կապոյտ բերդ), Վայոց ձոր գաւառի Հարսնաքար լեռը՝ իր շրջակայ գիւղերով, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի եւ Աղստեւի մի շարք գիւղեր: Լիպարիտի ժառանգներ Սմբատն ու Տարսայիճը հզօրացնում եւ ընդարձակում են Օրբելեանների իշխանութիւնը: Բացի Օրբելեանների իշխանական տոհմից՝ Սիւնիք տեղափոխվեցին Խաղբակեանները, Ախթամարեանները, Ծահուռնեցիները, Մահեւանեանները (Մեհեւանեանները), Հասան-Համտունեանները, սակայն Իվանէ Աթաբեկի որոշմամբ Սիւնեաց իշխանական տները բաժանուեցին երկու մասի. Լիպարիտ Օրբելեան եւ Վասակ Խաղբակեան[36]: ԺԳ. դարի երկրորդ կէսին Օրբելեանները դառնում են Սիւնեաց աշխարհի կողմնակալ, իսկ քիչ անց՝ Լիպարիտի միջնակ որդի Սմբատը հռչակւում է իշխանապետ: Ըստ պատմական տեղեկութիւնների՝ Օրբելեանների տիրապետութեան տակ էին Լոռի գաւառը, Որոտան եւ Բարկուշատ գետերի հովիտները, իսկ Պռոշեանների՝ Ճահուկ (Ծահապունիքով հանդերձ), Երնջակ եւ Վայոց ձոր գաւառները: Պռոշեանների եւ Օրբելեանների միջեւ յետագայում եւս ծաւալւում են լարուած միջաւատատիրական յարաբերութիւններ. դրդապատճառը եղել է Ծահապունիք գաւառը (պատկ.22):

Լիպարիտ Օրբելեանի գահանիստը Արփայ կենտրոնն էր (այժմ՝ Արենիի մօտ)՝ Գեղարքունիք–Նախիջեւան մայրուղու խաչմերուկում (պատկ.23): Յետագայում կենտրոնը տեղափոխւում է Եղէգեայ գիւղաքաղաք: Յետագայ տարիներին այս երկու իշխանական տներից Օրբելեաններինը կարողանում է ստանալ քաղաքական առաւելութիւն եւ մեծացնել իրենց տոհմի ազդեցութիւնը Սիւնիքում: Պռոշեանների տիրապետութեան տակ այժմ միայն Վայոց ձորի գաւառն էր՝ Սրկղունք[37] կենտրոնով[38]: Ինչպէս արդէն ասուեց, նշուած երկու իշխանական տներից բացի՝ Սիւնիքում ԺԳ–ԺԴ դարերում գործել են մի շարք բնիկ իշխաններ, որոնք պակաս կարեւոր դեր չեն խաղացել արտաքին քաղաքական իրավիճակի կարգաւորման գործում[39]:

1220-ին Անդրկովկաս մոնղոլական ջոկատների ներխուժումից շատ չանցած՝ 1236-ին յաջորդեց Չարմաղանի յարձակումը, որտեղ վրացական բանակն անհաւասար մարտում պարտութիւն կրեց, որի հետեւանքով առաջացան մի քանի իշխանութիւններ, նրանց թւում եւ Սիւնեաց Ելիկում Ա-ի իշխանութիւնը, որը վասալական կախուածութիւն ունէր մոնղոլական գերիշխանութիւնից: Սիւնիք ներխուժած Ասլան Նոյի զօրախումբը պաշարում է Հրասեկայ բերդը (Վայոց ձոր գաւառ), որտեղ պատսպարուել էր Սիւնեաց Ելիկում Ա իշխանը, որն ստիպուած է լինում դաշնակցել մոնղոլ առաջնորդի հետ եւ զիջել դիրքերը: 1251–52-ին վախճանւում է Էլիկումը, որին փոխարինում է Սմբատի եղբայրը (1253–73): Օրբելեանների եւ Զաքարեանների միջեւ սկիզբ է առնում

34. Գ.Մ. Գրիգորյան, *Սյունիքը Օրբելյանների օրոք*, Երեւան, 1981, էջ 40: Հեղինակի կարծիքով՝ շուրջ 200 տարի (987–1170, Ա.Ձ. կրտ.):

35. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 47:

36. Այս տարածքում է առաջացել յետագայում նշանաւոր Պռոշեանների տոհմը: Կարապետ եպիսկոպոս, *Դոփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, Նիւթեր հայ մելիքութեան մասին*, մասն Բ, Էջմիածին, 1914, էջ 35:

37. Սրկղունքը հաւանաբար ներկայիս Վերիշեն (Վայոց ձորի մարզ) գիւղի տեղում էր: Տ.Մ. Սահակեան, *Սիւնիքը XIII–XIV դարերում*, Երեւան, 1973, էջ 19:

38. Վայոց ձորում Պռոշեանների տիրապետութեան տակ էր Բոլորաբերդ ամրոցը, իսկ Ճահուկ-Ծահապոնք գաւառում՝ Ծահապոնք ամրոցը: Բոլորաբերդը կառուցել է Պռոշ իշխանը, այդ պատճառով այն յաճախ կոչուել է նաեւ Պռոշաբերդ:

39. Այս շրջանում, բացի Օրբելեաններից, որոնց տիրոյթներն էին Ծղուկքը, Հաբանդը, Բաղք-Կապանը, Աղահեճքը եւ Վայոց ձորի մի մասը՝ Եղեգիս կենտրոնով, եւ Պռոշեաններից, որոնք տիրում էին Ճահուկ-Ծահապոնք, Երնջակ գաւառներին եւ Վայոց ձորի մի մասին՝ Սրկղունք կենտրոնով, Սիւնիքում գործել են նաեւ հետեւեալ ստորադաս իշխանութիւնները. Դոփեաններ՝ Գեղարքունիքում, Սողքում, Մեհեւանեաններ եւ Ծահուռնեցիներ՝ Վայոց ձորում, Սիւնեաց կամ Սիսական տոհմի շառավիղներ՝ Սիսականում: Տ.Մ. Սահակյան, նշ.աշխ., էջ 22–25:

թշնամութիւն, քանի որ Սիւնեաց աշխարհակալ Սմբատ Օրբելեանը, ճարպկօրէն եւ հմուտ դիւանագիտութեամբ կարողացել էր համոզել Էլխանին եւ ամրացնել իր դիրքերն ու ձեռք բերել անկախութիւն իր սյուզերինից (գերապետ)։ Սմբատ Օրբելեանին յաջողւում է տիրել նաեւ Գեղարքունիքին, որը պատկանում էր Զաքարեաններին[40]։ Յետագայ տարիներին, Սմբատը մեծ հռչակ է վայելում Սիւնիքում եւ դիւանագիտական ճկուն քաղաքականութեան շնորհիւ հզօրացնում ու ամրապնդում է երկիրը։ 1273-ին մա- հանում է Սիւնեաց իշխանը, որին փոխարինում է նրա կրտ. եղբայրը՝ Տարսայիճը, որը շարունակում է իր աւագ եղբօր քաղաքականութիւնը եւ տիրում ամբողջ Սիւնիքին։ Որպէս Սիւնեաց աշխարհի իշխաններ՝ այդ շրջանում յիշատակւում են նաեւ Լիպարիտն ու Զալալը։ Տարսայիճն ընդլայնում է իր կալուածները նոյնիսկ հարեւան նահանգներում եւ նորոգում է Սիւնեաց աշխարհի բազմաթիւ աւեր վայրերն ու կառոյցները։ 1290-ին մա- հանում է Տարսայիճ իշխանը, որին փոխարինում է նրա աւագ որդին՝ Ելիկում Ե-ն, որը կալուածներ է տալիս նաեւ Զալալին ու Լիպարիտին, եւ այդպիսով իշխանութիւնը նորից մասնատւում է։ Մինչեւ Լենկ Թեմուրի արշաւանքը Հայաստան (1386) եւ Օրբելեանների իշխանական տան գաղթը Վրաստան (ԺԵ. դարի սկզբներին), Էլիկումի մահից (1300) յետոյ Սիւնեաց իշխանութեան գլուխ է անցնում նրա աւագ որդի Բուրթելը, որն իր եղբօր՝ Բուղտայի հետ նահանգը կառավարում է մինչեւ 1348-ը։ Բուրթելին յաջորդում են նրա որդիները՝ Բեշքեն ու Իվանէն (Բեշքեն մահանում է 1377-ին)։ ԺԴ. դարի Սիւնեաց նահանգի վերջին իշխաններից են Բեշքեն Օրբելեանի կրտ. եղբայր Իվանէն եւ նրա ժառանգներ Սմբատն ու Բուրթելը (կրտ.)[41] (պատկ.24)։

40. Գ.Մ. Գրիգորյան, նշ.աշխ., էջ 53։

41. Գ.Մ. Գրիգորյան, նշ.աշխ., էջ 106։

1330–40-ական թուականներին, Սիւնեաց իշխանաց իշխան Բուրթել Օրբելեանի ժամանակ, Վայոց ձորում իշխել են Պռոշեան Ամիր Հասան եւ Ջումա իշխանները, որոնք ծաւալել են շինարարական ընդարձակ գործունէութիւն եւ հովանաւորել, օգնել են մի շարք դպրական կենտրոնների։ Այս երկու իշխանական տոհմերից բացի՝ ԺԴ. դարում Սիւնիքում ընդարձակ տարածք են ունեցել նաեւ Դոփեանները, որոնք տիրել են Գեղար- քունիքի մի մասին եւ Վերին Խաչենին (Արցախի Ծար)։

Լենկ Թեմուրի՝ Սիւնիք արշաւանքից մէկ տարի առաջ՝ 1385-ին, Ոսկե Հորդայի Թողթամիշ իշխանը Թաւրիզ կատարած արշաւանքի ժամանակ աւերում է Սիւնիքի Նախիջեւան եւ Երնջակ գաւառները։ 1386-ին Թեմուրեանները գրաւում են Երնջակ բերդը, ապա շարժուելով դէպի հիւսիս-արեւելք՝ նոյն թուականին գրաւում են նաեւ Որոտնաբերդը, որտեղ ամրացել էր Բուրթել Մեծ իշխանի թոռը՝ Սմբատը, եւ Վայոց ձորի Կապոյտ բերդը։ 1387-ին Լենկ Թեմուրի՝ Սիւնիք կազմակերպած երկրորդ ար- շաւանքի ժամանակ ընկնում է Ծահապունք բերդը. տեղի է ունենում Սիւնեցիների անասելի ջարդ։ Յիշատակութիւններ կան, թէ 1380-ական թուականներին Յուսուֆը յարձակւում է Սիւնիքի վրայ եւ գրաւում Որոտան բերդը։ Սիմոն գրիչը Տաթեւում գրած յիշատակութեան մէջ յայտնում է, թէ 1400-ին Սիւնեաց Սիսական ու Հաբանդ գա- ւառներում իշխել են Օրբելեան Սմբատ եւ Բուրթել իշխանները։

Այսպիսով՝ Թ–ԺԴ դարերում Սիւնիքում կառավարել են Սիւնեաց իշխանները, որոնք, յաջորդելով իրար, ժառանգել են հայրենական կալուածները եւ, տեղի տալով միջ- աւատատիրական ընդհարումներին, ակամայ ստեղծել են ռազմականացուած առանձին շրջաններ, որոնք, անշուշտ, ամրացուել են պաշտպանական ճարտարապետութեանը յատուկ ռազմավարական բազմաբնոյթ կառոյցներով։ Սիւնեաց իշխանները ոչ միայն նորոգել ու ընդլայնել են, այլեւ հիմնել են նոր ամրոցներ, բերդեր, քարաւանատներ, վանք-ամրոցներ, մելիքական ամրապատ ապարանքներ, պալատներ, դղեակներ եւ կառուցել կամուրջներ։

Անհրաժեշտ է նշել նաեւ ռազմավարական նշանակութեան ճանապարհների առկա- յութիւնը, քանի որ վերջիններս լեռնանցքների, կամուրջների, քարաւանատների հետ կազմել են երկրի ռազմավարական ընդարձակ համակարգի անբաժանելի մասը եւ շատ դէպքերում եղել են այն վճռորոշ հանգոյցները, որոնց միջոցով հնարաւոր էր կասեցնել կամ կանխատեսել թշնամու առաջխաղացումը դէպի կարեւոր վարչատնտեսական եւ հոգեւոր կենտրոններ։

Սիւնիքը, լինելով լեռնային երկիր, կախուած եղանակային հանգամանքներից, չունէր առեւտրական ճանապարհների շուրջտարեայ բանուկ լայն ցանց, ինչպէս, ասենք, Այրարատը, Վասպուրականը կամ Տուրուբերանը, որոնց տարածքներով անցնում էին միջազգային նշանակութեան մի շարք կարեւոր ճանապարհներ[42]: Սիւնիքով անցնող գլխաւոր ճանապարհներից են եղել.

1. Դուին–Նախճաւան–Օրդուբադ–Վարդանակերտ–Փայտակարան–Կասպից ծով անցնում էր Սիւնիքի արեւմտեան եւ հարաւային սահմանով՝ Արաքսի հովտով, եւ ժամանակին նաեւ՝ Ծաղատ (Ծղուկք գաւառ) գիւղաքաղաքով (պատկ.25),
2. Դուին–(Վայոց ձոր)–Պարտաւ ճանապարհն անցնում էր Բաշնորաշէն աւանի մօտով, Այրարատից մտնում Սիւնեաց Վայոց ձոր գաւառ եւ, բարձրանալով հիւսիս, հասնում Գեղարքունիքի Կոթ կայան, ապա թեքուելով արեւելք՝ Սոդք գաւառով անցնում Արցախ ու հասնում Պարտաւ (պատկ.26):

Առաջնահերթ նշանակութեան այս երկու ճանապարհներից բացի՝ Սիւնիքով անցել են մի շարք այլ հաղորդակցական ուղիներ, որոնք ծառայել են նաեւ իշխանական տարբեր տների ու կալուածների միջեւ կապ հաստատելու համար. Վայոց ձոր–Ծղուկք–Արցախ, Տաթեւ–Տանձավայր–Երիցավանք–Ողջի գետ–Բեխորուտ–Մեղրի, Տաթեւ–Կամբլի (Արամազդի) լեռնանցք–Վերին Գիրաթաղ–Ներքին Գիրաթաղ–Բաղաբերդ, Ծղուկք–Սիսիանի լեռնանցք–Նախիջեւան[43] (պատկ.27): Այս ճանապարհները կարեւոր էին նաեւ այն իմաստով, որ նպաստել են նրանց երկայնքով տեղադրուած գիւղերի եւ աւանների բարգաւաճմանն ու զարգացմանը: Ճանապարհները մի գաւառից միւսը յաճախ անցել են լեռնանցքներով, որոնք հնում կոչուել են «դուռ», «կապան», «պահակ», «ձեռնակ» եւ հսկել են լեռնանցքներով անցնող ճանապարհահատուածները (պատկ.28): Սիւնեաց աշխարհի մի շարք լեռնանցքներ, որտեղով անցել են առեւտրական ճանապարհները, նոյնպէս պաշտպանուած են եղել ամրոցներով ու պահակակէտերով, որոնք եղել են մաքսավայրեր եւ առեւտրի միջանցիկ կայաններ: Այսպիսի բերդերից են Արփան, Սուլեման (Վայոց ձոր), Տանձավայրը, Բերդաքարը, Գիլաբերդը (Բաղք), Արբան (Նախիջեւան), Բերդ Առաւելադաշտը (Ծղուկք): Ճանապարհները պաշտպանուած են եղել ռազմավարական միաւորներով՝ կայաններով, բերդերով, պահակ-աշտարակներով, ամրոցներով, դիտաշտարակներով, զօրակայաններով: Սիսաջան–Կոթ ճանապարհահատուածի երկայնքով տեղակայուած են եղել Սուլեմա, Վայս, Արփայ ամրոցները, Նախճաւան–Կարճաւան առեւտրական ճանապարհի Ծղկուքով անցնող հատուածը հսկում էին Ծաղատ, Դաստակերտ, Սիւնի, Աղխիտու, Որոտան, Խոտուք, Ցուր ամրոցները (պատկ.29):

Այս բերդակայանները եւ պահակակէտերը կառուցուել են իրարից որոշակի հեռաւորութեամբ՝ ապահովելով լուսային ազդանշանով հաղորդակցական կապը: «Առեւտրի կարեւոր վայր լինելու դէպքում ամրոցն արժանանում է քաղաք անուանմանը: ... բազմաթիւ պարսիկ առեւտրականներ այնտեղ էին բերում իրենց ապրանքները, քանի որ այդ ամրոցը համարւում էր ապահով: Նմանօրինակ վկայութիւն, Կոնստանսի ժամանակաշրջանից, հաղորդում է նաեւ Ասողիկը՝ «Արֆա» ամրոցի մասին: Բ. Ռուբիխը ենթադրում է, որ Արֆան համապատասխանում է Դուինին: Եղիշէի մօտ կայ Արբանեալ աւան: Ս.Տ. Երեմեանի կարծիքով այն համապատասխանում է այսօրվա Արենիին: Հաւանական է, որ Արֆան նոյնացւում է Վայոց ձորի Արփայ բերդի հետ: Չինուորական այս կայանը գտնւում է Դուինից հարաւ-արեւելք, հաղորդակից է Նախճաւան–Թաւրիզ տանող մայրուղուն: Մայրուղին նշուած է Պեւտինգերյան քարտէզում, այն օգտագործում էին պարսիկ առեւտրականները՝ ապրանքները Նախճաւան, Դուին բերելու համար»[44]:

Սիւնեաց նահանգի տարածքի մասին առաջին տեղեկութիւնը մեզ հաղորդում է Մովսէս Խորենացին, որը նահանգը բաժանում է 12 գաւառի՝ Երնջակ (6.000 քառ. կմ), Ճահուկ (1.130 քառ.կմ), Վայոց ձոր (2.350 քառ.կմ), Գեղարքունիք (1.735 քառ.կմ), Սոդք (2.045 քառ.կմ), Աղահեճք (1.402 քառ. կմ), Ծղուկք (1.950 քառ.կմ), Հաբանդ (1.325 քառ.կմ), Բաղք (975 քառ.կմ), Ձորք (525 քառ.կմ), Արեւիք (625 քառ.կմ), Կովսական

42. Я.А. Манандян. *О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времён*, Ереван, 1954, ст. 126–169.

43. Ա.Հ. Ղարագյոզյան, *Սիւնիքի հարաւ-արեւելեան մասի ճանապարհները*, «ՊԲՀ», № 2, Երեւան, 1980, էջ 263–268:

44. Արմէն Զարեան, *Ակնարկներ հին եւ միջնադարեան Հայաստանի քաղաքաշինութեան պատմութեան*, Երեւան, 1986, էջ 86:

(625 քառ.կմ)[45] (պատկ.28)։ 15.237 քառ.կմ մակերես զբաղեցնող այս ընդարձակ տարածքն ամբողջութեամբ Սիւնեաց աշխարհի կազմի մէջ եղել է բաւական կարճ ժամանակամիջոցում։ Մովսէս Խորենացու գաւառաբաժանումն օգտագործել է նաեւ Ղ. Ալիշանը՝ իր «Սիսական» աշխատութեանը կցած քարտէզում[46], որը Սիւնեաց աշխարհի լիարժէք, մանրամասն քարտէզն է (պատկ.30)։ Սիւնեաց աշխարհի ամենաանկայուն շրջաններըը, որը յաճախակի դուրս են եկել նահանգի կազմից եւ յետագայում նորից միացել նրան, Երնջակ, Գողթն եւ Նախիջեւան գաւառներն են։ Նահանգի հիւսիսային շրջանը՝ Գեղարքունիք եւ Սոդք գաւառները, Թ. դարի վերջից անջատողական քաղաքականութեան շնորհիւ միանում են Բագրատունեաց թագաւորութեանը՝ որպէս նրա վասալ[47] (պատկ.31)։

Սիւնիքի թագաւորութեան տարածքն ընդգրկել է 12 գաւառից 9-ը՝ Վայոց ձոր, Ծղուկք, Ճահուկ, Հաբանդ, Երնջակ, Զորք, Բաղք, Արեւիք, Կովսական, իսկ Ժ. դարի վերջերին նրա տարածքից դուրս են մնացել Վայոց ձորն ու Ճահուկը[48] (պատկ.32)։ Ինչ վերաբերում է Նախիջեւան գաւառին, ապա նրա՝ Սիւնիքի կազմից յաճախակի դուրս գալը բացատրւում է նաեւ նրանով, որ գաւառը, լինելով Սիւնիքի եւ Վասպուրականի սահմանային շրջանում, յաճախակի անցել է մերթ մէկ, մերթ միւս նահանգին։ Ըստ պատմիչներից հասած տեղեկութիւնների՝[49] Նախիջեւան գաւառն այս երկու նահանգների մասն է կազմել այսպես՝ Ը. դարի սկզբին Նախիջեւան գաւառը դուրս է եկել Վասպուրականի կազմից եւ հաւանաբար անցել Սիւնիքի կազմի մէջ։ Թ. դարի վերջին պատկանել է Բագրատունիներին, որոնք նուիրատուել են մերթ Վասպուրականին, մերթ Սիւնիքին։ 902-ին Սմբատ թագաւորը Նախիջեւանն ազատագրում է Արաբական էմիրութիւնից եւ նուիրում Սիւնեաց իշխան Աշոտ Արծրունուն։ 905-ին այն անցնում է Սիւնեաց իշխաններին, 909-ին՝ Արծրունեաց Գագիկ իշխանին։

ԺԱ. դարից սկսած՝ Նախիջեւանն անընդմէջ ենթարկուել է յարձակման եւ թալանի սելջուկեան թուրքերի, թաթար մոնղոլների, օսմանեան թուրքերի եւ Սեֆեան Պարսկաստանի կողմից, որոնք տարբեր ժամանակներում հաստատել են իրենց իշխանութիւնները գաւառում։

Ժ. դարում Սիւնիքի տարածքից դուրս են մնացել նաեւ Երնջակ եւ Գողթն գաւառները, որոնք եղել են որպէս առանձին Արաբական էմիրութիւններ (պատկ.32)։ Այս գաւառները դեռեւս հնագոյն ժամանակներից պատկանել են Սիւնեաց նախարարներին[50]։ Երնջակ գաւառն իր համանուն բերդով Է. դարում միացած է եղել Սիւնիքին[51], 912–913-ին այն Գողթնի էմիրութեան մաս է կազմել, որը յետագայում ընդարձակել է իր տիրապետութիւնն Արաքսի ափերին[52]։ Ժ. դարից սկսած՝ արդէն Սիւնիքի տարածքն սկսում է նուազել, իսկ աւելի ուշ առանձնանում է նաեւ Վայոց ձորը։

Սիւնեաց աշխարհի գաւառաբաժանման վերաբերեալ կայ երեք վկայութիւն։ Հնագոյնը Է. դարի «Աշխարհացոյց»-ն է (պատկ. 33, 33.1), ապա՝ Ստ. Օրբելեանի երկու վկայութիւնները։ Ինչպէս նշեցինք, Սիւնիքի գաւառները 12 են, սակայն Ստ.Օրբելեանը, թուարկելով դրանք, աւելացնում է. «...բայց այլ եւս ունի գաւառս յոլով զորս ոչ յիշեցաք. Է՛ որ փոխեալ են անունաք սոցա. է՛ որ յայլ. եւ յայլ գաւառս բաժանեալ են»[53]։

Սիւնիքի պատմական իրողութիւնների, գաւառների բաժանման, իշխանական սահմանների անընդմէջ փոփոխման մանրամասն այս նկարագրութեան նպատակը միասնաւորելն է պատմա-աշխարհաքաղաքական այն բարդ ու խճճուած դարաշրջանը, որի ժամանակ եւ պատճառով երկրի տարբեր շրջաններում, արտաքին թշնամու ու երկրի ներսում առկայ ընդվզումների հետեւանքով, կառուցուել են նոր կամ ամրացուել են հին ամրոցներ՝ ընդլայնելով պաշտպանական ռազմավարական հմուտ համակարգերը։

Սիւնեաց նահանգը պատմութեան մէջ միշտ ունեցել է անկախ իշխանութեան ձգտումներ։ Երկրի բնականօրէն ամուր դիրքը եւ Սիւնեցիների ազատատենչ նկարագիրը նպաստել են ինքնիշխան վարչակազմի գոյատեւմանը։ Սիւնիքի նահապետերը վայելել են նախարարական տոհմերի յարգանքն ու պատիւը նոյնիսկ միապետական թագաւորութեան շրջանում։

45. U.S. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»-ի*, Երեւան, 1963, էջ 117։

46. Ղ. Ալիշանի քարտէզում (Սիսական, Վենետիկ, 1893) Սիսական տարածքի մէջ ընդգրկուել են նաեւ Նախճաւան ու Գողթն գաւառները։

47. Ըստ Մ. Սմբատեանցի՝ 895-ին Գեղարքունիք գաւառը բաժանուած էր Սիւնեաց նահանգից։ Հեղինակն այս փաստը հիմնաւորել է ելնելով այն հանգամանքից, որ Գեղարքունիքից մինչեւ Սիւնեաց մայրաքաղաք Շաղատ ձիաւորը հասնում էր 3 օրում, իսկ նրա հարաւային սահմանը՝ 6 օրում, ուստի, գտնուելով այդքան հեռու, աւելի նպատակայարմար էր, որ մտած լիներ Այրարատ նահանգի կազմի մէջ։ Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց, *Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի*, Վաղարշապատ, 1895, էջ 424։ Մենք համամիտ ենք Հ.Մ. Ութմազյանի հետ (նշ.աշխ., էջ 95–96), որը ժխտում է այս մեկնաբանութիւնը։

48. Հ.Մ. Ութմազյան, նշ.աշխ., էջ 95–96։


49. Անանիա Շիրակացի, Թովմա Արծրունի, Ղեւոնդ Ալիշան։

50. Այստեղ տիրել են Ռշտունիները, Գողթնեցիները, Արծրունիները։

51. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 37։


52. Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 33։

53. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 37։



Պատկ. 1
Սիւնեաց նահանգի տեղադրութիւնը պատմական Հայաստանի մնացեալ նահանգների նկատմամբ (աղբիւրը՝ wikipedia.org)

1



Պատկ. 2
Հայաստանի Հանրապետութեան եւ Սիւնեաց նահանգի համադրական քարտէզ, գծագիրը՝ հեղինակի

2



Պատկ. 2.1
Հայկական լեռնաշխարհի եւ հարեւան երկրները, հեղինակ՝
Ա.Մ. Ոսկանեան
Պոլիգրաֆկոմբինատ – Տէրեան,
91, Երեւանի Համալսարանի
հրատարակութիւն, Երեւան,
1976, (Սիւնեաց նահանգի
տեղադրութիւնը՝ հեղինակի)

2.1



ՀԳՀՄՆ ՆՔ-Ք ՝ՀԱՀԳՆՀԳՔՔ ՎՀՄՄՊՎՃՈՒ ՑՈՊԳՒՀՎՈ • ՊՄՊԳՀՄՇԸ ՈՀՄ


ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԼԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏԵՁ
ՄԱՍՇՏԱՐ
ԵՐԵՎԱՆ
ՄԱՍՇՏԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՇԱՆԱԿՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏԵՁ


3

Պատկ. 3
Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան քարտէզ, տեխնիկօրէն մշակեց, գծագրեց Ա.Ս. Մինասեան, Պետական հրատարակչութիւն, Երեւան, 1932

Պատկ. 4.
Կովկասեան զինուորական քարտէզագրական բաժանմունք, 1900




4



5



6



7


Պատկ. 5
Սիւնեաց նահանգի յարաւարեւմտեան հատուածն այժմ համընկնում է Նախիջեւանի ԻՀ տարածքին (պատմական Նախիջեւան), իսկ Սիւնեաց նահանգի յարավարեւելեան հատուածն այժմ համընկնում է Ադրբեջանի Լաչինի շրջանին (պատմական Արցախ):

Պատկ. 6
Սիւնիքի լեռնագրութիւնը (Հայկական ՍՍՌ ատլաս, Երեւան–Մոսկուայ, 1961, էջ 7)

Պատկ. 7
Սիւնիքի ջրագրութիւնը (Հայկական ՍՍՌ ատլաս, Երեւան–Մոսկուայ, 1961, էջ 42)



Պատկ. 8
Սիւնիքի իշխանական տները
Է. դարի սկզբից մինչեւ 821-ը,
գծագիրը՝ հեղինակի




Պատկ. 9
Սիւնիքի իշխանական տները,
821–844-ին, գծագիրը՝ հեղինակի

8 9




Պատկ. 10
Սիւնիքի իշխանական տները,
844–909-ին, գծագիրը՝ հեղինակի



Պատկ. 11
Սիւնիքի իշխանական տները,
909–941/49-ին, գծագիրը՝ հեղինակի

10 11



12




13

Պատկ. 12
Սիւնիքի իշխանական տները,
941/49–970-ին, գծագիրը՝ հեղինակի

Պատկ. 13
Սիւնիքի գաւառաբաժանումը չորս
իշխանական տների Ժ. դարում,
գծագիրը՝ հեղինակի



14



15


Պատկ. 16
Սիւնիքի իշխանական տները
Օրբելեանների գերիշխանութեան
ժամանակ, ԺԳ–ԺԴ դարեր,
գծագիրը՝ հեղինակի

Պատկ. 17
Մաքենեաց վանք-ամրոցը,
Է–ԺԳ դարեր,

Պատկ. 18
Ցաղաց քար վանական համալիրը,
Ժ. դար, յետնախորքում՝
Սմբատաբերդ ամրոցը

Պատկ. 14
Սիւնիքի իշխանական տները,
970–998-ին, գծագիրը՝ հեղինակի

Պատկ. 15
Սիւնիքի իշխանական տները
Կապանի թագաւորութեան,
գծագիրը՝ հեղինակի ժամանակ,
998–1170, գծագիրը՝ հեղինակի



16



17



18



19

Պատկ. 19
Տաթեւի վանական համալիրը,
Թ–ԺԲ դարեր



20

Պատկ. 20
Բաղաբերդ ամրոցի ընդհանուր
տեսքը, Դ–ԺԲ դարեր



Պատկ. 21
Սիւնիքի թագաւորութիւնը,
987–1170 (աղբիւրը՝ wikipedia.org)


21



Պատկ. 22
Արփա ամրոցի ընդհանուր տեսքը

22








Պատկ. 23
Սիւնեաց նահանգով անցնող հիմնական ճանապարհները, գծագիրը՝ հեղինակի


Պատկ. 24
Սիւնեաց նահանգի իշխանական տներն Օրբելեանների գերիշխանութեան ժամանակաշրջանում, ԺԳ–ԺԴ դարեր, գծագիրը՝ հեղինակի

Պատկ. 25
Դուին–Կասպից ծով ճանապարհը



Պատկ. 26
Սիւնեաց նահանգով անցնող Ուլեայ Նորաշէն–Կոթ ճանապարհահատուածի պաշտպանական համակարգը, գծագիրը՝ հեղինակի





27



28

Պատկ. 27
Սիւնեաց նահանգի յարավարեւմտեան մասի ճանապարհները (աշխատանքային քարտէզ, հեղինակ՝ Արմէն Ղարագեօզեան)

Պատկ. 28
Սիւնեաց նահանգի լեռնանցքներով անցնող ճանապարհների պահակակէտերի՝ դուռ, կապան, պահակ, տեղադրման գծագրութիւն, գծագիրը՝հեղինակի

29

Պատկ. 29
Սիւնեաց նահանգով անցնող Որոտնաբերդ–Անդոկաբերդ ճանապարհի գծամասը, գծագիրը՝հեղինակի



Պատկ. 30
Ղ. Ալիշան, «Սիսական», 1:500.000
բնամղոն, Վենետիկի
Ս. Ղազար, 1893


30



31



32




33

Պատկ. 31
Սիւնիքի թագաւորութեան բաժանումը 12 գաւառների՝ ըստ Սուրէն Երեմեանի (բնօրինակ աշխատանքային քարտէզ)

Պատկ. 32
Սիւնեաց նահանգի գաւառաբաժանումը՝ ըստ Սուրէն Երեմեանի (բնօրինակ աշխատանքային քարտէզ)

Պատկ. 33
Հայաստանը՝ ըստ «Աշխարհացոյց»-ի

Պատկ. 34
Սյունիքի թագավորությունը ԺԱ դարում՝ ըստ Թ.Խ. Հակոբյանի, «Սյունիքի թագավորությունը», Երեւան, 1966, «Միտք» հրատարակչութիւն, էջ 191




34



Պատկ. 31.1
«Հայաստանն ըստ Աշխարհացոյց»-ի
քարտէզի հեղինակ՝ պ.գ.դ. Ալեքսան Եակոբէան, Քարտէզագիր՝ պ.գ.դ. Հենրիկ Խաչատրեան, Մասշտաբ 1:2 300 000 (1սմ=23կմ)

ԸՍՏ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑԻ



31.1



Նորավանք, Օրբէլեան իշխանական տան գինանշանը

1.2. ՍԻՆԵԱՑ ՆԱՀԱՆԳԻ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՈՒ ԲԵՐԴԵՐԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՄ ԵՒ ԱՐԴԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Նախքան Սիւնիքի հիմնական նահանգների ռազմավարական սկզբունքներին ու առանձնայատկութիւններին անցնելը՝ դիտարկենք, թէ պատմագրութեան եւ արդի գիտական աշխատութիւնների մէջ բերդամրոցների մասին ինչ տեղեկութիւններ կան, եւ որքանով են դրանք ստոյգ ու օգտակար։

Պէտք է ասել, որ Սիւնիքի նահանգի ամրոցների մասին յիշատակութիւնները հիմնականում առնչուած են պատմական դէպքերին՝ պատերազմներին ու զինուած ընդհարումներին եւ հոգեւոր թեմի հետ յարաբերութիւններին։

Ամրոցների առաջին համահաւաքը կատարել է մեծավաստակ Ստ. Օրբելեանը, որն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատութեան Գ. գլխում ամբողջ Սիւնիքում (թագաւորութեան շրջանում) յիշատակում է 24 նշանաւոր բերդեր՝ միւսները համարելով պակաս կարեւոր (նշ.աշխ. էջ 13-14)։

Այստեղ յիշատակուած բերդերը.

1. Բորտո (Բորտի), 2. Որոտն (Որոտնաբերդ), 3. Բորոդանայ (Բորոտն), 4. Սիւնեաց (Սիւնի)՝ Ծղուկք գաւառ, 5. Անդոկայ բերդ (Անդոկաբերդ), 6. Բարկուշատա (Բարկուշատ), 7. Բղենո՝ Բաղք գաւառ, 8. Բաղաբերդ, 9. Ծլորուտ՝ Ձորք գաւառ, 10. Գրհամ՝ Կովսական գաւառ, 11. Կքեբերդ (Կաքաւաբերդ)՝ Արեւիք գաւառ, 12. Խոժորաբերդ, 13. Ձագեձոր, 14. Հայրաբերդ, 15. Համբադայ (Հաբանդ)՝ Հաբանդ գաւառ, 16. Երնջակ՝ Երնջակ գաւառ, 17. Բարկուշատ, 18. Վանանդա (Վանդա)՝ Քաշունիք գաւառ, 19. Գեղարքունոյ (Գեղարքունի)՝ Գեղարքունիք գաւառ, 20. Քաշեթաղուց՝ Աղահեճք գաւառ, 21. Ծահպոնից (Ծահպոնք)՝ Ծահապունիք գաւառ, 22. Կապոյտ, 23. Հրասեկայ (Հրաշկաբերդ), 24. Սուլեմա՝ Վայոց ձոր գաւառ, 25. Մացրի (Մայրի)։

Բերդերի վերաբերեալ մէկ այլ աւելի ընդարձակ ցուցակ մեզ է հաղորդում Ղեւոնդ Ալիշանը՝ իր «Սիսական» աշխատութիւնում։ Այբբենական ցուցակում ներկայացուած 69 բերդերը. «Ազնաբերդ, Աղընճոց բերդ, Անապատ բերդ, Անդոկաբերդ, Արփայ բերդ, Բաղակայ բ. կամ Քար Բաղակու, Բարկուշատու բ., Բերդ, Բերդաթաղ, Բերդաձոր (գիւղ), Բերդատակ գ., Բերդի գլուխ, Բերդիկ (յԵրնջակ), Բերդիկ (ի Բարկուշատ), Բերդի մայր գ., Բղենոյ բ., Բոլորաբերդ, Բորոտնայ բ., Բորտոյ բ., Գեղաքունոյ բ., Գեղի, Գիլաբերդ, Գրհամ, Դայեկի քար, Դղեակ Խոսրովու?, Եղնաքար, Երնջակայ բ., Եօթնաբերդ (վիճակ), Ընջղակաբերդ, Լիզբերդ, Խոզաբերդ, Խոժոռաբերդ, Ծիծռանաքար, Կապան որ է Բաղաբերդ, Կապոյտ բ., Կարճաւան, Կաքաւաբերդ կամ Կաքաւուց քար, Կկուաքար կամ Կըկոց քար, Համբատայ բ., Հայրաբերդ, Հրաշկաբերդ կամ Հրասեկայ բ., Ձագաբերդ Ձագեձորոյ բ., Ճանճի բ., Մացրի, Մեղրոյ բ., Նորբերդ (ի Ճահուկ), Նորբերդ (ի Վետի), Ծահապօնից բ., Ծամբ, Ծլորուտ, Որձաբերդ, Որձաքար, Որոտն, Ուռաց-քար, Պահու բ., Պաղաբերդ, Պելեւ, Պուղաքար, Պուղտաբերդ, Սիւնեաց բ., Սմբատայ բ., Սուլիմաբերդ, Վահանայ բ., Վայոց ձորոյ բ., Վժնաբերդ, Ցաղացքար, Ցուր, Քաշէթաղուց բ. (նշուած աշխատութիւն, էջ 7–8, պատկ. 35)։ Ցուցակից յետոյ հեղինակն աւելացնում է 5 թուրքական անուն ունեցող բերդեր եւս՝ Ազգալէ (Սպիտակ բ.), Գըզլճա (Կարմիր), Կեավուր գալէսի, Սագսըղան գալէսի (Կաչաղակի կամ Անծեղի բ.), Քեչի գալէսի (Այծուծ բ.)։ Չհաշուած այս վերջիններն՝ մեր կարծիքով՝ բերդ չեն կարող համարուել 5 հետեւեալները. Նորբերդ (ի Վետի)–Սիւնիքում Վետի անունով աշխարհագրական վայր չի եղել, Պաղաբերդ – սա նոյն Բաղաբերդն է, որը մէկ անգամ արդէն յիշատակուած է, Վահանայ բ. – Վահան անունով մեզ յայտնի է Վահանաւանք ճարտարապետական համալիրը, որը վանք-ամրոց չի եղել՝ պարսպապատերի բացակայութեան պատճառով (Վահանաւանքի մօտ է Բաղաբերդը), Ցաղացքար – այս անունով յայտնի է վանք, որը նոյնպէս վանք-ամրոց չի եղել (Ցաղացքարի դիմաց Սմբատաբերդն է), եւ Կապան, որը հեղինակը համարում է

Բաղաբերդը, այնինչ Կապանը տարբեր ամրոց է: Այսպիսով՝ մեր կարծիքով՝ հաւանական ամրոցների թիւը 64 է:

Արդի գիտնականներից Սիւնիքի մի շարք ամրոցների բացայայտմամբ եւ անունների վերականգնմամբ զբաղուել են Թ. Հակոբյանը, Հ. Միքայէլ Յովհաննէսեանը, Բ. Հարությունյանը, Ա. Ղարագյոզյանը, Ա. Սարգսյանը, Լ. Մկրտչյանը, Գ. Սարգսյանը, Ա. Գնունին եւ ուրիշներ: Թ. Հակոբյանն իր «Սիւնիքի թագաւորութիւնը» գրքում (էջ 77) Ղ. Ալիշանի ցուցակին աւելացնում է եւս 8 բերդանուն՝ Դաստակերտ, Երուանդակերտ (Քաշունիքում), Դռնակերտ (Կովսականում), Վասակակերտ, Դաստակերտ, Ծաղտի բ. (Ծղուկքում), Կապան բերդաքաղաք (Զորքում) եւ Շնհեր (Հաբանդում): Նրա կարծիքով՝ «կերտ»-ով վերջացող եւ «բերդ» բառը պարունակող տեղանունները եղել են բերդեր: Հ. Միքայէլ Յովհաննէսեանն իր «Հայաստանի բերդերը» գրքում (էջ 345–433) յիշատակում է 56 ամրոց՝ Երնջակ, Շահապօնից, Նրբոյն բերդ, Արփայ բերդ, Հրաշակաբերդ, Անապատ բերդ, Ցախացքար բերդ կամ Եղեգիքի բերդ, Եղեգնաձորի բերդ, Սուլեմա բերդ, Սեւան բերդ, Գեղի կամ Քեղայոյ բերդ, Ալբերդ, Ցուրայ բերդ, Շաղատու բերդ, Համբադայ կամ Ջագեձորի բերդ, Կոնասու բերդ, Հալիձորի վանք-ամրոց եւ Դաւիթի բերդ, Խնձորեսկի բերդ, Բաղաբերդ, Որոտնայ բերդ, Բորոտնայ բերդ, Բորդոյ բերդ, Բղենոյ բերդ, Շլորուտն բերդ, Շահանդուխտի բերդ, Բարկուշատի բերդ, Աչաղուայ բերդ, Պիլիգան բերդ, Կապան կամ Ղափանի բերդ, Կաքաւաբերդ, Մեղրիի բերդ, Կարճեւանի բերդ, Գրհամ բերդ, Վասակաշատ, Անդովկայ բերդ, Հայրաբերդ, Խոռնի բերդ, Պանու բերդ, Սիւնյաց բերդ, Վանդայ բերդ, Չեւու բերդ, Վարդաբլուր բերդ, Քաշէթաղուց բերդ, Խոժորաբերդ, Վայոց բերդ, Վարդանի բերդ, Բերդաթաղի բերդ, Ազնաբերդ, Աղընճոց բերդ, Գիլաբերդ, Դայեկի քար բերդ, Լիզաբերդ, Խոզաբերդ, Ճանճի բերդ, Մացրի բերդ կամ Մայրի բերդ, Պաղաբերդ-Պուղաքար բերդ: Այստեղ Պաղաբերդը նոյնպէս համարժէք է Բաղաբերդին, ուստի ընդունելի է 55 բերդանուն:

Գ. Գասպարյանի, Ա. Գնունու, Լ. Մկրտչյանի «Արցախի հանրապետութեան Քաշաթաղի շրջանի ամրոցները» (2022) գրքում զետեղուած են եւս 3 նորովի ուսումնասիրուած ամրոցներ՝ Քաշունի, Քարոտան ու Կառնակաշ (Քաշունիք գաւառ): Ա. Ղարագյոզյանի ուսումնասիրութիւնների համաձայն (տե՛ս սոյն գրքի մատենագիտութիւնը էջ 446)՝ Սիւնիքում յիշատակուած բերդամրոցներին կարելի է աւելացնել նաեւ Բերդ-Առավելադաշտ, Տամալեկ, Տանձաւեր (Ծղուկք գաւառ), Գանձաբերդ, Կարանի եկեղեցի (Բաղք գաւառ), Բաբաք, Աստծո ժայռ, Բերդաքար, Գոհար, Կադիր կալասի, Աղջկաբերդ ամրոցները: Եթէ ամփոփենք նշուած բոլոր բերդերի անունները, ապա կարելի է ասել, որ Սիւնիքում յիշատակուած են 94 բերդանուններ, որոնցից 64-ը՝ Ղ. Ալիշանի, 13-ը՝ Հ. Միքայէլ Յովհաննէսեանի, 6-ը՝ Թ. Հակոբյանի, 11-ը՝ Ա. Ղարագյոզյանի, 3-ը՝ Գ. Գասպարյանի, Ա. Գնունու, Լ. Մկրտչյանի մօտ:

Որքան շատ են ամրոցները, այնքան աւելի դժուար է վերականգնել նրանց տեղերը եւ ձեւափոխուած անունները, քանի որ 1980–90-ական թուականներին մեր այցելած համեմատաբար լաւ պահպանուած ամրոցների թիւը 20-ից չի անցել: Մեր հնարաւորութիւնների սահմանում զբաղուել ենք ամրոցների տեղորոշմամբ, անունների ստուգաբանութեամբ եւ վերականգնմամբ, նաեւ օգտուել ենք ամրոցաշինութեան բնագաւառում եղած փորձից՝ նպատակ ունենալով բացայայտելու այս տիպի կառոյցների ճարտարապետական, ռազմական եւ ռազմավարական բնորոշ գծերն ու սկզբունքները (պատկ. 36): Յաւելենք նաեւ, որ գրական աղբիւրներից մեր կատարած փաստագրական հաշուառումը վերջնական չի կարող համարուել, քանի որ կան տեղանունների հետ կապուած չպարզաբանուած ու չուսումնասիրուած շատ հարցեր, ինչպէս նաեւ հեռանկարային հնագիտական պեղումների անհրաժեշտութիւն:



35

Պատկ. 35
Ղ. Ալիշանի «Սիսական» աշխատութեան քարտէզի վրայ հեղինակի նշած ու մեր տեղադրած ամրոցները



Պատկ. 36
Սիւնիքի պաշտպանական ճարտարապետութիւնը Ժ-ԺԴ դարերում, քարտէզը կազմել ու նկարել է ճարտարապետ Արա Չարեանը՝ 1983-90-ին հաւաքելով բոլոր աղբիւրների բերդերի յիշատակութիւնները

36



Թանահատ, արեւի ժամացոյցը

1.3. ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Մեծ Հայքի թագաւորութեան պաշտպանական համակարգերը: Սասանեան Պարսկաստանի եւ Հռոմէական կայսրութեան տարանջատիչ քաղաքականութեան հետ կապուած վարչատնտեսական կարեւոր կենտրոնների, հաղորդակցական ուղիների եւ սահմանամերձ շրջանների ռազմապաշտպանական ծրագրերը

Բերդաշինութիւնն սկզբնաւորուել է հնագոյն ժամանակներից. դեռեւս մեգալիթեան շրջանին վերաբերող աշտարակաւոր կոթողներում (բոլորակ աշտարակներ) նկատւում են պաշտպանական նպատակներով կիրառուած ամրակուռ պատեր, որոնց միակ բացուածքը՝ մուտքը, տեղադրուած է գետնից 3 մ բարձրութեան վրայ (պատկ.37)[54]: Որպէս հնագոյն պատսպարաններ՝ օգտագործուել են բնական քարանձաւներն ու այրերը, որոնք յաճախ տարածուել են գետահովիտների երկայնքով՝ ուղղահայեաց ժայռապատերին՝ անհրաժեշտութեան դէպքում քօղարկուելով քարաշէն պատերով[55]: Հին քարտէզներում Հայաստանը պատկերագրուել է որպէս լեռնային երկիր, եւ Արարատ լեռն ու Նոյեան տապանը եղել են պատկերագրական ակնառու տարրեր: Հետաքրքիր է նաեւ նշել, որ Հայաստանը հին քարտէզներում պատկերուել է նաեւ որպէս բերդերով ու ամրոցներվ հարուստ երկիր (պատկ.38, ա, բ): Նշանակալի են նաեւ հայկական տարբեր մանրանկարչական դպրոցների ձեռագրերի հետնախորքերում ամրոցներին բնորոշ տարրերի՝ աշտարակներ, հրակնատներ, պարսպապատերի վերին ատամնաշարեր եւ այլն, պատկերագրութիւնները (պատկ.39,ա,բ,գ,դ): Հայաստանը լեռնոտ երկիր է եւ շատ հարուստ է քարայրերով: Ինքնին պարզ է, որ այդպիսի մի երկրում նախնադարեան մարդկանց համար հին քարի դարում ամենից աւելի յարմար պատսպարան կարող էին լինել եւ իրօք եղել են քարայրերը[56]: Քաղաքաշինական առումով պաշտպանական միջոցառումների կազմաւորումն ու զարգացումը ի յայտ են եկել նախաուրարտական առաջին բերդշէներում (պատկ.40,ա) : Խոշոր քաղաքները, որպէս կանոն, հիմնադրուել են բլուրների շուրջ, որոնց գագաթներին կառուցուել են հաստատուն պարսպապատերով անառիկ միջնաբերդեր: Պաշտպանական այդ սկզբունքով են կառուցուել Նագրանի եւ Ծամիրամի (Արագածոտնի մարզ), Լճաշէնի (պատկ.41), Սարուխանի եւ Լանջաղբիւրի (Գեղարքունիքի մարզ, պատկ.42), Ուջի (Սիւնիքի մարզ) բերդշէները, որոնց ռազմավարական առումով յատակագծային լուծումներն արուել են՝ ելնելով տեղանքի առանձնայատկութիւններից: Որպէս պաշտպանական միջոց՝ օգտագործուել են քարակերտ, հաստաւուն որմնահեցերով պատեր եւ բնական ժայռակերպ խոչընդոտներ, որոնց համատեղ կիրառմամբ ստեղծուել է միասնական յատակագծային յօրինուածք: Երբ միջնաբերդի շուրջ բնակեցուած տարածքն ընդարձակուել է, կառուցուել են լրացուցիչ պարսպապատեր, որոնք թշնամու անակնկալ յարձակումներից անվտանգ էին դարձնում շահաստանները: Այս շրջանի տարբեր բնակավայրերի ուսումնասիրութիւնը բացայայտօրէն վկայում է, որ քաղաքաշինութեան բնագաւառում եղել են պաշտպանական նկատառումներով պայմանաւորուած օրինաչափ սկզբունքներ, որոնք դրսեւորուել են քաղաքների տեղընտրման, դիրքորոշման եւ կառուցապատման մէջ (պատկ.43): Նախաուրարտական եւ ուրարտական շրջաններում սկզբնաւորուած ռազմապաշտպանական շատ սկզբունքներ[58] յետագայում փոխանցուել են հայ թագաւորներին ու իշխաններին, որոնք, ելնելով սոցիալ-տնտեսական, քաղաքական, վարչական եւ ռազմավարական պահանջներից, շարունակել ու զարգացրել են պաշտպանական կառոյցների ճարտարապետութիւնը (պատկ.44):

Ամրաշինական տեսակէտից մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում Արագած լեռան, Գեղամայ եւ Սեւանի լեռնաշղթաների լանջերին բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջանի ամրոց-բնակավայրերի կենտրոնական ընդարձակ համակարգերը, որպիսիք են Սառնաղբիւրի, Վերի բերդի, Թոփ-քարի ամրոցները (պատկ.45)[59]:
Պաշտպանական շինութիւնների կառուցման համար կարեւոր գործօն է երկրի բնաաշխարհագրական ամբողջ կառուցուածքը, քանի որ իւրաքանչիւր բերդ կամ ամրոց իր դիրքային ու յատակագծային վերջնական լուծումն ստանում էր՝ ելնելով ռազմական պահանջներից եւ ընտրուած տեղանքի բնական առանձնայատկութիւններից: Այս առումով՝ բերդաշինութեան զարգացման համար, հայկական լեռնաշխարհը շատ յարմար էր: Հայկական թագաւորութիւնը սահմանազատուած էր լեռնաշղթաներով, որտեղ պարփակուած 300.000 քառ.կմ լեռնային տարածքը ծովի մակերեւոյթից աւելի բարձր

54. Այսպիսի կառոյցներից է ՀՀ Արմաւիրի մարզի Աղաւնատուն գիւղի մօտակայ Օյուղ աշտարակը: Ս.Խ. Մնացականյան, *Ակնարկ հայ ճարտարապետութեան պատմութեան*, Երեւան, 1964, էջ 26: Թորոս Թորամանյան, *Հայկական ճարտարապետութիւն*, Երեւան, 1942, էջ 10–11:

55. Հնագոյն բնակատեղիներից են կայան-բնակավայրերը, օրինակ՝ Արտին լեռան եւ Արզնիի քարայրային կայանները: Ս.Հ. Սարդարյան, *Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում*, Երեւան, 1967, էջ 88:

56. Թ.Գ. Ջահուկյան, *Մովսեական Հայաստանի պատմական յուշարձանները*, Երեւան, 1961, էջ 19:

57. «...Բերդ-շէները կառուցւում էին այսպէս. բլրի կամ բարձունքի գագաթին շինւում էր տոհմապետի բնակարանը, որը ամրացւում էր եւ դառնում մի տեսակ միջնաբերդ: Այնուհետեւ բարձունքը կամ բլուրը երբեմն նաեւ նրա մօտակայ բլրակները շրջապատւում էին բերդապատերով, որոնց ներսում ընկած տարածութեան վրայ պարսպապատւում էին տոհմակիցների բնակարանները: Թէ բերդապատերը, թէ բնակարանները կառուցւում էին մեծագանգուած հսկայական քարերով...»: Ս. Բարխուդարյան, *Խորհրդային Հայաստանի նիւթական կուլտուրայի յուշարձանները*, Երեւան, 1935, էջ 19–22:

58. Ն. Ադոնցի մեկնաբանութիւններից պարզւում է, որ ուրարտացիները երկիրը կազմակերպում էին բնակավայր-բերդ համակարգումների հասկացողութեամբ: Այս մասին ավելի հանգամանալից տե՛ս Արմէն Զարեան, նշ. աշխ., էջ 8:

59. Գ.Ե. Ադեյան, Կ.Կ. Ղաֆադարյան, *Հայկական ճարտարապետութեան պատմութիւն*, հատոր առաջին, գլուխ երրորդ, ՀՀ ԳԱԱ, «Գիտութիւն» հրատարակչութիւն, Երեւան, 1996, էջ 68:

էր, քան Անդրկովկասի ու Միջագետքի դաշտավայրերը, Իրանական եւ Անատոլիական բարձրաւանդակները (պատկ.46)։ Դիրքորոշման կարեւոր առանձնայատկութիւններից մեկն էլ այն է, որ, գտնուելով Արեւելքի եւ Արեւմուտքի ջրբաժանի վրայ, հաղորդակցական կարեւոր ուղիներից շատերն անցել են Հայկական լեռնաշխարհով։ Այդ տեղանքի լեռնային գոգաւորութիւնների՝ տարբեր ուղղութիւններով ձգուող լեռնաշղթաներն իրար հատուելով կազմել են ներփակ, միջլեռնային շրջաններ։ Մեծ Հայքի թագաւորութեան 15 նահանգների՝ աշխարհների սահմանազատումը հիմնականում կատարուել է՝ ելնելով աշխարհագրական այս պայմանների առանձնայատկութիւններից։ Շրջակայ լեռնաշղթաներից դէպի միջնաշխարհ կարելի էր մտնել բնական լեռնանցքներով, որոնք փաստօրէն ծառայել են որպէս սահմանային դարպասներ։ Այդտեղ հարկ գանձելու եւ սահմանային ճանապարհահատուածը հսկելու նպատակով յաճախ լեռնագագաթներին կառուցուել են բերդամրոցներ, որոնց երկկողմանի ժայռալանջ բերդակերպ պատնէշներն անհնարին էին՝ դարձնում վերջինների շրջանցումը։ Քարաւանները, պատուիրակութիւնների եւ դեսպանների պահակախմբերն ստիպուած էին բանակցութիւններ վարելուց յետոյ միայն շարունակել ճանապարհը եւ մուտք գործել միջնաշխարհ։ Այդպիսի ամրոցներից էին՝ Տոմիսայ (Տումեիշկի[60], Թմնիս, Թոմիս)–Ծոփքում, Փոսադուռն (Փոսատոն, Գերմանոսի Փոսատոն)[61]–Բարձր Հայքում, Չինթայ–Մարաց նահանգի եւ Ատրպատականի սահմանին (վերջինիս տարածքի վրայ), Անգղ (Ակլ, Արկաթիանկերտ)–Ծոփքում, Դաստարկ (Դաստեյրա)–Փոքր Հայքում։ Հայերի ամրոցաշինական արհեստավարժ գործունէութեան մասին կան պատմական տարբեր վկայութիւններ։ Այսպես. «Կապադովկիայի արեւելեան սահմաններում՝ հայերի կառուցած ամրոցների, բերդերի պատմութիւնը դեռեւս չի ուսումնասիրուած։ Սակայն, ինչպէս վկայում են պատմական տուեալները, նրանց թիւը շատ էր, իսկ ամրոցաշինութեան արուեստը՝ ժամանակակից ու համապատասխան էր արաբների, բիւզանդացիների ռազմագիտութեան պահանջներին։ Տեֆրիկէն (Տեւրիկ) ունեցել է բերդերից բաղկացած պաշտպանական համակարգ։ Դրանցից մէկը կոչուել է հայ զորահրամանատար Խրիսոխիրի կնոջ՝ Սպաթինի անունով»[62]։

60. Այս ձեւով յիշատակւում է ուրարտական արձանագրութիւններում։ Հ. Միքայել Յովհաննէսեան, *Հայաստանի բերդերը*, Վենետիկ, 1970, էջ 124։

61. Ս.Տ. Երեմյանի ենթադրութեամբ՝ Գերմանոսի Փոսատոնը նոյնանում է VII դարի «Աշխարհացոյց»-ի Փոսադուռն վայրի հետ։ Ս.Տ. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, 1963, էջ 88։

62. Արմեն Զարյան, նշ.աշխ., էջ 106։

Սահմանային շրջաններում մեծ նշանակութիւն է ունեցել ճանապարհների հսկողութիւնը, որոնք հիմնականում անցել են լեռնանցքներով։ Պատմիչների տեղեկութիւններից մեզ յայտնի են հետեւեալ սահմանամերձ, ռազմական նշանակութեան լեռնանցքները. Դարիալի՝ «Դուռն Ալանաց», «Դուռն Աղվանից», Զորասպ (Քելիշին), Չինթա, «Ճորա պահակ» (Հոնաց պահակ), Կրերեաց («Կիրուրի»), «Հուդայի դուռ» (Գուգլակ), «Կլդե-Կարնի», «Վիմադուրք», «Զորաց լեռնանցք», «Զորայպահակ» (Քաղեշի), «Վահուկի լեռնանցք», «Տաւրոյ բերան», «Փոստադուռն», «Պահ դուռ», «Ասորւոյ դուռ», «Դուռն Կամ Կապան Կիլիկիոյ», «Դրունք Հայոց»։ Սահմանամերձ նահանգների լեռնանցքների հսկողութիւնը թագաւորութեան ռազմավարական առաջնային խնդիրն էր։ Այդ է վկայում այն հանգամանքը, որ Արշակունիներին էին ենթարկվում Աղձնիքը, Կորճայքը, Նոր Շիրականը (Մեծ Հայքի հարաւային սահմանային շրջան) եւ Գուգարքը (հիւսիսային սահմանային շրջան)։ Աղձնիք նահանգում խոցելի կողմը փակում էր «Տաւրոյ բերան» լեռնանցքը, որտեղ Զորապահակ դուռն էր։ Կորճայք նահանգում Կրերեաց լեռնանցքը (ուրարտական շրջանում՝ «Կիրրուրի») հսկում էր Ալկի (Ալկեքար) պահակային ամրոցը՝ Նոր Շիրական նահանգի հարաւային սահմանային շրջանում, Արաքս գետի ակունքներում էր Զորասպ լեռնանցքը, որից հարաւ կառուցուած էր Չինթայ ամրոցը, որը նոյնպէս տեղադրուած էր լեռնանցքի բարձրադիր գագաթին։ Գուգարք նահանգի արեւելեան սահմանային մասում կառուցուել է Հունարակերտ ամրոցը (Հունան), որի մօտով անցնում էր Կապաղակ–Տփղիս ճանապարհը, իսկ նահանգը եզերող Թռեղքի լեռներում էր Կլդե–Կարնի («Վիմադուրք») լեռնանցքը, որն ունէր կարեւոր ռազմական նշանակութիւն։ Այս ռազմահենակէտերը կոչուած էին պաշտպանելու Միջնաշխարհը ասորական Ադիաբենեի, Ատրպատականի (հարաւային շրջան) եւ հիւսիսային Կովկասի ցեղերի (հիւսիսային շրջան) ներխուժումներից։

Ռազմավարական առումով բերդերն ու ամրոցները կոչուած էին պաշտպանելու թագաւորութեան պետական սահմանները, քարաւանային կարեւոր ճանապարհները, սահմանամերձ լեռնանցքները, վարչատնտեսական խոշոր կենտրոնները, վանական հաստատութիւնները: Դրանցից իւրաքանչիւրի անվտանգութիւնն իրականացուել է պաշտպանական տարբեր համակարգերի միջոցով, որոնք բաղկացած էին ամրոցներից, բերդերից, ռազմական կայաններից՝ դիրքերից[63], զօրակայաններից, պահակակէտերից, դիտաշտարակներից, ամրացուած հենակէտերից, լիմեսներից[64], կաստելներից[65], ձմեռանոցներից[66], դղեակներից եւ այլն (պատկ.47):

Վաղմիջնադարեան ժամանակաշրջանի բերդաշինութիւնը բնորոշւում է պաշտպանական զանազան կառոյցների արագ տարածմամբ ու զարգացմամբ: Դա բացատրւում է նրանով, որ Մեծ Հայքի թագաւորութիւնը բաղկացած էր բազմաթիւ բդեշխութիւններից, նախարարութիւններից[67], հոգեւոր իշխանութիւններից, որոնք ամրացման կարիք ունէին: Միեւնոյն ժամանակ Հռոմէական կայսրութեան եւ Սասանեան Պարսկաստանի յարձակումներից պաշտպանուելու համար անհրաժեշտ էր ամրացնել թագաւորութեան սահմանները: Վերը նշուած քաղաքական առանձին միաւորումների պաշտպանութեան անհրաժեշտութիւնը բխում էր նաեւ այն հանգամանքից, որ թագաւորութեան ներսում քաղաքական, տնտեսական, տիրոյթային կամ ժառանգական պատրուակներով յաճա- խակի էին բռնկւում ռազմական ընդհարումներ:

Արշակունիների թագաւորութեան շրջանից սկսած (66–429)՝ որպէս առաջնային խնդիր՝ ամրացւում էին թագաւորութեան սահմանամերձ շրջանները, առեւտրական ճանապարհները եւ խոշոր քաղաքները: Մինչեւ Մեծ Հայքի թագաւորութեան տարածքի բաժանումը Սասանեան Պարսկաստանի եւ Հռոմէական կայսրութեան միջեւ (387), Մեծ Հայքի սահմանային գօտին ամրացուել է հետեւեալ ռազմական հենակէտերով. Հիւսիս-արեւելքում՝ Գարդման (Գարդման), Հունարակերտ (Հունան), Կողբաքար, Ծոբ, Կաքաւաքար Քուեշի (Գուգարք), Հիւսիսում՝ Ծատբերդ, Թուխարս, Կլդեկարնի (Գուգարք), Հիւսիս-արեւմուտքում՝ Էրախանի, Բերդագրակ, Փարանագիոն (Տայք), Սմբատաւան, Փոսադուռն (Բարձր Հայք), Արեւմուտքում՝ Անի Աղյուն կամ Անալիբնա, Դաստարակ (Դաստեյրա, Բարձր Հայք), Քովիկ, Սոկ, Կոնի, Թմնիս (Չորրորդ Հայք), Հարաւ-արեւմուտքում՝ Թիլ-Էնձիտ (Անձիտ բերդ), Հորեբերդ, Էլեգիա (Ելեջե), Քնաբեղ, Անգղ (Ծափքում), Հարաւում՝ Ալկի, Ջլմար, Սմբատաբերդ, եւ Հարաւ-արեւելքում՝ Զինթայ (Մարաշ նահանգ): Հռոմէական կայսրութեան եւ Մեծ Հայքի սահմանային գօտում, հռոմէական կողմում, կառուցուել են՝ արեւմուտքից (ժամացոյցի սլաքի հակառակ ուղղութեամբ)՝ Կերճանիս (Գարսանիս), Դաստարակ (Դաստեյրա), Դասկուսա, Կիակկա, Համարա, Կոռնէ, Կղաւդիաս, Մետիտայ, Հուլիոպոլիս, Սուրթա, Մայակարիր (Ակուե Փրիգիտ), Կոռնդոն, Տուռ-Աբդին, Մաւրորում ամրոցները: Այս բերդերը գոյութիւն են ունեցել Դ. դարում: Թագաւորութեան սահմանամերձ պաշտպանական խնդիրները չեն սահմանափակուել միայն այս համակարգով. սահմանային գօտուց ներս՝ լեռնաշղթաների բարձունքներում, գետահովիտներում եւ ճանապարհների երկայնքով կառուցուել են ռազմական մի շարք կայաններ, որոնց նպատակը նոյնպէս սահմանային շրջանների ամրապնդումն է եղել (պատկ. 48): Բարձր Հայքի եւ Ծոփքի սահմանային շրջանների եւ յատկապէս Եփրատ գետի հայկական ու հռոմէական սահմանային պաշտպանական կառոյցները, չնայած նոյն նպատակով եւ միասնական մտայղացմամբ են կառուցուել[68], սակայն պաշտպանական համակարգի մաս կազմող իւրաքանչիւր տարր տարբեր յօրինուածք ունեցող ճարտարապետական տիպ է: Այստեղ կան եւ կարեւոր ամրութիւններ՝ բերդեր, ամրոցներ ու ռազմականացուած խոշոր վարչատնտեսական կենտրոններ, եւ փոքր՝ հռոմէական տիպի ուղղանկիւն զօրակայաններ ու առեւտրական նշանակութեան միջանկեալ հենակէտեր, եւ վերջապէս, պաշտպանական հիմնական միաւորների միջեւ տեղադրուած դիտաշտարակներ[69], հսկիչ պահակակէտեր եւ կայազօրներ: Այսպիսով՝ ընդարձակ, գծային պաշտպանական համա-

63. Իւրաքանչիւր միջնադարեան գիւղ ունեցել է պաշտպանական հենակէտեր՝ «դիրքեր», որոնք տեղադրուել են մօտակայքում՝ հնարաւորին չափ անառիկ տեղանքում եւ ծառայել են որպէս թաքստոց ու բնակիչների ապաստարան՝ թշնամու անակնկալ յարձակումների ժամանակ:

64. Մեծ Հայքի եւ Հռոմի սահմանամերձ շրջաններում հռոմէացիների կառուցած պահակակէտերի, ամրոցների, ճամբարների, ամրացուած քաղաքների, առեւտրական հենակէտերի ամբողջական համակարգ (լատիներէն Limites նշանակում է սահման): Ըստ Ջիորջիո Ռավենյանիի՝ կարելի է տարբերել մի քանի տիպի *լիմես*. ա. գծային տեղադրութեամբ եւ տարբեր պաշտպանական կառոյցներից բաղկացած լիմես, օրինակ՝ Դոբրուջիայինը, բ. լեռնային *լիմես*, որը պաշտպանական կառոյցների միջոցով փակում էր ձորերի եւ կիրճերի մատոյցները. բնորոշ էր Հայաստանի համար, գ. գետահովիտները, տափաստանները կամ բարձրաւանդակները հսկող *լիմեսները*, որոնք բնորոշ էին Սիրիային: Ընդհանուր առմամբ *լիմեսները* եղել են Limes interior – ներքին *լիմես*, եւ Limes exterior – արտաքին *լիմես*: Giorgio Ravegniani, *Castelli e citta՝ fortificati nel VI secolo*, Edizione Girasole, Ravenna, 1983, p. 83.

65. Սահմանային շրջանում հռոմէացիների եւ բիւզանդացիների կառուցած, յաճախ՝ հայերի մասնակցութեամբ, ամրութիւնները կոչուել են կաստելներ: (Լատիներէն Castrum նշանակում է դղեակ, ամրոց): Ջիորջիո Ռավենյանիոն տարբերում է երկու տիպի կաստել. Castella tumultuana – ժամանակաւոր պաշտպանական կառոյցներ, եւ Castella murata – մշտական գործող փոքր ամրութիւններ: Առաջինն ունի զուտ ռազմական նշանակութիւն, երկրորդը՝ քաղաքաստեղծ: Giorgio Ravegniani, նշ.աշխ., էջ 11:

66. Եղիշէն յիշատակում է արքունի ձմեռանոցներ, որոնք զօրքի կայաններ էին: Այսպիսի պաշտպանական կառոյցների թւում պատմիչը յիշատակում է Դրասխանակերտը, Փառախոտը, Արդյանքը, Ցոլակերտը, Կուաշաւանը, Աշնակը եւ այլն: Եղիշէ, *Վարդանանց Պատմութիւն*, Գահիրէ, 1950, էջ 158–159:

67. Բերդը, գիւղը կամ աւանը նախարարների սոցիալ-տնտեսական քաղաքականութիւնը պահպանող

կարգը, որի ռազմավարական նշանակութիւնը չափազանց կարեւոր էր, բաղկացած է եղել տարբեր նշանակութեան ու ճարտարապետական տարբեր յօրինուածքով ստեղծուած ռազմականացուած հենակէտերից:

Մեծ Հայքի թագաւորութեան հարաւային շրջանը, յատկապէս՝ Կորճայքի նահանգը, թագաւորութեան կենտրոնական շրջանների՝ Վասպուրականի եւ Տուրուբերանի՝ Ասորեստանից սահմանազատող գօտին է եղել, ուստի եւ պէտք է այն առանձնայատուկ ամրացուել: Այս շրջանը համարուել է Հայաստանի հարաւային պաշտպանական լեռնային գօտին, Եղիշէի խօսքերով՝ «Տմորիքի ամուրներ»[70]: Կորճայքի նշանաւոր բերդերից են Տմորիսը, Ալկեն, Սրինգը[71], Ագարակը, Ջլմարը, Սմբատաբերդը[72], որոնք տեղադրուած են եղել Միջագետքից կենտրոնական Հայաստան տանող եւ Կորճայքով անցնող ճանապարհահատուածի[73] երկայնքով, բոլորն էլ՝ քարաշէն, անառիկ, ժայռալանջ բարձունքների վրայ: Պաշտպանական հենակէտերի այսպիսի գծային դիրքորոշումը հնարաւորութիւն է տուել հսկողութեան տակ պահելու երկրի հարաւային շրջանները կենտրոնական նահանգներին կապող միակ մատչելի ուղղութիւնը: Հայաստանի միւս կարեւոր մատոյցը (արեւմտեան սահմանամերձ շրջան) սահմանակից էր Ծոփքին եւ Բարձր Հայքին: Այս շրջանի ռազմականացման գործը թագաւորութեան ուշադրութեան կենտրոնում էր, քանի որ, ինչպէս պատմիչներն են վկայում, հռոմէացի եւ յետագայում բիւզանդացի կայսրերը սահմանային այս շրջանից են ձեռնարկել իրենց զաւթողական արշաւանքները: Այս շրջանը հարաւ-արեւմուտքից մինչեւ արեւմուտք եզերուած էր Եփրատ գետի հովտով աջ ափին էին Մետիտայ , Կղաւդիաս, Կոռնէ, Համարա, Կիակկայ, Դասկուսա, Դաստարակ, Կերճանիս, իսկ ձախում՝ Էլեգիա, Թմնիս (Թոմիսա), Կոնի, Հորէբերդ, Մոկս, Քուիկ եւ Անի Աղվյուն (Անալիբնա) բերդերը: Հռոմէական կայսրութեան տարածքով Եփրատին զուգահեռ անցել են Մելիտենէ–Սեւ ծով եւ Մելիտենէ–Ամիդ առեւտրական ճանապարհները, ուստի վերը նշուած բոլոր բերդերը, բացի սահմանային լինելուց, նաեւ առեւտրական ճանապարհների պաշտպանական համակարգի մասն են կազմել[74]: Հայաստանի Հարաւ-արեւմուտքով անցնող Մելիտենէ–Արշամաշատ առեւտրական ճանապարհի երկայնքով տեղադրուած են եղել Թմնիս, Հորէբերդ (Ձիաթա), Թիլ-Անձիտ եւ Խարբերդ (Ձեիդի ամրոց) բերդերը, իսկ Հիւսիս-արեւմուտքով անցնող Սատաղ–Կարին–Վաղարշաւան–Երուանդաշատ ճանապարհի երկայնքով՝ Բոնակապան (Սինորա), Խաղտոյառիճ, Էլեգիա, Կարին, Դորայք, Մաժանակերտ, Կապոյտ, Առծակ ամրոցները: Հայաստանի արեւմտեան սահմանամերձ գօտին եւ այս շրջանից դէպի Արշամաշատ, Կարին, Տիգրանակերտ կարեւոր վարչական կենտրոնները գնացող ճանապարհներն ապահովուած են եղել ռազմավարական տարբեր համակարգերով: Սահմանային շրջանների պաշտպանութեան կարեւորութեան մասին է խօսում նաեւ այն վկայուն փաստը, որ երբ 387-ին Հռոմէական կայսրութեան եւ Սասանեան Պարսկաստանի միջեւ տեղի ունեցաւ Հայաստանի առաջին բաժանումը, սահմանամերձ նոր շրջանում, որն անցնում էր Մծբին–Կարին գծով, ինչպէս հռոմէական, այնպէս էլ պարսկական կողմում կառուցւում են մի շարք ամրացուած հենակէտեր, պահակակէտեր, լիմեսներ, զօրակայաններ: Հռոմէական մասում հարաւից հիւսիս տեղադրուած են եղել Դարայ (Անաստասուպոլիս), Մարդաբէրդ, Լուռնէ, Բեն-Աբել (Բնաբեղ), Կուռնդոն, Տիգրանակերտ (բերդաքաղաք, պատկ.64), Աթախ, Փում, Փիս, Կիթառիճ, Աւձաբերդ, Արտալէս, Կողոբերդ (Կեղի) եւ Կարին (բերդաքաղաք)[75] ամրացուած հենակէտերը, նոյն սահմանային գծին զուգահեռ պարսկական մասում՝ Մծբին (բերդաքաղաք), Տուռ-Աբդին, Արզն (Արզան, Ծուկառաբա), Քղիմար (Խլոմար, երկուսն էլ՝ քաղաքներ), Ակբաս, Սանասուն, Եղեգերդ (Էլեգերդա), Թարձեանք, Օղնուտ, իսկ նոյն գծով Կարինից դէպի հիւսիս՝ Բողբերդ (Բող, Բողաբերդ), Ոքաղէ, Փարանագիոն, Բերդագրակ, Էրախանի, Թուխարս, Ծատբերդ ամրոցները: Չնայած Հայաստանը բաժանուեց Արեւելեան եւ Արեւմտեան մասերի, սակայն փոքր միաւորները՝ գիւղերը, աւանները, բերդերն ու վանքերը, զերծ մնացին հռոմէական եւ յետագայում բիւզանդական ու պարսկական

հենարաններն էին: Դրանցից առաւել կարեւորների, յատկապէս՝ բերդերի շինարարութիւնն իշխող դասի իրաւասութեան տակ էր: Ն.Ռ. Թովմասյան, *Հայ սոցիալ-տնտեսական միտքը վաղ միջնադարում*, Երեւան, 1973, էջ 149:

68. Դեռեւս մ.թ.ա. I դարից հայ-հռոմէական սահմանը հռոմէացիները վերածել էին լիմեսի, իսկ II դարից սկսած ձեռնարկեցին հռոմեա-պարսկական լիմեսի կառուցումը: Հ.Պ. Հակոբյան, *Մեծ եւ Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմէական ամրութիւնների համակարգը*, «ՊԲՀ», № 4, Երեւան, 1986, էջ 139:

69. Դիտաշտարակները տեղակայվում էին իրարից այնպիսի հեռաւորութեամբ, որ ապահովվեին լուսային ազդանշանների ընդունումն ու հաղորդումը:

70. Եղիշէ, նշ.աշխ., էջ 246–248:

71. Սրինգ բերդը տեղադրուած է եղել Ճահուկ (կամ Կորճայք) եւ Մորթողանք գաւառների սահմանագծին:

72. Սմբատաբերդ անունով ամրոցներ կան նաեւ Բարձր Հայքում եւ Սիւնիքում: Կորճայքի ամրոցների մասին տե՛ս U.S. Երեմյան, *Մեծ Հայքի թագաւորութիւնը IV դարում*, քարտէզ, Երեւանի համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1979:

73. Այս ճանապարհը Կրերեաց լեռնանցքով մտնում էր Վասպուրական եւ հասնում մինչեւ Վան, որտեղ բաժանուել է հիւսիսային, հարաւային եւ արեւելեան ճիւղերի: Վասպուրականով անցնող ճանապարհահատուածի երկայնքով տեղադրուած է եղել եւս երկու ամրոց՝ Կանգաւառ եւ Հայք (Հայկաբերդ):

74. Մելիտենէ–Սեւ ծով ճանապարհի շարունակութիւնը կազմող հարաւային հատուածը, որը հասնում էր Ծամուշատ (Սամոսատ) եւ ընթանում Եփրատին զուգահեռ, նոյնպէս հռոմէական Հուլիսպոլիս, Բարսալա, Խոլմադարա բերդերի հսկողութեան տակ էր:

75. «... 421թ-ին Թեոդորոս Բ-ի կարգադրութեամբ սկիզբ դրուեց Կարինի ամրոցապատման աշխատանքներին: Մայրաքաղաքի [Կ. Պոլսի] պարիսպները կառուցուած են աղիւսաշէն գօտիներով ամրացուած, բիւզանդական կոչուած պատերով, իսկ Կարինում պարիսպները քարաշէն են: ... Ըստ հայկական աւանդութեան բուրգերը կառուցուել

ազդեցութիւններից, որը հայ քաղաքաշինութեան իւրայատուկ նուաճումն էր: Փոքր միաւորների, այդ թւում՝ բերդերի պատուիրատուներն այլազգի էին, իսկ ճարտարապետներն ու կառուցողները՝ հայեր[76]: Տուեալ ժամանակաշրջանի ամրոցների կառուցման արհեստավարժութեան մասին հետաքրքիր մէջբերում ունի Արմէն Զարեանը. «Դիոն Կասսիոսը գրում է. Պարիսպները կրկնակի եւ աղիւսաշէն լինելով, մեծ հաստութիւն ունէին եւ բաժանուած էին խոր խրամատներով: ...Նահանգը, որ կոչւում էր Կորճեք կամ Կորճայք, Վասպուրականի եւ Ասորեստանի միջեւ ընկած, բերդաշինարարների երկիր էր: Կորդուաց իշխանները կառուցել են Հայաստանի հարաւային պաշտպանական լեռնային գիծը՝ Վասպուրականի ու Տուրուբերանի դռները, Եղիշէի խօսքերով՝ Տմորիքի ամուրները: Կորդուքից ծանօթ են Տմօրիս եւ Ալկեքար ամրոցն ու բերդը, երկուսն էլ քարակերտ՝ ժայռերի վրայ կառուցուած»[77]:

Սահմանամերձ շրջանների ռազմավարական համակարգեր ստեղծելուց բացի՝ երկրի համապետական ռազմավարական քաղաքականութիւնը պահանջում էր պաշտպանական համակարգերի ցանցի միջոցով ամրացնել խոշոր վարչատնտեսական կենտրոնները եւ հաղորդակցման ուղիները: Ինչպէս արդէն նշեցինք, Հայաստանով անցնող մայրուղիները կապում էին Արեւելքը Արեւմուտքի հետ եւ նպաստում առեւտրի ու մշակութային կապերի զարգացմանը: Սակայն, միեւնոյն ժամանակ, դրանք եղել են նաեւ այն կարեւոր ուղղութիւնները, որոնցով թշնամին ներխուժել է երկրի խորքը: Այդ իսկ պատճառով, առեւտրական բոլոր ճանապարհներն ունեցել են նաեւ ռազմական նշանակութիւն եւ պաշտպանուել են բերդերի ու ամրոցների համակարգով: Չինաստանից, Հնդկաստանից դէպի արեւմուտք եւ Հիւսիս գնացող առեւտրական հնագոյն մայրուղին, որն անցնում էր Թաւրիզ–Ջուղայ–Նախճաւան–Արտաշատ–Վաղարշապատ–Կումայրի–Քաջատուն–Արքէոպոլիս–Սեբաստուպոլիս քաղաքներով, պաշտպանուել է ամբողջ ճանապարհի երկայնքով որոշակի հեռաւորութեամբ կառուցուած պաշտպանական հենակէտերի միջոցով, որոնք հսկել են լեռնանցքները, խոշոր քաղաքների մատոյցները, ինչպէս նաեւ յարակից վանական հաստատութիւնները: Ռազմական տեսակէտից կարեւոր էր Տիգրանակերտ–Մանազկերտ–Զարիշատ–Զարեհաւան–Արտաշատ ճանապարհը, որի երկայնքով տեղադրուած էին (Արեւմուտքից՝ Արեւելք) Ակբաս, Սանասուն, Եղեգերդ, Աստղաբերդ[78], Մուշ (բերդաքաղաք), Ողական, Ջեռնակ, Մանաւազակերտ, Ծումբ, Անգղ, Արծափ, Գայատու (Վոլանդում), Ցոլակերտ, Փառախոտ ռազմական կայանները: Վարչատնտեսական կարեւոր կենտրոնների մայրուղիների պաշտպանութիւնը՝ մայրաքաղաք մտնող կարեւոր հաղորդակցական ուղիների երկայնքով, որոշակի հեռաւորութեամբ տեղադրուած պաշտպանական միաւորների համակարգ էր, որը կարող էր զարգանալ ուղղագիծ, շրջանաձեւ, աղեղնաձեւ, ճառագայթաձեւ՝ կախուած տեղանքի առանձնայատկութիւններից: Այդպիսի համակարգի միջոցով էր ապահովուած, օրինակ, Տիգրանակերտ մայրաքաղաքը. այն բաղկացած էր քաղաքի մատոյցներում տեղադրուած Քղիմար, Ափում, Ակբաս (Արեւելքից) եւ Աթախ, Փում (հիւսիս-արեւմուտքից) ամրոցներից:

Մինչեւ Դուինի հիմնադրումը Հայաստանի վարչատնտեսական կենտրոնը Արտաշէսեանների հիմնադրած Արտաշատ քաղաքն էր, որը, յիրաւի, համարուել է Այրարատյան աշխարհով անցնող ճանապարհների սիրտը[79]: Արտաշատով անցնող ռազմավարական կարեւոր նշանակութեան Արտաշատ–Սատաղ, Արտաշատ–Տիգրանակերտ, Արտաշատ–Թաւրիզ ճանապարհները պաշտպանուած են եղել գծային պաշտպանական համակարգերով (պատկ.49. ա): Դ. դարի 30-ական թուականներին հիմնադրուեց Դուին մայրաքաղաքը, եւ ռազմավարական առաջնահերթ խնդիրը դարձաւ բուն քաղաքն ու նրա մատոյցները պաշտպանական յուսալի համակարգի միջոցով ամրացնելը (պատկ.49.բ): Այս նպատակով Դուին տանող բոլոր ճանապարհներին կառուցուեցին ռազմական կայաններ, ամրոցներ, բերդեր: Դուինով անցնող առեւտրական եւ ռազմական կարեւոր ճանապարհներն էին՝ (Արեւմտեան) Դուին–Կարին–Սատաղ–Կողոնիա–Ամասիա–

են Խոսրովի տիպի՝ «Խոսրովային» ամրութիւնների ձեւով: Կարինը մի քանի անգամ վերակառուցուել է եւ պարիսպները գրեթէ բոլորը քարաշէն են...»: Արմէն Զարեան, նշ.աշխ., էջ 91:

76. Փաւստոս Բուզանդը հաղորդում է, որ Շապուհ II-ի (310–379) կարգադրութեամբ «Հայաստանում ամուր տեղերում բերդեր շինվեցին»: Փաւստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց*, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւններն ակադեմիկոս Մտ. Մալխասյանցի, «Հայաստան» հրատ., Երեւան, 1968: Ամրոցներ կառուցելու հայերի վարպետութեան մասին է վկայում նաեւ այն, որ նոյնիսկ Հայաստանի տարածքից դուրս՝ օտար պատուիրատուները հայ ճարտարապետների եւ ռազմագէտների միջոցով կառուցել են Կալատալ-Արմենի (Սիկիլիայում), Արմենոկաստրո (Բիթինիայում) եւ Արմենոկաստելլի (Ռեթիմնեում) դղեակները: Արմէն Զարեան, նշ.աշխ., էջ 88:

77. Արմէն Զարեան, նշ.աշխ., էջ 36–37:

78. Մակունաց եւ Աստղաբերդ ամրոցները, տեղադրուած լինելով այս ճանապարհի վրայ, պաշտպանում էին նաեւ դրանց միջեւ տեղադրուած Սբ Աթանգինե վանքը, որը IV դարում կառուցել է Գրիգոր Լուսաւորչի որդի Արիստակեսը՝ Մոճկոնք գիւղի մօտ: *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1, Երեւան, 1986, էջ 51:

79. Թ. Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968, էջ 127:

Բիւզանդիա[80], (Հարաւ-արեւմտեան) Դուին–Խլաթ–Քղիմար–Ուռհա–Դամասկոս, (Արեւելեան) Դուին–Հրազդան գետ–Կոթաւան–Ձոդի լեռնանցք–Պարտաւ, (Հարաւ-արեւելեան) Դուին–Նախճաւան–Թաւրիզ, (հիւսիսային) Դուին–Հրազդան գետ–Տփխիս: Բոլոր այս ճանապարհների երկայնքով տեղադրուած են եղել պաշտպանական հենակէտեր: Ըստ Կ. Գյոտերբոկի ուսումնասիրութեան՝ 387-ի պայմանագրի համաձայն՝ Դուինը՝ Հայաստանի, Մծբինը՝ Պարսկաստանի, Նիկեփորիոնը՝ Բիւզանդիայի համար եղել են առեւտրական փոխանակութիւնների մաքսավայրեր[81]: Կարեւորագոյն ճանապարհներին կառուցուող բերդերն ունեցել են նաեւ առեւտրական նշանակութիւն[82], ինչպէս, օրինակ, Արփայ (Արփենալ) բերդը, որը Սիւնիքի Վայոց ձոր գաւառում էր՝ Արփայ գետի ձորահովտի վերջին կէտում՝ Շարուրի դաշտ մտնող կիրճի բարձրադիր ափին:

Հայաստանի խոշոր քաղաքներ Արտաշատը (պատկ.50), Վաղարշապատը, Երուանդաշատը, Զարեհաւանը, Զարիշատը, Վանը, Նախճաւանը պաշտպանուած են եղել ռազմավարական ընդարձակ, համապետական նշանակութեան պաշտպանական համակարգերով՝ մինչեւ Հայկական թագաւորութեան վերացումը (428, Արտաշէս թագաւորի գահընկեցութիւն):

Անտիկ շրջանի պաշտպանական համակարգերից բացի՝ շատ քաղաքներ ունէին ռազմական հզօր միաւորներ եւ ունակ էին ինքնուրոյն պաշտպանելու բնակավայրն ամրոցապատերի տարբեր շերտերի կառուցապատման միջոցով: Այսպես, օրինակ՝ Ք.ա. 180-ական թուականներին Արտաշէս Ա-ի հիմնադրած Արտաշատ մայրաքաղաքը, որի կառուցման համար ընտրուել են Արաքս եւ Մեծամոր գետերի միախառնման տեղում բնական թերակղզու 12 մեծ ու փոքր բլուրները (600հա, պատկ.51): Արտաշատը եղել է պարսպապատ քաղաք, միջնաբերդը կառուցուել է ամենաբարձր բլրի վրայ (պատկ. 52): Քաղաքատեղի բոլոր բլուրները նոյնպէս պարսպապատ են եղել՝ մէկ կամ երկու շարքով, որոնց ընդհանուր երկարութիւնը կազմել է 10.000մ: Պարսպապատերի ուրարտական շրջանի ուղղանկիւն, քառակող, անկիւնային աշտարակները, ելնելով ժամանակի ռազմավարական պահանջներից, փոխարինուել են աղիւսաշէն կլոր աշտարակներով, իսկ ամրոցի գլխաւոր մուտքը իջեցուել ու ամրակայուել է երկու հզօր, կլոր աշտարակներով (պատկ.53): Արտաշէսի օրոք կառուցուած պարիսպները նոյնպէս աղիւսաշէն էին, որոնք, քարից աւելի փխրուն լինելով, աւելի վատ էին դիմանում թշնամու քարեր նետող սարքերի հարուածներին[83]:

Արտաշատ քաղաքը պաշտպանուած է եղել նրա շուրջ տեղադրուած Ցոլակերտ, Փառախոտ ամրոցներով, Վաղարշապատը՝ Աւշական, Կուաշ, Ամբերդ ամրոցներով, Երուանդաշատը՝ Կապոյտ, Բագարան, Արտագերս ամրոցներով, Զարեհաւանը՝ Սաղամաս, Դարոյնք, Անգղ, Արծափ ամրոցներով, Վանը՝ Կաւաշ, Ոստանի, Հայք, Սեւան, Ամվիկ ամրոցներով, Նախճաւանը՝ Խրամ, Ճահուկ, Երնջակ ամրոցներով, Տիգրանակերտը՝ Քղիմար, Ակբաս, Արզան (Շուկարաբա), Փիս, Ափում, Աթազ ամրոցներով:

Բացառիկ երեւոյթ է Արցախի Տիգրանակերտ պատմական հայկական ամրոցը, որը հիմնադրուել է Ք.ա. 120–80-ական թուականներին՝ Տիգրան արքայի կամ նրա որդի՝ Տիգրան Մեծի օրոք[84]: Ամրոցը գտնւում է Արցախի Հանրապետութեան Ասկերանի շրջանի հարաւ-արեւելքում՝ Խաչենագետի ներքնահովտում՝ Վանքասար լեռան լանջին (պատկ.54): Տիգրանակերտ ամրոցը գոյատեւել է մինչեւ ԺԴ. դարը: Ամրոցն ու քաղաքատեղին յայտնաբերուել են 2005-ին, որի արդիւնքում գտնուել են քաղաքի կենտրոնական մասը, միջնաբերդը, պարիսպները, վաղմիջնադարեան բազիլիկ եկեղեցին[85] եւ ժայռափոր ջրանցքը: Առանձնայատուկ են պարսպապատերի սպիտակ կրաքարի խորանարդաձեւ որմնաքարերի հանգոյցների «ծիծեռնակապոչ» արճիճով ամրացումները (պատկ.55): Միջնաբերդը բնակելի թաղամասից բաժանող պարսպապատերի ընդհանուր երկարութիւնը 83 մետր է:

80. Այս ճանապարհի պաշտպանական համակարգի մասին արդէն խօսել ենք:

81. Կ. Գյոտերբոկ, *Բիւզանդիոն եւ Պարսկաստան*, «Հանդէս ամսօրեայ», Ա, Շուշի, 1910, էջ 14–17:

82. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 3, Երեւան, 1976, էջ 210:

83. Ժ.Դ. Խաչատրյան, *Հայկական անտիկ շրջանի պաշտպանական կառոյցները*, «ՊԲՀ», № 4, Երեւան, 1987, էջ 158–170:

84. Petrosyan Hamlet L., *Tigranakert in Artsakh*, in: "Tigranes the Great", Yerevan, 2019, pp. 380–387; Hamlet Petrosyan, Politics Ideology and Landscape: *Early Christian Tigranakert in Artsakh*, "Electrum", vol. 28, 2021, pp. 163–187.

85. Լյուբա Կիրակոսյան, *Արցախի Տիգրանակերտի եկեղեցու ճարտարապետութիւնը*, «ՊԲՀ», № 1, Երեւան, 2016, էջ 115–140: Համլետ Պետրոսյան, *Արցախի Տիգրանակերտը*, ՀԱԻ Հրատարակչութիւն, Երեւան, 2025

Կորցնելով թագաւորութեան շրջանում ունեցած նշանակութիւնը՝ խոշոր քաղաքները դառնում են համապետական պաշտպանական-վարչական կենտրոններ, եւ աւելի է մեծանում բերդերի ու ամրոցների քաղաքական դերը: Խաղաղ պայմաններում յունա-հայկական բերդը, վարչական կենտրոն դիտուելու դէպքում, ստանում էր անկախ իրաւունքներ՝ համարուելով տուեալ երկրաբաժնի կայսերական օրէնսդրութիւնն իրագործող կենտրոնավայր: Յուստինիանոսի ժամանակաշրջանի (536) օրէնսդրութեան համաձայն՝ երկրի ռազմական վերակազմաւորման ժամանակ վարչական կենտրոնները հաստատւում էին բերդերում, որոնք այնուհետեւ կոչուել են բերդաքաղաք, իսկ բանակաթեմերում հաստատուելու դէպքում՝ թեմաբերդ[86]: Նման ամրացուած կենտրոն է եղել Կիթառիճը[87] Ծոփքի Հաշտեանք գաւառում, որը մինչեւ Յուստինիանոս կայսրը եղել է անշուք գիւղատեղի: Այստեղ կառուցւում են ամուր բերդ, ջրամբար: Ամրոցը շրջապատւում է խրամատներով, եւ բերդը դառնում է Հաշտեանք գաւառի պաշտպանական կարեւոր հենակէտ: Պրոկոպիոսն ամրոցի կառուցման առթիւ ունի հետեւեալ վկայութիւնը. «Կթառիզոն ամրոցում, որը գտնւում է Ասթիանենէ կոչուած երկրում, բարձրադիր տեղում, հսկայական, միանգամայն անառիկ եւ բոլորովին նոր ամուր կառոյց հիմնուեց»[88]: Նման կենտրոն էր Արտալեսը Խորձեան գաւառում: Հարկ է նշել, որ Կիթառիճի տեղը նպատակային է ընտրուած այն իմաստով, որ 387-ի Հայաստանի առաջին բաժանման ժամանակ, այն եղել է Մծբին–Կարին սահմանային գօտու հռոմէական մասում[89]:

Ամրապատ քաղաքների հետ մէկտեղ այս ընթացքում դրուեց սահմանամերձ շրջանների բնակավայրերի պաշտպանութեան հարցը. սահմանամերձ էին Դարան եւ Կարինը: 421-ին Թեոդոս Բ-ի կարգադրութեամբ ամրապատւում է Կարինը[90], որի մասին յիշատակութիւն ունի Պրոկոպիոս Կեսարացին[91]: Ի տարբերութիւն աղիւսաշէն գօտիներով ամրացուած բիւզանդական պատերի՝ այստեղ կառուցւում են քարաշէն պատրիսպներ եւ «Խոսրովային» տիպի բուրգեր: Կարին քաղաքի պարսպապատման մասին Յակոբ Կարնեցին գրում է. «Եւ միւս կողմն արարին գետնափոր փակաց մեծամեծ վիմօք մինչեւ ի լեառն որ կոչի Այծու պտկունք»[92]: Կարին քաղաքի ամրոցապատումը հայերի գործ լինելը վկայում են պատերի արձանագրութիւնները, որոնք պահպանուել են «Վրաց դռան» նախապարիսպների արտաքին մասերին[93]: Այսպիսի ամրապատ քաղաքն ստանում էր տուեալ երկրաբաժնի վարչական կենտրոնի, հետեւաբար եւ ռազմական հրամանատարութեան նշանակութիւն: Համապետական պաշտպանական ընդարձակ ծրագրի մասն են կազմել ոչ միայն վարչատնտեսական խոշոր կենտրոնները, այլեւ փոքր գիւղաւաններն ու բնակատեղիները: Միջնադարեան իւրաքանչիւր գիւղ ունեցել է պաշտպանական հենակէտեր, որոնք կառուցուել են գիւղին մօտակայ հնարաւորին չափ անառիկ տեղանքին եւ թշնամու անակնկալ յարձակումների ժամանակ ծառայել են որպէս թաքստոց ու ապաստարան: Հայաստանում այս տիպի ամրոցաշինական կառոյց- ներից են Աստղաբերդը՝ Տուրուբերանում, Բերդկոնքը, Կուաշը՝ Այրարատում, Խողցը՝ Վասպուրականում, եւ այլն: Ուշ միջնադարում այս տիպի ամրոցները կոչուել են «տիրք» կամ «դիրք»[94]: Եթէ գիւղը մեծ էր, կառուցւում էին մի քանի նմանատիպ թաքստավայրեր:

Վաղմիջնադարեան Հայաստանի ռազմական ճարտարապետութեան մէկ այլ հետաքրքիր երեւոյթ է ամրոց-բնակատեղին, որի առաջացումը կախուած է եղել տարբեր շրջաններում անկայուն ռազմաքաղաքական իրավիճակից: Ամրոց-բնակատեղիների լաւ ուսումնասիրուած օրինակներից են Զաքարի-բերդը, Դաստակերտը, Արուճը, Աշնակը, Երնջատափը, Վարդենուտը, Կոշը[95]:

Այս ամէնի հետ անհրաժեշտ է նշել, որ թագաւորութեան վերացումից յետոյ ռազմաշինական գործունէութիւնը նորովի սկսեց ծաւալուել այնպիսի փոքր քաղաքաշինական միաւորներում, ինչպիսիք էին նախարարութիւնները՝ «աշխարհները», կաթողիկոսական աթոռները՝ իրենց գիւղերով, աւաններով ու ամրոցներով: Ռազմաշինութեան յետագայ վերելքը կապուած էր այս փոքր միաւորների պաշտպա-

86. Արմէն Զարեան, նշ.աշխ., էջ 78:

87. Այս բերդը յիշատակւում է Կթառիճ, Կթռիճ, Կիթառիս, Կիթառիզոն, լատիներէն՝ *Citharizo*, տաճկերէն՝ *Քոթարուս* անուններով: Այժմ այն գոյութիւն չունի: Կիթառիճը Գէորգ Կիպրացին անուանում է «...Հաշտենից բերդ, ուր Չորրորդ Հայքի դուքսն իր աթոռը հաստատած է...»:

88. Գ.Խ. Սարգսյան, *Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, Պրոկոպիոս Կեսարացի, Կառուցումների մասին (հայերէն թարգմանութիւն), գիրք Գ, գլ. 3, ՀՍՍՀ ԳԱ պատմութեան ին-տ., Երեւան, 1967, էջ 193:

89. Այս սահմանը պահպանուել է մինչեւ 591-ը, այսինքն՝ մինչեւ Հայաստանի երկրորդ բաժանումը:

90. Կարինը կոչուել է նաեւ Թեոդոսուպոլիս կամ Թոդուպոլիս: Աւանդութեան համաձայն՝ Կարին քաղաքը կառուցել են Մեսրոպ Մաշտոցը, Մովսէս Խորենացին եւ Դավիթ Անյաղթը: Ա.Ն. Տեր-Ղեւոնդյան, *Կարին-Թեոդուպոլիսը աւանդութեան եւ պատմութեան մէջ*, «Լրաբեր», № 3, 1971, էջ 63–69: *Հնոց ու նորոց պատմութիւն վասն Դաւթի եւ Մովսէսի Խորենացւոյ*, Կ.Պոլիս, 1874, էջ 46–49:

91. Պրոկոպիոս Կեսարացի, նշ.աշխ., էջ 196:

92. Ա.Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրութիւններ*, Երեւան, 1970, էջ 548–549:

93. Հ. Միքաէլ Յովհաննէսեան, նշ.աշխ., 1970, էջ 5:

94. Էդ. Աղայան, *Արդի հայերէնի բացատրական բառարան*, Երեւան, 1976, էջ 302: Թ.Խ. Հակոբյան, *Միւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 80 (ծնթգր.):

95. Հ. Հակոբյան, *Վաղմիջնադարեան ամրոց-բնակատեղիների ամրաշինութեան հարցեր, ՀՀ 1993–95 թթ. հնագիտական հետազօտութիւնների արդիւնքներին նուիրուած 10-րդ գիտական նստաշրջան, զեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1996: Люба Киракосян, Архитектура раннесредневековых крепостей-поселений Арагацa, автореферат, Ереван, 1992.*

նութեան հետ եւ, ի տարբերութիւն համապետական ռազմապաշտպանական մեծածաւալ ծրագրի, այս պարագայում տարածւում է փոքր զօրակայանների, արքունի ձմեռանոցների, պահակակէտերի, դղեակների եւ ամրապատ պալատների շինարարութիւնը:

Ամրոցների տեղաբաշխումը կախուած է եղել ռազմավարական պահանջներից, իսկ դրանց ստոյգ դիրքորոշումն ու տեղընտրութիւնը կատարել են փորձառու ռազմագէտները[96]: Եթէ անհրաժեշտ էր ստեղծել սահմանային պաշտպանական համակարգ, ապա ամրոցների ու բերդերի դիրքորոշման համար ընտրուել են բնականից անառիկ եւ տարածքի վրայ գերիշխող դիրք ունեցող ժայռալանջ բարձունքներ՝ գետահովիտների կամ լեռնաշղթաների երկայնքով: Ժայռակերպ հրուանդանի վրայ կառուցուած ամրոցների պարսպապատերը տարածուել են հրուանդանի այն մասում, որը զուրկ է եղել գահավէժ, բնական ժայռածերպերից: Պարսպապատերի ամենահզօր գօտին կառուցուել է հրուանդանի ամենանեղ հատուածում, այսինքն՝ յուսալիօրէն քօղարկուել է մօտենալու մատչելի միակ ուղին: Բերդամրոցի վերջնական յատակագիծը, որը համատեղւում էր տեղանքին, գծագրւում էր ուղղագիծ պատերի բեկեալների միջոցով, որոնց հանգոյցներում տեղադրւում էին հաստաւուն բուրգերը: Այս շրջանում բուրգերը հիմնականում եղել են հոծ եւ կատարել են որմնահեցերի դեր: Տուեալ սկզբունքով կառուցուած ամրոցն ստանում էր եռանկիւնաձեւ յատակագիծ: Սրագագաթ բլուրներին տեղադրուած ամրոցներն ունեցել են կանոնաւոր, ուղղանկեանը մօտ յատակագիծ, որի չորս անկիւններում զետեղվել են որմնահեց-բուրգերը: Լեռնանցքներում առեւտրական ճանապարհները հսկող ամրոցները, բացի բուն պաշտպանական կառոյցներից, ունեցել են նաեւ դէպի կիրճը կամ ձորն իջնող երկայնական պատեր, որոնք քօղարկել են բանուկ հատուածը եւ կարգաւորել այդ հատուածով անցնող ճանապարհը: Ամրոցների պարսպապատերը, ելնելով տուեալ հատուածի աշխարհագրական առանձնայատկութիւններից եւ ռազմարուեստի պահանջներից, կառուցապատուել են նաեւ բազմաշերտ: Վաղ միջնադարում կառուցուած ամրոցները բնորոշւում են ներփակ պարսպապատեր ունեցող հատակագծերով: Այս սկզբունքով կառուցուած ամրոցների ներքին տարածութիւնները նոյնպէս կառուցապատուել են ռազմական պահանջներին ծառայող բազմաբնոյթ շինութիւններով՝ զինանոցներ, պահեստներ, մթերանոցներ, ջրամբարներ, առանձին կանգնած դիտաշտարակներ, ստորգետնեայ տարբեր կառոյցներ: Այս շինութիւնների գերակշռող մասը տեղադրուել են ներսի կողմից պարսպապատերին հպուած, որոնց ծածկերը յաճախ օգտագործուել են որպէս մարտահարթակներ: Բերդերն ունեցել են նաեւ ջրամատակարարման յուսալի համակարգ, ապահովուած են եղել գաղտնուղիներով, որոնք երկարատեւ պաշարումների ժամանակ եղել են կապի միակ միջոցը:

Ամրոցների գլխաւոր մուտքերը տեղադրուել են մատչելի կողմերում, այդ պատճառով էլ ունեցել են շեղուած առանցքներով կրկնակի դարպասներ, գաղտնուղիներ: Մուտքերի բացուածքները եղել են կամարակապ՝ երկու կողմերից ներփակուած հաստաւուն բուրգերով: Նման յօրինուածքը բխել է մարտ վարելու ռազմական պահանջներից, քանի որ երկկողմանի բուրգերի առկայութեան դէպքում թշնամին, մօտենալով ամրոցի գլխաւոր մուտքին, ընկնում էր երկկողմանի, խաչաձեւ հարուածի տակ:

Այս շրջանում հնագոյն աւանդոյթներով կազմաւորուած ու զարգացած ռազմաշինական շատ սկզբունքներ յետագայում դարձել են այն կարեւոր նախադրեալները, որոնց հիման վրայ զարգացել ու կատարելագործուել է պաշտպանական կառոյցների ճարտարապետութիւնը միջին դարերում:


Միջնադարեան Սիւնիքի բերամրոցներում տեսնում ենք հմուտ կերպով որդեգրուած վաղ շրջանի հայկական ռազմարուեստի բազմաթիւ սկզբունքների կիրառութիւնն ու զարգացումը, որը փաստագրում է ամրոցաշինութեան կարեւորու- թիւնը նահանգի անվտանգութիւնը ապահովելու համար:

96. Հայազգի նշանաւոր պետական գործիչ եւ զօրավար Արտավազդի մասին կայ հետեւեալ վկայութիւնը. «...Բարձրացրին հարյուր ոտք բարձրութիւն ունեցող աշտարակ, որը դժուարութեամբ կառուցեց փառաւորեալ պատրիկ եւ կուրապաղատ Արտավազդը: Յետագայում այդ աշտարակը կոչուել է Արտավազդի անունով...»: Ф.И.Успенский, *I. Две исторические надписи. Надпись на башне Артавазда. II. Пограничный столб между Византией и Болгарией при Симеоне*, ИКИ, ст. 180–184.



Նկ. 9. Ազաւնատան մոտ՝ Օյուղ կոչվող բոլորակ աշտարակի մնացորդը

37



38



38.բ

Պատկ. 37
ՀՀ Արմաւիրի մարզի Աղաւնատուն գիւղի մօտակայ Օյուղ բոլորակ աշտարակը


Պատկ. 38
Ջերոմի *«Ասիայի քարտէզ»*-ը՝ պատրաստուած 420-ին, բայց մեզ հասել է միայն դրա ԺԲ. դարի պատճէնը: Քարտէզում հիւսիսը ձախում է, Հայաստանը՝ Սեւ եւ Կասպից ծովերի միջեւ, իսկ Հայաստանի դարպասները armenia pile լեռներն են, որտեղից սկիզբ են առնում մէկ կողմից Արաքսը, միւս կողմից՝ Տիգրիսը: Բրիտանական գրադարան, Additional MS, 109049 tol.64

Պատկ. 38.բ
Այս քարտէզը կոչւում է *«Ջեմոնայի ձուածիր պորտոլան»*, պորտոլանների մէջ ունի իր իւրայատուկ տեղը: Քարտէզը ձուածիր է, հիմնւում է միաժամանակ պտղոմէոսեան եւ կրօնական քարտէզների վրայ: Գծուած է ամբողջութեամբ մէկ մագաղաթի վրայ, բայց ունի հետաքրքիր ձեւ, այսինքն՝ սուր ծայրերով ձուածիր է կամ աւելի շուտ ունի ոսպի տեսք: Հայաստանը նշուած է Սեւ ու Կասպից ծովերի միջեւ՝ Կովկասեան լեռների հարաւում՝ գլխիվայր պատկերուած ամրոցի ներքեւում: Հայաստանի հարաւ-արեւելքում կանաչագոյն ներկուած Արարատի վրայ նստած է Նոյեան տապանը՝ պատկերուած տան նման՝ նոյնպէս գլխիվայր: Ֆլորենցիայի Ազգային կենտրոնական գրադարան, Port.1

Պատկ. 38.ա
Մապպայ Մունդին, որը գտնւում է Անգլիայի Հերեֆորդ քաղաքի մայր տաճարում, պատրաստել է Ռոֆեր դէ Բոլլոն շուրջ 1300-ին: Սա միջնադարեան ձեռագիր շրջանաձեւ քարտէզ է՝ գծուած մագաղաթի վրայ: Եղուսաղեմը քարտէզի կենտրոնում է, իսկ երկրային դրախտը՝ Եդեմը, վերեւում, որը քարտէզի արեւելքն է: Հայաստանը պատկերուած է ժամացոյցի սլաքի ժամը 10-ի ուղղութեամբ՝ շառաւիղի կէսի վրայ: Այստեղ է Նոյեան տապանը, ձախ կողմում Փոքր Հայքն է, իսկ դէպի աջ՝ կողքի վրայ թեքուած ամրոցի մօտ բուն Հայաստանն է (Armenia)



38.ա



39



39.ա

Պատկ. 39
Հաղբատի աւետարան, 1211,
«Մուտք Երուսաղէմ», ծաղկող՝
Մարգարէ, չափերը՝ 30x22,5,
Մատենադարան, ձեռ. № 6288

Պատկ. 39.ա
«Սուրբ Մատթէոսն իր Աւետարանը գրում է իշխան Վասակ Բ-ի Աւետարանից», Մատենադարան,
ձեռ. № 2568




39.բ



39.գ


Պատկ. 39.բ
«Տրդատ թագաւորը վայրի խոզից մարդու վերածուելուց յետոյ ծնկի է իջնում Գրիգոր Լուսաւորչի առաջ»: Առանձնատիպի առաջին էջ,
Իստամբուլ, 1633 (Ms.66, S.12)

Պատկ. 39.գ
Թարգմանչաց աւետարան, 1232,
«Աւետումէ», ծաղկող՝
Գրիգոր, չափերը՝ 29,5x22,5,
Մատենադարան, ձեռ. № 2743



40

Պատկ. 40
Ամրոց-շէն, Ք.ա. 1-ին հազարամեակ,
Երանոս գիւղ՝
ՀՀ Գեղարքունիքի մարզ




40.ա

Պատկ. 40.ա
Ամրոց-շէն, Ք.ա. 1–2-րդ
հազարամեակ, Մարտունի՝ ՀՀ
Գաղարքունիկի մարզ



41


Պատկ. 41
Լճաշէնի կիկլոպեան ամրոց-բերդշէն,
Ք.ա. Է. դար, Լճաշէն՝
ՀՀ Գեղարքունիքի մարզ



42



43



44

Պատկ. 42
Իլիկաքար («Պառաւի վանք»)
ամրոց, Ք.ա. 1–2-րդ հազարամեակ,
Լանջաղբիւր գիւղ՝
ՀՀ Գեղարքունիքի մարզ

Պատկ. 43
Էրեբունի, հիմնադրել է Վանի
թագաւորութեան արքայ Արգիշտի
Ա-ն Ք.ա. 782-ին, ՀՀ Երեւանի մարզ

Պատկ. 44
Թէյշեբաինի (Կարմիր բլուր),
հիմնադրել է Ռուսայ Բ.
ուրարտական թագաւորը
Ք.ա. 685–645-ին, ՀՀ Երեւանի մարզ



45

Պատկ. 45
Թօփ քարի ամրոց, Ք.ա. 1-ին
հազարամեակ, Սառնաղբիւր գիւղ՝
ՀՀ Շիրակի մարզ



ՏԱՏԱՆԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԹՈՂԱՐԿՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՄԱՐ

ԺԹ ԴԱՍԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԵՐԻ ՏԱՐԱԾՔԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԵՐԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԵՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ
ՔԱՂԱՔՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԵՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԵՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ ՊԱՐՍԿ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԵՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ ՊԱՐՍԿ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԵՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ ՊԱՐՍԿ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԵՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ ՊԱՐՍԿ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ


Պատկ. 47
Հայկական աղբերի հյուսիսային տարածքը IV դարում
(ըստ Ա. Ռոստոմյանի)

47

ՄԵԾ ՀԱՅՔԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԵՐԸ
IV ԴԱՐՈՒՄ (298-385ԹԹ.)

Պատկ. 46
Մեծ Հայքի պատմագրության հայկական աղբերը
Դ. դարում (298-385)

46



Պատկ. 48
Մեծ եւ Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմէական ամրութիւնների համակարգը՝ ըստ Հ.Պ. Յակոբեանի

48



Պատկ.49
Հայաստանի Տիգրանակերտ մայրաքաղաքը. հիմնադրել է Տիգրան Մեծը Ք.ա. 70-ին, Պատմական Հայաստան, Մեծ Հայքի Աղձնիք նահանգ, ԱԹՍ-ից արուած այսօրուայ պատկերը

49




49.ա

Պատկ. 49.ա
Տիգրանակերտ քաղաքի պարիսպների պահպանուած տեսքը



49.բ

Պատկ. 49.բ
Դուին մայրաքաղաքը, հիմնադրուել է Խոսրով Կոտակ թագաւորի օրոք՝ 330–338-ին, ՀՀ Արարատի մարզ, եռաչափ վերակառուցման համայնապատկերը՝ ըստ ճարտարապետ Աշոտ Ղազարեանի



50

Պատկ. 50
Հայաստանի մայրաքաղաք
Արտաշատը, կառուցուել է հայոց
Արտաշէս Ա. արքայի օրոք՝
Ք.ա. 176-ին, ՀՀ Արարատի մարզ,
եռաչափ վերակառուցումը՝ Ֆրանկ
Դեւեջեանի

Պատկ. 51
Արտաշատ մայրաքաղաքի գլխաւոր
յատակագիծը

Պատկ. 52
Հայաստանի մայրաքաղաք
Արտաշատը, եռաչափ
վերակառուցումը՝
Ռուբեն Սարգսեանի



52



51



53


Պատկ. 53
Տեսարան Արտաշատ մայրաքաղաքի հնավայրից

Պատկ. 54
Արցախի Տիգրանակերտ քաղաքը, կառուցուել է հայոց արքայ Տիգրան Մեծի օրոք՝ Ք. ա. 1-ին դարում պեղումների շնորհիւ ի յայտ եկած քաղաքի գլխաւոր յատակագիծը եւ ամրոցապատերի մանրամասները, հեղինակ՝ ճարտարապետ Լիւբայ Կիրակոսեան

Պատկ. 55
Արցախի Տիգրանակերտի ամրոցապատերի «ծիծեռնակապոչէ» արճիճով ամրացումները



Նկ.1 Արցախի Տիգրանակերտի գլխավոր հատակագիծը՝ քաղաքամասերի նշումով: ա-Ամրացված թաղամաս, բ-Կենտրոնական թաղամաս, գ-Անտիկ թաղամաս:



Նկ. 2 Հնուսիսային պարսպի մի հատվածի ճակատն ու հատակագիծը:

54



55



Գեղարդավանք, Պռոշեան-Խաղբակեան իշխանական տան զինանշանը

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

2.1. ՍԻՆԻՔԻ ՆԱՀԱՆԳԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԵՐԿՐԱՅԻՆ, ՆԵՐՆԱՀԱՆԳԱՅԻՆ, ՄԻՋԳԱՒԱՌԱՅԻՆ, ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպէս տեսանք, Սիւնեաց նահանգը իր տարածքի ամենաընդարձակ շրջանում բաժանուած է եղել 14 գաւառի, որոնց սահմանները հիմնականում անցնում էին աշխարհագրական միջավայրի թելադրանքով՝ սահմանազատուելով միմիանցից գետահովիտներով, լեռնաշղթաներով, ձորերով ու կիրճերով (պատկ.56.ա)։ Ըստ իշխանական կալուածների, հասարակական-տնտեսական զարգացման, քաղաքական իրավիճակի, աշխարհագրական առանձնայատկութիւնների եւ, վերջապէս, ըստ Սիւնեաց ճարտարապետական դպրոցի առանձին ճիւղաւորման՝ Սիւնիքը կարելի է պայմանականօրէն բաժանել 3 հիմնական վարչական շրջանների՝ իւրաքանչիւրում խմբաւորելով տուեալ տարածքի կազմի մէջ մտնող գաւառները.

1. Սիւնիքի հիւսիսային շրջան–Գեղարքունիք՝ Գեղարքունիք եւ Սոդք գաւառներ, 3.780 քառ.կմ (պատկ. 57)[97],
2. Սիւնիքի Կենտրոնական շրջան – Վայոց ձոր գաւառ, 2.350 քառ.կմ (պատկ.58),
3. Սիւնիքի[98] հարաւային շրջան – Ծղուկք՝ 1.950 քառ.կմ, Աղահեճք՝ 1.402 քառ.կմ, Հաբանդ՝ 1.325 քառ.կմ, Բաղք՝ 925 քառ.կմ, Ջորք՝ 525 քառ.կմ, Կովսական՝ 675 քառ.կմ, Արեւիք՝ 625 քառ. կմ, Երնջակ՝ 600 քառ.կմ, Ճահուկ՝ 1.130 քառ.կմ. գաւառներ, ընդամէնը՝ 9.107 քառ.կմ (պատկ.59)։

Սիւնիքի տարածքի 3 մասերի վարչական բաժանումը առկայ է նաեւ պատմագրութեան մէջ։ Թ–Ժ դարերի վրաց պատմիչ Ստեփան Տբեթցին[99] իր «Գոբրոնի վկայաբանութիւնը» աշխատութեան մէջ Ժ. դարի Հայաստանի աշխարհագրական-վարչական վիճակը նկարագրելիս Սիւնիքը ներկայացնում է հետեւեալ կերպ. «...Վայ (ոց) ձորի (Վայոցձորի) չորս ձորը, ... Գեղաքունյաց (Գելքունիա) չորս ձորը, Սիւնեաց տաս ձորը, ...»։ Ըստ պատմիչի՝ Սիւնեաց աշխարհը Թ–Ժ դարերում բաղկացած է եղել 18 ձորերից, այսինքն՝ գահակալ իշխանների 18 ինքնուրոյն իշխանութիւններից։ Ռազմավարական առումով՝ այսպիսի պատմական բաժանումն ընդունելի է եւ կարելի է մեկնաբանել։ Ինչպէս յետագայում կը տեսնենք, Գեղարքունիքում, Վայոց ձորում եւ Սիւնիքի հարաւային շրջանում, ելնելով բնաաշխարհագրական, համապետական քաղաքական, միջաւատատիրական իրավիճակներից, տարբեր ժամանակահատուածներում կազմաւորուել ու զարգացել են տարատեսակ, բայց իրար հետ կապ ունեցող համաերկրային, ներնահանգային, միջգաւառային եւ տեղական նշանակութեան ռազմապաշտպանական սկզբունքներ, որոնք իրականացուել են դարերի ընթացքում՝ ընդհանուր մտայղացմամբ։ Ինչպէս տեսանք, դեռեւս վաղ միջնադարում Հայաստանում գործել են համապետական ընդարձակ ռազմավարական սկզբունքներ, որոնցով ղեկավարուել են թագաւորները, նախարարները, սեպուհները, իշխանները, ռազմագէտները, ազնուականութիւնն ու հոգեւոր դասի ներկայացուցիչները։ Հասարակութեան այս տարբեր խմբերը, որոնք յաջորդել են միմիանց կամ գործել են միասնականօրէն, հետեւել են նախեւառաջ երկրի պաշտպանութեան շահերին, եւ, ամրացնելով իշխանական առանձին տիրոյթները, նպաստել են նահանգի պաշտպանութեան ուժեղացմանը։ Իւրաքանչիւր բերդ կամ ամրոց հիմնադրւում էր այնպիսի տեղում, որը լրացնում էր այս կամ այն տարածքի՝ դեռ նախորդ ժամանակաշրջաններում ստեղծուած պաշտպանական օղակը եւ ամրացնում երկրի սահմանամերձ շրջանը, առեւտրական ճանապարհը, լեռնանցքը, վարչական կենտրոնը կամ վանքային հաստատութիւնը։ Սիւնիքի 3 շրջանների զարգացման բնորոշ գծերը կախուած են նրանց դիրքորոշման, հասարակութեան կառուցուածքային տարրի զարգացման, վարչական կողմնորոշման եւ միջաւատատիրական յարաբերութիւնների փոփոխման հանգամանքներից։ Սիւնիքի հիւսիսային շրջանը՝ Գեղարքունիքը եւ Սոդքը, դեռ հնագոյն ժամանակներից ամրացուել է ռազմավարական համակարգերով, որոնք կազմել են ներփակ օղակ Գեղամայ լճի ամբողջ պարագծով։

Սեւանի պաշտպանական համակարգը միակենտրոն է, որը բաղկացած է մէկ գլխաւոր ռազմականացուած կենտրոնից եւ նրա շուրջը տարածուած պաշտպանական տարբեր նշանակութիւն ունեցող միաւորներից, որոնք լրացնող, ամբողջացնող տարրեր են։ Այս համակարգերում գլխաւոր կենտրոններն իրենց տեղադրութեան

97. Թուային մեծութիւնները վերցուած են ըստ «Աշխարհացոյց»-ի։

98. Ներառեալ հարաւարեւելեան եւ հարաւարեւմտեան շրջանները, որի հիմնական մասը կազմում էր Սիւնիքի թագաւորութեան տարածքը։

99. Հ.Մ. Ուլթմազյան, նշ.աշխ., էջ 26–27 (ծնթգր. 2)։

սկզբունքներով, նշանակութեամբ ու գրաւած դիրքով տարբերւում են համակարգի մաս կազմող միւս պաշտպանական միաւորներից (պատկ.60)։ Սիւնիքում դրանց լաւագոյն օրինակներից է նաեւ Բաղաբերդի (Կապանի) միակենտրոն համակարգը։ Առաջինն ընդգրկում է Սիւնիքի հիւսիսային շրջանի Գեղարքունի գաւառի Սեւանի աւազանի ընդարձակ տարածքը։ Այն յայտնի է իր կիկլոպեան ամրոցներով[100], որոնք հնագիտական տարբեր շերտեր ունեն, իսկ դրանց մի մասը գործել է նաեւ միջնադարում։ Երկրորդը Բաղաբերդի միակենտրոն համակարգն էր՝ Ձորք եւ Բաղք գաւառներում, եւ կոչուած էր պաշտպանելու Սիւնիքի թագաւորութեան մայրաքաղաք Կապանը։ Այն կազմուած էր տարբեր ուղղութիւններով Կապան մտնող ճանապարհների երկայնքով տեղադրուած պաշտպանական հենակէտերից (պատկ.61)։

100. Գ.Հ. Միքայելյան, *Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները*, Երեւան, 1968։

Այս երկու պաշտպանական համակարգերը կազմել են Սիւնիքի ռազմավարական ընդարձակ ծրագրի բաղկացուցիչ մասը եւ այլ համակարգերի հետ մէկտեղ անառիկ են դարձրել երկրի այս կամ այն կարեւոր վարչատնտեսական կենտրոններն ու սահմանային շրջանները։

Առանձնապէս հետաքրքիր են Սիւնիքում կառուցուած մի շարք երկկենտրոն պաշտպանական համակարգեր՝ Որոտնաբերդ-Որոտնավանք (Որոտն, պատկ.62), Բաղաբերդ-Վահանաւանք (Կապան, պատկ.63), Յուր-Տաթեւ (Տամալեք, պատկ.64), Երնջակ-Սբ Գէորգի վանք (Երնջակ, պատկ.65), Բոլորաբերդ-Սպիտակաւոր (Բոլորաբերդ, պատկ.66)[101], Սմբատաբերդ-Ցաղացքար (Եղեգիա, պատկ.67)։ Որոտնաբերդը կազմել է ընդարձակ պաշտպանական համակարգի բաղկացուցիչ մասը, համակարգ, որը նպատակ է ունեցել պաշտպանելու այնպիսի վարչատնտեսական կարեւոր կենտրոն, ինչպիսին էր Ծաղատ «գիւղաքաղաքը»[102]. Ծաղատը գտնւում էր Սիւնիքի Ծղուկք գաւառի կենտրոնում եւ, ըստ Ստ. Օրբելեանի, մինչեւ Թ. դարի սկիզբը եղել է իշխանանիստ[103] «բերդագիւղ»[104]։ Մինչեւ օրս պահպանւում են աւանը շրջապատող բերդապարիսպների մնացորդները։ Ծաղատի մօտով էին անցնում երկու առեւտրական ճանապարհներ. մէկը գնում էր դէպի Վայոց ձոր եւ Այրարատ, միւսը՝ ու Վասպուրական։ Դ. դարի սկզբից մինչեւ Թ. դարի սկիզբը Ծաղատը եղել է եպիսկոպոսանիստ։ Ըստ Ստ. Օրբելեանի՝ Ծաղատում է եղել Սբ Ստեփանոս Նախավկայի եկեղեցին՝ «Սիւնեաց աշխարհի մայր եկեղեցին»։ Պատմիչը տալիս է եկեղեցու մանրամասն նկարագրութիւնը, ըստ որի՝ այն համարւում է Հայաստանի հնագոյն գմբէթաւոր կառոյցներից մէկը[105]։

101. Փակագծերում նշուած են պաշտպանական համակարգերի մօտ գտնվող բնակավայրերը։

102. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 85։

103. «...Անցեալ ի գաւառն Ծղկայ՝ հասանէ յաւանն իշխանանիստ Ծաղատայ...»։ Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 82։

104. «... հաստատւում է Ծաղատ բերդագիւղում... »։ Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 165։ Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1983, էջ 326։ «...եւ ամրանաց ի Բերդատեղի աւանից Ծաղատու, որ է ի գաւառին Ծղկայ...»։

105. ՀՍՀ, հ. 8, Երեւան, 1982, էջ 437։

Այսպիսով՝ ակնյայտ է դառնում հոգեւոր եւ վարչական կարեւոր կենտրոնի պաշտպանութեան անհրաժեշտութիւնը, որը յետագայում շատ յստակ մշակուած իրագործւում է պաշտպանական լայնատարած համակարգում։ Ծաղատը՝ որպէս Ծղուկք գաւառում մայրաքաղաքի պաշտպանական համակարգ, կազմաւորուել է դեռեւս Սասանեանների շրջանում։ Այն բաղկացած էր մի շարք բերդերից կազմուած սլաքաձեւ աղեղից, որն իր մէջ էր առնում Ծաղատը եւ հզօր պատնէշ ստեղծում Սասանեան տիրակալների յարձակումների դէմ (պատկ.68)։ Պաշտպանական այս համակարգը բաղկացած էր Որոտնաբերդ, Բաղաբերդ, Կաքաւաբերդ (Արեւիք գաւառ), Երնջակ ու Ձահուկ կենտրոնական բերդերից եւ յետագայում կառուցուած, նոյն աղեղը եզրափակող մէկ տասնեակի հասնող տարբեր նշանակութեան այլ բերդերից[106]։ Ս. Տ. Երեմյանի կազմած քարտէզներում[107] այս համակարգի կենտրոնական բերդերը կառուցուել են հետեւեալ ժամանակահատուածներում. Բաղաբերդ՝ 298–385, Երնջակ, Ձահուկ՝ 450–509։ Բերդերից կազմուած այս հզօր պատնէշը եզրափակում էր Սիւնիքի հարաւարեւմտեան ամբողջ սահմանը, որը յարակից էր Վասպուրականին եւ Այրարատին։ Չնայած այս բերդերը հիմնադրուել են հնագոյն ժամանակներում՝ որպէս տեղական ռազմական հենակէտեր, սակայն Սիւնիքի թագաւորութեան շրջանում (987–1170) նրանք ստացել են նոր իմաստ եւ այլ բերդերի հետ կազմել երկրի պաշտպանական ընդարձակ համակարգի մի օղակը։

106. Սուրմալիկ, Նահաջիր, Ցղնա (Նախիջեւան գաւառ), Ծահապոնք (Ձահուկ գաւառ), Ծաղկերտ, Քյոլք, Գաղ (Երնջակ գաւառ), Խոտուք, Աղխիտու, Սիւնի, Դաստակերտ (Ծղուկք գաւառ)։

107. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 2, Երեւան, 1984, քարտեզներ։

Վերը նշուած երկկենտրոն պաշտպանական համակարգերի վանքային համալիրներից առաւել լաւ պահպանուածն ու հետաքրքրականը Որոտնավանքի վանական հաստատութիւնն է՝ Սիւնիքի Ծղուկք գաւառի հարաւարեւելեան մասում՝ Վաղատին (այժմ՝ Վաղուտի) գիւղից հարաւ-արեւելք (պատկ.69,ա,բ)։ Որոտնավանքը կառուցուել

է այն նոյն ռազմավարական սկզբունքներով, որով կառուցւում եւ տեղադրւում էին բերդերն ու ամրոցները: Պաշտպանական կառոյցների ճարտարապետութեան համար հետաքրքրական է տեղանքի ընտրութիւնը, բոլոր եկեղեցական շէնքերի դիրքորոշումը եւ վանքապատկան տարածքի պարսպապատումը, որոնք իրականացուած են շատ հմտօրէն եւ նախապէս մտածուած: Համալիրը տեղադրուած է Որոտան գետի զառիվայր կիրճերով շրջապատուած բնական սարաւանդի վրայ, որը նեղ լեզուակով միանում է լեռնալանջին[108]: Լեզուակի հատուածում տեղադրուած են վանքային համալիրի աշխարհիկ կառոյցները: Համալիրը ձգւում է արեւելքից արեւմուտք եւ աշխարհիկ կառոյցների հետ կազմում է ներքին բակ, որտեղ գերեզմանոցն է: Վանքը հիւսիսից պաշտպանուած է փոքր բլրակով, հարաւից անդնդախոր կիրճն է, իսկ արեւմուտքում եւ արեւելքում անտառապատ, զառիվայր լանջերն են: Համալիրի բոլոր շէնքերը կարծես ընդգրկուել են պաշտպանական համակարգի մէջ, քանի որ նրանք կազմել են հիւսիսային պարսպապատի շարունակութիւնը (պատկ.70): Հենց սրանով է բացատրւում այն հանգամանքը, որ եկեղեցական բոլոր շինութիւնները հիւսիսային կողմից չունեն բացուածքներ: Այս կողմում է համալիրի միակ մուտքը (պատկ.71,12):

Մինչեւ վանքային համալիրի հիմնադրումը՝ 1000-ը, այստեղ, թերեւս Դ. դարից սկսած, գործել է Սբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին[109] (պատկ.71.1): Ըստ Ստ. Օրբելեանի՝ Որոտնավանքը հիմնադրել է Սմբատ գահերեց իշխանի կինը՝ Շահանդուխտ թագուհին, որն ամուսնու մահից յետոյ՝ 1000-ին, Սմբատի կտակի համաձայն, կառուցում է Սբ Ստեփանոս Նախավկայ եկեղեցին[110] (պատկ.71.2), ապա ձեռնամուխ է լինում կառուցելու «...եւ տուն աղօթից կրաշաղախ վիմօք եւ ի դրան եկեղեցւոյն, եւ համբարանոցս եւ գործա- տունս եւ շուրջ պարսպէ զվանք»[111] (պատկ.71. 3,8,10): Շահանդուխտի մահից յետոյ նրա որդի Սեւադան սկսում է համալիրի շինարարութեան 3-րդ փուլը՝ 1006-ին կառուցելով Սբ Կարապետ եկեղեցին եւ նրա արեւմտեան կողմի Սիւնասրահը[112] (պատկ.71.5,6):

Պատմական այս տեղեկութիւնները հետաքրքրական են այնքանով, որ Շահանդուխտ թագուհին վանքային հաստատութիւն հիմնադրելու համար ընտրում է հնուց գոյութիւն ունեցող սրբավայրը, որը միաժամանակ, տեղանքի առանձնայատկութիւններով պայմանաւորուած, հնարաւորութիւն էր տալիս անառիկ դարձնելու վանքը՝ պարսպապատելով այն հիմնականում միայն արեւելքից եւ արեւմուտքից:

Այսպիսով՝ Ժ. դարից սկսած Սիւնիքում վանքային կարեւոր հաստատութիւնները հիմնադրւում են կենտրոնական բերդերի հսկողութեան տեսադաշտերում՝ դրանով իսկ ապահովելով նրանց անվտանգութիւնը: Դրա հետ կապուած՝ ստեղծւում է մի նոր պաշտպանական համակարգ, որը, բացի երկկենտրոն լինելուց, կազմել է նաեւ երկրի ռազմավարական ընդարձակ համակարգերի օղակներից մէկը եւ եղել քաղաքաշինական կարեւոր միաւոր: Որոտնաբերդը՝ որպէս Շաղատ մայրաքաղաքի պաշտպանական համակարգի մաս, եւ Որոտնավանքի Սբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին՝ որպէս սրբավայր, Դ. դարում սկզբնաւորուած քաղաքաշինական միաւորներ էին, որոնք յետագայում վանքային հաստատութեան հիմնադրման համար դարձել են այն աւանդական նախադրեալները, որոնց հիման վրայ Ժ. դարում կազմաւորուել է բոլորովին նոր՝ երկկենտրոն պաշտպանական համակարգ: Այս երեւոյթն արժանի է ուշադրութեան, քանի որ այն լայնօրէն տարածուել է Սիւնիքում եւ դրսեւորուել այլ երկկենտրոն պաշտպանական համակարգերում: Այստեղ հարկ է նշել, որ այս տիպի համակարգերը չունեն պաշտամունքային եւ պաշտպանական կառոյցների միասկզբունք լուծում, եւ, եթէ Որոտնաբերդն ու Որոտնավանքը կառուցուել են Որոտան գետի հովտի երկայնքով՝ բարձրադիր, ժայռալանջ սարաւանդների վրայ, որտեղ գետը շրջապտոյտ է կատարում, ապա այլ երկկենտրոն պաշտպանական համակարգերում՝ Սմբատաբերդ-Ցաղացքար, Բաղաբերդ-Վահանաւանք, Բոլորաբերդ-Սպիտակաւոր եւ այլն, պաշտամունքային եւ պաշտպանական կառոյցները դիրքորոշուած են գետահովտի երկու կողմերում՝ իրար դիմաց կամ իրարից շեղուած: Այստեղ կարեւորը ոչ միայն երկու կենտրոնների դիրքորոշումն է իրար նկատմամբ (մեր օրինակներում հեռաւորութիւնը

108. Որոտնավանքի տեղադրութեան մասին կայ հետեւեալ նկարագրութիւնը.
«...Որոտնայ վանքը տեղաւորուած է մի բարձրադիր բլրակի վրայ, որի հարաւային կողմի ձորի միջով արագ գնում է համանուն գետը, որ մի քիչ առաջ Ուզ գիւղի մօտերքում Բազարչայ (Գոգահովիտ, Ա.Զ.կրտ.) անունն էր կրում...»:
Մ. Փափազեան, *Հնութիւնք վանօրէից*, Վաղարշապատ, 1889–1890 թթ., էջ 317–318:

109. *Պատմութիւն նահանգին Սիսական*, Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան Արք. Եպիսկոպոսի Սիւնեաց, Փարիզ, 1859, էջ 301:

110. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 302: Ըստ Բ.Հ. Հարությունյանի՝ Սբ Ստեփանոս Նախավկայի եկեղեցու կառուցումն սկսել է Սմբատ թագաւորը, իսկ նրա կինը՝ Շահանդուխտը, այն աւարտել է 1000 թուականին: Բ.Հ. Հարությունյան, *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 3, Երեւան, 1976, էջ 123:

111. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 302:

112. Նոյն տեղում:

4–5կմ է), այլ այն, որ պաշտամունքային կառոյցները տեղադրուած են խոշոր բերդերի պաշտպանութեան տակ՝ դրանով իսկ ապահով դարձնելով նրանց կալուածներն ու վանքային տարածքները:

Ինչպէս տեսանք, Սիւնիքի հիւսիսային շրջանը դեռ վաղ միջնադարում պաշտպանուած էր Սեւանի միակենտրոն համակարգով, որը հսկում էր Գեղամայ լճի ամբողջ աւազանը՝ բացի հիւսիս-արեւելեան մասից, որտեղ ամբողջ երկարութեամբ ձգուող Արեգունի եւ Սեւանայ լեռներն ստեղծում են բնական արգելք, իսկ հարաւային շրջանն ամրացուած էր աղեղնային պաշտպանական համակարգով: Համապետական նշանակութեան այս երկու համակարգերը կազմաւորուել են հնագոյն ժամանակներից եւ զարգացել ու կիրառուել են նաեւ միջնադարում:

Սիւնիքում ամրոցաշինութիւնը զարգացել է որոշակի սկզբունքներով. իւրաքանչիւր ամրոց կամ բերդ կառուցուել է՝ ըստ նախնական մշակուած ռազմավարական ծրագրի եւ մտայղացման: Տեղանքի առանձնայատկութիւնները թելադրել են պաշտպանական կառոյցների դիրքորոշումը, իսկ տեղընտրութիւնը բխել է զուտ ռազմական պահանջներից:


Հայաստանում բերդաշինութիւնը կազմել է քաղաքաշինութեան մտայղացման անբաժանելի մասը եւ յուսալի պաշտպանական համակարգի շնորհիւ ապահով դարձրել երկիրը նուաճողական արշաւանքներից: Սիւնիքի բարենպաստ աշխարհագրական դիրքը եւ խիստ լեռնային մակերեւոյթը հնարաւորութիւն են տուել ծաւալելու ռազմապաշտպանական ընդարձակ գործունէութիւն, որի շնորհիւ զարգացել է ամրոցների ու բերդերի ճարտարապետութիւնը: եթէ համեմատելու լինենք Հայաստանի տարբեր նահանգներում ու Սիւնիքում կառուցուած բերդերն ու ամրոցները, ապա կարելի է նկատել ճարտարապետական յօրինուածքի, շինարարական արհեստավարժութեան եւ տեղանքի ընտրութեան հետ կապուած զգալի տարբերութիւններ: Եթէ Սիւնիքում բերդերի կառուցման համար ընտրում էին գետահովիտների ժայռալանջ սարաւանդների գագաթները (Սմբատաբերդ, Վասակաշատ, Որոտն, Կկոց քար եւ այլն), ապա, օրինակ՝ Կիլիկիայում բերդերի տեղադրութեան համար ընտրում էին առաւելապէս լեռնաշղթաների ստորոտների ժայռացցերը, որոնց վրայ կառուցւում էին աշտարակներն ու բուրգերը, իսկ նրանց միջեւ առաջացած տարածութիւնները քօղարկվում էին երկայնական պարսպապատերով՝ Լեւոն կլայ (պատկ.72) Լամբրոն (պատկ.73), Սավրայնդա (պատկ.74), Բագրաս (պատկ.75), Սիս (պատկ.76) եւ այլն: Տաշիր-Ձորագէտ նահանգում պաշտպանական հենակէտերի կառուցման համար նոյնպէս ընտրում էին եռանկիւնաձեւ հրուանդանները, սարաւանդները [Կապան, Կայծոն, Լոռի (պատկ.77), Աղթալայ (պատկ.78,ա)], սակայն այստեղ հանդիպում են նաեւ հարթավայրային ամրոցներ, ինչպէս, օրինակ՝ Բերդաւանը, կամ անտառապատ բարձրադիր բլուրների գագաթներին կառուցուող, մայրուղիներին ու բնակատեղերին կից տեղադրուող ամրոցները, ինչպէս՝ Չախալաբերդը:

Պաշտպանական կառոյցների ճարտարապետութիւնը Սիւնիքում վերելք է ապրում միջին դարերում: Դա բացատրւում է նրանով, որ Սիւնիքը, լինելով երկրի կենտրոնի համար հարաւային սահմանային շրջան եւ բնական խոչընդոտներով հարուստ նահանգ, անհրաժեշտութիւն ունէր ամրացուելու: Առաջնահերթ խնդիր է դառնում ամրոցաշինական կառոյցների ցանցի միջոցով ստեղծել պաշտպանական այնպիսի ռազմավարութիւն, որն ապահով կը դարձնէր սահմանամերձ շրջանը զաւթողական քաղաքականութիւն վարող այնպիսի հզօր ամիրապետութիւններից, ինչպիսիք էին սելջուկեանը, իրանականը, Իրաքինը, Իկոնիայինը: Ռազմավարական համակարգերի ստեղծման համար մեծ նշանակութիւն ունէր բնականոն եւ պատմականօրէն ձեւաւորուած բոլոր կարեւոր նախադրեալների ճիշտ ու հմտօրէն օգտագործումը (հիմնական հաղորդակցական ուղիներ, խոշոր վարչատնտեսական կենտրոններ, լեռնաշղթաներ, ժայռագագաթներ, լեռնանցքներ, գետահովիտներ, լեռնավահաններ եւ այլն): Կարեւոր նշանակութիւն են ունեցել դէպի նահանգ մտնող եւ նրանից դուրս եկող հաղորդակցական բոլոր ուղիների պաշտպանական համակարգերը:



56

Պատկ. 56
Սիւնեաց նախանգի գաւառների քարտէզ, գծագիրը՝ հեղինակի



56.ա


Պատկ. 56.ա
Սիւնեաց նահանգի աշխարհագրական միջավայրը Google Earth-ից դիտուած

Պատկ. 57
Սիւնիքի հիւսիսային շրջան՝
Գեղարքունիք. Գեղարքունիք եւ
Սոդք գաւառներ,
գծագիրը՝ հեղինակի



57

Պատկ. 58
Սիւնիքի կենտրոնական շրջան՝
Վայոց ձոր գաւառ գծագիրը՝
հեղինակի




58


Պատկ. 59
Սիւնիքի հարաւային շրջան՝ Ծղուկք, Աղահեճք, Հաբանդ, Բաղք, Զորք, Կովսական, Արեւիք, Երնջակ, Ճահուկ գաւառներ, գծագիրը՝ հեղինակի



59



Պատկ. 60
Սեւանի միակենտրոն պաշտպանական համակարգը գծագիրը՝ հեղինակի




Պատկ. 61
Սիւնիքի թագաւորութեան մայրաքաղաք Կապանի պաշտպանական համակարգը գծագիրը՝ հեղինակի



62

Պատկ. 62
Որոտնավանք-Որոտնաբերդ երկկենտրոն պաշտպանական համակարգը Google Earth-ից դիտուած




63

Պատկ. 63
Վահանավանք-Բաղաբերդ երկկենտրոն պաշտպանական համակարգը Google Earth-ից դիտուած




64

Պատկ. 64
Տաթեւ-Յուր երկկենտրոն պաշտպանական համակարգը Google Earth-ից դիտուած



Պատկ. 65
Սուրբ Գեւորգի վանք-Երնջակ երկկենտրոն պաշտպանական համակարգը Google Earth-ից դիտուած

65




Պատկ. 66
Ցաղաց քար-Սմբատաբերդ երկկենտրոն պաշտպանական համակարգը Google Earht-ից դիտուած

66



Պատկ. 67
Սպիտակաւոր-Բոլորաբերդ երկկենտրոն պաշտպանական համակարգը Google Earth-ից դիտուած

67



68

Նկար. 68
Արարատ հշվում ընդհանուր տարած
Շուտան բերդաքաղաքի արևելյան
արտադրական հատվածքի
գծագիրը՝ հեղինակի



69

Պատկ. 69
Որոտնավանքի ճարտարապետական համալիրը մինչեւ 1931-ի երկրաշարժը (պատմական լուսանկար), Է-ԺԱ դարէր




69.ա

Պատկ. 69.ա
Որոտնավանքի ճարտարապետական համալիրը 1931-ի երկրաշարժից յետոյ (լուսանկարը՝ 1980-ական թթ.)




69.բ

Պատկ. 69.բ
Որոտնավանքի ճարտարապետական համալիրը վերականգնումից յետոյ (լուսանկարը՝ 2000-ական թթ.)



Պատկ. 70
Որոտնավանք
պատմաճարտարապետական
համալիրի ընդհանուր յատակագիծը
Ա Բ — Աշխարհագրական
միջավայրի բնական արգելքներ,
Գ Դ — Վանքի ամրապատ
պարսպապատէր
գծագիրը՝ հեղինակի



Պատկ. 71
Որոտնավանքի
պատմաճարտարապետական
համալիրի հոգեւոր եւ աշխարհիկ
կառոյցների գլխաւոր յատակագիծը
1. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի,
Է. դար,
2. Սբ Ստեփանոս նախավկայ
եկեղեցի, 1000,
3. Գաւիթ ԺԱ. դար,
4. Հիւսիսային սիւնասրահ, ԺԱ. դար,
5.Սբ Կարապետ եկեղեցի, 1006,
6. Արեւելեան սիւնասրահ, ԺԱ. դար,
7. Յուշասիւն, ԺԱ. դար
8. Համբարանոց, գործատուն,
ԺԱ. դար,
9. Աշխարհիկ շինութիւններ,
ԺԱ-ԺԳ դարէր,
10. Պարսպապատէր, ԺԱ-ԺԳ դարէր,
11. Գերազմանոց, ԺԱ-ԺԹ դարէր,
12. Գլխաւոր մուտք, ԺԱ-ԺԳ դարէր
գծագիրը՝ հեղինակի



72

Պատկ. 72
Հայկական Կիլիկիայի Լեւոնկլայ
ամրոցը, ԺԲ. դար



73

Պատկ. 73
Հայկական Կիլիկիայի Լամբրոն
ամրոցը, ԺԲ. դար



74

Պատկ. 74
Հայկական Կիլիկիայի Սավրանդայ
ամրոցը, ԺԲ. դար



75

Պատկ. 75
Հայկական Կիլիկիայի Բագրաս
ամրոցը, ԺԲ. դար



76

Պատկ. 76
Հայկական Կիլիկիայի Սիս ամրոցը,
Ե-Զ, ԺԲ. դարեր



77

Պատկ. 77
Լոռի բերդաքաղաքի
համայնապատկերը, Ժ. դար



Պատկ. 78
Ախթալայի վանք-ամրոցի
արեւելեան պարսպապատերը,
Ժ. դար

78



Պատկ. 78.ա
Ախթալայ վանք-ամրոցի գլխաւոր
մուտքի պաշտպանական
աշտարակը,
Ժ. դար

78.ա



Գեղարդավանք, Զաքարեան իշխանների զինանշանը

2.2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ԱՄՐՈՑԱՇԻՆԱԿԱՆ 11 ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Պաշտպանական նկատառումներով անհրաժեշտութիւն է առաջացել ստեղծելու ռազմավարական (համապետական, արտաքինքաղաքական) եւ մարտավարական (երկրի ներսում, ներքաղաքական) ամրութիւնների համակարգեր: Պաշտպանական այս երկու ընդարձակ ծրագրերն իրագործուել են տարբեր յագեցուածութեամբ՝ պայմանաւորուած երկրի արտաքին եւ ներքին քաղաքական վիճակներով ու պահանջներով, սակայն երկրի պաշտպանութիւնը օտար զաւթիչների ներխուժումներից միշտ եղել է առաջնահերթ եւ կարեւորագոյն խնդիր: Ինչպէս ասացինք, ամրոցաշինութիւնը ծաւալուեց ոչ միայն արտաքին քաղաքականութեան դրդմամբ, այլեւ երկրի ներսում առաջացած ներքին քաղաքական իրավիճակով պայմանաւորուած, քանի որ առանձին իշխաններ, նախարարներ, օգտուելով օտար հովանաւորութիւններից, ստեղծում էին մեկուսացուած աւատապետութիւններ, իշխանութիւններ, որոնք նոյնպէս ռազմականացման կարիք ունէին: Ռազմավարական եւ մարտավարական պաշտպանական համակարգերի ստեղծումը կապուած էր Սիւնիք տանող հիմնական ուղղութիւններին յարակից կենտրոնական ամրութիւնների եւ երկրի ներսում գաւառային, երկրորդական, օժանդակ ամրութիւնների ցանցի կազմաւորման հետ: Այս նկատառումներից ելնելով՝ կարեւոր առեւտրական ճանապարհներին, որոշակի հեռաւորութեամբ, կառուցուել են բերդեր, պահակակէտեր, որոնք ունեցել են զուտ ռազմական նշանակութիւն: Է–Ը դարերում այս ճանապարհների երկայնքով եւ բերդերի հսկողութեան տեսադաշտերում կառուցուել են կամուրջներ, քարաւանատներ, մատուռներ:

Սիւնիքով անցնող Դուին–Բերդկունք–Պարտաւ–Կասպից ծով առեւտրական ճանապարհի Վայոց ձորով անցնող Սիսաջան–Կոթ (Sisajan–Gēlakūni, պատկ.79) ճանապարհահատուածում մինչեւ օրս պահպանուել են պաշտպանական համակարգի մաս կազմող մի քանի կենտրոնական եւ երկրորդական նշանակութիւն ունեցող բերդերի աւերակներ: Առեւտրական ճանապարհի երկու ճիւղաւորումներից վերը նշուածը՝ Դուին–Պարտաւ տանող արաբական հին ճանապարհը, ուսումնասիրութեան առարկայ է եղել Լեոյի, Լիսիցյանի, Մարկվարտի, Մանանդյանի, Կառաուլովի, Երեմյանի, Հակոբյանի, Հարությունյանի, Ղարագյոզյանի աշխատութիւններում[113], որտեղ ներկայացուած են պատմական հետաքրքիր տեղեկութիւններ, վերականգնուած են բնակավայրերի անունները, քարաւանատների եւ կայանների տեղադրութիւնները, սակայն գրեթէ ոչինչ չի յիշատակւում ճանապարհի երկայնքին տեղադրուած բերդերի ու նրանց դիրքադրութեան մասին (այս ճանապարհի մեր ուսումնասիրութիւնը մանրամասն կներկայացնենք չորրորդ գլխում, որը նուիրուած է Վայոց ձոր գաւառին):

Սիւնիքով անցնող մէկ այլ առեւտրական ճանապարհ սկիզբ էր առնում Նախճաւանից, մտնում Ծղուկք գաւառի սահմանը եւ, անցնելով Ակունք, Բորտի, Ծաղատ, Դաստակերտ, Սիւնի, Աղխիտու, Որոտն, Խոտուք, Ցուր, Բերդ-Առաւելադաշտ[114] ամրոցների հսկողութեան տեսադաշտով, իջնում էր Բաղք, Մեղրի գաւառները եւ հասնում մինչեւ Կարճեւան, որտեղից միանում էր Ջուլֆա–Փայտակարան միջազգային առեւտրական ճանապարհին:

Սիւնիքում շատ բերդեր ու ամրոցներ կառուցւում էին հին ամրութիւնների տեղերում[115] , սակայն ռազմարուեստի առաջընթացը թելադրում էր ճարտարապետական խիստ որոշակի տարրերի եւ արհեստավարժական հնարների կիրառում: Միջին դարերում զէնքի տեսականին այնքան էլ հարուստ չէր, սակայն այն անընդհատ կատարելագործւում էր, ուստի կատարելագործւում էին նաեւ այդ զէնքից օգտուելու եւ նրանից պաշտպանուելու միջոցները: Մինչեւ հրազէնի գիւտը եւ նրա կիրառումը Հայաստանում՝ ԺԴ. դար (ի դէպ, պէտք է ասել, որ հրազէնի կիրառումը զգալի փոփոխութիւններ չմտցրեց ամրոցաշինութեան ճարտարապետութեան մէջ), պատերազմում էին սառը զէնքերով եւ ռազմական յատուկ մեքենաներով: Ըստ պատմիչներից հասած տեղեկութիւնների՝ նրանք բաժանուել են պաշտպանողական եւ պաշարողական զէնքերի: Այդ շրջանին են պատկանում այնպիսի զէնքեր, որպիսիք են էշը, զրահը, օղազրահը, պարսատիկը, բա-

113. Այս ճանապարհի նկարագրութեանը հանդիպում ենք նաեւ պատմագիրների գործերում, մասնաւորապէս՝ Խտախարիի, Յովհաննէս Կաթողիկոսի, Ստեփանոս Օրբելեանի, Ղեւոնդ Ալիշանի, Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանցի, Յակոբ ալ-Համավիի աշխատութիւններում:

114. Այս ամրոցները միայն Ծղուկք գաւառով անցնող ճանապարհահատուածի երկայնքով տեղադրուած պաշտպանական հենակէտերն են:

115. Ս.Խ. Մնացականյան, *Հայկական Ճարտարապետութեան Սիւնիքի դպրոցը*, Երեւան, 1960, էջ 195:

բանը, փիլիկուան, տէգն ու գեղարդը, նետը, նիզակը, դաշոյնը, թուրը, սուրը, սուսերը, սուինը, սակրը, բերդեր գրաւող ու քանդող մեքենաները եւ այլն (պատկ.80)[116]:

Ռազմագէտները մշակել էին ինչպէս պաշտպանական, այնպէս էլ յարձակողական տարբեր ռազմական մարտավարութիւններ, ուստի բերդերի ճարտարապետութիւնն անխուսափելիօրէն ենթարկուել է այդ կանոններին: Ռազմական մարտավարութիւնը բերեց ամրոցների այնպիսի անհրաժեշտ տարրերի առաջացմանը, ինչպիսիք են անցախուցերը, կրկնակի դարպասներով մուտքերը, պատնէշ պատերը, զինանոցները եւ այլն:

Հայաստանում, իշխանական դղեակներից բացի (Մաղասաբերդ, Տիկնիս, Ամբերդ, Բոլորաբերդ), միջնադարում բերդ հասկացութիւնը՝ որպէս հզօր պարսպապատերով եւ ամրակուռ աշտարակներով միայնակ կառոյց, չի մեկնաբանուել: Եղել են ամբողջական համակարգեր, որոնք կազմել են մէկ ընդհանուր հասկացութիւն՝ կապուած բնակավայրի ռազմավարական կարեւորագոյն ճանապարհների ուղղութիւնների, լեռնանցքների, լեռնաշղթաների, գագաթների հետ: Յաճախ ամրոցները կառուցուել են ճանապարհների երկայնքով՝ իրարից որոշակի հեռաւորութեամբ՝ նպատակ ունենալով պաշտպանելու կարեւոր կենտրոնը՝ մայրաքաղաքը, եւ, որպէսզի թշնամին գրաւէր այն, պէտք է պաշարէր այդ ուղղութեամբ կառուցուած բոլոր հենակէտերը (բերդերը), քանի որ միւս կողմերից մայրաքաղաքը եղել է բնականից անառիկ: Սիւնիքում այսպիսի համակարգերի լաւագոյն օրինակներից է Կապան (Քաղաբերդ) մայրաքաղաքի ճառագայթաձեւ պաշտպանական համակարգը (պատկ.81): 987-ին Սիւնիքում ձեւաւորուում է Քաղաց (Կապանի)[117] թագաւորութիւնը: Թագաւորութեան մայրաքաղաքն է դառնում Կապանը[118]: Թագաւորութիւնն իր տիրապետութեան տակ ունէր 43 բերդ, որոնցից 12-ը նշանաւոր էին, 43 վանք եւ 1.008 գիւղ[119]: 1103-ին սելջուկեան թուրքերը Չորթմանի առաջնորդութեամբ, մատնութեամբ, գրաւում են Կապան մայրաքաղաքը. «...552 [1103թ.] թուին՝ օր մի յանկարծակի մինչ կային յանհոգութեան քաղաքացիքն, մատնեաց Տէր զանառիկն ի մարդկանէ զԿապան քաղաք. եւ անիծեալ Չորթման վասն քինուն իւր յեզակարծում ժամու հեղաւ ի վերայ քաղաքին»[120]: 1103-ից սկսած՝ Քաղաբերդը դառնում է Սիւնեաց թագաւորութեան մայրաքաղաքը, որտեղ պահպանուել են երկրի հարստութիւններն ու ձեռագրերը[121]: Հետաքրքրական է Քաղաբերդի պաշտպանական համակարգը, որը բաղկացած էր տարբեր ուղղութիւններով Քաղաբերդ մտնող ճանապարհների երկայնքով տեղադրուած բազմաթիւ ամրոցներից ու բերդերից: Քաղաբերդի հիւսիսով անցնում էր երկու ճանապարհ. մէկը գալիս էր Բարկուշատի եւ Աճենի կողմերից, անցնում դէպի Արեւիք եւ Գողթն, իսկ միւսն սկիզբ էր առնում հենց Քաղաբերդից եւ գնում դէպի Տաթեւ[122]: Երկու այլ ճանապարհներ, մէկը՝ հարաւից, միւսը՝ հարաւ-արեւելքից, նոյնպէս մաս են կազմել Քաղաբերդի պաշտպանական համակարգի: Հարաւային ճանապարհի երկայնքով տեղադրուած էին Ծլորուտ, Զեւու եւ Գեղի բերդերը, իսկ հարաւարեւելեան ճանապարհը պաշտպանուած էր Գրհամ, Կոնաս եւ Բերդաքար ամրոցներով: Քաղաբերդ տանող այս ճանապարհների երկայնքով տեղադրուած պաշտպանական հենակէտերը կազմել են ներփակ, ընդարձակ, ճառագայթաձեւ պաշտպանական համակարգ: Հնարաւոր է, որ Քաղաբերդը փորձել են գրաւել նաեւ հարաւային եւ հարաւարեւելեան ճանապարհներով, քանի որ պատմական որոշ տուեալներ տեղեկացնում են այն մասին, որ 1152-ին սելջուկեան թուրքերը գրաւել են Ծլորուտ բերդը (հարաւային ճանապարհ), 1166–69-ին՝ Գրհամը, Գեղին (հարաւարեւելեան ճանապարհ), որից յետոյ միայն 1170-ին՝ Կկոց քարը, այսինքն՝ Տաթեւ–Քաղաբերդ հիւսիսային ճանապարհի բերդերից մէկը[123]: Քաղաբերդի պաշտպանական համակարգի մասին մանրամասն կը խօսուի հինգերորդ գլխում:

Այսպիսով՝ ակնյայտ է դառնում պաշտպանական մի սկզբունք, որը կարեւոր վարչական կենտրոն տանող ճանապարհների երկայնքով, իրարից որոշակի հեռաւորութեամբ տեղադրուած բերդերի համակարգ է: Իհարկե, նշուած ճանապարհների

116. Բ. Առաքելյան, *Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX–XIII դարերում*, հ. 1, Երեւան, 1958, էջ 142–153: Վ. Աբրահամյան, *Արհեստները Հայաստանում IV–XIII դդ.*, Երեւան, 1955, էջ 66–84, 268: Զէնքերի տեսակների ու նրանց կիրառման մասին, տե՛ս Ս.Վ. Սարգսյան, նշ.աշխ., էջ 12–15:

117. Մատթէոս Ուռհայեցին յիշատակում է «Թագաւորն Կապանին»: Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 17, 231: Ստեփանոս Օրբելեանը յիշատակում է «Քաղաց» թագաւորութիւն, երբեմն՝ «Սիւնեաց եւ Քաղաց»: Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 71:

118. Կապանը Սիւնիքի թագաւորութեան մայրաքաղաք է եղել 998–1001-ը: Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968, էջ 203:

119. Ստ. Օրբէլեան, *Պատմութիւն նահանգին Սիսական*, ԿԱ, Թիֆլիս, 1911, էջ 333–335:

120. Նոյն տեղում:

121. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1911, էջ 336:

122. Ա. Ղարագյոզյան, *Սիւնիքի հարաւ-արեւելեան մասի ճանապարհները*, «ՊԲՀ», № 2, Երեւան, 1980, էջ 265: Հեղինակի կարծիքով՝ հենց այս ճանապարհով են ներխուժել սելջուկեան թուրքերը եւ գրաւել ճանապարհի երկայնքով տեղադրուած Բերդ-Առաւելադաշտ (Ծղուկք գաւառ), Տանձաւեր (Քաշունիք գաւառ), Գանձաբերդ, Աչաղվայ եւ Կկոց քար (Բաղք գաւառ) բերդերը եւ, հասնելով նշանաւոր Քաղաբերդին, խաբէութեամբ գրաւել այն: Այս ճանապարհը եղել է յարձակման միակ յարմար ուղղութիւնը, քանի որ Տաթեւից դուրս եկող միւս ճանապարհը Քաղաբերդի կողմից ունեցել է անառիկ դիրք:

123. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1911, էջ 335–336:

երկայնքով տեղադրուած բոլոր բերդերը չեն, որ կառուցուել են միաժամանակ. նրանք վերանորոգուել կամ հիմնադրուել են որոշակի ժամանակահատուածներում, սակայն Սիւնիքի թագաւորութեան ժամանակաշրջանում ծառայել են որպէս վարչական կենտրոնի պաշտպանական համակարգի բաղկացուցիչ ռազմական կառոյցներ:

Կարեւորագոյն ճանապարհներին կառուցուող բերդերն ունեցել են նաեւ առեւտրական նշանակութիւն[124], ինչպէս, օրինակ՝ Արփայ բերդը Վայոց ձոր գաւառում: Այն գտնուում էր Դուինից հարաւ-արեւելք՝ Նախճաւան–Թաւրիզ տանող մայրուղուն հաղորդակից, եւ նշուած էր Պեւտինգերյան քարտէզում, որից օգտուել են պարսիկ առեւտրականներն ապրանքները Նախճաւանից Դուին բերելու համար: Արփայ բերդը հաւանաբար ծառայել է որպէս ապրանքները պահելու միջանկեալ կայան, որտեղից Դուին հասնելը մի քանի ժամուայ ճանապարհ էր[125]:

Տեղադրութեան մէկ այլ սկզբունք է լեռնանցքների նեղ մասերում բերդերի կառուցումը (պատկ.82): Այսպիսի շինութիւնների նպատակը կարեւոր քարաւանային ճանապարհները լեռնանցքներում փակելն էր՝ այն հսկելու եւ տուրք գանձելու նպատակով, քանի որ նրանք անցնում էին տարբեր տիրոյթների կալուածներով: Սիւնիքում այս սկզբունքով կառուցուած բերդերից են Բերդաքար եւ Գիլաբերդ ամրոցները՝ Բաղք եւ Կովսական գաւառների սահմանագծին (պատկ.83), Բերդ-Առաւելադաշտ ամրոցը՝ Ծղուկք եւ Բաղք գաւառների սահմանագծին, Կադիր Ղալասի ամրոցը՝ Արեւիք եւ Կովսական գաւառների սահմանագծին, Պահու բերդը՝[126] Քաշունիք գաւառում: Լեռնանցքներում բերդերի տեղադրութիւնը, որտեղով անցնում էին հաղորդակցական ուղիները, բաւական յարմար ու նպաստաւոր էր: Երկկողմանի, ժայռալանջ, գահավէժ բերդակերպ պատնէշներն անհնարին էին դարձնում բերդերի շրջանցումը: Քարաւանը կամ սուրհանդակների պահակախումբն ստիպուած էր անցնել բերդի մօտով եւ բանակցութիւններ վարելուց յետոյ միայն շարունակել ճանապարհը: Այս նպատակին ծառայող պաշտպանական կառոյցները, բացի տեղադրութեան հետ կապուած առանձնայատկութիւններից, անկասկած ունեցել են ճարտարապետաշինարարական իւրայատուկ մօտեցում: Ցաւօք, նշուած բերդերից ոչ մէկը չի պահպանուել ուսումնասիրութեան համար բավարար չափով, ուստի հնարաւոր չէ վերլուծել այս տիպի պաշտպանական կառոյցը: Կարելի է միայն ենթադրել, որ այդ կառոյցներն ունեցել են մշտական կայազօր եւ ազդանշանային համակարգ շրջակայ պաշտպանական հենակէտերի հետ:

Բերդերը տեղադրուել են նաեւ գաւառների կամ իշխանական կալուածների սահմանամերձ գօտիներում: Այս նպատակին ծառայող բերդերն ունեցել են գերիշխող դիրք, կառուցուել են լեռնազանգուածների գագաթներին, որտեղից լաւագոյն տեսադաշտի շնորհիւ հնարաւոր էր հսկել զգալի տարածութիւններ: Սիւնիքի սահմանային բերդերից են Որոտն[127], Բարկուշատ, Բորոտան, Բղենի ամրոցները: Այսպիսի բերդերը կառուցուել են խմբերով՝ սահմանամերձ գօտու լեռնագագաթներին, եւ անհրաժեշտութեան դէպքում ունեցել են իրար հետ կապ պահպանելու հնարաւորութիւն: Որոտանը, Բորոտանը, Բղենը եւ Բարկուշատը ԺԲ. դարի սկզբին եղել են Սիւնիքի թագաւորութեան հիւսիսարեւելեան սահմանամերձ ամրոցները[128]:

Իւրաքանչիւր միջնադարեան բնակատեղի ունեցել է պաշտպանական հենակէտեր՝ դիրքեր՝ բնակավայրին մօտակայ հնարաւորին անառիկ տեղանքի վրայ, որոնք ծառայել են որպէս թաքստոց եւ ապաստարան բնակիչների համար: Սիւնիքի այս տիպի ամրոցաշինական կառոյցներից են Մեղրի բերդը (Արեւիք գաւառում), Քաշեթաղոց, Վանդա բերդերը (Քաշունիք գաւառում), Աչաղու, Կարճեւան, Կաքաւաբերդ, Բաղակու քար, Ձագաձոր բերդերը (Հաբանդ գաւառում), Տանձավայրի բերդը (Բաղք գաւառում): Բոլոր այս բերդերի մօտ եղել են համանուն բնակավայրեր, որոնց մասին կան յիշատակութիւններ: Այսպիսի ռազմապաշտպանական կառոյցները կոչուել են «Դիրք» կամ «Տիրք»[129]: Եթէ գիւղը մեծ էր, ապա կառուցում էին մի քանի դիրքեր: Այս նոյն սկզբունքով, սակայն տարբեր պաշտպանական կառոյցների միջոցով, ապահովւում էր քաղաքների

124. *Հայ ժողովրդի պատմութիւն*, Երեւան, 1976, էջ 210: Եղիշէն յիշատակում է «Արբանեակ աւան»: Եղիշէ, *Պատմութիւն Վարդանանց*, Վենետիկ, 1950, էջ 131: U.S. Երեմյանի կարծիքով՝ Արփայ բերդը համապատասխանում է այսօրվա Արենիին: Հաւանական է, որ Արփան նոյնացւում է Վայոց ձորի Արփայ բերդի հետ: U.S. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, 1963, էջ 41:

125. Արմէն Զարեան, նշ.աշխ., էջ 86:

126. Պահու բերդ անուանումն առաջացել է պահ՝ պահպանութիւն, եւ բերդ բառերից: Ա. Ղարագյոզյան, նշ.աշխ., էջ 266:

127. Սիւնեաց լեռներում յիշատակւում է «Դրունք Հայոց»: *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 1, Երեւան, 1971, էջ 17:

128. Թ.Խ. Հակոբյան, *Սյունիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 68–69, 206: Ժ դարից սկսած Որոտնաբերդը եւ Որոտնավանքը մասն են կազմել երկկենտրոն պաշտպանական համակարգի: Ա. Զաբյան (կրտ.), *Որոտնաբերդ-Որոտնավանք պաշտպանական համակարգը*, «ԼՀԳ», № 10, Երեւան, 1986, էջ 61–69:

129. Էդ. Աղայան, *Արդի հայերէնի բացատրական բառարան*, Երեւան, 1976, էջ 302: Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 80 (ծնթգր. 1): Վրաստանում XVIII դարում ստեղծւում են այսպես կոչուած «ամրոց-ցանկապատեր», վրացերէն՝ «գալաւանի», որտեղ պաշտպանուել են մօտակայ գիւղերի բնակիչները թշնամու անակնկալ յարձակումների ժամանակ: Մ.Մ. Հասրաթյան, *Սիւնիքի XVII–XVIII դդ. ճարտարապետական համալիրները*, Երեւան, 1973, էջ 119:

անվտանգութիւնը: Բնակավայրը եւ բերդը իրարից անջատ կառուցելը ընդունուած համակարգ էր միջին դարերում: Այսպիսի ամրոցներն ընդունակ էին երկար ժամանակով պատսպարելու քաղաքի բնակչութեանը, ապահովելու բոլոր անհրաժեշտ պահանջները (ջուր, մթերք, զէնք, ռազմավարական հաղորդակցութիւն):

Մեր օրինակներում ամենից լաւ պահպանուած «Տիրք» տիպի պաշտպանական կառոյցներից է Մեղրիի բերդը[130] (պատկ.84): Մ.Մ. Հասրաթեանի կարծիքով՝ այն հիմնադրուել է Ժ. դարի վերջին եւ ԺԱ. դարի սկզբին: Բերդը կազմուած է աղեղ կազմող երկու լեռնաշղթաների գագաթներում տեղադրուած վեց աշտարակներից: Լեռնաշղթաների հարաւային ստորոտում Մեծ թաղն է, որը հիւսիսային, արեւմտեան եւ արեւելեան կողմերից պարփակուած է բնական բերդապարիսպներով: Աշտարակների միջեւ քարաշէն պարսպապատերը բացակայում են: Աշտարակներից չորսը կլոր են, երկուսը՝ ուղղանկիւն: Աշտարակների վրայ ամբողջ պարագծով պահպանուել են շախմատաձեւ դասաւորութեամբ հրակնատներ: Թշնամու յարձակումների ժամանակ Մեղրիի բնակիչները պատսպարուել են եւ, հսկողութեան տակ առնելով ամբողջ բնակավայրը, բարձունքներից հրազէնի օգնութեամբ պաշտպանուել: Ամենայն հաւանականութեամբ՝ աշտարակները կառուցուել են յաջորդաբար՝ ելնելով Մեծ թաղի ու Փոքր թաղի աճից եւ թշնամու ներխուժումների յաճախականութիւնից:

130. Մ.Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 128–133: Նույնի, *Մեղրու շրջանի յուշարձանները*, Երեւան, 1987, էջ 5–9: Հ.Միքաէլ Հովհաննէսեան, նշվ. աշխ., էջ 427–428:

ԺԱ. դարից սկսած՝ բերդերը, զօրքի ամրացուած, տեւական կայան լինելով հանդերձ, երբ ընդունւում էին որպէս գահակալ իշխանների նստավայրեր, ձեռք էին բերում տուեալ երկրաբաժնի վարչական կենտրոնի նշանակութիւն, հետեւաբար՝ եւ ռազմական նշանակութիւն: Պետական եւ ռազմական ղեկավարութեան համար կառուցուած քաղաքը պարսպապատւում էր, ինչպէս, օրինակ՝ Սիսականը եւ Կապանը, իսկ այն բերդը, որտեղ հաստատուել են կառավարական կենտրոնները, եւ որոնց շուրջ զարգացել են շահաստաններն ու արուարձանները, կոչուել են բերդաքաղաքներ[131], օրինակ՝ Սմբատաբերդը (պատկ.85), Բաղաբերդը (պատկ.86), Սիւնին (պատկ.87), Երնջակը (պատկ.88):

131. ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 420:

Միջնադարեան Հայաստանում քաղաքներն ունէին եռամաս կազմութիւն՝ միջնաբերդ, շահաստան եւ արուարձաններ[132] (պատկ.89): Ռազմավարական տեսակէտից կարեւոր էին միջնաբերդն ու շահաստանը, այդ պատճառով նրանք պարսպապատւում էին պաշտպանական մարտավարական համապատասխան սկզբունքներով: Միջնաբերդը սովորաբար տեղադրւում էր քաղաքի վրայ իշխող դիրք ունեցող եւ դժուարամատչելի ու անառիկ բարձունքների վրայ: Միջնաբերդի պարիսպներն արտաքինից երբեմն շրջապատուել են ջրով լցուած լայն ու խորը խրամատներով, որոնց երկայնքով որոշ հեռաւորութեամբ տեղադրւում էին լայնական պատեր՝ ջրի հոսքը կանխելու համար: Այդ խրամատների վրայ կառուցուել են նաեւ փոքր կամուրջներ, որոնք նոյնպէս պաշտպանուել են յատուկ միջոցներով ու սարքերով: Խրամատները եղել են լրացուցիչ արգելքներ թշնամու առաջընթացը կանխելու համար: Ցաւօք, Սիւնիքի տարածքում պահպանուած բերդերում չենք հանդիպել նման պաշտպանական հնարքի, սակայն այն կիրառուել է Անի, Դուին, Կարին նշանաւոր բերդերում: Միջնաբերդում էին թագաւորի, իշխանի կամ աւատապետի պալատական շինութիւնները, եկեղեցին կամ մատուռը, զանազան նշանակութեան աշխարհիկ կառոյցներ՝ մթերքների պահեստներ, զինանոցներ, ամբարներ եւ այլն, օրինակ՝ Սմբատաբերդը (Վայոց ձոր գաւառ), Բաղաբերդը (Զորք գաւառ), Երնջակը (Երնջակ գաւառ): Բերդերն ունեցել են նաեւ ջրամատակարարման յուսալի համակարգ[133], ապահովուած են եղել գետնուղիներով[134], որոնք եղել են կապի միջոցներ երկարատեւ պաշարումների ժամանակ: Շահաստանը նոյնպէս պարսպապատւում էր, երբեմն՝ մի քանի շարքով՝ կախուած տեղանքի եւ շահաստանի մեծութիւնից. Սիւնիք (Ծղուկք գաւառ), Կապան (Քաղք գաւառ): Շահաստանում էին կառուցւում արհեստաւորների, առեւտրականների տները, եկեղեցիները, մելիքական տները: Այն ունէր նախօրոք մշակուած ճանապարհների ցանցի գօտեւորում, ինչպէս նաեւ քաղաքի մուտքի

132. Ն.Ծ. Պապուխյան, *Սիւնիքի ժողովրդական ճարտարապետութիւնը*, Երեւան, 1972, էջ 12–15: Թ.Խ. Հակոբյան, *Անի*, Երեւան, 1980, էջ 135–137: В. Арутюнян, *Каменная летопись арянского народа*, Ереван, 1985, ст. 27–28.

133. Սմբատաբերդ ամրոցի եւ Բաղաբերդի ջրամատակարարումն իրականացուել է կավե խողովակներից բաղկացած ջրմուղի միջոցով, որի աւերակների հետքերը մինչեւ օրս նշմարւում են կառոյցների շրջակայքում:

134. Որոտնաբերդի արեւելեան պարիսպների տակ՝ Որոտան գետի ափին եւ հին Որոտն գիւղի մօտ էր երբեմնի գետնուղու գլխամասը: Ե. Լալայեան, *Զանգեզուրի գաւառ*, հ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 54:

դարպասներ, որոնք համապատասխանում էին գլխաւոր ճանապարհների առանցքների ուղղութիւններին: Եկեղեցին կառուցւում էր արեւմուտք–արեւելք հայոց առանցքով, որի հարաւհայեաց ճակատում տեղադրւում էր արեւի ժամացոյցը, որի դիմաց հրապարակն էր: Քաղաք տանող գլխաւոր ճանապարհների երկայնքով տեղադրւում էին պաշտպանական մի շարք կառոյցներ՝ բերդեր, ամրոցներ, որոնք, կազմելով յաջորդական պաշտպանական համակարգեր, ապահովում էին խոշոր քաղաքների անառիկութիւնը: Այսպիսի ամրոցաշինական կառոյցները՝ բերդշէները, ունեցել են մշտական կայազօր բերդի տարածքում, որը միշտ պատրաստ էր յետ մղելու թշնամու յարձակումները եւ կապ էր պաշտպանում նոյն գծի երկայնքով տեղադրուած միւս ամրոցների հետ, օրինակ՝ Կապան (1170-ից՝ Բաղաբերդ) մայրաքաղաքի պաշտպանական համակարգը, որի մասին արդէն խօսուել է:

Տեղանքի մեր ուսումնասիրութիւնները բերել են այն համոզման, որ Սիւնիքում գոյութիւն են ունեցել նաեւ անառիկ ժայռակղզիներ, որոնց դիրքը տարածքի համեմատութեամբ եղել է գերիշխող եւ անմատչելի: Մինչեւ օրս տեղացիներն այսպիսի բնական ժայռամրոցները կոչում են կալա (ամրոց – արաբ.) կամ մատնանշում են որոշակի անուններ՝ Վայս, Հրասեկայ, Ագարակաձոր, Սուլեմա եւ այլն (պատկ.90): Այս տիպի ամրոցներից շատերը յիշատակւում են պատմագրութեան մէջ եւ շատ անգամ գովերգւում են իրենց անառիկ համբաւի համար: Որպէս կանոն՝ անառիկ դիրքերը կամ զուրկ են որեւիցէ ձեռակերտ կառոյցից, կամ եթէ ունեն, ապա՝ միայն սահմանափակ պատեր կամ փոքր աշտարակներ՝ կառուցուած բարձր ժայռերի կատարներին: Ուսումնասիրութեան արդիւնքում կարելի է եզրակացնել, որ ամրոցաշինութեան բնագաւառում կիրառուել են նաեւ այնպիսի ամրութիւններ, որոնք տեղադրուել են հիմնական բերդամրոցների շրջաններում եւ լրացրել այս կամ այն պաշտպանական գիծը կամ օղակը՝ ինչպէս Վայս, Վասակաշէն (պատկ.91), Ագարակաձոր, Սուլեմա (պատկ.92), Ցուր, Հրասեկայ ամրոցները:

Միջնադարեան Հայաստանում կառուցուել են նաեւ «Կայան» տիպի բերդեր[135], որոնք եղել են որպէս ռազմականացուած հենակէտեր եւ ունեցել են տարբեր նշանակութիւն: Այսպիսի բերդերը ծառայել են որպէս փախստավայրեր, թաքստավայրեր՝ թշնամու հետապնդումներից ժամանակաւոր թաքնուելու համար, ուստի օգտագործուել են միայն անհրաժեշտութեան դէպքում: Սիւնիք կատարած արաբների արշաւանքների նպատակներից մէկը հարկեր հաւաքելն էր, որի ժամանակ թալանւում եւ հալածւում էին ամբողջական գիւղեր: Այս բերդերը դիրքորոշուած էին անառիկ տեղանքներում եւ ապահովուած էին ռազմավարական անհրաժեշտ բոլոր շինութիւններով: Հնարաւոր է, որ այս բերդերն օգտագործուել են կարեւոր ճանապարհները եւ թշնամու զօրախմբամիաւորումների տեղաշարժերը հսկելու համար: Օրինակ՝ Սուլեմա, Գոյալ (Կապոյտ) եւ Արփայ բերդերը՝ Վայոց ձոր գաւառում (պատկ.93), Վասակաբերդ (պատկ. 94), Որոտն բերդերը՝ Ծղուկք գաւառում: Սուլեմա բերդը Սելիմի լեռնանցքով անցնող առեւտրական ճանապարհին է՝ լեռնանցքից մօտաւորապէս 5 կմ հարաւ-արեւելք՝ բարձր լեռնազանգուածի կատարին՝ համանուն ձորի աջ կողմում, որտեղով անցնում է համանուն գետը: Սելիմի լեռնանցքի գագաթին՝ անմիջապէս ճանապարհի երկայնքով Սելիմի քարաւանատունն է (պատկ.95), իսկ նրանից մօտ 8–10 կմ հարաւ կառուցուել է աւելի փոքր չափերի մէկ այլ քարաւանատուն: Ուրեմն՝ Սուլեմա բերդի հսկողութեան տեսադաշտում ԺԴ. դարում առեւտրական այս ճանապարհին[136] կառուցուել են երկու քարաւանատներ՝ մէկը՝ բերդից հիւսիս-արեւմուտք, միւսը՝ հարաւ-արեւելք, եւ երկու քարաւանատներն էլ՝ Սուլեմա բերդից հաւասար հեռաւորութեան վրայ (մոտ 5 կմ): Մինչեւ քարաւանատների կառուցումը (բերդը գոյութիւն է ունեցել Արշակունիների թագաւորութիւնից էլ առաջ)[137] առեւտրական այս կարեւոր ճանապարհի հսկողութիւնը եւ քարաւանների անվտանգութիւնն ապահովել է Սուլեմա բերդը: ԺԳ–ԺՁ դարերում այս ճանապարհին կառուցուած երկու քարաւանատները ծառայել են որպէս ամրապատ պատսպարան-հանգրուաններ[138]:

135. Р.И. Матевосян, *Крепости укрепления типа «Каян»*. Республиканская научная конференция посвещённая 120-летию Тороса Тораманяна. Тезисы докладов, Ереван, 1984.

136. Առեւտրական այս ճանապարհը Սիւնիքով անցնող Դուին–Պարտաւ ճանապարհի ճիւղաւորումներից էր, որը Ծարուրի դաշտավայրում Նորաշէնով եւ Արենիով բարձրացել է Սուլեմա գետահովիտը եւ Սելիմի լեռնանցքով Արգիճի գետի հովիտով Կոթում միացել է Գեղամայ լճի արեւմտեան կողմով անցնող միւս ճիւղին: Ն.Ծ. Պապուխյան, *Քաղաքաշինութիւնը միջնադարյան Սիւնիքում*, «Էջմիածին», № Ժ, Էջմիածին, 1965, էջ 56:

137. Հ.Միքաէլ Յովհաննէսեան, նշ.աշխ., էջ 167:

Ամրոցաշինութեան սկզբունքների պատկերն ամբողջական չի լինի, եթէ հաշուի չառնենք, որ, ռազմապաշտպանական նկատառումներից ելնելով, համապետական, մարտավարական նշանակութեան պաշտպանական լայնատարած ծրագրի մասն են կազմել ոչ միայն բերդերից ու ամրոցներից կազմուած առանձին պաշտպանական համակարգերը, այլեւ այնպիսի միաւորներ, ինչպիսիք են քարաւանատները, ամրապատ եկեղեցիները, պալատներն ու մելիքական բազմաբնոյթ ապարանքները, վանք-ամրոցները: Առաջին հայեացքից այս կառոյցները՝ իրենց բնոյթով եւ նշանակութեամբ, պէտք է որ առնչութիւն չունենային պաշտպանական ճարտարապետութեան հետ, սակայն, կառուցուելով ռազմավարական նշանակութիւն ունեցող վայրերում, շատ յաճախ կատարել են պաշտպանական կառոյցների գործառոյթներ եւ այդ իսկ պատճառով ենթարկուել են որոշակի փոփոխութիւնների՝ կապուած մարտ վարելու ռազմավարութիւնից: Միջնադարում հասարակական եւ եկեղեցական որոշ կառոյցներում օգտագործուել են պաշտպանական ճարտարապետութեանը բնորոշ տարրեր՝ բրգաձեւ պարիսպներ, կիսաշրջան որմնահեց-բուրգեր, հրակնատներ, անցախուցեր, քօղարկուած մուտքեր ու լուսամուտներ, գետնուղիներ եւ այլն: Քարաւանատներում, պալատներում, ապարանքներում ու վանքերում պաշտպանական նկատառումներով կիրառուած շատ տարրեր իրականացուել են նախօրոք մտածուած, մինչդեռ անհրաժեշտութեան դէպքում բերդերի վերածուած կիսաւեր, առաւելապէս բազիլիկ եկեղեցիները, որոնք նման տարրեր ժառանգել են միտումնաւոր փոփոխութիւնների հետեւանքով:

Պաշտպանական ճարտարապետութեան իւրայատուկ դրսեւորման արգասիք են առեւտրական ճանապարհներին կառուցուած քարաւանատները[139]: Միջնադարեան Հայաստանում քարաւանատները եղել են ժամանակաւոր կանգառներ եւ շրջիկ աւազակախմբերից, կողոպուտից պաշտպանուելու հանգրուաններ, որոնք նախատեսուած էին մարդկանց եւ լծաքարշ կենդանիների համար[140]: Այս տիպի շինութիւնները կառուցւում էին գլխաւոր հաղորդակցական մայրուղիների երկայնքով՝ իրարից ցերեկային ճանապարհի հեռաւորութեան վրայ՝[141] խոշոր առեւտրական քաղաքների մատոյցներում[142]: Ի տարբերութիւն քաղաքներում կառուցուող իջեւանատների ու պանդոկների, որոնք պաշտպանական միջոցառումների անհրաժեշտութիւն չունէին, քարաւանատներն ունեցել են ամրոցաշինական սկզբունքներին իւրայատուկ ճարտարապետական ձեւեր՝ առանց բացուածքների խուլ պատեր, անկիւնային աշտարակներ, ամրակուռ դարպասներ[143]: Աշտարակները բերդերում եւ ամրոցներում յաճախ սնամէջ են, երբեմն՝ բաժանուած ներքին աստիճաններով (Մեղրի, Սմբատաբերդ), եւ օգտագործուել են կողահարման համար, իսկ քարաւանատներում տեղադրուել են կառոյցի անկիւններում եւ պատերի միջնամասերում՝ նրանց ամրութիւն տալու համար, որոնք միաժամանակ կառոյցին տալիս էին ամրոցի տեսք:

Միջնադարեան Հայաստանում քարաւանատները, ըստ ճարտարապետական յօրինուածքի, բաժանուել են երկու տիպի՝ միադահլիճ (միանաւ, եռանաւ) եւ բազմադահլիճ (բակով եւ առանց բակի): Միադահլիճ քարաւանատներն ունեն ձգուած ուղղանկիւն յատակագիծ: Այս դէպքում կիսաշրջան հոծ աշտարակները տեղադրուել են անկիւններում եւ երկայնական պատերի միջնամասերում, իսկ մուտքը լայնական կողմից էր, յաճախ՝ մշակուած հարուստ զարդանախշերով: Հայաստանում պաշտպանական նկատառումներով կառուցուած քարաւանատների լաւագոյն օրինակներից են Թալիշի, Վաղարշաւանի, Հարժիսի (պատկ.96,96.ա), Սելիմի (պատկ.97), Միջին Ասիայում՝ Դայա-խաթիմի[144], Թուրքիայում՝ Զառիհանի[145], Զորի[146] (պատկ.98), Անատոլիայում՝ Աղայ հանի[147](պատկ.99), Սուլթան հանի (պատկ.100), Սադեդին հանի (պատկ.101) քարաւանատները: Անատոլիայի քարաւանատների մասին Մարիա Գրացիա Սանդրիի «Քարաւանատները եւ թիւրբէները» գրքում ներկայացուած են սելջուկեան մի քանի քարաւանատներ՝ հան-եր, քան-եր (հրեերէն հան կամ քան նշանակում է ընդունարան, հաւաքատեղի), եւ պարզաբանուած են նրանց ճարտարապետական եւ

138. Ս.Խ. Մնացականյան, նշ.աշխ., էջ 214–215:

139. Նոյն տեղում:

140. Քարաւանային առեւտուրը կապուած էր մեծ դժուարութիւնների եւ վտանգների հետ: Երկրից երկիր ճանապարհվելով՝ քարաւանները ոչ միայն վճարում էին մեծ տուրք, այլեւ յաճախ ենթարկվում էին յարձակման ու կողոպուտի: *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 2, Երեւան, 1976, էջ 220:

141. Вараздат Арутюнян, նշ.աշխ., էջ 83:

142. Քանի որ առեւտրական մեծ քաղաքներում մայրամուտին փակւում էին դարպասները, եւ քարաւանների մուտքն արգելուած էր, քաղաքների մատոյցներում կառուցում էին քարաւանատներ: *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 2, Երեւան, 1976, էջ 22:

143. Քարաւանատների կառուցման համար սովորաբար ընտրում էին քամուց ու ջրից պաշտպանուած տեղեր: Նրանցից մի քանիսը՝ արտաքին ճարտարապետութեամբ՝ բոլորովին խուլ պատերով, անկիւնային կլոր ու բազմանիստ բուրգերով, յիշեցնում էին փոքրիկ ամրոցներ: Վ.Մ. Հարությունյան, *Միջնադարյան Հայաստանի քարաւանատներն ու կամուրջները*, Երեւան, 1960, էջ 135:

144. А. Прибытков, *Каравансарай Дая-Хатым*, сборник «Архитектурное наследие», № 3, 1953, ст. 92–106.

145. T. Örqüq, *Akok*, Bulleten Türk Tarik, N°79, Karu, 1956.

146. Н.М. Токарский, *Архтектура Армении IV–XIVвв.*, Ереван, 1946, ст. 245 (“Караван сарай у селения Зора имеет вид прямоугольной крепости, разм. 65х25 с глухми стенами и башнями по пяти на каждой длиной строения”).

147. Maria Grazia Sandri, *Caravanserragli e Türbe*, RAA, N°5, Milano, 1970.

ծաւալատարածական յօրինուածքային առնչութիւնները նոյն ժամանակաշրջանի հայկական նոյնատիպ կառոյցների հետ:

Հարկ ենք համարում ներկայացնել, մեր կարծիքով, կարեւոր մի փաստի թարգմանութիւնը. «Այլեւս կասկած չի կարող լինել սելջուկեան քարաւանատների շինարարութեան գործին հայ շինարար վարպետների արդիւնաւետ մասնակցութեան մասին: Այսպիսի օրինակներից առանձնանում է Հեքին հանի քարաւանատունը՝ կառուցուած Մալաթիա–Սիվաս առեւտրական ճանապարհին, որի պատին մինչեւ օրս պահպանուել է 1218 թ-ի հայատառ արձանագրութիւն»[148]: Հեղինակը նշում է, որ սելջուկեան քարաւանատների հոծ աշտարակ-որմնահեցերը, որոնք եղել են կիսաշրջան, ուղղանկիւն, քառանկիւն, աստղաձեւ, եռանկիւն, բազմանիստ, փղնջային, հեթիթա-արամէական[149], ուրարտական[150] եւ որոշ արաբական ամրոցների փոխառութիւն լինելուց բացի, սերտօրէն առնչւում են քննուող ժամանակաշրջանի որոշ ամրոցաշինական կառոյցների հետ՝ Անագարաբուս, ԺԳ. դար, Յիլան կալեսի, ԺԲ. դարի վերջ (պատկ.102), Սիս (պատկ.103), Ամբերդ[152] (պատկ.104): Ուշ կայսերական շրջանի հաներն ունեն ներքին յօրինուածքային առնչութիւններ հայկական բազիլիկների հետ՝ Ծիծեռնավանք, Զ. դար (պատկ.105), Սանահինի եռանաւ գավիթ, ԺԳ. դար (պատկ.106): Քննուող ժամանակաշրջանի սելջուկեան քարաւանատների պատերը կառուցուած են տուֆ քարից՝ բազմերանգ գօտիներով, զարդանախշային յարդարանքը զուսպ է՝ արտայայտուած խիստ երկրաչափական ձեւերով եւ կիրառուած մասնաւորապէս ճակատային հատուածներում: Ներքին տարածութիւնները լուծուած են որմնամոյթերի վրայ յանգչող թաղերով կամ գմբէթատակ քառակուսու վրայ նստող թմբուկով, որն արտաքինից պսակւում է վեղարով: Այս կառոյցներն աւելի առնչութիւն ունեն քրիստոնէական, քան իսլամական ճարտարապետութեան հետ, որը բացատրւում է տուեալ ժամանակաշրջանում հաստատուած տնտեսական, քաղաքական կապերի առկայութեամբ, որոնք եւ նպաստել են տարբեր մշակոյթների փոխներթափանցմանը: Նմանութիւններ կան նաեւ հաների եւ հայկական պարսպապատ վանքերի՝ վանք-ամրոցների միջեւ, ինչպէս, օրինակ՝ Զարբաքի Սբ Բարդուղիմեոս վանքը, Թ–ԺԳ դարեր (պատկ.107), Գանձակի Սբ Թովմաս վանքը, Ժ–ԺԳ դարեր[153] (պատկ.108), Դերմիրիյանքի Հոգոցվանքը, ԺԲ–ԺԳ դարեր (պատկ.109): Այստեղ հեղինակը գալիս է այն եզրակացութեան, որ, տարածքային մօտիկութեան հետ կապուած, արուել են շինարար-վարպետների փոխանակութիւններ: Այդ են վկայում շինարարական նոյն արհեստավարժութիւնը եւ վարպետների թողած նշանագրերը կառոյցների պատերին: Որպէս ասածի հաստատում՝ բերւում է Սուողուր բեյ (1358) մզկիթի կառուցման եւ միջնաբերդի վերանորոգման աշխատանքների համար հայ շինարարների մասնակցութեան փաստը[154] :

Քարաւանատների շրջապարիսպների հոծ աշտարակներն ունեցել են նաեւ ամրակառուցողական նշանակութիւն եւ կատարել են որմնահեցերի դեր՝ կառոյցի երկայնական պատերին ամրութիւն հաղորդելու համար:

Այսպիսով, ակնյայտ է դառնում քարաւանատների՝ որպէս պաշտպանական կառոյցների իւրայատուկ սկզբունքային տարատեսակը, որը լայնօրէն տարածուել է Հայաստանում եւ, մասնաւորապէս, Սիւնիքում ԺԳ–ԺԴ դարերում: Սիւնիքում համեմատաբար լաւ են պահպանուած Սելիմի, Աղաւնաձորի, Աղքենդի քարաւանատները՝ Վայոց ձոր գավառում, Պետրոսկայ վանքին մօտակայ եւ նոյն ուղղութեամբ ճանապարհի երկայնքով տեղադրուած քարաւանատները, Հարժիս (Յայջի) գիւղի մօտակայ քարաւանատունը, բոլորն էլ՝ Հաբանդ գաւառում: Ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունէին նաեւ կամուրջները, քանի որ նրանց քանդման դէպքում խափանւում էր հաղորդակցութիւնը: Հետաքրքիր է նաեւ նշել, որ ռազմավարական նշանակութեան ճանապարհներին՝ կամուրջների պաշտպանութիւնն ապահովուել է շրջակայ բերդ-ամրոցների հսկողութեան համակարգի միջոցով:

148. Արձանագրութեան վերլուծութիւնը տե՛ս A.A. Novello, *L'Armenia del tempo di Marco Polo* (secolo XIII), Marco Polo, Milano, 1981, p. 99.

149. Հեթիթական մշակոյթի մասին տե՛ս E. Cavaignac, *Les Hittites*, 1950, Paris.

150. Ուրարտական ամրոցների մասին տե՛ս К. Кафадарян, *Новые данные по архитектуре Урарту*, «Советский археолог», № 4, Москва, 1967, ст. 237.

151. Օրինակ՝ Մսհաթա ամրոցը:

152. A.A. Novello, *Introduzione ai castelli e ai monasteri fortificati dell'Armenia Sovietica*, Atti dell'VIII congresso scientifico, I.B.I., Atene, 1968.

153. Այս վանք-ամրոցների մասին տե՛ս Paolo Cuneo, *Architettura medievale armena*, Roma, 1968, p. 325.

154. A. Gabriel, *Monuments...*, Paris, 1931–1934.

Ինչպէս ասացինք, թագաւորութեան, մելիքութեան պաշտպանական համակարգի մասն են կազմել նաեւ պարսպապատ վանքային համալիրները՝ վանք-ամրոցները, օրինակ՝ Տաթեւ, Դ–Թ դարեր, Որոտնավանք, Է–ԺԱ դարեր, Գնդեվանք, Ժ. դար, Ծղուկք գաւառ (պատկ.110.ա,բ,գ), Ամարաս, Դ–ԺԹ դարեր, Հալիձոր, ԺԳ. դար, Հաբանդ գաւառ (պատկ.110.դ,ե), Ծիծեռնավանք, Դ-Է դարեր, Աղահեչք գաւառ (պատկ.110.զ) եւ այլն: Վանքերը, ամրոցների համեմատութեամբ, կառուցուել են մեղմ մակերեւոյթ ունեցող անմարդաբնակ վայրերում (ուշ միջնադարում)՝ որպէս մենաստաններ, անապատներ, եւ զինուած ընդհարումների ժամանակ օգտագործուել են որպէս պատսպարաններ[155] թշնամուց ժամանակաւոր պաշտպանուելու համար: Վանք-ամրոցները շրջապատուել են բարձր ու ամուր պարսպապատերով, որոնք ունեցել են բրգաձեւ աշտարակներ եւ ամրակուռ դարպասներ՝ կառուցուած բերդաշինութեան սկզբունքներին համապատասխան: Տեղանքի առանձնայատկութիւններով պայմանաւորուած՝ պարըսպապատերը յատակագծում եղել են. ա) ուղղանկիւն, օրինակ՝ Տաթեւի մեծ անապատը (պատկ.111), Ամաղու Նորավանքը (պատկ.111.ա,բ) անկանոն, օրինակ՝ Հալիձորը (պատկ.111.բ), Գնդեվանքը (պատկ.111.գ), Տաթեւը (պատկ.111.դ): Ուշ միջնադարի վանք-ամրոցների պարսպապատերն անկիւններում ու միջնամասերում ունեցել են կիսաշրջանաձեւ բուրգեր, որոնք եղել են սնամէջ եւ հոծ: Սնամէջ բուրգերը ծառայել են զինուած ընդհարումների ժամանակ կողային հարուածներ հասցնելու համար: Այս տիպի բուրգեր կան Շնհերի կուսանաց անապատում, Շատինի վանքում (պատկ.112), Գեղեվանքում, Հալիձորում: Հոծ բուրգերը ծառայել են որպէս աշտարակ-որմնահեցեր, որոնց հանդիպում ենք Տաթեւի վանքի, Ամաղու Նորավանքի շրջապարիսպներում: Վանք-ամրոցների պարսպապատերի ներքին պատերին կցուած են եղել վանքի աշխարհիկ կառոյցները՝ միաբանութեան խցեր, պահեստներ, մառաններ, մթերանոցներ եւ այլն, որոնց հարթ տանիքներին կառուցուած մարտահարթակների վրայ հնարաւոր էր պատրաստել եւ մարտնչել թշնամու զինուած յարձակումների ժամանակ:

155. Գ.Մ. Գրիգորյան, նշ.աշխ., էջ 66–67: Մ.Մ. Հասրաթյան, նշ.աշխ., էջ 119:

Սիւնիքում վանք-ամրոցներն սկզբնաւորուել են Ժ. դարում (Որոտնավանք, Մաքենեաց վանք): Առանց աշտարակների պարզունակ պարսպապատ[156] ունեցող այս համալիրները հիմնադրուել են հնուց գոյութիւն ունեցող սրբավայրերում, որոնք ունեցել են անառիկ դիրք: Եզրապատնէշները չէին կարող լիովին անվտանգ դարձնել վանքապատկան տարածքը, եւ այդ է եղել պատճառներից մէկը, որ այս հաստատութիւնները հիմնադրուել են խոշոր բերդերի հսկողութեան տեսադաշտում: Այս երեւոյթը նպաստել է մի նոր պաշտպանական համակարգի առաջացմանը, որի լաւագոյն օրինակներից է Որոտնաբերդ–Որոտնավանք երկկենտրոն պաշտպանական համակարգը: ԺԷ–ԺԸ դարերում Սիւնիքում տարածւում են անապատներն ու մենաստանները: Վերջիններս կառուցւում էին անմարդաբնակ, անմատչելի վայրերում, ուստի վանքերն ինքնուրոյն պէտք է հոգային իրենց անվտանգութիւնը: Այս շրջանի վանք-ամրոցներն ունէին պաշտպանական-ռազմական կառոյցներին բնորոշ շատ տարրեր. պարտադիր են դառնում բրգաձեւ աշտարակները, ամրապատ շրջապարիսպները, գետնուղիները, ամրակուռ դարպասները: Այս վանքերի արտաքին կերպարը յիշեցնում է պաշտպանական կառոյց: Պաշտամունքի ու պաշտպանական ճարտարապետութեան արտայայտչամիջոցները միաձուլւում են տեղանքի աշխարհագրութեանը եւ ստեղծում շատ ինքնատիպ ու իւրայատուկ ճարտարապետական կերպար:

156. Այստեղ հարկ է նշել, որ վանքային համալիրների կառոյցները տեղադրւում էին այնպիսի յաջորդականութեամբ, որ նրանց մի կողմի պատերը մասն են կազմել պարսպապատերի շարունակութեան, օրինակ՝ Որոտնավանքի հիւսիսակողմ երկայնական ճակատում:

Խօսելով վանք-ամրոցների մասին՝ անհրաժեշտ է նշել նաեւ մէկ այլ պաշտպանական սկզբունք՝ կապուած եկեղեցական կառոյցների հետ: Սիւնիքի սահմաններից դուրս վաղ միջնադարի միանաւ եւ եռանաւ բազիլիկ եկեղեցիներն ուշ միջանադարում երբեմն օգտագործուել են որպէս բերդեր, օրինակ՝ Փարպիի Ծիրանաւորը, Ե. դար (պատկ.113), Բիւրականի Սբ Յովհաննէսը, Ե. դար (պատկ.114), Աշտարակի Ծիրանաւորը, Է. դար (պատկ.115), Ծիրակաւանի Երազգաւորը, Է–Թ դարեր (գմբէթաւոր սրահ տիպի, պատկ.116), Աշնակի Սբ Կարապետ, Դ–Ե դարեր (պատկ.117) եկեղեցիները: Բերդի

վերածուած եկեղեցիները ենթարկուել են որոշակի փոփոխութիւնների՝ կախուած մարտ վարելու եւ պաշտպանուելու ռազմական մարտավարութիւնից: Ամրոցապատ եկեղեցիները եղել են ոչ միայն ժամանակաւոր պատսպարաններ, որտեղ թաքնւում էր գիւղի բնակչութիւնը թշնամու անակնկալ յարձակումների ժամանակ, այլեւ շնորհիւ ամրոցներին յատուկ տարրերի, հնարաւոր է եղել բերդերից մարտ վարելով յետ մղել հակառակորդի զինուած յարձակումները: Պաշտպանական նպատակին ծառայող եկեղեցիները պարագծով կամ մասնակի պարսպապատուել են հաստ, ամուր եւ դէպի վեր նեղացող հենապատնէշներով, որոնք քօղարկել են եկեղեցու բացուածքները: Եկեղեցիները բերդերի են վերածուել այն դէպքում, երբ եղել են կիսաւեր եւ գրեթէ չեն գործել, իսկ շրջակայքում բացակայել են պաշտպանական այլ կառոյցներ: Աւելի ձեռնտու էր աւերակ եկեղեցին բերդի վերափոխելը, քան նոր պաշտպանական կառոյցի հապճեպ շինարարութիւն ձեռնարկելը: Մուրադ Հասրաթեանի կարծիքով՝ հայկական բերդ-եկեղեցիները կառուցուել են երկու սկզբունքով. եկեղեցիներ որոնք կառուցուել են որպէս պաշտամունքային կառոյցներ՝ ի սկզբանէ ունենալով պաշտպանական կառոյցներին բնորոշ գործօններ (Ագարակի միանաւ դահլիճ եկեղեցին, Դ–Է դարեր, Իջեւանի Սբ Առաքելոց վանք, ԺԳ. դար), եւ եկեղեցիներ, որոնք յետագայում են վերածուել ամրոցների (Մաստարայի Սբ Յովհաննէսը, Է. դար, Երիցավանքը, Ժ–ԺԱ դարեր, Աշնակի եկեղեցին, Ժ–ԺԱ դարեր)[157]: Ստորեւ քննարկուող բերդ-եկեղեցիները չնայած Սիւնիքում չեն գտնւում, սակայն հայկական ռազմական ճարտարապետութեան իմաստով կարեւոր են եւ ուշադրութեան արժանի:

Փարպիի Ծիրանաւոր միանաւ եկեղեցին բերդի է վերածուել Ժ. դարում, երբ եկեղեցու երկլանջ ծածկը կործանուած է եղել[158]: Եկեղեցու պարագծով, նրա պատին անմիջապէս հպուած կառուցուել են հաստաբուն, բրգաձեւ հենապատեր (հիմքի մօտ՝ 2մ), որոնք թաղի վրայ կառուցուած հողածածկ յատակից բարձր են 1.5մ (պատկ.118.2): Հենապատերի վերին հատուածներում արուած են բացուածքներ՝ հրակնատներ[159]: Եկեղեցու միակ արեւմտեան դռան բացուածքի չափով նրան հպուած պատնէշ-պատին եղել է պարսպապատ եկեղեցու մուտքը. մինչեւ օրս պահպանուել է բազալտէ, միակտոր, հաստ դուռը՝ ամրացուած ծխնիների վրայ: Դռան անմիջապէս վերեւում՝ եկեղեցու պատի եւ պատնէշ-պատի միջեւ թողնուած է նեղ (35սմ) հորիզոնական հորանցք, որը ծառայել է որպէս հաղորդակցութեան միջոց երկրորդ յարկում մարտնչողների եւ եկեղեցու ներսում զէնք ու վառելիք մատակարարողների համար: Երկրորդ յարկի մարտահարթակ կարելի էր բարձրանալ միայն եկեղեցու ներսում արեւմտեան զոյգ լուսամուտների կողքով թողնուած նեղ աստիճանաւոր միջանցքով: Եկեղեցու յատակից մինչեւ այս լուսամուտները մօտաւորապէս 4 մետր է: Այստեղ կարելի էր բարձրանալ նաեւ փայտէ աստիճաններով: Եկեղեցու ներսում՝ դռան մօտ եղել է դէպի գետահովիտ իջնող գաղտնուղու մուտքը[160], որն այժմ քօղարկուած է փլատակներով: Գետնուղու ելքը անմիջապէս գետի ափին է՝ քարայրի մէջ. ցայսօր պահպանուել է խմելու ջրի փոսորակը: Պատսպարուողներն այս մուտքով կապ են ունեցել արտաքին աշխարհի հետ: Հետաքրքիր լուծում ունեն պարսպապատերի վերին մասերում պահպանուած հրակնատները, որոնց կրականցքերն ունեն 18 աստիճանի քեքութիւն դէպի ներքեւ: Հրակնատների ներքին բացուածքներն ուղղանկիւն են (48x80սմ), ներսում՝ 48x 55սմ, իսկ արտաքինից քօղարկուած են 0.5 կոնաձեւ, սնամէջ զրահաձածկոցներով (թասակներով, պատկ.118.3): Զրահաձածկոցի կոնաձեւ հիմքը նստում է պատի մէջ շաղախով ագուցուած երկու աղեղնային, կլոր կտրուածք ունեցող փայտէ հեծանների վրայ, որոնք, պատից հեռու հատուելով, նստում են իրար վրայ: Կոնի մակերեւոյթը պատրաստուած է բետոնէ հրաձգագնդակաձիմացկուն թաղանթով: Այս յօրինուածքի շնորհիւ կարելի էր կրակ բացել ամրոցի ներսից եւ միեւնոյն ժամանակ պաշտպանուած լինել թշնամու գնդակոծումներից: Նոյն սկզբունքով կառուցուած հրակնատներ կան նաեւ Աշտարակի Ծիրանաւոր եկեղեցու հարաւային պարսպապատին, որոնցից երեքը տեղադրուած են

157. Մուրադ Հասրաթյան, *Միջնադարեան Հայաստանի բերդ-եկեղեցիները*, «ՎԷՄ» համակայկական հանդէս, Ժ(ՁԺ) տարի, թիվ 1 (61), հունվար-մարտ, Երեւան, 2018:

158. «...Սակայն երբ են որձաքարի զանգուածներով կրկնակի պատերով զրահաւորել այս եկեղեցին եւ վերածել բերդի. այդ յայտնի չէ. ըստ իմ կարծյաց, այդ ամրութիւնը պէտք է շինուած լինի 10-րդ դարում, երբ արաբները զարհուրելի աւերակներ էին գործում այդ շրջանի մէջ...»: Թ. Թորամանյան, *Նյութեր հայ ճարտարապետութեան պատմութեան*, հ. 2, Երեւան, 1948, էջ 227: Փարպիի Ծիրանաւոր եկեղեցու մասին տե՛ս Ղ. Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ, 1890, էջ 159: Սուքիաս Էփրիկեան, *Պատկերազարդ ընաշխարհիկ բառարան*, հ. երկրորդ, Վենետիկ, 1903–1905, էջ 565: Մ.Մ. Հասրաթյան, *Հայաստանի արտաքուստ շեշտուած աբսիդով միանավ յուշարձանները*, «Լրաբեր», № 11, Երեւան, 1976, էջ 27–41:

159. «...ի չորից կողմանց կարի ստուար կրաշաղախ մեծամեծ վիմօք հիւսեալ են զայլ որմն կից ընդ որմունս եկեղեցւոյն: Եւ այնպէս բարձրացուցեալ անդր քան զտանիքն՝ արարեալ են իբրեւ աշտարակ հզօր ընդդէմ հինից եւ ասպատակողաց: Եւ արդէն կան տեղիքն նետաձգութեանց կամ հրացանից...»: Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*, աշխատասիրութեամբ՝ Արմեն Տեր-Ստեփանյանի, ՄԱՄԵ, 2014, էջ 256:

160. «...Ունի փոքրիկ անցս դրան միոյ յարեւմտից եւ դուռն ի վերայ նորա միաստանի ամրակուռ սեաւ վէմ: Ի միջոյ այրս դրան՝ ասեն, էր գետնափոր ճանապարհ ի խոնարհ ցգետնակն վասն առնոյ անտի զջուր ի ժամանակի պաշարման...»: Նոյն տեղում:

պատի վերին մասի կենտրոնական հատուածում, եւ մէկական հրակնատ՝ նոյն ճակատի անկիւնների մօտ[161]:

Աշտարակի Ծիրանաւոր եկեղեցին իր յօրինուածքով եռանաւ բազիլիկ է: Այն բերդի է վերածուել ԺԹ. դարում՝ Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ: Ըստ Ե. Շահազիզի՝[162] Աշտարակ գիւղը բաժանուած է եղել հինգ թաղերի, որոնցից հնագոյնը՝ Բերդաթաղը, իր անունն ստացել էր այստեղ գոյութիւն ունեցող բերդից, որը կառուցուած է եղել ձորի բարձր քարափին: Յատակագծում այն ուղղանկիւն էր՝ երեք կողմից շրջապատուած պարիսպներով, որոնցից արեւմտեանն ամենաբարձրն ու ամենաերկարն է եղել: Բերդի հիւսիսում Ծիրանաւոր Սբ Աստուածածին մեծ եկեղեցին էր, հարաւում՝ Սպիտակաւոր Սբ Աստուածածին փոքր եկեղեցին: Մինչեւ 1864-ը նշմարուել են բերդի աւերակները, յետոյ գիւղացիները քանդել են եւ տեղում բերդի քարերից տներ կառուցել: Ըստ Թ. Թորամանեանի՝[163] ամրոցը Ժ–ԺԱ դարերի գործ է եւ կառուցուել է աւելի հին ամրոցի տեղում: Ծիրանաւոր Սբ Աստուածածին եկեղեցին[164] բերդի է վերածուել, երբ քանդուած են եղել նրա թաղերը եւ հարաւային պատի որոշ մասը: Եկեղեցու հիւսիսից եւ արեւմուտքից, գետնախարիսխից սկսած՝ եկեղեցու պատերին անմիջապէս հպուած, կառուցուել են հզօր բրգաձեւ պատեր (ներքեւում հաստութիւնը՝ 150սմ, վերեւում՝ 0.60սմ)՝ քօղարկելով արեւմտեան պատի դուռը եւ երեք բացուածքները (պատկ.118.1): հիւսիսային եւ արեւմտեան կողմերում պարսպապատը բարձրացուած է հիմքից, քանի որ այն ժամանակ այս պատերը եղել են անկայուն ու կիսաւեր, իսկ եկեղեցու հարաւային եւ արեւելեան պատերը շարուել են անմիջապէս այդ պատերի պահպանուած հիմքերի վրայ: Եկեղեցու պարագծով պարսպապատերը բերուել են միեւնոյն մակարդակի (գետնախարիսխից՝ 12մ): Ամրապատ եկեղեցու արեւելեան կողմը եղել է անառիկ, քանի որ եզերուած էր դէպի ձորը իջնող ժայռալանջերով: Եկեղեցու հարաւային կողմն ամբողջովին յարմարեցուած է մարտ վարելուն: Ինչպէս ասացինք, այստեղ կան Փարպիի Ծիրանաւոր եկեղեցու նման հինգ հրակնատներ, որոնց վերեւում կառուցուել են մօտ 30, շախմատաձեւ դասաւորութիւն ունեցող ուղղանկիւն, աւելի փոքր չափերի (ար- տաքին բացուածքը՝ 10x30սմ, ներքինը՝ 75x110սմ) հրակնատներ: Այս սկզբունքով տեղաբաշխուած հրակնատներ պահպանուել են նաեւ Մեղրիի բերդի ուղղանկիւն աշտարակի վերին մասերում: Հրակնատները ներսի կողմից ունեն գոգ, որը լուծուած է պարզ տրամատի քիւով: Բացուածքների վերին մասերում տեղադրուած են փայտէ ուղղանկիւն կտրուածքով բարաւորներ: Արխիվային մի լուսանկարի վրայ պահպանուել են հարաւային պատի միջնամասում տեղադրուած երեք հրակնատները՝ իրենց զրահածածկոցներով: Բոլոր հրակնատների բացուածքներն ունեն թեքութիւն դէպի ներքեւ: Հարաւային փոքր նաւի վրայ պարսպատի հետ միաժամանակ կառուցուել է երկլանջ ծածկով թաղակապ սենեակ, որն արեւմուտքից ունեցել է դուռ եւ լուսամուտ: Այս սենեակը հաւանաբար ծառայել է որպէս զինանոց, պահեստ: եթէ Փարպիի Ծիրանաւոր եկեղեցում մարտահարթակը կառուցուել է միանաւ եկեղեցու թաղի վրայ, ապա Աշտարակի Ծիրանաւոր եկեղեցում եռանաւ թաղերի վերակառուցումը երկարատեւ միջոցներ պահանջող շինարարական գործ էր, այդ պատճառով մարտահարթակն այստեղ կառուցուած է եղել փայտից: Պահպանուել են եկեղեցու ներսի երկայնական պատերի մէջ ագուցուած գերանների մնացորդներ (պատկ.119): Տախտակամածը ցածր է բերդապատի վերին մակարդակից մօտ 2,5 մետրով: Այստեղ կարելի էր բարձրանալ ներքին փայտէ աստիճաններով:

Եթէ վերը նշուած եկեղեցիները բերդերի են վերածուել եւ ունեցել են զինամարտ վարելու անհրաժեշտ տարրեր, ապա Սբ Յովհաննէս եկեղեցին վերածուել է բերդի միայն պաշտպանութեան համար: Այստեղ բացակայում են հրակնատներն ու երկրորդ յարկի մարտահարթակը: Եռանաւ բազիլիկ եկեղեցին հիւսիսից եւ արեւմուտքից եզրափակուել է բրգաձեւ հենապատերով, հիւսիսային եւ հարաւային փոքր նաւերի արեւելեան անկիւններում կառուցուել են թաքստոցներ, ուր կարելի է բարձրանալ կենտրոնական նաւի արեւմտեան անկիւնում թողնուած բացուածքով:

161. Նոյնատիպ հրակնատներ կան վրացական մի շարք պաշտպանական կառոյցներում: A.A. Novello, *Art and architecture in medieval Georgia*, Milan, 1980, pp. 225–240.

162. Երվանդ Շահազիզ, *Աշտարակի պատմութիւնը, Աշտարակ գիւղը և նրա յուշարձանները*, Երեւան, 1982.

163. Թ. Թորամանեան, նշ.աշխ., էջ 290:

164. Ա. Սահինյան, *Քասաղի բազիլիկայի ճարտարապետութիւնը*, Երեւան, 1955, էջ 114–116: Կ.Լ. Հովհաննիսյան, *Ճարտարապետական յուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում*, Երեւան, 1978, էջ 140:

Ամրոցաշինական սկզբունքների իւրայատուկ դրսեւորում է բնակելի ապարանքների, ամարաթների եւ պաշտպանական կառոյցների համատեղումը, որի լաւագոյն օրինակները հանդիպում են պատմական Արցախ նահանգում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Մարտակերտի շրջանում: Այստեղ պահպանուած ամրոց-պալատները յիրաւի պաշտպանական կառոյցներ են, որտեղ առկայ են ռազմաշինական կառոյցներին բնորոշ սկզբունքներ ու տարրեր: Այդպիսիք են Մելիք Բեգլարեանի ապարանքը[165], ԺԸ. դար, Հարճլանք գաւառ (պատկ.120) եւ Խաչենի Հասան-Ջալալեան տոհմի ապարանքը[166] (այսպես կոչուած՝ «Դարպասներ»), ԺԸ. դար, Բերդաձոր գաւառ (պատկ.120.1), Քաշաթաղի Սուլթանքենդ գիւղի ապարանքը, Լաչինի շրջան (պատկ.120.2), Տեղ գիւղի Սբ Գէորգ եկեղեցուն կից Մելիք Բարխուդարի ապարանքը, Սիւնիքի մարզ (պատկ.120.3)[167]: Ինչպէս յայտնի է, հայ մելիքները եւ բեգերը, հաստատուելով նախընտրուած բնակավայրում, կառուցել են իրենց տները ոչ թէ ընտանիքի, մելիքութեան, այլ ողջ տոհմի համար, ուստի այս ապարանքներն ամբողջական բնակելի համալիրներ են՝ բաղկացած կենցաղային, պաշտամունքային, տնտեսական նշանակութեան զանազան շինութիւններից: Բնական է, որ այսպիսի ընդարձակ տնտեսութեանն անհրաժեշտ էին պաշտպանական միջոցառումներ: Այսօրինակ պալատ-ամրոցները շրջապատւում էին բարձր բրգաձեւ պարսպապատերով, որոնց անկիւններում տեղադրւում էին կիսաշրջան, սնամէջ աշտարակ-բուրգեր (պատկ.121): Համալիրի բոլոր սենեակները դասաւորւում էին երկայնական ուղղութեամբ՝ արեւելքից արեւմուտք՝ ներքին բակի շուրջ, որոնց արտաքին, առանց բացուածքների պատերը կազմել են պարսպապատերի շարունակութիւնը: Այսպիսի յօրինուածքով կառուցուած մելիքական պալատի լաւ օրինակ է Գյուլիստանի մելիքական տունը:

Պալատ-ամրոցներն ունեցել են մէկ դարպաս եւ շատ յաճախ՝ նաեւ գետնուղիներ: Հետաքրքրական է, որ պալատ-ամրոցները նոյնպէս կառուցուել են անառիկ բերդերի մօտ՝ նրանց հսկողութեան տեսադաշտում: Այստեղ աւանդաբար օգտագործուել է երկկենտրոն պաշտպանական համակարգի սկզբունքը, որը սկիզբ է առել Սիւնիքում Ժ. դարում: Մեր օրինակներում այսպիսի համակարգի տարրեր են պաշտպանական կառոյցը եւ բնակելի ապարանքը[168]: Սիւնիքում լաւ պահպանուած ու վերականգնուած պալատ-ամրոցի ընտիր օրինակներից է 1783-ին կառուցուած Մելիք Բարխուդարի ապարանքը (պատկ.120.3), որը Տեղ գիւղի Սբ Գէորգ եկեղեցու հիւսիս-արեւելեան կողմում է: Ապարանքը բաղկացած է արեւելքից արեւմուտք մէկ շարքով դասաւորուած երկու կից գլխատներից, դրանց երկու կողմերում՝ մէկական դահլիճից եւ հարաւային կողմի սրահից: Ծածկերը կառուցուած են քառանիստ-բրգաձեւ փակուող թաղերով, որոնցից արեւմտեան կողմինն ամբողջութեամբ կանգուն է, իսկ արեւելեանը՝ մեծ մասամբ փլուած: Գլխատների հանդիպակաց երկու պատերին փոքր ու հարթածածկ խորշեր կան, իսկ միւս պատերը կապւում են երկու եզրային դահլիճների հետ: Պաշտպանական նկատառումներից ելնելով՝ Մելիք Բարխուդարի ապարանքում ի սկզբանէ օգտագործուել են նեղ պատուհաններ եւ հարաւային պարսպապատի արեւելեան ու արեւմտեան անկիւնների հոծ աշտարակներ: Սիւնիքի ռազմավարական պաշտպանութեան առումով՝ նշանակալի է նաեւ Աղահեճք գաւառի Քաշաթաղ բնակատեղիի Մելիք-Հայկազ Ա-ի ԺԵ. դարի մելիքական ապարանքը (պատկ.120.2ա): Ամրոցակերպ բնակելի դղեակի հիմնական կացարանները տեղադրուած են ուղղանկիւն պարսպապատի հիւսիս-արեւելեան անկիւնում՝ ժայռապատ սարաւանդին յարակից: հարաւային ճակատին սիւնազարդ կամարասրահն է: Ամրոցաշինական առումով հետաքրքիր են հարաւային պարսպապատի անկիւնային սնամէջ, եռայարկ աշտարակները, որոնց կլոր պատերին պահպանուել են դէպի դուրս նեղացող երեքական հրակնատներ: Ապարանքի մուտքը արեւմտեան պարսպապատին է՝ սրահի յօրինուածքով, որտեղից ներս մտնելիս հարկաւոր էր թեքուել ձախ եւ անցնել երկրորդ պաշտպանուած մուտքով: Դղեակի

165. Ծահեն Սկրտչյան, *Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները*, Երեւան, 1985, էջ 74–76:

166. Ծահեն Սկրտչյան, նշ.աշխ., էջ 19–21:

167. Ա. Դուլյան, *Արցախի եւ Սիւնիքի մելիքական ապարանքները*, ՀՃՈՒԿ, հ. 4, Երեւան, 2001, էջ 17–22, 109–114:

168. Մելիք Բեգլարյանի ապարանքից հարաւ Գյուլիստանի մելիքութեան գլխաւոր բերդամրոցն է՝ Գյուլիստանը, իսկ Հասան-Ջալալյանի ապարանքից հիւսիս՝ Խոխանաբերդը:

ուղղանկիւն պարսպապատերը զերծ են բացուածքներից՝ կառոյցի ներքին բակը պաշտպանելու համար (պատկ.120.2):

Ակնյայտ է դառնում նաեւ այն փաստը, որ Սիւնիքի լայնատարած ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասն են կազմել հասարակական, հոգեւոր մի շարք կառոյցներ, որոնք, լինելով նախօրոք կամ յետագայում վերափոխուած, յարմարեցուել են ռազմական գործողութիւններին եւ կազմել Սիւնիքի ռազմականացման քաղաքականութեան հետեւանքով առաջացած պաշտպանական ընդհանուր ծրագրի անբաժան մասը:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ Սիւնիքում պաշտպանական ճարտարապետութիւնը զարգացել է որոշակի սկզբունքներով, եւ բերդերն ու ամրոցները կառուցուել են՝ համապատասխան քաղաքաշինական, վարչական, ռազմագիտական եւ աշխարհագրական գործօնները յստակ պահպանելով: Կարող եմ ի մի բերել ամրոցաշինութեան մի քանի սկզբունք եւ տարբերել պաշտպանական կառոյցները՝ ըստ նշանակութեան.

1. Բերդեր, որոնք կառուցուել են վարչատնտեսական կարեւոր կենտրոնները՝ մայրաքաղաքները, պաշտպանելու համար: Նրանք մայրաքաղաք մտնող կարեւոր հաղորդակցական ուղիների երկայնքով, իրարից որոշակի հեռաւորութեամբ տեղադրուած պաշտպանական միաւորների համակարգեր էին, որ կարող էին զարգանալ ուղղագիծ, շրջանաձեւ, աղեղնաձեւ, ճառագայթաձեւ՝ ըստ տեղանքի առանձնայատկութիւնների:

2. Բերդեր, որոնք կառուցուել են լեռնանցքներում, կիրճերում, որտեղով անցել են կարեւոր առեւտրական ճանապարհներ, ու ծառայել են որպէս ռազմականացուած պահակակէտեր, որոնք ունեցել են նաեւ տուրքային ծառայութեան նշանակութիւն:

3. Բերդեր, որոնք կառուցուել են տարբեր գաւառների կամ «աշխարհների» սահմանագծերին՝ սահմանային բերդեր: Այս պաշտպանական կառոյցները տեղադրուել են լեռնաշղթաների կամ գետահովիտների երկայնքով՝ բաժանելով մի երկիրը միւսից:

4. Բերդեր ու ամրոցներ, որոնք կառուցուել են անմիջապէս բնակավայրերին կից, որտեղ պատսպարուել ու պաշտպանուել են բնակիչները թշնամու անակնկալ յարձակումների ժամանակ, այսպես կոչուած՝ «Տիրք» տիպի ամրոցաշինական կառոյցներ:

5. Բերդեր, որոնք ունեցել են վարչական կենտրոնի նշանակութիւն՝ բերդաքաղաքներ: Սրանք տարածուել են ընդարձակ տարածութիւնների վրայ ու բաղկացած են եղել միջնաբերդից, շահաստանից եւ արուարձաններից:

6. Բերդեր, որոնք կառուցուել են որպէս հենակէտեր՝ «կայան» տիպի բերդեր, որոնք ունեցել են համապետական նշանակութիւն եւ օգտագործուել են որպէս թաքստավայրեր, ամրացուած հենակէտեր, նաեւ օգնել են բացայայտելու թշնամու զորաշարժերը:


7. Բնականից անառիկ դիրքեր, որոնք տեղաբաշխուել են բերդամրոցների միջանկեալ հատուածներում եւ դիրքորոշուել անառիկ ժայռալանջ հրուանդանների գագաթներին: Այս ամրոցների առանձնայատկութիւնն այն էր, որ այստեղ կառուցուած պաշտպանական շինուածքները սակաւ էին, իսկ անառիկութիւնն ապահովւում էր բնական խոչընդոտներով:

8. Քարաւանատներ՝ որպէս ամրոցաշինական շինութիւններ, որոնք կառուցուել են կարեւոր քարաւանային մայրուղիների երկայնքով եւ ծառայել են որպէս ապաստարաններ՝ քարաւանների անձնակազմին շրջիկ աւազակախմբերի թալանից պաշտպանելու համար:

9. Վանք-ամրոցներ, որոնք անառիկ են պահել պաշտամունքային համալիրները՝ իրենց կալուածներով, եւ անհրաժեշտութեան դէպքում ծառայել են որպէս պատըսպարաններ հաւատացեալների համար:

10. Ամրոցապատ եկեղեցիներ՝ կիսաւեր բազիլիկ եկեղեցիներ, որոնք վերածուել են բերդերի եւ թշնամու յարձակումների ժամանակ օգտագործուել են որպէս պաշտպանական կառոյցներ (Սիւնիքի յարակից նահանգներում):


11. Պալատ-ամրոցներ, որոնք եղել են մելիքական ապարանքներ, ամարաթներ եւ շրջապատուել են անկիւններում բուրգեր ունեցող պարսպապատերով, որտեղ բնակուել եւ պաշտպանուել են ամբողջական գերդաստաններ:



Պատկ. 79
Սիւնիքով անցնող Դուին–Բերդկունք–Պարտաւ–Կասպից ծով առեւտրական ճանապարհի Վայոց ձորով անցնող Սիսաջան–Կոթ (Sisajan–Gēlakūni) ճանապարհահատուածը, գծագիրը՝ հեղինակի


79






Պատկ. 80
Միջնադարում կիրառուող պաշտպանողական եւ պաշարողական զէնքերի տեսակներն ու բերդեր քանդող մեքենան

80




Պատկ. 81
Կապան (Քաղաքերդ) մայրաքաղաքի ճարտարապետական պաշտպանական համակարգը, գծագիրը՝ հեղինակի

81



Պատկ. 82
Լեռնանցքների նեղ մասերում պահակային, տուրքային նպատակներով բերդերի կառուցումը գծագիրը՝ հեղինակի

82



Պատկ. 83
Սիւնեաց Բաղք գաւառի
սահմանային բերդերի
տեղադրութիւնը,
գծագիրը՝ հեղինակի

83



Պատկ. 84
Մեղրիի «Տիրք» տիպի
ամրոցաշինական կառոյցը, ԺԱ. դար

84



Պատկ. 85
Սմբատաբերդ ամրոցը որպէս գահակալ իշխանների նստավայր, Է-ԺՉ դարեր

85



Պատկ. 86
Բաղաբերդ ամրոցը որպէս Կապանի թագաւորութեան ռազմական յենակէտ, Ժ-ԺԳ դարեր

86




87

Պատկ. 87
Սիւնի ամրոցատեղին որպէս Ծղուկք գաւառի վարչառազմական կայան, Թ-ԺԳ դարեր



88

Պատկ. 88
Երնջակ ամրոցը որպէս Երնջակ գաւառի գլխաւոր ռազմական յենակէտ, Ք.ա. Ե-Դ, ԺԹ. դարեր



Պատկ. 89
Միջնադարեան Հայաստանի քաղաքների եռամաս կազմութիւնը, գծագիրը՝ հեղինակի

89



Պատկ. 90
Սուլեմա (Սելիմ) ամրոցը որպէս անառիկ ժայռակղզի, Դ. դար

90



91

Պատկ. 91
Վասակաբերդ ամրոցի ընդհանուր տեսքը, Է. դար



92

Պատկ. 92
Սուլեմա (Սելիմ) ամրոցի արխիւային լուսանկար, 1934, Ա. Շիրինեան



93

Պատկ. 93
Գոռեան (Կապոյտ բերդ) ամրոցի
ժայռացիցը, Ժ-ԺԳ դարեր



94

Պատկ. 94 Վասակաբերդ ամրոցի
ընդհանուր տեսքը




95

Պատկ. 95
Մելիմի քարաւանատան մուտքի
հատուածը, Վայոց Ձոր, 1332թ.



96

Պատկ. 96
Վաղարշաւանի քարաւանատանը,
Այրարատ, ԺԲ-ԺԳ դարեր



98.բ

Պատկ. 98.բ
Ձօրի քարաւանատան յատակագիծը,
Իգդիրի մարզ, ԺԳ. դար




Պատկ. 97
Սելիմի քարաւանատան ներքին տեսքը

97

96.ա

Պատկ. 96.ա
Հարժիսի քարաւանատան աւերակները, Սիւնիք, 1343թ.




95.ա

Պատկ. 95.ա
Սելիմի քարաւանատան յատակագիծը




98

Պատկ. 98
Չառի հան քարաւանատունը Կապադովկիայ, 1249թ



98.ա


Պատկ. 98.ա
Չառի հան քարաւանատան յատակագիծը Կապադովկիայ



ALAY HAN

da K. Erdmann


99.ա



SULTAN HAN (AKSARAY)

da K. Erdmann

100




SADEDDIN HAN

da K. Erdmann

101.ա



99



101

Պատկ. 99
Աղայ հան քարաւանատունը,
Անատոլիայ, 1180-1200 –130

Պատկ. 99.ա
Աղայ հան քարաւանատան
յատակագիծը

Պատկ. 100
Սուլթան հան քարաւանատունը,
Անատոլիայ, 1229

Պատկ. 101
Սադեդին հան քարաւանատունը,
Անատոլիայ, 1235-1236

Պատկ. 101.ա
Սադեդին հան քարաւանատան
յատակագիծը



Պատկ. 102
Հայկական Կիլիկիայի Յիլան ամրոցը, ԺԲ-ԺԳ դարեր

102



Պատկ. 103
Հայկական Կիլիկիայի մայրաքաղաք Սիս քաղաքի ամրոցատեղին, Ը-ՉԳ դարեր

103



104

Պատկ. 104
Ամբերդ ամրոցի համայնապատկերը,
ԺԱ-ԺԳ դարեր



105

Պատկ. 105
Ծիծեռնավանք եռանաւ բազիլիկան,
Դ-Է դարեր



Պատկ. 106
Սանահինի եռանաւ գաւիթը, 1211 թ.

106



Պատկ. 107
Չաղբակի Սբ Բարդուղիմէոս վանքը,
Թ–ԺԳ դարեր

107



108

Պատկ. 108
Գանձակի Սբ Թովմաս վանքը,
Ժ–ԺԳ դարեր




109

Պատկ. 109
Դերմիրիյանքի Հոգոցուանքը,
ԺԲ–ԺԳ դարեր, արխիւային
լուսանկար, 1900-ական թ.




110.ա

Պատկ. 110.ա
Տաթեւի վանք-ամրոցը, Թ-ԺԳ դարեր




110.բ

Պատկ.110.բ
Գնդեվանքի վանք-ամրոցը,
Ժ-ԺԲ դարեր




110.գ

Պատկ. 110.գ
Շատին վանք-ամրոցը, Ժ. դար




110.դ

Պատկ. 110.դ
Ամարասի վանք-ամրոցը,
Դ-ԺԴ դարեր



110.ե

Պատկ. 110.ե
Հալիձորի վանք-ամրոցը,
ԺԷ-ԺԸ դարեր



110.զ

Պատկ. 110.զ
Ծիծեռնավանք վանք-ամրոցը,
Դ-Է դարեր



111

Պատկ. 111
Տաթեւի մեծ անապատ վանք-ամրոցը, ԺԷ-ԺԸ դարեր



111.ա

Պատկ. 111.ա
Ամաղու Նորավանքի վանք-ամրոցը, ԺԳ-ԺԸ դարեր



111.բ

Պատկ. 111.բ
Հալիձորի վանք-ամրոցը



111.գ

Պատկ. 111.գ
Գնդեվանքի վանք-ամրոցը



111.դ

Պատկ. 111.դ
Տաթեւի վանք-ամրոցը, Դ-ժ դարեր



112

Պատկ. 112
Շատին վանք-ամրոցի
պարսպապատի բուրգը, Ժ-ԺԷ դարեր



113

Պատկ. 113
Փարպիի Ծիրանաւոր բերդեկեղեցին, Է. դար



114

Պատկ. 114
Բիւրականի Սբ Յովհաննէս բերդեկեղեցին, Ժ. դար

Պատկ. 115
Աշտարակի Ծիրանաւոր բերդեկեղեցին, Է. դար

Պատկ.115.ա
Աշտարակի Ծիրանաւոր բերդեկեղեցու բերդապատէրը հեռացնելուց առաջ, 1970-ական թ.



115.ա



115




116

Պատկ. 116
Շիրակաւանի Երազգաւոր Սբ Ամենափրկիչ բերդ-եկեղեցին, Թ. դար




117

Պատկ. 117
Աշնակի Սբ Կարապետ բերդ-եկեղեցի, Է. դար




118.3

Պատկ. 118.3
Փարպիի Ծիրանաւոր բերդ-եկեղեցու յատակագիծը, գծագիրը՝ հեղինակի



Պատկ. 118.2
Փարպիի Ծիրանաւոր բերդ-եկեղեցու հրակնատները, ԺԸ. դար, գծագիրը՝ հեղինակի

118.2




Պատկ. 118.1
Աշտարակի Ծիրանաւոր բերդ-եկեղեցին, գծագիրը՝ հեղինակի

118.1




Պատկ. 119
Աշտարակի Ծիրանաւոր եկեղեցու ներքին մարտահարթակի գերանների հետքերը, ԺԹ. դար

119




120

Պատկ. 120
Մելիք Բէգլարեանի ապարանքի յատակագիծը, ԺԸ. դար




120.1

Պատկ. 120.1
Խաչենի Հասան Ջալալ ապարանքի յատակագիծը, ԺԴ. դար



120.2

Պատկ. 120.2
Քաշաթաղի Սուլթանքենդ ապարանքի յատակագիծը, ԺԷ. դար



120.3

Պատկ. 120.3
Տեղ գիւղի Մելիք Բարխուդարի ապարանքը, 1783




Պատկ. 121
Քաշաթաղի Մելիք-հայկազի ապարանքի բուրգը, ԺԷ. դար



120.3.ա

Պատկ. 120.3.ա
Տեղ գյուղի Մելիք Բարխուդարի ապարանքը վերականգնելու աւարտին, 2020-ական թուականներ





Սելիմի քարավանատուն, Չեսար Օրբէլեան իշխանի զինանշանը

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

3.1. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳԱՒԱՌ [ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԵՒ ՍՈՒ(Դ)Ք] ԳԱՒԱՌԻ ՎԱՐՉԱՁԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.2. Մեւանի միակենտրոն պաշտպանական համակարգ
3.3. Մեւան ամրոց
3.4. Բերդկունք ամրոց (Աղկալա, Սպիտակ բերդ)
3.5. Դուին–Պարտաւ ճանապարհի, Կոթ–Զոդի լեռնանցք եւ Կոթ–Սելիմի (Սուլեմա) լեռնանցք ճանապարհահատուածի ռազմապաշտպանական համակարգը
3.6. Ալբերդ ամրոց
3.7. Մաքենեանց վանք-ամրոց
3.8. Ազատ քաղաք

Ըստ Մովսէս Խորենացու հաղորդած աւանդութեան՝ «Իսկ Գեղամը տարիներ անցնելուց յետոյ Արմավիրում ծնաւ Հարմային. նա Հարմային թողեց Արմավիրում բնակուելու իր որդիների հետ. իսկ ինքը գնաց արեւելեան հիւսիսում եղած միւս լեռան յետեւի կողմը, մի ծովակի ափ: Նա շենցնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ եւ իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները Գեղարքունի, ինչպէս կոչւում է նաեւ ծովը:»[169]:

Արդի շրջանի որոշ գիտնականներ յայտնում են այն կարծիքը, որ Գեղարքունի անունն ուրարտական (Welikuni[170]) կամ հնդեւրոպական ծագում ունի[171]: Գեղարքունիքը պատմութեան մէջ յիշատակւում է Գեղարքունի, Գելակունի, Գելյքունիա, Գեղամայ աշխարհ, Գեղարքունեաց գաւառ անուններով: Ղ. Ալիշանը գաւառը բաժանել է հինգ մասի. «...Ա. Գեղարքունի=Ծմակ=Գաւառ. Բ. Գոզաբակ=Կոթ. Գ. Սողք=Մէզրէ. Դ. Արկգունի. ...Ե. Սեւան կղզի, ...:»[172]:

Աշխարհագրօրէն Գեղարքունեաց երկիրը գտնւում էր Սիւնեաց նահանգի (մինչեւ Ժ. դարի 20-ական թուականները) հիւսիսում ու սահմանակից էր Այրարատ, Գուգարք, Ուտիք, Արցախ նահանգներին եւ բուն Սիւնիքի Վայոց ձոր գաւառին (պատկ.122): Գեղարքունիքի կազմի մէջ են մտել Գեղարքունիք եւ Սողք գաւառները (պատկ.123): Տարածքի 2/7 մասը զբաղեցրել է Գեղամայ (Գեղարքունեաց) ծովը: Ե. Լալայեանը լճի մասին հաղորդում է հետեւեալը. «Ամենահաւանական ենթադրութիւնը այս անուան ծագման վերաբերութեամբ Պ. Նիկոլսկունն է, որ հանում է Օրդակլուի եւ Քեօլանի-ղոլանի սեպագիր արձանագրութիւնների մէջ յիշատակած «suinia» բառից, որ վերաբերում է այս լճին եւ որ ուրարտերէն նշանակում է «լիճ» կամ «աւազան»: Հաւանօրէն այս անունից ծագել է Սիւնիք խօսքը, որ դարձել է այս լճի եւ սրա վիճակի յատուկ անունը եւ “Սեւանայ” կոչումը, որ կրում է այժմ այդ լիճն ու նրա միջին կղզին: Հայ մատենագիրները, առնելով Մ. Խորենացուց, կոչում են նրան Գեղամայ ծով, իսկ շրջակայքը՝ Գեղարքունի, յառաջացած համարելով Գեղամ նահապետի անունից, սակայն աւելի հաւանական է, որ այս կոչումը ծագած լինի Օրդուկլուի (այժմ՝ Լճաշէն - Ա.Զ.կրտ.) բեւեռագիր արձանագրութեան մէջ յիշուած Կիեհունի երկրի անունից, որ վերաբերում էր Սեւանայ լճի հիւսիսարեւմտեանք մասին, այժմեան Օդակլու գիւղի շրջակայքին:

Թուրքերը այս լճին կոչում են Գէօգչայ-Կապոյտ գետ, ինչպէս եւ Գէօգչայ-դարիա-Կապոյտ լիճ, ի նկատի ունենալով նրա ջրի կապոյտ գոյնը: Պարսիկները կոչում են Դարիաշիրին, այսինքն քաղցր ծով, ի նկատի առնելով ջրի բարեհամ յատկութիւնը: Ռուսները կոչում են Գոգչա եւ Սեւանգա»[173]:

Սեւանայ լճի արեւմտեան, հարաւային եւ հարաւարեւելեան ափերին պահպանուել են նախաուրարտական եւ ուրարտական բազմաթիւ ամրոցներ, բնակատեղիներ, դամբարանադաշտեր (պատկ.124): Սեւանի աւազանում են գտնուել ուրարտացի թագաւորներ Սարդուր Առաջինի սեպագիր արձանագրութիւնները, որոնք վկայում են այս շրջանում գոյութիւն ունեցող եւ դէպի դարերի խորքը գնացող քաղաքակրթութեան մասին (պատկ.125): Սեւանի աւազանում պահպանուած են բազմաթիւ կիկլոպեան ամրոցներ, որոնց մասին ուսումնասիրութիւններ են հրատարակուել[174]:

Ըստ Ստ. Օրբելեանի՝ Սիւնիքի տասներկու գաւառներից «...Երրորդը՝ Գեղարքունին որ հայկեանն Գեղամիայ կոչեցաւ Գեղարքունի: Չորրորդը՝ Սօթից գաւառ, որ սակս հանապազորդեան քքոց եւ սառնաշունչ օդոցն կոչեցաւ Սոթք:»[175]:

ՀԽՍՀ վարչական բաժանմամբ՝ Գեղարքունիքն ընդգրկում էր Կամոյի, Մարտունու շրջանները եւ Սեւանի շրջանի որոշ մասը, իսկ Սողքը՝ մօտաւորապէս Վարդենիսի շրջանը (պատկ.126), Սիւնիքի Գեղարքունիք եւ Սողք գաւառներն այժմ համընկնում են ՀՀ Գեղարքունիք մարզին (պատկ.127):

Գեղարքունիքի վարչական կենտրոնը եւ իշխանանիստը եղել է Կոթ գիւղաքաղաքը, Սողքինը՝ Զոդը: Սոդ(ք) անունը, որն ունի էթնիկական ծագում, հանդիպում է նաեւ Ծաւդ, Սաւդ, Զաւդ տարբերակներով[176]:

Սողք (Սօթ) գաւառի աշխարհագրական դիրքադրութեան մասին Սմբատեանցը

169. Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները ակադեմիկոս Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1968, էջ 91–92:

170. Г.А. Капанцян, *Историко-лингвистические работы*, том 2, Ереван, 1975, ст. 82.

171. Ս.Հ. Ումառյան, *Սիւնիքը դիցարան*, Երեւան, 1981:

172. Ղ. Ալիշան, *Սիսական*, Վենետիկ, 1893, էջ 36:

173. Ե. Լալայեան, *Գեղարքունիք կամ Նոր Բայազէտի գաւառ*, Թիֆլիս, 1908, էջ 7–8:

174. Գ.Հ. Միքայելյան, նշ.աշխ.:

175. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1911, էջ 70:

176. Н. Адонц, *Армения в эпоху Юстиниана*, Ереван, 1971, ст. 423–424.

յայտնում է. «Սօթայ գաւառի շրջակայ սահմանքն են, յԱրեւմտից Սեւանայ ծովն. ի հարաւոյ Վայոց ձորոյ արեւելեան մասն, եւ Սիւնեաց նահանգի հիւսիսային մասն՝ յԱրեւելից՝ Ռմբոստեան լերինքն եւ Ծարայ գաւառն (Թութղու-Քալվաջուր) եւ ի հիւսիսոյ՝ Ջիւանշիր գաւառն Գանձակայ (Ծամշադին եւ Գետաբեկ)»[177]:

Գեղարքունիք գաւառը բոլոր կողմերից շրջապատուած է բարձրաբերձ լեռնաշղթաներով, որոնք ստեղծում են բնականից պաշտպանուած եզրագծեր: Գաւառի հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւմուտք ձգւում են Գեղամայ լեռները, հիւսիս-արեւելքից հարաւ-արեւելք Քաշաթաղի լեռներն են, իսկ հարաւային մասն ամբողջովին շրջափակուած է Վարդենիսի լեռնաշղթայով: Գեղամայ լեռնավահանի ամենաբարձր գագաթը Աժդահակ լեռն է՝ 3.598մ (պատկ.128), Վարդենիսինը՝ Վարդենիսը՝ 3.520մ, Քաշաթաղինը՝ Հիլանը՝ 3.367մ: Գեղամայ լիճը շրջապատող այս լեռնավահանների բարձր գագաթներից են սկիզբ առնում լիճը թափվող հինգ համեմատաբար մեծ գետերը՝ Գաւառագէտը, Արգիճին, Վարդենիսը, Մասրիկը, Ձկնագետը: Ըստ Օրբելեանի հարկացուցակի՝ Գեղարքունիքում նշանաւոր է եղել 47 գիւղ, Սողքում՝ 75[178]:

Գեղարքունիք եւ Սողք գաւառները ռազմավարական առումով կարեւոր էին այնքանով, որ Սիւնիքի հիւսիսային սահմանային շրջաններն էին, որտեղ նշանակալի են եղել.

ա. Սեւանի միակենտրոն պաշտպանական համակարգը,

բ. Դուին–Պարտաւ ճանապարհահատուածի Ելենովկա–Սելիմի լեռնանցք եւ Կոթ–Սողքի լեռնանցք ճանապարհահատուածները,

գ. Մաքենաց վանք-ամրոցը,

դ. «Ազատ քաղաքը»:

Գեղամայ աշխարհը Սիւնիքի այն շրջանն է, որն ամրացուած է ամենասակաւ պաշտպանական կառոյցներով: Այս հանգամանքը թերեւս բացատրւում է նրանով, որ Գեղարքունիքը Թ. դարում դուրս է եկել Սիւնիքի կազմից եւ միացել Բագրատունեաց թագաւորութեանը, այսինքն՝ ունենալով հզօր հովանաւոր՝ նա չունէր այն առաջնահերթ եւ անխուսափելի պաշտպանական համակարգը, ինչպէս այդ տեսնում ենք Սիւնիքի ինքնուրոյն իշխանութեան միւս շրջաններում:

Ըստ պատմական տուեալների՝ միջնադարում Գեղարքունիքում յայտնի են եղել 5 քաղաքներ, որոնք հիմնականում եղել են Դուին–Պարտաւ ճանապարհին (պատկ.151): Այս քաղաքների մասին Սմբատեանցը հաղորդում է. «Գեղարքունւոյ հին քաղաքներն հետեւեալքն են. Առաջինը՝ Ազատ քաղաք՝ որ Նոր-Պայազիտ (այժմ՝ Գաւառ – Ա.Ձ.կրտ.) քաղաքից դէպի արեւելք 15 վերստաչափ[179] (15.9կմ) հեռի է, Ադամխան (այժմ՝ Վարդաձոր – Ա.Ձ.կրտ.) եւ Ալիչալու (այժմ՝ Արծուանիստ – Ա.Ձ.կրտ.) տանող ճանապարհի ներքեւ՝ ծովեզերքի վերայ, որոյ տանց ու կրպակաց, կարաւանոցաց եւ պանդոկաց աւերակներն ահագին տարածութեամբ փռուած են դաշտի երեսին՝ դէպի ծովը խոնարհած զառիվայրում. Երկրորդ՝ հին քաղաքը է Կնիք քաղաքը՝ որ յետոյ Կոթ կամ Կոթաքար են անուանել (այժմ՝ Ներքին Գետաշէն – Ա.Ձ. կրտ.), որոյ աւերակներն եւս բաւական տեղ են տարածուել, Երրորդը՝ Գաւառ կամ Ծմակ անունով քաղաքը որ է Նոր-Պայազիտա (այժմ՝ Գաւառ – Ա.Ձ.կրտ.) քաղաքի տեղը, Չորրորդը՝ Գեղամաբակ քա- ղաքը (այժմ՝ Վարդենիս – Ա.Ձ.կրտ.), որ յետոյ Գաբուռն Վասակ իշխանը նորոգելով՝ անուանել է Վասակաշէն եւ Հինգերորդը՝ Սոդ կամ Ծոթ (այժմ՝ Ձոդ – Ա.Ձ.կրտ.), որոյ ընդարձակ աւերակներն բացայայտ ցոյց են տալիս քաղաքատեղ լինելը»[180]:

Սողք գաւառի նշանաւոր գիւղերի մասին հեղինակը գրում է. «Այս գաւառի մէջ նշանաւոր են գիւղօրայքն Վասակաշէն, Մազրայ, Ձոթ»[181]:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Սիւնիքի այս շրջանի քաղաքները, կայանները, ամրոցներն ու վանք-ամրոցները տեղադրուած են առաւելապէս առեւտրական եւ ռազմավարական նշանակութեան Դուին–Պարտաւ ճանապարհի՝ գաւառով անցնող հատուածին հաղորդակից: Վերը նշուածներից ռազմավարական նշանակութիւն ունեն «Ազատ քաղաքը»՝ որպէս առեւտրի կենտրոնավայր, եւ Կոթ

177. Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 593:

178. Պէտք է նկատի ունենալ, որ Ստ. Օրբելեանի ցուցակում նշուած են միայն այն գիւղերը, որոնք հարկ էին տալիս Տաթեւի վանքին, ուստի այս ցուցակը լիարժէք պատկերացում չի տալիս գաւառի բոլոր գիւղերի մասին: Ըստ հարկի չափի՝ կարելի է առանձնացնել մի քանի գիւղ, որոնց հարկաչափը գերակշռող է միւսներից. Գեղարքունիքում՝ Կոթ (20), Երիզկայք, Ամասրիա, Կամբրյուն, Խոկառինճ, Հոգք, Խորոտն, Թմոկ, Գերափու, Ախայունք, Կածիք, Ներքին Վարդենիք, Երերուք, Ծիկակարբն (բոլորը՝ 15) եւ Ձագ (17), Սողքում՝ Սոթք (20), Ամեռնափոր, Ծինիք, Գուկառինճ, Ուռակարբ, Մաքենոց, Որդնիք, Դարանակ, Ախոռատուն, Այրք, Ծար (բոլորը՝ 15), Արմնա (17): Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1911, էջ 33–39, 64:

179. 1 վերստը 1,06 կմ է:

180. Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, նշ.աշխ., էջ 33–34:

181. Նոյն տեղում, էջ 592:

քաղաքը՝ որպէս իշխանանիստ եւ ճանապարհների կարեւոր հանգոյց: Պէտք է նշել, որ Գեղարքունիքի այն ամրոցները, որոնք գործել են միջնադարում, եւ որոնց մասին յիշատակում են պատմիչները, կառուցուել են հին ամրոցների տեղերում, այսինքն՝ ժառանգականութեան սկզբունքով: Մեր ուսումնասիրութիւններով այս տարածքում միջնադարում հիմնադրուած բերդամրոցներ չենք բացայայտել: Դա խօսում է նաեւ այն բանի օգտին, որ նախաուրարտական եւ ուրարտական շրջաններում այս տարածքն ունեցել է կարեւոր ռազմավարական նշանակութիւն եւ արդէն որոշակիօրէն կառուցապատուել է ռազմական նշանակութեան բազմաթիւ պաշտպանական շինութիւններով, որոնց մի մասն էլ օգտագործուել է միջնադարում:

Գեղարքունիքով անցնող ճանապարհի մասին Սմբատեանցը գրում է. «Ճանապարհները՝ որոնք մտնում են Գեղարքունի գաւառը՝ յարեւմտից արքունի ճանապարհը (խճուղի), որ բաժանում է Ելէնօվկայ Մալականի գիւղն կայարանից, եւ ծովեզերքով գնալով եւ Հայր Յովհաննու վանքի մօտովը թեքուելով դէպի հարաւ՝ գնաց Նոր-Պայազիտ քաղաքը. ի հարաւաց՝ Վայոց-Ձորից եկած Սէլիմի կարաւանսարայի մօտից անցած ճանապարհը, յարեւելից՝ Խոթայ եւ Գանձասարայ վանքերից եւ Թութխու Քեալբաջարից եկած ճանապարհը. եւ հիւսիսից՝ Չարեքավանքի եւ Գետաբակի պղնձահանից ճանապարհը, որ անցնում է Սադա-Խաչ անուամբ ձորամիջովն»[182]:

182. Նոյն տեղում, էջ 332:

Սոթք գաւառի համար պատմիչը նշում է 4 ճանապարհ. «Սօթայ գաւառից չորս ճանապարհ է բաժանւում, մին ընդ հարաւ՝ Ղրխբուլաղ (ներկայիս՝ Աղբերք) գիւղի մօտովը դէպի Վայոց-ձոր, եւ իջնում է Վայոց-ձորոյ ջերմուկների վերայ՝ Արփաչայի (ներկայիս՝ Ախուրեան) եզերքովը գնալով, որ է երրորդ ճանապարհը Գեղարքունուց Վայոց-ձոր գնալու համար: Երկրորդ ճանապարհը՝ դարձեալ դէպի հարաւ՝ Բազարչայի (ներկայիս՝ Որոտան, հնում՝ Ակնադաշտ, Գոգահովիտ) եզերքովը գնալով՝ տանում է Սիսեան (Սիւնիք): Երրորդ ճանապարհը գնում է դէպի արեւելք Ծարայ գաւառը՝ անցնելով Ռմբոստեան լերինքն. եւ չորրորդ ճանապարհը տանում է դէպի հիւսիս, եւ Սագայ Խաչի մօտովն անցնելով՝ գնում է Գանձակայ նահանգն»[183] (պատկ.129):

183. Նոյն տեղում, էջ 592:



122

Պատկ. 122
Սիւնիքի Գեղարքունիք ու Սոդք գաւառների տեղադրութիւնը Մեծ Հայքի թագաւորութեան քարտէզում՝ Տիգրան Մեծի օրօք, Ք.ա. 1-ին դար
գծագիրը՝ հեղինակի



123

Պատկ. 123
Գեղարքունիք ու Սոդք գաւառների տեղադրութիւնը՝ ըստ Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» աշխատութեան, Վենետիկ, Սբ Ղազար, 1893



124

Պատկ. 124
Սեւանի աւազանի Լճաշէն կիկլոպեան ամրոցը



125

Պատկ. 125
Մեւանի աւազանի ուրարտական
սեպագիր արձանագրութիւնը



126

Պատկ. 126 *Հայկական ԽՍՀ քարտէզը* (ռուսերէն), Երեւան, 1978



Պատկ. 127
Գեղամայ լեռնաշղթայի Ամդահակ լեռան համայնապատկերը, 3.597մ

127



128

Պատկ. 128
Հայաստանի Հանրապետության վարչական քարտէզը, Երեւան, 2024



129

Պատկ. 129
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ճանապարհները

3.2 Սեւանի միակենտրոն պաշտպանական համակարգը

Սեւանի աւազանին ռազմապաշտպանական առումով կարեւորութիւն են հաղորդել առեւտրական եւ ռազմավարական նշանակութեան Դուին–Պարտաւ ճանապարհի Ելենովկա–Կոթ–Զոդի լեռնանցք եւ Կոթ–Սելիմի լեռնանցք ճանապարհահատուածները, որոնց մասին արդէն խօսուել է: Այս ուղղութեամբ են տեղադրուած ռազմավարական բոլոր կառոյցները, որոնք կազմել են միակենտրոն պաշտպանական համակարգեր: Ի տարբերութիւն երկկենտրոն պաշտպանական համակարգերի՝ միակենտրոն համակարգերն ունեն մէկ գլխաւոր ռազմականացուած կենտրոն, որի շուրջ տարածուած են պաշտպանական տարբեր նշանակութեան միաւորները՝ որպէս լրացուցիչ, ամբողջացնող տարրեր (պատկ.130): Այս համակարգում գլխաւոր կենտրոններն իրենց տեղադրութեան սկզբունքներով, նշանակութեամբ ու գրաւած դիրքով տարբերւում են այդ համակարգի մաս կազմող միւս պաշտպանական միաւորներից: Սիւնիքում այս տիպի պաշտպանական համակարգի լաւագոյն օրինակներից է Սեւանինը, որը բաղկացած է համակարգի գլխաւոր կենտրոնից՝ Սեւան բերդից ու Սեւանայ լճի հիւսիս-արեւմուտքից դէպի հարաւ եւ հարաւ-արեւելք տեղակայուած Գեղարքունոյ (Ցամաքաբերդ – Ա.Զ.կրտ.), Պորտակ (այժմ՝ Լճաշէն –Ա.Զ.կրտ.), Բերդկունք (Սպիտակ բերդ – Ա.Զ.կրտ.), Հայրաւան ամրոց, Կոթ, Ալբերդ, Մաքենեաց վանք-ամրոց պաշտպանական կառոյցներից, որոնք կազմել են միակենտրոն պաշտպանական համակարգի գլխաւոր կենտրոնի միաւորները (պատկ.131): Նշուած ամրոցները հիմնադրուել են Ք. ա. III–II հազարամեակներում, երբ ջրի մակարդակը համեմատաբար ցածր է եղել, իսկ լճի մակե- րեսը՝ շատ աւելի փոքր[184]:

Միջնադարում գործող եւ մեզ հասած պաշտապանական կառոյցներն են Սեւանը (պատկ.132), Բերդկունքը (պատկ.133), Ալբերդը (պատկ.134), Մաքենեաց վանք-ամրոցը (պատկ.135):

184. U.S. Մնացականյան, նշ.աշխ., էջ 197–198: Սեւան անունով ամրոց կայ նաեւ Վասպուրականի Լմբափոր գաւառում:

3.3 Սեւան ամրոց, 40°33’50”N45°00’37”E, թ.ծ.մ. 1.917 մ

Սեւան ամրոցի միջնադարեան շրջանի մասին առաջին յիշատակութիւնները Ը. դարից են՝ կապուած արաբական արշաւանքների հետ: Յովհաննէս Կաթողիկոսն այս առիթով գրել է. «Եւ յայսմ վայրի Մրուան ոմն յիսմայէլեան տոհմէ՝ ոստիկան ի Հայս առաքեալ, մարտ ընդ բոլորից իսկ ամրոցաց Հայոց դնէր, եւ զորս միանգամ յինքն գրաւէր՝ առհասարակ քանդեալ աւերեալ ի վայր կործանէր: Իսկ Սեւան կղզի որ ի ծովակին Գեղամայ, թէպէտ եւ ի սկզբան նուագի անդ ոչ ըմբռնեցաւ եւ ձեռս նորա, սակայն զկնի երկեամ մի ամաց մատնեցաւ ի ձեռս նորա: Եւ որք միանգամ բնակեալք կային յամրոցի անդ, գերի առեալ տանէր, եւ զկապուտ կողոպուտ յաւարի առեալ՝ սպառսպուռ քանդէր, աւերէր զամրոցն...»[185]: Այս վկայութիւնից ակնյայտ երեւում է, որ Սեւանի կղզին ունեցել է ամրոց: Ամրոցի տեղադրութեան մասին Ղ. Ալիշանը գրում է. «Այլ ջրեղէն պարիսպքն մշտակայունք առձեռն պատրաստ ամրութիւն էին տեղւոյն, որպէս զի եւ առանց ձեռագործ աշխատութեան պատուարաց...»[186]:

185. Յովհան Կաթողիկոս, Պատմութիւն, Երուսաղէմ, 1867, էջ 119:

186. Ղ. Ալիշան, Վենետիկ, 1893, էջ 79:

Կղզու ողջ շրջակայքը զառիվայր ժայռալանջեր են, որոնք բնականից անառիկ են դարձնում շուրջբոլորը Սեւանի ջրերով ողողուած կղզին (պատկ.157): Յովհաննէս Կաթողիկոսը 750-ին յիշատակում է, որ ամրոցը պատկանել է Գրիգորի երկու եղբայրներին՝ Սահակին եւ Վասակին, որոնք ապաստանում էին կղզում[187]: 926-ին Սեւանայ կղզու ամրոցում է ամրանում Աշոտ Երկաթը, որը, արժանի հարուած հասցնելով Բեշիրի նաւերին, փոքր զօրախմբով յաղթանակի է հասնում:


187. Հ. Միքայէլ Յովհաննէսեան, նշ.աշխ., էջ 369:

Սեւանի ամրոցի հիմնական բնական արգելքը կղզին շրջապատող ջրային մակերեսն է («զՍեւան ծովապատն բերդ», պատկ.134): Ղ. Ալիշանը մի յիշատակութեան մէջ նկարագրում է, որ կղզին ունեցել է յատուկ ջրանցքներ, որոնց միջոցով անհրաժեշտութեան դէպքում կարելի էր լճի մակարդակն իջեցնել եւ կղզին վերածել թերակղզու (պատկ.145):

Սեւանի ամրոցի քարաշէն պարիսպների առկայութեան մասին Սմբատեանցը գրում է. «Գեղարքունոյ մէջ թէեւ հին բերդերի նշաններ երեւում են, բայց ամէնից ամուր եւ նշանաւորը Սեւանայ կղզւոյ շրջապատած բերդը, որոյ հաստ ու պինդ որմունքը երեւում են ջրոյ մէջ»[188]: Ձեռակերտ պարսպապատերի առկայութիւնն առայժմ հնարաւոր չէ ստոյգ պարզել, քանի որ ջրի մակարդակը բարձրանալու հետեւանքով, վերջիններս ջրասույզ են մնացել: Ժամանակին ջրի բաւականաչափ թափանցելիութեան շնորհիւ՝ այս պատերի մնացորդները հնարաւոր էր նկատել դեռեւս այն ժամանակ, երբ ջրի մակարդակը իջեցուած չէր[189]:


188. Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, նշ. աշխ., էջ 29:

189. Ս.Խ. Մնացականյան, նշ. աշխ., էջ 198 (ծնթգր. 1):



Պատկ. 130
Բաղաբերդ ամրոց-մայրաքաղաքի միակենտրոն պաշտպանական համակարգը, գծագիրը՝ հեղինակի

130



Պատկ. 131
Սեւանի միակենտրոն պաշտպանական համակարգը՝ հեղինակի

131



Պատկ. 132
Սեւանի կղզու վանք-ամրոցի
պատմական լուսանկարը,
1950-ականներ

132




Պատկ. 133
Բերդկունք ամրոցը

133



Պատկ. 134
Ալբերդ ամրոցը

134



Պատկ. 135
Մաքենեաց վանք-ամրոցը,
1980-ականներ

135

3.4 Բերդկունք ամրոց, 40°25’58”N45°06’28”E, ք.ծ.մ. 1.908 մ

Ամրոցը Գեղարքունիք գաւառի հիւսիսային մասում է՝ Գեղամայ լճի արեւմտեան հատուածում՝ դէպի լճափ իջնող եռանկիւնաձեւ քարաժայռ հրուանդանի վրայ՝ Գեղարքունիքի մարզի Գաւառ քաղաքից 12 կմ հիւսիս-արեւմուտք՝ միջնադարեան Բերդկունք[190], այժմ՝ Այրիվան գիւղի մօտ (պատկ. 136)։ Ամրոցի ողջ տարածքում կան բրոնզեդարեան աւերակներ, դամբարաններ, որոնք վկայում են դեռեւս վաղ շրջանում ամրոցի գոյութեան մասին։ Աղկալա կամ ինչպէս Ալիշանն է գրում՝ «Աղղալէ» (Սպիտակ բերդ) ամրոցը վաւերագրուած է Ծահխաթունեանցի, Սմբատեանցի, Լալայեանի աշխատութիւններում։ Բերդկունք ամրոցը կարեւոր նշանակութիւն է ունեցել միջնադարում այն պատճառով, որ տեղադրուած էր ռազմավարական եւ առեւտրական նշանակութեան ճանապարհին հաղորդակից՝ Բերդկունք առեւտրական կենտրոնավայրի մօտ, որի աւերակները մինչեւ օրս նկատւում են ընդարձակ տարածքում (պատկ.137)։ Ծահխաթունեանցն այն նկարագրել է հետեւեալ կերպ. «...տեղի մեծի աւերակի մինչեւ կարծել իսկ քաղաքի (Բերդկունք - Ա.Զ.կրտ.) զի աւելի ընդարձակ էր տեղին՝ մինչեւ բաւական լինել աւելի քան երկու հազար գերդաստանաց ի միջին տեղւոջ այսր աւերածի ի փոքր ինչ բարձր դիրս կային կանգուն ուղղաբերձ որմունք քարամբք եւ կրով ձուլեալք. (Բերդկունք ամրոց - Ա.Զ.կրտ.)...»[191]։ Աղկալա գիւղի տարածքում է եղել նաեւ երբեմնի «Ազատ քաղաքը», որի մասին Սմբատեանցը գրում է. «...Ադամխան եւ Ալիչալու տանող ճանապարհի ներքեւ՝ ծովեզերքի վերայ, որոյ տանց ու կրպակաց, կարւանոցաց եւ պանդոկաց աւերակներն ահագին տարածութեամբ փռուած են դաշտ երեսին՝ դէպի ծովը խոնարհած զառի- վայրերում»[192]։ Ղ. Ալիշանը, անդրադառնալով Հայրավանքի մօտակայ «Ազատ քաղաքին», յիշատակում է «Գեղարքունոյ բերդ», որը նոյն Աղկալան պէտք է լինի (պատկ.138). «...եւ զքաղաքատեղին աւերակ՝ Ազատ-քաղաք, գիւղ, յորում նշմարին պարիսպք իջեւանից կամ կարաւանատանց, անյիշատակք առ ի նախնեաց։ Սարթէ եւ զմի տեղաց աշտարակացն համարել բերդ գիւղ, եւ զմին՝ Գեղարքունոյ բերդ, զոր ընդ գլխաւոր բերդորայս Սիւնեաց կարգէ պատմիչ աշխարհին»։ «Գեղարքունւոյ» անուամբ բերդ յիշատակում է Ստ. Օրբէլեանը՝[193] որպէս Սիւնեաց աշխարհի նշանաւոր ամրոց, իսկ Յովհաննէս Կաթողիկոսը՝ «Գեղայոյ ամրոց» եւ «Գեղէ» անուններով[194]։ Հ. Մանանդեանը «Գեղայոյ», «Քեղեայ» կամ «Գեղէ» անունների եւ ամրոցի տեղադրութեան մասին ունի որոշակի ենթադրութիւն, ըստ որի՝ այս ամրոցը պէտք է լիներ ոչ թէ Աղկալայի տեղում, այլ Մազազ գաւառում՝ Միլլի-չայ ձորում[195]։ Ի տարբերութիւն Ալիշանի, որն Աղկալա ամրոցն անուանում է Սպիտակ բերդ, Սմբատեանցը նկարագրում է, որ այն կառուցուած է կարմիր քարով. «Բերդը (Բերդկունք - Ա.Զ.կրտ.) կարմիր սրբատաշ քարով ու կրով շինուած է ծովեզերքում՝ քարափանց վերայ, ոչ մի արձանագիր չունէր բերդը, իսկ եկեղեցեաց հետքերը անհետացրել էին գիւղի թուրքերը. երեւում են միայն պարիսպը եւ բրգունքը. երեւում են հեռուից եւ Նոր-Պայազիտ գնացող ճանապարհորդին։ Բերդի շրջապատը լիքն էր աւերակներով, բայց ոչ արձանագիր. այս բերդից շինուածոց աւերակները տարածուելով դէպի հարաւ՝ հասել են մինչեւ Հայրավանքը (Հայր Յօհանու վանք), եւ այնտեղից եւս դարձել դէպի հարաւ տարածուելով՝ աւերակներն՝ հասել են մինչեւ Ազատ աւերակ (Խարաբայ) անունեալ քաղաքատեղը...։»[196]

Ամրոցը կառուցուած է կապտաւուն բազալտէ քարաժայռից, իսկ արտաքին երեսապատի քարերի կարանները սվաղուած են սպիտակ կրով, ուստի պատմիչների յիշատակած երկու անուններն էլ համապատասխանում են իրական վիճակին (պատկ.139,140)։

Բերդկունք ամրոցը կառուցուած է եռանկիւնաձեւ հրուանդանի վրայ, որի երկարաւուն, ժայռալանջ, բնականից անառիկ հատուածը ողողվում է Սեւանայ լճի կապուտակ ջրերով (պատկ.141,142.1)։ Ամրոցատեղի բարձունքն անառիկ է բոլոր կողմերից, իսկ այն հատուածը, որը պարանոց է կազմում եւ որտեղից միայն կարելի

190. U.S. Երեմյանը Բերդկունքը տեղադրում է Սոդքի լեռնանցքի մօտ։ U.S. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, 1963, էջ 45։ Ք. Ուլուբաբյանը հերքում է այս կարծիքը՝ հիմք ունենալով այն փաստը, որ պատմիչները Դուինից մինչեւ Բերդկունք հաշուում են 115 կմ, որը, ըստ Մանանդյանի, հասնում է ճիշտ Աղկալա գիւղը։ Ք. Ուլուբաբյան, *Խաչենի իշխանութիւնը X–XIV դարերում*, Երեւան, 1975, էջ 267–268 (ծնթգր.4)։ Մեր կարծիքով՝ Սոդքի լեռնանցքի մօտ անպայման պէտք է եղած լիներ բերդ, քանի որ այս լեռնանցքը եղել է Սիւնիքի եւ Արցախի ռազմավարական հանգոյցը, որով արաբական տիրապետութեան շրջանում անցել է Դուին–Պարտաւ ճանապարհի Կոթ–Պարտաւ ճանապարհահատուածը։

191. Յովհաննէս եպիսկոպոս Ծահխաթունեանց, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատոյ*, հ. 2, Էջմիածին, 1842, էջ 242։

192. Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, նշ.աշխ., էջ 33։

193. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1911, էջ 7։

194. Յովհան Կաթողիկոս, նշ.աշխ., էջ 359–360։

195. Հակոբ Մանանդյան, *Երկեր*, հ. Ե, Երեւան, 1984, էջ 203–204։ Հեղինակը նշում է, որ այս ամրոցն այժմ կոչուում է Դալաղիպի (էջ 201)։

196. Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, նշ.աշխ., էջ 432։

է մօտենալ ու յայտնուել ամրոցի ներսում, պաշտպանուած է կիսաշրջաններ կազմող բուրգ-պարիսպներով (պատկ.142,143.1,2,3,4)։ Լճի ջրերը ժամանակին ողողել են հրուանդանի ամբողջ հիւսիսային, արեւելեան եւ հարա- ւային ափերը. ժայռերի վրայ, այժմեան ջրի հայելուց վերեւ պահպանուած սպիտակ շերտը հաստատում է վերը նըշ-ուած փաստը (պատկ.138,144), ուստի, փակելով բարձունքի հարաւարեւմտեան նեղ լեզուակը, հնարաւոր է եղել այս ամբողջ տարածքը (240 քառ.մ) դարձնել միանգամայն անառիկ։ Բուն ամրոցի տարածքը, ինչպէս նաեւ նրա ողջ շրջակայքը, որտեղ ժամանակին Աղկալա գիւղն էր, լի է բազում կանոնաւոր կառոյցների աւերակներով ու փլատակներով։ Բերդկունք ամրոցում, բացի ռազմավարական սկզբունքով ըն-տրուած եւ բնականից արդէն պաշտպանուած բարձունքից, օգտագործուել է հայ-կական ամրոցաշինութեանը բնորոշ խրամուղիների համակարգ՝ որպէս ամրոցի պաշտպանութիւնը լրացնող տարր։ Խրամուղիներն ընթանում են տարածքում արդէն բնականից գոյութիւն ունեցող ուղղութիւններով, որոնք խորացուել կամ լայնացուել են՝ կախուած դրանց մարտավարման անհրաժեշտութիւնից (պատկ.145,146,147,148.4)։ Խրամուղիների պատերը ժայռապատ են կամ շարուած բազալտէ միջին չափերի քարերից։ Բացի ամրոցի հիմնական՝ կրաշաղախով շարուած պատերից՝ տարածքում պահպանուել են կիկլոպեան շարուածքով հենապատեր ու պարսպապատեր, որոնք վկայում են, որ ամրոցը գոյութիւն է ունեցել բրոնզեդարեան շրջանում[197]։ Այսպիսի շար-ուածք ունեն ամրոցատեղի հարաւ-արեւմուտքից հիւսիս-արեւելք ձգուող ժայռուղու վրայ պահպանուած պատերի հետքերը, որտեղ ակնյայտ երեւում է նաեւ միջնադարում ամրացուած եւ սպիտակ կրաշաղախով շարուած պարսպապատի մի հատուած։ Ժ–ԺԳ դարերում կառուցուած եւ մինչեւ ԺԴ. դարը գործող միջնադարեան ամրոցը հիմնադրուել է բրոնզեդարեան ժամանակաշրջանում կառուցուած հին ամրոցի տեղում։ Այժմ դժուար է որոշակիօրէն ասել, թէ միջնադարեան որ շինութիւններն են կառուցուել կիկլոպեան շերտի տեղում, բայց ակնյայտ է, որ միջնադարում ամրոցը վերանորոգուել է եւ մաս-նակիօրէն ձեւափոխուել։

197. Աղկալա (Բերդկունք) կիկլոպեան ամրոցի մասին տե՛ս Գ.Հ. Միքայելյան, նշ.աշխ., էջ 20–21։

Հրուանդանի հարաւարեւմտեան նեղ պարանոցը փակող կոփածոյ պարիսպները տարբեր տրամաչափերի կիսաշրջան, բոլորաձեւ, դէպի վեր թեքադիր (պատկ.149,150) պարսպապատերի համակարգ են (պատկ.148.1,3,5,3,2)։ Պարսպապատ հատուածի ընդհանուր երկարութիւնը 35 մետր է, որը բաղկացած է պատի երկու անկիւններում տեղադրուած մեծ (տրամագիծը՝ 5.3մ), սնամէջ բուրգերից (պատկ.148.1,2) եւ նրանց միացնող (պատկ.148.5) տարբեր չափերի հոծ, կիսաշրջան բուրգերից։ Պարսպապատի միակ ուղղագիծ հատուածները (պատկ.148.3) օգտագործուած են անկիւնային երկու բուրգերը միջանկեալ հատուածի հետ լծորդելու համար, որոնք ունեն ընդամէնը 1.30մ երկարութիւն։ Կիսաշրջաններից բաղկացած պարսպապատը կառուցուած է որպէս աղեղնաձեւ մի հսկայ որմնահեծ։ Պարսպապատի միջանկեալ հատուածը ներսի կողմից հաստացուել է եւ իր մէջ է առել երբեմնի սնամէջ 5 կիսաշրջանները։ Տեղում պահպանուել են միայն 5 բուրգերի ստորին հատուածների երեսապատերը, իսկ միջին եւ վերին հատ-ուածներում շաղախի մէջ երեւում են պոկուած քարերի ակոսները։ Ամրոցի ներսում պահ պանուած բազմաթիւ ուղղանկիւն սենեակները, որոնք արուած են չոր շարուածքով (պատկ.148.6), հաւանաբար կառուցուել են ուշ շրջանում՝ ամրոցի երեսապատի քա-րերով։ Ամրոցի վերջին նորոգման ժամանակ պատերի այն հատուածները, որոնք զուրկ են եղել երեսապատի քարերից, տեղ-տեղ լրացուել են նոր շարուածքով, սակայն նրանց մակերեւոյթը որոշակիօրէն հետ է ընկած սկզբնական յատակագծային նիշից (պատկ.149,150)։ Պարսպապատի հարաւային սնամէջ աշտարակը (պատկ.148.2), որն ունի պահպանուած առաւելագոյն բարձրութիւն (8մ), նոյնպէս նորոգուել է. հորիզոնական կարանների եւ առանձին քարերի հպման հատուածների ուղղահայեաց մասերը ծեփուել


են սպիտակ կիրաւազային շաղախով. բոլոր պատերը շարուել են բազալտէ կարմրաւուն (տարիների ընթացքում քարերի մամուռն արեւից այրվել է ու ստացել կարմրաւուն երանգ), միջին չափերի կիսամշակ քարերով՝ առաւելապէս պահպանելով հորիզոնական շարքերի կարանները: Սկզբնական պատի հաստութիւնը 60–90սմ է, հաստացուած եւ ամրացուած հատուածներինը՝ մինչեւ 150սմ: Աղեղնաձեւ բրգաշար պարսպապատից 7մ ներս պահպանուել են շարքով տեղադրուած եւ պարսպապատի երկարութեամբ ձգուող 5 ուղղանկիւն սենեակների աւերակներ, որոնց պատերի հաստութիւնը բաւական տարբեր է (1.20–3.40սմ, պատկ.148.6): Պարսպապատի առանցքից դէպի հիւսիս-արեւմուտք պահպանուել է բաւական խոր խրամատ, որն սկսվելով պարսպապատերից դուրս, անցնում է նրանց տակով եւ տարածւում մինչեւ վերը նշուած սենեակների շարքը (պատկ.148.4,153):

Բերդկունք ամրոցը Սիւնիքի պաշտպանական կառոյցներից տարբերւում է ճարտարապետաշինարարական յօրինուածքային սկզբունքով: Սիւնիքի այլ ամրոցներում բուրգերն օգտագործուած են որպէս միջանկեալ կառուցողական տարրեր, որոնք ամրացնում էին պարսպապատերի առաւելապէս անկիւնային հատուածները: Բերդկունք ամրոցում բուրգերը, տեղադրուած լինելով յաջորդաբար՝մէկը միւսին հրպուած, ուղղահայեաց հատոյթում՝ բրգաձեւ, յատակագծում՝ աղեղնաձեւ, ստեղծել են միասնական, միատարր պատնէշ-հենապատ, որի նպատակը 80x30մ չափերի եռանկյունաձեւ հրուանդանի նեղ պարանոցը կազմող հատուածը փակելն էր (պատկ.151): Տուեալ աշխարհագրական տարածքի ռազմապաշտպանական խնդիրը լուծվել է կառուցողական պարզ, սակայն շատ հմուտ եղանակով, որը հնարաւորութիւն է տուել ստեղծելու պաշտպանական ճարտարապետութեանը բնորոշ եւ յուրովի ինքնատիպ ամրոցաշինական կառոյց: Բերդկունքից 3,5 կմ հարաւ՝ Սեւանայ լճի ափին է Թ–ԺԳ դարերում կառուցուած Հայրավանք ճարտարապետական համալիրը (պատկ.152), որն ամենայն հաւանականութեամբ պահպանուել ու հսկուել է ամրոցի ոչ հեռու լինելու շնորհիւ (պատկ.154,155):



136

Պատկ. 136
Բերդկունք ամրոցի (Ք.ա. II–I հազարամեակ, Թ–ԺԴ դարեր) պատմական լուսանկարը, ՀՊԹ դիւան, սեւանկար № 5245



Պատկ. 137
Սիւնիքի հիմնական ճանապարհները, գծագիրը՝ հեղինակի

137



Պատկ. 138
Բերդկունք ամրոցի համայնապատկերը՝ Սեւանայ լճից

138



139

Պատկ. 139, 140
Բերդկունք ամրոցի բուրգերի
շարուածքների մանրամասերը

Պատկ. 141
Ամրոցի եռանկիւնաձեւ սարալանջը՝
Սեւանայ լճից

Պատկ.142.1
Պահպանուած պարսպապատերի
շարուածքը




140



142.1




141




142

Պատկ. 142
Բերդկունք ամրոցի
երկրաբաշխական չափագրութիւն,
կտրուածք ըստ 05–05 առանցքի.
Մ 1:50, հեղինակներ՝ ճարտ.
Լ. Վասիլեան, Գ. Գյուլամիրեան,
«ՎԱՍԱՐԴ» ՍՊՀ



143




143.1

Պատկ. 143
Բերդկունք ամրոցի գլխաւոր
հատակագիծը, Մ 1:300,
հեղինակներ՝
ճարտ.՝ Լ. Վասիլեան,
Գ. Գյուլամիրեան, «ՎԱՍԱՐԴ» ՍՊՀ


Պատկ. 143.1
Ճակատային կտրուածք ըստ 01–01
առանցքի, Մ 1:50

Պատկ. 143.2
Կտրուածք ըստ 08–08 առանցքի,
Մ 1:50

Պատկ. 143.3
Հատակագիծ, Մ 1:100



143.2



143.3



144

Պատկ. 144
Մեւանայ լճի ջրի մակարդակի իջեցման հետեւանքով կղզու շուրջբոլորն ի յայտ եկած ժայռերի սպիտակ շերտը




145

Պատկ. 145 Բերդկունք ամրոցի ընդհանուր տեսքը՝ ԱԹՍ-ից




Պատկ. 146
Բերդկունքի բնական խրամուղիների ուղղութիւնները

146



Պատկ. 147
Բերդկունք ամրոցի չափագրութիւնը, 09.08.1987, հեղինակ՝ ճարտարապետ Արա Չարեան

147



148

Պատկ. 148
Բերդկունք ամրոցի չափագրութեան մաքրագծումը, հեղինակ՝ ճարտարապետ Արա Զարեան
1,2. Անկիւնային սնամէջ մեծ բուրգերը
3. Պարսպապատի բրգաշարի ուղիղ ընթացող հատուածները
4. Արտաքինից դէպի բերդի ներս ընթացող դարպասով խրամուղին
5. Բրգաշար պարսպապատի հատուածը
6. Յետագայում առանց շաղախի կառուցուած ուղղանկիւն սենեակների հետքերը
7,8. Անշաղախ քարերից շարուած յենապատը



151

Պատկ. 151
Ամրոցի տարածքի համայնապատկերը՝ ԱԹՍ-ից



153

Պատկ. 153
Բերդկունք ամրոցի մուտքը

Պատկ. 149,150
Բերդկունք ամրոցի բուրգերի
պատերի երկշերտ հատուածները



150



149



152

Պատկ. 152
Հայրավանքի վանական համալիրը
եւ Բերդկունք ամրոցը՝ Սեւանայ լճի
արեւմտեան ափին՝ Google map-ից



154

Պատկ. 154
Հայրավանքի համայնապատկերը՝
Սեւանի ափին



155

Պատկ. 155
Հայրավանք վանական համալիրը

3.5 Դուին-Պարտաւ ճանապարհի Կոթ-Չոդի լեռնանցք եւ Կոթ-Սելիմի լեռնանցք ճանապարհահատուածների ռազմավարական պաշտպանական համակարգերը

Դուին–Պարտաւ ռազմավարական ճանապարհի Ելենովկա–Ուլիայ Նորաշէն ճանապարհահատուածի պաշտպանական կառոյցների մասին արդէն խօսել ենք առաջին գլխում, աւելացնենք միայն, որ Կոթ–Չոդ–Հաթերք–Կաղանկատույք (հնում՝ Վարսնակաթաղ – Ա.Չ.կրտ.)–Պարտաւ հատուածը նոյնպէս պաշտպանուած է եղել ռազմավարական կառոյցներով: Կոթ ամրապատ գիւղաքաղաքից ճանապարհը բաժանուել է հարաւային եւ արեւելեան ուղղութիւնների: Վերջինս Գեղամայ լճի հարաւային ափամերձով անցել է Մարտունի, Վաղաշէն, Չոլաքար (հնում՝ Չոլախաչ – Ա.Չ.կրտ.), Ծովինար (պատմական Փառակունիք – Ա.Չ.կրտ.), Ներքին Վարդենիկ (պատմական Վանաւան – Ա.Չ.կրտ.), Կարճաղբիւր, Ծովակ, Խաչաղբիւր (նախկինում՝ Սովետակերտ – Ա.Չ.կրտ.), Վարդենիս, Մեծ Մազրա, Չոթդ), ապա ճանապարհը Ռմբասարի մօտ՝ Չոդքի լեռնանցքով հասել է Սիւնեաց լեռնաշղթայ[198] եւ անցել Արցախ: Չոդքի լեռնանցքից մինչեւ Պարտաւ ճանապարհի երկայնքին[199] տեղադրուած են եղել Բերդկունք, Հանաբերդ, Բերդակուր, Ականայ, Ջրաբերդ ամրոցները: Կոթից դէպի հարաւ ընթացող եւ Գեղարքունիքով անցնող ճանապարհահատուածին, մինչեւ Վայոց ձորի սահման Սուլեմա բերդը, տեղադրուած է Ալբերդ ամրոցը, որը Կոթից հեռու է մօտ 5 կմ (պատկ.156): Այս հատուածում հիւսիսից հարաւ տեղադրուած են Գեղարքունիքի մարզի Գեղահովիտ, Մադինա կամ Մետինա, Քարաւանսարայ, Նշխարք, Ծաղկաշէն բնակատեղիները: Քարաւանսարայ գիւղից մինչեւ Սելիմի լեռնանցք, ըստ Մեսրոպ Արք. Սմբատեանցի, «3 ժամուայ ճանապարհ էր»[200]:

198. Սիւնեաց լեռնաշղթայից հիւսիս-արեւմուտք ձգուող Քաշեթաղաց լեռներով դէպի Արցախ ընթացող երկրորդական նշանակութեան ճանապարհներն անցնում են մի շարք լեռնանցքներով (հարաւ-արեւելքից հիւսիս-արեւմուտք)՝ Բուղաքար, Սատանախաչ, Միխայիլով:

199. «...Արցախում, Թարթար եւ Կուր գետերի միախառնման վայրից ոչ հեռու տեղադրուած է Մեծ Առանքի Պարտաւ քաղաքը, արաբների՝ Երդան, որի աւերակներն այսօր էլ տեսանելի են: մօտ 789-ին Պարտաւը Դուինի կողքին դարձաւ Արմինիայի, այսինքն՝ Հայաստանի, Ադրբեջանի [Իրանի – Ա. Չ. կրտ.] եւ Վրաստանի կառավարչի աթոռանիստը: Շամխորը, Գանձակն ու Պարտաւն արաբների քաղաքական-Չինուորական հենավայրերն էին եւ «...մինչեւ IX դարի երկրորդ կեսը, – ինչպէս գրում է Հ. Մանանդեանը, – նրանք միջազգային առեւտրի մէջ խաղացել են աւելի մեծ դեր, քան Հայաստանի քաղաքները: Այդ չափազանց կարեւոր հարցը բացատրւում է, ըստ երեւոյթին, Բիւզանդիայի հետ առեւտրական յարաբերութիւնների ընդհատումով եւ միջազգային առեւտուրը դէպի Կուր գետի աւազանը փոխանցելու հետեւանքով...»: Արմեն Չարեան, նշ.աշխ., էջ 100:

200. Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, նշ.աշխ., էջ 537:

201. Նոյն տեղում:

202. Ստեփանոս Տարօնեցոյ Ասողկա, *Պատմութիւն Տիեզերական*, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 144:

3.6 Ալբերդ ամրոց, 40°05’55”N, 45°18’40”E, բ.ծ.մ. 2.212 մ

Ամրոցը զետեղուած էր ճանապարհի ձախ կողմում՝ Վերին Քարագլուխ (Գետակ, Վերին կամ Փոքր Կզնուտ) բնակավայրի, այժմ՝ Գեղարքունիքի մարզի Գեղահովիտ գիւղի արեւմտեան մասում (պատկ.157): Ամրոցի մօտակայքում են Սուրբ Մամաս մատուռի աւերակները[201]: Ալբերդ ամրոցի մասին յիշատակում է պատմաբան ու աշխարհագէտ Ստեփանոս Տարօնեցին, որ 899-ին գրում է. «Սա ի խաղալն իւրում յարեւելս կոյս ի սահմանս Հայոց՝ առնու զԾմու բերդն հայոց, զԱսաղին եւ զՄեծկերտ եւ զԱլբերդ ի գաւառին Գեղամայ»[202]:

Ամրոցի պահպանուած կառոյցների պատերը հիմնականում ունեն կիկլոպեան շարուածք (Ք.ա. II հազարամեակի վերջ–I հազարամեակի սկիզբ): Միջին դարերում ամրոցը յիշատակել է Ստ. Օրբէլեանը՝ Ներսէս կաթողիկոսի՝ Կեսարիայից Հայաստան գալու հետ կապուած, որտեղ, ըստ պատմիչի, նա կարճ ժամանակով կանգ է առնում Ալբերդ ամրոցի մօտ: Ամրոցի պարսպապատերն ընթանում են ներփակ շարուածքով (150x65մ), որոնց չորս անկիւններում տեղադրուած են քառանկիւն աշտարակներ (պատկ.158): Պահպանուած աշտարակի բարձրութիւնը հասնում է 6,8մ-ի, լայնութիւնը՝ 3,7մ-ի: Ամրոցի պարսպապատերի արեւմտեան մասի ներսում երեւում են քառանկիւն կացարանների պատերի մնացորդներ: Պարսպապատերը եռաշերտ են՝ իրարից մօտ 20մ հեռաւորութեամբ (պատկ.159)՝ սրբատաշ քարերից, եւ հաւանօրէն ուշ շրջանի գործ են: Ամրոցապատ տարածքը կազմում է մօտ 1հա, որտեղ նշմարւում են որոշ սենեակների աւերակներ եւ ջրատարի կաւէ խողովակաշարի մնացորդներ:

3.7 Մաքենեաց վանք-ամրոց, 40°07’30”N45°36’40”E, բ.ծ.մ. 2.180 մ

Պաշտպանական ճարտարապետութեան տեսակէտից ուշագրաւ յուշարձան է Մաքենեաց վանք-ամրոցը, որը Գեղարքունիքում այս տիպի միակ պաշտպանական կառոյցն է: Ի տարբերութիւն այս գաւառի Հայրավանք, Վանեւան, Հացառատ,

Կոթավանք, Դափնոց վանք, Սբ Աստուածածին, Զոդի բազիլիկ, Ծողագավանք, Հաւուց թառ վանքերի՝ Մաքենեաց վանքն անկիւնային աշտարակներով ամրապատ պարիսպներ ունի (պատկ.160)։ Տեղադրուել է կարեւոր առեւտրական ճանապարհին հաղորդակից՝ «Ազատ քաղաքից» ոչ հեռու։

Մաքենեաց վանքը Գեղարքունիքի մարզի Մաքենիս գիւղի տարածքում է՝ Սեւանի աւազանի հարաւարեւելեան մասում՝ համանուն գետի աջ ափին (պատկ.161)։ Պատմագրութեան մէջ վանքը յայտնի է Մաքենոց, Մաքենեաց, Մաքեռտենից, Մաքենի անուններով, իսկ XX դարի սկզբին, երբ Մաքենիս գիւղը թուրքաբնակ էր, նրան կոչել են Ղըզըլ-վանք (Կարմիր վանք, անունը ստացել է Սբ Աստուածածին եկեղեցու շինարարութեան համար օգտագործուած կարմրաւուն բազալտից)։ «Ազգագրական հանդէս»-ի յօդուածագրի (գիրք 14, Թիֆլիս,1913, էջ54–56) մեկնաբանութեամբ՝ Մաքենիս անունն առաջացել է այն պատճառով, որ այստեղ մեծ քանակութեամբ մաքիներ[203] են պահել հնում, որովհետեւ լեռան լանջը եւ կլիման շատ նպաստաւոր էին խաշնարածութեան համար։ Մաքենեաց վանքի առաջին կառոյցը, յիշատակւում է Է. դարից (պատկ.162,162.ա)[204]։ 728-ին պարսիկ Բաբանը ներխուժում է Գեղարքունիք եւ աւերում Մաքենոցաց ծաղկուն մենաստանը, այրում ու քանդում է բոլոր շինութիւնները։ Կոթավանքի եկեղեցում շինարարութիւնն աւարտելուց յետոյ Գրիգոր Սուփանը 851-ին ձեռնամուխ է լինում Մաքենեաց վանքի վերանորոգմանը։ Այս մասին Ստ. Օրբէլեանը գրում է. «...հրաշազան մենարանին, ի փառաբնակ ուխտն Մաքենացոց, զգմբէթայարկ եկեղեցին յանուն սրբոյ Աստուածածնին, եւ պարսպէ վիմօք. եւ այլ բազում շինուածս յօրինեալ զարդարէ զնա անխնայ գանձիւք եւ թարմացուցանէ բազում ընչիւք. նա եւ գեղօյ եւ ագարակօք եւ այգեստանօք ի Գառնի եւ Երեւան եւ այլ տեղիս»[205]։ Այս վկայութեան մէջ հետաքրքրականն այն է, որ Գրիգոր Սուփանը կառուցում է մեծ գմբէթակիր եկեղեցին, այլ շինութիւններ եւ պարսպապատում է վանքապատկան տարածքը։ Թ. դարում Մաքենեաց վանքը կազմաւորւում է արդէն որպէս վանք-ամրոց-միաբանութիւն, որը Սիւնիքում այս տիպի պաշտպանական կառոյցներից առաջիններից է։ Վանք-ամրոցի բոլորաձեւ պարիսպները մինչեւ օրս պահպանուել են առանձին հատուածներով, որոնց բարձրութիւնը հասնում է մինչեւ 6 մ (պատկ.163)։ Գլխաւոր մուտքը եղել է հիւսիսային պարսպապատի արեւմտեան կողմում բացուածքը (պատկ.164,1), որը, ըստ Ս.Խ. Մնացականյանի, եղել է կամարակապ[206]։ Վանքապատական տարածութիւնը հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւմուտք եզերուած է դէպի գետահովիտ զառիվայր իջնող բնական խոչընդոտներով, որոնք օրգանապէս միաձուլուած են նրանց շարունակութիւնը կազմող պարսպապատերին։ Վանքապատկան տարածքն արեւելքից արեւմուտք թեքութիւն ունի դէպի գետահովիտ, ուստի հիւսիսային եւ հարաւային պարսպապատերը տարածքին զուգահեռ կառուցելու շնորհիւ ունեն եռանկիւնաձեւ ճակատամասեր։ Արեւմտեան պարսպապատի կանգուն մնացած հատուածի հիւսիսային մասում պահպանուել է միակտոր մեծածաւալ, պատի մէջ ագուցուած ջրհորդանի քար, որտեղով անձրեւաջուրը բնական հոսքով հեռացել է դէպի ձորակ։ Պարսպապատի կառուցողական յօրինուածքը բաւական ինքնատիպ է։ Պատերը շարուած են բազալտէ միջին չափերի կիսամշակ որձաքարերից՝ կրաշաղախի միջուկով։ Այն հատուածներում, որտեղ պարսպապատերն անկիւն են կազմում, քարերի չափերը եւ մշակման որակը փոխւում են։ Պատերը կտրուածքում դէպի վեր նեղանում են եւ գագաթնամասում աւարտւում սլաքաձեւ, միակտոր վրադիր քարերով։ Նեղացումն սկսւում է պատի բարձրութեան մօտաւորապէս միջին մասում։ Պարսպապատի արեւմտեան հատուածում պահպանուել է վանք-ամրոցի երկրորդ մուտքը (պատկ.164,2)՝ դէպի գետահովիտ, որտեղ ժամանակին եղել է ջրաղաց (այժմ այն աւերակ է եւ ծածկուած է փլատակներով)։ Ինչպէս մի շարք Սիւնեաց բերդերում, այստեղ եւս պարսպապատերի հարաւային հատուածը տեղ-տեղ կառուցուած է գետի աջ ափից անմիջապէս բարձրացող մեծածաւալ բազալտէ ժայռաբեկորների վրայ,

203. «Էգ ոչխար, առաւելապէս կթվող կանգար ունեցող», *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան*, հ. 2, Երեւան, 1974, էջ 500։

204. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1911, էջ 132։

205. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1911, էջ 179։

206. Ս.Խ. Մնացականյան, նշ.աշխ., էջ 66։

որոնք շրջափակուել են հաստաւուն պատերի գծային հատուածներով եւ օրգանապէս միաձուլուել պաշտպանական յօրինուածքին (պատկ.164,3)։ Ինչպէս տեսնում ենք, բնական խոչընդոտների հմուտ օգտագործումը կիրառուել է նաեւ վանք-ամրոցների պարսպապատերի շինարարութեան ժամանակ։

Մաքենեաց վանք-ամրոցը վերակառուցուել է Հայոեստավրացիանախագիծ ինստիտուտի «Զանգեզուր» արուեստանոցի[207] վերականգնման նախագծերի հիման վրայ՝ տողերիս հեղինակի մասնակցութեամբ։ Յուշարձանը գրաւում է առաջնային տեղ Սիւնիքի Գեղարքունիք գաւառի միջնադարեան պատմամշակութային արժէքների շարքում եւ նշանակալի օրինակ է Սիւնիքի վանք-ամրոցների առաջացման ու զարգացման ուսումնասիրութեան համար։

207. Վանական համալիրի վերականգնման նախագծի հեղինակներն են՝ ն.գ.ճ. Աշոտ Հովսեփյան՝ աւագ եկեղեցի, ճարտարապետներ Ռազմիկ Դավթեան, Միքայել Հակոբյան՝ զոյգ մատուռներ եւ միանաւ եկեղեցի, ճարտարապետ Արա Չարեան՝ բաղնիք, ճարտարապետ Արթուր Հովհաննիսյան՝ պարսպապատում, ճարտարապետ Պետրոս Խալեյան՝ բարեկարգում (1987–88)։

3.8 «Ազատ քաղաք»

«...«Ազատ քաղաք» հասկացութիւնը ոչ թէ տեղանուն է, այլ սոցիալական մի յատուկ տերմին, որով մատնանշւում է վերոհիշյալ վայրերի ազատ լինելը որոշ հարկերից եւ բնակիչների քաղաքային արտօնեալ դրութիւնը»[208]։ Այս հասկացութիւնն առաջացել է միջնադարում Գերմանիայում եւ նշանակել է «...ինքնուրոյն քաղաքական կազմաւորումով տարբերուող եւ միջազգային յատուկ ռեժիմից օգտուող քաղաքներ»[209]։ Սիւնիքում եղել է երեք «Ազատ քաղաք». Գեղարքունիքում, Բերդկունքի մօտ եւ Վայոց ձորում՝ Ազատեկի մօտ։ Գեղարքունիքի «Ազատ քաղաքը» յիշատակել են Հ. Ծահխաթունեանցը, Մ. Սմբատեանցը, Ղ. Ալիշանը։

208. Հ.Մ. Ուլթմազյան, նշ.աշխ., էջ 243–244։

209. ՀՍՀ, հ. 1, Երեւան, 1974, էջ 97։

Բնակավայրի մասին Ղ. Ալիշանը գրում է. «...զքաղաքատեղին աւերակ՝ Ազատ-քաղաք գիւղ, յորում նշմարին պարիսպք իջեւանից կամ կարաւանատանց, անյիշատակք առ ի նախնեաց»[210]։ Քաղաքատեղին ունեցել է իջեւանատուն եւ քարաւանատուն, որը վկայում է առեւտրական կայան լինելու մասին։ Նրա աւերակները մինչեւ այսօր նշմարւում են այժմեան Բերդկունք եւ Հայրավանք գիւղերի շրջակայքի ընդարձակ տարածքում՝ հասնելով մինչեւ լճի ափամերձը։

210. Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 40 (տե՛ս նաեւ Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, նշ.աշխ., էջ 537)։

Սոդքի «Ազատ քաղաքի» մասին Ղ. Ալիշանը գրում է. «Ընդ մէջ գեօղիցս յիշեցելոց երեւին ընդարձակ տեղիք աւերակաց, պարսպօք եւ աշտարակօք եւ եկեղեցաւ, զոր տեղացիքն ասեն՝ ի հնումն Ազատ քաղաք կոչեցեալ, ըստ գրութեան ինչ Պետրոսեան Պօղոս վարդապետի, որում ասէին Սեւանեցիք՝ ազատագիր եւս ունեալ ի Շահից Պարսից վասն ապահարկութեան տեղւոյն, եւ պահիւր յԷջմիածին»[211]։

211. Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 66։

Մաքենիս գիւղի մօտակայ «Ազատ քաղաքի» մասին յիշատակութիւն ունեն Ղ. Ալիշանը եւ Մ. Սմբատեանցը, իսկ Մովսէս Կաղանկատուացին այս վայրն անուանել է «մեծ Մաքենացւոց մայրաքաղաքն»[212]։ Մանանդյանը եզրակացնում է, որ «Ազատ քաղաքները» գրաւել են ընդարձակ տարածքներ, ունեցել են բերդապարիսպներ եւ ամրոցներ[213]։

212. Հ. Մանանդյան, *Երկեր*, հ. Բ, Երեւան, 1984, էջ 203։

213. Նոյն տեղում։

Ինչպէս ասացինք, ազատ քաղաքներն առաջացել են առեւտրական ճանապարհներին եւ վարչական իմաստով եղել են մշակոյթի, հաւատքի, արհեստագործական արտադրութեան եւ առեւտրի ինքնավար կենտրոններ։ Հայաստանում այս տիպի քաղաքներից էր Արծնը, Եւրոպայում (ԺԲ. դար)՝ Ֆրանքը եւ Հանզան[214]։ Հետարքրքրական է այն, որ այս քաղաքները սովորաբար եղել են պաշտպանուած, իսկ Սոդքի «Ազատ քաղաքը», ըստ Ալիշանի վերոհիշյալ նկարագրութեան, ունեցել է պարիսպներ եւ աշտարակներ։ Սիւնիքի Բերդկունք եւ Սոդքի «Ազատ քաղաքները» պաշտպանուած են եղել ռազմական նշանակութեան պաշտպանական կառոյցներով։ Բերդկունքի «Ազատ քաղաքի» մօտ է եղել Բերդկունք ամրոցը, իսկ Սոդքի մօտ՝ Մաքենեաց վանք-ամրոցը։


214. Նոյն տեղում։

Այս պարագային կարող ենք հանգել մէկ այլ պաշտպանական սկզբունքի, ըստ որի՝ առեւտրի կարեւոր կենտրոնավայրերը հիմնուել են պաշտպանական կառոյցների մօտ, որով իսկ ապահով է դարձել նրանց գործունէութիւնը։ Առեւտրական ճանապարհների հետ կապուած՝ կարելի է եզրակացնել, որ նրանց յարակից, որպէս առեւտրի զարգացմանը

նպաստող գործօններ, կառուցուել են տարբեր պաշտպանական շինութիւններ՝ «Ազատ քաղաքներ», քարաւանատներ, վանք-ամրոցներ, որոնք անհրաժեշտութեան դէպքում ամրացուել են նրանց մօտ տեղադրուած զուտ ռազմական նշանակութեան շինութիւններով:

Այսպիսով՝ Գեղարքունիքի (Գեղարքունի եւ Սոդք գաւառներ) պաշտպանական կառոյցների քննարկումը բացայայտում է այն հանգամանքը, որ միջնադարում այս գաւառում գոյութիւն են ունեցել որոշակի պաշտպանական սկզբունքներ, իւրայատուկ՝ Գեղարքունիքի աշխարհագրական միջավայրին եւ ռազմավարական պահանջներին: Գեղարքունիքի պաշտպանական ամբողջ համակարգը կապւում է Սիւնիքի միւս գաւառների, մասնաւորապէս՝ նրան յարակից Վայոց ձորի հետ (Կոթ–Սիսական առեւտրական ճանապարհ) եւ կազմում ամբողջական համակարգ: Պէտք է նշել, որ Գեղարքունիքի պաշտպանական եւ պաշտամունքային կառոյցները որոշակիօրէն տարբերւում են Սիւնիքի միւս գաւառների նման կառոյցներից, այսինքն՝ կարելի է խօսել Սիւնիքի ճարտարապետաշինարարական դպրոցի որոշակի ուղղութեան առկայութեան մասին: Այս առումով նշանակալի են յատկապէս Բերդկունք, Սեւան ամրոցները եւ Մաքենեաց վանք-ամրոցը:

Պատկ. 156
Դուին–Պարտաւ ճանապարհի պաշտպանական համակարգը, գծագիրը՝ հեղինակի



156




157

Պատկ. 157
Գեղարքունիք մարզի Գեղահովիտ
բնակավայրի համայնապատկերը

Պատկ. 158
Ալբերդ ամրոցի գլխաւոր
յատակագիծը՝ ըստ Գեդէոն
Միքայէլեանի

Պատկ. 159
Եռաշերտ պարսպապատերի
մանրամասը



№ 65. Ղարանլուգ գյուղի մոտի «Ալբերդ» ամրոցի հատակագիծը

158



159



160

Պատկ. 160
Մաքենեաց վանք-ամրոցի
ընդհանուր տեսքը՝ արեւելքից՝
վերականգնելուց յետոյ



161

Պատկ. 161
Վանքը՝ Գեղարքունիքի մարզի
Մաքենիս գիւղի տարածքում՝
Սեւանի աւազանի յարավարեւելեան
մասում՝ համանուն գետի աջ ափին՝
ըստ Google Earth-ի

Պատկ. 162, 162.ա
Վանք-ամրոցի ընդհանուր տեսքը՝
արեւմուտքից՝ վերականգնելուց
առաջ (1980-ականներ) եւ
վերականգնելուց յետոյ
(2000-ականներ)



162



162.ա



Պատկ. 163
Վանք-ամրոցի աւերակ պարսպապատերը՝ մինչեւ վերականգնումը

163



164.1




164.2

Պատկ. 164
Վանք-ամրոցի գլխաւոր յատակագիծը (չափագրութեան եւ նախագծի հեղինակներ՝ Կարօ Ղաֆադարեան, Հրաչեայ Գասպարեան, Աշոտ Մանասեան, Աշոտ Յովսէփեան, Արա Զարեան, Պետրոս Խալեյեան, Արթուր Յովհաննիսեան, 1986)

Պատկ. 164.1
Վանքի պարսպապատերի հատուածը

Պատկ. 164.2
Վանքի պարսպապատերի կառուցումը. ներառուած են տեղի



164





Թանահատ, Պոռշեան իշխանական տան զինանշանը

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

4.1 ՎԱՅՈՑ ՁՈՐ ԳԱՒԱՌ (ՎԱՅՔ ԿԱՄ ԵՂԵԳԵԱՑ ՁՈՐ) ՎԱՐՉԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԿԱՐԵՒՈՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ, ԱՄՐՈՑՆԵՐՆ ՈՒ ՎԱՆՔ-ԱՄՐՈՑՆԵՐԸ

4.2. Դուլին–Պարտաւ ճանապարհի Վայոց ձոր գաւառով անցնող –Սելիմի լեռնանցք ճանապարհահատուածի պաշտպանական համակարգը
4.3. Արբայ (Ղալա Թափա կամ Ուլիայ Նորաշէն ամրոց)
4.4. Արփայ (Արենի) ամրոց
4.5. Էրդիչ ամրոց
4.6. Նորաշէն ամրոց
4.7. Ապանայ ամրոց
4.8. Ծատին վանք-ամրոց
4.9. Սուլեմա (Սելիմ) ամրոց
4.10. Պոօշեան իշխանական տիրոյթի պաշտպանական համակարգը
4.11. Բոլորաբերդ (Պոօշաբերդ) ամրոց
4.12. Եղեգիք (Սմբատաբերդ) ամրոց

Վայոց ձորը Սիւնիքի պատմական մեծ գաւառներից էր: Հիւսիսից այն սահմանակից էր Սիւնիքի Գեղարքունիք եւ Սոդք, արեւելքից՝ Ծղուկք (Այլախ) եւ Արցախի Վայկունիք, հարաւից՝ Սիւնիքի Ճահուկ (Ծահապոնք) ու Նախիջեւան եւ Այրարատի Շարուր, իսկ արեւմուտքից՝ Այրարատի Արած եւ Ուրցաձոր գաւառներին (պատկ.165): Ներկայում այն համապատասխանում է ՀՀ Վայոց ձոր մարզի (Վայք, Եղեգնաձոր) եւ Նախիջեւանի ԻՄ (Ինքնավար Մարզ) հիւսիսարեւմտեան մի փոքր հատուածին (պատկ.166): Վայոց ձոր գաւառը, բացի արեւմտեան մասից, շրջափակուած է բարձրադիր լեռնաշղթաներով: Գաւառի հիւսիսային սահմանով ձգւում են Վարդենիսի լեռները (ամենաբարձր գագաթը՝ Վարդենիս լեռ՝ 3.522մ (պատկ.167), արեւելքով՝ Սիւնեաց լեռնավահանը (Ծղուկք լեռ՝ 3.581մ), իսկ հարաւով՝ Վայքի լեռները (Գոգի լեռ՝ 3.120մ):

Գաւառի ամբողջ լայնութեամբ՝ արեւմուտքից արեւելք հոսում է Արփայ գետը՝ դէպի հիւսիս եւ հարաւ տարածուող փոքր ու մեծ վտակներով (Եղեգիս, Հերհեր, Գոմեր, Մարտիրոս, Գնիշիկ, Ճավաձոր, Ակոռի, Հողոցիմ, Նրբույն), որոնցից ամենամեծը՝ Եղեգիսը, սկիզբ առնելով Վարդենիսի լեռներից, հոսում է դէպի հարաւ եւ Արփայ աւանի մօտ միախառնւում Արփայ գետին եւ ընթանալով դէպի հարաւ-արեւմուտք, թափւում է Արաքս (Երասխ) գետը՝ Ուլիայ Նորաշէն քաղաքի մատոյցներում:

Վայոց ձոր գաւառն ուրարտական շրջանում եղել է «բիա» ցեղախմբի բնակատեղին[215]: Գաւառի մասին ամենահին յիշատակութիւնները Դ. դարից են: Վայոց ձոր անունը հանդիպում ենք Եղիշէի մօտ. «...սուրբ Յովսէփ Վայոց ձորից, Հողոցիմբ գիւղից», եւ Խորենացու՝ մօտ. նոյն առիթով «Յովսէփ քահանայապետն Վայոց ձորի Հողոցիմ գիւղից»[216]: Վայոց ձորը Սիւնիքի նահանգի կազմի մէջ է մտել Մեծ Հայքի թագաւորութեան ժամանակ՝ Ա. դարում: Ստեփանոս Օրբէլեանը գաւառի անունը մէկնաբանում է որպէս ժողովրդական «վայնասուններ»՝ կապուած Ը. դարում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի աւերածութիւնների հետ[217]: Նման բացատրութեան հանդիպում ենք նաեւ Կիրակոս Գանձակեցու երկում[218]:

Ղեւոնդ Ալիշանը Վայոց ձորը բաժանում է երկու մասի՝ հիւսիսային եւ հարաւային, որտեղ յիշատակում է 99 գիւղանուն: Այս բաժանումը պայմանաւորուած է Արփայ գետով եւ համընկնում է նրա հիւսիսային ու հարաւային աւազաններին: Բնակատեղիներից նշանաւոր են եղել Եղեգիսը, Մոզը, Արփան, Գնիշիկը, Փշոնքը, Բերդիմայրը, Սարկոզովքը, Ազատեքը, Մարտիրոսը[219] (պատկ.164):

Վայոց ձոր գաւառի վարչական կենտրոնը 735-ին եղել է Մոզը[220], որի աւերակներն այժմ գտնւում են Մալիշկայ գիւղից հարաւ-արեւելք՝ Արփայ գետի ափին: Վերը նշուած աւերիչ երկրաշարժի հետեւանքով այն հիմնովին աւերուել է, իսկ յետագայում՝ Սիւնիքի թագաւորութեան սկզբնաւորման ժամանակ (980-ական թուականներ), գաւառի մայրաքաղաքը եւ Սիւնեաց գահերէց իշխանների աթոռանիստ կենտրոնը դառնում է Եղեգիս աւանը (821–963): Յետագայում, երբ Զաքարեանները գաւառն ազատագրում են սելջուկներից, Բագրատունիներին յաջորդում են Օրբէլեանները եւ Խաղբակեանները: Եղեգիսն աստիճանաբար կորցնում է իր նշանակութիւնը, եւ «մայրաքաղաքը» տեղափոխւում է Արփայ աւան:

1200-ական թուականներին, երբ Զաքարեանները Վայոց ձորի մի մասը տալիս են Պռոշեաններին, իրենց աթոռանիստն են դարձնում Սրկղունք աւանը[221]: Պռոշեանների երկրորդ կենտրոնավայրը եղել է Մարտիրոս գիւղը[222], Վայոց ձորի հոգեւոր կենտրոնը՝ Թանահատ-Գլաձոր վանքը, որը յետագայում նոյնպէս շատ կարեւոր դեր է խաղացել մշակութային կեանքում՝ դառնալով գրչութեան խոշոր կենտրոնը ամբողջ Սիւնիքում:

Պաշտպանական ճարտարապետութեան զարգացման իմաստով Վայոց ձոր գաւառը, պայմանաւորուած իր աշխարհագրական առանձնայատկութիւններով, շատ նպաստաւոր է եղել բոլոր ժամանակներում: Վայոց ձորն ունի խիստ լեռնային մակերեւոյթ, նրա միջին բարձրութիւնը 1.400–2.000մ է: Այնտեղ տարածւում են երեք լեռնային գօտիներ. ցածրադիր՝ մինչեւ 1.400մ, միջին բարձրադիր՝ 1.400–2.800մ, բարձրադիր՝

215. Կամսար Ավետիսյան, *Աշխարհագրական անունների բացատրական բառարան*, Երեւան, 1969, էջ 316:

216. Ս.Հ. Ումառյան, *Սիւնիքը դիցարան*, Երեւան, 1981, էջ 48: Հեղինակը գաւառանունը բխեցնում է հնդեւրոպական “vas” արմատից, որը նշանակում է արեւ (էջ 50):

217. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 155:

218. Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ՝ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 74:

219. Նշանաւոր գիւղերի ամբողջական ցուցակը տե՛ս Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 97–98:

220. Ս.Հ. Ումառյան, նշ.աշխ., էջ 48:

221. Այժմ համապատասխանում է Վայոց ձորի մարզի Վերնաշէն գիւղին:

222. Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան, *Պռոշեանք եւ Խաղբակեանք Հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 23:

2.800մ-ից բարձր[223]: Ռելիեֆի խիստ ծալքաւորման հետեւանքով առաջացել են խոր ձորեր, հրուանդաններ, լեռնային գոգաւորութիւններ, ձորակներ, սարաւանդներ, լեռնաշղթաներ, որոնց բարձրադիր կատարները յաճախ ծածկուած են ժայռաբեկորներով եւ քարապարներով: Շրջապատուած լինելով բարձրադիր լեռնաշղթաներով՝ Վայոց ձորն ունէր արդէն բնականից դժուարանցանելի տարածքներ, որոնք Արշակունիների շրջանից ի վեր ամրացուել եւ ռազմականացուել են տարբեր բնոյթի պաշտպանական կառոյցներով ու համակարգերով: Պատմիչներն այս տարածքում յիշատակում են բազմաթիւ ամրոց ու բերդեր, դղեակներ ու վանք-ամրոցներ: Ռազմավարական առումով այստեղ կարեւոր են առեւտրառազմավարական ճանապարհները, լեռնանցքները, իշխանական տիրոյթները, վարչական կենտրոնները, հոգեւոր հաստատութիւնները, անապատներն ու քարաւանատները: Բոլոր այս ռազմավարական խոշոր միաւորներն ունեցել են յուսալի պաշտպանական տարրեր ու համակարգեր, որոնց ընդարձակ ու լայնատարած ցանցն ապահով է դարձրել գաւառը:

223. *Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրութիւն*, Երեւան, 1971, էջ 379:

Ռազմապաշտպանական ճարտարապետութեան իմաստով ամբողջ գաւառի տարածքում կարեւոր են եղել հետեւեալ պաշտպանական համակարգերը, առանձին ամրոցներն ու վանքամրոցները.

ա. Սիւնիքով ընթացող Դուին–Պարտաւ ճանապարհի Վայոց ձորով անցնող Սելիմի լեռնանցք–Սիսական ճանապարհահատուածի ռազմավարական համակարգը,
բ. Պռոշեան տոհմի իշխանական տիրոյթի պաշտպանական համակարգը,
գ. Բոլորաբերդ–Սպիտակաւոր, Սմբատաբերդ–Ցաղաց քար, Հրասեկայ–Ամաղու Նորավանք երկկենտրոն պաշտպանական համակարգերը,
դ. Սրկղունք եւ Արփայ մայրաքաղաքների պաշտպանական համակարգերը:

Առանձին ամրոցներից նշանաւոր են Բոլորաբերդը, Սմբատաբերդը, Հրասեկայն, Ջերմուկը, Վարդաբլուրը, Փշոնքը, Բերդաթաղը, Սուլեման, Նրբոյնը, Սիսաջանը, Էրթիչը:

Պաշտպանական ճարտարապետութեան առումով վանքամրոցներից նշանաւոր են Ծատիվանքը (պատկ.168), Ամաղու Նորավանքը (պատկ. 169), Գոլոշտին[224], Արատեսը (պատկ.170), Գնդեվանքը (պատկ.171):

224. Ըստ Ստեփանոս Օրբէլեանի՝ այն գտնւում էր Գնդեւանքի ձորում՝ Գոլոշտի քար կոչուած տեղում: Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 320:



Պատկ. 165
Սիւնեաց Վայոց ձոր նահանգի քարտէզը՝ ըստ Ղ. Ալիշանի «Սիսական»-ի, Վենետիկ, Սբ Ղազար, 1893

165



Պատկ. 166
ՀՀ Վայոց ձոր մարզի քարտէզը

166



Պատկ. 167
Վարդենիսի լեռնաշղթան, 3.522մ

167



Պատկ. 168
Շատին վանք-ամրոցը, Ժ. դար

168



Պատկ. 169
Ամաղու Նորավանք վանք-ամրոցը, ԺԳ–ԺԴ դարեր

169



Պատկ. 170
Արատեսի վանք-ամրոցը, ԺԳ. դար

170



Պատկ. 171
Գնդեվանքի վանք-ամրոցը,
Ժ–ԺԳ դարեր

171

4.2. Դուին-Պարտաւ ճանապարհի Վայոց ձոր գաւառով անցնող Ուլիայ Նորաշէն-Սելիմի (Սոլեհա) լեռնանցք ճանապարհահատուածի պաշտպանական համակարգը

Պատմական Հայաստանում առեւտրական, ռազմավարական եւ մշակութային կապերի տարածման իմաստով կարեւոր նշանակութիւն է ունեցել Սիւնիքով անցնող Դուին–Պարտաւ մայրուղին, որը յիշատակել են մի շարք պատմիչներ, մասնաւորապէս՝ Ստեփանոս Օրբէլեանը եւ որոշ արաբ պատմիչներ[225]: Մեր ժամանակներում այս ճանապարհին ուսումնասիրել են Հ. Մանանդեանը, Թ. Հակոբեանը, Ս. Երեմեանը, Բ. Հարութիւնեանը, Ա. Ղարագեոզեանը. նրանք ճշտել են մայրուղու ընթացքը, վերականգնել գիւղաւանների, բնակավայրերի եւ կայանների պատմական անունները, սակայն նուազ ուշադրութիւն են դարձրել ճանապարհին յարակից եւ նրա պաշտպանական համակարգի մաս կազմող ամրոցներին ու բերդերին: Ճանապարհները, լինելով տարբեր հեռաւոր երկրներ եւ նահանգներ իրար հաղորդակից դարձնելու միջոց, միեւնոյն ժամանակ եղել են որպէս թշնամու ներխուժման գլխաւոր եւ նպաստաւոր հիմնական ուղղութիւնները: Դրա համար էլ բոլոր ժամանակներում այդ հաղորդակցութեան ուղիներն ամրացուել են յուսալի պաշտպանական համակարգերով: Բացառութիւն չէ նաեւ Դուին–Պարտաւ մայրուղին, որի բոլոր ճիւղաւորումներում ու կարեւոր հանգոյցներում կառուցուել են ռազմապաշտպանական համակարգեր:

Կարեւորելով Դուին–Պարտաւ ճանապարհի Վայոց ձորով անցնող Բաշնորաշէն–Սելիմի լեռնանցք ճանապարհահատուածի պաշտպանական համակարգի մաս կազմող բերդամրոցների ուսումնասիրութիւնը՝ 1987-ի օգոստոսին ձեռնարկել ենք հետազօտական գիտարշաւ[226]՝ նպատակ ունենալով ստուգել 92կմ երկարութեան ճանապարհի գծամասը եւ որոնել ու հետազօտել մինչ օրս պահպանուած պաշտպանական կառոյցները: Ճանապարհի զգալի մասն անցնում էր Վայոց ձոր գաւառով. սկիզբ առնելով Ծարուրի դաշտից՝ ընթանում էր դէպի հիւսիս-արեւելք ու հասնում մինչեւ Արփայ գետը, որտեղից՝ Արենի[227] գիւղաւանի մօտով ուղղվում էր դէպի հիւսիս եւ հասնում Սելիմի լեռնանցք, ապա Կոթ աւանից ընթանում էր դէպի Պարտաւ (պատկ.172): Ուսումնասիրողները տարբեր կարծիքներ ունեն Դուինից մինչեւ Կոթ ճանապարհի ընթացքի վերաբերեալ: Ըստ Հ. Մանանդեանի[228] Դուին–Պարտաւ ճանապարհն ունէր երկու ճիւղ. Դուինից մէկն ուղղվում էր դէպի հիւսիս-արեւելք, միւսը՝ հարաւ-արեւմուտք. միանալով Կոթ կայանում՝ կազմում էին միասնական ուղի եւ ընթանում դէպի Պարտաւ (Բարդա): Կոթից Պարտաւ ճանապարհն անցել է մօտաւորապէս իրարից միեւնոյն հեռաւորութեամբ տեղադրուած Զոդ (Սոտք), Հաթերք (Հաթրիս), Կաղանկատույք (Գալանգատուս) կայաններով: Բ. Հարութիւնեանը համարում է, որ Դուին–Պարտաւ ճանապարհն ունեցել է մէկ ուղղութիւն՝ Դուին–Բաշնորաշէն (Ծարուրի դաշտ), որտեղից այն բաժանուել է Նախճաւան եւ Պարտաւ ուղղութիւններով, այնուհետեւ Բաշնորաշէն–Ուլիայ Նորաշէն–Արփայ–Այնաձոր (կամ, այլ տարբերակով, հնարաւոր է՝ Արփայ գետի հունով դէպի Գետափ–Եղեգնաձոր–Սելիմի լեռնանցք)[229]:

Հ. Մանանդեանի նշած հիւսիս-արեւելեան ճիւղը, չնայած քննարկուող ճանապարհի վերաբերեալ տարակարծութեանը, միջին դարերում բանուկ է եղել եւ օգտագործուել է որպէս Գեղամայ լճի արեւմտեան աւազանի բնակավայրերը Կոթ կայանի հետ հաղորդակցելու միջոց, ուստի, անկախ նրա Դուին–Պարտաւ ճանապարհի մասը լինելուց, նպատակայարմար եմ համարում նշել նաեւ նրա պաշտպանական կառոյցները: Հիւսիս-արեւելեան ճիւղն ունէր Դուին–Երեւան–Սեւան (հնում՝ Ելենովկա)–Բերդկունք–Նոր Բայազետ–Կոթ ուղերթը: Սիւնիքի Գեղարքունիք գաւառով անցնող Սեւան–Կոթ–Սելիմի լեռնանցք հատուածը սկիզբ էր առնում Գեղամայ լճի հիւսիսարեւմտեան մասից՝ Սեւան աւանից, անցնում 25կմ դէպի հարաւ, լճի ափամերձ շրջանով հասնում էր Բերդկունք բերդաւան[230] (կայան), որի տարածքում են այժմ կիսաւեր պահպանուած Բերդկունք

225. Հետաքրքրական է մասնաւորապէս այլ – Յոթահրիի վկայութիւնը, տե՛ս Н.А. Караулов, նշ. աշխ., էջ 33:

226. Գիտարշաւի կազմակերպողներից եւ մասնակիցներից է եղել պատմական գիտութիւնների թեկնածու Արմեն Ղարագեոզեանը, որին յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը՝ ցուցաբերած աջակցութեան, խորհուրդների եւ ցուցումների համար:

227. U.S. Երեմեանն այն համարում է Արբանյալ աւան: Ս. Ե. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, 1963, էջ 41:

228. Հ. Մանանդեան, *Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները*, Երեւան, 1936, էջ 194:

229. Բ. Հարութիւնեան, *Դվին–Պարտավ ճանապարհի Sisajan–Gilakuni գծամասը*, «ՊԲՀ», № 1, Երեւան, 1968 (տե՛ս գծագրերը):

230. Բերդկունքի մասին տե՛ս Հ. Մանանդեան, *Երկեր*, հ. Ե, Երեւան, 1986, էջ 671:

(Սպիտակ բերդ, Աղկալա) ամրոցի աւերակները[231]՝ Դուինից 115կմ հեռաւորութեամբ: Ինչպէս նշել ենք, Բերդկունք ամրոցի տարածքում՝ «Ազատ քաղաքի» մօտ եղել են քարաւանատուն եւ իջեւանատուն, որը վկայում է այն մասին, որ ափամերձ ամրոցը եղել է առեւտրական ճանապարհին կառուցուած ռազմական բերդ-կայան:

Բերդկունքից դէպի հարաւ-արեւելք ճանապարհն ընթանում էր Գեղամայ լճից քիչ հեռու եւ լճի հարաւարեւմտեան հատուածում հասնում Գելաքունիի (Կիլ-Կուլ կամ Gilakuni) Կոթ (Կտկոյք) իշխանանիստ գիւղաքաղաքը, որի մօտ եղել է բերդ: Ամրոցի մօտով անցնելիս ճանապարհը բաժանուել է հարաւային՝ դէպի Վայոց ձոր, եւ արեւելեան՝ դէպի Պարտաւ, ուղղութիւնների (պատկ.173):

Մեզ հետաքրքրող ճանապարհն սկիզբ է առնում Շարուրի դաշտից՝ Բաշնորաշէն աւանի մօտից, որտեղ Այրարատ եւ Սիւնիք նահանգների սահմանամերձ գօտում եւ Վայոց ձոր գաւառի հարաւարեւմտեան դարպասի մօտ մինչ օրս պահպանուել են Արբայ (Ղարա-Թափա) ամրոցի աւերակները (պատկ.174): Ամրոցը տեղադրուած է Շարուրի դաշտի եւ Վայոց ձորահովտի բարձրաբերձ, երկկողմանի ժայռերով շրջապատուած դարպասին մօտակայ կղզենման բլրի գագաթին: Ձոր մտնելով՝ ճանապարհն ընթանում է դէպի հիւսիս եւ անցնում 16կմ հեռաւորութեան վրայ գտնուող Վայս (Ղալա) ամրոցի մօտով: Տեղացիներն այս ամրոցը կոչում են Վեյսալի. ունի երկու ժայռալանջ գագաթներ՝ Փոքր Վայս եւ Մեծ Վայս: Վայսը գտնւում էր երբեմնի Տանձիկ (այժմ այն մնացել է գիւղի եւ հին գերեզմանոցի տարածքներում կառուցուած արհեստական ջրամբարի յատակում) գիւղի մօտակայքում՝ ճանապարհի ձախ մասում: Մենք ուսումնասիրել ենք տարածքը եւ թեքադիր ապառաժէ լանջերով կազմուած ամրոցատեղին, սակայն պարսպապատերի հետքեր չենք յայտնաբերել: Այս երկու գագաթները գերիշխող դիրք ունեն, որտեղից պարզ երեւում է Վայոց ձորի հարաւային հատուածը՝ մինչեւ Շարուրի դաշտ: Ինչպէս հաստատում է Բ. Հարությունյանը, այս ամրոցատեղին նշանաւոր Վայս ամրոցն է (պատկ.175)[232]: Հեղինակը Վայս ամրոցի տարածքում է տեղադրում Սիսաջանը[233]: Այս հարցի վերաբերեալ կայ եւս երկու կարծիք: Թ. Հակոբյանը Սիսաջանը տեղադրում է Արենի գիւղի տեղում , Հ. Մանանդյանը եւ Ն. Կարաուլովը համարում են այն համարժէք Սիսաջանին եւ տեղադրում են Բաշնորաշէնում[235]: Մեր քննարկման ոլորտից դուրս է տուեալ հարցի մէկնաբանումը, սակայն, տեղանքի քննութիւնից ելնելով, առաւել հաւանական ենք համարում Հ. Մանանդյանի տեղադրութիւնը, այսինքն՝ Բաշնորաշէնը: Վայսից ճանապարհը թեքւում է արեւելք եւ ընթանում դէպի Արբանեալ աւան: Արենիից մօտ 4–5կմ հարաւ-արեւմուտք, Տանձիկ եւ Արենի գիւղերի միջեւ, ճանապարհի ձախ մասում կայ եւս մէկ ամրոց, որին տեղաբնակները Սբ Կարապետ են կոչում (պատկ.176)՝ նրանից ոչ հեռու՝ բարձունքի վրայ, այժմ կիսաւեր փոքր եկեղեցու անունով: Այս ամրոցի մասին պատմական տեղեկութիւնների չենք հանդիպել, ուստի դժուար է որեւէ ստոյգ մէկնաբանութիւն տալ: Ամրոցից այսօր պահպանուել են բլրի գագաթը եզրափակող պարսպապատերի ստորին մասերը, մի քանի սենեակների աւերակներ, որոնք շարուած են միջին չափերի քարերից՝ առանց շաղախի: Սբ Կարապետ ամրոցից արեւելք՝ մօտ 2կմ հեռաւորութեամբ՝ գիւղի հարաւարեւելեան կողմում Ուփի ձորի ձախ ափին Արփայ ամրոցի աւերակներն են (պատկ.177): Պահպանուել են պարսպապատի ստորին հատուածները՝ շարուած անմշակ քարերից՝ առանց շաղախի: Արփայ ամրոցի մօտից ճանապարհն ընթացել է դէպի արեւելք՝ գետի ձախ ափով, այնուհետեւ թեքուել է հիւսիս, Արփայ եւ Եղեգիս գետերի միախառնման անկիւնից անցել Կիզիլ-Կիշլաղ աւանից ոչ հեռու[236]: Այս հատուածում են Էրթիչ (Էրդեչ, Հերթիչ) ամրոցի աւերակները: Ամրոցի հարաւում պահպանուել են համանուն գիւղի եւ Ջրոյ վանք եկեղեցու աւերակները: Ճանապարհի պաշտպանական համակարգի մաս կազմող միւս ամրոցը Գետափ գիւղի հիւսիսային կողմում է՝ Եղեգիս գետի աջ ափին: Այս ամրոցը տեղաբնակները կոչում

231. Ըստ Ս. Բարխուդարյանի՝ Աղկալա ամրոցը միակ միջնադարեան բերդն է Աղմաղանի լեռնաշղթայի արեւելեան կողմում: Հ. Մանանդյան, նշ. աշխ., էջ 198:

232. Բ. Հարությունյան, նշ. աշխ., էջ 217–218:

233. Բ. Հարությունյան, նշ. աշխ., էջ 217–220:

234. Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 93–95:

235. Հ. Մանանդյան, *Հայաստանի գլխաւոր ճանապարհները ըստ Պեւտինգերեան քարտէզի*, Երեւան, 1986, էջ 194–195:

236. Բ. Հարութիւնյանը ճանապարհի ուղղութիւնն այլ կերպ է տանում, որի համաձայն՝ Արփայից այն ընթանում էր դէպի Աղաւնաձոր, ապա թեքւում հիւսիս՝ դէպի Շատին գիւղը: Բ. Հարությունյան, նշ.աշխ., էջ 219:

են Կըզկալա, որը պատմական Աբանա ամրոցն է (պատկ.178)։ Նախքան ճանապարհի հիւսիսային ընթացքին հետեւելը, ցանկանում ենք նշել, որ Արփայ եւ Եղեգիս գետերի ջրախառնման անկիւնը, որտեղ քննարկուող ճանապարհը բաժանուել է արեւմտեան՝ Սիսաջան, եւ արեւելեան՝ Արցախ, ճիւղերի, եղել է խիստ կարեւոր ռազմավարական հանգոյց։ Այն պաշտպանուած է եղել 6 ամրոցից կազմուած փակ օղակից, որը բոլոր կողմերից հսկում եւ պաշտպանում էր ինչպէս ճանապարհների խաչմերուկը, այնպէս էլ Խոտորալեզ, Նորաշէն, Գետափ, Աղաւնաձոր, Ագարակաձոր, Ծորժայ աւանները (պատկ.173)։

Հանգոյցից աջ՝ հիւսիսից-հարաւ տեղադրուած են Նորաշէն (ըստ Ստ. Օրբէլեանի՝ Վարդանի բերդ), Քյոշք, Ագարակաձոր (պատկ.179), Ծորժայ, Էրդէչ (պատկ.180) եւ Սպանա ամրոցները։ Ամրոցներով շրջափակուած այս հանգոյցից յետոյ ճանապարհը բարձրանում է հիւսիս եւ անցնում Ալիխան-Փայասի, Շատին, Սալլի, Քարագլուխ, Աղնջաձոր, որտեղից այն ուղղվել է դէպի Վայոց ձորի հիւսիսային դարպասի պահակ-ամրոց Սուլեմա բերդ, այնուհետեւ՝ Գեղարքունիք գաւառ՝ մինչեւ Կոթ։ Սելիմի լեռնանցքից հիւսիս եւ հարաւ, ճանապարհին անմիջապէս հաղորդակից, տեղադրուած է երկու քարաւանատուն։ Սուլեմա բերդից մօտ 5 կմ հարաւ Աղնջաձորի քարաւանատունն է, իսկ նոյն հեռաւորութեամբ հիւսիսում՝ Սելիմի քարաւանատունը։

Մեր ուսումնասիրած ճանապարհին հաղորդակից քարաւանատներ կան Բաշնորաշէն, Հարժիք, Աղաւնաձոր, Լեռնակերտ, Կոթ, Ազատ աւանների մօտ։

Այսպիսով, ակնյայտ է դառնում այս ճանապարհահատուածի կարեւոր պաշտպանական համակարգի իսկութիւնը, որը կառուցապատուած էր պաշտպանական հենակէտերի խիտ ցանցով ու քարաւանատներով, որոնք տեղադրւում էին իրարից որոշակի հեռաւորութեան վրայ՝ կախուած ցերեկային ճամփորդութեան տեւողութիւնից[237]։


237. Բ. Հարությունյանը, համաձայն ճանապարհի երկայնքով տեղադրուած քարաւանատների, Սիսաջան–Գելաքունի ճանապարհահատուածը բաժանում է 3 անցումների (նոյն տեղում)։


Այլ է բերդերի տեղադրութեան սկզբունքը ճանապարհի ամբողջ երկայնքով. ամրացուել են՝

ա. ճանապարհների խաչմերուկները (Կոթ, Եղեգնաձոր, Բաշնորաշէն),
բ. գիւղ-աւանները (Կոթ, Քարանլուխ, Գետափ, Եղեգնաձոր, Ագարակաձոր, Արենի, Տանձիկ, Ուլիայ Նորաշէն),
գ. լեռնանցքները եւ դարպասները (Սելիմ, Արբայ),
դ. մնացած պաշտպանական կառոյցները դիրքորոշուած են ճանապարհի երկայնքին գոյութիւն ունեցող բնական խոչընդոտների գագաթներին, որը, մի կողմից, ապահովում էր ամրոցի անառիկութիւնը եւ հնարաւորութիւն տալիս պաշտպանական կառոյցի փոքրածաւալ շինարարութեանը եւ, միւս կողմից, հսկողութեան տակ առնում գետահովիտների առանձին շրջանները։

Ճանապարհին կառուցուած ամրոցների ու բերդերի ընտրուած տեղանքներում, ճարտարապետաշինարարական դիրքադրութեան առումով, որպէս Սիւնիքի պաշտպանական կառոյցների աւանդական միջոց, օգտագործուել են բնականից անառիկ, տարածքի նկատմամբ բարձրադիր ժայռագագաթ հրուանդաններ ու սարվանդներ։ Ամրոցաշինական եւ պաշտպանական կառոյցների ռազմաշինարարական յօրինուածքի սկզբունքների վերլուծութեան իմաստով, մեր պարագայում, ցաւօք, հնարաւոր են լոկ համեմատութիւններ ուրիշ շրջաններում աւելի բարւոք պահպանուած ամրութիւնների հետ։ Առանց հնագիտական պեղումների ու վերականգնումների՝ անհնար է յստակ պատկերացում կազմել Սիւնիքում պահպանուած եւ տեղադրութիւնը յայտնի բազմաթիւ ամրոցների մասին։


Այժմ անդրադառնանք ուսումնասիրուող ճանապարհի պաշտպանական համակարգերի մաս կազմող ամրոցների պատմական, շինարարական եւ ռազմական բնութագրերին։





Պատկ. 173
Դուինի–Պարտաւ ճանապարհի Վայոց ձոր գաւառով անցնող Ուլեայ Նորաշէն–Սելիմի (Սուլեմա) լեռնանցք ճանապարհահատուածի պաշտպանական համակարգը, գծագիրը՝ հեղինակի

173



Պատկ. 172
Դուինի-Պարտաւ ճանապարհի Վայոց ձոր գաւառով անցնող Ուղեայ Նորաշէն-Սելիմի (Սուլեմա) լեռնանցք ճանապարհահատուածը, գծագիրը՝ հեղինակի

172



Պատկ. 174
Արբայ ամրոցը

174



Պատկ. 175
Վայս ամրոցը

175



Պատկ. 176
Սբ Կարապետ ամրոցը

176



Պատկ. 177
Արփայ ամրոցը

177



Պատկ. 178
Աբանայ ամրոցի համայնապատկերը

178



179

Պատկ. 179
Ագարակաձոր ամրոցի տեսարանը



180

Պատկ. 180
Էրդ(թ)իչ ամրոցի ժայռացիցը

4.3. Արբայ (Ղալայ Թափայ կամ ՈւլիայՆորաշէն) ամրոց, 45°07’16”E 39°33’39”N, ք.ծ.մ. 1.079 մ

Արբայ ամրոցը Շարուրի դաշտից դէպի Վայոց ձոր գաւառ ձգուող անդնդախոր կիրճի ռազմական հենակէտն էր՝ դարպասը: Ժամանակին ադրբեջանցի տեղաբնակներն այն անուանում էին Ղարայ Թափայ: Ամրոցը ներկայում Նախիջեւանի ԻՄ Իլյիչի շրջանի Ուլիայ Նորաշէն (Վերին Նորաշէն)՝ հայկական պատմական Նորաշէն գիւղի մօտակայքում է՝ Արփայի լեռնանցքի դարպասում՝ Շարուրի դաշտի սկզբնամասի հարթավայրի հիւսիսում՝ առանձին կանգնած մի մեծ շրջանաձեւ բլրի գագաթին (պատկ.181): Արբայ ամրոցը յիշատակել են Եղիշէն[238] եւ Սեբէոսը[239]: Իմ այցելութեան ժամանակ բլրի գագաթը շրջապակող եւ տարբեր բարձրութիւններ ու երկարութիւններ ունեցող պարսպապատերի, բուրգերի եւ պաշտպանական ու տնտեսական նշանակութեան զանազան կառոյցների աւերակներ կային: Ամրոցն իր միջնաբերդով գրաւում է մօտ 1հա տարածք (պատկ.182): Այստեղ պահպանուած կիկլոպեան շարուածքով արուած աշտարակներն ու պարիսպները վկայում են նրա Ք.ա. II հազարամեակին պատկանելը: Որոշ մասերում պարիսպների բարձրութիւնը հասնում է 2.5մ, հաստութիւնը՝ 3մ, իսկ առանձին քարերի երկարութիւնը՝ 1.5–2.5մ, որոնք կապակցուած չեն շաղախով: Ըստ նախիջեւանագէտ Արգամ Այվազյանի[240]՝ ամրոցը վերակառուցուել է ուրարտական շրջանում, երբ միջնաբերդի շուրջ տարածուել է բնակելի ընդարձակ թաղամաս: Այստեղ նկատւում են եռաշերտ պարիսպներ, որոնք յաջորդում են մէկը միւսին ամենից խոցելի տեղերում: Բլրի գագաթն ունի երկու բարձունք, որոնք կառուցապատուած են ուղղանկիւն յատակագծով տարբեր բնոյթի սենեակներով: 1987-ի ամռանը տեղում կատարած մեր կարճատեւ ուսումնասիրութիւնը, որին խանգարեցին տեղաբնակ ադրբեջանցիները, չբացայայտեց միջին դարերին պատկանող շինարարական շերտեր (յայտնաբերուել են բազմաքանակ միջնադարեան խեցեղենի մնացորդներ): Ա. Այվազյանը նշում է, որ 1915–17-ին Նորաշէնի եւ շրջակայ այլ գիւղերի բնակիչներն այստեղ կազմակերպել են պաշտպանական դիրքեր ու քանդել են շինութիւնների մի զգալի մասը: Կարծում ենք, որ այսպիսի կարեւոր ռազմական հենակէտում հազարամեակներ առաջ հիմնուած ամրոցը չէր կարող անուշադիր մնալ Սիւնեաց իշխանների ամրոցաշինական գործունէութիւնից, մանաւանդ որ այս ամրոցը եղել է նահանգի հարաւարեւմտեան դարպասը: Արբայ ամրոցի մասին Ա. Այվազյանը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում. «Բերդը գտնւում էր Արաքսի հովտից դէպի Արփայ գետի աւազանը բարձրացող կարեւոր առեւտրական տարանցիկ մայրուղիների նշանաւոր հանգուցակէտի վրայ[241]: Դրա շնորհիւ Արբայ բերդի հսկողութեան տակ են գտնուել Արփայի լեռնանցքը, Շարուրի դաշտի մեծ մասը, շրջակայ բնակատեղիները եւ առեւտրական երթուղիները: Լեռը, որի վրայ կառուցուած է Արբայ բերդը (պատկ.183), իր գագաթնամասում ունի հարթեցուած ընդարձակ տարածութիւն, ուր ժամանակին եղել են միջնաբերդը եւ շրջապատող պարսպաշարքերը: Միջնաբերդից բացի այլեւայլ շինութիւնների մի քանի տասնեակ (մոտ 50–60) աւերակներ կան նաեւ լեռնագագաթի միւս մասում: Դրանք ունեն քառանկիւն եւ ուղղանկիւն յատակագծեր:

Համեմատաբար լաւ են պահպանուել Արբայ բերդի պարիսպները: Այժմեան վիճակով պարիսպների պահպանուած մասերը տեղ-տեղ ունեն 20–40մ երկարութիւն եւ 1–2,5մ բարձրութիւն (պատկ.184,185): Արբայի պարիսպների հիմքերի քարերն ունեն 1,5–2,5մ երկարութիւն եւ 1,5մ միջին բարձրութիւն (պատկ. 186): Նման մեծ քարերով կառուցուած պարիսպները (լայնութիւնը 2,9–3մ) շարուած են առանց շաղախի, յարմար կապակցումներով: Բերդի պաշտպանութեան յուսալիութիւնը ապահովուել է եռաշարք պարիսպների օգնութեամբ, որոնց հետքերը տեղ-տեղ պահպանուել են (պատկ.187): Բերդը շրջապատող պարիսպները իրարից հեռու են 1,1–1,2մ: Արբայ

238. *Եղիշէի Վարդանանց պատմութիւնը*, թարգմանությամբ եւ ծանօթագրություններով պրոֆ., դ-ր Ե. Տեր-Մինասյանի, Երեւան, Հայպետհրատ, 1958, էջ 64:

239. Սեբէոս Եպիսկոպոս, *Պատմութիւն ի Հերակլն*, Երեւան, 1939, էջ 142–143:

240. Ա. Այվազյան, *Արբայ եւ Ձահուկ բերդերը*, «ԼՀԳ», № 9, Երեւան, 1976, էջ 88–89:

241. *Աշխարհացոյց Մովսէս Խորենացւոյ*, Վենետիկ, 1843, էջ 60:

բերդի պարսպաշարքերի անկիւնային հատուածներում եղել են որմնահեցեր եւ աշտարակներ (պատկ.188)։ Բերդի պարսպաշարքերը լեռնագագաթի մակերեւոյթին համապատասխան կառուցուած լինելու հետեւանքով տեղ-տեղ ուղիղ են, աւելի յաճախ դուրս կամ ներս ընկած գոգաւոր, ցցուն շարքերով, որոնք յիշեցնում են ուրարտական բերդերի ճարտարապետական յօրինուածքը։ Արբայ բերդի ամրաշինութիւնում նկատելի է նաեւ այն հանգամանքը, որ նախքան բերդի բուն պարսպաշարքերի կառուցումը, բերդի մուտքերը հսկող, ինչպէս նաեւ դիւրաթափանցելի հատուածներում (արեւմտեան) ստեղծուել են պատնէշ-պարիսպներ, որոնց վրայ եւս նկատելի են պահակատներ կամ աշտարակների հետքեր (պատկ.189)։

Միջնաբերդը չորս կողմից պաշտպանուել է պարիսպներով, որոնց փեշերին, լեռան ստորին լանջերում, փռուած են բուն բերդաքաղաքի բազմասենեակ շինութիւնները, որոնք եւս իրենց հերթին պաշտպանուել են պարսպապատերով։ 1934թ. հնագէտ-պատմաբան Ի. Ծերլիկինը ուսումնասիրելով Արբայ բերդի աւերակները, այն վերագրել է ուրարտական ժամանակաշրջանին[242]։ Նա Արբայի բերդի շինութիւնների մէջ յայտնաբերել է նաեւ ճարտարապետական շինութեան մի խարիսխ (սեւերանգ բազալտից), որն ունեցել է խնամքով հղկուած մակերես։ Բերդի ներսում եղած շինութիւնների եւ պարիսպների շինարարական տեխնիկան վկայում է, որ բերդը իր նախնական ձեւով կիկլոպեան շրջանի (մ.թ.ա. II հազարամեակի վերջերի) յուշարձան է, որը մօտաւորապէս մ.թ.ա. VIII դ. կէսերից վերակառուցուել եւ բնակեցուել է ուրարտացիների կողմից եւ երկար ժամանակ ծառայել նրանց։ Արբայ բերդից 2–3 կմ հս. գտնւում են Սիսաջան[243] (Սանդուղտն) բերդի աւերակները։ Արբայ եւ Սիսաջան բերդերի շրջակայքում կան մի քանի կամուրջների, իջեւանատների, հին գիւղերի, քաղաքների պարիսպների հետքեր»[244]։

242. И.П. Шебликин, *Части старых колонн найдённые в районе Орен-Кала в Нах. АССР, Аз. ССР*, ԵԱ Մթրուզəлəр, Баку, 1946, ст. 255.

243. Հ. Մանանդյան, *Հայաստանի գլխաւոր ճանապարհները ըստ Պեւտինգերեան քարտէզի*, ՀՍԽՀ Լուսժողկոմատ, Հրատարակութիւն Մելքոնյան ֆոնդի, «Գիտհրատի» տպարան, Երեւան, 1936, էջ 195։

244. Ա. Այվազյան, նշ.աշխ., էջ 87–92։

4.4. Արփայ (Արենի) ամրոց, 45°10’22”E 39°42’33”N, բ.ծ.մ. 1.228 մ

Արփայ կամ ինչպէս Եղիշէն է կոչում «Արբանեալ աւան»[245] բնակատեղիի առեւտրական եւ վարչական կարեւոր նշանակութեան մասին արդէն խօսել եմ։ Այժմ անդրադառնանք ամրոցին, որն իր տեղադրութեամբ ունի շատ կարեւոր ռազմավարական նշանակութիւն, քանի որ այն եղել է դէպի Ծարուրի դաշտ ձգուող կիրճի մուտքի դարպասը հսկող պաշտպանական յենակէտ (պատկ.190)։ Կիրճի միւս ծայրում, ինչպէս տեսանք, Արբայ (Ուլիայ Նորաշէն) ամրոցն է, որը եղել է Ծարուրի դաշտից դէպի Վայոց ձոր ընթացող ճանապարհի մէկ այլ դարպասը (պատկ.191)։ Ուստի կիրճի երկու մուտքերը կամ երկու ելքերն ամրացուել են պաշտպանական կառոյցներով, որոնք հսկել են այս տարածքի միակ հաղորդակցութեան ուղին, որի երկայնքին տեղադրուած են եղել այլ նշանակութեան բերդեր եւ ամրոցներ (Սբ Կարապետ, Վայս)։

245. Եղիշէ, *Պատմութիւն Վարդանանց*, Վենետիկ, 1950, էջ 131։

Արփայ ամրոցի մասին յիշատակութիւն ունի Սեբէոսը. «Կալաւ զբերդն Արփայս»[246]։ Ստ. Օրբէլեանը բերդը յիշատակում է Օրբէլեան տոհմի իշխանաց իշխան Տարսայիճի կապակցութեամբ, որը 1273-ից յետոյ ամրոցը դարձրել է իր նստավայրը՝ «...Իշխանաց իշխան Տարսայիճը, բազում բարեպաշտական ու[այլ] երեւելի գործեր կատարելուց յետոյ բոլորելով իր կեանքի սահմանաշրջանը, վախճանուեց Արփայի իր ապարանքում»[247]։ Տարսայիճի օրոք, Ամաղու Նորավանքի Սարգիս եպիսկոպոսի նախաձեռնութեամբ, աւանի մօտ՝ Արփայ գետի վրայ կառուցուել է եռակամար կամուրջ, որն այսօր աւերակ է։ Նոյն Տարսայիճը ԺԳ. դարում այստեղ կառուցել է «նստոց» բերդ, այսինքն՝ ապարանք։ Արփայից (այժմ՝ Արենի գիւղ) հիւսիս 1321-ին Մոմիկ ճարտարապետը կառուցել է Սբ Աստուածածին գմբէթաւոր եկեղեցին։ Ինչպէս տեսնում ենք, Արփայ աւանի ողջ շրջակայքը հարուստ է պատմական յուշարձաններով, որը վկայում է նաեւ նրա իշ-

246. Սեբէոս Եպիսկոպոս, նշ.աշխ., էջ 142։

247. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 341–342։

խանանիստ աւան լինելու մասին: Ստ. Օրբէլեանը բերդն անուանում է «դարպաս», որը ճշգրիտ կերպով բնորոշում է նրա ռազմական նշանակութիւնը:

Արփայ բերդի աւերակներն այսօր հազիւ նշմարւում են հին Արփայ գիւղի աւերակներից քիչ հարաւ-արեւելք՝ Ուփի գետի ձախափնեայ բարձունքին (պատկեր.192): Այստեղ պահպանուած պարսպապատերը շարուած են անմշակ քարերից՝ առանց շաղախի:

4.5. Էրդ(թ)իչ ամրոց, 39°44′02″N 45°19′21″E, բ.ծ.մ. 1.434 մ

Էրդեչ կամ Էրթիչ ամրոցի աւերակները գտնւում են Վայոց ձորի մարզի (Եղեգնաձոր) շրջկենտրոնից 3 կմ հարաւ-արեւմուտք՝ Էրտիչ լեռնաճիւղի բարձրադիր ժայռալանջ լեռան կատարին՝ պատմական Էրդեչ գիւղից[248] քիչ հարաւ (պատկ.193): Ամրոցի մասին տեղեկութիւն ունի Ղ. Ալիշանը. «...եւ առ բերանով նորին յԱրփայ՝ հին գեօղն Էրդէչ, այժմ թուրքաբնակ, գեղեցկադիր եւ սօսիատունկ, ի հարաւոյ կողմանէ ունենալով բերդ աւերակ ի գագաթան քարաբլեր եւ գերեզմանս խանգարեալս, յորս խնդրելի են արձանագրութիւնք: – Ցելից հարաւոյ գեղջն ի քարաբլրի ուրեք կայ աւերակ այլոյ հին բերդի, որ կոչի այժմ յանուն Շիրաչի խանի, եւ առ ըստորոտով նորին յարեւելից կուսէ՝ աւերակք տանց եւ գերեզմանք անգիրք. որպէս եւ ի Հս. կուսէ մնացուածք բնակարանաց, դուռն, քարեղէն սանդուղք ելից ի բերդըն. յայսմ կոչման ածեալ է եւ պարիսպ կրաշաղախ. քանզի յայլոց երից կողմանց անմատոյց է քարաբլուրն. տասնիւ չափ սենեակք են ի բերդին եւ ջրամբար»[249]: Պատմիչի այս տեղեկութիւնները հաստատում են այսօրուայ գիւղից հարաւ գտնուող բերդի աւերակները, որտեղ կան նաեւ Ջրո վանք փոքր եկեղեցու, գերեզմանոցի եւ փոսերի նման աւերակ կառոյցների մնացորդներ: Ամրոցն իր փոքր տարածքով զբաղեցրել է Արփայի գետահովտի ձախակողմեան բարձրադիր լեռնաճիւղի՝ երեք կողմից անառիկ ժայռի գագաթը (պատկ.194-201): Ինչպէս պատմիչն է նշում, այստեղ պահպանուած պարսպապատերի ոչ բարձր հատուածները կառուցուել են կրաշաղախով (պատկ.202-205), իսկ պատերի մակերեսներն արուել են կիսամշակ որձաքարերից (պատկ.206-207): Պարսպապատերի յատակագիծը դժուար է վերարտադրել առանց համապատասխան պեղումների եւ ուսումնասիրութիւնների (պատկ.208):

248. Գիւղը յիշատակել է Ստ. Օրբէլեանը Տաթեւին տրվող հարկացուցակում (նշ.աշխ., էջ 395):

249. Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 179:

4.6. Նորաշէն (Վարդանի բերդ) ամրոց, 39°46′35″N 45°19′43″E, բ.ծ.մ. 1.278 մ

Աբանա ամրոցից 3–4 կմ հարաւ-արեւելք՝ Եղեգիս գետի ձախ ափին՝ Գլաձոր (հնում՝ Օրդաբերդ) գիւղի տարածքում պահպանուել են Վարդանի բերդ ամրոցի աւերակները (պատկ.209): Ամրոցի մասին յիշատակութիւն ունի Ստ. Օրբէլեանը. «...Օրթաքէնտ, նոյնպէս վայիլուչ դրիւք, եւ իբր 50 տամբք են եւ առ սովաւ մնացուածք հնութեան, աւերակ բրգաւոր շինուածոյ ի Մ. ՀՐ. Վարդանի բերդ կոչեցեալ. խաչվէմ մի ՉԿ թուականաւ [1311թ.] եւ այլ խաչարաձան ի բարձրաւանդակի...»[250]:

Աւերակները պահպանուել են բարձրադիր բլրի գագաթին՝ տեղ-տեղ ընթացող պարսպապատերի ձեւով, որոնք ունեն բրգաձեւ հիմնապատեր: Ըստ Հ.Միքայէլ Հովհաննիսեանի՝ բերդին տրուել է Օրբէլեան Ելիկումի որդի Վարդանի անունը[251]:

250. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1911, էջ 129:

251. Հ.Միքաէլ Յովհաննէսեան, նշ.աշխ., էջ 433:

4.7. Ապանայ ամրոց, 39°46′51″N 45°14′12″E, բ.ծ.մ. 1.462 մ

Գտնւում է Աղաւնաձոր (Այնաձոր) գիւղից 4 կմ արեւելք՝ Արփայի վտակ Ապանայի հովտում՝ ճանապարհից դէպի արեւմուտք՝ բարձրադիր բլրի գագաթին: Համանուն գիւղի մասին յիշատակում է Ստ. Օրբէլեանը՝ Տաթեւի վանքին տրվող հարկացուցակի կապակցութեամբ: Ապանայ ամրոցը եւ գիւղը թուրքաբնակ շրջանում կոչուել է Կըզկալա: Այժմ գիւղը եւ ամրոցն աւերակ ու ամայացած են (պատկ.210): Ամրոցատեղիի տարածքում պահպանուած բազմաթիւ կառոյցների ու պարիսպների հիմքերի աւերակների

անմխիթար վիճակը հնարաւորութիւն չի տալիս վերականգնելու ամրոցի յօրինուածքն ու տիպը: Ամրոցապատ բլուրը գերիշխող դիրք ունի, որտեղից լաւ երեւում է նրա ստորոտով անցնող քննարկուող ճանապարհը: Ամրոցի յատակագծի եւ յօրինուածքի մասին կարելի է գաղափար կազմել միայն հնագիտական պեղումներից յետոյ:

4.8. Ծատին վանք-ամրոց, 39°50’30”N 45°19’32”E, բ.ծ.մ. 1.660 մ

Այս վանք-ամրոցը մեզ հետաքրքրում է այն առումով, որ եկեղեցին, պարիսպները եւ որոշ աշխարհիկ բնոյթի կառոյցներ՝ հիմնուած ԺԷ. դարում, իրենց դիրքադրութեամբ եւ ռազմավարական ճանապարհին յարակից լինելով, միջին դարերում կազմել են Ուլիայ Նորաշէն–Սելիմի լեռնանցք մայրուղու պաշտպանական համակարգի բաղկացուցիչ մասը: Վանք-ամրոցը տեղադրուած է Սուլեմա՝ հիւսիսարեւմուտից, եւ Ապանայ՝ հարաւ-արեւմուտքից, ամրոցների միջեւ՝ ճանապարհից արեւելք, եւ փաստօրէն լրացուցիչ պաշտպանական հենակէտ է այս ուղղութեան վրայ (պատկ.211):

Վանք-ամրոցը տեղադրուած է Ծատին գիւղից 4կմ արեւելք՝ Եղեգիս գետի ձախ ափին՝ բարձունքի ստորոտին (պատկ.212): Եռանաւ բազիլիկ Սբ Սիոն եկեղեցին, որը կառուցուել է 1655-ին, համալիրի կենտրոնական մասում է (պատկ.213,214): Ծատին վանքը հիմնադրուել է 929-ին կառուցուած մէկ այլ եկեղեցու տեղում, որի մասին յիշատակութիւն ունի Ստ. Օրբէլեանը[252]:

252. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 258:

Վանքը շրջապատուած է ուղղանկիւն յատակագիծ ունեցող պարիսպներով, որոնք հարաւային մասում ամրացուած են երեք կիսաշրջանաձեւ աշտարակներով (պատկ.213.4,–218): Պարսպապատերի ներսում պահպանուել են որոշ շինութիւնների հետքեր, իսկ ամբողջ հարաւային կողմի երկարութեամբ, պարսպապատին կից, ընթանում է ուղղանկիւն, թաղակապ սենեակների շարք (պատկ.213.1): Վանքն ունի երկու մուտք՝ արեւելքից եւ արեւմուտքից (պատկ.213.2,220): Պահպանուել է արեւմտեան սլաքաձեւ, թաղակապ մուտքը, որից հիւսիս, ներսի կողմից, պարսպին անմիջապէս հպուած, կառուցուել է քառանկիւն յատակագծով պահակակէտը, որից պահպանուել են պատերի միայն ստորին հատուածները (պատկ.213.3,221): Ըստ Մ. Հասրաթեանի՝ պարսպապատերը ժամանակակից են եկեղեցուն[253]:

253. Մ. Հասրաթեան, *Սիւնիքի 17–18-րդ դարերի ճարտարապետական համալիրները*, Երեւան, 1978, էջ 30:

Վանք-ամրոցի՝ ճանապարհին յարակից լինելու եւ դրա շնորհիւ առեւտրական ու մշակութային կապերի մասին է խօսում նաեւ այն փաստը, որ ամրոցը սերտ կապերի մէջ էր Ջուղայի հետ: Վանք-ամրոցի պարսպապատերը տեղանքին յարմարեցուած ու դիրքորոշուած են շատ հմտօրէն եւ բնորոշ ռազմական պայմաններին: Վանք-ամրոցին կարելի է մօտենալ միայն հարաւից՝ Եղեգիսի ձորից, որտեղ թշնամու առաջ՝ բարձունքի վրայ, յայտնւում են ուղղագիծ պարիսպները (պատկ.222): Պարսպապատերի պահպանուած մասերի առաւել բարձրութիւնը 3.5–4մ է, հաստութիւնը՝ 1.5–1.8մ: Բացի հարաւային ուղղագիծ պարիսպներից՝ մնացած բոլորը կառուցուած են կիսամշակ, միջին չափերի քարերից՝ կրաշաղախի կապակցող միջնաշերտով (պատկ.223): հարաւային պարսպապատի արտաքին երեսապատն արուած է սրբատաշ քարերից՝ հորիզոնական կարանների յստակ պահպանմամբ, որը վկայում է այս հատուածի յետագայում վերանորոգման մասին (պատկ.224): հարաւային պարսպապատի ամենից լաւ պահպանուածը միջին հատուածն է, որի քարերի մշակման ձեւը տարբեր է Սիւնիքի այլ ամրոցների մշակումից եւ կրկնում է կիլիկեան ամրոցներում լայնօրէն տարածուած պատերի քարերի ինքնատիպ տաշուածքը (պատկ.215)[254]: Բոլոր աշտարակների առանցքով եղել են դիտանցքեր՝ ուղղանկիւն, կամարակապ եւ դէպի ներս լայնացող յօրինուածքով: Վանք-ամրոցի մարտահարթակը ծառայել է հարաւային պարսպապատին կից եւ ամբողջ երկարութեամբ ընթացող աշխարհիկ ու ռազմական կառոյցների շարքի համար՝ որպէս

254. Robert W. Edwards, *The Fortifications of Armenian Cilicia*, Washington, D.C. 1987 (Յիլան՝ էջ 269–276, Սինապ՝ էջ 231–233, Սարի Չիչեք՝ էջ 211–215, Փայաս՝ էջ 201–204):

ծածկ: Այս հատուածի պարսպի վերին մասերը չեն պահպանուել, ուստի դժուար է պատկերացում կազմել հրակնատների տիպի եւ նրանց դասաւորութեան վերաբերեալ:

Շատինի վանք-ամրոցը ռազմարուեստի առումով հետաքրքիր եւ իւրօրինակ նմուշ է, որը Սիւնիքի ուշ միջնադարի այս տիպի պաշտպանական կառոյցներից համեմատաբար լաւ պահպանուածներից է:

4.9. Սուլեմա (Սելիմ) ամրոց, 39°56’01”N 45°14’18”E, բ.ծ.մ. 1.995 մ

Սուլեմա բերդը դիրքաւորուած է ռազմավարական յոյժ կարեւոր տեղում՝ Սելիմի լեռնանցքի արեւելեան բարձրադիր լեռան վրայ՝ Սուլեմա գետի եւ համանուն ձորի աջակողմում, որտեղով անցել է Դուին–Պարտաւ ճանապարհի Սիւնիքով անցնող գծամասը (պատկ.225): Սուլեման Սիւնիքի Գեղարքունիք եւ Վայոց ձոր գաւառների սահմանամերձ ամրոցն էր (պատկ.226), որի մասին յիշատակութիւն է թողել Ստ. Օրբէլեանը՝ 364-ին Հայոց Կաթողիկոս Ներսես Ա. Մեծին՝ իշխանների Կեսարիա ուղեկցելու առիթով. ըստ պատմիչի՝ վերադարձի ճանապարհին նրանք Սբ Մամասի մասունքները բերել եւ ամփոփել են Սուլեմա անառիկ դղեակի մօտ[255]: Պատմիչն ամրոցն անուանում է «...Սուլեմա անառիկ դղեակ... Հայոց Արշակունեաց հարստութեան թագաւորութեան օրոք...»[256]: Ամրոցի կառուցումը վերագրւում է Սուլեմա իշխանին. «...ի վաղ ժամանակս ի Սուլեմա տանուտեառնէ շինեալ. ...»[257]: Այս տեղեկութիւններից ճշտւում է այն հանգամանքը, որ ամրոցը գոյութիւն է ունեցել Արշակունիների շրջանում, եւ այն կառուցել կամ վերակառուցել է Սուլեմա իշխանը, եւ այն եղել է դղեակ տիպի պաշտպանական կառոյց: Յետագայում մեր պատմիչները լռում են Սուլեմա ամրոցի մասին, որն այսօր աւերակ է (պատկ.227): Դղեակ լինելու հանգամանքի մասին կարելի է միայն ենթադրել՝ ելնելով պաշտպանական կառոյցի ընդհանուր դիրքից (պատկ.228): Այն կառուցուել է լեռան գագաթին՝ ուղղահայեաց ժայռապատերով դէպի վեր խոյացող հրուանդանի վրայ, որը շրջապատի նկատմամբ իր գերիշխող դիրքի շնորհիւ հսկողութեան տակ է պահել նահանգի խիստ կարեւոր ռազմավարական հանգոյցը (պատկ.229, 230): Ամրոցի տարածքում պահպանուել են որոշ պարսպապատերի հետքեր՝ շարուած անմշակ քարերից՝ առանց շաղախի: Ցաւօք, այս աւերակները չեն կարող պատկերացում տալ ամրոցի կառուցապատման, շինարարական եւ ճարտարապետական լուծումների մասին: Սուլեմա դղեակին յարակից տարածքում կան մի քանի կառոյցների աւերակներ, որոնցից առաւել նշանակալին ու համեմատաբար լաւ պահպանուածներից են Սելիմի՝ հիւսիսում, եւ Աղքենդի՝ հարաւում, քարաւանատները (պատկ.231), որոնք ուսումնասիրուած եւ մէկնաբանուած են, ուստի կանգ չենք առնի վերլուծութեան վրայ: Հարկ ենք համարում նշել, որ Սուլեմա դղեակից, որը հսկում էր նրա ստորոտով անցնող Սիւնիքի կարեւոր ճանապարհը, հիւսիս եւ հարաւ, ԺԳ–ԺԴ դարերում կառուցուած երկու քարաւանատներն ունեցել են նաեւ ռազմավարական նշանակութիւն եւ տեղադրուած են միասնական մտայղացմամբ՝ որպէս պաշտպանական համակարգի բաղկացուցիչ մասեր: Քարաւանատները ինչպէս տեսանք սոյն աշխատութեան 2.2 ենթավերնագրում (էջ112-113), պատմական Սիւնիքի ժամանակաշրջանում հանդիսացել են ոչ միայն քարաւանների համար որպէս հանգրուան կամ իջեւան այլ նոյնպէս, քարաւանային ճանապարհներին աւազակախմբերից պաշտպանուելու ու պատսպարուելու ամրոցաշինական լիարժէք կառոյցներ: Քարաւանատները օժտուած էին երկարաժամկէտ օթեւան ապահովելու հնարաւորութեամբ եւ կառոյցի առանձնայատկութիւններից ելնելով, օժտուած էին ամրոցներին բնորոշ ռազմապաշտպանական զանազան տարրերով որպիսիք են՝ անկիւնային աշտարակները, ամրապատ դարպասները, պարըսպապատերի պարագծային լուսամուտների բացակայութիւնը:

255. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ233: Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 163: Հ.Միքայէլ Յովհաննիսեան, նշ. աշխ., էջ 367:

256. Ստ. Օրբելյան, Երեւան, 1986, էջ 233:

257. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 164:




181



182


Պատկ. 181
Արբայ կամ Ուլեայ Նորաշէն ամրոցի բլուրը

Պատկ 182,
Ախուրայ (Նախիջեւանում) գիւղն ու Արբայ ամրոցի դիրքադրութիւնը՝ Googl Earth-ից



Պատկ. 184
Արբայ ամրոցի պահպանուած հատուածի չափագրութիւնը, 1980-ականներ, հեղինակ՝ ճարտարապետ Արա Չարեան

184



Պատկ. 185
Արբայ ամրոցի չափագրութեան մաքրագծումը, գծագիրը՝ հեղինակի

185



183

Պատկ. 183
Արբայ ամրոցի ժայռապատերի
համայնապատկերը



186

Պատկ. 186
Ամրոցի կիսակլոր աշտարակի
պատերի հատուածները



Պատկ. 187
Ամրոցի բլուրի միջնամասի
ժայռապատերը

187




Պատկ. 188
Ամրոցի պահպանուած կիսաբոլոր
աշտարակներից

188



189

Պատկ. 189
Արփայ ամրոցի դիրքադրությունը՝
ըստ Google Earth-ի



190

Պատկ.190
Արփայ (Ուլեայ Նորաշէն) եւ
Արփայ (Արենի) ամրոցների
դիրքադրությունը՝
ըստ Google Earth-ի



191

Պատկ. 191
Արփայ բերդի բլուրը



192

Պատկ. 192
Արենի գիւղի համայնապատկերը



193

Պատկ.193
Էրդ(թ)իչ ամրոցի տեղադրութիւնը
Արփի գիւղի ժայռալանջին՝ Ջրոյ
վանքի հարեւանութեամբ՝
ըստ Google Earth-ի


194


195


196


197


198


199


200


201

Պատկ. 194-201
Էրդ(թ)իչ ամրոցի ժայռագագաթի
տեսարանները՝ տարբեր կողմերից



202



203

Պատկ. 202-203
Էրդ(թ)իչ ամրոցի պարսպապատերի
կառուցողական մանրամասեր



204

Պատկ. 204
Էրդ(թ)իչ ամրոցի պարսպապատերի շարուածքի մանրամաս



205

Պատկ. 205
Արփի գիւղատեղին՝ Էրդ(թ)իչ ամրոցից



Պատկ. 206
Սիւնիքի լեռնաշղթան՝ Էրդ(թ)իչ ամրոցից (խորքում՝ կանաչների մէջ, Ջրոյ վանքն է)

206



Պատկ. 207
Էրդ(թ)իչ ամրոցի պարսպապատերի կառուցողական մանրամասէր

207



208

Պատկ. 208
Էրդ(թ)իչ ամրոցի
համայնապատկերը՝ ԱՄԹՍ-ից



209

Պատկ. 209
Նորաշէն (Վարդանի բերդ) ամրոցի
դիրքադրությունը՝
ըստ Google Earth-ի



210

Պատկ. 210
Ապանայ ամրոցի դիրքադրությունը՝
ըստ Google Earth-ի




Պատկ. 211
Ուլեայ Նորաշէն-Մելիմի լեռնանցք ճանապարհահատուածի պաշտպանական համակարգի մաս կազմող Սելիմ, Ապանայ ամրոցները եւ Շատին վանք-ամրոցի դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի

211



Պատկ. 212
Շատին վանք-ամրոցի համայնապատկերը՝ հարաւից

212



213

Պատկ. 213
Շատին վանք-ամրոցի գլխաւոր յատակագիծը
1. Թաղակապ սենեակների շարք
2. Մուտքեր
3. Մուտքի պահակակէտ
4. Աշտարակ



214

Պատկ. 214
Վանք-ամրոցի ընդհանուր տեսքը՝ հարաւ-արեւմուտքից



Պատկ. 215
Վանք-ամրոցի աշտարակի
շարուածքի մանրամաս

215



Պատկ. 216
Վանք-ամրոցի պարսպապատերի
մանրամաս

216



217

Պատկ. 217
Ծատին վանք-ամրոցի հարաւային
պարսպապատի հատուած



218

Պատկ. 218
Վանք-ամրոցի հարաւային
պարսպապատի սրբատաշ
պահպանուած հատուածը



219

Պատկ. 219
Վանք-ամրոցի արեւմտեան
մուտքը՝ ներսից



220

Պատկ. 220
Վանք-ամրոցի բուրգի ու
պահակակէտի պահպանուած
շինութիւնը



221

Պատկ. 221
Ծատին վանք-ամրոցի
պարսպապատերի ներքին
շարուածքը՝ սուաղի հետքերով



222

Պատկ. 222
Վանք-ամրոցի պարսպապատի
հարաւարեւմտեան անկիւնային
աշտարակը



223

Պատկ. 223
Վանք-ամրոցի ընդհանուր տեսքը՝ հարաւից



224

Պատկ. 224
Վանք-ամրոցի աշտարակի հրակնատների մանրամաս



225

Պատկ. 225
Սուլեմա բերդն ու Սելիմի քարաւանատունը՝ պատմական Սիւնիքով անցնող Դուին–Պարտաւ ճանապարհահատուածում՝ ըստ Google Earth-ի



226

Պատկ. 226
Ամրոցի համայնապատկերը



227

Պատկ. 227
Ամրոցը՝ իր բնական միջավայրում



228

Պատկ. 228
Ամրոցի ժայռացիցը



229

Պատկ. 229
Ամրոցի բնական դիրքը՝ Վայոց ձորի համայնապատկերում



230

Պատկ. 230
Սելիմի (Օրբելեանների)
քարաւանատունը՝ վերականգնելուց
առաջ, 1960 ականներ



231

Պատկ. 231
Սելիմի (Օրբելեանների)
քարաւանատունը՝ վերականգնելուց
յետոյ, 2025 թ.

4.10. Պոշեան իշխանների տիրոյթի պաշտպանական համակարգը

Սիւնիքի Վայոց ձոր գաւառում, սոցիալ-քաղաքական, շինարարական-մշակութային վերելքը եղել է Պոշեան եւ Խաղբակեան իշխանական տիրապետութեան ժամանակ: Ամրոցաշինութեան եւ պաշտպանական ճարտարապետութեան տեսակէտից Պոշեանների իշխանութիւնը խաղացել է շատ կարեւոր դեր: Հենց այս շրջանում են իշխանութեան տարածքում կառուցուել ու վերանորոգուել են մի շարք ամրոցներ, իսկ ֆիզիկաաշխարհագրական միջավայրը եւ նախորդ շրջաններից որպէս ժառանգութիւն ստացած պաշտպանական կառոյցների առկայութիւնը դարձել են այն առաջնային նախադրեալները, որոնց լաւագոյն ձեւով օգտագործումն ու կիրառումը հնարաւորութիւն ստեղծեցին ամրացնելու եւ յուսալի դարձնելու բաւական ընդարձակ այս իշխանական տունը (պատկ.232):

Պոշեանների իշխանութիւնը բաղկացած է եղել մի քանի կալուածներից, որոնցից ամենից ընդարձակը Ճահուկի արեւելեան մասն էր՝ Վայոց ձորի Արփայ գետի աջակողմեան վտակ Ազատի հովիտը, Գեղարդայ վանքը եւ Կեչառիսը՝ իրենց կալուածներով: Վայոց ձորում Պոշեանների գլխաւոր իշխանանիստը Սրկղունք[258] աւանն էր, ռազմավարչական կենտրոնը՝ Բոլորաբերդը, իսկ հոգեւոր կենտրոնը՝ Թանատ-Գլաձոր վանական հաստատութիւնը: Պոշեանների երկրորդ կենտրոնավայրը Մարտիրոս աւանն էր՝ Վայոց ձորի գաւառի հարաւային սահմանամերձ գօտում[259]: Պոշեանների տոհմի նշանաւոր իրագործումներից են Աղբերաց կամ Գայլեձոր ու Թանահատ վանքերը (պատկ.233)[260]: Ըստ Գ.Յովսէփեանի՝ Վերնաշէնում էր Պոշեանների իշխանական պալատը: Համաձայն հեղինակի՝ «Մինչեւ վերջին ժամանակները մնացել էին դեռեւս պալատի կամ պարսպի դռան կամարը [բարաւորը –Ա.Չ.կրտ.]՝ Պոշեանց զինանշան համարած, բարձրաքանդակ առիւծներով եւ պարսպի ու եկեղեցու մնացորդներով» (պատկ.234)[261]:

Անդրադառնանք Պոշեանների իշխանութեան տարածքում դիրքորոշուած ամրոցներին՝ Վայոց ձոր եւ Ճահապոնք գաւառներում: Ցաւօք, ամրոցների մասին տեղեկութիւնները շատ սակաւ են: Պատմիչները միշտ չէ, որ նշում են նրանց տեղադրութիւնը: Ղ.Ալիշանի «Սիսական», Գարեգին Յովսէփեանի «Խաղբակեանք կամ Պոշեանք Հայոց պատմութեան մէջ», Ա. Այվազեանի «Նախիջեւանի ԻԽՍՀ Հայկական յուշարձանները» աշխատութիւններից եւ քարտէզներից մեզ յաջողուեց համոզիչ ճշտութեամբ սահմանել Պոշեան իշխանների տիրոյթները Սիւնեաց աշխարհում (պատկ.235): Պոշեաններին պատկանող Ճահապոնք գաւառի բոլոր գիւղերի եւ որոշ ամրոցների՝ Ղ.Ալիշանի նկարագրութիւնը հնարաւոր դարձրեց վերականգնել գաւառամասի սահմանները Ճահուկում, իսկ Գ. Յովսէփեանի աշխատութիւնից օգտագործել եմ Վայոց ձոր գաւառում Պոշեաններին պատկանող գիւղերի տեղադրութիւնը եւ սահմանազատել Վայոց ձոր գաւառի սահմանները:

Պատկեր 235-ում տեղադրուած են իշխանական տիրոյթների երբեմնի բոլոր այն բերդերը, որոնք մեզ յաջողուել է գտնել նշուած աղբիւրներից: Վայոց ձոր գաւառում եղել են (հիւսիսից հարաւ) Բոլորաբերդ (պատկ.236), Նորաշէն (Եղեգնաձոր)[262], Ագարակաձոր (պատկ.237) ամրոցները, Ճահապոնքում՝ (հիւսիսից հարաւ)՝ Զոռնել, Անուշաւան, Նշուտ, Ճահապոնք (պատկ.238), Աշքեան, Վայխիր, Խոռնի ամրոցները: Հակուած չենք հաստատելու, որ բոլոր այս ամրոցները նորոգուել եւ օգտագործուել են Պոշեանների տիրապետութեան շրջանում, սակայն կարծում ենք, որ Զաքարեաններից բաժին ստացած Սիւնիքի այս տարածքները ճշտելու ժամանակ անպայմանօրէն հաշուի են առնուել գոյութիւն ունեցող ամրոցների դիրքորոշումները տիրոյթը սահմանազատելու համար: Պատկեր 235-ում երեւում է, որ Պոշեանների տիրոյթի ամբողջ արեւմտեան կողմը, այսինքն՝ այն հատուածը, որը սահմանակից էր Այրարատ ու Նախիջեւան գաւառներին, ամրացուած էր բերդերի ամբողջական համակարգով, որոնք բաժանւում էին իրարից ձորերով ու լեռնաշղթաներով: Այս հանգամանքն անշուշտ նպաստել է նոր իշխանական

258. Սրկղունք կամ Սարկողովք է կոչուել մինչեւ ԺԸ, դարը, ապա գիւղաւանը վերանուանուել է Վերնաշէն-ի: Թ. Հակոբյան, *Սովետական Հայաստանի տեսարժան վայրերը*, Երեւան, 1959, էջ 165:

259. Գարեգին Յովսէփեան, նշ.աշխ., էջ 23:

260. Հ. Մանանդյան, *Քննութեան տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հ. Գ, Երեւան, 1952, էջ 115: Գ. Յովսէփեան, նշ.աշխ., էջ 36–45:

261. Գ. Յովսէփեան, նշ.աշխ., էջ 19:

262. Ըստ Հ. Միքայէլ Յովհաննէսեանի (նշ.աշխ., էջ 363–365, 366)՝ Եղեգնաձորի բերդը նոյնն է, ինչ Եղեգիքի, Ալագյազի, Ցախացքարի, Սմբատաբերդի ամրոցը, սակայն վերը նշուած Եղեգնաձոր ամրոցը Եղեգնաձոր մարզկենտրոնի հարաւարեւմտեան մատոյցներում է՝ փոքր բարձունքի վրայ՝ կառուցուած կիկլոպեան շարուածքով: Այժմ կառոյցից տեղ-տեղ պահպանուել են 1,5–2 մ բարձրութեամբ հաստաւուն պատերը, որոնք շրջապատում են բլուրի գագաթը եւ քօղարկուած են տնամերձ հողամասի բուսական ծածկոյթով: Տեղեկութիւններ չունենք ամրոցի՝ միջնադարում յիշատակուած լինելու մասին:

տիրոյթն ամուր պահելու համար՝ մանաւանդ մոնղոլական գերիշխանութեան շրջանում: Ըստ Ա. Այվազեանի[263]՝ ի Շահապոնք, Խոռնի, Անուշաւան, Զոնել (Զարինի) ամրոցները վերանորոգուել են միջնադարում, որը հաստատում է մեր ենթադրութիւնը:

Պոօշեան իշխանական տոհմի պաշտպանական համակարգը Սիւնիքում, եւ ոչ միայն Սիւնիքում, կիրառուող պաշտպանական սկզբունքի լաւ օրինակ է, որն օգտագործուել է նաեւ նահանգի մի շարք այլ իշխանութիւնների ռազմավարական ծրագրերն իրականացնելու ժամանակ:

4.11. Բոլորաբերդ (Պոօշաբերդ) ամրոց, 39°40′09″N, 45°20′44″E, բ.ծ.մ. 2.353 մ

Սիւնեաց նշանաւոր Պոօշեան իշխանների Բոլորաբերդ[264] անառիկ ամրոցի աւերակները պահպանուել են ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշէն գիւղից 7–8կմ հիւսիս-արեւելք՝ Սբ Աստուածածին[265] (Սպիտակաւոր) վանքից 1–2կմ արեւելք՝ Թաքեադոնդուրան (Սրկղունք) հատած կոնաձեւ լեռան գագաթին (պատկ.239,240): Ամրոցի մասին առաջին յիշատակութիւնը մեզ է հաղորդում Սիւնեաց տան պատմիչ Ստեփանոս Օրբէլեանը՝ իր «Սիւնիքի պատմութիւն» աշխատութիւնում: Վարդանանց պատերազմից յետոյ պարսիկ Աթաշ-Խուդայի՝ հայերին հետապնդելու հետ կապուած՝ հեղինակը բերում է հետեւեալ խօսքերը. «Հասնելով Վայոց Ձոր գաւառի մէջտեղը, Եղեգիս եւ Մոզան գետերի միջեւ գտնուող քարաժայռերով պատած բլրի մօտ, տեղի ամրութեան պատճառով մեծ արյունահեղութիւն արեցին»[266]: Այստեղ ուղղակի չի նշւում բերդի անունը, սակայն, ինչպէս կը տեսնենք, Բոլորաբերդի շրջանում Օրբէլեանը նշում է մի քանի յարակից բնակավայրերի անուններ: «Իսկ միւսներին հետապնդեցին եւ նրանց մի մասին հասնելով մի բերդաժայռի ստորոտում, նեղ ձորակի մէջ՝ այնտեղ կոտորեցին... Հենց այն տեղն էլ կոչուեց Անգեղաձոր: Եւ այստեղից արշաւելով վրայ հասան երեք հարիւր մարդու Ոստինք եւ Արտաբույնք կոչուած գետախառնման տեղում, որտեղ նրանց էլ խողխողեցին: Եւ պարսիկներն այնտեղից անցան դէպի ձորաբերանը, որը ձախ կողմից դէպի վեր նայում է Ցախացքար կոչուած սուրբ վանքին...»[267]: Յիշատակուած Անգեղաձորը համապատասխանում է Ծատին գիւղին (Եղեգիսից ոչ հեռու)[268], Ոստիքը (Հորբատեղ) Ժոստունն է[269], Արտաբույնքն (Արտաբոյն) այժմ՝ Էրտափին (Էրդափն, որ է՝ Եղեգիս) գիւղատեղին է, իսկ Ցախացքարի վանքի աւերակները մինչեւ օրս պահպանուել են Սմբատաբերդ ամրոցի դիմաց (պատկ.241,242): Վերոնշեալ գետերը, ձորերը, բնակատեղիները, վանքերը Բոլորաբերդի շրջակայքում են, եւ կարելի է ենթադրել, որ պատմիչի նկարագրած դէպքերը կապուած են Բոլորաբերդ ամրոցի հետ: Ղեւոնդ Ալիշանը, մէկնաբանելով Ստեփանոս Օրբէլեանի նոյն այս վկայութիւնը, հաստատում է, որ «...յարեւմից Սրկղօնից լերանց, կայ ամայի հին գիւղն Պաշքէնտ[270], ունենալով ի հարաւոյ նոյնպէս ամայի եւ աւերակ բերդ համանուն՝ ի միջոցի կրկին ոստոց լերանց» : Ալիշանն ամրոցն անուանում է «Պաշքէնտ բերդ» եւ այն նոյնացնում է Բոլորաբերդի հետ. «...Բլուրն այն մեծամեծ վիմօք պատեալ եւ ամրացեալ՝ այժմեան աւերակն է Պաշքէնտ բերդի եւ նոյն դարձեալ Բոլորաբերդ կոչեցեալ երբեմն...»[272]:

Ռազմավարական իմաստով՝ Վայոց ձորը, լինելով Սիւնիքի յոյժ կարեւոր առեւտրական եւ ռազմական հանգոյցը, իր անդնդախոր ձորերի, գետահովիտների ու կիրճերի, բնական արգելքների ամբողջական համակարգի շնորհիւ, լաւ ամրացուած ու կառուցապատուած էր տարբեր նշանակութեան պաշտպանական կառոյցներով, ամրոցներով, դղեակներով:

Բոլորաբերդը կառուցուել է գլխաւոր մայրուղուց արեւելք՝ ոչ թէ լեռնապարանոցի, այլ առանձին՝ Եղեգեաց ձորերին գերիշխող մի բլրի ժայռացից գագաթին: Եղել է իշխանական «Կաստել»-դղեակամրոց տիպի[273] պաշտպանական կառոյց: Ամրոցը մաս է կազմել Բոլորաբերդ–Սպիտակաւոր երկկենտրոն պաշտպանական համակարգի (պատկ.67, էջ 96), ինչպէս նաեւ նրանից ոչ հեռու (դէպի հիւսիս-արեւմուտք)՝ Սմբատաբերդ–Ցախացքար նոյնատիպ պաշտպանական համակարգի (պատկ.66, էջ96)[274]:

263. Ա. Այվազյան, *Նախիջեւանի ԻՍՍՀ հայկական յուշարձանները*, Երեւան, 1986, էջ 140,143,151,154:

264. Ամրոցը յիշատակւում է Բոլորաբերդ, Բոլորաբեղ, Պոօշաբերդ, Պոոշի բերդ անուններով, *Հայաստանի եւ յարակից շրջ...*, հ.1, Երեւան, 1986, էջ 107:

265. Եկեղեցին յիշատակւում է «Բոլորաբերդոյ յանապ (ատ)» (էջ 26), Բոլորաձոր անապատ (էջ 57) անուններով: *ԺԵ դարերի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց Լ.Ս. Խաչիկյանը, մաս Գ (1481–1555թթ.), Երեւան, 1967:

266. Ստ. Օրբէլյան, Երեւան, 1986, էջ 107:

267. Նոյն տեղում:

268. Նշ. աշխ., էջ 430 (ծնթգր. 192):

269. Նշ. աշխ., էջ 430 (ծնթգր. 193):

270. Պաշքէնտ կամ Բաշքենդ գիւղը համապատասխանում է պատմական Սրկղունք կամ Սրկղոնք գիւղին, որի դիմաց նոյնանուն լեռն է, որը յետագայում վերանուանուել է Թեքեդոնդուրանի: *Հայաստանի եւ յարակից շրջ...*, հ. 2, Երեւան, 1988, էջ 604: Գ. Յովսէփեան, նշ.աշխ., էջ 19–20:

271. Դ. Ալիշան, նշ. աշխ., էջ 129–130:

272. Նշ. աշխ., էջ 130:

273. Կաստելը բիւզանդական ամրոցի տիպ է, որը յատակագծում քառակուսի կամ ուղղանկիւն, չորս պարսպապատերի մէջ ներփակուած եւ անկիւններում բուրգերով ամրացուած պաշտպանական կառոյց է: Այս յօրինուածքը փաստօրէն անկիւններում բուրգերով ամրացուած բազմանիստ պաշտպանական կառոյցի նախատիպն է: Անհրաժեշտ է զանազանել լատիներէն կաստել եւ կաստրում տերմինները, որոնք իրենց բնոյթով տարբեր են: Այս մասին մէջբերենք Արմէն Զարեանի հետեւեալ ակնարկը. «...Կաստրումը շարժման մէջ գտնվող զօրքի կայան է, ժամանակաւորապէս մնալու տեղ, ու զօրքը ապրում է վրաններում ու փայտաշէն շինութիւններում: Մինչդեռ կաստելլումի շինութիւնները տեւական են՝ քարակերտ կամ աղիւսաշէն...»: Արմէն Զարեան, նշ.աշխ., էջ 42:

274. Ա.Ա. Զարեան, *Որոտնաբերդ-Որոտնավանք պաշտպանական համակարգը*, «ԼՀԳ», № 10, Երեւան, 1986, էջ 61–69:

Հայաստանի պատմութեան պետական թանգարանում ամրոցի յօրինուածքի վերաբերեալ պահպանուել է № 2688 սեւասպիտակը (նեգատիվը), որը փաստագրում է Տարագրոսի 1934-ին կատարած Բոլորաբերդի առաջին ու միակ յատակագծի եւ որոշ մանրամասերի չափագրութիւնները. այդ մասին կը խօսենք քիչ աւելի ուշ (պատկ.243)։ Ամրոցի անուան յիշատակութիւնը պահպանուել է 1475-ին Աբրահամ Ծաղկողի Աւետարանում (Մատենադարան, ձեռագիր №2634)։ Ինչպէս նշուած է ձեռագրի յիշատակարանում, այն պատկերազարդուել է Թանատ-Գլաձոր վանքից ոչ հեռու՝ Բոլորաբերդում[275]։ Բոլորաբերդի կառուցման մասին ստոյգ տեղեկութիւններ չկան։ Թ. Հակոբյանը, ելնելով այն բանից, որ բերդը կոչուել է նաեւ Պոօշաբերդ, նրա կառուցումը [հաւանաբար՝ վերանորոգումը – Ա.Չ.կրտ.] համարում է ԺԳ. դարի գործ[276]։

Բոլորաբերդը տեղադրուած է Սրկղունք ձորահովտի Թաքեադոնդուրան բարձրադիր լեռան գագաթին (պատկ.244,245,246,247), 2.353մ բարձրութեան վրայ[277]։ Բլուրը գերիշխող դիրք ունի շրջապատի նկատմամբ, որի բարձունքից պարզ եղանակին լաւ երեւում է Եղեգիս գետի հիւսիսային հոսանքի ամբողջ հովիտը, իսկ ամրոցից մօտ 7կմ հիւսիս-արեւմուտք՝ Սմբատաբերդ դղեակամրոցը։ Բոլորաբերդի դիրքն ընտրուած է այնպէս, որ մօտ 10–12կմ շառավիղ ունեցող շրջանագծի մէջ ներառնուում են Նորաշէն, Եղեգնաձոր, Ագարակաձոր, Սմբատաբերդ ամրոցները, որոնք եղել են հսկողութեան տեսադաշտում եւ վստահաբար ունեցել են փոխադարձ հաղորդակցութեան կապեր (պատկ.248)։ Լեռան շրջանաձեւ ստորոտը՝ ողորկ, բուսական ծածկոյթից զուրկ, թեքադիր բարձրանում է վերեւ ու հատւում զանգուածային, առանձին խմբաւորուած ժայռաբեկորներին (պատկ.249)։ Բոլոր կողմերից անմատոյց ժայռածերպերն անմատչելի են դարձնում վերելքը դէպի գագաթ։ Մօտեցման միակ՝ առաւել յարմար կողմը հիւսիս-արեւելքից է, որտեղ ժայռազանգուածները խմբաւորուած են լեռան բուն գագաթին եւ դրանով իսկ հնարաւոր են դարձնում համեմատաբար անարգել մօտեցումը մինչեւ գագաթի շրջանը։ Այս նկատառումներից ելնելով է, որ բոլորաձեւ ամրոցի պարսպապատերի փակ օղակից դուրս՝ հենց այս հատուածում, կառուցուել է պարսպի առանձին կանգնած մի գօտի, որի մնացորդները պահպանուել են մօտ 13մ երկարութեամբ եւ 2.3–3մ բարձրութեամբ (պատկ. 250, 251.7)։ Բոլորաբերդի արեւմտեան կողմում՝ հարթավայրի վրայ՝ փոքրիկ ձորակի ափին նկատելի են հին բնակատեղիի հետքեր՝ փոսերի ձեւով, հաւանական է, որ սրանք Բոլորաբերդ գիւղի աւերակներն են[278]։ Բլրի արեւելեան կողմում պահպանուել են նաեւ փոքր մատուռի աւերակներ։

Ամրոցի բոլորապատերով շրջափակուած տարածքը 1.5հա է եւ մինչեւ պարսպապատերի պահպանուած վերին մակարդակը լցուած է բնականից տոփանուած հողով ու քարակոյտերով (պատկ.252)։ Ամրոցը յատակագծում եօթանիստ բազմանկիւն է, որի հարաւարեւելեան կողմը 90 աստիճան է կազմում եւ միակն է, որը ամրացուած չէ բուրգով (պատկ.243.5)։ Պահպանուած ամրոցապատերի ընդհանուր երկարութիւնը մօտ 120մ է։ Հետաքրքիր է մեր նշած՝ Տարագրոսի 1934-ի չափագրութիւնը (պատկ.243)։ Ընդհանուր առմամբ այն համարժէք է մեր չափագրածին (պատկ.251), սակայն երեւում է, որ առաջինն արուած է աւելի սխեմատիկ սկզբունքով։ Տարագրոսի չափագրութեան մէջ հետաքրքրական է մուտքի հատուածը (պատկ.243.1), պարսպապատերից ներս՝ արեւմտեան եւ հարաւային կողմերում աշխարհիկ կառոյցների սենեակների դասաւորութիւնը (պատկ.243.2), որոնք այսօր չեն պահպանուել (պատկ.251.9,10), ջրամբարի մօտ տեղադրուած ձուածիր կառոյցը (պատկ.243.3), մուտքից քիչ հիւսիս-արեւմուտք՝ այժմ էլ պահպանուած երդիկաւոր ուղղանկիւն սենեակի կտրուածքը (պատկ.243.7), պարսպապատի հարաւարեւելեան անկեան մօտ՝ հարաւային պատի մէջ առկայ է մի բացուածք, որը հաւանաբար մուտք է եղել։ Տեղում մեր կատարած ուսումնասիրութիւններն այս փաստը չեն հաստատում, եւ, բացի դրանից, տրամաբանական չէ միեւնոյն գծային ուղղութեան վրայ՝ իրարից ոչ հեռու, ամրոցի երկու մուտք ունենալ (պատկ.243.5)։ Դա հակասում է նաեւ ռազմավարական սկզբունքներին։ Չնայած

275. Ա.Ն. Ավետիսյան, *Հայկական մանրանկարչութեան Գլաձորի դպրոցը*, Երեւան, 1971, էջ 139։ Գրիչը հաւանաբար նկատի է ունեցել Բոլորաբերդի անապատը, քանի որ քիչ հաւանական է բերդում ծաղկել մի ձեռագիր, երբ քիչ հեռու Սբ Աստուածածին վանքն էր, որտեղ արդէն զբաղվում էին ձեռագրութեամբ (Ա.Չ. կրտ.)։

276. Թ. Խ. Հակոբյան, *Հայ ժողովրդի պատմութեան յիշարժան վայրերը*, Երեւան, 1973, էջ 110։

277. Լեռան բարձրութիւնը՝ ըստ Խ. Ավդալբեգյանի, *Հայաստանի Հանրապետութեան քարտէզ*, Երեւան, 1932 (քարտէզում գագաթը կոչուում է Շատիվանք)։

278. Հ. Եղիազարյան, *Ազիգբեկովի շրջանի կուլտուրայի յուշարձանները*, Երեւան, 1955, էջ 44։ Հայաստանի եւ յարակից շրջ.…», հ. 1, Երեւան, 1986, էջ 722։ Բոլորաբերդ գիւղը տեղադրուած է Գնիշիկ գիւղից 4–5 կմ արեւելք՝ Վարդաբլուր լեռան լանջին, որի գագաթին նոյն անունով ամրոցի աւերակներ են պահպանուել։ Այս բնակավայրը կապ չունի Թեքեդոնդուրան լեռան ստորոտի արեւմտեան մասում պահպանուած բնակավայրի հետ, որի մասին նշում է Հ. Եղիազարյանը (Ա.Չ. կրտ.)։

ամրոցի պարսպապատերի այս հատուածը շատ վատ է պահպանուել (պատի արտաքին երեսապատի քարերի մեծ մասը թափուած է), սակայն ստորին մակարդակին բացուածքի հետքեր չենք փաստագրել: Տարագրոսի չափագրութեան մէջ կայ եւս մէկ տարբերութիւն. ամրոցի պարսպապատի արեւելեան կողմի միջին մասում տեղադրուած սնամէջ աշտարակը (պատկ.243.6), կիսաշրջան լինելուց բացի (այն քիչ դուրս արտայայտուած ձուածիր է), գծագրում ցոյց է տրուած այնպէս, թէ այն կառուցուել է աւելի ուշ շրջանում եւ հպուել է ուղղագիծ պարսպին մօտաւորապէս միջին հատուածում: Այս փաստը եւս հաւաստի չենք համարում, քանի որ աշտարակը կառուցուած է պատի հետ միաժամանակ, քանի որ չկան պատի ու աշտարակի արտաքին մակերեւոյթների շարուածքի քարերի կցակարեր (պատկ.251.3): Դրանից բացի՝ ամրոցի շինարարները չէին կառուցի ամրոցի բազմանիստ 40մ երկարութեամբ մի հատուած՝ առանց բուրգորմնահեցի, առաւել եւս այն դէպքում, երբ իրականում, այս աշտարակի տեղից սկսած, պատը փոքր անկիւնով բեկւում է դէպի արեւմուտք (պատկ.251.3,4): Ընդհանրապէս ամրոցաշինութեան ընդունուած սկզբունքներից մէկն այն է, որ, շինարարական-կառուցողական առանձնայատկութիւններից ելնելով, պարսպապատերի բեկման անկիւններում, որպէս կանոն, կառուցուել են աշտարակներ, բուրգեր, որոնք եղել են սնամէջ, եթէ օգտագործուել են զինապայքարի համար, եւ հոծ՝ առաւելապէս որպէս որմնահեց: Բոլոր այս դիտողութիւններն անշուշտ չեն արժեզրկում դարասկզբին Տարագրոսի կատարած շատ կարեւոր փաստագրական չափագրութիւնը, որի շնորհիւ մենք այսօր հնարաւորութիւն ունենք գաղափար կազմելու մօտ մէկ դար առաջ ամրոցի ընդհանուր վիճակի ու նկարագրի մասին եւ համեմատել այսօրուայ վիճակի հետ:

Բոլորաբերդի բոլոր շինութիւնները կառուցուած են տեղական մոխրակապտաւուն բազալտէ որձաքարերից (պատկ.263): Պատերը շարուած են կիսամշակ, միջին չափերի, առաւելապէս հորիզոնական ուղղութեամբ տեղադրուած գրեթէ ուղղանկիւն քարերից՝ կրաշաղախի միջնաշերտով: Պահպանուած պատերի միջին բարձրութիւնն արտաքինից 6–7մ է (պատկ.254,255): Ինչպէս բոլոր հայկական միջնադարեան ամրոցներում, Բոլորաբերդում նոյնպէս պատը եռաշերտ է (պատերի այս կառուցուածքը յստակ ընկալւում է Տարագրոսի չափագրութեան մէջ): Ամրոցապատերի եւ աշտարակների արտաքին ու ներքին մակերեւոյթների քարերի դէպի ներս ուղղուած պոչերն արուած են բաւական երկար եւ սուրանկիւն (պատկ.259): Այս նոյն սկզբունքով են շարուած նաեւ Բոլորաբերդից քիչ հեռու՝ Սմբատաբերդ ամրոցի պարսպապատերը: Բոլորաբերդում պատերի արտաքին հատուածների, առաւելապէս՝ որոշ վերին հատուածների շինարարական արհեստավարժութիւնը շատ իւրատեսակ է եւ քիչ տարածուած Սիւնիքի այս ժամանակաշրջանի կառոյցներում: Ամրոցի հարաւարեւելեան, հիւսիսարեւմտեան եւ արեւմտեան պարսպապատերի պահպանուած արտաքին մակերեւոյթների շարուածքի ձեւը խիստ տարբերւում է մնացեալ շարուածքներից: Այստեղ կիրառուել է «եղեւնաձեւ» կամ «ձկան ողնաշար» շարուածքը (պատկ.259,Ա,Բ), որն արւում է հորիզոնական առանցքից մօտաւորապէս 45 աստիճան թեքութեամբ տեղադրուած եւ իրար նկատմամբ հակառակ թեքութիւն ունեցող քարերի շարուածքով (պատկ.259.Գ,Ե)[279]: Այս յօրինուածքն ընթանում է պատի հատուածի ամբողջ երկարութեամբ եւ կրկնւում երկու կամ երեք մակարդակներով («եղեւնաձեւ» շարուածքի սխեմատիկ պատկերը լաւ արտայայտուած է նաեւ Տարագրոսի յատակագծի աջ կողմում գծուած մուտքի ճակատի գծագրում, պատկ.243.4): Ամրոցապատերի արտաքին հատուածներում պահպանուել են նաեւ փոխուղղահայեաց դասաւորութեամբ գօտիներ, ընդ որում՝ հորիզոնական քարերը երեք շարքով են՝ մէկը միւսին յաջորդող, իսկ նրանց եզրափակող ուղղահայեաց դասաւորութեամբ գօտին՝ մէկ շարքով (պատկ.258.Գ): Նոյն ամրոցապատերի վրայ հանդիպում է նաեւ զոյգ հորիզոնական եւ զոյգ ուղղահայեաց (պատկ.258.Ե) ու մէկական շարք հորիզոնական եւ ուղղահայեաց դասաւորութեամբ շարուածքի յօրինուածքը (պատկ.259.Դ): Այս երկու սկզբունքներով պատերի վերին հատուածների

279. Նման շարուածք հանդիպում է նաեւ ԺԹ–Ի դարերում Դաղստանի եւ Անդրկովկասի կառոյցներում: А. Гольштейн, *Башни в горах*, Москва, 1977, ст. 26.

280. Ա.Ա. Չարեան, նշվ. աշխ., էջ 67:

281. Պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանման եւ օգտագործման գլխաւոր վարչութեան ֆոտոարխիվ:

շարուածքները պահպանուել են Որոտնաբերդում՝ ամրոցի մուտքից ձախ՝ երկու ժայռազանգուածները միացնող պատին[280], Ագուլիսի ամրոցում[281], Տանակերտի Սբ Աստուածածին եկեղեցու արեւմտեան պատին (Արցախ): Սրբատաշ քարերով կառուցուած միակ հատուածն ամրոցի հարաւարեւմտեան թաղակապ մուտքն է (պատկ.260), որը դիրքորոշուած է դէպի հարաւ՝ բազմանիստ, ամենաերկար, ուղղագիծ բերդապարսպի արեւմտեան անկեան մօտ: Ռազմավարական նկատառումներից ելնելով՝ այստեղ օգտագործուած է մուտքի առանցքի նկատմամբ 90 աստիճան դէպի արեւելք դիրքորոշուած, սլաքաձեւ թաղով սրահ-անցուղին (պատկ.251.2), որը կարող էր դժուարացնել թշնամու ներխուժումը գլխաւոր մուտքից եւ ծուղակի մէջ գցել նրան: Այս սրահը կառուցուած է կոպտատաշ բազալտէ քարերից, եւ հնարաւոր է, որ արուել է ամրոցի հերթական վերանորոգման ժամանակ: Տեղում ստուգելն այսօր անհնար է, քանի որ ամբողջ մուտքային հանգոյցը փլատակների տակ է: Սրբատաշ կամարակապ մուտքի լայնութիւնը 2մ է, իսկ ամբողջական վերականգնուած բարձրութիւնն ըստ Տարագրոսի՝ 6մ: Առանց պեղումների դժուար է ճշգրիտ պատկերացում կազմել, թէ ինչպիսին են եղել մուտքի թաղերի ներսի տարածութիւնների վիճակն ու ճարտարապետաշինարարական յօրինուածքը:

Տարագրոսի չափագրութեան մէջ բացակայում է մեր վաւերագրած սրահանցուղին, սակայն այստեղ առկայ են մուտքի երկու կողմերի պարսպապատերից դուրս արտայայտուած պատի ուղղանկիւն ծաւալները, որոնք, ըստ գծագրելու ձեւի, յետագայի կցոններ են (պատկ.243.1): Ռազմավարական մէկ այլ սկզբունք, պայմանաւորուած տեղանքի ռելիեֆով, կիրառուել է մուտքի տեղընտրութեան ժամանակ: Արդէն նշեցինք, որ դէպի բլրի գագաթ բարձրանալու միակ յարմար կողմը հիւսիս-արեւմուտքից է, իսկ բերդի մուտքի անմիջապէս առջեւի մասը երկու կողմերից քօղարկուած է ժայռազանգուածներով: Այս ուղղութեամբ գահավէժ ժայռաքարեր են, որտեղից մագլցելն անհնար է (պատկ.258): Թշնամին պէտք է բարձրանար միայն բլրի հիւսիսակողմից եւ մուտքին մօտենար՝ շրջանցելով ամրոցապատերի ողջ երկարութիւնը ստորոտներով, ու շարժուէր դէպի հարաւ-արեւելք կամ հարաւ-արեւմուտք: Այս հանգամանքը ձեռնտու էր պաշտպանուողների համար, քանի որ նրանք ունէին յարմար բարձր դիրք եւ լաւ տեսադաշտ՝ բերդապատերից ու աշտարակներից յարձակումը կասեցնելու համար:


Ամրոցի յատակագծի բազմանկիւն կողմերի քանակն ու երկարութիւնը, անկիւնների եւ բուրգերի ձեւն ու չափերը, մուտքի կողմնորոշումը եւ, անշուշտ, պատերի տեղընտրութիւնն ու բարձրութիւնը ստոյգ տեղանքում պայմանաւորուած են բլրի գագաթի ժայռածածկոյթի առկայութեամբ եւ առանձին քարազանգուածների ու ապառաժաբեկորների բնական դիրքադրութեամբ (պատկ.253): Այդտեղ, ինչպէս Սիւնիքի բոլոր ամրոցներում, շատ հմտօրէն օգտագործուել է առանձնայատուկ տեղանքը՝ բնական խոչընդոտների անկորուստ օգտագործումը՝ նորակերտ արգելք-պատնէշների հետ սերտօրէն կապակցուած: Գագաթը շրջափակող ձեռակերտ պարսպապատերը կարծես լրացնում են ժայռապատնէշների տարբեր մակարդակներում ընթացող եւ դէպի գագաթ աստիճանաձեւ բարձրացող բնական պատերի ամբողջական համակարգը: Բոլորաբերդի ներսի տարածութիւնը պարագծով քիչ հարթեցուած է եւ յարմարեցուած աշխարհիկ կառոյցների շինարարութեան համար, իսկ միջին հատուածը թողնուած է բնական ձեւով, որտեղ հսկայածաւալ բազալտէ ժայռաքարերն անկանոն ձեւով լցուած են իրար վրայ (պատկ.261): Ամրոցի բուրգերը հինգն են, որոնցից պահպանուել են չորսը՝ երկուսը քիչ դուրս արտայայտուած, սնամէջ, ձուածիր, երկուսը՝ կիսաշրջանաձեւ, հոծ (պատկ.241.3,4,5,6): Առաջին երկուսը եղել են հսկիչ դիտաշտարակներ, որտեղից լաւ տեսադաշտ է բացւում դէպի ամբողջ ձորահովիտը: Այս բուրգերի սնամէջերը կրկնում են արտաքին ձուածիր յօրինուածքը եւ քօղարկուած են փլատակներով: Բուրգերի պատերի շարուածքն արուած է բերդապատերի շարուածքի նման, իսկ հաստութիւնը տատանւում է 180–200սմ (պատկ.257,263):

Բերդի մուտքից քիչ արեւելք պահպանուել է թաղակապ, յատակագծում՝ ուղղանկիւն, երդիկաւոր կառոյցի համեմատաբար լաւ պահպանուած շինութիւնը (պատկ.251.9)։ Հողի մակարդակը ժամանակի ընթացքում այնքան է բարձրացել, որ թաղակապ կառոյցի ծածկը արտաքինից հաւասարուել է տեղանքին։ Շինութիւն ներս մտնելն այսօր անհնար է, սակայն Տարագրոսի չափագրութեան մէջ պահպանուել են այս կառոյցի կտրուածքն ու յատակագիծը, որոնց համաձայն՝ այն հիւսիսային եւ հարաւային կողմերից ունեցել է լուսամուտներ, իսկ արեւմուտքից՝ մուտք։ Դժուար է առանց պեղումների ճիշտ բնորոշել նրա նշանակութիւնը։ Տարագրոսը այս կառոյցն անուանում է պարզապէս «սենեակ», որից մօտ 15մ հիւսիս՝ բլրի ժայռագագաթի հակադիր կողմում է յատակագծում կլոր, կոնաձեւ, մօտաւորապէս 2.5մ բարձրութեամբ ջրամբարը (պատկ.251.8)։ Այն կառուցուած է բազալտէ կիսամշակ քարերի անկանոն շարուածքով, որի ներսի մակերեսին մնացել է սուաղի ծածկոյթի մի փոքր հատուած (պատկ.265)։ Ջրամբարի յատակը նոյնպէս լցուած է քարերով եւ հողով, բայց նրա չափերն ու յօրինուածքը պարզորոշ տեսանելի են։ Ամրոցապատերից ներս պահպանուած ու երեւացող հատուածներից են նաեւ արեւելեան երկարութեամբ ընթացող սենեակների հետքերը (պատկ.251.10), որոնց ճշգրիտ տեղադրութիւնը, չափերը եւ նշանակութիւնը հնարաւոր է պարզել միայն հնագիտական պեղումներով ի յայտ եկած ճարտարապետական արժէքների ուսումնասիրութեամբ։ Համոզուած ենք, որ այդ աշխատանքների ժամանակ կը յայտնաբերուեն նաեւ ստորերկրեայ անցուղին եւ անշան պահպանուած ջրմուղի ամբողջական հատուածները։

Բոլորաբերդ ամրոցը տեղընտրութեան սկզբունքով եւ դիրքորոշմամբ նման է Սիւնիքի Ալանա (Վայոց ձոր գաւառ), Երնջակ (Երնջակ գաւառ, պատկ.266), Շահապոնք (Շահապոնք գաւառ, պատկ.546), Աղջկաբերդ եւ Նահատակ (Նախիջեւան գաւառ) ամրոցներին, իսկ որպէս ճարտարապետական յօրինուածք՝ այն պատկանում է ներփակ բերդապարիսպներով դղեակամրոց պաշտպանական կառոյցի տեսակին։ Այս իմաստով այն կարելի է համեմատել Արցախի Ղալաչայ՝ ԺԳ. դար, եւ Արագածոտնի Գուսանագիւղ (նախկինում՝ Ղափլի)՝ ԺԲ–ԺԳ դարեր (պատկ.267,268), ամրոցներին հետ։ Յատակագծային յօրինուածքով Բոլորաբերդը զարմանալիօրէն նման է Կիլիկիայի Կոռիկոս՝ ծովային ամրոց (պատկ.269)[282], Յենի Կյոյ (պատկ.270) եւ Չարդակ (պատկ.271) բերդերին։ Կիլիկեան այս երկու ամրոցները եւս ունեն դղեակներին յատուկ ներփակ բերդապարիսպներ, որոնց բազմանկիւնների 7 կողմերն անկիւններում ամրացուած են տարբեր յօրինուածք ու նշանակութիւն ունեցող աշտարակներով եւ որմահեց-բուրգերով։ Կոռիկոս ամրոցի յատակագծի բազմանիստ հարաւարեւմտեան անկիւնը նոյնպէս 90 աստիճան է, սակայն, քանի որ այստեղ բեկեալի կողմերն աւելի երկար են, անկիւնում տեղադրուել է ուղղանկիւն բուրգը։ Յատակագծային այս նմանութիւնները խօսում են այն մասին, որ ամրոցի այս տիպը, ստեղծուելով Բիւզանդիայում եւ տարածուելով ու զարգանալով Հայաստանի տարբեր շրջաններում, կիրառուել է թագաւորական եւ իշխանական ռազմավարական ընդարձակ ծրագրերն իրականացնելիս։

282. Կոռիկոսը բաղկացած է երկու՝ ցամաքային եւ ծովային ամրոցներից։

Բոլորաբերդ-Պռոշաբերդ ամրոցը Պռոշեան իշխանների կառուցած ամենանշանաւոր պաշտպանական ճարտարապետական կերտուածքն է, որը Սիւնեաց աշխարհի բերդերից առանձնանում է տեղընտրութեան եւ բնական խոչընդոտների հմուտ օգտագործմամբ, յատակագծային յօրինուածքով, պատերի շարուածքի զարդամոտիւ յիշեցնող առանձնայատկութեամբ, մուտքային հանգոյցի իւրատեսակ լուծմամբ։ Ամրոցն ու նրան յարակից տարածքը կարիք ունեն հնագիտական պեղումների եւ մասնագիտական պահպանման ու բարեկարգման։ Հայաստանում բերդամրոցների համեմատաբար բարւոք պահպանուած օրինակները շատ չեն։ Ամրոցը լինելով Սպիտակաւոր-Բոլորաբերդ երկկենտրոն պաշտպանական համակարգի լաւագոյն օրինակներից, պէտք է ուսումնասիրուի, վերականգնուի ու ներկայացուի որպէս միջնադարեան Հայասյանի ռազմապաշտպանական կարեւոր կենտրոնը եւ Պռոշեան իշխանների ամրակուռ դղեակը։



Պատկ. 232
Պոօշեաննների (Բոլորաբերդ) տիրապետութիւնը Սիւնիքում, ԺԲ–ԺԳ դարեր, գծագիրը՝ հեղինակի

232




233

Պատկ. 233
Թանահատի վանական համալիրը,
ԺԳ. դար



234

Պատկ. 234
Պոռշեանների զինանշանի բեկորը
(այժմ ամրոցում չէ)



Պատկ. 235
Բերդամրոցների տեղադրութիւնը Բոլորաբերդի (Պոռշաբերդ) սիրոյթում, ԺԲ–ԺԳ դարեր, գծագիրը՝ հեղինակի

235



236

Պատկ. 236
Բոլորաբերդ ամրոցի
համայնապատկերը՝ ԱԹՍ-ից




237

Պատկ. 237
Ագարակաձոր ամրոցի ժայռացիցը



238

Պատկ. 238
Երնջակ ամրոցի Աժդահակ
ժայռացիցը




239

Պատկ. 239
Բոլորաբերդ ամրոցի եւ
Սպիտակաւոր վանքի
դիրքադրութիւնը՝
ըստ Google Eartht-ի



240

Պատկ. 240
Բոլորաբերդ ամրոցի եւ
Սպիտակաւոր վանքի
համայնապատկերը



Պատկ. 241
Ամրոցը եւ շրջակայ ռազմական բոլոր շինութիւնները (Սմբատաբերդ, Եղէգնաձոր, Ապանայ, Նորաշէն, Էրդ(թ)իչ, Ագարակաձոր ամրոցները), գծագիրը՝ հեղինակի

241



Պատկ. 242
Ամրոցի համայնապատկերը՝
Ցաղաց Քար վանքից


242

Պատկ. 244
Ամրոցի ընդհանուր տեսքը՝
ուղղաթիռից

Պատկ. 243
Ամրոցի յատակագծի
չափագրութիւնը՝ ըստ
Տարագրոսի, 1934
1,4,8. Գլխաւոր մուտք
2. Կից շինութիւններ
3. Ջրաւազան
5. Բացուածք
6. Աշտարակներ
7. Ուղղանկիւն կառոյց



244



Բոլորաբերդ ամրոցի չափագրութիւնը
ըստ Տարագրոսի (1934թ):

243



245

Պատկ. 245
Բոլորաբերդ ամրոցի կոնաձեւ բլուրը



246

Պատկ. 246
Ամրոցի ընդհանուր տեսքը՝ հիւսիս-արեւելքից՝ ուղղաթիռից



247

Պատկ. 247
Ամրոցի ընդհանուր տեսքը՝
արեւելքից



249


Պատկ. 249
Ամրոցի տեսքը հիւսիսից՝
ուղղաթիռից



250

Պատկ. 250
Բոլորաբերդ ամրոցի
հիւսիսարեւմտեան կողմի առանձին
կանգնած պարսպապատի գծամասը

Պատկ. 248
Բոլորաբերդ ամրոցի
չափագրութիւնը, հեղինակ՝
Արա Զարեան, 1986




248



Պատկ. 252
Ամրոցի տեսքը հիւսիսից՝ ԱԹՍ-ից

252

Պատկ. 251
Բոլորաբերդ ամրոցի գլխաւոր յատակագիծը, չափագրութիւնը՝ Արա Զարեանի, 1986
1. Գլխաւոր մուտք
2. Մուտքի ծուղակ-նրբանցքը
3,4,5,6. Աշտարակ-բուրգեր
7. Առանձին պարսպապատ
8. Ջրահաւաք աւազան
9,10. Կից շինութիւններ



251



253



254

Պատկ. 253
Բոլորաբերդ ամրոցի ընդհանուր տեսքը

Պատկ.
254–256 Ամրոցի պատերի շարուածքների մանրամասեր



255



256

Պատկ. 257
Պարսպապատի միդիս շարուածքի մանրամաս

Պատկ. 258
Պատմական լուսանկար (ՀՊԹ, սեւանկար № 2090, 1934)

Պատկ. 259.1
Օսէթիայում տարբեր կառոյցների պատերի շարուածքների յարդարանքներ
(А. Гольдштейн, *Башни в горах*, Советский художник, Москва, 1977)




257




258


Պատկ. 259
Պոօշաբերդ ամրոցի պատերի շարուածքների յօրինուածքները.
Գծագիր 7
Ա,Բ. «Ձկան ողնաշար»,
Գ. Մէկ ուղղահայեաց եւ մէկ հորիզոնական քարերի շարուածք,
Դ. Իրար յաջորդող մէկ ուղղահայեաց եւ մէկ հորիզոնական քարերի շարուածք,
Գծագիր 6
Պարսպապատերի միդիս շարուածքի քարերի մշակման տարբերակ



259.1



Գծագիր 7




Գծագիր 8

259



260

Պատկ. 260
Ամրոցի մուտքի սրբատաշ թաղի մանրամաս



261

Պատկ. 261
Ամրոցի տեսքը՝ ուղղաթիռից (1980-ականներ)



262

Պատկ. 262
Պատմաբան Արմեն Ղարագեօզեանի հետ՝ Բոլորաբերդ բարձրանալուց առաջ, 1986



263

Պատկ. 263, 264
Ամրոցի պարսպապատերի շարուածքի յարդարանքներ



264

Պատկ. 265
Ամրոցի կլոր ջրամբարի՝ սուաղից զուրկ ներքին պատը



265




266

Պատկ. 266
Երնջակ ամրոցի հսկայ ժայռազանգուածը

Պատկ. 267
Գուսանգիւղի ամրոցը




267




Պատկ. 268
Գուսանագիւղի ամրոցի յատակագիծը (հեղինակ՝ Ֆ. Դանգլես)

268




Պատկ. 269
Կիլիկիայի Կոռիկոս ծովային ամրոցի յատակագիծը (հեղինակներ՝ Հերցֆիլդ, Գույեր)

269



Պատկ. 270
Կիլիկիայի Եէնիքոյ ամրոցի
յատակագիծը (հեղինակ՝
Ռոբերտ Վ. Էդվարդս)

270



Պատկ. 271
Կիլիկիայի Չարդակ ամրոցի
յատակագիծը (հեղինակ՝
Ռոբերտ Վ. Էդվարդս)

271

4.12. Եղեգիք (Սմբատաբերդ) ամրոց, 39°52’18”N, 45°20’18”E, ք.ծ.մ. 1.857 մ

Եղեգիք ամրոցը կամ Սմբատաբերդը[283], այդպէս են անուանում տեղաբնակները, գտնւում է Բոլորաբերդից 5,4կմ հիւսիս-արեւմուտք (պատկ.272)։ Պաշտպանական այս կառոյցը տեղադրուած է բարձրադիր կղզենման դարաւանդի եռանկիւնաձեւ գագաթին, որն արեւելքից եւ հարաւից եզերուած է Եղեգիս, արեւմուտքից՝ Արտաբունի անդնդախոր ձորերով (պատկ.273,274,275,276)։ Ամրոցի շրջակայքը հարուստ է միջնադարեան պաշտամունքային եւ վարչական նշանակութեան կառոյցներով։ Ամրոցից արեւելք՝ Եղեգիս, եւ հարաւ-արեւմուտք՝ Հոստուն գիւղերի միջեւ ընկած, մօտ կմ երկարութեամբ, Սիւնեաց վարչական կենտրոն Եղեգիս իշխանանիստ քաղաքը Թ–ԺԳ դարերում եղել է Սիւնեաց գահերէց իշխանների ոստանը եւ աթոռանիստը[284]։

Եղեգիս ամրոցն իր դիրքադրութեան առանձնայատկութեամբ եղել է Եղեգիս քաղաքի ռազմավարական հենակէտը։ Ղ. Ալիշանն այս կապակցութեամբ գրում է. «...որոց գլխաւոր համալիր է Բերդն, պահապան արքունեաց եւ ամենայն ճոխութեանց տեղւոյն, կանգնեալ ի Մ. Հս. քաղաքաւանին...»[285]։ Եղեգիսն անուանում են նաեւ ամրոց-քաղաքաւան[286], սակայն պէտք է նկատի առնել, որ բնակավայրի եւ պաշտպանական կառոյցի նման դիրքադրութիւնից չի հետեւում, որ ամրոցը եղել է Եղեգիքի միջնաբերդը։ Այս երեւոյթը բնորոշ է բերդաքաղաքներին, որոնք ունեն իրենց յօրինուածքային առանձնայատկութիւնները եւ դարերից եկող ու լաւ մշակուած ճարտարապետաքաղաքաշինական աւանդոյթները։ Մեր քննարկուող օրինակում խօսքը իշխանանիստ կենտրոնի եւ նրան յարակից, դեռեւս Ե. դարում գոյութիւն ունեցող[286] եւ Սմբատ Օրբելեան «աստուածազօր իշխանի»[288] օրոք հիմնովին վերակառուցուած պաշտպանական կառոյցի մասին է, որը, իշխանանիստ դղեակամրոց լինելուց բացի, պաշտպանելու էր Եղեգիս «նստոցը»։

Եղեգիսում էին Սիւնեաց Սմբատ Օրբէլեանի պալատը եւ արքունական ապարանքները։ Ամրոցի շրջակայքում մինչեւ այսօր պահպանուել են եկեղեցիներ, որոնց մասին Ղ. Ալիշանը յիշատակում է. «...– Յետին յիշատակողն Եղեգեաց, զոր գտաք, յելս ԺԵ. դարու, երիս ասէ՝ այլ չորս եկեղեցիս անուանէ ի նմին. Ասելով, «ընդ հովանեաւ երից տաղաւարացոյ, Սուրբ Կաթողիկէիս եւ Սուրբ Աստուածածնիս, եւ Սուրբ Ստեփաննոսիս, եւ կենդանարար Սուրբ Նշանիս». չորս եկեղեցիս առանց անուան յիշէ եւ Ջալալեանն յայլեւայլ կողմանս աւանին եւ բերդին, ...»[289]։ Բերդի շրջակայքի աւերակները նկարագրելիս պատմիչը բերում է հետեւեալ վկայութիւնը. «Առ ստորոտով բերդին եւ շուրջ զգեօղիւն եւ ի խոնարհ մինչեւ յՈստին գիւղ, դժուարակոխ ձորավայրն լի էր գերբըկօք տանց, աղօրեաց, ձիթահանից, խաչվիմաց. ...»[290]։

Ամրոցի մասին յիշատակութիւններ ունեն Ստեփանոս Օրբէլեանը, Սարգիս Ջալալեանցը, Ասողիկը, Ղեւոնդ Ալիշանը։ Ջալալեանցը Եղեգիս աւանը եւ բերդը սխալմամբ կոչել է Ցախացքար՝ ամրոցի դիմաց գտնուող եկեղեցական համալիրի անունով[291]։

Եղեգիս ամրոցն այժմ իր աւերակներով գրաւում է մօտ 125հա մակերես, որի շեղանկիւնանման տարածքը սուր անկիւններով ձգւում է հիւսիսից-հարաւ (պատկ.277)։ Շեղանկեան երկայնական ներքնագիծը մօտ 500մ է, իսկ լայնականը 250մ։ Ամրոցապատերի չընդհատուող շարքը սկիզբ է առնում արեւելքից (պատկ.278,1), բարձրանում շեղանկեան հիւսիսային ծայրը, որտեղ 180 աստիճան կազմելով ընթանում է դէպի հարաւ-արեւմուտք (պատկ.278,6) եւ աւարտւում՝ հպուելով հրուանդանի ժայռալանջ բնական պատնէշներին (պատկ.278,13)։ Ձեռակերտ այս հատուածի երկարութիւնը մօտ 470մ է։ Պարսպապատերի այս ամբողջ հատուածը կառուցուած է աստիճանաձեւ՝ պատերի հաստութեան հաշուին մարտահարթակ ստեղծելու նպատակով, որի չափերը տատանւում են 2,5–4,0մ։ Պատերի բեկման անկիւններում տեղադրուած են 13 կիսաշրջան հոծ եւ սնամէջ աշտարակներ, որոնք ծառայել են որպէս դիտակէտեր ու պահակակէտեր (պատկ.278,1–13)։

Այս աշտարակները տարբերւում են այլ ամրոցների նման կառոյցներից։ Սմբատաբերդում բուն աշտարակ եւ բուրգ կարող են համարուել պատկ.278-ի 1,2,3,4,5 եւ 7-ը, իսկ միւսները՝ 2,6,8,9,10,11,12,13-ը, որոնք թեեւ չունեն այս պաշտպանական տարրին

283. Սմբատաբերդ անունով ամրոց կայ նաեւ Բարձր Հայքի Մանանաղի գաւառում։ Այն յիշատակւում է Լաստիվերտցին՝ 1048-ին բերդի գրաւման կապակցութեամբ։ Հ.Միքաէլ Յովհաննէսեան, նշ.աշխ., էջ 29։ «...Աւանդեն բնակիչք կողմանցն՝ Սմբատայ շինեալ զբերդս, յիւր անուն Սմբատայ բերդ կոչելով. եթէ ստոյգ իցէ՝ ի Ձահ գայ այս Մեծն անուանեալ Սմբատայ գահերէց իշխանի, որ՝ ամրութեամբ կայանին ձեռնունայն դարձոյց զգօրավարն Յուսփայ. բայց, որպէս ակնարկեցի, ոչ յիշի ընդ ամուրս Սիւնեաց՝ յայս անուն բերդ...»։ Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 148։

284. Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968, էջ 215։

285. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 148։

286. Ա.Ա. Ասլանյան, Խ.Ա.Ավետիսյան, *Զանգեզուր*, Երեւան, 1975, էջ 46։

287. Հ. Եղիազարյան, նշ. աշխ., էջ 52։

288. Մտ. Օրբելյան, Երևան, 1986, էջ 230։

289. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 148։

290. Նոյն տեղում։

291. Հ.Միքայէլ Յովհաննէսեան, նշ. աշխ., էջ 363–364։

բնորոշ յօրինուածք, սակայն իրենց տեղընտրմամբ եւ գծագրմամբ ծառայում են նոյն նպատակին (պատկ.279)։ Այս հնարքի օգտագործումը Սմբատաբերդում բացատրւում է նրանով, որ այստեղ նախ պարսպապատերի ընդհանուր երկարութիւնը մեծ էր, եւ նպատակայարմար չէր ունենալ բազմաթիւ աշտարակներ բոլորապատերի իւրաքանչիւր բեկման անկիւնում, եւ յետոյ այստեղ պարսպապատերի ողջ երկարութեամբ ընթանում է աստիճանաձեւ մարտահարթակ, որը մարտ վարելու եւ հսկելու հնարաւորութիւն է տալիս ամրոցի պատերի ցանկացած կէտից (պատկ.280)։ Այսպիսի հնարքի հանդիպում ենք նաեւ Կիլիկիայի Սավրայնդա (պատկ.281), Կիզ (պատկ.282), Ազգիթ (պատկ.283) ամրոցներում, որտեղ աշտարակները տեղադրուած են պարսպապատերի բեկման հատուածներում, որն ունի նաեւ կառուցողական նշանակութիւն։

Սմբատաբերդ ամրոցի սխեմատիկ յատակագիծ գտել ենք 1976-ին Դարմստադտում Արա Բերքեանի *Armenischer Wehrbau im Mittelanter* աշխատութիւնում (պատկ.284)։ Այստեղ հեղինակը նշել է միայն հարաւարեւելեան՝ երկու կողմից կիսակլոր աշտարակներով ամրացուած եւ դէպի Եղեգիսի ձոր նայող մուտքը։

Ամրոցն ունի երեք մուտք, որոնցից գլխաւորը տեղադրուած է հիւսիսում՝ շեղանկեան սուրանկեան կողմով՝ գագաթից քիչ ներքեւ՝ արեւմտեան պատի մէջ (պատկ.278.Բ, պատկ.285), իսկ երկուսը՝ համապատասխանաբար՝ արեւելեան (պատկ.278.Ա, պատ.286) եւ արեւմտեան (պատկ.278.Գ, պատկ.287) կողմերում։ Ղեւոնդ Ալիշանը բերդը նկարագրել է հետեւեալ կերպ. «...հզօր պարսպօք ամրացեալ տաշածոյ եւ անտաշ քարամբք, տասնեակ խրոխտ աշտարակօք, որք երեքկարգեան են առ դրամբքն կամ տկարագոյն կողմամբք բերդին որ է հիւսիսի, մի ի վերայ միւսոյն. քանզի յայլոց կողմանց քարաժայռք պարսպէն գնա. ...Երեք դրունք են բերդին, աւագն ի հիւսիսոյ կուսէ, որոց տեղիք փեղկիցն եւ նգաց նշմարին ցարդ. նոյնպէս եւ իբր 130 սենեկաց առ ստորոտով պարսպացն եւ ի միջավայր բարձրաւանդակին. անաղարտ կան տակաւին ջրամբարք բերդին»[292]։ Ամրոցի այսչափ մանրամասն նկարագրութիւնը հազուադէպ երեւոյթ է, ուստի այն առանձնայատուկ հետաքրքրութիւն ունի։ Եղեգիք ամրոցի զբաղեցրած տարածքը բաժանւում է երկու մասի՝ հիւսիսային եւ հարաւային (պատկ.288)։ Սա արուած է նախ այն պատճառով, որ ամրոցատեղին երկարութեամբ ձգուող տարածութիւն է, որի հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտք անկիւնագծային առանցքի վրայ, իրարից մօտ 25մ հեռաւորութեամբ, կան բնական երկու քարաժայռ բարձունքներ, որոնք եղել են ամրոցի երկու մասերի «միջնաբերդերը» (պատկ.289, պատկ.278.Դ,Ե)։ Երկու մասի բաժանուած լինելու միւս պատճառաբանութիւնը բխում է ռազմավարական պահանջներից։ Եթէ թշնամուն յաջողուէր գրաւել ամրոցի բուն՝ հիւսիսային մասը՝ ներխուժելով Եղեգիքի գլխաւոր մուտքից (պատկ.290), ապա ամրոցի պաշտպանները կարող էին տեղափոխուել հարաւային ամրոց, որը ժամանակին հիւսիսային մասից բաժանուած է եղել առանձին պարսպապատով (պատկ.278,14, պատկ.291), եւ կազմակերպել նոր դիմադրութիւն։ Ամրոցի հիւսիսային մասն ունի երկու մուտք՝ հիւսիսարեւմտեան (պատկ.278.Բ, պատկ.292), որի բնական խոչընդոտների դիրքադրութիւնը հնարաւորութիւն էր տալիս թշնամու համեմատաբար դիւրին մօտեցմանը, եւ հիւսիս-արեւելեան (պատկ.278.Ա, պատկ.293), որտեղ մուտքից անմիջապէս յետոյ սկսւում է գահավէժ, ժայռապատ կիրճը դէպի Եղեգիսի ձորը (պատկ.294)։ Այս մուտքը ծառայել է որպէս կապի միջոց ստորոտի գիւղաւանի հետ, իսկ հիւսիսարեւմտեանը՝ որպէս հարաւային ամրոցամասի գլխաւոր մուտք (պատկ.278.Գ պատկ.295)։ Այս երեք մուտքերն ունեն հետաքրքիր ճարտարապետական, շինարարական եւ ռազմավարական տարբեր յօրինուածքներ։ Բոլորը եղել են թաղակապ, սրահաւոր, առանց անցուղիների եւ պաշտպանուել են տարբեր յօրինուածք ունեցող պահակակէտերով, բուրգերով ու հսկիչ-աշտարակներով։ հիւսիսարեւմտեան մուտքը պահպանուել է բաւական լաւ (պատկ.296), որը հրուանդանի այն կողմում է, որտեղից բնական պայմանները հնարաւորութիւն են տալիս բարձրանալու գագաթ։ Այս հատուածի լանջը քարքարոտ է, սակայն զոյգ ժայռագանգուածներն ուղղահայեաց վեր են խոյանում ընդհուպ մինչեւ ամենավերին մակարդակ, որտեղ կառուցուել են

292. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 148։

ամրոցի վեհաշուք, հուժկու եւ բրգաձեւ պարսպապատերը: Ամրոցի գլխաւոր մուտքը տեղադրուած է համեմատաբար ուղղագիծ պարսպապատի մօտաւորապէս միջին մասում՝ պարսպապատի առանցքից մօտ 23մ դէպի հիւսիս, այնպէս, որ ստեղծւում են լաւ տեսադաշտ եւ յարմար պաշտպանական հարուածի ուղղութիւն՝ մուտքի վրայ տեղադրուած պահակակէտից: Ամրոցի գլխաւոր մուտքի սլաքաձեւ, քիչ դուրս արտայայտուած որմնակամարն իր վրայ կրում է բացուածքի ամբողջ լայնութեամբ դէպի վեր ընթացող, սրբատաշ քարերից ուղղահայեաց պատը, որի վրայ պահպանուել են պահակատան բազալտէ կոպտատաշ քարերից շարուած պատերի աւերակ մնացորդները (պատկ.297):

Մուտքից ներս, անմիջապէս նրան հպուած, պահպանուել են անկանոն պատերից կազմուած նեղ անցում եւ ոչ երկրաչափական յօրինուածք ունեցող սենեակի պատերի փլատակներ՝ մօտ 0,8–1մ բարձրութեամբ: Այս մասին կից են նաեւ պարսպապատի երկարութեամբ ընթացող միւս աշխարհիկ բնոյթի սենեակների շարքերի աւերակները (պատկ.298): Հնարաւոր է, որ առաջինները ծառայած լինեն որպէս մուտքի հանգոյցին առնչուող անցախուց:

Սրահաւոր մուտքի թաղը նոյնպէս կառուցուած է սրբատաշ, խնամքով շարուած բազալտէ միջին չափերի միակոր քարերից (պատկ.299): Թաղն աւարտւում է պատի ներքին մակերեւոյթից կրկնակի՝ նոյնպէս սրբատաշ որմնակամարներով, որոնք հենւում են սլաքաձեւ աղեղների հորիզոնական տրամագծի մակարդակին թողնուած եւ ուղղանկիւն հատոյթ ունեցող պարզ խոյակների վրայ, որոնք իրենց հերթին քիւ են կազմում թաղի եւ պատերի միացման երկարութեամբ (պատկ.300): Մուտքի ներսի պատերին թողնուած են հորիզոնական անցքեր, որոնք ծառայել են հաւանաբար փայտէ ծանր դռան (չի պահպանուել) փականի համար: Մուտքի ներսի պատի մակերեւոյթին՝ անմիջապէս որմնակամարի վրայ, պահպանուել է ուղղանկիւն բացուածքով հատուած, որն այժմ քօղարկուած է անկանոն շարուած եւ առանց շաղախի պատով: Հաւանօրէն սա է եղել պահակակէտի մուտքը ներսի կողմից, իսկ նրա լուծումն արտաքինից հնարաւոր չէ վերականգնել՝ վատ պահպանուած լինելու պատճառով:

Գլխաւոր մուտքից ներս՝ աջ եւ ձախ կողմերում պահպանուել են բազմաթիւ իրար հպուած ու պարսպապատերին կցուած, տարբեր բնոյթի ուղղանկիւն եւ անկանոն հատակագծերով սենեակների պատերի ստորին հատուածները (պատկ. 278. Ա, պատկ.301): Ղ. Ալիշանը, ինչպէս արդէն տեսանք, Եղեգիք ամրոցում փաստագրում է 130 սենեակ, ուստի կարելի է ենթադրել, որ բարւոք վիճակում ամրոցն ունեցել է բաւական մեծ տընտեսութիւն եւ տարբեր բնոյթի կառուցուածքներ:

Հարաւային ամրոցի մուտքը գտնւում է գլխաւոր մուտքից 95մ հարաւ-արեւմուտք, այն մասում, որտեղ պարսպապատը բութ անկիւն է կազմում եւ, ընթանալով դէպի արեւմուտք, միանում է բնական ժայռապարիսպներին (պատկ.278,Գ, պատկ.302): Այս մուտքի դիրքադրութիւնը եւս համապատասխանում է ռազմավարական պահանջներին: Այն նոյնպէս տեղադրուած է պատի առանցքից շեղ այնպէս, որ թշնամին, անցնելով պարսպապատերի ստորոտով, յայտնւում էր փակ՝ բութ անկիւն կազմող պարիսպների շրջափակման մէջ, որից 20մ դէպի արեւմուտք հարաւային ամրոցի մուտքն էր: Այս մուտքի պաշտպանները կարող էին անկեան տակ հակահարուած հասցնել ամրոցապատի երկարութեամբ դէպի մուտք ընթացող թշնամուն (պատկ.303):

Հիւսիսային մուտքի նման սա նոյնպէս թաղակապ, սրահաւոր է, որից պահպանուել են միայն երկայնական, կրող, սրբատաշ բազալտէ պատերը եւ արտաքին զոյգ որմնակամարները՝ իրենց պարզ քիւերով ու որմնասիւներով: Հարաւային ամրոցի մուտքը, ի տարբերութիւն հիւսիսայինի, կիսաշրջանաձեւ կամար է ունեցել, որը չի պահպանուել: Մուտքի թաղի վրայ եւ նրանից արեւմուտք աւերակ հսկիչ պահակատունն է, որի վերականգնումը հնարաւոր է միայն պեղումների միջոցով:

Հիւսիսային ամրոցի երկրորդ մուտքը դիրքորոշուած է արեւելքում՝ շեղանկիւն հարթակի հիւսիսակողմ անկիւնից մօտ 20մ հարաւ (պատկ.278.Ա, պատկ.304): Դրսի կողմից այն ամրացուած է աջ եւ ձախ տեղադրուած մէկական կիսաշրջան, սնամէջ բուր-

գերով, որոնք հենւում են դէպի Եղեգիքի ձոր ուղղահայեաց իջնող ժայռերի վրայ: Այս մուտքը սրահաւոր է, թաղակապ, որի որմնակամարները, թաղը եւ կողային պատերը շարուած են կանոնաւոր սրբատաշ բազալտից՝ կրաշաղախով (պատկ.305): Ի տարբերութիւն գլխաւոր մուտքի՝ այստեղ թաղը կիսաշրջան է, որը նոյնպէս հենւում է ուղղանկիւն, երկայնական պատերով ընթացող քիւերի վրայ: Այս մուտքին ստորոտից մօտենալը չափազանց դժուար է՝ քարաժայռ, ուղղահայեաց բնական ռելիեֆի պատճառով, սակայն այստեղից չափազանց լաւ երեւում են ողջ ձորն ու հին բնակատեղին: Մուտքի երկու կողմերի աշտարակների տրամագծերն ու դիրքադրութիւնը նպաստել են, որ ամրոցի պաշտպաններն ունենան լաւ տեսադաշտ եւ բաւական մեծ բարձրութիւնից խաչուող անկիւնագծով հարուածի հնարաւորութիւն (պատկ.306):

Մուտքից աջ եւ ձախ կառուցուած աշտարակները, որոնք արտաքինից բաւական լաւ են պահպանուած (պատկ.307), ունեն հաստաւուն պատեր՝ 1,5–1,8մ, իսկ նրանց տրամաչափը հնարաւորութիւն է տուել ունենալու ներքին մասնատում՝ հարկերով, որոնք հաղորդակցուել են քարէ նեղ աստիճաններով: Այս հատուածը, ցաւօք, նոյնպէս քօղարկուած է փլատակներով, որի պատճառով անհնար է վերականգնել նրա կտրուածքը: Այս վերջին տարիներին ամրոցում արուել են վերականգնման ու վերակառուցման ոչ այդքան յաջող փորձեր (պատկ.308): Զոյգ աշտարակներով ամրոցների մուտքերը յաճախ կիրառուել են հայկական պաշտպանական կառոյցներում, ինչպէս նաեւ վանքամրոցներում. օրինակ՝ Անիի բերդը (պատկ.309), Ախթալայի (պատկ.310), Սաւրայնդայի (պատկ.311), Թամրուտի (պատկ.312), Սայմբեյլի (պատկ.313), Լոռիի (պատկ.314) ամրոցները:

Արխիւային ուսումնասիրութիւնների ժամանակ Հայաստանի պատմութեան պետական թանգարանի սեւսպիտակների (նեգատիւների) ֆոնդից մեզ յաջողուեց գտնել 1930-ական թուականներին կատարուած լուսապատկերներ եւ 1934-ի սեպտեմբերին Տարագրոսի (Տեր Վարդանեան, 1878-1953) գծած Եղեգիքի ամրոցի յատակագիծը (սեւանկար № 2.990, պատկ.284): Ինչպէս արդէն ասուեց, Տարագրոսի չափագրութիւնը բաւական սխեմատիկ է եւ արտացոլում է միայն ամրոցի հիւսիսային[293] անկիւնն իր պարսպապատերով, երեք մուտքերով ու աշխարհիկ սենեակների հետքերով:

293. Տարագրոսի յատակագծում հիւսիսը շփոթուած է արեւմուտքի հետ:

Պարսպապատերի չընդհատուող ժապաւէնը ձգւում է արեւմուտքից, անցնում դէպի հիւսիս եւ աւարտւում արեւելքում՝ զոյգ պահակ-բուրգերով ամրացուած մուտքից քիչ ներքեւ: Տարածքի հարաւային, երկարաւուն եզրն իր բնական, ուղղահայեաց, զառիվայր ժայռապատնէշների շնորհիւ անառիկ էր թշնամու համար եւ այդ պատճառով չունէր ձեռակերտ արգելքներ (պատկ.315):

Այս մասում կան եզրային դասաւորութիւն ունեցող բազմաթիւ ուղղանկիւն կառոյցների պատերի խմբային մնացորդներ (պատկ.316):

Ինչպէս աշտարակները, այնպէս էլ պատերը եռաշերտ կառուցուածք ունեն: Պատերի արտաքին եւ ներքին մակերեւոյթները շարուած են կիսամշակ, միջին չափերի բազալտէ քարերից՝ հորիզոնական կարաններով: Քարերն ունեն դէպի պատի միջուկը սուր ծայրերով ուղղուած եռանկիւնաձեւ երկար պոչեր, որոնք կապակցւում են շաղախով եւ դառնում ամուր զանգուած: Ամրոցապատերի շարուածքի այսպիսի արհեստավարժութիւնն աւանդական է եւ միշտ օգտագործուել է հայկական պաշտպանական կառոյցներում[294]:

294. Այսպիսի արհեստավարժութեամբ են կառուցուել նաեւ Անիի Աշոտաշէն պարիսպները: Ստ. Մնացականյան, նշ.աշխ., էջ 14:

Եղեգիքի ամրոցն ունեցել է ջրմուղ, որի կաւէ խողովակաշարի հետքերը պահպանուել են: Ըստ աւանդութեան՝ ջուրը բերուել է Ցախացքար վանքից: Արեւմտեան ժայռապատերի վրայ պահպանուել է կլոր անցք, որը ենթադրել է տալիս, որ այն եղել է ամրոցի գետնուղու մուտքը:

Եղեգիքի բերդն իր յատակագծային յօրինուածքով նման է Լոռեբերդին (պատկ.317), Ամբերդին (պատկ.318) եւ Կիլիկիայի ամրոց՝ Սաւրայնդային (պատկ.319):

Պատմական Տաշիր-Զորագէտ նահանգի Լոռեբերդը, չնայած եղել է բերդաքաղաք՝

իր երեք աւանդական մասերով[295], սակայն, որպէս յօրինուածքային սկզբունք եւ դիրքընտրութեան պայման, նման է Եղեգիք ամրոցին: Լոռեբերդը կառուցուած է երկու ձորերի՝ Միսխանայի՝ արեւելքից ու հիւսիսից, եւ Ձորագէտի՝ հարաւից, կիրճերով շրջապատուած հրուանդանանման եռանկիւնաձեւ սարահարթին: Այստեղ երկու ձորերի ամբողջ երկայնքով բնական ուղղահայեաց ժայռապարիսպներ են՝ տեղ-տեղ ամրացուած քարաշէն պարսպապատերով, իսկ հրուանդանի արեւմտեան հատուածը պաշտպանուած է քարաշէն պարիսպներով: Հարթակի նեղ մասում կառուցուած է հուժկու եւ հաստահեղոյս ամրոցապատը՝ միջնաբերդը պաշտպանելու համար (պատկ.320):

295. Գ. Ծախկյան, *Լոռի. պատմութեան քարակերտ էջերը*, Երեւան, 1986, էջ 19–20:


Ամբերդը Արագածոտն գաւառի թերեւս ամենանշանաւոր պաշտպանական կառոյցն է՝ երեք կողմից բնականօրէն պաշտպանուած եւ անդնդախոր ձորերով շրջապատուած ժայռածածկ հրուանդանին: յատակագծում ամրոցն ունի արեւելքից արեւմուտք երկայնական ուղղանկեան մօտ տարածք, որն արեւմուտքից ամբողջ հիւսիսային երկարաւուն կողմից եւ արեւելքից պաշտպանուած է բրգաձեւ, աշտարակներով ամրացուած քարակերտ պարիսպներով (պատկ.321): Ամրոցն ունի շինարարական երեք շրջան: Ամրոցի երկայնքով տարածուող եւ միջնաբերդն իր մէջ ներփակող պարսպապատը, որը փաստօրէն բաժանում է ամբողջ տարածքը երկու անհաւասար մասերի, վերագրւում է շինարարական երրորդ փուլին: Այս փաստը բացատրւում է նրանով, որ ԺԳ. դարում ամրոցը կորցրել է իր սկզբնական ռազմավարական նշանակութիւնը եւ ամփոփվել արեւմտեան՝ ամենայուսալի տարածքում, որտեղ ամրոցի մի քանի պարսպապատերի շարքերով լաւ պաշտպանուած, երբեմնի ամբողջ ամրոցի համար ծառայած գլխաւոր մուտքն էր[296]: Ամրոցաբաժան պարսպապատը լաւ չի պահպանուել, սակայն աւերակների ստորին մասերից երեւում է, որ պարսպապատը ամրացուած է եղել կիսաշրջան բուրգերով ու կառուցուել է բաւական հիմնովին եւ ամրակուռ:

296. Ս.Վ. Հարությունյան, *Անբերդ*, Երեւան, 1978, էջ 34:

Կիլիկիայի Սավրայնդա ամրոցը նման է ոչ միայն դիրքընտրութեամբ եւ ամրոցը հիւսիսային ու հարաւային մասերի բաժանող պարսպապատի առկայութեամբ, այլեւ տեղանքի կառուցապատման սկզբունքով (պատկ.322): Սավրայնդա ամրոցի տեղը եւ բնական պայմանները շատ նման են Եղեգիք ամրոցին՝ երկու կողմերից շրջապատուած խորը ձորերի միջանկեալ մասում բարձրացող ժայռագագաթ հրուանդան, շրջապատի նկատմամբ գերիշխող դիրք, ժայռերի եզրագծով կառուցուած բրգաձեւ պարսպապատեր, կիսաշրջան հոծ ու սնամէջ բուրգեր (պատկ.323): Այս սկզբունքային նմանութիւնների հիման վրայ կարելի է ենթադրել, որ պաշտպանական ճարտարապետութեան փորձառութիւնը եւ մի շարք ռազմավարական ու ճարտարապետական աւանդոյթներ փոխանցուել են Հայաստանի ամբողջ տարածքով եւ կիրառուել տարբեր նահանգներում ու գաւառներում:

Եղեգիքի ամրոցն այս առումով նոյնպէս նշանակալի եւ բացառիկ երեւոյթ է Սիւնեաց նահանգի պաշտպանական կառոյցների մէջ:

Պաշտպանական ճարտարապետութեան տեսանկիւնից Վայոց ձորը հարուստ է բերդերով ու ամրոցներով: Այստեղ կարեւոր դեր են խաղացել նաեւ վանք-ամրոցները եւ անապատները. նշանակալի են Ծատի վանքը (պատկ.324), Գնդեվանքը (պատկ.325), Կնեվանքը (պատկ.326), Ամաղու Նորավանքը (պատկ.327): Վանքային այս հաստատութիւնները հիմնադրուել են որպէս մենաստաններ ու անապատներ, այնուհետեւ դարերի ընթացքում կառուցապատուել են, ընդարձակուել եւ ի վերջո ԺՉ–ԺԸ դարերում պարսպապատուել եւ ձեւափոխուել են վանք-ամրոցների: Այս համալիրներից շատերը գործել են մինչեւ ԺԹ. դարի վերջը, յետոյ ամայացել ու լքուել են: 2011-ին ՀՀ մշակոյթի նախարարութեան պատուէրով արուել են Սմբատաբերդի մասնակի վերականգնման աշխատանքներ. ամրացուել ու հարթեցուել են հիմնականում պարըսպապատերի վերնամասերը, ներքին տարածքում տեղադրուել են սալայատակ արահետներ ու աստիճաններ: Սակայն աշխատանքներն անաւարտ են մնացել, եւ անհրաժեշտ գիտահետազօտական պեղումներ չեն արուել:



272

Պատկ. 272
Սմբատաբերդ եւ Բոլորաբերդ ամրոցների դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի



273

Պատկ. 273
Սմբատաբերդի հիւսիսային ամրոցի համայնապատկերը (1980-ականներ)



274

Պատկ. 274
Սմբատաբերդի հիւսիսային ամրոցի գլխաւոր մուտքը (1934, ՀՊԹ, սեւանկար № 2151)



275

Պատկ. 275
Հիւսիսային ամրոցի գլխաւոր մուտքը (1934, ՀՊԹ, սեւանկար № 2157)



Պատկ. 279
Հիւսիսային ամրոցի
պարսպապատէրը (1934, ՀՊԹ,
սեւանկար № 2156)

279

Պատկ. 277
Ամրոցի ընդհանուր
համայնապատկերը՝
ըստ Google Earth-ի



277



Պատկ. 276
Սմբատաբերդի հիւսիսային ամրոցի պարսպապատէրը (1934, ՀՊԹ, սեւանկար № 2159)

276



Պատկ. 278
Սմբատաբերդ ամրոցի տեղահանոյթը (հեղինակներ՝ Ա. Սարգսյան, Կ. Կիդուլին, 1960-ականներ)
1,2,3,4,5,7. բուրգ-աշտարակներ
2,6,8,9,10,11,12,13. Պարսպապատերի անկիւն կազմող տարրեր
14. Հիւսիսային և հարաւային ամրոցների բաժանարար պարսպապատ
Ա. Հիւսիսարեւելեան մուտք
Բ. Հիւսիսարեւմտեան մուտք
Գ. Հարաւային ամրոցի գլխաւոր մուտք
Դ. Միջնաբերդ
Ջ. Պարսպապատի փլուզուած բացուածք

278




279.1

Պատկ. 279.1
Հիւսիսային ամրոցի
պարսպապատէրի մանրամաս (1934,
ՀՊԹ, սեւանկար № 2157)




280

Պատկ. 280
Ամրոցի երկրորդ մուտքի
պարսպապատը՝ 2011-ի
վերանորոգումից յետոյ




Պատկ. 281
Կիլիկիայի Սավրանդա ամրոցի յատակագիծը (հեղինակ՝ Ռոբերտ Վ. Էդվարդս)

281




Պատկ. 282
Կիլիկիայի Կիզ ամրոցի յատակագիծը (հեղինակ՝ Ռոբերտ Վ. Էդվարդս)

282



Պատկ. 283
Կիլիկիայի Ազգիտ ամրոցի
յատակագիծը (հեղինակ՝
Ռոբերտ Վ. Էդվարդս)

283



284

Պատկ. 284
Եղեգիսի բերդի (Սմբատաբերդ)
յատակագիծը՝ ըստ Տարագրոսի,
26–27 սեպտ. 1934



285

Պատկ. 285
Սմբատաբերդ ամրոցի գլխաւոր մուտքը՝ 2011-ի վերանորոգումից յետոյ



286

Պատկ. 286
Ամրոցի երկրորդ՝ արեւմտահայեաց մուտքը



287

Պատկ. 287
Սմբատաբերդ ամրոցի երրորդ՝
արեւելահայեաց մուտքը՝
արտաքինից



288

Պատկ. 288
Հիւսիսային ամրոցի
համայնապատկերը



289

Պատկ. 289
Ամրոցի միջնաբերդը




290

Պատկ. 290
Ամրոցի գլխաւոր մուտքի ներքին հատուածը՝ 2011-ի վերանորոգումից յետոյ



291



292

Պատկ. 291
Սմբատաբերդի հիւսիսային ամրոցի ընդհանուր տեսքը

Պատկ. 292
Ամրոցի հիւսիսարեւելեան պարսպապատը (1934, ՀՊԹ, սեւանկար № 2150)



293



294

Պատկ. 293
Հատուած՝ ամրոցի երկրորդ մուտքից

Պատկ. 294
Ամրոցի երկրորդ մուտքի արտաքին պարսպապատը (1980-ականներ)



295



296

Պատկ. 295
Հատուած՝ ամրոցի երրորդ մուտքից

Պատկ. 296
Ամրոցի երկրորդ մուտքի կողային պաշտպանիչ աշտարակները՝ արտաքինից



298




299

Պատկ. 298
Ամրոցի հիւսիսարեւելեան պարսպապատը եւ կից շինութիւնների մնացօդները (1934, ՀՊԹ, սեւանկար № 2160)


Պատկ. 299
Ամրոցի երկրորդ մուտքի ներքին հատուածը՝ վերանորոգումից յետոյ

Պատկ. 297
Ամրոցի երկրորդ մուտքի չափագրութիւնն ու վերակազմութիւնը՝ ըստ ճարտարապետ Արա Զարեանի, 1986




ՀԳՀՄՆ ՆՔ-Ք ՝ՀԱՀԳՆՀԳԵՀ ՎՀՀՄՊԳՈՆ ՑՈԳԳԱՎՀՈ • ՊՈՒԳՀՄՇ ՈՀՈ

Plan "F"



Elevation 1-1



Elevation

0 1 2 3 4 5 ft.



301

Պատկ. 301
Սմբատաբերդի հիւսիսային ամրոցի
սուր անկեան պարսպապատերը



302

Պատկ. 302
Հատուած՝ ամրոցի երկրորդ մուտքի
ներսից



303

Պատկ. 303
Հիւսիսային ամրոցի արեւելեան
պարսպապատը



304

Պատկ. 304
Հատուած՝ ամրոցի առաջին մուտքի
ներսից



305

Պատկ. 305
Ամրոցի երկրորդ մուտքը. հատուած
արտաքինից




306

Պատկ. 306
Հիւսիսային ամրոցի արեւելեան
պարսպապատը



307

Պատկ. 307
Հիւսիսային ամրոցի երկրորդ
մուտքի պարսպապատերը՝
վերանորոգելուց յետոյ



308

Պատկ. 308
Հատուած՝ հիւսիսային ամրոցի
պարսպապատերից

Պատկ. 300
Սմբատաբերդ ամրոցի գլխաւոր
մուտքի չափագրութիւնը՝ ըստ
ճարտարապետ Արա Չարեանի, 1986



309



310

Պատկ. 309
Անի մայրաքաղաքի «Կարուց»
մուտքի զոյգ աշտարակներով
պաշտպանուած դարպասը

Պատկ. 310
Ախթալայ վանական համալիրի
պարսպապատի զոյգ
աշտարակներով պաշտպանուած
դարպասը



311



312

Պատկ. 311
Կիլիկիայի Սավրանդայ ամրոցի
մուտքի զոյգ աշտարակներով
պաշտպանուած դարպասը

Պատկ. 312
Կիլիկիայի Թամրուտ ամրոցի
մուտքի զոյգ աշտարակներով
պաշտպանուած
դարպասը



313



314

Պատկ. 313
Կիլիկիայի Սայմբէյլի ամրոցի
մուտքի զոյգ աշտարակներով
պաշտպանուած
դարպասը

Պատկ. 314
Լոռի ամրոցի մուտքի զոյգ
աշտարակներով պաշտպանուած
դարպասը




315



316

Պատկ. 315
Սմբատաբերդի հիւսիսային
ամրոցի պարսպապատերի
համայնապատկերը՝
վերանորոգումից յետոյ


Պատկ. 316
Ամրոցի հիւսիսարեւելեան
պարսպապատը եւ կից
շինութիւնների մնացորդները (1934,
ՀՊԹ, սեւանկար № 2164)



Պատկ. 317
Լոռի ամրոցի յատակագիծը՝
ըստ Գառնիկ Ծաղկեանի *«Լոռի. պատմութեան քարակերտ էջերը»* գրքի



Պատկ. 318
Ամբերդ ամրոցի տեղահանոյթը՝ ըստ
Մեսրոպեանի ու Կր. Լեպիկովայի



Պատկ. 319
Կիլիկիայի Սավրանդայ ամրոցի
յատակագիծը (հեղինակ՝
Ռոբերտ Վ. Էդվարդս)

319

Պատկ. 320
Լոռի բերդի համայնապատկերը,
ԺԱ. դար




320

Պատկ. 321
Ամբերդ ամրոցի համայնապատկերը,
ԺԱ–ԺԳ դարեր



321

Պատկ. 322, 323
Կիլիկիայի Սավրանդայ ամրոցի
համայնապատկերը, ԺԱ–ԺԳ դարեր



322



323

Պատկ. 324
Շատին վանք-ամրոցի
համայնապատկերը, Ժ–ԺԴ. դարեր



324

Պատկ. 325
Գնդեվանքի վանք-ամրոցի
համայնապատկերը, Ժ. դար



325

Պատկ. 326
Կնեվանք (Հերմոնի վանք) վանք-
ամրոցի համայնապատկերը, Ժ. դար




326

Պատկ. 327
Ամաղու Նորավանք վանք-ամրոցի
համայնապատկերը, ԺԳ–ԺԴ դարեր



327





Որոտնավանք, տապանաքարի մանրամաս


ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

5.1. ՀԱՐԱՒԱՅԻՆ ՍԻՒՆԻՔ. ԾՂՈՒԿՔ, ԱՂԱՀԵՁՔ ԵՒ ՀԱԲԱՆԴ, ԲԱՂՔ ԵՒ ՁՈՐՔ, ԱՐԵՒԻՔ ԵՒ ԿՈՎՍԱԿԱՆ, ՁԱՀՈՒԿ (ՇԱՀԱՊՈՒՆԻՔ) ԵՒ ԵՐՆՋԱԿ (ԳՈՂԹՆ ՈՒ ՆԱԽԻՋԵՒԱՆ) ԳԱՒԱՌՆԵՐ

5.2. ԾՂՈՒԿՔ ԳԱՒԱՌ
5.3. Շաղատ քաղաքաւանի պաշտպանական համակարգը
5.4. Սիւնի բերդաքաղաքի գծային պաշտպանական համակարգը
5.5. Բորտի ամրոց
5.6. Վասակաբերդ ամրոց
5.7. Որոտնաբերդ-Որոտնավանք երկկենտրոն պաշտպանական համակարգը
5.8. Որոտնաբերդ ամրոց

5.9. ԱՂԱՀԵՁՔ ՈՒ ՀԱԲԱՆԴ ԳԱՒԱՌԵՐ
5.10. Խոժոռաբերդ ամրոց
5.11. Քաշաթաղ ամրոց
5.12. Բարկուշատ ամրոց
5.13. Ամդոկաբերդ ամրոց
5.14. Պահու բերդ ամրոց
5.15. Քաշունի ամրոց
5.16. Ձագաձոր կամ Հաբանդ ամրոց

5.17. ԲԱՂՔ ԵՒ ՁՈՐՔ ԳԱՒԱՌՆԵՐ
5.18. Բաղաբերդ ամրոց եւ Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգը





Հառիճավանք, Իվանե եւ Զաքարե Զաքարեան իշխանների բարձրաքանդակը

5.19. ԱՐԵՒՔ ԵՒ ԿՈՎՍԱԿԱՆ ԳԱՒԱՌՆԵՐ
5.20. Կաքաւաբերդ ամրոց
5.21. Մեղրի ամրոց
5.22. Գրհամ ամրոց

5.23. ԳՈՂԹՆ ԵՒ ԵՐՆՋԱԿ ԳԱՒԱՌՆԵՐ
5.24. Խոսրովի դղեակ ամրոց
5.25. Երնջակ ամրոց

5.26. ՁԱՀՈՒԿ ՈՒ ՇԱՀԱՊՈՒՆԻՔ ԳԱՒԱՌՆԵՐ
5.27. Ձահուկ ամրոց
5.28. Շահապունիք ամրոց
5.29. Նախիջեւան գաւառ
5.30. Խրամ ամրոց
5.31. Ազնաբերդ ամրոց

5.32. ԱՄՐՈՑԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹԻՒՆՆԵՐ
(ՍԻՒՆԻՔԻ ԲԵՐԴԱՄՐՈՑՆԵՐԻ ՁԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ
17 ԲՆՈՐՈՇԻՉ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ)

5.33. ՍԻՒՆԵԱՑ ԱՄՐՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԱՅԻՆ ԵՒ ՅԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ
ՅՕՐԻՆՈՒԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ
(ՉՈՐՍ ՅՕՐԻՆՈՒԱԾՔԱՅԻՆ ԵՒ ԵՐԵՔ ՅԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ)

5.1. ՀԱՐԱՒԱՅԻՆ ՍԻՒՆԻՔ

Սիւնիքի 9 գաւառներից կազմուած այս շրջանը նահանգի ամենաընդարձակ տարածքն էր, որը Ժ. դարի վերջերին Արեւիք (Մեղրի, Դաշտոն), Կովսական (Գրհամ), Բաղք (Աճեն, Քաշունիք), Ծղուկք, Ջորք (Կապան), Հաբանդ (մինչեւ Աղավնոյ գետի աւազան) գաւառներով կազմուած տարածքով եղել է Սիւնեաց իշխանների վերջին տիրոյթը՝ մինչեւ Սիւնեաց թագաւորութեան կործանումը ԺԲ. դարի վերջին (պատկ.328,329)[297]: Սիւնիքի հարաւարեւելեան եւ հարաւարեւմտեան տարածքները նոյնպէս դարերի ընթացքում եղել են քաղաքական, տնտեսական, հոգեւոր եւ ռազմական յոյժ կարեւոր շրջաններ, որտեղ ԺՎ. դարում կենտրոնացել են Սիւնեաց թագաւորները: Արդէն այն փաստը, որ Սիւնիքի թագաւորութիւնն աւելի երկար է գոյատեւել, քան Վասպուրականի, Անի-Շիրակի կամ Տաշիր-Ջորագէտի թագաւորութիւնները, վկայում է վերջինիս ոչ միայն քաղաքական ու տնտեսական ամուր հիմքերի մասին, այլեւ, առաջին հերթին, այդ տարածքում ռազմավարական եւ պաշտպանական-համակարգային ընդարձակ կառուցուածքի առկայութեան մասին: Սիւնիքի հարաւային շրջաններում նոյնպէս եղել են ճանապարհների, քաղաքների, աւանների պաշտպանական համակարգեր եւ մասնաւորապէս Կապան մայրաքաղաքի հետաքրքիր ու իւրօրինակ պաշտպանական համակարգը, թագաւորութեան սահմանամերձ գօտու պաշտպանական համակարգը եւ այլ առանձին ռազմավարական ինքնատիպ կենտրոններ:

Ուսումնասիրուող տարածքը հիւսիս-արեւմուտքից սահմանակից է եղել Սիւնիքի Վայոց ձոր, հիւսիսից՝ Արցախի Վայքունիք, հիւսիս-արեւելքից՝ Արցախի Մեծ Առանք, Բազկան, արեւելքից հարաւ-արեւելք՝ Միւս Հաբանդ, հարաւից՝ Վասպուրականի Պարսպատունիք, հարաւ-արեւմուտքից՝ Գողթն, արեւմուտքից՝ Նախիջեւան գաւառներին (պատկ. 330): Այս ընդարձակ տարածքը հիւսիսից հարաւ շրջափակուած է եղել Վայոց ձորի (ամենաբարձր գագաթը՝ Գոգի լեռ՝ 3.120մ, պատկ.331), Արցախի (Քիրս լեռ՝ 2.72մ), Սիւնեաց (Կապուտջուղ լեռ՝ 3.904մ, պատկ.332) լեռնաշղթաներով: Տարածքի հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք ձգւում է Որոտան գետը[298], որը վերին հոսանքներում կոչւում է Բարկուշատ, սկիզբ է առնում Վարդենիսի լեռնաշղթայից ու թափւում Արաքս: Մինչ Արաքս թափուելն այն միախառնւում է Աղավնոյ (Ակերա) գետին, որն էլ սկիզբ է առնում Արցախի լեռներից: Այս երկու մեծ գետերից բացի՝ արեւմուտքում տարածքով հոսում են Նախճաւան, հարաւ-արեւմուտքում՝ Երնջակ, հարաւում՝ Գեյան, Ուստուփ (Չինանար), Տեռնիս (Վանանդ), Ագուլիս, Որդուար, Մեղրի, Բասուդ (Ծաւ) գետերը:

Այժմ անդրադառնանք հարաւային Սիւնիքի այն գաւառներին, որոնք ռազմավարական ու պաշտպանական տեսակէտից առաւել կարեւոր են իրենց պաշտպանական կառոյցների, համակարգերի ու ամրոցաշինական իրագործումների բերումով:

297. Պայմանականօրէն ընտրուած այս շրջանն ընդգրկում է Սիւնիքի հարաւարեւելեան եւ հարաւարեւմտեան շրջանները, որոնց հիմնական մասը կազմում էր Սիւնիքի թագաւորութեան տարածքը (տե՛ս Գլուխ առաջին):

298. Գետը Ծղուկքի հարաւային սահմանում կոչուել է նաեւ Հալիձոր: Ղ. Ալիշան, նշ.աշխ., 1898, էջ 207:

5.2. ԾՂՈՒԿՔ ԳԱՒԱՌ

Ծղուկքը գտնւում է Սիւնիքի միջին շրջանում. արեւելքից սահմանակից է Աղահեջք (Քաշաթաղ) եւ Հաբանդ, արեւմուտքից՝ Ճահուկ եւ Վայոց ձոր, հարաւից՝ Բաղք, Ջորք, Գողթն, Երնջակ, հիւսիսից՝ Արցախի Ծար գաւառներին (պատկ.333): Գաւառը բոլոր կողմերից շրջափակուած է բարձր լեռնաշղթաներով, որոնք կարծես բնական պատնէշ են, իսկ տարածքի երկայնքով՝ հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք, խոր ձորերի ու հովիտների գալարներով հոսում է Որոտան գետը: Գաւառը եզերող լեռնագօտիներն են. արեւելքից՝ Ղարաբաղի բարձրաւանդակը (ամենաբարձր գագաթը՝ Մեծ իշխանասար լեռ՝ 3.550մ, պատկ.334), արեւմուտքից՝ Սիւնեաց լեռները, հարաւից՝ Բարգուշատի լեռնաշղթան, հիւսիսից՝ Վարդենիսի լեռնաշղթան (պատկ.335): Գաւառը պատմութեան ընթացքում կոչուել է նաեւ Սիւնիք, Սիսական, Որոտան: Ծղուկք անունը հաւանաբար էթնիկական ծագում ունի[299], իսկ Ստ. Օրբէլեանը ենթադրում է, որ այն առաջացել է գաւառապետի Ծղկայ անունից[300]: Պատմիչը եկեղեցուն տրուող հարկացուցակում յիշատակում է գաւառի 101 գիւղանուն, որոնցից 75-ը՝ Ծղուկքում, իսկ 26-ը՝ Այլախում: Հարկի չափի մեծութեան համեմատ՝ կարելի է առանձնացնել հետեւեալ մեծ գիւղերը.

299. Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968, էջ 205: Ըստ Ն.Վ. Հարությունյանի *Արգիշտի 2-րդի նորահայտ սեպագիրը* յօդուածի («ՊԲՀ», № 3, Երեւան, 1979, էջ 101–102)՝ Ծղուկք անունն ուրարտական ծագում ունի, սերում է Ծուլուկու երկիր տեղանունից:

300. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 70:

Ճաղատ, Տոլորք, Արածի, Գետակից, Ճաղկայ, Կիրակոսիկ, Բոնակոթ, Վասակակերտ, Վաղատին, Աղիտու, Ագարակիկ՝ Ծղուկքում, եւ Քարատակ, Վերին Բորտի, Մեծաձոր Միւս, Ճաքէ, Չկնարած, Իւղոտամաղք՝ Այլախում[301]: Ստ. Օրբէլեանը Սիւնիքի գաւառների սահմանները նկարագրելիս առաջին տեղում յիշատակում է իշխանների եւ հայրապետների գահանիստ Ծղուկք գաւառը, մինչդեռ, ըստ «Աշխարհացոյցի», այն յիշատակւում է որպէս նահանգի Է. գաւառ[302]: Սիւնեաց իշխանութեան շրջանում Ծղուկք գաւառը եղել է կարեւոր նստավայր թէ՛ հոգեւոր, մասնաւորապէս՝ Տաթեւի եպիսկոպոսութիւնը, եւ թէ՛ քաղաքական՝ Ճաղատ գիւղաքաղաքը, որը եղել է ամրոց-քաղաք: Ծղուկքով անցել է գաւառի համար կարեւոր Ճաղատ–Նախճաւան ճանապարհը, որը կապւում էր Դուին–Փայտակարան եւ Դուին–Նախճաւան–Թաւրիզ տարանցիկ ճանապարհների հետ (պատկ.336): Ռազմավարական իմաստով՝ առաւել պաշտպանուած եւ համակարգուած էր Ողոտան գետի հովտով անցնող ճանապարհը, որը կազմել է Սիւնի բերդաքաղաքի գծային պաշտպանական համակարգը, որին դեռ կ՛անդրադառնանք: Առանձին պաշտպանական կառոյցներից նշանակալի էին Դաստակերտ, Ճլորուտ, Ողոտնաբերդ, Ագարակիկ, Որձաբերդ, Ցուրաբերդ, Բերդ-Առաւելադաշտ, Բորտի, Խոտուք, Վասակաբերդ ամրոցները (պատկ.337): Պաշտպանական համակարգերից ուշագրաւ է Ողոտնաբերդ-Ողոտնավանք երկկենտրոն պաշտպանական համակարգը, իսկ վանք-ամրոցներից՝ Հարանց անապատն ու Տաթեւի պատմաճարտարապետական համալիրը, որոնք, սակայն, վերաբերում են ուշ միջնադարին (խօսքը վանական համալիրները վանք-ամրոցների վերափոխելու մասին է):

301. Նշ.աշխ., էջ 394–395:

302. Ս.Տ. Երեմյան, *ը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, 1968, էջ 56:

5.3. Ճաղատ քաղաքի պաշտպանական համակարգը

Ճաղատ «գիւղաքաղաքը»[303], գտնուելով Սիւնիքի Ծղուկք գաւառի կենտրոնում, միջին դարերում ունեցել է կարեւոր նշանակութիւն եւ, մինչեւ Սիւնիքի տէր Վասակի իշխանանիստի տեղափոխումը Եղեգիս աւան, եղել է «իշխանանիստ»[304], «բերդագիւղ»[305]: Ճաղատը եղել է կարեւոր հոգեւոր կենտրոն Սիւնիքի համար: Դ. դարից մինչեւ Թ. դարը (851 – Ա.Ք. կրտ.), այստեղ էր եպիսկոպոսական աթոռը, որը յետագայում տեղափոխուել է Տաթեւի վանք: Ըստ Ստ. Օրբէլեանի՝ Ճաղատում է եղել Սբ Ստեփանոս Նախավկայի՝ Սիւնեաց աշխարհի Մայր եկեղեցին: Պատմիչը տալիս է եկեղեցու մանրամասն նկարագրութիւնը, որի համաձայն՝ այն Հայաստանի հնագոյն գմբէթաւոր կառոյցներից էր[306]: Ճաղատի մօտով էին անցնում երկու առեւտրական ճանապարհներ. մէկը գնում էր Վայոց ձոր եւ Այրարատ, միւսը՝ Նախիջեւան եւ Վասպուրական (պատկ.338): Ճաղատ քաղաքաւանն ունեցել է իր բերդը. «...եւ յասպատակէ Աւարանշանն Սեւադայի, որ յամի 727 յետ ապականելոյ զերկիրն՝ մտեալ ամրանայր «ի բերդատեղն աւանին Ճաղատու»[307]: Բերդի կառոյցից պահպանուել են համանուն գիւղի արեւելեան մասի բլուրի վրայի աննշան աւերակները: Ռազմավարական տեսանկիւնից հետաքրքիր է Ճաղատի պաշտպանական համակարգը, որը գործել է Սասանեանների շրջանում եւ կիրառուել մինչեւ բերդագիւղի՝ որպէս վարչահոգեւոր կենտրոնի անկումը: Համակարգը բաղկացած է մի շարք բերդերից կազմուած սլաքաձեւ աղեղից, որն իր մէջ է առնում Ճաղատը եւ հզօր պատնէշ ստեղծում յարձակումների դէմ ամբողջ հարաւարեւելեան կողմից: Պաշտպանական այս համակարգը բաղկացած էր Ողոտնաբերդ (Ծղուկք), Բաղաբերդ (Բաղք), Ձահուկ (Ջահուկ) կենտրոնական ամրոցներից եւ այս աղեղը ժամանակի ընթացքում լրացնող Սուրմալիկ, Նահաջիր, Ցղնա (Նախիջեւան գաւառ), Շահապոնք (Ձահուկ), Ճաղակերտ, Քյոլք, Գաղ (Երնջակ), Խոտուք, Աղխիտու, Սիւնի, Դաստակերտ (Ծղուկք) ամրոցներից (պատկ.339): Բերդերից կազմուած այս հզօր պատնէշը եզրափակում էր Սիւնիքի հարաւարեւմտեան ամբողջ սահմանը, որը յարակից էր Վասպուրականին եւ Այրարատին: Այս համակարգի կենտրոնական պաշտպանական կառոյցները հիմնադրուել են Սիւնիքի թագաւորութիւնից (987–1170) շատ առաջ, սակայն այդ շրջանում նոր հիմնադրուած եւ նորոգուած բերդերի հետ կազմել են երկրի պաշտպանական համակարգի նշանակալի օղակը: Սուրեն Երեմյանի կազմած քարտէզների համաձայն՝ պաշտպանական այս համակարգի կարեւոր բերդերը

303. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1910, էջ 75:

304. Նշ.աշխ., էջ 82:

305. Նշ.աշխ., էջ 202: Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղվանից աշխարհի*, Երեւան, 1983, էջ 326:

306. ՀՍՀ, հ. 8, Երեւան, 1982, էջ 65: Եկեղեցու առասպելի մասին տե՛ս Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1910, էջ 80–92:

307. Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 211:

կառուցուել են հետեւեալ ժամանակահատուածում. Բաղաբերդ՝ 298–385, Երնջակ ու Ճահուկ՝ 450–509[308]:

308. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 2, Երեւան, 1984, քարտէզներ:

5.4. Սիւնի բերդաքաղաքի գծային պաշտպանական համակարգը

Սիւնի բերդը եւ վանքը Սիսիան քաղաքի արուարձանում են: Սբ Գրիգոր եկեղեցին կառուցուել է Է. դարում եւ լաւ պահպանուած է (պատկ.340), իսկ բերդից, որը եկե- ղեցու շրջակայքի գերեզմանոցի տարածքում էր, պահպանուել են ամրոցի պատերի աննշան հետքեր: Այս վարչահոգեւոր կենտրոնի պաշտպանական համակարգը բաղկացած էր Որոտան գետի հովտով անցնող ճանապարհի երկայնքին իրարից որոշակի հեռաւորութեամբ տեղադրուած եւ տարբեր ռազմավարական նշանակութեան պաշտպանական կառոյցներից: Բերդերն ու ամրոցները տեղադրուած են գծային դասավորութեամբ՝ Սիւնիքից դէպի հիւսիս-արեւելք եւ հարաւ-արեւմուտք: Սիւնի բերդաւանի մօտակայքում են Աղխիտու եւ Դաստակերտ ամրոցները, որոնք բնակավայր մտնող ճանապարհի վերջին արգելքներից էին:

Սիւնի բերդաւանի պաշտպանական համակարգը բաղկացած էր ճանապարհի երկայնքին տեղադրուած ամրոցներից, որոնք դէպի բերդաւան որոշակի անկիւն են կազմել՝ ապահովելով Սիւնի կենտրոնավայրի անառիկութիւնը: Ծղուկք գաւառով անցնող ճանապարհի պաշտպանական համակարգի մաս են կազմել հետեւեալ ամրոցները՝ հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտք՝ Ակունք[309], Բորտի, Ծաղատ, Դաստակերտ, Սիւնի, Աղխիտու, Որոտն, Խոտուք, Ցուր, Բերդ-Առաւելադաշտ[310] (պատկ.339): Ճանապարհը, անցնելով այս ամրոցների հսկողութեան տեսադաշտով, իջնում էր հարաւ՝ Քաղք, Մեղրի գաւառներ եւ հասնում մինչեւ Կարճաւան, որտեղից այն միանում էր Ջուլֆա–Փայտակարան միջազգային առեւտրական ճանապարհին:

309. Ակունք գիւղատեղին կոչուել է նաեւ Բագրատաւան՝ Սիսիանից 24 կմ հիւսիս-արեւմուտք, *Հայաստանի եւ յարակից շրջ.…*, հ. 1, Երեւան, 1986, էջ 542: Ստ. Օրբելեանն այն ենթադրաբար նոյնացրել է Վասակակերտ գիւղի հետ, որը սխալ է (Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 394):
Սիւնի բերդաքաղաքի մասին տե՛ս Մորուս Հասրաթյան, *Պատմահնագիտական ուսումնասիրութիւններ*, Երեւան, 1985, էջ 129:

310. Ցուր եւ Բերդ-Առաւելադաշտ ամրոցների տեղադրութեան մասին տե՛ս Գ.Մ. Գրիգորյան, *Պատմական Սիւնիքի մի շարք գիւղերի տեղադրութեան հարցի շուրջ*, «ՊԲՀ», № 4, Երեւան, 1966, էջ 233–234, 238–239:

5.5. Բորտի ամրոց, 39°25’08”N 46°23’0”E, ք.ծ.մ. 1.019 մ (?)

Ամրոցը յիշատակւում է Բորոտան, Բորոտնա, Բորտո, Բորտի անուններով: Այն երբեմն շփոթել են Որոտն ամրոցի հետ, որը նրանից հեռու չէր, բայց այլ ամրոց էր: Բորտի ամրոցը յիշատակում է Ստ. Օրբէլեանը՝ որպէս անսասան եւ հաստատուն Բորոդանայ բերդ ձեւով[311]: Հեղինակը տարբեր առիթներով յիշատակում է ամրոցը Բորոտնա, Բորտու անուններով եւ առանձին խօսում նաեւ Որոտնայ ամրոցի մասին, որը նոյնպէս հաստատում է, որ այս երկու ամրոցները տարբեր կառոյցներ են: Նոյն հեղինակը մէկ այլ յիշատակութիւնում նշում է. «…[Լիպարիտն] որոշ տարիներ անց ծաղկուն հասակում ճանապարհ գնալիս հանկարծակի նետերի հարուածներ է ստանում Բորոտնա բերդի դիմացի լեռան գլխին, գալիս, ընկնում է Գոլոշտի վանքի բերդը…»[312]: Ա.Աբրահամյանը ենթադրում է, որ Գոլոշտի վանքը գտնւում է Գոլոշտի քար կոչուած տեղում: Հակուած ենք հետեւելու Ա. Ղարագյոզյանի կարծիքին, որը Բորոտնա բերդը տեղադրում է Դավութլու գիւղի մօտ (պատկ.341,342)[314]: Ղ. Ալիշանը Բորտի ամրոցի տեղադրութեան մասին ունի հետեւեալ յիշատակութիւնը «…Յետ միութեան վտակաց Ձկնարածի (Պալըգլ), Մխուրի, Քեչի, սուի, որուք յօրանայ Պազարչայ գետ, ընդունի նախ յահեկէն վտակ մի փոքր, առ որոյ խառնդովք կայ շէն գեօղ փոքր, Նոր Գարագիլիսէ որ եւ Պէրտի Գալէճիկ, թէրեւս Բորտի, … »[315]: Բաւական դժուար է ստոյգ որոշել ամրոցի տեղը, քանզի Ղ.Ալիշանի նշած տեղում, որը համապատասխանում է երկու վտակների միախառնման անկիւնի բարձունքին, չեն պահպանուել ամրոցի կառոյցների հետքեր: Ստ. Օրբէլեանի մէկ այլ յիշատակութիւնում նշւում է, որ ամրոցը, որպէս նուիրատուութիւն, անցել է Սմբատին, որն այստեղ սպանուած Լիպարիտի որդին էր[316]: ԺԳ. դարին վերաբերող մէկ այլ վկայութիւն նշում է. «Զաքարէն եւ Իվանէն մեծ ջանքերով պարսիկների ձեռքից առան հայոց երկիրները… նրանք առան 660թ. [1211–12] Սիւնիքը, Որոտանը, Բորոտանը, Բղենը, Բարկուշատը»[317]: Որոտան գետի հունով անցնող ճանապարհի երկայնքին Տեղ գիւղից դէպի Բարկուշատ տեղադրուած են եղել հետեւեալ ամրոցները. Մրկաքար, Բորոտան, Բղեն, Անդոկաբերդ, Պահու բերդ, Բարկուշատ (պատկ.343):

311. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 71:

312. Նշ.աշխ., էջ 320:

313. Նշ.աշխ., էջ 513 (ծնթգր. 1303):

314. Ա. Ղարագյոզյան, *Միւնեաց աշխարհի Բղեն գաւառը*, «ՊԲՀ», № 1, Երեւան, 1978, էջ 275:

315. Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 210:

316. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 328:

317. Հ. Մանանդյան, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հ. Դ, Երեւան, 1952, էջ 144:

5.6. Վասակաբերդ ամրոց, 39°27’55”N 45°58’20”E, 1.755 մ

Վասակակերտ[318] կամ Վասակաշատ[319] ամրոցը Սիւնիքի Ծղուկք գաւառի հարաւարեւմտեան հատուածում է՝ Որոտանի աջակողմեան վտակ Սիսիան գետի ջրբաժան բլրաձեւ, ժայռագագաթ բարձունքի վրայ՝ Կիրակոսիկ եւ Սիսական (Սիսիան, այժմ՝ Հացաւան գիւղ – Ա.Ձ. կրտսեր) գիւղերի միջեւ (պատկ. 344,345)։ Մինչեւ այսօր պահպանուել են բարձունքի գագաթը տեղ-տեղ եզերող պարսպապատերի բրգաձեւ պատերը։ Ամրոցի կառուցման համար ընտրուել է շատ նպաստաւոր եւ անառիկ դիրք, որը փաստօրէն երեք կողմերից շրջապատուած է գետով, իսկ միակ մօտեցման ուղղութիւնը բարձունքի ստորոտից է, որտեղ բլրի մակերեւոյթից դուրս խոյացած խոշոր ժայռահատուածները բնական խոչընդոտ են եղել թշնամու հնարաւոր յարձակումների ժամանակ (պատկ. 346)։ «Կը համարուի որ Վասակաշատ՝ Վասակ Սիւնիի բերդաքաղաքն էր»[320]։ Վասակաշատը պատմագրութեան մէջ դեռեւս Ե. դարում յիշատակել է Եղիշէն՝ Ավարայրի ճակատամարտի դէպքերի հետ կապուած։ Պարսիկների գրաւած «Երկրի զանազան ամուր տեղեր»-ի յիշատակութիւնում մասնաւորապէս ասւում է. «Նախ՝ մեծ Արտաշատը իր աւաններով. եւ առան անմատչելի ամրոցները՝ Գառնի քաղաքը, Անի, Արտագերսը եւ իրենց աւանները. Երկայնորդն ու Արխինին եւ իրենց աւանները, Բարձրաբողը, Խորանիստը, Ծախանիստը, ապահով Ողականը եւ սրանց հետ իրենց աւանները. Արփանեալը, Վան աւանը նրա հետ նաեւ իր աւանները. Գոեալն ու Կապոյտը ու Վասակաշատը»[321]։ Ամրոցը յայտնի է Սիսիանի բերդ եւ Վասակաբերդ անուններով։ Գտնուելով Սիսիան (Սիսական) բերդաւանի մօտ՝ եղել է նաեւ աթոռանիստ[322]։ Ամենայն հաւանականութեամբ Վասակ Սիւնին է կառուցել ամրոցը, որը յետագայում անցել է «Պարսիկներու տրամադրութեան տակ»[323]։

Վասակաբերդ ամրոցի աւերակները Հացաւան գիւղի հիւսիս-արեւելեան ժայռոտ բարձունքի վրայ են՝ շրջկենտրոնից մօտ 7 կմ հարաւ-արեւմուտք՝ Կալկանդաշ (Կալկառոտն)[324] լեռան դիմաց (պատկ. 347)։ Ժայռացից զանգուածներով բլրագագաթ ունեցող հրուանդանը բոլոր կողմերից շրջապատուած է դժուարանցանելի եւ գահավէժ ժայռալանջերով, որոնց ստորոտով, հարաւ-արեւելքից հիւսիս-արեւմուտք, հոսում է Որոտանի վտակը՝ ստեղծելով բնականից անառիկ դիրք՝ երեք կողմերն իրենց մէջ առնելով (պատկ. 348)։ Ամրոցատեղիին մօտենալու միակ յարմար ուղղութիւնը հարաւից է, որտեղ այսօր Հացաւան գիւղի ցանքադաշտերն են։ Վասակաբերդին մօտենալիս յստակ երեւում է նրա դիրքի գերազանց ընտրութիւնը, բնակավայրի եւ պաշտպանական կառոյցի հմուտ ռազմավարական տեղընտրութիւնը եւ տեղանքի աշխարհագրական ելեւէջների վարպետ իմացութիւնը։ Ամբողջ ամրոցատեղին զբաղեցնում է 0,75 հա տարածութիւն եւ կազմուած է երկու գագաթներից (պատկ. 349,350.1,350.2,351.Ա,Բ)։ հարաւային գագաթն աւելի ընդարձակ է, յատակագծում՝ եռանկիւնաձեւ, իսկ հիւսիսայինը՝ մօտաւորապէս կիսով չափ փոքր եւ անկանոն ուրուագծով։ Երկու գագաթները միանում են ժայռապատ, նեղ վզիկով, որի երկու կողմերում ժայռալանջ գահավէժ պատերն են (պատկ. 352,351.Գ)։ Նման տեղընտրութեամբ ամրոցներ Հայաստանում ստեղծուել են յաճախ, օրինակ՝ Մեյդան (պատկ. 353), Ֆինդիկլի (պատկ. 354), Անահշա (պատկ. 355) ամրոցները Կիլիկիայում[325]։

Ամրոցի մասին ընդհանուր նկարագրութիւն ունի Ե. Լալայեանը, որը, ըստ Ա. Ղարագյոզյանի, վերաբերում է Վասակաբերդին[326]. «Բլրի երեք կողմերը զառիվայր են եւ միայն արեւելեանը փոքր-ինչ մատչելի է, ուր եւ գտնւում է միակ ճանապարհը։ Այս բլրի գագաթին գտնւում է մի հին բերդ, որն ունեցել է երկու պարիսպ։ Բերդի գագաթին կայ մի աւազան, որի ջուրը բերուած է եղել մօտակայ հարաւային կողմի լեռներից, որովհետեւ այդ ուղղութեան վրայ գտնուել են փողրակները։ Ժայռի մէջ կան երեք փոքրիկ քարայրեր։ թէ բերդի շուրջը եւ թէ մէջը նկատելի են տների հետքեր»[327]։

Պատմութեան պետական թանգարանում Արխիւային ուսումնասիրութիւնների ժամանակ յայտնաբերել ենք Վասակաբերդի որոշ լուսանկարներ, որոնց թւում ՝ № 5401

318. Վասակակերտ անունով ամրոց կամ գիւղ կար նաեւ Գեղարքունիքում՝ Հանձիթ գաւառում։ Մ. Յովհաննէսեան, նշ. աշխ., էջ 430։ (Նաեւ՝ Սոթքում, Աղահեճքում եւ Ձահուկում – Ա.Ձ. կրտսեր)։ Ըստ Թ.Խ. Հակոբյանի *Սիւնիքի թագաւորութիւնը* աշխատութեան (Երեւան, 1966, էջ 77)՝ «կերտ»-ով աւարտուող տեղանունները մեծ մասամբ միաժամանակ եղել են բերդեր, օրինակ՝ Տիգրանակերտ, Վաղարշակերտ, Երուանդակերտ, Կարկաթիոկերտ եւ այլն։ Ըստ Մտ. Օրբէլեանի՝ Սիւնիքի գաւառների եկեղեցու հարկացուցակում բերուած բնակավայրերի (Երեւան, 1986, էջ 394–404)՝ «կերտ»-ով աւարտուող գիւղանունները հետեւեալներն են. Վասակակերտ (Ծղուկք գաւառ), Արկադուկերտ (Վայոց ձոր), Զարերիտակերտ (Քաղք), Դաստակերտ, Երուանդակերտ (Քաշունիք), Դռնակերտ (Կովսական), Նորակերտ (Երնջակ), Վասակակերտ (Ձահուկ)։

319. Անունների նոյնացման վերաբերեալ տե՛ս Ա. Ղարագյոզյան, *Վասակաշատի տեղադրութիւնը*, «ՊԲՀ», № 2, Երեւան, 1986, էջ 240։

320. Մ. Յովհաննէսեան, նշ. աշխ., էջ 430։

321. *Եղիշէ, Է. դար, Վարդանի ու Հայոց պատմութեան մասին*, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Երուանդ Տէր-Մինասեանի, Երեւան, «Հայաստան», 1994, էջ 51–52։

322. Ա. Ղարագյոզյան, նշ.աշխ., էջ 239։

323. Մ. Յովհաննէսեան, նշ. աշխ., էջ 430։

324. Տաթեւին տրուող հին հարկացուցակում յիշատակւում է Կալկառոտն անուամբ։ Մատենադարան, ձեռ. № 1483, էջ 215 ա։ *Հայաստանի եւ հարակից շրջ….*, հ. 2, Երեւան, 1988, էջ 901։

325. Robert W. Edwards, *The Fortification of Armenian Cilicia*, Dumbarton Oaks Studies 23, Washington, D.C. 1987, Meydan, pp. 189–194; Findikh, p. 121f; Anahşa, pp. 62–65.

326. Ա. Ղարագյոզյան, նշ.աշխ., էջ 238։

327. Ե. Լալայեան, «Ազգագրական հանդէս», № 1, Շուշի, 1898, էջ 175։

սեւանկարը (պատկ. 344, 356)։ Այս լուսապատկերն անելիս դեռեւս պահպանուած էին բլրի ստորոտի տները, որոնց մասին յիշատակում է Լալայեանը։ Այժմ բնակատեղին բոլորովին աւերուած եւ անյայտացած է (պատկ. 357)։

Լալայեանի նկարագրած կառոյցների աւերակները ցայսօր երեւում են հարաւային գագաթի ամրոցատեղիում (պատկ. 358)։ Այստեղ կառուցապատուած է միայն հարաւային կողմը, որն ամրոցին մօտենալու դժուարամատչելի ուղղութիւնն էր։ Պահպանուել են առանձին կրկնապարսպի յունարէն «Π» տառի ձեւ ունեցող հատուած՝ բաղկացած առաջնապարսպից (պատկ. 351.2) եւ հետնապարսպից (պատկ. 351.1), հարաւարեւմտեան ժայռաճեղքը փակող պատի մի հատուած (պատկ. 351.3) եւ գագաթի հիւսիսային անկիւնում զետեղուած աղիւսաշէն կառոյցի 1/2 մասը (պատկ. 360, պատկ. 351.4, 359)։ հիւսիսային գագաթում չկան աւերակներ, բայց համոզուած ենք, որ անհրաժեշտ պեղումներից յետոյ այստեղ նոյնպէս ի յայտ կգան ամրոցապատկան կառոյցների մնացորդներ։ Պարսպապատերի շինաքարը բազալտէ որձաքարն է, որի կիսամշակ ոչ մեծ չափերի քարերը շարուած են առաւելապէս պահպանելով շարուածքի հորիզոնական կարանները՝ կրաշաղախի միջնաշերտով (պատկ. 360,361,362)։ Առաջնապարսպի պահպանուած մասի բարձրութիւնը 2,0 մ է, իսկ հետնապարսպինը՝ 3,2 մ։ Պատի կտըրուածքը երկշերտ է, իսկ որպէս ներսի մակերես՝ ծառայել է բնական ժայռը։ Հունարեն Π-ձեւ կրկնապարիսպները շարուած են բրգաձեւ եւ իրար նկատմամբ սանդղաւանդաձեւ։ Երկու պարսպաշերտերի եւ ձախակողմեան բարձրադիր ժայռազանգուածի միջակայ մասը ծառայել է որպէս բերդի միակ մուտք (պատկ. 351.5)։ Մուտքի այս լուծումը նման է նոյն գաւառում ոչ այնքան հեռու տեղակայուած Որոտնաբերդ ամրոցի մուտքի լուծմանը, որտեղ կիրառուած է նոյն հնարքը, բայց հայելային շրջուածքով (պատկ. 363)։ Հետնապարսպի բրգաձեւ թեքութիւնը պատի 1,65 մ բարձրութեան մէջ՝ միջին հատուածում 0,45 սմ է։ Առաջնապարսպից մինչեւ հետնապարիսպ հարթակը եւս 1,65 մ է։ Պարսպապատերի բեկման անկիւնները լծորդուած են սահուն գծերով եւ կազմում են 90 աստիճան, իսկ առաջնապարսպի համեմատաբար կարճ երկարութիւնը (4,2 մ), սուր անկիւն կազմելով, հպւում է հետնապատին։ Մուտքի հատուածում առաւելագոյն լայնութիւնը 2,1 մ է, որը բնական ժայռերից կերտուած հարթակների միջոցով իջնում է ցած եւ ծառայում որպէս արտաքինից մուտք տանող նեղ միջանցք։ Պարսպապատերը ներսի կողմից քօղարկուած են քարացած հողով եւ միաձուլուել են տեղանքին։ հարաւարեւելեան մասի պարսպապատը փակում է երկու ժայռաբեկորների միջեւ եղած տարածութիւնը, որը խոցելի էր թշնամուց։ Այստեղ պարսպապատի հատուածը նոյնպէս բրգաձեւ է (h=0,7 մ, l=4,6 մ)՝ արտաքին քարաշէն երեսապատով, որը ներսի մասերում հենւում է ժայռերին։

Հետաքրքրական է հարաւային գագաթի հիւսիսակողմում պահպանուած աղիւսաշէն կառոյցը, որը, մեր կարծիքով, ծառայել է որպէս դիտաշտարակ (պատկ. 364)։ Կառոյցի երկայնական առանցքի համեմատ պահպանուել է միայն հարաւային հատուածը, որը հնարաւորութիւն է տալիս մօտաւոր վերականգնել այն եւ ենթադրել, որ դիտաշտարակը յատակագծում ունեցել է ուղղանկիւն յօրինուածք։ Կառոյցի արեւմտեան մասն աւարտուել է բազմանիստ խորանով, որն ուղղանկիւն մասից բաժանուած է եղել առանձին պատով։ Նման լուծում ունեն նաեւ Անիի պարիսպների բուրգերը, Կիլիկիայում՝ Սավրայնդա (պատկ. 365), Սայմբեյլի (պատկ. 366), Մարան (պատկ. 367), Ցիլան (պատկ. 368) ամրոցների պարսպապատերի բուրգերը։ Դիտաշտարակի աղիւսաշէն լինելը (աղիւսները քառակուսի են՝ 0,21x0,21x0,5 սմ) վկայում է, որ այն ժամանակակից չէ ամրոցին (պատկ. 369)։ Պահպանուած մասի բարձրութիւնը 0,30 սմ է, ուստի նրա վերին մասերի ճարտարապետական լուծումների վերաբերեալ պատկերացում կազմելն անհնար է։

Վասակաբերդը փաստօրէն եղել է Ծղուկք գաւառի Սիսականի ռազմական հենակէտը եւ Սիւնիքում լայնօրէն տարածուած երկկենտրոն պաշտպանական համակարգի մաս է կազմել։ Վասակաբերդ ամրոցը Ծղուկք գաւառով անցնող հիմնական ճանապարհի կարեւոր ռազմական հենակէտն էր, որի հիւսիսից հարաւ տեսադաշտում էին Դաստակերտ, Սիւնի, Վասակաշատ, Բնունիք, Դաստակերտ ամրոցները (պատկ. 370)։



Պատկ. 328
Սիւնիքի Ծղուկք գաւառի քարտէզը՝
ըստ Ղ. Ալիշանի «Սիսական»-ի,
Վենետիկ, Սբ Ղազար, 1893

328



Պատկ. 329
Հայաստանի Հանրապետութեան
եւ Լեռնային Ղարաբաղի
Հանրապետութեան վարչական
քարտէզը, 2020

329



330


Պատկ. 330
Պատմական Սիւնեաց նահանգի տեղադրութիւնը՝ Հայաստանի տասնհինգ նահանգների քարտէզում

Պատկ. 331
Վայոց ձորի Գոգի լեռները, 3.120մ



331

Պատկ. 333
Սիւնիքի Ծղուկք գաւառի ամրոցների տեղադրութեան քարտէզը, գծագիրը՝ հեղինակի


ՎԱՅՈՑ ՁՈՐ
ԱՂԱՀԵՑՔ
ԾՂՈՒԿՔ
ՃԱՀՈՒԿ
ՀԱԲԱՆԴ
ԵՐՆՋԱԿ
ՁՈՐՔ
ԲԱՂՔ
ՇԱԿՈՒՆՔ AKUNK
ԲՈՍՏԻ ԲՈՐԳԻ
ՍԱՍՈՒՆ ԱՇԿԵԱՆ
ԽՈՐԻ ԽՈՐՆԻ
ՍԱՐԱՇՓԱՐԱԽ
ՇՈՒՂԱՅ ՇԱԳԱՏ
ՄՈՒՇԵՂ ՄՈՒՇԵՂՅԱՆ
ՔԱՇԱԹԱՂ KAШATAX
ՎԱՍԱԿԱԿԵՐՏ ԴԱՍՏԱԿԵՐՏ
ՏՈՒՐԱՆ ՏԱՐԱՆ
ՇԱՀԿԵՐՏ ՇԱԱԿԵՐՏ
ՍՈՒՐՄԱԼԻԿ
ՆՈՐՍ NORC
ՔԱՂՔԻ ՔՈՂԱԿԻ
ՄԱՐԳԱՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆԱՎԱՆՔ
ՎԱՐԴԱՆԱՎԱՆՔԻ
ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ
ՍՈՒՐԲ ԽԱՉ
ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ
ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ
ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ
ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ
ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՍՈՒՐԲ ՊԱՐԹԵՎ
ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ
ՍՈՒՐԲ ՀՈՎՍԵՓ
ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ
ՍՈՒՐԲ ՄԱՇՏՈՑ
ՍՈՒՐԲ ՀՌՓՍԻՄԵ
ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ
ՍՈՒՐԲ ՀՌՓԻՓՍԻՄԵ
ՍՈՒՐԲ ԿԱՅԱՆԵ
ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ
ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ
ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՍՈՒՐԲ ՊԱՐԹԵՎ
ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ
ՍՈՒՐԲ ՀՈՎՍԵՓ
ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ
ՍՈՒՐԲ ՄԱՇՏՈՑ
ՍՈՒՐԲ ՀՌՓՍԻՄԵ
ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ
ՍՈՒՐԲ ՀՌՓԻՓՍԻՄԵ
ՍՈՒՐԲ ԿԱՅԱՆԵ

333



Պատկ. 332
Կապուտջուղ լեռը, 3.904մ

332



Պատկ. 334
Մեծ իշխանասար լեռը, 3.550մ

334



Պատկ. 335
Վարդենիսի լեռնաշղթան, 3.522մ


335




Պատկ. 336
Սիւնիքի կենտրոնական
գաւառներով անցնող կարեւոր
ճանապարհները,
գծագիրը՝ հեղինակի

336

337






Պատկ. 337
Ծղուկք գաւառի բնակավայրերի, բերդերի, վանքերի, լեռնագագաթների, ճանապարհների աշխատանքային քարտէզը (հեղինակներ՝ ճարտարապետ Արա Չարեան, պատմաբան Արմէն Ղարագեօզեան), 1985

Պատկ. 338
Շաղատ քաղաքի պայտաձեւ պաշտպանական համակարգը, գծագիրը՝ հեղինակի

338



339

Պատկ. 339
Շաղատ քաղաքի գծային պաշտպանական համակարգը, գծագիրը՝ հեղինակի



340

Պատկ. 340
Սիսիանի Սբ Գրիգոր եկեղեցին, Է. դար



341



342

Պատկ. 341, 342
Բորտի (Բորոտան) ամրոցի
համայնապատկերը





Պատկ. 344
Վասակաբերդ ամրոցը՝ հարաւից, պատմական լուսանկար (ՀՊԹ, սեւանկար № 5401)

Պատկ. 345
Ամրոցը՝ հարաւից, 1985



Պատկ. 343
Սիւնիքի թագաւորութիւն, ԺԱ–ԺԳ դարեր, աշխատանքային քարտէզ (հեղինակներ՝ ճարտարապետ Արա Չարեան, պատմաբան Արմէն Ղարագեօզեան), 1985

345



346

Պատկ. 346
Վասակաբերդ ամրոցի
համայնապատկերը



347

Պատկ. 347
Ամրոցի դիրքադրութիւնը՝ Հացաւան
գիւղի հիւսիսային ժայռի գագաթին՝
ըստ Google Eart-ի




Պատկ. 348
Ամրոցի համայնապատկերը՝
արեւմուտքից

348




Պատկ. 349
Ամրոցի համայնապատկերը՝
հարաւ-արեւելքից

349



350

Պատկ. 350, 350.1
Վասակաբերդ ամրոցի սխեմատիկ
չափագրութիւնը, հեղինակ՝
ճարտարապետ Արա Զարեան, 1985



350.1

Պատկ. 351
Ամրոցի չափագրութեան
մաքրագծումը, հեղինակ՝
ճարտարապետ
Արա Զարեան, 1985
Ա. Հիւսիսային գագաթ,
Բ. Հարաւային գագաթ,
Գ. Հիւսիսային ու հարաւային
գագաթները միացնող նեղ
պարանոցը,
1. Առաջնապարիսպ,
2. Յետնապարիսպ,
3. Ժայռերը փակող ձեռակերտ
պարսպապատի հատուած,
4. Աղիւսաշէն դիտաշտարակի հիմքի
մնացորդներ,
5. Ամրոցի մուտքը

351




ՀԳՄՆ ՆՔ-Ց ՝ՅԼՀԳՆՀԳՁ ՎՀՄՄՊՉՈՒ ՑՈՂԳԼԻՎՈ • ՂՈՂԳՄՈՇ ՈՀՈ




352

Պատկ. 352
Վասակաբերդ ամրոցի պարսպապատերի պահպանուած հատուածները




353



354

Պատկ. 353
Կիլիկիայի Մեյդան ամրոցի յատակագիծը (հեղինակ՝ Ռոբերտ Վ. Էդվարդս)

Պատկ. 354
Կիլիկիայի Ֆինդիկլի ամրոցի յատակագիծը (հեղինակ՝ Ռոբերտ Վ. Էդվարդս)



Պատկ. 355
Կիլիկիայի Անահշայ ամրոցի յատակագիծը (հեղինակ՝ Ռոբերտ Վ. Էդվարդս)

355



Պատկ. 356
Ամրոցի պատմական լուսանկարը (ՀՊԹ, սեւանկար № 5404)

356



357

Պատկ. 357
Վասակաբերդ ամրոցի
համայնապատկերը

Պատկ. 358
Ամրոցի պահպանուած
պարսպապատէրը





358

Պատկ. 359
Աղիւսաշէն դիտաշտարակի
չափագրութիւնը, հեղինակ՝
ճարտարապետ Արա Զարեան, 1985
Դ. Կտրուածք 1-1,
Է. Յատակագիծ

Ե

ԻԼՅՈՒՍՏՐԱՑԻԱ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՔԱՐՏԵՂ Մ=1:20






360

Պատկ. 360
Սմբատաբերդ ամրոցի երրորդ՝
արեւելահայեաց մուտքը՝
արտաքինից




361

Պատկ. 361
Հիւսիսային ամրոցի
համայնապատկերը




Նկ. 362
Նեղոցի հարավային պատվանդանի վրացկան
չափագրություն, նկարահանում՝ ճարտարապետ
Շարեևի, 1985
Ա. Կարապետ 2-2,
Բ. Հարավային պատվանդանի
ճակատը,
գ. Հարավային պատվանդանի վերնամասը




363

Պատկ. 363
Որոտնավանք ամրոցի
համայնապատկերը




364


Պատկ. 364
Վասակաբերդ ամրոցի աղիւսաշեն
աշտարակի հիմքերի մնացորդները




365



366



367



368

Պատկ. 365
Կիլիկիայի Սավրանդայ ամրոցի
աշտարակի յատակագիծը

Պատկ. 366
Կիլիկիայի Սայմբէյլի ամրոցի
աշտարակի յատակագիծը


Պատկ. 367
Կիլիկիայի Մարան ամրոցի
աշտարակի յատակագիծը

Պատկ. 368
Կիլիկիայի Ցիլան ամրոցի
աշտարակի յատակագիծը



369

Պատկ. 369
Վասակաբերդ ամրոցի
աղիւսաշէն պատը



370

Պատկ. 370
Վասակաշատ ամրոցի
տեղադրութիւնը ռազմավարական
ճանապարհին, գծագիրը՝ հեղինակի

5.7. Որոտնաբերդ-Որոտնավանք երկկենտրոն պաշտպանական համակարգը

Սիւնիքի պաշտպանական համակարգերի թւում կարեւոր ու հետաքրքիր տեղ են զբաղեցնում բերդ-դղեակ ու վանք-ամրոց երկկենտրոն պաշտպանական համակարգերը: Միջնադարեան Հայաստանում շատ վանքեր կառուցուել են խոշոր բերդերի պաշտպանական տեսադաշտում՝ այն նոյն սկզբունքներին համապատասխան, որոնցով կառուցւում ու տեղադրւում էին բերդերն ու ամրոցները: Պաշտպանական եւ պաշտամունքային կառոյցների զուգակցումը յետագայում լայնօրէն տարածուել է Սիւնիքում[328]:

Երկկենտրոն պաշտպանական համակարգերը բաղկացած են գլխաւոր տարրից՝ բերդից, եւ երկրորդական տարրից՝ վանքից (պատկ.371): Իւրաքանչիւր տարր ինքնուրոյն, կազմաւորուած միաւոր է, սակայն ռազմամարտավարական նկատառումներով հանդէս է գալիս որպէս միասնական, երկկենտրոն համակարգի մաս: Ի տարբերութիւն երկկենտրոն պաշտպանական համակարգերի՝ միակենտրոն համակարգերն ունեն մէկ գլխաւոր ռազմականացուած կենտրոն, որի շուրջ տարածուած են պաշտպանական տարբեր նշանակութեան միաւորները՝ որպէս լրացուցիչ, ամբողջականացնող տարրեր: Այս համակարգերում գլխաւոր կենտրոններն իրենց տեղադրութեան սկզբունքներով, նշանակութեամբ ու գրաւած դիրքով տարբերւում են համակարգի մաս կազմող միւս պաշտպանական միաւորներից: Սիւնիքում այս տիպի պաշտպանական համակարգերի լաւագոյն օրինակներից են Ցամաքաբերդի ու Բաղաբերդի միակենտրոն համակարգերը: Առաջինն ընդգրկում է Սիւնիքի Գեղարքունիք գաւառի Սեւանի աւազանի ընդարձակ շրջանը: Այս տարածքը յայտնի է իր կիկլոպեան ամրոցներով, որոնք հնագիտական տարբեր շերտեր ունեն (ընդ որում, ամրոցների մի մասը գործել է նաեւ միջնադարում): Համակարգի գլխաւոր կենտրոնը Ցամաքաբերդն էր, իսկ Բերդկունք, Վերին Կզնուտ (այժմ՝ Գեղհովիտ), Ալբերդ, Արծուանիստ եւ այլ բերդեր Սեւանայ լճի ափամերձ շրջանի միաւորներն էին (պատկ.60, էջ94): Բաղաբերդի պաշտպանական համակարգը Ձորք եւ Բաղք գաւառներում էր եւ կոչուած էր պաշտպանելու Սիւնիքի թագաւորութեան մայրաքաղաք Կապանը (պատկ.81, էջ119): Այն կազմուած էր տարբեր ուղղութիւններով դէպի Կապան մտնող ճանապարհների երկայնքով տեղադրուած պաշտպանական հենակէտերից: Գլխաւոր ամրոցը Բաղաբերդն էր, իսկ Ծլորուտ, Ձեյվայ , Գեղի, Կկոց քար, Աչաղվայ, Գանձաբերդ եւ այլ ամրոցներ՝ նրա պաշտպանական համակարգն ամբողջացնող ռազմական հենակէտերը: Այս երկու պաշտպանական համակարգերը կազմել են Սիւնիքի ռազմամարտավարական ընդարձակ ծրագրի բաղկացուցիչ մասը եւ այլ հա մակարգերի հետ անառիկ են դարձրել նահանգի վարչատնտեսական այս կամ այն կարեւոր կենտրոններն ու սահմանային շրջանները:

Սիւնիքի երկկենտրոն պաշտպանական համակարգերից կարեւոր են հետեւեալները. Որոտնաբերդ-Որոտնավանք՝ Եղեգիս գաւառում (պատկ.372,273), Բաղաբերդ-Վահանաւանք՝ Կապանում (պատկ.63, էջ95)[329], Երնջակ-Սբ Գէորգի վանք-ամրոց՝ Երնջակում (պատկ.65, էջ96), Բոլորաբերդ (Պոօշաբերդ)-Սպիտակաւոր՝ Ձորքում (պատկ.67, էջ 96)[330]:

Երկկենտրոն պաշտպանական համակարգերի վանք-ամրոցներից առաւել հետաքրքրականը Որոտնավանքն է՝ Սիւնիքի Ծղուկք գաւառի հարաւարեւելեան մասում՝ Վաղատին (այժմ՝ Վաղուդի) գիւղից հարաւ-արեւելք (պատկ.374): Որոտնավանքը կառուցապատուել է ամրոցաշինական սկզբունքներով (պատկ.375): Հետաքրքրական է տեղանքի ընտրութիւնը, եկեղեցական բոլոր կառոյցների դիրքորոշումն ու վանքապատկան տարածքի՝ նախապէս մտածուած եւ շատ հմտօրէն արուած պարսպապատումը: Համալիրը տեղակայուած է Որոտան գետի զառիվայր կիրճերով շրջապատուած բնական սարաւանդի վրայ, որը նեղ լեզուակով միանում է լեռնալանջին[331]: Լեզուակ կազմող հատ-

328. Ստ. Մնացականյան, *Հայկական ճարտարապետութեան Սիւնիքի դպրոցը*, Երեւան, 1960, էջ 200: Մ.Մ. Հասրաթյան, *Սիւնիքի 17–18րդ դարերի ճարտարապետական համալիրները*, Երեւան, 1973, էջ 118:

329. Թ–Ժ դարերում, երբ Բաղաց (Կապանի) թագաւորութեան մայրաքաղաքը եղել է Կապանը, Բաղաբերդը մաս է կազմել միակենտրոն պաշտպանական համակարգի:

330. Փակագծում նշուած են պաշտպանական համակարգերի մօտ գտնվող բնակավայրերը:

331. Որոտնավանքի տեղադրութեան մասին տե՛ս Ս.Խ. Մնացականյան, *Հայկական ճարտարապետութեան Սիւնիքի դպրոցը*, Երեւան, 1960, էջ 74:

ուածում տեղադրուած են վանքային համալիրի աշխարհիկ կառոյցները: Համալիրը ձգւում է արեւելքից արեւմուտք եւ աշխարհիկ կառոյցների հետ կազմում ներքին բակ, որտեղ գերեզմանոցն է: Վանքը հիւսիսից պաշտպանուած է փոքր բնական բլրակով, հարաւից անդնդախոր կիրճն է, իսկ արեւմուտքում եւ արեւելքում անտառապատ, զառիվայր լանջերն են (պատկ.376): Համալիրի բոլոր շէնքերը կարծես ընդգրկուել են պաշտպանական համակարգի մէջ, քանի որ կազմում են հիւսիսային պարսպապատի շարունակութիւնը: Հենց սրանով է բացատրւում այն հանգամանքը, որ եկեղեցական բոլոր շինութիւնները հիւսիսային կողմում չունեն բացուածքներ (պատկ.377.5,2,3,8 բացառութիւններ կան, անշուշտ): Այս կողմում է վանքային համալիրի միակ մուտքը (պատկ.377.12): Մինչեւ վանքային համալիրի հիմնադրումը (1000), այստեղ, թերեւս Դ. դարից սկսած, գործել է Սբ Գրիգոր Լուսաւորիչ մատուռը (պատկ.377.1)[332]: Ըստ Ստեփանոս Օրբէլեանի՝ Որոտնավանքը հիմնադրել է Սմբատ գահերէց իշխանի կինը՝ Շահանդուխտ թագուհին, որը ամուսնու մահից յետոյ, 1000-ին, Սմբատի կտակի համաձայն, կառուցում է Սբ Ստեփանոս Նախավկայ եկեղեցին (պատկ.376.2)[333]: Ապա թագուհին ձեռնամուխ է լինում կառուցելու վանքապատկան այլ շինութիւններ. «…եւ տուն աղօթից կրաշաղախ վիմօք եւ ի եկեղեցւոյ, եւ համբարանոցս եւ գործատունս եւ շուրջ պարսպէ զվանք…» (պատկ.377.3,8,9,10)[334]: Շահանդուխտի մահից յետոյ նրա որդի Սեվադան սկսում է համալիրի շինարարութեան երրորդ փուլը՝ 1006-ին կառուցելով նրա արեւմտեան կողմի սիւնասրահը (պատկ.377.6)[335]: Պատմական այս տեղեկութիւնները հետաքրքրական են այնքանով, որ Շահանդուխտ թագուհին վանքային հաստատութիւն հիմնելու համար ընտրում է հնուց գոյութիւն ունեցող սրբավայրը, որը միաժամանակ, տեղանքի առանձնայատկութիւններից ելնելով, հնարաւորութիւն էր տալիս անառիկ դարձնելու վանքը՝ պարսպապատելով այն հիմնականում միայն արեւելքից ու արեւմուտքից: Որոտնավանքից 3կմ հարաւ-արեւելք Որոտնաբերդն է (պատկ.378): Բերդի հարաւային մասում՝ Որոտան գետի վրայ 1856-ին կառուցուել է Մելիք Թանգու կամուրջը (կառուցուել է 1885-ին, պատկ.379):

332. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 301:

333. «…Այս վանքում 1000 թուականին Շահանդուխտը եկեղեցի է կառուցել ս. Ստեփանոս անուամբ, ինչպէս քիչ վարը տեղեկացնում է նոյն պատմիչը: Այնպէս որ Շահանդուխտը այստեղի մէկ եկեղեցու կառուցողն է եւ ոչ թէ ամբողջ վանքի…»: Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 483–484 (ծնթգր. 860):

334. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 302:

335. Նոյն տեղում:

5.8. Որոտնաբերդ ամրոց, 39°29’03”N 46°08’16”E, բ.ծ.մ. 1.402 մ

Որոտն բերդը՝ Որոտնաբերդ, Որոտան, յայտնի է եղել դեռեւս Դ. դարում՝ որպէս Հայաստանի նշանաւոր եւ անառիկ ամրոցներից մէկը (պատկ.380): Ստեփանոս Օրբէլեանը Սիւնեաց թագաւորութեան տարածքում յիշատակում է 43 բերդ, որոնցից առանձնանում են 12 առաւել նշանաւորները. Որոտն (Ծղուկք գաւառում), Բղեն ու Կկոց քար (Բաղքում), Բաղաբերդ, Բաղաքու քար, Գեղի, Շլորուտն եւ Կապան (Ձորքում), Գրհամ (Կովսականում), Կաքաւաբերդ, Կարճաւան եւ Մեղրի (Արեւիքում)[336]: Բերդի մասին առաջին պատմական տեղեկութիւնները Ե. դարից են. «Ցայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդից եւ աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս, յամրոցս աշխարհին, տապալէին քանդէին զբնակութիւնս նորա… եւ առնուին զանմատոյց ամուրսն՝ զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս, զԿապոտան, զՈրոտն»[337]: Ստ. Օրբէլեանը տեղեկացնում է, որ 1075–92-ին Որոտն բերդը եւ շրջակայ աւանները եղել են Սենեքերիմ Ա-ի իշխանութեան տակ[338]:

1103-ին թուրքերը Չորթմանի գլխաւորութեամբ ներխուժում են Բաղաց թագաւորութիւն եւ աւերում երկիրը: 1104 եւ 1105-ին նրանք գրաւում են թագաւորութեան երկու խոշոր բերդերը՝ Որոտն ու Բղենը. «…Դարձեալ յետ մի ամի, ի 553 [1104] թուականին առաւ Որոտն»[340]: 1211–19-ին Որոտն բերդն ու մերձակայ տարածքները տաճկական լծից ազատագրում են Զաքարէ եւ Իվանէ եղբայրները. «…հինգ հարիւր հիսունէրեք թուականին [1104], գրաւեց Որոտը, իսկ հինգ հարիւր հիսունչորս թուականին [1105]՝ Բղենը, եւ գերի բռնուեց Խոսրովիկ իշխանը»[341]: 1219-ին աթաբեկ Իվանէն Լիպարիտ Օրբէլեանի առաջնորդութեամբ գրաւում է Որոտն բերդը[342], որից յետոյ, թաթարների

336. Նոյն տեղում:

337. Եղիշէ, *Պատմութիւն Վարդանանց*, Վենետիկ, 1950, էջ 131: Տե՛ս նաեւ *«Մեծին Վարդանանց Բարձրաբերդեցոյ պատմութիւն տիեզերական»*, ի լոյս ընծայեց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 185: *Հաւաքումն պատմութեան Վարդանանց վարդապետին*, Վենետիկ, 1862, էջ 140–141: Եղիշէ, *Վարդանանց պատմութիւն*, Երեւան, 1970, էջ 150:

338. Հ.Միքայէլ Յովհաննէսեան, նշ.աշխ., էջ 408:

339. Սիւնիքի թագաւորութիւնը կոչուել է նաեւ Բաղաց թագաւորութիւն եւ Կապանի թագաւորութիւն:

340. Մ. Չամչեան, *Պատմութիւն Հայոց*, Վենետիկ, 1786, էջ 246:

341. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 279:

342. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1910, էջ 397:

Բաչու խանի հետ վարած բանակցութիւնների շնորհիւ, բերդն ու յարակից աւաններն անցնում են Լիպարիտի տիրակալութեան տակ: Բերդն Օրբէլեանների տիրապետութեան տակ է մնում մինչեւ ԺԵ. դարը: Սիւնեաց Օրբէլեանների տիրապետութիւնն ուժեղանում է յատկապէս 1250-ական թուականներին, երբ իշխանութիւնն անցնում է Սմբատին: Վերջինս, մէկնելով Մանգու խանի մօտ, կարողանում է ստանալ ինքնուրոյն թումանի իշխանութիւն: Վերադառնալով Սիւնիք՝ Սմբատը Բաչուից ստանում է ռազմական օգնութիւն եւ գրաւում Որոտն բերդը: Յետագայում Սմբատն այնքան է ուժեղանում, որ արքայական տիտղոս եւ ինքնավարութիւն է ձեռք բերում[343]: 1386-ին բերդը գրաւում են թուրքերը. «Ի ՊԼԵ [1386] ամին Թուրքն էառ զբերդն Որոտնայ եւ մեծ վարդապետն Կախիկ Որոտնեցի գնաց փախստական ի Ծարայ»[344]: Այս դէպքերի ականատես Յովհան Որոտնեցին յետագայում գրում է. «...մեղքն իմ ծովացեալ յեհան զգունդս անօրինաց ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրդելի որ եկին եւ առին զբերդն Որոտան եւ հայրենազուրկ արարին զՊարոն Սմբատն, որդի Նանիկին»[345]: Այս դէպքերի մասին յիշատակութիւն ունի նաեւ Յակոբ գրիչը 1386-ի յիշատակութիւնում[346]: 1407-ին Սմբատ իշխանից բերդը գրաւել է Կարկ-Յուսուֆ Թեմուրեան բռնակալը: ԺԸ. դարում Որոտն բերդը Դաւիթ անունով իշխանի տիրապետութեան տակ էր, որը հալածում էր հայերին: Գուգարքի իշխան Յովհաննէսը զօրքով յարձակւում է Որոտն բերդի վրայ՝ նպատակ ունենալով գերել Դաւթին, սակայն վերջինս, նախօրոք տեղեկանալով, կարողանում է դիմադրել: 1724-ին Կապան հասած Դաւիթ Բեկը պաշարում է Որոտն բերդը: Բերդի պաշարումը հեշտացնում է հորդառատ անձրեւներից փլուզուած պարսպապատի բացուածքը, որտեղից էլ մտնում են Դաւիթ Բեկի զօրքերը եւ թուրքերի հետ սրամարտում յաղթանակի հասնում[347]:

343. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 3, գլ. 36, Երեւան, 1976, էջ 623:

344. Սամուէլ Անեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1893, էջ 170:

345. Հ.Միքայէլ Յովհաննէսեան, նշ.աշխ., էջ 409:

346. Լ.Ս. Խաչիկեան, *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի յիշատակարաններ*, Երեւան, 1950, էջ 560:

347. Հ.Միքայէլ Յովհաննէսեան, նշ.աշխ., էջ 411:

Որոտնաբերդի մասին նկարագրութիւն ունի Մ. Փափազեանը, եւ քանի որ նրա այցելութեան ժամանակ բերդը համեմատաբար աւելի լաւ էր պահպանուած, բերում ենք այդ նկարագրութիւնից մի հատուած. «Սոյն կամուրջի [Մելիք Թանգի – Ա.Զ. կըրտսեր] եւ գետի ափից սկսած մի քարաժայռ է բարձրանում, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անմատչելի բերդ, որ տեղաւորուած է ուղտանման մի սարի վերայ: Այս բերդին ոմանք Որոտնայ բերդ են անուանում եւ ծերունիներից շատերը աւանդութեամբ պատմում են, որ վերջին ժամանակի պատմական Դաւիթ բէգը շատ անգամ այստեղ է ապաստանել իւր զինակիցներով... Բերդը իր երեք – արեւելեան, հիւսիսային եւ արեւմտեան [մեր կարծիքով՝ պէտք է լինի հարաւային] կողմերից քարաժայռոտ լինելով անմատչելի է եղել, բերդը կարելի է մտնել միայն հարաւային [արեւմտեան – Ա.Զ.կրտ.] կողմից, որ գետի եզերքից սկսած մի ճանապարհ է ունեցել վաղաժամանակ, սոյն ճանապարհով մի վերստաչափ բարձրանալիս, ուղեւորը տեսնում է բազմաթիւ փլատակ եւ աւեր սենեակների ու շինութիւնների հետքեր, որոնք միմեանց կից լինելով՝ բերդի այս կողմն էլ անվտանգ են դարձնում թշնամուց: Վերոյիշեալ փլատակ շինութիւնները հաստատուած են յարդ տափարակ տեղւոց վրայ, արեւելեան կողմը միջնաբերդն է հաստատուած շուրջը իւր բնական դիրքի յարմարութիւնից բոլորովին անմատչելի է դարձել եւ ունի աւելի քան 20 սաժէն բարձրութիւն նոյն տափարակ տեղից: Ինչպէս ասացինք, այս միջնաբերդն էլ ամբողջովին քարաժայռ է եւ եթէ մասնաւոր բաց տեղեր կան, սորանք էլ ամուր պարսպապատած են, թողնելով միայն մի փոքրիկ նեղ անցք միջնաբերդ բարձրանալու»[348]:

348. Մ. Փափազյան, նշ.աշխ., էջ 335:

Որոտն բերդը տեղադրուած է Լորաձորի գետաբերանի եւ Վաղուդի գիւղի միջեւ՝ բլուրի գագաթ կազմող հսկայական ժայռազանգուածի վրայ (պատկ.381): Գահավէժ, բնական ժայռապարիսպները բերդի երեք կողմերից իջնում են դէպի կիրճը, որտեղ ողողվում են Որոտանի արագահոս ջրերով: Բերդի տարածքը կազմող հարթակը հաւասարասրուն եռանկեան տեսք ունի, որի հիւսիսային անկիւնում վեր է բարձրանում մի խոշոր ժայռազանգուած, նրա հարաւում՝ մօտ 50 մ բարձրութեան վրայ միջնաբերդն

է, իսկ հարթակի միւս կողմերը զառիվայր են՝ բացի արեւմտեան հատուածից (պատկ.382)։ Այս կողմի ստորոտը զուրկ է ժայռերից եւ, կորագիծ իջնելով, կազմում է մի նեղ, երկար պարանոց, որը միանում է կիրճի հակառակ կողմում առաջացող բնական սարաւանդին։ Բերդի ընդհանուր տարածքի այս հատուածը, որտեղ մինչեւ օրս նկատւում են շինութիւնների ու պարսպապատերի հետքեր, շատ աւելի մեծ է, քան բերդի բուն եռանկիւն հարթակը։ Պարանոցի հատուածում եւս նկատւում են աւերակ շինութիւնների հետքեր եւ երկարութեամբ ձգուող ոլորապտոյտ պարսպապատի ստորին հատուածի մնացորդներ։ Ըստ երեւոյթին, բերդի հերթական վերակառուցման ժամանակ անհրաժեշտութիւն է առաջացել քօղարկելու երկու բարձունքները փակող նեղ պարանոցը՝ լրացուցիչ պատնէշ ստեղծելով ոչ միայն բերդի միակ մօտեցման ճանապարհին, այլեւ փակելու բերդից Որոտն գիւղին մօտենալու յարմար ուղղութիւնը։

Որոտն բերդի արեւմտեան եւ արեւելեան հատուածներում պահպանուել են պարսպապատեր՝ կառուցուած բազալտէ միջին չափերի կիսատաշ քարերից՝ կրաշաղախի միջնաշերտով (պատկ.383,383.1)։ Քարերը շարուած են ըստ հորիզոնական կարանների՝ ուղղահայեաց եւ թեքադիր։ Արեւմտեան պարսպապատը երկշերտ է՝ կազմուած առաջնապարսպից (պատկ.384,385.1) եւ ներքնապարսպից (պատկ.385.2)։ Առաջնապարիսպը սկիզբ է առնում հիւսիսային ժայռազանգուածի ստորոտից (պատկ.385.3) եւ, իր մէջ առնելով մի խոշոր ժայռաբեկոր, շարունակւում է մինչեւ բերդի գլխաւոր մուտքը (պատկ.385.5)։ Ներքնապարիսպը նոյնպէս սկիզբ է առնում հիւսիսային ժայռազանգուածից. պահպանուել է միայն նրա ստորին հատուածի մի փոքր մասը, որն այնուհետեւ ընդհատուելով, կորագծեր կազմելով՝ շարունակւում է անմիջապէս մուտքի մօտից եւ փակում արեւմտեան մասի ամբողջ երկարութիւնը՝ մինչեւ հարաւային կողմի զառիթափ հատուածը (պատկ.386,386.1)։ Բերդի գլխաւոր մուտքն աւերակ է, սակայն հնարաւոր է վերականգնել նրա սկզբնական տեսքը, քանի որ առաջնապարիսպն աւարտւում է ժայռից ոչ հեռու, իսկ նրա հետեւում պարսպապատի երկրորդ գօտին է՝ ներքնապարիսպը, որի դարպասը նոյնպէս աւերակ է (պատկ.385.6)։ Այս երկու դարպասները միեւնոյն առանցքի վրայ չեն, որի շնորհիւ ստեղծւում է կրկնակի դարպասներով, անցախցով մուտք։ Մուտքերի լուծման այսպիսի սկզբունքը յաճախ է կիրառուել հայկական բերդաշինութեան մէջ, սակայն նրա յատակագծային լուծումը բխում է տեղանքի առանձնայատկութիւններից, ուստի տարբեր բերդերում այն լուծվել է իւրովի՝ ռազմավարական ընդունուած սկզբունքներին համապատասխան (պատկ.387)։

349. ՀՍՀ, հ. 8, Երեւան, 1982, էջ 651–52։

Ինչպէս նշում է Գ. Շաղկեանը, մուտքը եղել է կամարակապ[349]։ Առաջնապարսպի միջին հատուածում՝ նրա ամբողջ բարձրութեամբ կայ մի ուղղանկիւն խորշ (4,14x0,70սմ), որն առաջացել է պարիսպը տեղանքի հետ յարմարեցնելու պատճառով։ Պարըսպապատերի այդպիսի խորշեր կիրառուել են դեռեւս ուրարտական ամրոցներում, որտեղ դրանք կրկնւում էին պարբերաբար՝ պարսպապատի ամբողջ երկարութեամբ։ Որոտն ամրոցի պահպանուած պարսպապատերի միջին բարձրութիւնը 5,5մ է։ Պարսպի որոշ տեղերում նկատւում են վերանորոգումների հետքեր։ Առաջնապարսպի միջնամասում, ներսի կողմից, պահպանուել է ուղղանկիւն շինութեան (6,40x5,40մ) պատերի ստորին հատուածներ (պատկ.385.7)։ Կառոյցի պատերը նոյնպէս եռաշերտ են՝ կառուցուած բազալտէ միջին չափերի կոպտատաշ քարերից (պատկ.327)։ Կառոյցի արեւմտեան պատի մօտ կեսն իր հաստութեամբ ագուցուած է պարսպապատի մէջ, որից կարելի է ենթադրել, որ այն կառուցուել է աւելի ուշ։ Հնարաւոր է, որ շինութիւնն օգտագործուել է որպէս զինանոց (պատկ.388)։

Բերդի եռանկիւնաձեւ հարթակի հարաւային կողմը, որտեղ միջնաբերդն է, աւելի բարձր է։ Այստեղ խմբաւորուած են բազմաթիւ ուղղանկիւն սենեակներ՝ կառուցուած անկանոն քարերից՝ առանց շաղախի (պատկ.386, պատկ.385.8)։ Վերջիններիս բուն նշանակութիւնը դժուար է պարզել, քանի որ նրանք լցուած են փլատակներով ու քարա-

կոյտերով: Ամենայն հաւանականութեամբ՝ այս շինութիւններն ունեցել են կենցաղային նշանակութիւն եւ կառուցուել ու լրացուել են երկար ժամանակահատուածում՝ ելնելով բերդի գործունէութեան հետ կապուած անհրաժեշտութիւնից:

Պարսպի մէկ այլ գօտի կառուցուել է բերդի արեւելեան կողմում (պատկ.389): Այն նոյնպէս սկիզբ է առնում հիւսիսային ժայռազանգուածի ստորոտից՝ անմիջապէս հպուելով նրան: Պարսպապատն ունի երկու աշտարակ՝ շրջանաձեւ (պատկ.385.9) եւ կիսաշրջանաձեւ (պատկ.385.10): Երկուսն էլ սնամէջ են՝ կառուցուած բազալտէ կոպտատաշ, միջին չափերի քարերից՝ կրաշաղախի միջնամասով (պատկ.330): Այս հատուածում պատի միջին բարձրութիւնը 3մ է, հաստութիւնը 0,80մ: Սնամէջ, շրջանաձեւ աշտարակի պատի ստորին մասում պահպանուել է կիրաւազային սուաղի երկշերտ ծածկոյթ, իւրաքանչիւր շերտի հաստութիւնը 0,02մ է: Ամենայն հաւանականութեամբ՝ այս աշտարակները ծառայել են որպէս դիտակէտ եւ պահակակէտ, քանի որ նրանք տեղադրուած են զառիվայր, բարձրադիր ժայռերի վրայ, որտեղից երեւում է ամբողջ գետահովիտը (պատկ.390): Շրջանաձեւ աշտարակի եւ հիւսիսային ժայռազանգուածին հպուած ու պարսպապատին ուղղահայեաց պատի միջին տարածութիւնն անպարիսպ է: Այս հատուածն ամբողջովին նստում է բնական ժայռի վրայ եւ քօղարկուած է փլատակներով: Այստեղ է եղել բերդի երկրորդ մուտքը (պատկ.385.11). չնայած այն գահավիժում է դէպի Որոտան գետը, սակայն անհրաժեշտութեան դէպքում հնարաւոր էր օգտագործել որպէս կապի միջոց (պատկ.391): Պատմական Որոտն (Ուռուտ) գիւղի աւերակները մինչեւ օրս նկատւում են բերդի արեւելեան պարսպապատի տակ: Ամենայն հաւանականութեամբ՝ այս մուտքից են օգտուել Որոտն գիւղի բնակիչները թշնամու յարձակումներից բերդում պատսպարուելու ժամանակ, քանի որ գլխաւոր մուտքը բերդի հակառակ կողմում էր, իսկ նրա ստորոտը ամբողջ հարաւային կողմով շրջանցելը ժամանակի մեծ կորուստ էր[350]: Հնարաւոր է, որ այս մուտքին հասնելու համար օգտագործուած լինեն շարժական աստիճաններ:


Արեւելեան պարսպապատի հարաւարեւելեան հատուածում պահպանուել են ուղղանկիւն, միաթաղ կառոյցի պատերը՝ 2,5մ միջին բարձրութեամբ՝ շարուած բազալտէ կոպտատաշ միջին չափերի քարերից՝ կրաշաղախի միջնաշերտով (պատկ.385.12): Հնարաւոր է, որ այս շինութիւնն օգտագործուած լինէր որպէս ջրամբար (պատկ.392): Ի դէպ, Լալայեանն իր աշխատութիւններից մէկում յիշատակում է որ այս շինութիւնը տեղադրուած է արեւելեան պարսպից յետոյ, բերդի բաց կողմում, որտեղ փորուած է եղել մի ստորերկրեայ անցք՝ ջուր բերելու համար: Ջրամբարի հարաւային կողմում՝ պատին հպուած, կան մի քանի փոքր ուղղանկիւն շինութիւնների հիմքերի հետքեր, որոնց պատերը շարուած են բազալտէ կոպտատաշ քարերից՝ առանց շաղախի:

Բերդի հարաւային կողմն անպարիսպ է, քանի որ բնական ժայռապարիսպներն արդէն անառիկ են դարձնում այս հատուածը (պատկ.393):

Որոտն բերդի տեղադրման համար օգտագործուել է Որոտանի գետահովտի տուեալ տարածքի այն բնական ժայռոտ բարձունքը, որտեղից կարելի էր հսկել հսկայական տարածութիւններ եւ հետեւել թշնամու տեղաշարժերին (պատկ.394): Բերդի նշանակութիւնն աւելի կարեւոր է դարձնում այն հանգամանքը, որ այս հովտով էր անցնում առեւտրական մի ճանապարհ, որն սկիզբ էր առնում Նախճաւանից, մտնում Ծղուկք գավառի տարածք եւ, անցնելով մի շարք բերդերի՝ Ծաղատ, Դաստակերտ, Սիւնի, Աղխիտու, Որոտն, Խոտուք, Ցուր, հսկողութեան տեսադաշտով, իջնում էր մինչեւ Բաղք, Մեղրի եւ հասնում Կարճաւան, որտեղից միանում էր Ջուլֆա–Փայտակարան միջազգային առեւտրական ճանապարհին:

Որոտնաբերդ ամրոցի մասին լիարժէք տեղեկութիւններ կարող ենք ստանալ միայն նրա ամբողջական տարածքի հնագիտական պեղումների միջոցով:

350. Այս հատուածում էր Որոտան գետ տանող գետնուղու գլխաւոր մասը, որն այժմ քօղարկուած է փլատակներով:



Պատկ. 371
Որոտնաբերդ-Որոտնավանք երկկենտրոն պաշտպանական համակարգը, գծագիրը՝ հեղինակի
1. Որոտնաբերդ ամրոցը,
2. Որոտնավանք վանական համալիրը,
3. Մելիք Թանգու կամուրջը,
4. Հին բնակատեղին,
5. Այգիները,
6. Աղիտու գիւղատեղին,
7. Որոտան գետը,
8. Որոտնաբերդի հսկողութեան տեսադաշտը

371

Պատկ. 372
Որոտնաբերդ-Որոտնավանք երկկենտրոն պաշտպանական համակարգի դիրքադրութիւնը ըստ Google Earth-ի



372



373

Պատկ. 373
Որոտնավանքի Սբ Կարապետ եկեղեցու հիւսիսային ճակտոնից Որոտնաբերդի տեսարանը՝ վերականգնումից առաջ, 1980-ական թուականներ




374

Պատկ. 374
Վանքային համալիրի ընդհանուր տեսքը՝ հարաւ-արեւմուտքից




375

Պատկ. 375
Վանական համալիրի ընդհանուր տեսքը՝ հարաւ-արեւելքից



376

Պատկ. 376
Վանական համալիրի տեղահանոյթ, ճեպանկարը՝ հեղինակի
Ա. Հիւսիսահայեաց բլուրը,
Բ. Հարաւահայեաց գետաձորը,
Գ. Արեւմտահայեաց այգիները,
Դ. Աւտոմեքենաների կայանատեղին



Պատկ. 377
Որոտնավանք վանական համալիրի ընդհանուր յատակագիծ, գծագիրը՝ հեղինակի
1. Սբ Գրիգոր Լուսաւորիչ միանաւ եկեղեցին, Է. դար
2. Սբ Ստեփանոս Նախավկայ եկեղեցին (Շահանդուխտի եկեղեցի), 1000,
3. Սրահաւոր դահլիճը, ԺԱ. դար,
4. Սբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու սիւնասրահը, ԺԱ. դար,
5. Սբ Կարապետ եկեղեցին, 1006,
6. Սբ Կարապետ եկեղեցու սիւնասրահը, ԺԱ. դար,
7. Յուշասիւնը, ԺԱ. դար,
8. Համբարանոցն ու գործատունը, ԺԲ. դար,
9. Տնտեսական շինութիւնները, ԺԲ. դար,
10. Պարսպապատը, ԺԳ. դար,
11. Գերեզմանատունը, Ժ–ԺԹ դարեր,
12. Գլխաւոր մուտքը

377



Պատկ. 378
Որոտնաբերդ ամրոցի ընդհանուր տեսքը՝ հարաւ-արեւելքից

378



Պատկ. 379
Մելիք Թանգու կամուրջը, 1856

379




380

Պատկ. 380
Որոտնաբերդ ամրոցի արեւմտեան պարսպապատը



381

Պատկ. 381
Ամրոցի տեսքը՝ ԱԹՍ-ից




Պատկ. 382
Ամրոցը՝ արեւմուտքից

382



383

Պատկ. 383
Որոտնաբերդ ամրոցի հարաւային պարսպապատի մանրամաս



384


Պատկ. 384
Ամրոցի չափագրութիւնը, հեղինակ՝ ճարտարապետ Արա Չարեան, 1984

Պատկ. 388
Ամրոցի ներսի ուղղանկիւն
շինութեան պատերի մնացորդները



388


Պատկ. 385
Որոտնաբերդ ամրոցի
չափագրութեան մաքրագիծը,
հեղինակ՝ ճարտարապետ
Արա Զարեան, 1984
1. Առաջնապարիսպ
2. Ներքնապարիսպ
3. Հիւսիսային ժայռազանգուած
4. Ժայռաբեկոր
5. Գլխաւոր մուտք
6. Ներքնապարսպի աւերակ մուտք
7. Զինանոց (?)
9. Շրջանաձեւ աշտարակ
10. Կիսաշրջանաձեւ աշտարակ
11. Բերդի երկրորդ մուտք
12. Ջրամբար (?)
13. Աշխարհիկ կառոյցներ



385


46°8′15.383″
46°8′17.297″
46°8′19.211″
46°8′21.125″
39°29′7.085″
39°29′5.171″
39°29′3.257″
10
20 m
Կազմեց՝ Լևոն Մկրտչյանը

386


46°8′15.383″
46°8′17.297″
46°8′19.211″
46°8′21.125″
39°29′7.085″
39°29′5.171″
39°29′3.257″
1275
1308
1341
1373
1406
10
20 m
Կազմեց՝ Լևոն Մկրտչյանը

386.1



387

Պատկ. 386
Որոտնաբերդ ամրոցի զենիթային լուսանկարը՝ ԱԹՍ-ից



383.1

Պատկ. 387
Ամրոցի գլխաւոր մուտքը

Պատկ. 383.1
Ամրոցի հարաւային պարսպապատի մանրամասը, պատմական լուսանկար, սևանկար № 5430, ՀՊԹ




389

Պատկ. 389
Ամրոցի ընդհանուր տեսքը՝ հարաւից



390

Պատկ. 390
Որոտնաբերդ ամրոցի
հիւսիսարեւելեան պարսպապատի
կիսաբոլոր բուրգերով հատուածը



391

Պատկ. 391
Ամրոցի հիւսիսարեւելեան
ժայռապատը՝ ԱԹՍ-ից



392

Պատկ. 392
Ամրոցի ներքին տարածութիւնում
շինութիւնների աւերակները



393

Պատկ. 393
Որոտնաբերդ ամրոցի արեւելեան
ժայռապատը



394

Պատկ. 394
Ամրոցի համայնապատկերը՝
Որոտան գետի կիրճից

5.9. ԱՂԱՀԵՃՔ ՈՒ ՀԱԲԱՆԴ ԳԱՒԱՌՆԵՐ

Այս երկու գաւառները եզրափակել են Սիւնիքի հիւսիս-արեւելեան մասը եւ տարածուել Հագարի գետի վերին հոսանքում (պատկ.395)։ Աղահեճքը հիւսիս-արեւելքից սահմանակից էր Արցախի Ծար, արեւմուտքից՝ Սիւնիքի Ծղուկք, հարաւից՝ Հաբանդ գաւառներին, իսկ Հաբանդը հիւսիսից՝ Սիւնիքի Աղահեճք, արեւելքից՝ Արցախի Հաբանդ, հարաւից՝ Բաղք, արեւմուտքից՝ Ծղուկք գաւառներին (պատկ.396)։ Աղահեճքի մասին շատ սակաւ յիշատակութիւններ են պահպանուել։ Այս գաւառում Ստ. Օրբէլեանի յիշատակած բնակավայրերից առաւել նշանաւորները եղել են Քեղաճորը, Հակը, Մեղրին, Ականքը, Հունչաքը, Խախծիքը, Վրժանիսը, Անուշաւանը, Քաշաթաղն ու Խոժոռաբերդը[351]։ Միջին դարերում Աղահեճքը կոչուել է երբեմն Քաշաթաղ եւ Խոժոռաբերդ։ Ցաւօք, պատմիչները չեն պարզաբանում այս երկու բնակավայրերի, որոնք անկասկած ամրոցներ են եղել, աշխարհագրական տեղերը[352]։ Կան ենթադրութիւններ, որ Խոժոռաբերդ ամրոցը համընկնում էր ԼՂԻՄ-ի Հադրութի շրջանի Խծաբերդ գիւղի ամրոցին[353]։ Մեր կարծիքով՝ այս ենթադրութիւնը հիմքից զուրկ է, քանի որ թէ Ստ. Օրբէլեանը եւ թէ Դ. Ալիշանը Խոժոռաբերդը յիշատակում են Աղահեճք գաւառում, իսկ Խծաբերդը Հաբանդ գաւառում է (Միւս Հաբանդ)։

351. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 399։

352. Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968, էջ 212։

353. *Հայաստանի եւ յարակից շրջ...*, հ. 2, Երեւան, 1988, էջ 763։

Աղահեճք գաւառն ընդգրկում է Աղավնո գետի վերին հոսանքի երկու ճիւղաւորումները՝ Հունչաք եւ Ծալվա, որոնք սկիզբ են առնում Արցախի լեռներից։ Ծալվա գետի ձախ կողմում էր Խոժոռաբերդ գաւառամասը, իսկ Հունչաք եւ Ծիծեռնավանք գետերի միջեւ՝ Քաշաթաղը։

Աղահեճք գաւառն առաջին անգամ հայկական աղբիւրներում յիշատակւում է «Հայաստանը ըստ Աշխարհացոյցի» հատորի մէջ[354]։ Պաշտպանական ճարտարապետութեան տեսակէտից Աղահեճքը եւ Քաշաթաղը կարեւոր դեր են խաղացել. ամուր են պահել Սիւնիքի ամբողջ արեւելեան մատոյցները։ Աղավնո գետի աւազանում յիշատակուած ամրոցների տեղադրութիւնը, դիրքադրութիւնը հիմք տվեցին մեզ եզրակացնելու, որ Սիւնիքի այս հատուածի սահմաններն անցել են ոչ թէ Աղավնո գետի հունով՝ բաժանելով Սիւնիքը Արցախից[355], այլ սահմանաբաժան եզրագիծն ընթացել է գետի վտակների եզրամասով, այսինքն՝ Արցախի լեռների գագաթներով։ Ամրոցները դիրքընտրուած են լեռնաշղթայի երկայնքով՝ գագաթներից ներքեւ՝ դէպի Աղավնո գետն իջնող ձորակների ու վտակների հովիտներում։ Աղահեճք գաւառի սահմանազատ ամրոցներն են. հիւսիս-արեւմտեան շրջան՝ Ծաբի, Վժնաբերդ, հարաւարեւմտեան շրջան՝ Ձիասար բերդ, Օշապի քար բերդ, Բերդաձոր ամրոց։ հիւսիսարեւմտեան եւ հարաւարեւմտեան այս երկու շրջանները պաշտպանական ամուր պատնէշ են կազմել Սիւնիքի այս հատուածի համար եւ, Արցախի լեռների բնական լեռնապատի հետ ներդաշնակ, եզրապատել են Աղահեճք գաւառի ամենախոցելի հատուածը։ Պատմիչների յիշատակած այս երկու կարեւոր ամրոցները՝ Խոժոռաբերդն ու Քաշաթաղը, իրենց ռազմական դիրքով եղել են ամրոցներից կազմուած երկու պաշտպանական շրջանների ներսում՝ դառնալով գաւառի ամենաանառիկ եւ ռազմավարական իմաստով առաջնային պաշտպանական կառոյցները։

354. U.S. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, 1963, էջ 104։

Հաբանդը, ըստ «Աշխարհացոյցի», Սիւնիքի 8-րդ գաւառն էր եւ յիշատակուած է երկու Հաբանդ անուններով. մէկը Սիւնիքում է, միւսը՝ Արցախում։ Արցախի Հաբանդ գաւառն անմիջապէս սահմանակից էր Սիւնիքի Հաբանդին։ Արեւելեան կողմում Հաբանդի սահմանն անցնում էր Հագարի գետով, արեւմտեան կողմում սահմանակից էր Ծղուկքի Տաթեւ եւ Որոտան շրջաններին։ Հիւսիսում նրա սահմանն Աղահեճքի հետ անցնում էր Հագարի գետի Աղողլան վտակի աջ ափով տարածուող լեռներով, իսկ հարաւային կողմում՝ Բարգուշատ եւ Որոտան գետերի ջրբաժան լեռներով, որտեղ Հաբանդը սահմանակցում էր Բաղք-Քաշունիք եւ Բաղք-Ձճանանի հետ։ Հաբանդ գաւառի

355. Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968, էջ 192։

նշանաւոր բնակավայրերից են եղել Հալիսը (Հալե, Հալիձոր), Շինուհայրը, Խոտը, Ձագեձորը կամ Հաբանդը (Ձագիկ նահապետի օրոք հիմնադրուած բերդ), Տեղը:

Վերջին տարիներին, մինչեւ 2020-ի Արցախեան 44-օրեայ պատերազմը, պատմական Սիւնիքի մաս կազմող Աղահեճք ու Հաբանդ գաւառներում բարեբախտաբար կատարուել են մանրակրկիտ ուսումնասիրութիւններ, որոնց ընթացքում յայտնաբերուել, ճշտուել, քարտէզագրուել են մի շարք ամրոցներ, բնակավայրեր, հնագիտական յուշարձաններ[356]: Արշաւախմբի անդամները (Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Լ. Մկրտչյան) ժամանակակից ճշգրիտ երկրաբաշխական (գեոդեզիական) սարքաւորումներով ու ԱԹՍ-ով լուսանկարել, փաստագրել, քարտէզագրել ու չափագրել են նաեւ մեզ հետաքրքրող Խոժոռաբերդ, Քաշաթաղ, Բարկուշատ, Անդոկաբերդ, Պահու, Քաշունի բերդամրոցները:

356. Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Լ. Մկրտչյան, *Արցախի Հանրապետութեան Քաշաթաղի շրջանի ամրոցները*, «Նոռանէ» հրատարակչություն, Երեւան, 2022 (այսուհետ՝ եռյակ):

5.10. Խոժոռաբերդ ամրոց, 39°40’57”N 46°04’01”E, բ.ծ.մ. 1499 մ

Խոժոռաբերդը Աղահեճքի կարեւոր ռազմապաշտպանական հենակէտն էր, որը բազմաթիւ առիթներով յիշատակուել է պատմագրութեան մէջ[357]: Խոժոռաբերդի տեղադրութեան մասին հետազօտողները տարակարծութիւններ ունեն, սակայն մենք հակուած ենք հետեւելու Գ. Սարգսյանի, Ա. Գնունու ու Լ. Մկրտչյանի 2022-ին հրատարակած Արցախի Հանրապետութեան Քաշաթաղի շրջանի ամրոցները գրքում (այսուհետեւ՝ եռեակի) առաջարկուած տարբերակին (պատկ.397), որը մէջբերում ենք մասամբ. «Խոժոռաբերդ ամրոցը տեղադրուած է Հոչանց-Աղավնո գետամիջեան ջրբաժանից իջնող լեռնաբազուկի ցածր հարաւային վերջաւորութեանը բարձր, գետահովիտը վերհսկող բլրին (պատկ.398): Համեմատաբար հարթ մակերեսով հրուանդանը երեք կողմից բնականից պաշտպանուած է անմատչելի ժայռածերպերով (պատկ.399): Ժամանակին այն ամբողջ եզրագծով պատուած է եղել շրջապարսպով, որից այսօր պահպանուել են միայն հիւսիսային ու մասամբ արեւելեան կողմի ձեռակերտ հատուածները (պատկ.400): Ամրոցի հիւսիսային ամենամատչելի ուղղութեան վրայ կանգնեցուած պարիսպը արեւելեան կողմում աւարտւում է հզօր ուղղանկիւն աշտարակով (պատկ.401): Այն կառուցուած է խոշոր խորանարդաձեւ քարերով եւ իր կանոնաւորութեամբ ու հզորութեամբ տարբերւում է հիմնական պարսպագծի շարուածքից: Արեւելեան մօտ 100 մ երկարութեամբ ձգուող պարսպի միջնամասում բացւում է ամրոցի գլխաւոր մուտքը, որը 3մ բացուածքով դէպի ներս գնացող երկու զուգահեռ պատաշարերով մօտ 15 մետրանոց միջանցքի տեսք ունի (պատկ.402): Արեւելեան պարսպի հիւսիսային՝ մինչեւ մուտք եկող հատուածի առջեւից անցնում է տեղ-տեղ քարաշէն հենապատերով եզերուած ամրոց մտնող հիմնական ճանապարհը:

357. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 70–71: Դ. Ինճիճեան, *Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, ի տպարան Սրբոյն Ղազարու*, Վենետիկ, 1822, էջ 279:

Ամրոցի պատերը շարուած են մեծ, ճեղքած, անմշակ մօտաւոր խորանարդի բերուած քարերից՝ առանց կրաշաղախի [պատկ.339]: Որպէս կապակցող նիւթ պատաշարերում օգտագործուել է կաւահողը:

Ամրոցի ներսի հարթ՝ դէպի հարաւ որոշ թեքութիւն ունեցող, բաց 140x60մ մօտաւոր չափերով տարածքը խիստ հողմնահարուած է եւ ենթարկուած է բնական էրոզիայի (պատկ.403): Այստեղ տեղ-տեղ նկատւում են շրջապարսպից մնացած պատառիկներ եւ առանձին պատաշարերի հետքեր, որոնք կարող են վկայել երբեմնի կառուցապատման մասին»[358]:

358. Եռեակ, էջ 89–90:

5.11. Քաշաթաղ ամրոց, 39°44’08”N, 46°23’44”E, բ.ծ.մ. 1.468 մ

Քաշաթաղը գաւառի անառիկ բերդերից մէկն էր, որն իր անունը ստացել է Տաթեւի հարկատու ցուցակում յիշատակուող մօտակայ գիւղից: Համանուն գիւղն այժմ համապատասխանում է Ադրբեջանի Հանրապետութեան Լաչինի շրջանի Քարիղշլաղ կամ Կարիկիշլակ գիւղին: Ըստ Ա. Ղարագյոզյանի՝ այն նոյնացւում է Քաշաթաղ գիւղին եւ

ամրոցին նաեւ այն պատճառով, որ նրա մօտ է գտնւում նաեւ Վերին Շէն գիւղը, իսկ Քաշաթաղը նշանակել է «ներքին գիւղ»[359]: Հիմք ընդունելով այս տեսակէտը՝ կարելի է հաստատել, որ Ստ. Օրբէլեանի յիշատակած «Քաշէթաղուց բերդը»[360] տեղադրուած է այժմեան Գարիգիշլագ գիւղի հիւսիսային մասում վեր խոյացող բարձունքին, որտեղ պահպանուել են ամրոցի աւերակները (պատկ.404): Համաձայն Ա. Ղարագյոզյանի նկարագրութեան՝ Քաշաթաղ ամրոցն զբաղեցնում է 200 քառ.մ տարածք: Ամրոցի արեւելեան հատուածում պահպանուել է 10մ երկարութեամբ ընթացող բերդապատ, որի բարձրութիւնը հասնում է 1,5–4մ (պատկ.405): Պարսպապատի այս հատուածը պատնէշ է եղել եւ միացրել է նրանից աջ եւ ձախ գտնուող բարձունքները՝ փակելով խոցելի յարմար հատուածը (պատկ.406): Պարսպապատի ներսի կողմի մակերեսներն ընկալելի չեն, քանի որ նրանք վերին մակարդակով մնացել են ժամանակի ընթացքում տոփանուած հողի տակ: Պատերի մօտաւոր հաստութիւնը տատանւում է 0,8–1,2մ: Ամրոցապատի շարուածքը կոպտատաշ, անկանոն քարերից է՝ կիրաւազային շաղախով (պատկ.407): Ցաւօք, ամրոցի մաս կազմող կառոյցներից ոչ մի բան տեսանելի չէ, եւ դժուար է խօսել Քաշաթաղի ռազմաճարտարապետական լուծումների մասին: Այս ամրոցը պատմիչները երբեմն անուանել են «յանառիկ դղեակս Քաշթաղ»[361], որը վկայում է նրա ամուր դիրքի եւ «դղեակ» պաշտպանական տիպին պատկանելու մասին: Հակուած ենք համամիտ լինելու եռեակի գրքում արուած ճշգրտմանը, համաձայն որի՝ Ա.Ղարագյոզանի վերը նկարագրած ամրոցը վերագրւում է ոչ թէ Քաշաթաղ ամրոցին, այլ Խոժոռաբերդին[362] (էջ114): Ստեղծուած ռազմաքաղաքական իրավիճակից ելնելով՝ անհնար է այսօր այցելել պատմական Սիւնիքի Քաշաթաղ գաւառ, այդ պատճառով մէջբերում ենք եռեակի նկարագրած Քաշաթաղ (Նորաբերդ) ամրոցի հատուածը. «Ամրոցը գտնւում է Կարաջանլի գիւղից 0,5կմ հարաւ-արեւմուտք՝Հոչան գետի անդնդախոր կիրճի ձախ, հարաւահայեաց ափի զառիթափին՝ կիրճի վերին եզրագծից մօտ 100մ ներքեւ, գետի մակարդակից մօտ 150մ վերեւ, վեր խոյացող բարձր, եռանկիւնաձեւ հրուանդանին:

Արեւելեան ու արեւմտեան կողմերից հրուանդանը եզերւում է ուղղահայեաց գահավիժող ժայռածերպերով եւ գործնականում անմատչելի է (պատկ. 408,409): Միայն հարաւային՝ գետահայեաց կողմից, ունի մօտեցում՝ խիստ թեքադիր լանջով: Ամրոցը յատակագծում եռանկիւնի է, ուր հիւսիսային՝ ամենաբարձր գագաթին, տեղակայուած է մօտ 8–10մ բարձրութեամբ կլորաւուն աշտարակատիպ դղեակ (պատկ.410):

Ամրոցը արեւելեան ու արեւմտեան կողմերից պարսպապատեր չունի: Միայն հարաւային կողմից է պաշտպանուած երկու շարք հզօր պարսպապատերով: Արտաքին՝ հիմնական պարիսպը, 68մ երկարութեամբ գրեթէ ուղղաձիգ հետագծով միացնում է հրուանդանի արեւելեան եւ արեւմտեան եզրագծերի ժայռածերպերը: Այն կառուցուած է կրաշաղախով՝ ճեղքած, խորանարդաձեւ, մեծ քարերից, եւ պահպանուել է մինչեւ 6մ բարձրութիւնը: Արտաքին պարիսպը ուժեղացուած է 4 տարբեր չափերի ուղղանկիւն որմնահեցերով, որոնցից կենտրոնականի չափերն են 3x3,5մ (պատկ.405): Պարսպի ստորին հատուածում անցքեր են, հաւանաբար ջրահեռացման համար:

Հիմնական պարսպին զուգահեռ՝ 16–20մ վերեւ, ձգւում է երկրորդ պարսպագիծը: Այն կառուցուած է նոյն շինտեխնիկայով, ուղղաձիգ է, որմնահեցեր չունի եւ բաժանում է ամրոցի ներսի տարածքը երկու տարբեր մակարդակների վրայ եղող անհաւասար դարաւանդների, որոնց ներսի պարսպամերձ հատուածներում նկատւում են կառուցապատման հետքեր (պատկ.409):

Ամրոցի գլխաւոր մուտքի տեղը չի պահպանուել, բայց, դատելով տեղանքից, այն պէտք է որ լիներ հիմնական պարսպի ծայր, հարաւ-արեւելեան անկիւնում»[363]:

Աղահեճք գաւառում պատմիչների յիշատակած այլ բերդերից են Արապլու բերդը, Վասակակերտը, Պաշունլու բերդիկը, Կարմիր բերդիկը, Մելիքբեկ բերդիկը, Ճաբի բերդատեղին, Հայելակ փոքր ամրոցը, Բատար, Խոզաբերդ ամուր գիւղը,

359. Արմեն Ղարագյոզյան, К локализации гавара Кашатах, «ԼՀԳ», № 1, Երեւան, 1987, էջ 40–41: Ամրոցի մասին տե՛ս նաեւ Եոյակ, էջ 114–118:

360. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1910, էջ 516:

361. *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի յիշատակարաններ*, Երեւան, 1955, էջ 506:

362. Եոյակ, էջ 114–115:

363. Նոյն տեղում:

Պապատիմ, Գեղանուշ ամրոցը, Գինաթաղլար հանգրուանը կամ ամրոցը, Մուրատխան բերդատեղին: Բոլոր այս պաշտպանական կառոյցներն անշուշտ վկայում են գաւառի պաշտպանական կառուցուածքների առկայութեան, նրանց տեղադրման, դիրքորոշման եւ ռազմավարական կազմակերպման մասին, սակայն, ցաւօք, ուսումնասիրութեան համար բաւարար չափով պահպանուած չեն:

Հաբանդ գաւառը, ինչպէս ասացինք, գտնւում է Աղահեճքի հարաւում եւ սահմանակից է նրա հետ Աղավնո գետի աջակողմեան Ծիծեռնավանք վտակի ու ձախակողմեան Շորսու եւ Աղողլան վտակների միջակայ լեռներով: Հաբանդը տարածւում է Աղավնո եւ Բարգուշատ գետերի աւազանների միջեւ: Գաւառն առաջին անգամ յիշատակուել է Է. դարում: Նրա նշանաւոր բնակավայրերից էին Հալիսը, Շինուհայրը, Խոտը, Ձագեձորը, Վանոցան, Տեղը, Խանածախը, Վաղատուն, Գորուն, Քրվանքը, Քարոտան, Գնդաշէնը, Նափակաշէնը: Հաբանդ գաւառի պաշտպանական կառոյցները եւս նշանաւոր են եղել, որոնցից Բորտո, Ձագեձոր, Բղենո ամրոցները յիշատակել է Ստ. Օրբէլեանը՝ Սիւնիքի առաւել կարեւոր պաշտպանական կառոյցների թւում: Գաւառում այժմ ուսումնասիրութեան համար բաւարար չափով պահպանուած ամրոցները սակաւ են, սակայն, վերականգնելով նրանց դիրքադրութիւնը, կարելի է տեսնել, թէ որքան հմտօրէն է կառուցապատուել գաւառը՝ դրանով իսկ անառիկ դարձնելով այն թշնամու համար: Հաբանդ գաւառի կարեւոր ռազմավարական համակարգը գաւառով անցնող եւ միջնադարում շատ բանուկ Որոտն–Անդոկաբերդ գծամասն էր, որը Նախճաւանը Ծաղատով կապում էր Արցախին (պատկ.411): Հաբանդով անցնող ճանապարհահատուածը գծային-պաշտպանական համակարգ էր, որը կառուցապատուած էր տարբեր ռազմական ու մարտավարական նշանակութեան պաշտպանական կառոյցներով: Ճանապարհամասը հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք պաշտպանուած է եղել Որոտն (Ծղուկք գաւառում), Աղոջրիկ, Գորայք, Ոսկաձակ, Խանապայ , Բորոտան, Դավիթլու, Բղեն, Անդոկաբերդ (Բաղքում) ամրոցներով: Այս ճանապարհին անցնում էր Բարգուշատ գետի հովտով եւ գաւառի համար ունեցել է ռազմական, հաղորդակցական ու առեւտրական կարեւոր նշանակութիւն: Գորայք ամրոցից մինչեւ Ծղուկք գաւառի սահմանը պահպանուել են երկու քարաւանատների աւերակներ, որոնք վկայում են այս ճանապարհի բանուկ լինելը միջին դարերում: Նշուած ճանապարհի պաշտպանական համակարգի մաս կազմող ամրոցներից բացի՝ մեզ յաջողուել է գտնել եւ վերականգնել գաւառի Ձագաձոր կամ Հաբանդա բերդ, Բղեն, Գորահանի, Մուկեկ ամրոց, Գրոտ, Ձորի, Խծաբերդ, Խարիս, Ամուտեղ ամրոց, Հազարափրկիչ բերդ, Թումասար ամրոց, Խնձորեսկի բերդ, Արծվաքար բերդ, Օփաւեր պաշտպանական կառոյցները:

5.12. Բարկուշատ ամրոց, 39°26’15.4”N 46°26’50.1”E բ.ծ.մ. 790 մ

Պատմական Բակուշատ բնակավայրի ու ամրոցի մասին տեղեկութիւնները տարբեր են: Ըստ Սիւնեաց տան պատմիչ Ստ. Օրբէլեանի՝ ամենահին յիշատակութիւնը Է. դարից է[364]: Ամրոցը յիշատակում են նաեւ Իվանէ եւ Զաքարէ Զաքարեան իշխանները՝ սելջուկներից ազատագրելու առիթով[365]: Լիպարիտ Օրբէլեանը, տիրոյթները նկարագրելիս, Բարկուշատը միշտ յիշատակել է[366]: Ա. Ղարագյոզյանն այն նոյնացնում է Բորոտան ամրոցի հետ[367]: Բարկուշատ ամրոցը Որոտան գետի աջ ափին է՝ Դողան (Դավուդլու) գիւղից 1,7կմ հարաւ-արեւելք (պատկ.412): Ամրոցի մասին մանրամասն տեղեկութիւններ ունենք եռեակի գրքից, համաձայն որի՝ «Մեծ ու հզօր ամրոց է՝ ստորոտում ընդարձակ բնակատեղիով ու ձեռակերտ ջրամբարով: մօտ 400մ երկարութեամբ ու 100մ լայնութեամբ վեր խոյացող լեռնազանգուածի թամբաձեւ տափարակում եղել է ամրոցի միջնաբերդը (պատկ.413), իսկ կտրուկ բարձրացող հարաւային ցից գագաթին տեղադրուած է դիտակէտ: Գագաթի դիտակէտը բարձր է միջնաբերդից 180մ, իսկ ժայռի ստորոտից՝ 300մ: Այստեղ են նաեւ երկու փոքր, կլոր, կրաշաղախով սուաղուած քարաշէն

364. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 114:

365. Նշ.աշխ., էջ 316:

366. Նոյն տեղում:

367. А. Карагёзян, *Сюник, Нахчаван и Гохтн: историко-географические исследования*, Ереван, 2002, «Зангак-97».

ջրաւազանները: Ամրոցանիստ լեռը արեւմուտքից ու հիւսիսից եզերւում է ուղղահայեաց գահավիժող անմատչելի ժայրածերպերով, իսկ արեւելքից փակուած է կրաշաղախով շարուած 100–120մ երկարութեամբ, տեղ-տեղ կրկնաշարերով զուգորդուող պարսպով (պատկ.414): Նկատւում է, որ վերանորոգուած հատուածների շարուածքը տարբերւում է շինտեխնիկայով՝ հաւանաբար, նաեւ կառուցման ժամանակով: Այդպիսի հորիզոնական շարքերը պահպանող մօտաւոր խորանարդի բերուած քարերով են շարուած նաեւ արեւելեան կողմի հնարաւոր մօտեցման ուղիները փակող որոշ պատաշարեր: Տարբեր կէտերում երեւում են հիմնական պարսպագծին ներսից կցուած շինութիւնների պատերի հետքեր (պատկ.415):

Հիմնական պարսպի հիւսիսային՝ ամենացածր եզրին՝ պահպանուել է ամրոցի գլխաւոր մուտքը (պատկ.416): Այն տեղադրուած է բարձր ժայռագծի վրայ եւ, ամենայն հաւանականութեամբ, ժամանակին ունեցել է դէպի մուտք բարձրացող աստիճանավանդակ: Մուտքի բացուածքը 2,8մ է, նրա երկու կողմերի եզրապատերը պահպանուել են մօտ 2մ բարձրութեամբ: Մուտքից դէպի ներս բարձրացող անցումը գնում է երկու կողմերից պատերով ուղղորդուող միջանցքով եւ տանում է դէպի միջնաբերդի տափարակը (պատկ.417): Այստեղ՝ ամենաբարձր կէտում, գտնւում է այժմ աւերուած եկեղեցին: Եկեղեցուց կանգուն է մնացել միայն արեւմտեան պատի մօտ 2,5մ բարձրութեամբ մի պատառիկ: Եկեղեցու շրջակայքը եւ միջնաբերդի տափարակը խիտ կառուցապատուած է եղել, ուր նկատւում են տարբեր շինութիւնների հետքեր: Միջնաբերդի տափարակի արեւելեան եզրագծին պահպանուել են յուշարձանի ամենավաղ՝ ուշ անտիկ-վաղ միջնադարին բնորոշ, մեծ տափակ քարերից, առանց կրաշաղախի շարուած պարսպի մօտ 15 մետրանոց հատուածի հիմնամասերը:

Ամրոցանիստ լեռան արեւելեան ճակատի վերեւից մինչեւ ստորոտը իջնում է խոր բնական ճեղքուածք, որի միջով անցկացուել է ամրոցի գաղտնուղին: Ճեղքուածքի կրնկին պահպանուել է պատաշարով փակուած ու լաւ քօղարկուած գաղտնուղու նեղ մուտքը (պատկ.418): Մուտքից ներս, պատաշարի եւ լեռան ճակատի միջեւ՝ մօտ 1–1,5մ լայնութեամբ, թեքադիր անցումի յատակին շարուած քարէ աստիճանավանդակը կտրուկ բարձրանում է դէպի վեր: Ստորոտում՝ մուտքի դիմաց, գտնւում է բնակատեղիի արհեստական ջրամբարը»[368]:

368. Եռյակ, էջ 148–150:

5.13. Անդոկաբերդ ամրոց, 39°26’14.06”N 46°28’43.07E, թ.ծ.մ. 655 մ

Ամրոցը գտնւում է Անդոկաբերդ գիւղից 1 կմ հարաւ՝ վեր բարձրացող բլրին՝ Որոտանի ու նրա Խնձորեսկ վտակի միախառնման ձախ կողմում (պատկ.419-422): Ամրոցի մասին յիշատակութիւն ունեն Ստ. Օրբէլեանը[369], Դ. Ինճիճյանը[370], Դ. Ալիշանը[371] եւ ուրիշներ: Ամրոցը լիարժէք ներկայացուած է եռեակի գրքում, որտեղից մէջբերում ենք հետեւեալը. «Ամրոցի միջնաբերդը տեղադրուած է բլրի գագաթին եւ լանջերին, իսկ հյուսիսային եւ արեւելեան ստորոտներում տարածուել է բնակատեղին (պատկ.423): հարաւային՝ գետահայեաց կողմում, բլուրը կտրւում է անմատչելի ուղղահայեաց ժայռածերպերով, իսկ հիւսիսային կողմից այն սահուն միանում է ստորոտի հարթութեանը (պատկ.424): Միջնաբերդը ամրացուած է 4–5 շարք՝ միմիանց զուգահեռ պարսպագծերով, որոնք փակում են մատչելի հիւսիսային լանջը: Պարիսպները կրում են վերակառուցման հետքեր, որոնք լաւ չեն պահպանուել: Լանջի միջնամասում գտնուող հիմնական պարսպի ստորին շարքերը կիկլոպեան են, իսկ վերինները շարուած են մօտաւոր խորանարդի բերուած միջին չափի քարերից՝ առանց կրաշաղախի՝ անտիկ եւ վաղ միջնադարին բնորոշ շինարարական տեխնիկայով (պատկ.425): Պարիսպները պահպանուել են մինչեւ 1,5մ բարձրութեամբ: Պարիսպների միջանկեալ տարածքները կրում են կառուցապատման հետքեր: Վերին պարսպագիծը, որ եզերում է բլրի գագաթի ձեռակերտ հարթեցուած, շուրջ 60x70մ մակերեսով տարածք, ունի ատամնաւոր

369. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 401:

370. Դ. Ինճիճեան, նշ.աշխ., էջ 299:

371. Դ. Ալիշան, նշ.աշխ., էջ 397:

յատակագիծ: Միջնաբերդում պահպանուել են տարաժամանակեայ շինութիւնների հետքեր, բայց գագաթին տեղադրուած սենեակների, բազմասենեականոց համալիրների, փողոց- ների հիմնապատերը (պատկ.426), դատելով վերգետնեայ խեցեղենից, բնորոշ են յու- շարձանի վերջին անտիկ-վաղ միջնադարի ժամանակաշրջանին:

Միջնաբերդի հարաւ-արեւելեան եզրագծին պարզ երեւում է ժայռածերպերի մէջ բացուած, դէպի գետ իջնող նեղ սողանցքը՝ ջրագողի ճանապարհը»[372]:

372. Եռեակ, էջ 155–156:

5.14. Պահու բերդ ամրոց, 39°19’07.08”N 46°34’12.09”E, բ.ծ.մ. 710 մ

Գտնւում է Քաշունի գետի ձախ ափի հարեւանութեամբ՝ բարձրադիր բլուրի գագաթին՝ Որոտան աւանից 3 կմ հարաւ եւ Երկաթաւոր գիւղից 2,6կմ արեւմուտք (պատկ.427): Պահու բերդը նոյնպէս յիշատակում է Սիւնեաց տան պատմիչ Ստ.Օր- բէլեանը[473]: Ինչպէս բարեխղճօրէն նշում է եռեակը, ամրոցի յատակագիծը ձուածիր է՝ 130մ երկարութեամբ եւ 80 մ լայնութեամբ. «Այն շուրջ 80մ բարձրութիւնից իշխում է շրջապատի վրայ (պատկ.428): Լեռը երեք կողմից եզերւում է ուղղահայեաց, գրեթէ ան- մատչելի ժայռածերպերով, իսկ հարաւից՝ մատչելի թեքութեամբ բարձրացող հարթակով (պատկ.429): Ամրոցի պաշտպանական հիմնական կառոյցները կենտրոնացուած են հարաւային կողմում, ուր գտնւում են նաեւ երկու գլխաւոր մուտքերը:

373. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 401:

Ամրոցի պաշտպանական համակարգը կազմակերպուած է բարձրութեան տարբեր նիշերով միմիանց զուգահեռ գնացող երկու պարսպապատերով (պատկ.430): Ամրոցը ներառող առաջին պարսպագիծը գնում է ամրոցանիստ բլրի ստորոտից մի փոքր վերեւ ընկած հորիզոնով եւ արեւելեան, հիւսիսային ու արեւմտեան ճակատներում, տեղ-տեղ ընդհատուելով, ուղղահայեաց ապառաժներով փակում է դէպի վեր տանող մօտեցման բոլոր հնարաւոր ուղիները: Երկրորդ պարսպապատը առաջինից 15–25մ բարձր է եւ ամբողջովին ներփակում է միջնաբերդը կամ, այսպէս կոչուած, «դղեակը»:

Երկու պարսպապատերի գլխաւոր մուտքերը տեղակայուած են հարաւային լանջի մի գծի վրայ եւ անցնում են աջ ու ձախ կողմերում կանգնած կիսաբոլորակ, կո- նաձեւ, սնամէջ հզօր աշտարակների միջով (պատկ.431): Մուտքերը կազմակերպուած են այնպէս, որ առաջինից մտնողը մինչեւ վերեւի մուտքից անցնելը ազատ դիտարկւում ու հսկւում է երկու դարպասների բոլոր չորս աշտարակներից: Աշտարակները ունեցել են դարպասներին նայող փոքր, կամարակապ պատուհաններ, որոնցից երկուսը պահ- պանուել են: Ստորին պարսպաշարի երկու աշտարակները պահպանուել են մինչեւ 8–10 մ բարձրութիւնը (պատկ.432): Սրանք, ինչպէս նաեւ ամրոցի բոլոր շինութիւնները, շար- ուած են միջին չափի ճեղքած անմշակ քարերից՝ ամրացուած կրաշաղախով, եւ դրսից սուաղուած են եղել կրածեփով: Պարիսպների հաստութիւնը հասնում է 2,5–4,0մ:

Միջնաբերդը, բացի մուտքի երկու կիսակլոր աշտարակներից, հիւսիսային եզրա- պարսպին ունեցել է նաեւ երկու քառանկիւնի հզօր աշտարակ-դիտակէտեր (պատկ.433), որոնց առաջին յարկերում եղել են ջրամբարներ: Դատելով աւերակներից կարելի է եզրա- կացնել, որ միջնաբերդը ժամանակին խիստ կառուցապատուած է եղել (պատկ.434): Շի- նութիւնների հետքեր են պահպանուել նաեւ հարաւային լանջին՝ առաջին եւ երկրորդ պարսպապատերի միջանկեալ տարածքներում (պատկ. 435): Ամրոցում յայտնաբերուած վերգետնեայ խեցեղէնը սակաւ է եւ բնորոշ է զարգացած եւ ուշ միջնադարին»[374]:

374. Եռեակ, էջ 170–171:

5.15. Քաշունի ամրոց, 39°19’02.08”N 46°34’57.02”E, բ.ծ.մ. 649մ

Գտնւում է Որոտան աւանից 3կմ հարաւ եւ Երկաթաւոր գիւղից 1,6կմ արե- ւմուտք՝ Որոտան գետի աջակողմեան վտակ Քաշունիի ձախ ափին (պատկ.436): Ամ- րոցը յայտնաբերուել է 2013-ին՝ Զ. Ըռքոյանի, Ս. Սարգսյանի, Լ. Հովհաննիսյանի ու Գ. Սարգսյանի գիտարշաւի ժամանակ: Անդրադառնալով եռեակի գրքին՝ մէջբերենք հետեւեալ կարեւոր փաստարկները. «Ամրոցը տեղակայուած է հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք դէպի Քաշունի գետը իջնող բարձր, սրածայր լեռնաբազուկի վերին

նեղ ու երկար գագաթնագծին (պատկ.437)։ Այն հարաւ-արեւմուտքից եզերւում է ուղղահայեաց կտրուած անանցանելի բնական ժայռերով, իսկ հիւսիս-արեւելեան կողմից ամրացուած է 280մ երկարութեամբ պարսպաշարով (պատկ.438)։ Պարիսպը ծառայել է նաեւ ներսի տարածքը լայնացնող ու հարթեցնող հողալիցքի հենապատ։ Ամրոցը յատակագծում մօտենում է թեքադիր, երկարաձիգ ուղղանկեանը, ուր վերին՝ ամենալայն մասի լայնութիւնը 35մ է, իսկ ստորին՝ ամենանեղ մասինը՝ 12մ։ Վերին ու ստորին կէտերի բարձրութեան նիշերի տատանումը 35մ է։

Լեռնաբազուկի ամրոցակալ հատուածը անջատուած է հիւսիսային շարունակութիւնից 20–25 մ երկարութեամբ՝ ակնյայտօրէն ձեռակերտ խանդակով (պատկ.439, 440)։ Խանդակի լայնութիւնը 10–15մ է, խորութիւնը՝ 6մ։ Վերին եզրագծում ամրոցը աւարտւում է կլորաւուն բլուրը ներփակող կիսաշրջան պարսպով, որի արեւմտեան՝ ձորահայեաց եզրով, եղել է ամրոցի երկրորդ՝ հիւսիսային մուտքը (պատկ.441)։ Ամրոցը ընդգծուած միջնաբերդ չունի, եւ այս բլրակի գագաթին նկատուող շրջանաձեւ կառոյցը կարելի է վերագրել դղեակին։ Դղեակի դիմաց՝ ներսում, տարածւում է բաց հրապարակ։ Արեւելեան պարսպագիծը կանգուն է գրեթէ ամբողջ երկարութեամբ՝ տեղ-տեղ մինչեւ 4–5մ բարձրութեամբ (պատկ.442)։ Այն հիմնականում հարթ է եւ միայն երկու կէտերում ուժեղացուած է ծաւալից դուրս եկող ուղղանկիւն ու կիսաբոլորակ որմնահեցերով (պատկ.443)։ Արեւելեան պարսպագծի միջնամասում բացւում է ամրոցի գլխաւոր մուտքը։ Այն կազմակերպուած է որպէս կրկնապարիսպների միջով անցնող 3–4մ լայնութեամբ միջանցք։

Պարսպապատին կից՝ ներսից՝ մուտքից ներքեւ, պահպանուել է իրար յաջորդող սենեակների շղթայ, որը կայազօրի կացարանների տպաւորութիւն է թողնում։ Ամրոցի արեւմտեան՝ ուղղահայեաց գահավիժող ժայռագծի տակ, բացւում է մի բնական միջանցիկ անձաւ, որը, ամենայն հաւանականութեամբ, «ջրագողի ճանապարհի» քօղարկուած մուտքն է (պատկ.445)։

Ամրոցի բոլոր պարիսպները կառուցուած են խորանարդի բերուած միջին չափի, պոչուկաւոր, կոպտատաշ քարերից՝ ամրացուած կրաշաղախով (պատկ.446,447)։ Կարելի է ընդունել, որ ամրոցը կառուցուել ու գոյատեւել է զարգացած միջնադարում՝ IX–XIV դդ.»[375]։

375. Եռյակ, էջ 175–176։

5.16. Զագեձոր կամ Հաբանդ ամրոց, 39°32’24”N 46°19’34”E, բ.ծ.մ. 1.934 մ

Այս ամրոցի տեղադրութեան մասին կան տարբեր կարծիքներ, սակայն ճշտուած է նրա դիրքը, որը համապատասխանում է հին Բռուն (Ակներ – Ա.Զ.կրտ.) գիւղի տեղին (պատկ.448)։ Ամրոցի եւ բնակատեղիի մասին պահպանուել են տեղեկութիւններ, որոնցից մէկը վկայում է. «Ի Նախնեաց Սիսակեանց լինելոյ բնակութեան գաւառիս, վկայէ պատմիչն ի յիշատակի Զագաձորոյ բերդին, որ եւ Հաբանդայ բերդ կոչէր, իբրեւ գլխաւոր այդպիսի շինից գաւառին, եւ ի Զագայ կամ ի Զագիկ նահապետէ համարիւր շինեալ, ի զարմից նախահօրն Սիւնեաց»[376]։ Զագաձորը եղել է կարեւոր վարչական կենտրոն եւ իշխանանիստ, որի մասին Ստ. Օրբէլեանը տեղեկացնում է. «Այդ ժամանակներում նետողաց ազգի զօրագլուխ էր Բաչու Նոյինը, որն ամէնի վրայ իշխում էր որպէս թագաւոր։ Նա իր բանակով նստած էր Հաբանդ գաւառում, Զագաձորի մուտքի վրայ»[377]։

Ամրոցը կառուցուած է եղել Կորես (Գորիս) գետի ափին. «...ի վերայ գետոյ միոյ...»[378]։ Այն յիշատակւում է 1230-ի դէպքերի հետ կապուած, երբ թաթարների Բաչու զօրավարը մեծ բանակով յարձակւում եւ գրաւում է Զագեձոր բերդը (պատկ.449)։

Ժիրայր Միրումյանի կարծիքով ամրոցը գտնւում է Վերիշենից դէպի Վաղատուր տանող ճանապարհի վրայ իշխող Ղլքերծ (Ղալքերծ, Ղալաքերծ) կոչուող բարձունքի գագաթին (Սիւնիքի հայագիտական հետազօտութիւնների կենտրոն)։ Ստոյգ տուեալներ կարող ենք ունենալ միայն հնագիտական պեղումների եւ տեղում կատարուելիք ուսումնասիրութիւնների միջոցով։

376. Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 255։ Ա. Ղարագյոզյան, *Զագաձորի տեղադրությունը*, «ԼՀԳ», № 11, Երեւան, 1985, էջ 59–62։ Այստեղ զետեղուած քարտէզում Հաբանդ գաւառի արեւելեան սահմանն անցնում է Հակարի գետի հունով։ Մեր կարծիքով՝ սահմանը ճիշտ չէ. այն պէտք է անցնի ինչպէս ցոյց է տրուած Ղ. Ալիշանի Սիսական, Ս. Տ. Երեմյանի եւ մեր ուսումնասիրութիւններում։ Թ.Խ. Հակոբյանը Զագաձոր ամրոցը տեղադրում է Գորիսի շրջանի Վերիշեն գիւղի մօտակայքում։ Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրություն*, Երեւան, 1968, էջ 210։ Բ.Ն. Առաքելյանի կարծիքով՝ բերդը գտնւում է Գորիսից հարաւ՝ Լաստի գագաթին։ Բ.Ն. Առաքելյան, *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ 2, Երեւան, 1960, էջ 78։


377. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 325։

378. Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 255։



395

Պատկ. 395
Արցախի Հանրապետութեան (մինչեւ 2020-ը) եւ Հայաստանի Հանրապետութեան քարտէզները, որոնք համընկնում են Սիւնիքի պատմական Աղահեճք ու Հաբանդ գաւառներին



396

Պատկ. 396
Սիւնեաց նահանգի Աղահեճք ու Հաբանդ գաւառների ամրոցները, գծագիրը՝ հեղինակի



Պատկ. 397
Խոժոռաբերդ ամրոցի դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի




Պատկ. 398
Ամրոցի ժայռաթումբը՝ արեւմուտքից

398



Պատկ. 399
Խոժոռաբերդ ամրոցի
համայնապատկերը

399



Պատկ. 400
Խոժոռաբերդ ամրոցի
տեղահանույթն ու յատակագիծը,
հեղինակ՝ Գ. Սարգսեան

400



Պատկ. 401
Ամրոցի արեւելեան պարսպի
մնացորդները

401



Պատկ. 402
Ամրոցի պարսպապատի
մնացորդները

402



403



404

Պատկ. 403
Խոժոռաբերդ ամրոցի
համայնապատկերը

Պատկ. 404
Քաշաթաղ ամրոցի
դիրքադրութիւնը՝ ըստ
Google Earth-ի



Պատկ. 405
Քաշաթաղ ամրոցի արտաքին պարսպապատը՝ արեւմուտքից

405



Պատկ. 406
Ամրոցատեղիի հրուանդանի համայնապատկերը՝ արեւելքից

406




Պատկ. 407
Քաշաթաղ ամրոցի
պարսպապատերի շարուածքի
մանրամաս

407



Պատկ. 408
Ամրոցի համայնապատկերը՝
Հոչանցի ձորից

408



Արցախի Հանրապետություն, Քաշաթաղի շրջան
Դրախտաձոր համայնք
Ամրոց «Նորաբերդ» 11-14-րդ դդ
Տեղահանույթը և գլխավոր հատակագիծը
(հորիզոնականները անցկացված են 1,0 մետրից)


409

Պատկ. 409
Քաշաթաղ ամրոցի
տեղահանույթն ու յատակագիծը,
հեղինակներ՝ Գ. Սարգսեանի,
Ա. Դավթեան



410

Պատկ. 410
Ամրոցի հրուանդանը՝
հիւսիս-արեւմուտքից


ԳԱՎԱՌՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ
ԲԵՐԴԵՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ
ԳԵՏԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՎՐԱՍՏԱՆ
ԱԶԵՐԲԱՋԱՆ
ԳԱՎԱՌԻ ՄԱՐԶ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՐՑԱԽԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ
ՎԱՆԱՁՈՐ
ՍՎԱՐԹՆՈՑ
ՍԵՎԱՆ
ԿԱՐՄԻՐ ԲԱՇԻ
ՄԱՍԻՍ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՄԱՐՏԱԿԵՐՏ
ՄԱՐԱԼԻԿ
ՄԱՂԱՎՈՒԶ
ՄԱՂԱՎՈՒԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ



Պատկ. 413
Բարկուշատ ամրոցի ժայռալեռի համայնապատկերը՝ արեւմուտքից

413



Պատկ. 414
Ամրոցի պարսպապատի հատուածը՝ արեւելքից

414




415

Պատկ. 415
Բարկուշատ ամրոցի միջնաբերդի
եկեղեցու աւերակները



416

Պատկ. 416
Ամրոցի գլխաւոր մուտքի կողային
պատերն ու աւերակները




Պատկ. 417
Բարկուշատ ամրոցի
տեղահանոյթն ու յատակագիծը,
հեղինակ՝ Գ. Սարգսեանի

417




Պատկ. 418
Ամրոցի գաղտնուղու փլուզուած
հատուածը եւ պարսպապատի
մնացորդները

418



419

Պատկ. 419
Անդոկաբերդ ամրոցի
դիրքադրութիւնը՝
ըստ Google Earth-ի



Պատկ. 420
Ամրոցի լուսանկարչական
տեղահանոյթը,
հեղինակ՝ Լեւոն Մկրտչեան

420



421.1

Պատկ. 421.1
Պահպանուած պարսպապատերի
շարուածքը




421

Պատկ. 421
Ամրոցի համայնապատկերը՝
հիւսիսից



422

Պատկ. 422
Ամրոցի ժայռաբլուրը՝ արեւմուտքից



423

Պատկ. 423
Անդոկաբերդ ամրոցի
տեղահանույթն ու յատակագիծը,
հեղինակ՝ Գ. Սարգսեան



424



425

Պատկ. 424
Ամրոցի լեռնազանգուածը՝ հարաւ-
արեւմուտքից

Պատկ. 425
Երկրորդ պարսպապատի
շարուածքի մանրամաս



426



429


Պատկ. 426
Ամրոցի միջնաբերդի շինութիւնների
մնացորդները

Պատկ. 429
Պահու բերդ ամրոցի
լեռնազանգուածը արեւմուտքից



427

Պատկ. 427
Պահու բերդ ամրոցի
դիրքադրութիւնը՝
ըստ Google Earth-ի



428

Պատկ. 428
Պահու բերդ ամրոցի տեղահանոյթն
ու յատակագիծը,
հեղ.՝ Գ. Սարգսեան



430



431

Պատկ. 430
Պահու բերդ ամրոցի
աշտարակներից

Պատկ. 431
Ամրոցի մուտքի զոյգ աշտարակները



432



433

Պատկ. 432
Մուտքի աջակողմեան աշտարակը

Պատկ. 433
Միջնաբերդի աւերակները



434



435

Պատկ. 434
Ամրոցի հիւսիսային կողմի պարիսպ-
յենապատը

Պատկ. 435
Ամրոցի հիւսիսակող պարսպի
պահպանուած հատուածը



438



439


Պատկ. 438
Քաշունի ամրոցի լեռնազանգուածի
համայնապատկերը

Պատկ. 439
Ամրոցի արեւելեան պարսպի
հատուածը



436

Պատկ. 436
Քաշունի ամրոցի դիրքադրութիւնը՝
ըստ Google Earth-ի



437

Պատկ. 437
Քաշունի ամրոցի տեղահանոյթն ու
յատակագիծը,
հեղ.՝ Գ. Սարգսեան



440



441

Պատկ. 440
Քաշունի ամրոցի արեւելեան պարսպապատի աշտարակ-որմնահեցը

Պատկ. 441
Ամրոցի մուտքի աւերակները



442



443

Պատկ. 442
Ամրոցի արեւելեան պարսպաշարի համայնապատկերը

Պատկ. 443
Ամրոցի արեւելեան պարսպի կիսաբոլոր աշտարակ-որմնահեցը



444



445

Պատկ. 444
Ամրոցի գաղտնուղու մուտքը

Պատկ. 445
Ամրոցի համայնապատկերը՝ արեւելքից



446



447

Պատկ. 446
Ամրոցի պարսպապատի վերին հատուածի պահպանուած մասը

Պատկ. 447
Ամրոցի պարսպապատի շարուածքի մանրամաս



448

Պատկ. 448
Ձագեձոր կամ Հաբանդ ամրոցի
դիրքադրութիւնը՝
ըստ Google Earth-ի



449

Պատկ. 449
Տեսարան՝ ամրոցի հաւանական
տեղից

5.17. ԲԱՂՔ ՈՒ ՁՈՐՔ ԳԱՒԱՌՆԵՐ

Սիւնիքի այս երկու գաւառները գտնւում են նահանգի հարաւային շրջանի կենտրոնական մասում (պատկ.450)։ Բաղքը հիւսիսից սահմանակից էր Հաբանդ, հարաւից՝ Կովսական, արեւմուտքից՝ Ձորք, հիւսիս-արեւմուտքից՝ Ծղուկք գաւառներին, արեւելքից Աղաւնոյ գետով բաժանւում էր Արցախից։ Գաւառի հիւսիսային կողմում հոսում է Ողջի գետը, արեւմուտքում՝ Աղաւնոն, Բարկուշատը, իսկ հարաւում՝ Բաղացը (պատկ.451)։ Գաւառը հնում բաժանուած է եղել երկու մասի. արեւմտեանը կոչուել է Բաղք, որը Ժ. դարից անուանուել է նաեւ Աճեն կամ Աճանան, իսկ արեւելեանը՝ Միւս Բաղք կամ Քաշունիք։ Ստ. Օրբէլեանի յիշատակած նշանաւոր բնակավայրերից էին Ծեկքը (Ծհարջիկ), Նորաշէնիկը, Աչաղուն, Տանձավայրը (Տանձաւեր), Ագարակը, Կաւարտը (պատկ.452)։

Ձորքը հիւսիսից սահմանակից էր Ծղուկք, արեւելքից՝ Բաղք, հարաւ-արեւելքից՝ Կովսական, հարաւից՝ Արեւիք, արեւմուտքից՝ Երնջակ գաւառներին։ Գաւառն ընդգրկում էր Աճանան գետի վերին երկու հոսանքների աւազանները։ Գետն սկիզբ էր առնում Սիւնեաց լեռնաշղթայի մաս կազմող Կապուտջուղ լեռներից։ Ձորքը թագաւորութեան շրջանում կոչուել է Կապան, յետագայում՝ նաեւ Բաղաբերդ (պատկ.452)։

Այս երկու գաւառները Սիւնիքի առաւել ռազմականացուած շրջաններից էին, այդ պատճառով բազմաթիւ են տարաբնոյթ ռազմական ամրոցաշինական կառոյցները։ Սիւնիքի թագաւորութեան շրջանում այստեղ են կենտրոնացել երկրի հոգեւոր, քաղաքական եւ ռազմական ուժերը, որոնք յուսալիօրէն պաշտպանուած են եղել ռազմավարական համակարգերով։

Բաղք գաւառում պաշտպանական ճարտարապետութեան տեսակէտից հետաքրքրական է սահմանային պաշտպանական համակարգը՝ կազմուած իրարից որոշակի հեռաւորութեամբ դասաւորուած եւ տարբեր նշանակութեան ռազմական կառոյցներից, որոնց միջոցով կազմաւորուած համակարգն ապահով էր դարձնում գաւառն առաւել հաւանական խոցելի հատուածներում։ Այս համակարգը բաղկացած էր հետեւեալ սահմանամերձ ամրոցներից (հիւսիս-արեւմուտքից՝ ժամացոյցի սլաքի ուղղութեամբ). Բերդ-Առաւելադաշտ (ի հարաւարեւելեան անկիւնում, սահմանակից էր Բաղքին ու բաժանւում էր նրանից լեռնանցքով), Տանձավայր, Վանդա, Կարանի եկեղեցի, Անդոկաբերդ, Աստծո ժայռ, Պահու բերդ, Բարկուշատ, Գիլաբերդ (Կովսական գաւառի հիւսիս-արեւելեան սահմանում), Բերդաքար (Ծակքար լեռնանցքից արեւմուտք), այնուհետեւ սահմանային ամրոցների համակարգը ներառում էր Կապան-Բաղաբերդ հզօր ռազմականացուած եւ ամրոցների մէկ այլ համակարգով կազմաւորուած հանգոյցը, որից Զեյվայ , Կապան, Բաղաբերդ, Կկոց քար ամրոցներն իրենց հերթին մաս էին կազ- մում վերը նշուած սահմանային համակարգի։ Գաւառի սահմանային համակարգի ամրոցների տեղադրութիւնն ուսումնասիրելով՝ կարելի է գծագրի վրայ նկատել, որ ռազմաճարտարապետական շինութիւնները դիրքաւորուած են գծային համակարգով՝ գաւառի ողջ հիւսիսային մասում՝ Քաշունիք գետի երկայնքով՝ Քաշունիք եւ Բարգուշատ գետերի միախառնման անկիւնից մինչեւ Աճանան գետի ակունքները (պատկ.453)։ Սա բացատրւում է նրանով, որ այս ուղղութեամբ էր ընթանում նաեւ Ծղուկքից իջնող, Տաթեւով ու Սատանի կամուրջով, Բաղքի ու Հաբանդի սահմանազատ եզրագծով անցնող ճանապարհը, որը Խոճիկ աւանի մօտով տանում էր դէպի Արցախ։ Միւս կարեւոր ճանապարհը, որն անցնում էր գաւառի արեւմտեան մասով եւ նոյնպէս պաշտպանուած էր ռազմական կառոյցներով, Բաղաց ձորի ճանապարհն էր, որն սկիզբ էր առնում Տանձավայր ամրոցի մօտից եւ, ընթանալով դէպի հարաւ, անցնում էր Մեծամարգ, Հոռոմանց, Քարանկայ բնակավայրերով ու միանում Կապան-Բաղաբերդ համակարգի մաս կազմող հիւսիսային ճիւղին (Կկոց քար, Գանձակաբերդ, Աչաղվայ, Բաղաբերդ), որտեղից ճանապարհը ճիւղաւորւում էր դէպի Արեւիք (արեւմտեան) եւ Կովսական (արեւելեան)

գաւառներ (պատկ.454)։ Բաղքի ամբողջ հարաւային շրջանը շրջապատուած է բարձրաբերձ լեռներով ու լեռնագագաթներով, որոնք նոյնպէս բնական պատնէշի դեր են խաղացել։

Ձորք գաւառը, որը տարածքով ամենափոքրն էր, նշանաւոր էր Սիւնեաց թագաւորութեան մայրաքաղաք Կապանով եւ նրա պաշտպանական համակարգով։ Գաւառի սահմանները շրջապատող բնականից անառիկ լեռները՝ Արամասար, Երկաթասար, Արամազդ լեռ, Բաղացսար, Կապուտջուղ, Տաշտոնի լեռ, Նահապետ լեռ, Խուստուփ լեռ, արդէն անառիկ ու դժուարանցանելի են դարձրել նրա սահմանները, ուստի Ձորքի պաշտպանական կառոյցներն այնքան բազմաբնոյթ չէին եւ հիմնականում կենտրոնացուած են եղել գլխաւոր վարչակենտրոնի՝ Կապանի շուրջ (պատկ.455)։

5.18. Բաղաբերդ ամրոց եւ Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգ, 39°12′52″N 46°16′40″E, բ.ծ.մ. 1.332 մ

Բաղաբերդը (Դավիթ բեկ) Մեծ Հայքի Սիւնեաց նահանգի անառիկ ամրոցներից էր, որը Դ. դարից սկսած (մինչեւ նրա գրաւումը՝ 1170-ը) եղել է ռազմական կարեւոր հենակէտ, իսկ Սիւնիքի թագաւորութեան շրջանում (987–1170-ը)՝[379] Կապան մայրաքաղաքի ռազմավարական պաշտպանական համակարգի գլխաւոր օղակը։ Ամրոցը Սիւնիքի մարզում է՝ Կապան–Քաջարան մայրուղուն հաղորդակից Դավիթ Բեկ բանաւանի մօտ՝ Քաջարանից 17կմ հարաւ-արեւելք՝ Բարկուշատի լեռնաշղթայից դէպի Ողջագէտի ձախ ափը գահավիժող լեռնաճիւղերից մեկի վրայ, որի լեզուակը կազմող եռանկիւն սարաւանդի ուղղաձիգ անմատչելի ժայռածերպերը ստորոտում ողողւում են Ողջագէտի եւ նրա ձախակողմեան վտակ Գիրաթաղի արագահոս ջրերով (պատկ.456)։ Դժուարամատոյց ժայռապարիսպները եւ բնական խոչընդոտների համակարգն անմատչելի են դարձնում բերդատեղիի արեւմտեան ողջ հատուածը (պատկ.457-460)։ Այսպիսի տեղանքի առանձնայատկութիւնների հմուտ օգտագործումը հնարաւորութիւն է տուել ամրոցի յատակագծում ունենալու առաւելապէս միակողմանի կառուցապատում։ Բերդի դիրքաղրութեան եւ դիրքորոշման համար ընտրուել է Ողջագէտի անդնդախոր ձորերով շրջապատուած ժայռակերպ սարաւանդի կատարի մի բարձրաւանդակ, որն իր գերիշխող դիրքով հնարաւորութիւն է ունեցել հսկելու պատմական Կապան քաղաքը եւ անհրաժեշտութեան դէպքում Սիւնեաց թագաւորութեան մայրաքաղաքի համար ծառայել է որպէս ռազմակայան (պատկ.461)։ Կապանը[380] Սիւնիքի թագաւորութեան մայրաքաղաք է դարձել,[381] երբ Գագիկ Ա. թագաւորը (989–1020) արշաւել է Սիւնիք եւ գրաւել Վայոց ձոր գաւառը, որի հետեւանքով Սիւնիքի թագաւորութիւնն ամփոփուել է իր հարաւարեւելեան գաւառների սահմաններում։ Ստեղծուած իրավիճակում նպատակայարմար էր գահանիստ կենտրոնը տեղափոխել աւելի ապահով վայր, որը եւ դարձաւ Կապան քաղաքը։[382] Այն կառուցուած էր Ողջագէտի հովտի՝ հիւսիսից զառիվայր, անտառապատ ձորերով, հարաւից՝ Արեւիքի լեռնաշղթայի՝ Տանձուլենջ կոչուած վայրում։ Կապանի արեւելք–արեւմուտք առանցքը, որով ձգւում էր գետահովտով անցնող Արցախ–Տաթեւ–Մեղրի–Որտուատ ճանապարհը, եղել է քաղաքի սակաւ ամրացուած միակ ուղղութիւնը։ Դեռ վաղ միջնադարում կառուցուած ռազմական հենակէտերը՝ արեւմուտքում՝ Բաղաբերդը, հարաւ-արեւմուտքում՝ Բաղակի քարը, արեւելքում՝ Հալիձորը (ԺԲ. դար), հիւսիս-արեւելքում՝ Կկոց քարը, ապահով էին դարձնում քաղաքի արեւելեան եւ արեւմտեան մատոյցները (պատկ.461,462)։ Աւելի ընդարձակ պաշտպանական համակարգը բաղկացած է եղել դէպի Կապան տանող ռազմական նշանակութեան բոլոր ճանապարհների երկայնքին իրարից որոշակի հեռաւորութեամբ տեղադրուած բերդերից ու ամրոցներից, որոնք քաղաքի շուրջը ստեղծել են ռազմակէտերի խիտ ցանց եւ մօտաւորապէս 10կմ շառաւղով կազմել ներփակ օղակ, որի կենտրոնում վարչական միաւոր Կապանը։

379. Բ.Հ. Հարությունյանի կարծիքով՝ Սիւնիքի թագաւորութիւնը հիմնադրուել է 987-ին։ Բ.Հ. Հարությունյան, *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 3, Երեւան, 1976, էջ 117։

380. Ստ. Օրբէլեանը Կապանը նոյնացնում է Բաղաբերդի հետ, սակայն այլ առիթով Կապանը եւ Բաղաբերդը համարում է տարբեր բնակավայրեր։ Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 12։

381. Կապանը Սիւնիքի մայրաքաղաք է դարձել հաւանաբար 998–1001-ին։ Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968, էջ 203։

382. А. Карагёзян, *Вопросы исторической географии области Сюник*, (անտիպ աշխատութիւն)։

Բաղաբերդի հիւսիսով անցնում էր երկու ճանապարհ, մէկը գալիս էր Բարկուշատի ու Աճենի կողմից եւ ձգւում էր դէպի Արեւիք ու Գողթն, միւսը սկիզբ էր առնում հենց Բաղաբերդից եւ ձգւում դէպի Տաթեւ: Երկու այլ ճանապարհներ, մէկը՝ արեւմուտքից, միւսը՝ հարաւ-արեւմուտքից, նոյնպէս մաս են կազմել Կապանի պաշտպանական համակարգի: Տաթեւ–Բաղաբերդ ճանապարհի երկայնքով տեղադրուած են եղել Ցուր, Բերդ-Առաւելադաշտ, Տանձավայր, Գանձաբերդ, Աչաղվայ, Կկոց քար, Բաղաբերդ ամրոցները, արեւմտեան ճանապարհը հսկում էին Գեղի եւ Ձեյվայ բերդերը, հարաւարեւմտեանը՝ Ճլորուտը, հարաւարեւելեանը՝ Գոհար, Կոնաս, Բերդաքար, Հալիձոր ամրոցները[383]: Այսպիսով, Կապան–Բաղաբերդ[384] տանող ճանապարհի երկայնքով տեղադրուած ռազմական նշանակութեան հենակէտերը կազմել են մայրաքաղաքի միակենտրոն պաշտպանական համակարգը[385]: Այն բաղկացած էր գլխաւոր ռազմականացուած կենտրոնից, որի շուրջ տարածուել են պաշտպանական տարբեր նշանակութեան միաւորները՝ որպէս լրացուցիչ, ամբողջացնող տարրեր: Այսպիսի համակարգում գլխաւոր կենտրոններն իրենց դիրքադրութեան սկզբունքով, նշանակութեամբ տարբերուել են այդ համակարգի մաս կազմող պաշտպանական միւս միաւորներից: Կապան մայրաքաղաքի[386] պաշտպանական համակարգն ստեղծելիս նկատի են առնուել բնաաշխարհագրական նպաստաւոր բոլոր պայմանները: Գետահովիտները, լեռնաշղթաները, բարձրաւանդակները եւ ձորերը ռազմաշինական կառոյցների հետ միասին ստեղծել են խիտ, անառիկ պաշտպանական գօտի, որը հարաւից կապուած էր Գողթն, Արեւիք, Կովսական, հիւսիսից՝ Ճահուկ, Ծղուկք, Հաբանդ գաւառներում կազմաւորուած պաշտպանական այլ համակարգերին:

Նախքան Կապան քաղաքի պաշտպանական միակենտրոն համակարգի գլխաւոր կենտրոն հաստատուելը Բաղաբերդը[387] եղել է Սիւնեաց աշխարհի անմատչելի ամրոցը եւ ծառայել է որպէս ռազմական հենակէտ՝ քաղաքական տարբեր ընդհարումներից ժամանակաւորապէս պատսպարուելու եւ ապաստանելու վայր[388]: Այս է վկայում թերեւս այն փաստը, որ Դ. դարի կէսերին[389] Սիւնեաց Անդոկ իշխանը, ամրանալով Բաղաբերդում՝ Սիւնիքի ամենաապահով վայրում, կարողացել է յաջողութեամբ հետ մղել պարսից Շապուհ արքայի զօրքերի երեք գրոհները. յետագայում հեռացել է Բաղաբերդից[390]:

Բաղաբերդը պատմագրութեան մէջ յիշատակւում է Բաղաց ամրոց, Բաղաբերդ, Պաղաբերթ անուններով: Ամրոցի մասին յիշատակութիւններ ունեն Շապուհ Բագրատունին (Թ. դար), Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցին (Ժ. դար), Միխիթար Այրիվանեցին (ԺԳ. դար), Վարդան Արեւելցին (ԺԳ. դար), Ստեփանոս Օրբէլեանը (ԺԴ. դար):

853-ին Բուղան Դուինն ասպատակելուց յետոյ արշաւում է Սիւնիք՝ նպատակ ունենալով գերել Վասակ իշխանիկին եւ նրա եղբօրը՝ Աշոտին, որոնք ամրացել էին Բաղաց անառիկ ամրոցներում[391]: Ժ. դարում Սիւնեաց Յակոբ եպիսկոպոսը «ապստամբում» է Անանիա Մոկացի կաթողիկոսի գերագահութեան դէմ եւ ապաստանում Բաղաբերդում, որտեղ ապրում է 10 տարի՝ մինչեւ մահը[392]: Բաղաբերդի մասին յետագայ տեղեկութիւնները վերաբերում են Սիւնիքի թագաւորութեան շրջանին (987–1170)[393]: Թագաւորութեան օրոք բերդի նշանակութիւնն աւելի է կարեւորւում եւ Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգի մաս է կազմում: 1103-ին սելջուկեան թուրքերը Չորթման ամիրայի առաջնորդութեամբ մատնութեամբ գրաւում են Կապանը[394], իսկ Բաղաբերդը գրաւելու փորձերն անյաջողութեան են մատնւում. «..Բայց տեղի ամրութեան պատճառով ոչինչ չկարողացաւ անել, որովհետեւ բերդին զառիվայր քարեր գլորելով՝ բոլորին առհասարակ ոչնչացնում էին»[395]: Կապանի կործանումից յետոյ Բաղաբերդը դառնում է Սիւնիքի թագաւորութեան մայրաքաղաքը: Եթէ մինչ Սիւնիքի թագաւորութիւնը Բաղաբերդը ծառայել է որպէս անառիկ ապաստան, որտեղ թշնամուց յուսալիօրէն կարող էին պատսպարուել մեծաքանակ զօրամասեր,

383. Այս ճանապարհների պաշտպանական համակարգերի մասին աւելի հանգամանալից տե՛ս Ա. Ղարագեոզյան, *Սիւնիքի հարաւ-արեւմտեան մասի ճանապարհները*, «ՊԲՀ», № 2, Երեւան, 1980, էջ 263–268: Նոյնի, Բաղաբերդ, «Սովետական Հայաստան», № 2, Երեւան, 1980, էջ 32–33: Հեղինակի կարծիքով՝ Տաթեւ–Բաղաբերդ ճանապարհով են ներխուժել սելջուկեան թուրքերը եւ Կկոց քարը գրաւելուց յետոյ տիրել Բաղաբերդին: Մեր կարծիքով՝ Բաղաբերդը փորձել են գրաւել նաեւ հարաւարեւելեան ու հարաւարեւմտեան ուղղութիւններով, քանի որ ըստ պատմական տուեալների՝ 1152-ին սելջուկեան թուրքերը գրաւել են Ճլորուտը (հարաւարեւելեան ճանապարհ), 1166–69-ին՝ Գրհամը, Գեղին (արեւմտեան ճանապարհ), որից յետոյ միայն 1170-ին՝ Կկոց քարը, այսինքն՝ Տաթեւ–Բաղաբերդ հիւսիսային ճանապարհի վերջին ռազմական հենակէտը: Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 335–336:

384. Տ.Մ. Սահակյանը Սիւնիքի մայրաքաղաքն անւանում է Կապան-Բաղաբերդ: *Սիւնեաց թագաւորութեան հիմնումը եւ նրա դերը IX դարում*, «ՊԲՀ», № 3, Երեւան, 1966, էջ 221–228:

385. Սիւնիքի միակենտրոն եւ երկկենտրոն պաշտպանական համակարգերի մասին տե՛ս Ա. Զարեան կրտ., *Որոտնաբերդ-Որոտնավանք պաշտպանական համակարգը*, «ԼՀԳ», № 10, Երեւան, 1986, էջ 61–69:

386. Կապան քաղաքի մասին առաջին յիշատակութիւնը վերաբերում է V դարի վերջին քառորդին, իսկ Բաղաբերդը նշանաւոր է եղել IV դարում եւ կազմել է ռազմական նշանակութեան ճանապարհի պաշտպանական համակարգի մաս: Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 122:

387. «...Պատմութեան մէջ յաճախ կը տեսնուի, որ երբ երկրին բնակիչները փախչիլ կ'ուզէին, ասոր մէջ [Բաղաբերդի–Ա.Զ. կրտ.] կ'ամրանային...»: Հ.Ս. Էփրիկեան, նշ.աշխ., հ. 1, էջ 376:

388. «...Բայս յոլովք ի տերանցն կուսակալաց յանառիկ ամրոցն Բաղաց դիմեալք՝ հաւաքեալք՝ փրձանէին ի ձեռաց նեղչացն...»: Յովհաննէս Կաթողիկոս, *Պատմութիւն*, Յերուսաղէմ, 1867, էջ 160: Շատ հաւանական է, որ Սիւնեաց իշխանները պաշտպանուել են Բաղաբերդում, քանի որ այն Սիւնեաց աշխարհի ամենաանառիկ ամրոցն էր:

ապա թագաւորութեան շրջանում, բերդը դառնում է գահանիստ կենտրոն եւ շուրջ մէկ տասնեակի հասնող բերդերի պաշտպանական համակարգի միջոցով վերածւում ամենաանառիկ ամրութեանը Սիւնիքում: Այս մասին է վկայում այն փաստը, որ Կապանի կործանումից յետոյ այստեղ են կենտրոնացնում Տաթեւի վանքի եւ թագաւորութեան մեծաթիւ հարստութիւններն ու ձեռագրերը. «...եւ զի վասն անառիկ ամրութեանն յամենայն վանորեիցն անդ էին կուտեալ զսրբութիւնս եւ զգրեանս եւ զսպաս եկեղեցւոյ. եւս առաւել՝ զանհամար եւ զաննման սրբութիւնս եւ զսպաս եկեղեցւոյ Տաթեւոյ՝ փարթամ եւ հարուստ աթոռոյն, խաչ եւ վկայարանք յոսկւոյ եւ յարծաթոյ, եւ անգին ականբք եւ անհուն մարգարտով զարդարեալ, եւ կտակարանք յոլովք, որք թուով աւելի քան զ10,000 զորս ամբարեալ էին անդ»[396]: Բաղաբերդի մասին Ժ. դարին վերագրուող յիշատակութիւններ ունի Վարդան պատմիչը՝ Սիւնեաց Ջիվանշիր իշխանի որդի Վահանի՝ Վահանավանքը հիմնելու առիթով. «...գտեր Վահան ի Բաղաց, որդի Ջուանշէրի իշխանին, որ շինեաց ամենապայծառ ուխտն Յոհաննու վանս, առ ստորոտս անմատոյց դղեակին Բաղաց»[397]: Վահանավանքի կառուցման առիթով Բաղաբերդը յիշատակում է նաեւ Գանձակեցին[398]:

Հասանի իշխանութեան օրոք՝ 1126-ին, Բաղաց թագաւորութեան վրայ է յարձակւում Հարոն ամիրան[399], գրաւում է Կաքաւաբերդն ու Բաղակի քարը[400]: Ինչպէս Ստ. Օրբէլեանն է նշում, Կապանի գրաւումով (1103) թուլանում է Բաղաց թագաւորութիւնը, եւ հետզհետէ իշխանութեան տարածքը փոքրանում է: Կապանի աւերումից մէկ տարի անց՝ 1104-ին, թշնամին գրաւում է Որոտանը, 1105-ին՝ Շլորուտը, 1157-ին՝ Մեղրին, 1166–69-ին՝ Գրհամը, Գեղին, Կաքաւաբերդը[401]: Կապան մայրաքաղաքի գրաւումից 67 տարի յետոյ միայն՝ 1170-ին Ելտկուզ աթաբեկի զօրքերին յաջողւում է խաբէութեամբ ներխուժել ամրոց եւ գրաւել դարերի ընթացքում անառիկ մնացած Բաղաբերդը[402]:

1166-ին վախճանւում է Սիւնիքի թագաւոր Սենեքերիմի որդի Գրիգորը, եւ Սիւնեաց թագաժառանգ է հռչակւում նրա դստեր՝ Կատայի ամուսինը՝ Հասանը, որը ծնունդով Խաչենի իշխանական տոհմից էր: Նա գահին է մնում մինչեւ Բաղաբերդի գրաւումը: Բերդի գրաւման մասին Սիւնեաց տան պատմիչը գրում է. «Բոլորի ապաւէն ու ապաստարան անառիկ Բաղաբերդ ամրոցը մատնեց Իսմայէլի՝ անիծեալ ու գիշակեր մարդու ձեռքը, որը բազմաքանակ զօրքով եկաւ, բայց չկարողացաւ ոչինչ անել: Այնուհետեւ խաբէական խօսքերով խաբեց աչաղուացի պարզամիտ քրիստոնեայ մարդկանց ու նրանց միջոցով նախ գրաւեց Կկոց քարը, ապա գիշերը նոյն մարդկանց միջոցով հափշտակեց եւ Բաղաբերդը, որը գրաւելով սաստիկ կոտորած կատարեց»[403]: Ամրոցի մասին յետագայում պատմիչները լռում են: Այդ կապակցութեամբ Ալիշանը գրել է. «... այլ Կապան եւ Բաղաբերդ ոչ եւս յիշին. ... միայն իբրեւ վիճակ՝ Բաղաբերդ կոչումն մնայ եւ մնայ ցարդ»[404]:

Բաղաբերդի դիրքադրութեան մասին պատմիչները որոշակի տեղեկութիւններ չեն հաղորդում, անգամ Ղ. Ալիշանն իր «Սիսական» աշխատութեանը կցած քարտէզում ստոյգ չի նշում Բաղաբերդի, նրանից քիչ հեռու Բաղակի քարի[405] եւ Կապան քաղաքի դիրքը: Ըստ Ստ. Օրբէլեանի՝ Բաղաբերդը հիմնել է ոմն Սիւնեցի Բաղակը. «...որ եւ մի ոմն ի զարմից Սիսակայ, Բաղակ անուն, առեալ զայս գաւառ մասն ժառանգութեան, շինէ զքարն Բաղակու՝ ամրոց, որ կոչի Բաղակի քար եւ ամրացուցանէ զբերդն եւ կոչէ Բաղաբերդ»[406]: Հեղինակը բերդը տեղադրում է Բաղաց գաւառում[407]: Բաղք գաւառը կոչուել է նաեւ «Բաղաց աշխարհ»[408], որի մէջ ընդգրկուել են Ձորք, Կապան եւ Արեւիք գաւառները[409]: Ստ.Օրբէլեանի մէկ այլ յիշատակութիւնում Բաղաբերդը տեղադրուած է Ձորք գաւառում. «Տասներորդ՝ Ձորք գաւառ, որ ունի զանմատոյց ամուրն Բաղաբերդ, եւ այժմ կոչի Կապան»[410]: Պատմագրի այս հաղորդումը բացատրւում է նրանով, որ Բաղաբերդը գտնւում էր Բաղք եւ Ձորք գաւառների սահմանամերձ շրջանում, եւ Ժ. դարից սկսած՝ Բաղքի թագաւորութեան ժամանակ, Ձորք գաւառը մտել է նրա սահմանի մէջ[411],

389. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 86: Լեւոն Մկրտչյանը 2022-ին Բաղաբերդ ամրոցի տեղում հետազօտութեան ընթացքում Դ. դարի շինութիւնների հետքեր չի գտել:

390. Հ.Ս. Էփրիկեան, նշ.աշխ., հ. 1, էջ 376: Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 295:

391. Բաղաց (Կապանի) թագաւորութիւնն իր տիրապետութեան տակ ունէր 43 բերդ, 48 վանք եւ 1008 գիւղ: Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 333–335:

392. Վարդան Ալեքսանյան, *Հակոբ Ա Եպիսկոպոս Սյունեցու գործունեության շուրջ (918–958 թթ.)*, «ՊԲՀ», № 3, Երեւան, 2014, էջ 201:

393. Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, «Միտք» հրատարակչություն, Երեւան, 1966:

394. «...552 (1103) թուին՝ օր մի յանկարծակի մինչ կային յանհոգութեան քաղաքացիքն, մատնեաց Տէր զանառիկն ի մարդկանէ, զԿապան քաղաք. եւ անիծեալ Չորթման վասն քինուն իւր յեղակարծում ժամու հեղաւ ի վերայ քաղաքին...»: Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 333–334:

395. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 85:

396. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1910, էջ 336:

397. Վարդան Պատմիչ, *Հաւաքումն պատմութեան*, Վենետիկ, 1862, էջ 89:

398. Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն*, Վենետիկ, 1865, էջ 49: X դարից սկսած Բաղք գաւառը յայտնի է եղել Աճեն կամ Աճանան անունով, որը յետագայ դարերում էլ շարունակել է գործածական մնալ: Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1968, էջ 130–132:

399. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 79:

400. Ենթադրւում է, որ Բաղակի քար ամրոցը գտնւում է Բաղաբերդի դիմաց՝ 700–800 մ հեռաւորութեան վրայ՝ Ողջագէտի ձախ ափին: Այստեղ՝ Բաղակի վանքում, պահվել է հսկայական հարստութիւն, որը կողոպտել է Հարոն ամիրան: Բաղակի քարի մասին տե՛ս Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 118: *Հայաստանի եւ յարակից շրջ....*, հ. 1, Երեւան, 1986, էջ 570:

401. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 335–336:

իսկ Կապանը համարուել է թագաւորութեան մայրաքաղաքը. «Ունէր ի բաժնի զԲաղաց գաւառն եւ զԿապան քաղաք»[412]:

Ինչպէս ասացինք, Բաղաբերդը տեղադրուած է Ողջագէտի եւ Գիրաթաղ գետի միախառնման հատուածում՝ հունից 200մ բարձրութեան վրայ (պատկ.463): Ամրոցի յատակագծային կառուցուածքը վերջնական լուծում է ստացել՝ ելնելով տեղանքի առանձնայատկութիւններից (պատկ.464): Այստեղ շատ հմտօրէն օգտագործուած է արեւմտահայեաց բնական խոչընդոտը: Հրուանդանի կառուցապատումը՝ ստորոտին համապատասխան, իրականացուած է երեք մակարդակներով: Պարսպապատերի առաջին շարքից, որը ամենացածր մակարդակին է՝ Գրաթաղ գետի հունի մօտ՝ արեւմտեան հսկայական ժայռալանջի ստորոտում, պահպանուել է մօտ 60մ երկարութեամբ ուղղաձիգ մի հատուած (պատկ.465,466.1,9): Այս պարսպապատը հաւանաբար վերագրւում է շինարարութեան վերջին փուլին: Այն քօղարկում էր անառիկ բերդաժայռերի միջեւ գոյութիւն ունեցող բնական ջրբաժան գծի ստորին, լայն հատուածը, որտեղով հնարաւոր էր բարձրանալ եւ արեւմտեան կողմից յայտնուել ամրոցի միջնաբերդում (պատկ.466): Պարսպապատերի երկրորդ գօտին առաջինից մօտ 150մ բարձր է: Այստեղ ուղղաձիգ ժայռազանգուածի վրայ տեղադրուած է կիսաշրջան, սնամէջ դիտաշտարակը (պատկ.466.1,7,467,468), որի հիւսիսային անկիւնը լծորդուած է ուղիղ անկիւն կազմող բերդապարսպի հատուածին: Աշտարակի արեւմտահայեաց պատին պահպանուել է դէպի ներս լայնացող պատերով ուղղանկիւն դիտանցքը: Այս դիտաշտարակից կարելի էր հսկողութեան տակ պահել Ողջի գետահովտի ընդարձակ շրջանը եւ հետեւել հակառակորդի զորաշարժերին (պատկ.469): Պարսպապատերի այս խմբից հարաւ նշմարւում են բոլորաձեւ պարսպապատի հետքեր, որոնք նոյնպէս քօղարկում են ջրաբաշխ գծով դէպի վեր լայնացող միջանցքը հարաւ-արեւելքից (պատկ.466.1,8):

Բերդատեղիի արեւելեան հատուածն անտառապատ բլուր է, որը ողորկ մակերեւոյթով բարձրանում է դէպի ժայռածածկ գագաթը եւ լծորդւում լեռնաշղթայի վզիկին (պատկ. 470): Բնական խոչընդոտներից զուրկ այս հատուածում են ամրոցի աշտարակաւոր պարսպապատերը, որոնք ձգւում են հարաւից հիւսիս, հարաւում շրջուելով դէպի հիւսիս-արեւմուտք՝ իրենց մէջ են առնում ժայռի կատարին կառուցուած սնամէջ միակ աշտարակը (պատկ.471): Վերջինս, պայմանաւորուած դիրքադրութեամբ, գլխաւոր մայրուղուց (այժմ՝ Կապան–Քաջարան) հազիւ էր նշմարւում, որի շնորհիւ աշտարակի հսկողութեան տեսադաշտում էր ամրոցին մօտեցող մատչելի արեւմտակողմ ուղղութիւնը: Պարսպապատերի այս ընդարձակ գօտին կառուցուած է գետի հունից ամենաբարձր մակարդակին: Այն ուղղաձիգ հատուածներից կազմուած բեկեալ է, որի կոտրման գրեթէ բոլոր անկիւններում տեղադրուած են հաստաբուն, բրգաձեւ, յատակագծում՝ կիսաշրջանաձեւ հինգ բուրգ-որմնահեցեր, որոնք խմբաւորուած են պարսպապատի հիւսիսային հատուածում, ունեն տարբեր տրամաչափեր (7–12մ): Կառուցողական միջոցառումներից ելնելով՝ պարսպապատի արեւմտեան հատուածը, որն ամրացուած չէ բուրգերով, եւ որտեղ տեղադրուած է բերդի միակ, այժմ կիսաւեր մուտքը (պատկ.472,466.3), աւելի հաստաւուն է (2,5մ): Մուտքի հիւսիսային կողմում տեղադրուած հոծ բուրգն իր տրամաչափով ամենամեծն է (12մ), քանի որ այն օգտագործուել է որպէս մուտքը պաշտպանող հսկիչ մարտաշտարակ (պատկ.473, 466.2): Այս կողմից մօտեցող թշնամին աջից ընկնում էր կողային հատուածի տակ, իսկ ձախ կողմում նահանջելու տեղ չկար, քանի որ այստեղ սկսւում էր անդնդախոր կիրճը (պատկ.474): Բուրգից քիչ ներքեւ տեղադրուած է երկու հրակնատներից մէկը, որն այժմ կիսաւեր է: Այս հրակնատի դիրքորոշումը եւս կապուած է մուտքի պաշտպանութեան ապահովութեան հետ (պատկ.475.2): Թերեւս այս երկու հնարքների կիրառութիւնը կարող էր բաւարար լինել մուտքն անառիկ պահելու համար, սակայն այստեղ օգտագործուած են նաեւ հայկական ամրոցաշինութեան մէջ լայնօրէն տարածուած

402. Ստ. Օրպէլեան, *Ողբ ի սուրբ Կաթողիկոսէն*, բնագիրը յառաջաբանով եւ ծանօթութիւններով հրատարակեց Կարապետ Կոստանեանց, գլ. ԺԳ, Թիֆլիս, 1885, էջ 38:

403. Ստ. Օրբելեան, Երեւան, 1986, էջ 279–80:

404. Ղ. Ալիշան, նշ.աշխ., էջ 295–296:

405. Ստ. Օրբելեանը Բաղաբերդը նոյնացնում է Բաղակի քարի հետ, սակայն իրականում դրանք տարբեր աշխարհագրական վայրեր են, ըստ որում՝ Բաղակի քար ամրոցի մօտ եղել է վանք: Թ.Խ. Հակոբյան, *Ջորք կամ Կապան*, «ՏՀԳ», Երեւան, 1950, էջ 65–66:

406. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 335:

407. Բաղաց աշխարհի մասին յիշատակութիւններ ունի Ասողիկը՝ Վահանիկին կաթողիկոս ընտրելու առիթով. «Ի Բաղաց գաւառէ, որդի Ջուանշէրի իշխանին Բաղաց»: Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկայ, *Պատմութիւն տիեզերական*, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 181: Բաղք անուան ստուգաբանութեան մասին տե՛ս Проф. Гр. Капанцян, *Историко-лингвистическое значение топонимики древней Армении* (Երեւանի պետ. համալսարանի «Գիտական աշխատութիւններ», № 2, Երեւան, 1940, էջ 380–381): Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 69–70: Ա. Ղարագյոզյան, *Սիւնիքի Բաղք եւ Քաշունիք գաւառների ստուգաբանութեան շուրջ*, «ԼՀԳ», № 12, Երեւան, 1973, էջ 71–73:

408. *Հայաստանի եւ յարակից շրջ.…*, հ. 1, Երեւան, 1986, էջ 579–580:

409. «զԱրեւիկ եւ զԲաղս», Շապուհ Բագրատունի, *Պատմութիւն*, Էջմիածին, 1921, էջ 65:

410. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 51:

411. U. S. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, 1963, էջ 43:

412. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 50–52:

մուտքային փակուղիները (շլյուզները)։ Ամրոցի մուտքային հատուածի պարսպապատը կառուցուած է այնպէս, որ թշնամին մուտքից ներս մտնելիս յայտնւում էր դիմացի ուղղագիծ ժայռազանգուածի առջեւ (պատկ.476)։ Ներսի հատուածում պարսպապատը, անկիւն կազմելով, նեղացնում էր միջնաբերդ տանող հնարաւոր անցուղին, որտեղով կարելի էր անցնել միայն 1–2 շարքով։ Պարսպապատի եւ ժայռի միջեւ ստեղծուած այս նեղ միջանցքը, որտեղ կարող էր յայտնուել թշնամին, եւս պաշտպանուած էր ժայռի կատարին տեղադրուած պահակ-աշտարակով (պատկ.477,466.4) եւ մուտքի աջ կողմում տեղադրուած հրակնատով (պատկ.475.2,4)։ Այն յատակագծում ունի ուղղանկիւն նկարուածք, որը դէպի ներս աւարտւում է խորանով։ Այս փոքր ծաւալը ծածկուած է եղել թաղով, իսկ խորանի մասում՝ 1/4 գմբէթարդով։ Հրակնատի կողային, երկայնական պատերը պարսպապատի մակերեւոյթից ուղղահայեաց շարունակւում են դէպի ներս եւ հենւում ժայռին։ Հրակնատի նման յօրինուածքը հնարաւորութիւն է տուել մարտական գործողութիւններ վարելու երկու ուղղութեամբ՝ անկեան տակ, եւ արգելակելու մուտքից ներս յայտնուած թշնամու առաջխաղացումը (պատկ.475)։

Սարաւանդի գագաթը շրջապատող բերդապատերի միակողմանի հատուածով եւ արեւմտեան ժայռապարսպով կազմուած միջնաբերդի ներքին տարածութիւնն այժմ քօղարկուած է հողի հաստ շերտով (պատկ.478)։ Այս ընդարձակ տարածքում (150x50մ) պահպանուել են միայն շինութիւնների աննշան հետքեր։ Միջնաբերդի արեւմտեան անկիւնում՝ պարսպապատերից մօտ 13մ ներս, պահպանուել են հաստ պատերով (2,0–2,5մ) ուղղանկիւն՝ 10x12մ շինութեան պատերի մնացորդներ։ Այն դիրքորոշուած է փոքր բարձունքի վրայ եւ հաւանաբար ծառայել է որպէս հիւսիսային ռազմական ճանապարհի մատոյցները հսկող դիտաշտարակ (պատկ.479,466.1,5)։ Կառոյցի արեւելեան պատը պահպանուել է մօտ 2,5–3,0մ բարձրութեամբ, որի մէջ հորիզոնական ուղղութեամբ մինչեւ այժմ գոյութիւն ունեն գերանների որոշ բներ (պատկ.480)։ Դիտաշտարակի շրջակայ տարածքում յայտնաբերուել են աղիւսէ ուղղանկիւն քարեր։ Հնարաւոր է, որ կառոյցը նորոգուել է եւ որպէս շինանիւթ օգտագործուել է աղիւսը։ Ամրոցի արեւելեան պարսպապատի ներսում, նրան անմիջականօրէն հենուած, պահպանուել են որոշ սենեակների բների փոսորակներ, որոնք դիրքորոշուած են հիւսիսից հարաւ (պատկ.481,466.10)։ Հնարաւոր է, որ այս կառոյցները ծառայել են որպէս զինանոցներ, մթերանոցներ, խցեր։ Բաղաբերդն անկասկած ունեցել է նաեւ գետնուղի եւ ջրամատակարարման համակարգ. «Բաւական հորդաբուխ մի աղբիւր, որն այժմ դուրս է գալիս Ողջագէտի անմիջապէս ափին, ժողովրդական զրոյցների համաձայն՝ մի ժամանակին գտնուել է բերդի ներսում»[413]։ Անհնար է Բաղաբերդ ամրոցի միջնաբերդի շինութիւնների մասին գաղափար կազմել առանց հնագիտական աչալուրջ հետազօտութիւնների եւ պեղումների[414]։

270մ երկարութեամբ պարսպապատերի ամբողջ գօտին, որը պահպանուել է 8մ բարձրութեամբ, կառուցուել է շինարարական երեք փուլով։ Ամրոցի պատերն ու բուրգերը եռաշերտ են՝ կառուցուած բազալտէ կիսամշակ, անկանոն քարերից՝ կրաշաղախի միջնաշերտով (հաստ.՝1,20–2,50մ, պատկ.482)։ Պատերի շարուածքում առաւելապէս պահպանուած են հորիզոնական կարանները։ Ամրոցի հերթական նորոգման ժամանակ պատերի ամրացման նպատակով շաղախով փակուել են անկանոն քարերի շրջակայ ճեղքերն այնպէս, որ սուաղուած մակերեւոյթներից դուրս են մնացել քարերի՝ դուրս արտայայտուած մասերը։ Պատերի քարերի շարքի հորիզոնական կարանները պահպանելու համար, իւրաքանչիւր նոր քարի շարք կառուցելուց առաջ, տափարակ, փոքր քարերով հարթեցուել է յաջորդ քարի շարքի հիմքը (պատկ.483)։ Տեղում մեր կատարած ուսումնասիրութիւններով բացայայտեցինք այն փաստը, որ շինարարութեան ընթացքում օգտագործուել է տեղափոխուող տախտակամած, որի գերանների բները պահպանուել են տարբեր հատուածներում՝ միեւնոյն մակարդակի

413. Թ.Խ. Հակոբյան, *Միւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 118։

414. Պեղումների կարեւորութեան մասին նշէնք, որ Դ. դարում Դուինի մայրաքաղաքի միջնաբերդի պեղումների եւ ուսումնասիրութիւնների արդիւնքում հնարաւոր եղավ գաղափար կազմել նաեւ նրա պաշտպանական միջոցառումների մասին, որին անդրադարձել է Արմէն Չարեանը. «...Դուինը կառուցուած է Ուրծ լեռնաշղթայի, դէպի Արարատեան դաշտավայր իջնող լանջերին, իսկ միջնաբերդը՝ բլուրի գագաթին։ Ծէնքեր տեղադրելու պատճառով վերացրել են գագաթը, ստեղծել 60x85 մ-ի, այսինքն՝ կես հեկտար տարածութիւն։ Հնագիտական տուեալների համաձայն, հարթավայրը կառուցապատուել է պալատական շէնքերով, պարսպապատուել քառանկիւնի կրկնապարիսպներով։ Բերդի չորս անկիւններն ամրացուած էին 15 մետր բարձրութեամբ բուրգերով...»։ Նշ.աշխ., էջ 70։

վրայ: Պատերն ու աշտարակները կառուցելիս իրարից որոշակի հեռաւորութեան վրայ՝ 60–90սմ, տեղադրուել են պատերին ուղղահայեաց, հաստաբուն (15–20սմ) բարձակ (կոնսոլ) կազմող գերաններ, որոնց վրայ, կառուցուող պատին զուգահեռ, հենուել է տախտակամածը (պատկ.484): Պատի տուեալ հատուածը կառուցելուց յետոյ գերանների բարձակի հատուածները կտրել են եւ տախտակամածը նոյնութեամբ տեղափոխել վերին մակարդակում նախօրոք պատի մէջ թողնուած գերանների վրայ: Որոշ բներում մինչեւ օրս պահպանուել են տախտակամածի հենարան գերանների՝ ժամանակի ընթացքում ձեւափոխուած եւ քայքայուած մնացորդներ[415]: Նման շինարարական հնարք է կիրառուել նաեւ Գարդման գաւառի Փառիսոս ամրոցում (պատկ.485):

Նորոգման մէկ այլ փաստ. արեւելեան պարսպապատի միջին հատուածում տեղադրուած պատի ստորին մասում բուրգի կիսաշրջան հիմքի հատուածը մօտ 1մ բարձրութեամբ շարուած է ուղղանկիւն նկարուածք ունեցող աղիւսներով, որոնք ամրացուած են կրաշաղախով: Շինարարական երրորդ փուլին է վերագրւում նաեւ Ողջագետի հունի մօտ կառուցուած, այժմ ուղղագիծ հատուածով պահպանուած պարըս- պապատը (պատկ.486,466.9): Ենթադրւում է, որ առաջնապարսպի այս գօտին կառուցուել է, երբ Սիւնեաց թագաւորութեան մայրաքաղաքը, Կապանը գրաւուելուց (1103) յետոյ, տեղափոխուել է Բաղաբերդ: 1103–1170-ը ամենակարեւոր ու վճռական ժամանակաշրջանն էր, քանի որ Բաղաբերդը գրաւուելուց յետոյ վերացել է Սիւնիքի թագաւորութիւնը: Ամառիկ Բաղաբերդը գրաւել են խաբէութեամբ՝ մէկ գիշերուայ ընթացքում: Ստ. Օրբէլեանը բերդը գրաւելու մասին յիշատակութիւնում[416] ակնարկում է Կկոց քար ամրոցին, որը եղել է Տաթեւ–Բաղաբերդ ճանապարհի վերջին պահակակէտը՝ Բաղաբերդից 2–3կմ արեւելք՝ Աչաղվայ գիւղի մօտ[417]:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ Բաղաբերդը եղել է Սիւնեաց աշխարհի ամենաամուր բերդերից մէկը: Տեղանքի առանձնայատկութիւնները հմտօրէն օգտագործելու եւ ռազմաշինարուեստի լաւագոյն աւանդոյթները կիրառելու շնորհիւ բազմաթիւ այլազգի զաւթիչների համար դարերի ընթացքում այն մնացել է անառիկ: Ռազմավարական նկատառումներից ելնելով՝ ամրոցն ունեցել է կարեւոր երկու շրջան. առաջինը՝ մինչթագաւորական (Դ. դարի երկրորդ կէսից մինչեւ 1103-ը), եւ երկրորդ՝ Սիւնիքի թագաւորութեան ժամանակաշրջանը (987–1170): Առաջին շրջանում ամրոցն օգտագործուել է որպէս յուսալի ապաստարան եւ թաքստավայր, որտեղ թշնամու յարձակումներից բազմիցս թաքնուել ու փրկվել են Սիւնեաց իշխանները: Երկրորդ շրջանում ամրոցն ստանում է համապետական, ռազմավարական նշանակութիւն՝ դառնալով միակենտրոն պաշտպանական համակարգի գլխաւոր տարրը: Այլ բերդերի հետ Բաղաբերդը կազմում է Կապան մայրաքաղաքի ճառագայթաձեւ պաշտպանական համակարգի գլխաւոր օղակը: Երկրորդ շրջանում կարելի է առանձնացնել նաեւ 1103–1170 ժամանակահատուածը, երբ Բաղաբերդը Սիւնիքի թագաւորութեան մայրաքաղաքն էր: Այդ շրջանում ամրոցի ռազմավարական դերը հասնում է առաւելագոյնի, դրա համար էլ Սիւնիքի բազմաթիւ հարստութիւնները կենտրոնացնում են անառիկ մնացած ռազմական միակ հենակէտում:

Ճարտարապետական տեսակէտից Բաղաբերդը հայկական ռազմաշինարուեստի եզակի կառոյց է: Այստեղ օգտագործուել են հայկական ամրոցաշինութեան՝ տուեալ ժամանակահատուածում գոյութիւն ունեցող լաւագոյն աւանդոյթները: Այլ ամրոցների հետ համեմատած՝ այստեղ շատ ինքնատիպ եւ յուրովի է լուծվել մուտքային հանգոյցի պաշտպանութիւնը, հրակնատների տիպը, նրանց դիրքորոշումն ու յատակագծային լուծումը, բուրգերի, որմնահեցերի, դիտաշտարակների եւ բերդապարիսպների տեղընտրութիւնն ու կառուցապատումը (պատկ.487):

Ամրոցատեղի աւերակները լաւ երեւում են այսօր Անդոկաւանից Համլետաւան ճանապարհի ձախակողմ բարձրադիր ժայռալանջ հրուանդանի վրայ:

415. Թ.Խ. Հակոբյանի կարծիքով՝ աշտարակների վրայ պահպանուած այս անցքերը ծառայել են որպէս դիտանցքեր կամ թշնամու վրայ վառուող հեղուկ լցնելու համար: Մեր կարծիքով՝ այս բացատրութիւնն անհաւանական է, քանի որ այդպիսի անցքեր ունեցող աշտարակները եղել են նախ հոծ եւ միեւնոյն մակարդակի վրայ. իրարից հաւասար հեռաւորութեամբ տեղադրուած անցքերն սկսւում են պատի ստորին մասերից, որտեղից անհնար է մարտ վարել: Բացի դրանից՝ աշտարակները կառուցուած են մեծ թեքութեան վրայ, որով եւ բացատրւում է տախտակամածի անհրաժեշտութիւնը:
Թ.Խ. Հակոբյան, *Միւնիքի թագաւորութիւնը*, Երեւան, 1966, էջ 117:

416. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 335–336:

417. Կկոց քարի եւ նրանից հիւսիս գտնվող ամրոցների մասին աւելի հանգամանալից տե՛ս Թ.Խ. Հակոբյան, նշ.աշխ., էջ 134–135: Ա. Դարագյոզյան, նշ.աշխ., էջ 264:



Պատկ. 450
Ցարական Ռուսաստանի քարտէզ՝
“Тифлисск. Елисаветопольск. и Эриванская губерній, сентябрь, 1, 1906г.”

450




Պատկ. 451
Սիւնիքի Ձորք եւ Բաղք գաւառները՝
ըստ հեղինակի


451



452


Պատկ. 452
ՀՍՍՀ Ղափանի շրջանի քարտէզի վրայ՝ Սիւնիքի Բաղք գաւառի աշխատանքային քարտէզը, գծագիրը՝ հեղինակի


ՀԱՅՈՑ
ՍՅՈՒՆԻՔ
ԶՈՐՔ
ԱՐՑԱԽ
ԿՈՂԲ
ՆԱԽՃԻՎԱՆ
ՍԱՀԱՐԱՅԻՆ ԱՆԱՊԱՏ



Պատկ. 454
Կապան քաղաքի պաշտպանական համակարգը, գծագիրը՝ հեղինակի

454



Պատկ. 455
Ջորք եւ Բաղք գաւառների լեռնագրութիւնը

455



456

Պատկ. 456
Բաղաբերդ ամրոցի
դիրքադրութիւնը՝
ըստ Google Earth-ի



457

Պատկ. 457
Ամրոցի համայնապատկերը՝
արեւելքից



458




459

Պատկ. 458,459
Ամրոցի համայնապատկերը՝
արեւելքից



460

Պատկ. 460
Բաղաբերդ ամրոցի
համայնապատկերը՝ հարաւից



461

Պատկ. 461
Վաղ միջնադարում կառուցուած
ռազմական յենակէտերը՝
արեւմուտքում՝ Բաղաբերդը,
հարաւ-արեւմուտքում՝ Բաղակի
քարը, արեւելքում՝ Հալիձորը (ԺԲ.
դար), հիւսիս-արեւելքում՝ Կկոց
քարը, որոնք պաշտպանել են
մայրաքաղաք Կապանի արեւելեան
եւ արեւմտեան մատոյցները,
գծագիրը՝ հեղինակի




Պատկ. 462
Ամրոցի տեսարանը՝
հարաւ-արեւելքից

462



Պատկ. 463
Ամրոցի աւերակները՝ արեւելքից

463



Պատկ. 464
Բաղաբերդ ամրոցի օրտոլուսանկարչական տեղահանոյթը, հեղինակ՝ Լեւոն Մկրտչեան

464



Պատկ. 465
Ամրոցի չափագրութիւնը՝ ըստ հեղինակի, 16.09.1986

Պատկ. 469
Ամրոցից բացուող տեսարանը Որոտան գետի հովիտով

465



466

Պատկ. 466
Բաղաբերդ ամրոցի չափագրութեան մաքրագիծը՝ հեղինակ ճարտարապետ Արա Զարեան
1. Պարսպապատի առաջին շարք
2. Մուտքը պաշտպանող հսկիչ մարտաշտարակ
3.Ծուղակով մուտք
4.Պահակ-աշտարակ
5. Պահեստասենեակ
6. Հսկիչ դիտաշտարակ
7. Կիսաշրջան, սնամէջ աշտարակ
8. Բոլորաձեւ պարսպապատի հետքեր
9. Պարսպապատերի առաջին շարք
10. Սենեակների բներ




468

Պատկ. 468
Ամրոցի սնամէջ, կիսաբոլոր հսկիչ աշտարակը՝ հարաւ-արեւմուտքից




469




469.1


Պատկ. 469.1,2,3,4
Բաղաբերդ ամրոցի տարածքի
տեղագրական յատակագիծ,
Մ 1:1000 եւ պարսպապատերի
կտրուածքների երկրաբաշխական
չափագրութիւն, Մ1:50:
«Երկրագիտական տեխնոլոգիաների
կեդրոն» ՍՊԸ, Երեւան, 2025,
հեղինակներ՝ Ա. Ստեփանեան,
Է. Հովսեփեան, Հ. Պետրոսեան,
Գ. Սահակեան



469.2



469.3



469.4



467

Պատկ. 467
Բաղաբերդ ամրոցի սնամէջ,
կիսաբոլոր հսկիչ աշտարակը՝
հարաւ-արեւմուտքից



Պատկ. 470
Ամրոցի արեւելակողմ
անտառապատ ծածկոյթը

470



Պատկ. 471
Ամրոցի ընդհանուր տեսարանը՝
արեւմուտքից

471




472

Պատկ. 472
Բաղաբերդ ամրոցի մուտքի
հատուածը




473

Պատկ. 473
Մուտքային հանգոյցի հոծ,
կիսաշրջան հսկիչ աշտարակը



Պատկ. 474
Բաղաբերդ ամրոցի օրթոլուսանկարչական տեղահանոիթը, հեղ.՝ Լեւոն Մկրտչեան



Պատկ. 475
Ամրոցի մուտքային հանգոյցի պաշտպանական համակարգը
1. Մուտք,
2. Հրակնատ,
3. Մուտքի սնամէջ, կիսաբոլոր արտաքին աշտարակ-պահակակէտը,
4. Մուտքի սնամէջ, կիսաբոլոր ներքին աշտարակ-պահակակէտը,
գծագիրը՝ հեղինակի

475




476



477

Պատկ. 476
Բաղաբերդ ամրոցի մուտքից ներս՝
բնական ժայռերով ծուղակը

Պատկ. 477
Մուտքից ներս բացուող եւ
պարսպապատին զուգահեռ ծուղակ-
միջանցքը



478



479

Պատկ. 478
Ամրոցի եռաչափ տարածական
մանրակերտը, հեղինակ՝
Լեւոն Մկրտչեան

Պատկ. 479
Ամրոցի ներքին կառուցապատման
առկայութիւնը



480



482

Պատկ. 480
Ամրոցի կառուցման ընթացքում
օգտագործուած փայտէ
տախտակամածի խոռոչների
հետքերը

Պատկ. 482
Ամրոցի պարսպապատերի
շինարարական եռաշերտ
կառուցուածքը



481

Պատկ. 481
Արեւելեան երկայնական պարսպապատը



483

Պատկ. 483
Պարսպապատերի քարերի շարուածքի մանրամաս




484

Պատկ. 484
Տախակամածի գերանների հետքերը պարսպապատերի երկայնքին



485

Պատկ. 485
Գարդմանի իշխանութեան հզօր ամրոց Փառիսօսի պարսպապատերի կառուցման ժամանակ օգտագործուած տախտակամածի գերանների հետքերը պատերի երկայնքին



486



487

Պատկ. 486,487
Բաղաբերդի երկրորդ շինարարական փուլի ամրաշինական կառույցների առկայութիւնը

5.19. ԱՐԵՒԻՔ ՈՒ ԿՈՎՍԱԿԱՆ ԳԱՒԱՌՆԵՐ

Այս երկու գաւառները սահմանազատել են Սիւնեաց աշխարհի հարաւային շրջանը եւ հարաւից սահմանակցել են Վասպուրականի Բաքրան (Բ–Գ դարերում կոչուել է նաեւ Մարանդ), արեւելքից՝ Արցախի, արեւմուտքից՝ Սիւնիքի Գողթն գաւառներին (պատկ.488,489):

Արեւիքը եւ Կովսականը տարածքով Սիւնիքի ամենափոքր գաւառներն էին՝ Մեղրի եւ Ծավ գետերի աւազանների սահմաններում՝ հարաւից եզրափակուելով Արաքս գետով: Այս երկու գաւառները եզերուած էին Արեւիքի լեռնաշղթայով, որը, ձգուելով արեւմուտքից արեւելք, բնական սահման էր Ձորքի, Արեւիքի ու Կովսականի համար:

Այսօրուայ վարչական բաժանման համաձայն՝ Արեւիքը համապատասխանում էր Սիւնիքի մարզի հարաւային մասին եւ Ադրբեջանի Հանրապետութեան Զանգելանի շրջանին (պատկ.490):

Ըստ Ստ. Օրբէլեանի գաւառացուցակի՝ Արեւիքը Սիւնեաց նահանգի ինն երորդ գաւառն էր, Կովսականը՝ ութերորդը, իսկ ըստ «Աշխարհացոյց»-ի՝ համապատասխանաբար՝ տասնմեկերորդը եւ տասներկուերորդը:

Արեւիք գաւառի անուան մասին կան տարբեր կարծիքներ, որոնք հաստատում են նրա հնագոյն ծագումը եւ կապում նոյնանուն ցեղի կամ Արեւ աստծոյ անուան հետ[418]: Գաւառը ժամանակին կազմել է Գողթնի մի մասը, որը յետագայում առանձնացել է եւ մտել Սիւնիքի կազմի մէջ՝ որպէս առանձին գաւառ: Արեւիքը հարաւից սահմանազատուած էր Արաքս (Երասխ) գետով, արեւմուտքից՝ Սիւնեաց լեռնաշղթայով, հիւսիսից՝ Արեւիքի (Կապանի կամ Ձորքի) լեռներով, արեւելքից՝ Խաչպոլու լեռներով:

418. Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968, էջ 200:

Արեւիքով էին հոսում Մեղրի գետը եւ Արաքսի վտակներ Աստղաձորը, Մալեւը: Գաւառը մի ժամանակ բաժանուած է եղել երկու մասի՝ Հաշտոն կամ Տաշտուն եւ Մեղրի: Տաթեւի հարկատու ցուցակի համաձայն՝ Արեւիք գաւառում, որը յիշատակուել է նաեւ «Քէոթուկ» անուամբ, առաւել նշանաւոր էին Կաքաւաբերդ, Տաշտուն, Բաղակաքար, Ագարակ, Մեղրի, Կարճաւան, Ձորաստան, Ղադիր կալասի (Կադիլի), Երնաձիր (Երնազիր այժմ՝ Էրնաձոր) վայրերը: ԺԸ. դարում Արեւիք գաւառի զգալի մասը կոչուել է նաեւ «Կաքաւաբերդու գաւառ»՝ նրա հիւսիսային շրջանում գտնուող նշանաւոր համանուն ամրոցի անունով: Այս շրջանում, Մեղրի քաղաքից բացի, յիշատակուել են 22 առաւել կարեւոր բնակավայրեր:

Գաւառով էր անցնում Ձորք–Տաշտունի լեռնանցք–Մեղրի ճանապարհը՝ հետեւեալ բնակավայրերով (հիւսիսից–հարաւ)՝ Տաշտուն, Թաղամայրի վանք, Վարդանաձոր, Ամրաքար, Մեղրի (պատկ.491): Ճանապարհն ընթացել է Մեղրի գետի ողջ հունով եւ Արաքսի հովտում միացել դէպի Կովսական եւ Գողթն ընթացող ճանապարհին: Պաշտպանական կառոյցների եւ ռազմավարական համակարգերի իմաստով՝ Արեւիք գաւառում յիշատակուել են մի քանի ամրոց ու բերդ, որոնցից առաւել կարեւորներն են եղել Կաքաւաբերդը, Կարճաւանը, Մեղրին, Ղադիր կալասին, Ձորաստանը, Բաղակաքարը, Գըրհամը: Ստ.Օրբէլեանն այս բերդերից առանձնացրել է երեքը՝ Կարճաւանը, Մեղրին, Կաքաւաբերդը, որոնք Սիւնիքի նշանաւորների շարքում են[419]:

419. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 402–403:

5.20. Կաքաւաբերդ ամրոց, 38°56′07″N 46°10′44″E, բ.ծ.մ. 1.337 մ

Կաքաւաբերդ (Կքեբերդ) ամրոցը պատմիչները յիշատակել են որոշ պատմական դէպքերի հետ կապուած, սակայն նրա ճշգրիտ տեղի ու վիճակի մասին կարծիքները վերջնական եւ հաւաստի չեն կարող համարուել: Ըստ Ստ. Օրբէլեանի[420], Վարդան Արեւելցու[421], Ղ. Ալիշանի[422] աշխատութիւնների՝ միանգամայն պարզորոշ է նրա Արեւիք գաւառում գտնուելու եւ բաւական նշանաւոր լինելու փաստը: Կաքաւաբերդի դիրքադրութեան մասին Թ. Հակոբյանի կատարած տեղանքի ուսումնասիրութիւնը (դեռեւս

420. Նույն տեղում, էջ 279:

421. Վարդան Բարձրաբերդցի, *Պատմութիւն տիեզերական*, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 168:

422. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 242:

1947-ին) հաւաստի եզրայանգում է տալիս այն մասին, որ ամրոցը պէտք է դիրքորոշուած լինէր Արեւիքի հիւսիսակողմում՝ Մեղրի գետի ակունքների մօտ՝ Ակունք պատմական բնակավայրի Կալեր վանքի շրջանում (պատկ.492)[423]: Կարծիք կայ նաեւ, որ ամրոցը գրտնւում է Մեղրիի շրջանի Գուդէմնիս եւ Կուրիս բնակավայրերի միջեւ[424]:

Հեղինակն այս ենթադրութիւնը հիմնաւորում է այն հանգամանքով, որ, Սիւնիքի թագաւորութեան տեղանունների հետ կապուած, Սիւնեաց տան պատմիչը նշանաւոր ամրոցների թւում յիշատակում է Կաքաւաբերդը, Մեղրին, Շլորուտը[425]:

Առաջին երկուսը, իրենց աշխարհագրական տեղընտրման համաձայն, եղել են Սիւնիքի թագաւորութեան արեւմտեան սահմանազատ ամրութիւնները: Այժմ դժուար է մեծ ճշտութեամբ առանձնացնել Կաքաւաբերդի տեղը, սակայն Մեղրիում այսօր պահպանուած (Մեղրի բերդից բացի) ամրոցի աւերակներից ամենանշանաւորը Կալեր վանքի մօտակայքում է (պատկ.493):

Պատմական դէպքերի հետ կապուած՝ Կաքաւաբերդն առաջին անգամ յիշատակուել է 1126-ին, երբ Ամիր Հարոնը գրաւել է Արեւիք գաւառը եւ շատ չանցած՝ նաեւ Կաքաւաբերդը[426]: 1166–69-ին Ելտկուզ աթաբեկի նոր արշաւանքը Սիւնիք աւարտւում է Գրհամ, Գեղի, Կաքաւաբերդ, Կկոց քար բերդերի գրաւումով[427]: Կաքաւաբերդն այնուհետեւ յիշատակւում է ԺԸ. դարում՝ կապուած ազատագրական շարժումների հետ:

423. Թ.Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երևան, 1966, էջ 103–104:

424. *Հայաստանի եւ յարակից շրջ...*, հ. 1, Երևան, 1986, էջ 76:

425. Թ.Խ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 64:

426. Գ.Մ. Գրիգորյան, նշ. աշխ., էջ 38:

427. Գ.Մ. Գրիգորյան, նշ. աշխ., էջ 39:

5.21. Մեղրի ամրոց, 38°54′07″N 46°14′59″E, բ.ծ.մ. 702 մ

Մեղրի ամրոցը Արեւիք գաւառի նշանաւոր եւ այսօր ամենից լաւ պահպանուած պաշտպանական կառոյցն է (պատկ.494): Այն առաջին անգամ յիշատակուել է 1083-ին, երբ արդէն գործող եւ հաստատուն պաշտպանական կառոյց էր: 1105-ին սելջուկեան թուրքերի արշաւանքի ժամանակ Մեղրին նորից գրաւել են: Ամիր Հասանի օրոք, 1126-ին, Մեղրին կրկին ասպատակուել է: 1157-ին ամրոցն ու քաղաքը յիշատակւում են որպէս պատերազմական գործողութիւնների թատերաբեմ: Ամրոցը հիմնովին վերակառուցուել է ԺԸ. դարում, երբ Կապանի անկախ իշխանութիւնը թուրք զաւթիչների դէմ վարել է հերթական ազատագրական կռիւները: Բերդի շինարարական միջամտութիւններին վերաբերող վերջին տեղեկութիւնները վերագրւում են հաւանաբար Դավիթ Բեկի ժամանակաշրջանին՝ զէնքի նոր տեսակի՝ հրազէնի հետ կապուած[428]:

428. Մ. Հասրաթյան, *Մեղրու շրջանի յուշարձանները*, Երևան, 1987, էջ 6:

Մեղրի ամրոցը (պատկ.495) այժմ իր բաւական լաւ պահպանուած պաշտպանական կառոյցներով դիրքադրուած է Մեղրի քաղաքի Մեծ թաղի հիւսիսային կողմում (պատկ.496,497): Քաղաքն իր յատակագծային յօրինուածքով բաղկացած էր երկու՝ Մեծ եւ Փոքր թաղերից: Մեծ թաղի կենտրոնական մասում կառուցուել է Սբ Աստուածածին եկեղեցին (ԺԷ. դար), որը յատակագծային յօրինուածքով գմբէթաւոր սրահ տիպի է: Փոքր թաղը տարածւում էր Մեծից հարաւ՝ Մեղրի գետի աւազանի մօտ՝ հարթավայրային մասում (պատկ.498), որը զարգացել է որպէս քաղաքաշինական երկրորդ փուլ, երբ Մեղրի քաղաքի նշանակութիւնն աւելի է կարեւորուել՝ որպէս Սիւնիքի հարաւային շրջանի մշակոյթի եւ առեւտրի հիմնական հենակէտ Արաքսի հովտում:

Մեղրի բերդը հայկական ամրոցաշինութեան բացառիկ երեւոյթ է այն իմաստով, որ այստեղ օգտագործուել է ռազմարուեստին քիչ բնորոշ յատակագծային-յօրինուածքային կարեւոր սկզբունք, որն արտայայտուած է տեղընտրութեամբ եւ պաշտպանական կառոյցների ռազմավարական դիրքադրութեամբ (պատկ.499): Մեղրի քաղաքը կառուցելու համար ընտրուել է ժայռազանգուածներից կազմուած, դէպի աղեղի կենտրոն իջնող հարթավայրը, որը ժամանակի ընթացքում կառուցապատուել ու զարգացել է սրբավայրի՝ գմբէթաւոր եկեղեցու շուրջ եւ տարածուել բնականից պաշտպանուած ժայռապարիսպների դիմաց՝ դէպի Արաքսի հովիտը: Որպէս բնական պաշտպանական եւ ռազմավարական հենակէտ՝ ծառայել են աղեղի շրջագիծը եզրա-

փակող սրածայր, անառիկ ժայռազանգուածները, որոնք ամրացուել են[429] տարբեր բնոյթի աշտարակներով (պատկ.500.1.2.3.4.5.)[430]: Պաշտպանական ճարտարապետութեան իմաստով՝ այստեղ օգտագործուել է բնակավայր-ամրոց ընդունուած սկզբունքը, որը ծրագրուած կամ անակնկալ յարձակումների ժամանակ հնարաւորութիւն էր տալիս անմիջապէս կազմակերպելու զինուած պաշտպանութիւն՝ ունենալով թշնամու հանդէպ ռազմավարական մեծ առաւելութիւն, որը, տուեալ շրջանի արհեստավարժական հնարաւորութիւններից ելնելով, շատ կարեւոր էր եւ ապահովում էր ռազմական ընդհարման յաջողութիւնը: Բոլոր աշտարակները դիրքաւորուած են աղեղ կազմող լեռնապարի վրայ, որը գագաթի մասում ունէր առաւելագոյն բարձրութիւնը բնակավայրի հանդէպ, իսկ աղեղի երկու ծայրերը ժայռալանջ պարանոցով իջել են դէպի հարթավայր եւ ձուլուել նրա հետ այնպէս, որ կարծես իրենց գիրկն են առել ողջ թաղը: Իրարից որոշակի հեռաւորութեամբ եւ պաշտպանական յօրինուածքով տեղադրուած (98–205մ) վեց աշտարակներից երեքը կլոր են՝ զետեղուած արեւմուտքում, մէկը՝ արեւելքում եւ մէկական ուղղանկիւն յատակագծով՝ արեւելքում եւ արեւմուտքում: Աշտարակները, ընթանալով մէկ ուղղութեամբ, իրար նկատմամբ դասաւորուած են աստիճանաձեւ: Այս հանգամանքը նախ ստեղծում է ռազմավարական իմաստով տարբեր տեսադաշտեր եւ պաշտպանական աշտարակներից վարուող փուլային զինամարտի հնարաւորութիւն (պատկ.498): Զինապայքարի ժամանակ, կախուած ռազմական գործողութիւնների ընթացքից, հնարաւոր էր գործադրել կամ կենտրոնացնել տարբեր աշտարակներից արձակուած պաշտպանական գործողութիւնները ու տարբեր ուղղութիւններից միաժամանակ հարուածել թշնամուն կողքից, թիկունքից եւ առջեւից: Կառուցողական տեսակէտից՝ Մեղրի բերդն ունէր յստակ, խելամիտ լուծում: Բոլոր վեց աշտարակները կառուցուած են որպէս առանձին մարտակառոյցներ եւ իրար հետ միացուած են բնական ժայռապարիսպներով (պատկ.501): Աշտարակների դիրքաւորութիւնը եւ յօրինուածքը իրականացուած են այնպէս, որ ներքին մարտահարթակներից կարելի էր պաշտպանուել եւ նրա բոլոր դիրքերից հակահարուած հասցնել թշնամուն, այսինքն՝ թէ՛ դէպի թաղեր մօտեցող կամ թաղերում գտնուող եւ թէ՛ դեռեւս ժայռաղեղի կողերից մօտեցող թշնամուն: Եղել են առանձին փոքր արահետներ, որոնցով բնակաւանի պաշտպանները նախօրոք դիրքորոշուել են տարբեր աշտարակներում:

Պայտաձեւ ժայռապարանոցի սրագագաթ մասերում տեղադրուած աշտարակներից 4-ը յատակագծում ունեն կլոր, իսկ 2-ը՝ ուղղանկիւն յօրինուածք (պատկ.498): Ամենալաւ պահպանուածները № 2, 5՝ կլոր, եւ № 4, 6՝ ուղղանկիւն, աշտարակներն են: Որպէս շինանիւթ օգտագործուել է տեղի գրանիտը: Պատերը շարուած են միջին չափերի կիսամշակ քարերից՝ կաւաւազային շաղախով (պատկ.502): Բոլոր կառոյցները բրգաձեւ են, որոնց պատերի հաստութիւնը հիմքում մօտ 1մ է, իսկ գագաթի մօտ՝ 0,70մ: Բոլոր աշտարակների պահպանուած առաւելագոյն բարձրութիւնը 2–2,5մ է, իսկ ուղղանկիւններինը՝ 3,5–4,0մ: Վերջիններիս կառուցման ժամանակ, որպէս հակաերկրաշարժային միջոցառում, օգտագործել են պատի մէջ հորիզոնական տեղադրուած գերաններ, որոնք երբեմն կատարել են հրակնատների բարաւորների դեր (պատկ.500.2): Կլոր աշտարակների տրամաչափերը 5,5մ են: Բոլոր՝ համեմատաբար լաւ պահպանուած, աշտարակների մուտքերը հիւսիսից են, որն ապահովում էր նրանց անմատչելիութիւնը, քանի որ թշնամու համար այդ ուղղութեամբ մօտենալը դժուար էր: Աշտարակները եղել են երկյարկանի, իսկ մէկն ունեցել է նաեւ վերին, բաց մարտահարթակ, որի ատամնաւոր բացուածքները դեռեւս նկատելի են (№ 5-ը, պատկ.503): Իւրաքանչիւր յարկ ունեցել է միեւնոյն (պատկ.500.5) կամ իրարից շեղուած՝ շախմատաձեւ, վերեւ ու ներքեւ (պատկ.504) տեղադրուած հրակնատներ: Մարտահարթակները եղել են փայտաշէն, որի կրող գերանների տեղերը պահպանուել են պատերի ներքին

429. Մ. Հասրաթյան, նշ. աշխ., էջ 9:

430. Մ. Հասրաթյան, նշ. աշխ., էջ 6–9, 36–46:

մակերեւոյթներին: Ճախմատաձեւ հրակնատները նախատեսուած էին կանգնած եւ ծնրադիր մարտ վարելու համար: Բոլորն ունեն ներսից դուրս 90 աստիճանով թեքուած դիրք, որոնց վերին հարթութիւն- ներն աստիճանաձեւ են (պատկ.505): Այս հնարքը հնարաւորութիւն է տուել ապահով մարտ վարելու աշտարակի ներսից, միեւնոյն ժամանակ պաշտպանուած լինելու արտաքին հարուածներից, որի համար յատակագծում առկայ են միեւնոյն լայնութեամբ ընթացող ուղղանկիւն բացուածքներ (պատկ.500.1): Ի դէպ, կլոր աշտարակների հրակնատների առանցքները շառաւղաձեւ են, միակենտրոն, իսկ ուղղանկիւն աշտարակների լայնական կողերում տեղակայուած հրակնատներինը շեղուած են տարբեր անկիւններով դէպի դուրս՝ թշնամու հնարաւոր յարձակման ուղղութեամբ (պատկ.500.3):

Երկու ուղղանկիւն աշտարակների չորս անկիւններն ունեն 45 աստիճանով շեղուած պատերի հատուածներ, որոնք աշտարակներին տալիս են կառուցողական կայունութիւն: Տարբեր մակարդակների մարտահարթակները հաւանաբար հաղորդակցուել են փայտէ աստիճաններով, որոնք, ինչպէս եւ մարտահարթակները, չեն պահպանուել: Նմանատիպ մարտահարթակներ առկայ են Ախթալայի, Անիի, Սմբատաբերդի ամրոցներում եւ Փարպիի Ծիրանաւոր եկեղեցի-բերդում: Նշուած օրինակներից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ Մեղրի ամրոցը եւս ունեցել է կիսագետնափոր կամ ստորգետնեայ գաղտնարաններ, պահեստներ եւ միեւնոյն ուղղութեան վրայ տեղադրուած աշտարակների միջեւ ստորգետնեայ նրբանցքներ: Ամրոցներում քօղարկուած փոխադարձ կապի առկայութիւնը կարեւոր էր երկարատեւ պաշարումների ժամանակ (պատկ.506,507): Յիշատակութիւն կա, որ 1723-ին Դավիթ Բեկն իր 400 համախոհներով 5 օր անընդմէջ դիմադրել է թուրքական մեծաթիւ բանակին եւ, կազմակերպելով Մեղրի բերդի պաշտպանութիւնը, հասել յաղթանակի (պատկ.508, 509):

5.22. Գրիամ ամրոց, 39°08’42.00”N 46°32’44.08”E, բ.վ.մ. 1.256 մ

Գրիամը Սիւնիքի Կովսական գաւառի հարաւային մասում է՝ Արեւիք գաւառի սահմանամերձ հատուածում (պատկ.510): Բերդն այնքան նշանաւոր է եղել, որ ժամանակին Կովսական գաւառը կոչուել է Գրիամ[431], երբ այն Բաղաց կամ Կապան թագաւորութեան մաս է կազմել: Ստեփանոս Օրբէլեանը Գրիամ բերդը դասում է Կովսականի ամրոցների կարգում՝ տեղեկացնելով, որ գաւառը նոյնպէս կոչուել է Գրիամ[432]: Վարդան պատմիչը Գրիամ բերդը յիշատակում է 1168-ին սելջուկեան թուրքերի Կապան կատարած կործանիչ արշաւանքի բերումով. «...առան եւ մնացեալ դղեակք Կապանին ...Գրիամ եւ Գեղի եւ Կաքաւաբերդ»[433]: Գրիամ բերդի դիրքադրութեան մասին պատմիչներն ստոյգ տեղեկութիւններ չեն յայտնում: Ներկայիս տեղանունների մէջ գոյութիւն ունի Գրվա կամ Գրվին լեռ, որը կարող է լինել Գրիամ ամրոցի տեղընտրութիւնը (պատկ.511): «Գրվա գագաթը գտնւում է այժմեան Ղափան–Իջեւան երկաթգծի Շայիփլու կամ Շարիփլու կայարանի դիմաց, Ողջագէտի ձախ կողմում, գետից ոչ հեռու: Գագաթին շատ մօտ գտնւում են բերդի աւերակներ (պատկ.512): Այդ վայրերին ծանօթ աննշանութիւնը անկասկած չի առարկի, եթէ ասենք, որ Քաշունիքի (կամ Բարկուշատ, այժմ՝ Բերգուշետ) կողմերից դէպի Ողջագէտի միջին հոսանքի շրջանը, չհաշուած Ողջագէտի հովիտը, միակ յարմար ճանապարհը անցնում էր այդ բերդի աւերակների մօտով: Թւում է, թէ հենց նկարագրուած աւերակների տեղում էլ գտնւում էր Գրիամ բերդը»[434]:

Բաղաց թագաւոր Գրիգորը, Գրիամ բերդից բացի, իր տիրապետութեան տակ ունեցել է նաեւ Բաղաբերդ, Գեղի, Կաքաւաբերդ, Շլորուտ, Կարճաւան, Մեղրի ամրոցները[435]: Գրիամ բերդի վերջին տէրերից էր Խաչենի իշխան Հասանը, որը բերդն առանց պատերազմի յանձնել է պարսիկ խաներին, եւ ինքը քաշուել Խաչեն:

431. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859, էջ 51:

432. Նոյն տեղում, էջ 51–52:

433. Վարդանայ Վարդապետ, *Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետին լուսաբանեալ*, Վենետիկ, 1862, էջ 101:

434. Թ. Խ. Հակոբյան, *Սիւնիքի թագաւորութիւնը*, Երևան, 1966, էջ, 105–106:

435. Ստ. Օրբէլեան, Փարիզ, 1859,


Գրհամ ամրոցը վերջերս մանրակրկիտ կերպով ուսումնասիրել են եռեակի անդամները՝ ճշտելով նրա տեղն ու առանձնայատկութիւնները: Այստեղ մէջբերում ենք այս կարեւոր տուեալները. «Գտնւում է Կերէն գիւղից 2,3կմ հիւսիս՝Գրհամ գիւղից 2կմ հիւսիս-արեւելք՝ Ողջի գետի ձախ ափին նստուածքային ապարներից կազմուած Սուսանսարի լեռնաշղթայի վերին գծի ամենաբարձր կէտում:


Ամրոցը բաղկացած է ժայռի գագաթին տեղակայուած միջնաբերդ-դղեակից, նրան հիւսիսային կողմից ներփակող կիսաէլիպսաձեւ յատակագծով պարսպից եւ պարսպից դուրս՝հիւսիսային լանջին տարածուող բնակատեղիից (պատկ.513,514): Միջնաբերդը լեռնաշղթայի կատարին վեր խոյացող՝ մօտ 45–50մ երկարութեամբ, 20–25մ լայնութեամբ եւ մօտ 8–10մ բարձրութեամբ ուղղանկիւն խորանարդաձեւ ցից ժայռազանգուածի մէջ բացուած, միջանցիկ քարանձաւներից կազմակերպուած վիմափոր կառոյց է (պատկ.515,516): Ցից ժայռազանգուածի երկու երկայնական ճակատները գրեթէ ուղղահայեաց են եւ նրանց մէջ խորանարդաձեւ զանգուածին կրկին բացւում են 1,5–2,5մ լայնութեամբ եւ 18–20մ երկարութեամբ միմիանց զուգահեռ չորս միջանցիկ, վի- մափոր անցումներ: Անցուղիների հիւսիս-արեւելեան ճակատները բնական վիմափոր խորշերի տեսք ունեն, ինչը չի կարելի ասել հարաւ-արեւմտեան՝ գետահայեաց ճակատի բացուածքների մասին: Վերջինները զգալիօրէն աւելի ցածր են, նեղ, եւ ըստ ամենայնի, ձեռակերտ են: Վիմափոր միջանցքների հիւսիս-արեւելեան սկզբնամասերը բնական խորշեր են յիշեցնում, բայց յետագայ ընթացքը՝ դէպի գետահայեաց ճակատ, ակնյայտօրէն ձեռակերտ է: Բոլոր մուտքերը կրում են լայնեցման ու հարթեցման հետքեր: Վիմափոր ուղիների յատակները միեւնոյն հորիզոնի վրայ են, իսկ առաստաղների բարձրութիւնները տարբեր են՝2–5մ: Հարաւային առաջին եւ երկրորդ միջանցքները սկիզբ են առնում հիւսիս-արեւելեան մեծ, բնական անձաւային խորշից, որի բացուածքը 4մ է, խորութիւնը 3մ իսկ բարձրութիւնը հասնում է 5մ: Հիւսիսային երկու ժայռափոր միջանցքները ընթացքի միջնամասում հաղորդակցւում են ձեռակերտ անցուղիով: մօտ 4–5մ երկարութեամբ, ցածր առաստաղով այս անցուղու կենտրոնում՝ մի փոքր լայնացող ծաւալի յատակին, փորուած է մօտ 1,5–2,0մ տրամագծով խոր փոս, որը, ամենայն հաւանականութեամբ, պահեստ-շտեմարան է եղել: Փոսը՝ մօտ 3մ խորութեամբ, բացել են գանձախոյզները: Նրանք, հանած հողի թափօնների եւ փոսի խորքում հանդիպում են լաւ թրծուած կարմիր գոյնի աղիւսներ: Ժայռափոր համալիրի երկու ճակատների բոլոր 8 մուտքերը փակուած են եղել պատաշարերով, որոնց հիմնամասերը պահպանուել են: Վիմափոր համալիրի սեղանաձեւ ցցուած ժայռի գագաթի ամենաբարձր տեղում՝ մեծ դահլիճի գլխին, կանգնած է 3,5մ տրամագծով կլոր, սնամէջ դիտակէտ-աշտարակ: Նրա պահպանուած բարձրութիւնը մինչեւ 2մ է եւ շարուած է միջին չափի ճեղքած քարից՝ կրաշաղախով: Ուշագրաւ է, որ մեծ դահլիճի բարձր առաստաղի ճեղքվածքով մի նեղ սողանցք գնում է դէպի վեր՝ աշտարակ:

Վիմափոր համալիրի գետահայեաց կողմում առկայ է 1,5–3,0մ լայնութեամբ նեղ երկար հրապարակ, որից յետոյ գահավիժում են ուղղահայեաց ժայռերը: Համալիրի հիւսիս-արեւելեան ճակատի դիմացի հրապարակը աւելի լայն է, թեքադիր եւ եզերում է խոշոր, ճեղքած անմշակ քարերից երկշերտ շարուած պարսպագծով: Պարիսպը ներփակում է վիմափոր ժայռազանգուածը ամբողջութեամբ, կանգուն է մինչեւ 2մ բարձրութիւնը եւ միջնամասում ունի զանգուածեղ քարերով եզերուած դարպասի բացուածք:

Դատելով շինտեխնիկայից եւ պահպանուած աղիւսներից ու փոքրաթիւ խեցեղէնից՝ ամրոցը կարելի է թուագրել 9–13 դարերով»[436]:

436. Եռյակ, էջ 192–193:


ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆ
ԱՐՑԱԽ
ԿՈՎԿԱՍԱԿԱՆ
ԳՈՂԹՆ
ՋՈՐՔ
ԲՂՆՔ
ԱՐԵՎԻԿ
ՏԱՐԱՇԱՐ
ԴԱՍՏԱԿԵՐՏ ԴԱՍՏԱԿԵՐՏ
ՎԱՆԱՆԴ ՎԱՆԱՆԴ
ԳԵՀԻ ԳԵՂԻ ԲԱԳԱԲԵՐԴ ԲԱՂԱՔԵՐԴ
ԶԵՎԱ ՉԵՎԱ ԿԱՊԱՆ ԿԱՊԱՆ
ՀԱՅՐՈՒՄ ԱԼԱՋՈՐ
ՇԼՈՐՈՒՏ ՇԼՈՐՈՒՏ
ՔԱՂԱՔԿԵՐՔ ԲԱՀԱԿԱ ԿԱՐ
ՄԵԳՐԻ ՄԵՂՐԻ
ՔՅՈՒՐ ԴԱՇՏ ԿՅՈՒՐ ԴԱՇՏ
ՀԱՅՈՑ ՁՈՐ
ՏԱՅՈՑ ՁՈՐ
ՎԱՆԱՆԴ ՎԱՆԱՆԴ
ՏՈՐԹԻ ԹՈՐԹԻ
ՍԱՐԻ ՍԱՐ
ՀՈՐ ՁՈՐ
ՍՅՈՒՆԻՔԻ ԱՐՔՅՈՒՆԻՔ
ԳԱՂԶՐԲԵՐԴ ԳԱՆՁԱԲԵՐԴ
ՀԱՅԿԱՎԱՆ ԱՀԱՎՆԱ
ԽՆԱՅՍԱՅ ԽԱՉԱՑ
ՔՈՂԱԿԱՐ ԿՈՂԱԿԱՐ
ՀԱՅԿԱՎԱՆ ԱՀԱՎՆԱ
ՔՐԴՋԻՎԱՆՑԱՁՈՐ ԲԵՐԴԱՎԱՆՔԱՇՏ
ՎԱՆԱՆԴ ՎԱՆԱՆԴ
ՏՈՐԹԻ ԹՈՐԹԻ
ՍՅՈՒՆԻՔԻ ԱՐՔՅՈՒՆԻՔ
ՀՈՐ ՁՈՐ
ՍԱՐԻ ՍԱՐ
ՏԱՅՈՑ ՁՈՐ
ՀԱՅՈՑ ՁՈՐ
ՀԱՅՐՈՒՄ ԱԼԱՋՈՐ
ՇԼՈՐՈՒՏ ՇԼՈՐՈՒՏ
ՔԱՂԱՔԿԵՐՔ ԲԱՀԱԿԱ ԿԱՐ
ՄԵԳՐԻ ՄԵՂՐԻ
ՔՅՈՒՐ ԴԱՇՏ ԿՅՈՒՐ ԴԱՇՏ
ՀԱՅՈՑ ՁՈՐ
ՏԱՅՈՑ ՁՈՐ


DOGUBEYAZIT
DOGUBEYAZIT range
DOGUBEYAZIT
DOGUBEYAZIT
DOGUBEYAZIT



492

Պատկ. 492
Արեւիկ գաւառի Կաքաւաբերդ ամրոցի դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի՝ համաձայն Հ.Խ. Բարսեղեանի *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարանի*



493

Պատկ. 493
Արեւիկ գաւառի Կաքաւաբերդ ամրոցի դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի՝ համաձայն Թ.Խ. Յակոբեանի *Միւնիքի թագաւորութիւնը* աշխատութեան




494

Պատկ. 494
Արեւիկ գաւառի Մեղրի ամրոցի դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի




495




496

Պատկ. 495,496
Մեղրի քաղաքի համայնապատկերը
եւ ամրոցի աշտարակների
տեղադրութիւնը



497

Պատկ. 497
Մեղրի ամրոցի արեւմտահայեաց ուղղանկիւն ու կլոր յօրինուածքով աշտարակները



498


Պատկ. 498
Մեղրի ամրոցի պաշտպանական կառուցուածքը Մեծ թաղի շրջակայքում ու տարբեր յօրինուածքի աշտարակների տեղընտրութիւնը, գծագիրը՝ հեղինակի



499

Պատկ. 499
Ամրոցի աշտարակներից


Պատկ. 500,500.1,2
Մեղրի ամրոցի աշտարակների
չափագրութիւնը՝
ըստ Մ. Հասրաթեանի *Մեղրու շրջանի յուշարձանները*
աշխատութեան




500

500.1


500.2



500.3



500.4



500.5

Պատկ. 500.3,4,5
Մեղրի ամրոցի աշտարակների
չափագրութիւնը՝ ըստ
Մ. Հասրաթեանի *Մեղրու շրջանի յուշարձանները* աշխատութեան



501

Պատկ. 501
Ամրոցի աշտարակի
համայնապատկերը՝ արեւմուտքից



502

Պատկ. 502
Ամրոցի բոլորաձեւ աշտարակի
մանրամաս



503

Պատկ. 503
Ամրոցի ուղղանկիւն աշտարակի
անառիկ տեղընտրութիւնը




504

Պատկ. 504
Մեղրի ամրոցի ուղղանկիւն
աշտարակի ներքին տեսքը



505

Պատկ. 505
Ամրոցի բոլորաձեւ աշտարակը՝
մուտքով եւ հրակնատներով



506

Պատկ. 506
Ամրոցի բոլորաձեւ աշտարակը՝ Մեղրի քաղաքի համայնապատկերում



507

Պատկ. 507
Ամրոցի աշտարակները՝ ժայռածերպերին, եւ բոլորաձեւ աշտարակներից մէկը



508

Պատկ. 508
Մեղրի ամրոցի ուղղանկիւն աշտարակներից եւ ստորոտի անմատչելի ժայռազանգուածը



510

Պատկ. 510
Գրիամ ամրոցի դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի



509

Պատկ. 509
Մեղրի ամրոցի աշտարակներից




511

Պատկ. 511
Գրիամ ամրոցի բլրի համայնապատկերը՝ արեւմուտքից



512

Պատկ. 512
Գրիամ ամրոցի ժայռալանջը՝
Ողջի գետի հունից



513

Պատկ. 513
Գրիամ ամրոցի
օրթոլուսանկարչական
տեղահանոյթը, հեղինակ՝
Լեւոն Սկրտչեան




515



516

Պատկ. 515,516
Ամրոցի անձաւներն ու դրանց մուտքերը



514

Պատկ. 514
Գրհամ ամրոցի տեղահանոյթն ու յատակագիծը, հեղինակ՝ Գ. Սարգսեան

5.23. ԳՈՂԹՆ ԵՒ ԵՐՆՋԱԿ ԳԱՒԱՌՆԵՐ

Այս երկու գաւառները Սիւնիքի հարաւարեւելեան հատուածի սահմանային շրջաններն էին (պատկ.516)։ Գողթնը կամ Գողթանը, ըստ «Աշխարհացոյցի»՝ յիշատակւում է Վասպուրական նահանգի կազմում՝ որպէս նրա 33-րդ գաւառը[437]։ Սիւնիքի եւ Վասպուրականի նախարարութիւններն անընդմէջ պայքարել են Գողթն գաւառին տիրանալու համար[438]։ Ըստ Դ. Ալիշանի՝ նախկինում Գողթնը միացած է եղել Արեւիք գաւառին՝ կազմելով մէկ թեմական միաւոր, եւ միայն յետագայում է այն տարանջատուել եւ միացել Սիւնիքին[439]։ Այժմ այն ընդգրկում է Նախիջեւանի ԻՀ Ապրակունիս եւ Որդուատ շրջանները։ հարաւ-արեւմուտքից եզերւում է Արաքս գետով, արեւելքից ու հիւսիս-արեւելքից սահմանազատուած է Կապուտջուղ լեռնաշղթայով, հարաւից սահմանակից է Վասպուրականին, արեւմուտքից սահմանազատւում է Երնջակ-Ապրակունիս լեռնաշղթայով։ Գողթն անուան ծագումնաբանութեան մասին կան տարբեր կարծիքներ։ Կ.Շահնազարեանն այն բխեցնում է գալլական էթնիկական անունից, Դ. Ալիշանը ենթադրում է, որ այն ծագել է Գորութ իշխանի անունից, իսկ Ս.Ումառյանը՝ տեղաբնիկ կողթերի անունից[440]։ Գողթնն առաջին անգամ յիշատակում է Մովսէս Խորենացին, այնուհետեւ Պտղոմեոսն այն ներկայացնում է Գոլթինե (Colten) անունով[441]։ Այս գաւառի նշանաւոր վայրերից են Ագուլիսը, Ցղնան, Տանակերտը, Մեսրո- պաւանը, Խորսը, Հանդամէջը, Խուրս(տ)ը։

Երնջակ գաւառն «Աշխարհացոյց»-ում յիշատակւում է որպէս Սիւնիքի 1-ին գաւառը, որը Երնջակ գետի վերին հոսանքի շրջանում էր[442]։ Երնջակ գաւառին սահմանակից էին արեւելքից՝ Գողթնը, արեւմուտքից՝ Ճահուկը եւ Նախիջեւանը, հիւսիսից՝ Ճահուկի մի մասը եւ Ծղուկքը, հարաւից՝ Երասխ գետը (պատկ.517)։ Այն համընկնում է այսօրուայ Նախիջեւանի ԻՀ Ջուլֆայի շրջանին։ Սիւնիքի կազմի մէջ գաւառը յիշատակւում է Է. դարից։ Անուան ստուգաբանութեան աճառեանական տարբերակի համաձայն՝ այն սերում է երինջ բուսատեսակից, որ նշանակում է «ցուլի փուշ»[443]։ Դ.Ալիշանն իր «Սիսական» աշխատութեան մէջ յիշատակում է հետեւեալ կարեւոր բնակատեղիները՝ Երնջակ, Շոռոթ, Փարադաշտ, Նորաշէն, Խաչափարախ, Քոնայ , Ապրակունիք(ս), Արազին, Ջուղայ, Միլաղ (Միլաքս), Մազրա, Թագաւորամարդ, Շահակերտ, Գաղի, Նահաջիր, Սուրմալիկ[444]։

Պատմական Սիւնիքի Գողթն ու Երնջակ գաւառները Նախիջեւանի ԻՀ տարածքում են, ուստի այսօր, ցաւօք, մատչելի չեն ուսումնասիրութեան համար։ Մինչեւ խորհրդային կարգերի փլուզումը՝ որոշ հետազօտողներ այցելել են այս շրջաններ եւ կատարել հետազօտութիւններ ու փաստագրել պատմական նշանակութիւն ունեցող հիմնական բնակավայրերը, նաեւ որոշ բերդամրոցներ։ Այս առումով նշանակալի է մշակութաբան ու նախիջեւանագէտ Արգամ Այվազյանի «Նախիջեւանի ԻՍՍՀ հայկական յուշարձանները»[445] ուսումնասիրութիւնը, որտեղ ամփոփուած են ամրոցների վերաբերյալ համառօտ տեղեկութիւններն ու նկարագրութիւնները. Գողթն գաւառ՝ Գիրան բերդ, Ազատ բերդ, Խոսրովի դղեակ-ամրոց, Ցղնայի բերդ, գաւառ՝ Շահկերտի բերդ, Երնջակ բերդ, Գաղի բերդ, Նահաջիրի բերդ, Սուրմալիկ ամրոց, «Դարվազիրի գլխի բերդ»։ Մեր աշխատութեան մէջ համառօտ կ’անդրադառնանք դրանցից մի քանիսին՝ օգտուելով ձեռքի տակ եղած սակաւ գրականութիւնից։

437. Թ.Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968, էջ 190։

438. Դ. Ալիշան, նշ. աշխ., էջ 303։

439. Վ.Ա. Հակոբյան, *Մանր ժամանակագրութիւններ*, հ. 2, Երեւան, 1956, էջ 307։

5.24. Խոսրովի դղեակ-ամրոց, 36°55’38”N 45°50’15”E, բ.ծ.ն. 756 մ

Այս ամրոցատեղին յիշատակւում է Դ. Ալիշանի «Սիսական» աշխատութեան մէջ, որտեղ հեղինակն այն դիրքադրում է Երասխ գետի մօտ, մինչդեռ Ա. Այվազյանի կարծիքով՝ դղեակը գտնւում է Սմբատան դիզա գիւղին մօտակայ բարձր սարի գագաթին (պատկ.519)։ Ստոյգ տեղեկութիւններ կան այն մասին, որ դղեակը կառուցել է Վահան Գողթնացին Է. դարում, այնուհետեւ այն վերակառուցել է Գողթնի Խոսրով իշխանը, որի անունով էլ հասել է մեզ։ Դղեակը յիշատակուել է նաեւ Խաչիկ Ա. Կաթողիկոսի թողած կոնդակում, որտեղ նրա դիրքադրութիւնը նշւում է Գողթնի Շիրին եւ Ազատ-Գարանի թաղամասերի միջեւ[446]։ Ա. Այվազյանը տեղեկացնում է, որ դղեակի աւերակները տեսա-

443. Հր. Աճառյան, *Հայերէն արմատական բառարան*, հ. Բ, Երեւան, 1930, էջ 859–860։

444. Դ. Ալիշան, նշ. աշխ., էջ 351։

445. Արգամ Այվազյան, *Նախիջեւանի ԻՍՍՀ հայկական յուշարձանները*, Երեւան, 1986։

446. Հ. Միքայէլ Յովհաննէսեան, նշ. աշխ., էջ 341–342։

նելի էին լեռան գագաթին, որոնց մէջ հնարաւոր է առանձնացնել մի քանի շարքով քարաշէն պարիսպներ։

5.25. Երնջակ ամրոց, 39°11’38”N 45°41’38”E, ք.ծ.մ. 1.312 մ

Ամրոցը գտնւում է Սիւնեաց նահանգի համանուն գաւառում՝ Երնջակ գետի աջ ափին՝ հսկայական լեռան ժայռագագաթին (պատկ.520)։ Այսօր անզէն աչքով տեսանելի են աւերակները, որոնք ծովի մակարդակից 1.300մ բարձրութեան վրայ են եւ զբաղեցնում են մօտ 800 քառ.մ տարածք (պատկ.521)։

Այսօր Երնջակ գաւառն իր բերդով համընկնում է Նախիջեւանի ԻՀ Ջուլֆայի շրջանին։ Երնջակ ամրոցը, ըստ Արգամ Այվազեանի, կառուցուել է Ք.ա. Ե. դարում, այն վերակառուցել են Սիւնեաց իշխանները Թ–Ժ դարերում՝ դարձնելով Սիւնիքի ռազմական կարեւոր հենակէտերից մէկը[447]։ Երնջակ գաւառն առաջին անգամ յիշատակւում է Է. դարում[448]։ Ամրոցը՝ որպէս իշխանանիստ կարեւոր ռազմական հենակէտ, յիշատակել են Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցին[449], Ստեփանոս Ասողիկը[450]։ Քերդի կառուցման հետ կապուած՝ Սիւնեաց տան պատմիչ Ստ. Օրբէլեանը մէջբերում է. «Իսկ մի ոմն ի կանանց նոյն նահապետացն Երնջիկ անուն, շինէ եւ զանհնարին ամուրն Երնջակ. … եւ յիւս անուն բերդն եւ գաւառն կոչի Երնջակայ. եւ գնեն ի նմա տուն գանձու եւ հարկաց աշխարհին»[451]։ Ազերներն այն այսօր անուանում են Ալինջա կալա (պատկ.522)։ Երնջակ ամրոցը մատենագիտութեան մէջ առաջին անգամ յիշատակւում է 909-ին, երբ արաբ Յուսուփ ամիրան պաշարել, գրաւել է ամրոցը, սրի քաշել իշխաններին, կոտորել բնակիչներին եւ տիրել ամրոցում պահուած բոլոր հարստութիւններին։ 913-ին Յուսուփ ամիրայի՝ Սիւնիք ներխուժման հետեւանքով եւ Սիւնեաց տանուտէր Աշոտ իշխանապետի մահից յետոյ կինը՝ Շուշանը, իր չորս զաւակների հետ ամփոփւում է Երնջակ ամրոցում[452]։ ԺԳ. դարում Երնջակ գաւառն ու ամրոցն անցնում են Ելտուզեան աթաբեկի տիրակալութեան ներքոյ, որը, շատ չանցած, նուիրում է տարածքները Սիւնեաց Օրբէլեաններին։ Երնջակ բերդը մինչեւ ԺԴ. դարի վերջը պատկանել է Սիւնեաց իշխաններին, որից յետոյ այն անցել է Ջելայիրեաններին։ 1387-ին Լենկթեմուրն արշաւում է Հայաստան եւ ցանկանում գրաւել ու կողոպտել Երնջակ դղեակը, սակայն հուժկու դիմադրութեան է հանդիպում ու բերդը պաշարման մէջ պահում 13 տարի, որից յետոյ է միայն նրան յաջողւում գրաւել այն[453]։

447. Արգամ Այվազյան, *Երնջակ բերդը*, «ԼՀԳ», № 2, Երեւան, 1979, էջ 63։

448. Ս. Տ. Երեմյան, նշ. աշխ., էջ 51։

449. Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 241։

450. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկայ, նշ. աշխ., էջ 165։

451. Ստ. Օրբէլեան, Թիֆլիս, 1910, էջ 13։

452. Նոյն տեղում, էջ 185–86։

453. Արգամ Այվազյան, նշ. աշխ., էջ 64–65։

Բարեբախտաբար պահպանուել է Ղ. Ալիշանի մանրամասն նկարագրութիւնը Երնջակ բերդի մասին, որն օգտակար ենք համարում մէջբերել։ «Հայոց աշխարհի նշանաւոր բերդերէն մէկն էր եւ երկու դժուարին մուտքեր ունէր, մէկը՝ հարաւային կողմէն, միւսը՝ հիւսիսէն. իսկ արեւմուտքէն եւ արեւելքէն զինքը կը պաշտպանէին եւ անմերձենալի կը դարձնէին Երնջակի գետը եւ շուրջի լեռները։ Երկու մուտքերը, բացի բնական պաշտպանութիւններէ, ունէին նաեւ արուեստով ամրացուած տեղեր, պատուարներ եւ մարտկոցներ, որոնք մինչեւ այսօր իսկ տակաւին կը տեսնուին։ Հարաւային կողմի պարիսպներուն մէջ կային պատուարներ եւ բնակարաններ ու քարաշէն ապաստարաններ։ հիւսիսային կողմի ճամբան, որ բերդը կը տանի,՝ շատ աւելի քանդուած էր եւ չորս կողմերէն ինկած էին քարերը. սակայն այս աւերակներուն վրայէն անցնելով կարելի է բերդ բարձրանալ։ Երկու կողմերէն ալ երեք կարգ պարիսպներ կը պատեն բերդալեռը մինչեւ գագաթը. վարի պարիսպները կիսովին քանդուած են, միջինները՝ մասամբ մը, իսկ վերին կամ ներքին ըսուած պարիսպները, որոնք ստուար են, տակաւին կանգուն կը մնան։

Բերդին մէջ կան ինը ջրամբարներ, փորուած քարաժայռի մէջ եւ ուր կը հաւաքուէին անձրեւներէն եւ ձիւնհալքէն ձեւացած ջուրերը։ Քարալեռան հիւսիս-արեւմտեան գագաթը բարձրագոյն է եւ աւելի լերկ. հոս կան շինուածքներ, կամարակապ սենեակներ եւ սրահներ գեղեցիկ ճարտարապետութեամբ մը, իբրեւ դղեակ իշխանին՝ տեղացիներէն Շահ թախտ կոչուած։ … Բերդին ստորոտը դեռ կը տեսնուէին հին պարիսպներու եւ պատնէշներու հետքեր, ինչպէս հիւսիսային կողմը աւերակներ, որոնց համար կ’ըսեն թէ պաշարողներուն բանակատեղին էր, թերեւս Լենկթիմուրեաններու։ Կը տեսնուին

նաեւ գերեզմաններ, թերեւս բերդին տակ իյնողներուն»[454]: Նկարագրութիւնը շատ յստակ ձեւով վերականգնում է պաշտպանական այս իւրայատուկ կառոյցի առանձնայատկութիւններն ու մանրամասները, որտեղից կարելի է ենթադրել, որ Երնջակ ամրոցը կառուցուած է եղել որպէս իշխանանիստ դղեակ՝ թշնամու յարձակումներից պաշտպանուելու համար (պատկ.523): Ամրոցի ռազմավարական դիրքի հմուտ ընտրութեան հետ կապուած՝ Ղ. Ալիշանը մէջբերում է. «Հրաշալի է այս բերդին կատարէն հեռուն տեսնուած ընդարձակ տեսարանը, հարաւէն՝ Երասխը եւ Գարատաղի լեռները, արեւմուտքէն՝ ձիւնագագաթ Արարատը իր շրջակայ լեռներով»[455]:

454. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 365–366:

455. Նոին տեղում:

Քսաներորդ դարի վերջի Երնջակ ամրոցի կառուցապատման ու յատակագծման արժէքաւոր փաստագրութիւնը մեզ է հաղորդում նախիջեւանագէտ պատմաբան Արգամ Այվազյանը: Հնարաւորութիւն չունենալով ուսումնասիրելու նպատակով ամրոց այցելել՝ մէջբերում ենք հեղինակի անցեալ դարում տեղում կատարած նկարագրութիւնները. «Լեռն իր վերնամասում բաժանուած է երկու սրագագաթ ճիւղերի: Բերդի կառուցողները հմտօրէն են օգտագործել տեղանքի անառիկութիւնը (պատկ.523): Բանն այն է, որ Երնջակ լեռան ուղղաձիգ ժայռերն ինքնին բնական, անմատչելի եւ անյաղթահարելի արգելքներ են թշնամիների համար: 1405 թ. Յունիսին Իսպանիայի դեսպան Կլաւիխոն, անցնելով Երնջակ գաւառով, գրել է. «...մեզ ցոյց տուին մի ամրոց, որ գտնւում էր մեր ձախ կողմը՝ բլուրի կատարում, որ կոչւում է Ալանջիկ: Այս ամրոցը շրջապատուած է պարսպով՝ աշտարակներով, եւ ներքին շրջանակում տարածւում են շատ այգիներ ու պարտեզներ...»[456]:

456. Հ. Հակոբյան, *Ուղեգրութիւններ*, հ. Ա, ԺԳ–ԺՉ դդ., Երեւան, 1932, էջ 116:

Երնջակ լեռան հիւսիս-արեւմտեան գագաթնամասի բաւականին հարթ եւ յարմարավետ, չորս կողմից բնականից հիանալիօրէն պաշտպանուած բարձունքում, կառուցուել է իշխանական պալատը, որ աչքի է ընկնում ե՛ւ իր բնական անառիկ ու իշխող դիրքով, ե՛ւ որպէս ճարտարապետական համալիր (պատկ.524): Իշխանական պալատը բաղկացած է եղել կամարակապ ու Սիւնազարդ տաճարից, սպասասրահից, դահլիճից, ռազմական, տնտեսական բնոյթի պահեստներից եւ բնակելի սենեակներից: Վերջիններս կապուած են իշխանական պալատի հետ եւ ունեն 0,65–1,1մ լայնութեամբ մուտքեր, 2,4–5,0մ լայնութիւն եւ 3,5–7,0մ երկարութիւն (պատկ.525): Շինութիւններն իրար միանալով նեղ միջանցքներով՝ իրենց ճակատային մասի մուտքերով կապուել են պալատական շէնքի հրապարակի հետ: Առաջին շինութիւնների աւերակներն ապացուցում են, որ դրանք եղել են երկհարկանի: XIX դ. սկզբներին, երբ պալատական համալիրի շինութիւնների մեծ մասը դեռ կանգուն է եղել, Երնջակ բերդ այցելած Վ. Գրիգորեւը նկատել է, որ նրա պալատի ու բերդի միւս շինութիւններում կարող էր բնակուել շուրջ երկու հազար մարդ[457]: Այժմ իշխանական պալատի եւ նրա համալիրի շինութիւնների մեծ մասն աւերակ են կամ քայքայուած են մինչեւ հիմնաքարերը: Որոշ սենեակների պատերը դեռեւս կանգուն են՝ մինչեւ 1,6մ բարձրութեամբ: Մեր ուսումնասիրութիւնները թոյլ են տալիս կազմելու Երնջակ բերդի իշխանական պալատի համալիրի շինութիւնների մի մասի յատակագիծը, (պատկ.526): Համալիրի շինութիւնների մեծ մասը սկզբում կառուցուած է եղել կապտերանգ սրբատաշ եւ կիսամշակ քարերով ու կրաշաղախով, որի շարուածքները (հիմքում 2–3 շարք բարձրութեամբ) այժմ էլ տեսանելի են: Յետագայում դրանք տեղ-տեղ վերանորոգուել են նաեւ թրծուած աղիւսով: Ընդ որում պարզորոշ նկատւում են վերջին 6–7 դարերում կատարուած մի քանի նորոգումների հետքեր, որոնց ժամանակ օգտագործուած աղիւսներն ունեն տարբեր չափեր: Իշխանական պալատ բարձրացել են միայն հարաւ-արեւելեան կողմի անկիւնային հատուածից: Այստեղ ուղղաձիգ եւ լերկ ժայռն ունի որոշ թեքադիր հատուած, որը շինարարները օգտագործել են բացառիկ հմտութեամբ եւ ժայռի վրայ փորել դէպի վերեւ տանող 30սմ լայնութեամբ ու 10–15սմ խորութեամբ ուղի: Խիստ դժուարանցանելի այդ նեղլիկ ուղիով բարձրացողներին ցած ընկնելուց ապահովագրելու համար 0,5–2,0մ ներքեւ, 2–3 շարով, տարբեր տեղերում փորուել են 25x40սմ չափի փոսեր: Իշխանական պալատի համալիրից 300–400մ դէպի հիւսիս եւ արեւելք՝ լեռան գագաթնամասում, կան նաեւ մի շարք շինութիւններ, պահակատեղերի ու քօղարկուած դիտարանների աւերակներ (պատկ.527):

457. *Обозрение российских владений Закавказом*, часть IV, СПб, 1836, ст. 338.

Բազմաբնոյթ շինութիւններով ու ամրութիւններով հարուստ են յատկապէս լեռան հարաւ-արեւելեան գագաթը եւ նրա լանջերը (պատկ.528)։ Այստեղ եւս կան մի շարք ամրութիւնների ու աշտարակների, դիտարանների, զօրանոցների, բնակելի եւ այլ բազմազան սենեակների աւերակներ, ջրամբարներ եւ այլն։ Բերդի կառուցման ժամանակ առանձին տեղերում օգտագործուել է նաեւ անտաշ, անշաղախ շարուածք։ Այս շարուածքների շինարարական տեխնիկայի (հիմնաշարի բացակայութիւն, հարթ ծածկեր եւ այլն) ուսումնասիրութիւնը մատնանշում է ուրարտական շինարուեստը։ Բերդի աւերակների վերգետնեայ մասերում կան IX–XVII դդ. թուագրուող խեցեղէնի բեկորներ, ինչպէս նաեւ մետաղեաա, փայտեայ եւ քարէ իրերի մնացորդներ։

Երնջակ բերդի վաղ շրջանի կեանքի ու շինարուեստի մասին պատկերացում են տալիս յատկապէս նրա պարսպաշարքերի շինարարական տեխնիկան եւ ճարտարապետական առանձին սկզբունքները։ Բերդը բնական ամրութիւնից բացի շրջապատուած է նաեւ արհեստական ամրակուռ պարիսպներով, որոնց անհրաժեշտութիւնը ծագել է լեռան գագաթնամասը երկու մասի ճիւղաւորուած լինելու հանգամանքով (պատկ.529)։ Հետեւաբար, այստեղ բարձրանալ կարելի է միայն լեռան հարաւ-արեւելեան եւ հիւսիս-արեւմտեան կողմերում առաջացած անդնդախոր նեղ կիր- ճերից, որոնց մուտքերը փակելու համար կառուցուել են մի շարք պարսպաշարքեր եւ բերդն ամբողջովին դարձրել դժուարամուտ։ Բերդի պարիսպները սկսւում են անմիջապէս ժայռաշղթաները գոտկող կիրճերի պռունկներից։ Պարիսպները հիմնականում շարուած են անմշակ ու կիսամշակ քարերով, կրաշաղախով։ Յետագայում առանձին հատուածների վերեւի մասերում օգտագործուել է նաեւ աղիւս։ Պարիսպները, որոնց լայնութիւնը 1,3–2,5մ է, ժամանակին ունեցել են 9–12մ բարձրութիւն։ Այժմ պարսպաշարքերի մեծ մասը քայքայուել եւ աւերակների է վերածուել։ Դրանց բարձրութիւնը այժմ որոշ մասերում հասնում է 4,0–4,5մ, իսկ առանձին շարքերում երկարութիւնը՝ 50–60մ։ Երնջակը շրջապատուած էր մի քանի պարսպաշարքերով (պատկ.530)։ Հարաւ-արեւելեան կիրճի կողմից բերդը պաշտպանուել է առաջնապարսպով, միջնապարսպով եւ ներքնապարսպով։ Այստեղ տեղանքի թելադրանքով առաջնապարիսպն ու միջնապարիսպը ինչպէս ներքնապարսպից, այնպէս էլ իրարից ունեն մօտ 100–110մ հեռաւորութիւն։ Այժմ միջնապարիսպն ու առաջնապարիսպը մեծ մասամբ աւերուած են, իսկ ներքնապարիսպը, ուր տեղադրուած է բերդի մուտքերից մէկը, երկարութեամբ հիմնականում պահպանուել է։ Դէպի բերդ բարձրացող այս կիրճը հիւսիսային եւ հարաւային կողմերի լեռնափեշերից մինչեւ բուն լեռան անմատչելի ծերպերը եւս պաշտպանուել է հզօր պարսպաշարքերով, որոնց աւերակներում նկատելի են նաեւ մի շարք քառանկիւնի աշտարակների հետքեր։

Երնջակ բերդի հարաւ-արեւելեան կիրճի ներքնապարիսպում գտնուող մուտքը (պատկ.531) ունի 2,7մ լայնութիւն, որի պարսպին ներքուստ կից՝ երկու կողմերում, կառուցուած են 5 սենեակներ։ Մուտքի հիւսիսային կողմի երկու սենեակները ունեն 4մ լայնութիւն եւ 3,5մ երկարութիւն եւ մէկական մուտքեր՝ արեւմուտքից։ Մուտքի հարաւային կողմում կառուցուած 3 սենեակներն ունեն 4մ լայնութիւն եւ տարբեր երկարութիւններ։ Մուտքի կողմից առաջին սենեակն ունի 2,85մ երկարութիւն եւ մէկ մուտք, որը բացւում է անմիջապէս պարսպի մուտքի վրայ եւ ծառայել է որպէս պահակատուն։ Երկրորդ եւ երրորդ սենեակների մուտքերը բացւում են արեւմուտքից։ Դրանցից առաջինն ունի 8մ երկարութիւն, իսկ երկրորդը՝ 16մ։ Այդ սենեակները բնակատեղի լինելուց բացի, ունեն պաշտպանական բնոյթ եւ ծառայել են որպէս պահակատներ ու զօրատեղեր։ Երնջակի այս մուտքի պահակասենեակների առկայութիւնն ու կառուցուածքը յիշեցնում է Նախիջեւանի միւս նշանաւոր բերդի՝ Ճահուկի, հիւսիս-արեւմտեան պարսպաշարքի անկիւններում տեղադրուած մուտքերի պահակասենեակները[458]։

Երնջակ բերդը հիւսիս-արեւմտեան կողմից, ուր գտնւում է իշխանական պալատի համալիրը, պաշտպանւում է 8 շարք պարիսպներով (պատկ.532)։ Այստեղ առաջնապարիսպներն ունեցել են աւելի ցածր բարձրութիւններ, քան միջնապարիսպներն ու ներքնապարիսպները։ Պարսպաշարքերը կառուցուած են իրարից 5–6մ հեռու եւ ունեցել են բուրգերի աշտարակների, պահակատների ու զօրանոցների մի ամբողջ

458. Արգամ Այվազյան, *Արբայ և Ճահուկ բերդերը*, «ԼՀԳ», № 9, Երեւան, 1976, էջ 88 (աղ.1, գծ. 3,4)։

շարան (պատկ.424)։ Հիւսիս-արեւմտեան պարսպաշարքերի առանձին շարքերի ու հատուածների շինարարական տեխնիկան մի շարք զուգահեռներ ունի ուրարտական շինարուեստի հետ։ Այստեղ տձեւ քարերով կերտուած շարուածքներում կան լաւ տաշուած ու երեսպատուած քարեր, որոնք ունեն նաեւ վարպետների նշաններ։ Բերդի կողմից երրորդ եւ չորրորդ պարսպաշարքերի անվնաս հատուածներում կան առանց հիմքի շարուածքներ, որոնցում օգտագործուած են նաեւ անմշակ, ինչպէս նաեւ երեսն ու եզրերը մաշուած քարաշարքեր։ Պարսպաշարքերի հիմնաշարերում հանդիպում են նաեւ առանց շաղախի ու երեսպատման շարքեր, որոնց քարերն ունեն 0,6–1,2մ միջին երկարութիւն եւ 0,8–1,0մ միջին բարձրութիւն։ Առանձին պարսպաշարքերի համար, վտանգաւոր եւ խոցելի հատուածներում, 0,6–1,2մ բարձրութեամբ կառուցուած են նաեւ պատնէշ-պատեր։ Առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում այս պարըս-պաշարքերում թողնուած բերդի մուտքերը։ Ի միջի այլոց, առաջնապարսպից մինչեւ բուն բերդի շինութիւններին հասնելը մուտք-ճանապարհը անցել է նաեւ յաջորդ 7 պարսպաշարքերով։ Ցաւօք, ութերորդ եւ երկրորդ պարսպաշարքերի մուտքերից բացի միւսներն այժմ աւերուած են եւ առանց պեղումների նրանց տեղերը եւ կազմութիւնը ստոյգ հնարաւոր չէ վերականգնել։ Սակայն պարզ է, որ ճանապարհը պարսպաշարքերով անցել է ոչ թէ ուղիղ գծով, այլ զիգզագաձեւ, որը մատնանշում է պարսպաշարքերում մուտքի տարբեր տեղերում լինելը։ Այդ հանգամանքը սահմանափակել է թշնամու գործունէութեան դաշտն ու նրա ուժերի կենտրոնացումը եւ բերդապաշտպաններին հնարաւորութիւն է տուել աւելի արագ կողմնորոշուել, ինչպէս նաեւ 3–4 կողմերից թշնա-մուն խաչաձեւ հարուածի տակ առնել։ Երնջակ բերդի ութերորդ պարսպաշարքի գլխաւոր մուտքը տեղադրուած է երկու աշտարակների միջեւ, որի յատակագծման հիմքում ընկած է անցախուցով բաժանուած կրկնակի դարպասներով մուտքերի սկզբունքը։ Այստեղ մուտքի դարպասները միմիանց նկատմամբ տեղադրուած են 90 աստիճանի տակ եւ սահմանափակելով յարձակուողների գործողութիւնները, բերդապաշտպաններին տուել են լայն ճակատով եռակողմ գրոհներ կազմակերպելու հնարաւորութիւն։

Առանձնակի ուշադրութեան են արժանի նաեւ բերդի 9 ջրամբարները, որոնց կառուցման հնարամիտ սիստեմը հնարաւորութիւն է տալիս բերդի պաշտպաններին երկար ժամանակով ապահովուել ջրով։ Ջրամբարները փորուել են ժայռերի հիւ-սիսային կողմում եւ ստուերոտ վայրերում, որի շնորհիւ կրճատուել է ջրի կորուստը։ Ջրամբարներից վերեւ գտնուող ժայռերի լանջերին փորուել են բազմաթիւ առուակներ, որոնցում հաւաքուած անձրեւաջրերն ու ձնհալի ջրերն անկորուստ ի մի հաւաքուելով մայր առուակներում՝ թափուել են ջրամբարները։ Ջրամբարների մի մասի յատակային մասերում կառուցուել են նաեւ հրակայուն եւ ջրամերժ շերտեր, որը եւս զգալի չափով կրճատել է ջրի կորուստը։ Առանձին ջրամբարների թեքադիր հատուածները շարուել են սրբատաշ քարերով եւ կրաշաղախով։

Այսպիսով, Երնջակ բերդի, ինչպէս նաեւ շրջակայքի պատմահնագիտական տեղավայրերի հին շրջանի շինարուեստի ու ճարտարապետութեան սկզբունքները ակնյայտօրէն ցոյց են տալիս, որ Երնջակը որպէս բերդ հիմնուել է դեռեւս հնագոյն ժա-մանակներում եւ կարեւոր ռազմաստրատեգիական կէտ է հանդիսացել (պատկ. 533)։ Վաղ միջնադարում, ինչպէս նաեւ IX–X դդ. այս հինաւուրց բերդը հիմնաւոր կերպով վերանորոգուել է եւ յարմարեցուել նոր ժամանակների ռազմարուեստի պահանջներին, որի շնորհիւ այն դարձել է Հայաստանի անառիկ բերդերից մէկը։ Իշխանական պալատի, բնակավայրի եւ ամրութիւնների կոմպոզիցիոն հիմունքներով Երնջակ բերդը հար եւ նման է պատմական Հայաստանի IX–X դդ. ամրոցներին» (պատկ.534)[459]։

2014 թ. սկսուած Ադրբեջանի յուշապահպան մարմինները լայնածաւալ աշխա-տանքներ են իրականացրել, որոնք այսօր աւարտուել են։ Ամրոցատեղին ամբողջովին պեղել են եւ կառուցել բոլորովին նոր՝ հնարովի ճամբորդական տեսարժան վայր իրեն թանգարանով, այգիներով, սպասարկման զանազան նոր շինութիւններով հանդերձ (պատկ.535)։ Ադրբեջանական կայքերը համանուն լեռան վրայ խոյացած ամրոցի հիմնա-դիրների եւ նախնական տէրերի մասին լռում են՝ յիշատակելով միայն, որ ժամանակին բերդին տիրել են սելջուկներն ու Լենկ Թեմուրը։

459. Արգամ Այվազյան, նշվ. աշխ., էջ 66–73։



Պատկ. 517
Սիւնիքի Գողթն ու Երնջակ գաւառների դիրքորոշումը՝ *«Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան»* քարտէզում, կազմեց՝ Խ. Աւդալբեկեան, Պետական Հրատարակչութիւն, Յերեւան, 1932

517



Պատկ. 518
Գողթն ու Երնջակ գաւառների բերդերն ու բնակավայրերը, գծագիրը՝ հեղինակի

518


Kaputdjugh
Կապուտջուղ
Çənnəb
Gilançay
Sabirkənd
Qoşadizə
ԽՈՍՐՈՎԻ ԴՂՅԱԿ
2D
1.000 m
Fotocamera: 1.228 m 39°00'54"N 45°47'45"E 1.137 m

519


Parco
ԵՐՆՋԱԿ ԱՄՐՈՑ
Əlincə Qalası
Alinja river
Alinja river
Xanəgah kənd kitabxanası
2D
300 m
Fotocamera: 1.677 m 39°12'35"N 45°42'08"E 1.378 m

520



Պատկ. 519
Խոսրովի դղեակ ամրոցի դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի՝ համաձայն Արգամ Այվազեանի

Պատկ. 520
Խոսրովի դղեակ ամրոցի դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի՝ համաձայն Թադեւոս Յակոբեանի

521



Պատկ. 521
Երնջակ ամրոցի աժդահայ ժայռացիցը՝ Օձասարը, 2.360մ

Պատկ. 522
Ադրբեջանի յուշարձանապահպան մարմինների՝ ամրոցի կեղծ վերաշինութիւնը՝ ճամբորդական, գաղափարական եւ պատմական խեղաթիւրման նպատակով

522



523

Պատկ. 523
Համասփիւռ տեսարան՝ Երնջակ ամրոցից




524

Պատկ. 524
Ամրոցի խեղաթիւրուած, վերաշինուած տեսարանը այսօր



525

Պատկ. 525
Տեսարան դէպի ամրոցի ժայռացից



526

Պատկ. 526
Ամրոցի պալատական մասի յատակագիծը



Պատկ. 527
Երնջակ ամրոցի ներքին տեսքը

527



Պատկ. 528
Ամրոցի հնագիտական մնացորդները՝ ազերական վերաշինություններից առաջ

528



529

Պատկ. 529
Ամրոցի վերաշինուած հատուածի տեսապատկերը



530

Պատկ. 530
Ամրոցի բազմաշերտ պարսպապատերը՝ թատերականացուած վերաշինութիւնից յետոյ



Պատկ. 531
Երնջակ ամրոցի մուտքային հանգոյցի վերաշինուած նոր՝ խեղաթիւրուած հատուածը

531



Պատկ. 532
Ամրոցի պարսպապատերի հետքերը՝ նախքան խեղաթուրուած վերաշինութիւնը

532



Պատկ. 533
Հիասքանչ տեսարան ամրոցից

533



534

Պատկ. 534
Երնջակ ամրոցի արդի խաթարուած տեսքը



535

Պատկ. 535
Այսօր ճամբորդական գրասենեակի վերածուած ամրոցի պատկերը

5.26. ՃԱՀՈՒԿ ՈՒ ՇԱՀԱՊՈՆՔ ԳԱՒԱՌՆԵՐ

Ճահուկ գաւառը «Աշխարհացոյց»-ում յիշատակւում է 2-րդ տեղում: Այն նոյնացւում է Շահապոնք ձորին: Գտնւում է Ճահուկ (այժմ՝ Ջահրի) եւ Շահապոնք (այժմ՝ Շահբուզ) գետերի հովիտների շրջանում (պատկ.536): Լեռնային գաւառի պատմական տարածքը համընկնում է Ադրբեջանի Շահբուզի եւ Նախիջեւանի շրջանների մի մասին (պատկ.537): հիւսիսից ու հիւսիս-արեւելքից սահմանակից էր Վայոց ձոր եւ Ծղուկք, հարաւ-արեւելքից եւ հարաւից Երնջակ եւ Նախիջեւան, արեւմուտքից Այրարատի Շարուր գաւառներին[460]: Ճահուկ գաւառը Ա–Դ դարերում Արշակունիների թագաւորութեան ներքոյ էր, իսկ յետագայում՝ Ժ. դարից, այն վարչականօրէն Սիւնեաց գահերէց իշխան Սմբատի տիրապետութեան տակ էր: Ստ. Օրբէլեանն այս առիթով նշում է. «Սմբատը վերցրեց ամբողջ Վայոց ձորն ու Շահապոնքը, որը Ճահուկ գաւառն է»[461]: Այնուհետեւ ԺԲ. դարում Ճահուկը որոշ ժամանակով եղել է Համտունեաց տոհմի իշխանութեան տակ: Յետագայում Ճահուկը Երնջակ բերդի եւ Նախիջեւանի Քավասրահ վայրի հետ, որպէս հայրենական կալուածք, անցնում է Սիւնեաց Օրբէլեան իշխան Ելիկումին: Օրբէլեաններից յետոյ Ճահուկը՝ Շահապոնք մասով, անցնում է Պոօշեան իշխաններին: ԺՋ—ԺԸ դարերում Ճահուկը Նախիջեւանի խանութեան կազմում էր, ԺԹ. դարի երկրորդ կէսից՝ Երեւանի նահանգի Նախիջեւանի գաւառի մէջ: ԺՋ—ԺԸ դարերում Ճահուկը բաժանուած է եղել երկու՝ Ճահուկ եւ Շահապունիք մասերի, որի Շահապունիքը կամ Շահապոնքը երբեմն եղել է նաեւ առանձին գաւառ. նշանաւոր վայրերից էին Ճահուկը, Խախը, Կարմիր եկեղեցին, Ղաբենը, Շամենը: Ճահուկի նշանաւոր ամրոցներից էին Ճահուկը, Թաթերքը, Շահապոնքը, Բերդիկը (հնում՝ Աշքեան), Խոռնին, Անուշաւանի «Անապատը»:

460. Ս. Տ. Երեմյան, նշ. աշխ., էջ 64, 109, 117:

461. Ստ. Օրբէլեան, Երեւան, 1986, էջ 255:

5.27. Ճահուկ ամրոց, 39°26’27”N 45°26’27”E, բ.ծ.մ. 1.362 մ

Գտնւում էր համանուն գիւղից 6–7կմ հիւսիս-արեւմուտք՝ հատած բուրգի ձեւ ունեցող բարձրագագաթ լեռան վրայ (պատկ.538,539): Ճահուկ անունով բերդ կայ նաեւ Մեծ Հայքի Կորճայք գաւառում՝ մեծ Զաբ գետի հովիտներում: Ամրոցը յիշատակել են Ժ. դարի պատմիչներ Շապուհ Բագրատունին ու Թովմա Արծրունին, որն ամրոցի մասին նշել է Գագիկ Արծրունու՝ Ջլմար ու Սրինգ ամրոցները գրաւելու առիթով. «Չի Գագիկ անցեալ ամրանայր ի Ճախուկ բերդի, ի կասկածի կալով ի Դերանկէն»[462]: Տեղեկութիւն ունենք, որ Ջլմար (Ջայլամար, Ջղմար, Ջուլմար) ամրոցը, ըստ աւանդութեան, կառուցել է Կորդուաց իշխանուհի Ջայլամարը Ք.ա. երկրորդ դարի առաջին կէսին, որից էլ առաջացել է Ջլմար անունը[463]: Շապուհ Բագրատունին բերդը յիշատակում է հետեւեալ առիթով. «Յետ այսօրիկ Դերէն շինե(ա)ց զամենայն աշխարհն իւր՝ զՉարեհբերդ եւ զՃահուկն, զԲունոյցորն, զելն Զառնոտ»[464]: Յիշատակութիւններից պարզ է դառնում, որ Ճահուկ բերդը տեղադրուած էր Կորդուաց Ճահուկ գաւառում, եւ որ բերդն ու գաւառը կրում էին նոյն անունը: Ս. Երեմյանը բերդը նոյնացրել է Ագարակ բերդի հետ՝ փակագծերում մէջբերելով Ճահուկ անունը: Տեղացիները Ճահուկ բերդն անուանում են Չալխանի բերդ[465]:

462. Թովմա Արծրունի, *Պատմութիւն Տանն Արծրունեաց*, Կ.Պոլիս, 1852, էջ 135:

463. *Հայաստանի եւ յարակից շրջ...*, հ. 4, Երեւան, 1998, էջ 412:

464. Շապուհ Բագրատունի, *Պատմութիւն*, Էջմիածին, 1921, էջ 48:

465. *Հայաստանի եւ յարակից շրջ...*, հ. 3, Երեւան, 1991, էջ 197:

Հնարաւորութիւն չունենալով այցելելու բերդի աւերակներ՝ մէջբերում ենք Արգամ Այվազյանի վկայութիւնները. «Ճահուկ բերդի աւերակները գտնւում են գաւառի պատմական Պահեստ (այժմ Փայլղ) գիւղի մօտ, Նախիջեւան քաղաքից 22կմ դէպի հիւսիս-արեւմուտք:

«Ճահուկ բերդը կառուցուած է եղել հատած բուրգի ձեւ ունեցող լեռան վրայ (մակերեսը մօտ 50հա): Այդ լեռնագագաթի վրայ կառուցուած է եղել բերդաքաղաքը, իսկ

լեռնագագաթի անմատոյց գագաթնամասում՝ միջնաբերդը: Ճահուկ բերդն իր դիրքի շնորհիւ հսկողութեան տակ է պահել ե՛ւ կարեւոր մայրուղիները, ե՛ւ Ճահուկ գետակի ստորին հոսանքի ամբողջ դաշտն ու գետից հանուած արհեստական ջրանցքների մի մասը, եւ շրջակայ բնակատեղիները:

Ճահուկ բերդից պահպանուել են նրա պարիսպները, բնակելի եւ այլշինութիւնների մի մասի աւերակները: Համեմատաբար լաւ են պահպանուել պարիսպները (ընդհանուր երկարութիւնն աւելի քան 550մ, պատկ.540): Բերդը պարիսպներով պաշտպանուել է հիւսիսային եւ արեւմտեան կողմերից, իսկ հարաւային եւ արեւելեան կողմերից այն պաշտպանել են լեռնաշղթաները: Բերդի հիւսիս-արեւմտեան պարսպաշարքի առջեւ փոռւած է մօտ 20հա մակերեսով դաշտ: Այդ դաշտը եզրագծող գօտիների երկարութեամբ (1–1,5կմ) եղել են ամրակուռ պարիսպներ, որոնք պաշտպանել են դաշտում փոռւած բերդաքաղաքի բնակելի թաղամասերը: Մենք այդ դաշտից յայտնաբերել ենք միջնադարեան (XII–XIVդդ.) խեցեղէնի բեկորներ, ուղղանկիւն եւ քառանկիւն յատակագծով շինութիւնների հետքեր, արհեստական քարայրներ եւ ժայռի մէջ փորուած երկու ջրամբարներ, որոնցից մէկը շրջանաձեւ է, իսկ միւսը՝ պայտաձեւ:

Ճահուկի եւ շրջակայքի ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս ենթադրելու, որ այն մօտաւորապէս Ք.ա. ԺԷ–Թ եւ յետագայ դարերի բնակատեղի է եղել: Ճահուկ բերդի մասին արժէքաւոր տեղեկութիւններ են տալիս նրա պարսպաշարքերի շինարուեստը եւ ճարտարապետական առանձին լուծումները: Այդ տեսակէտից կարեւոր է բերդաքաղաքի միջնաբերդի հիւսիս-արեւմտեան պարսպաշարքը (պատկ.541), որը կառուցուել է միջնաբերդից անջատող երկու լեռնաշղթաների միջնամասի անպաշտպան գօտում: Պարսպաշարքը ձգւում է մի լեռնապոնկից միւսը, կազմելով մի կատարյալ պաշտպանական համալիր: Պարսպաշարքն ունի աւելի քան 400մ երկարութիւն, որի շարուածքը անշաղախ է եւ ունի 2,3–3մ լայնութիւն: Այժմեան վիճակով պարսպաշարքի պահպանուած միջին բարձրութիւնը 2,4մ է: Շարուածքների հիմքի քարերը ունեն 2–3մ երկարութիւն եւ 0,6–1,1մ բարձրութիւն: Շարուածքի վերեւի մասի քարերն աստիճանաբար փոքրանում են: Որպէս շինանիւթ օգտագործուել է լեռնագագաթի որձաքարը: Մշակուած այդ քարերն օգտագործուել են խառը, որի շնորհիւ շարուածքն ունի յարմար կապակցումներ եւ ամուր է: Հիւսիս-արեւմտեան պարսպաշարքում համահաւասար կերպով տեղադրուած են որմնահեցերի մի ամբողջական շարք, իսկ աւելի կարեւոր հատուածներում եւ մուտքերի մօտ եղել են նաեւ աշտարակներ: Ճահուկ բերդի այս ամրաշինութիւնում (պատկ.542) որմնահեցերը մուտքերի մօտ 8,5մ երկարութեամբ տեղադրուած են ամէն 12,2մ յետոյ, իսկ միջին գօտում՝ 10,2մ երկարութիւններով՝ ամէն 17,2մ յետոյ, 50սմ ելուստներով: Ճահուկ բերդի պարիսպները որոշ տարբերութիւններով յիշեցնում են Արագածոտնի, Արարատեան դաշտի, Ամասիայի, Ղուկասեանի շրջանների բրոնզեդարեան ամրոցները[466]:

Ճահուկ բերդի հիւսիս-արեւմտեան պարսպաշարքը պարսպի աջ եւ ձախ աւարտուն հատուածներում ունի երկու մուտք (պատկ.543), որոնց շնորհիւ բուն բերդաքաղաքի թաղամասերը նպատակայարմար կէտերից կապվել են միջնաբերդի հետ եւ պաշտպանել այն: Ճահուկի պաշտպանութեան ամրապնդմանը նպաստել է նաեւ բերդի մուտքերը պարսպի անկիւններում կառուցելը: Ճահուկի աջակողմեան մուտքը ունի պարզ համաչափ ձեւ եւ նման է ուրարտական Քեֆկալէ եւ Ծովինար ամրոցների մուտքերին [նոյն տեղում, աղ.2 գծ.6]: Այս մուտքի երկկողմեայ աշտարակները տեղադրուած են մուտքի մօտ, իսկ ձախակողմեան աշտարակի մօտ կառուցուած է զօրանոց կամ պահակատուն (4,0x4,5մ): Ճահուկի ձախակողմեան (հարաւային) մուտքը եւս ունի

466. Կ. Ղաֆադարյան, *Դիտողութիւններ ուրարտական ամրոցաշինութիւնների վերաբերեալ*, «ՊԲՀ», № 2, Երեւան, էջ 151–162:

հետաքրքիր լուծում: Նրա երկկողմեայ աշտարակները նոյնպէս մուտքի մօտ են տեղադրուած (պատկ.543.3,4,544): Մուտքը (լայնութիւնը՝2,5մ) աւելի լաւ պաշտպանելու հա- մար աջակողմեան աշտարակի մօտ կառուցուած է զօրանոց կամ պահակատուն (5x7մ):

Բերդի պարիսպներից ներս եւ միջնաբերդում պահպանուել են մի շարք շինութիւնների հետքեր, որոնք ունեն քառանկիւն եւ ուղղանկիւն յատակագծեր: Միջնաբերդի հարաւային մուտքից 25–30մ դէպի ընդարձակ հրապարակը պահպանուել են չորս սենեակներից բաղկացած շինութեան հետքեր: Այդ սենեակները միաշարք են եւ ունեն միանման յատակաձեւեր (պատերի հաստութիւնը 1,12մ է, մուտքերի լայնութիւնը՝ 0,85մ): Այդ սենեակների լայնութիւնը 4,6մ է, իսկ երկարութիւնը՝ 5,85մ, շարուածքը շա- ղախով է, կանոնաւոր»[467]:

467. Արգամ Այվազյան, նշ. աշխ., էջ 92–95:

5.28. Ծահապոնք ամրոց, 39°23’50”N 45°35’54”E, բ.ծ.մ. 1.272մ

Ամրոցը գտնւում էր համանուն գաւառում, այժմ՝ Նախիջեւանի ԻՀ-ում: Ծահապոնք ամրոցի աւերակները պահպանուել են Ծահբուզ գետի ստորին հոսանքի շրջանում՝ Քյանդ Ծահբուզ գիւղի մօտ՝ համանուն ժայռապատ լեռան գագաթին (պատկ.545,546): Ղեւոնդ Ալիշանն ամրոցի տեղադրութեան մասին հաղորդում է հետեւեալը. «Յանկեան գետակին եւ բուն գետոյն առ որով Ծահապօնք, նշանակի չինատեղի՝ յունջ երկարաձիգ լեռնագօտւոյ կամ բարձրաւանդակի՝ անջրպետի երկոցունց ձորոցն. անդ կարծեմ զբերդն Ծահապայ, կամ յայլ ինչ կողմն այսր լեռնագօտւոյ...»[468]: Ամրոցի մասին տեղեկութիւն է հաղորդում Գ. Յովսէփեանը. «Ծահապոնեաց ձորը կամ գաւառը երեք մասի կարելի է բաժանել նոյնանուն գետակի երեք վտակների հովիտներով. հարաւային ձորակ, որի մէջ են գաւառի կեդրոն Ծահապոնք ամրոցը, համանուն գետակի առուակներից մէկի վերայ, բարձրաբերձ ժայռի գլխին ցցուած...» (պատկ.547,548)[469]:

468. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 481–484:

469. Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ*, մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 52–53:

5.29. ՆԱԽԻՋԵՒԱՆ ԳԱՒԱՌ

Ըստ «Աշխարհացոյցի» Նախիջեւանը կամ Նախճաւանը Վասպուրականի 34-րդ գաւառն էր (պատկ.549)[470]: 705-ին Նախիջեւանն անջատուել է Վասպուրականից եւ, աշխարհագրական դիրքի ու տնտեսական արժանիքների շնորհիւ, Սիւնեաց եւ Վասպուրականի իշխանների համար դարձել էր կռուախնձոր[471]: Գաւառը տարբեր ազգեր կոչել են հետեւեալ կերպ. յոյները՝ Նախսուանա, արաբները՝ Նեշեւի, պարսիկները՝ Նաուշա, թուրքերը՝ Նագշիջիան: Մինչեւ Ժ. դարի սկզբներն այս գաւառը վարչականօրէն մէկ եղել է Վասպուրականի, մէկ՝ Սիւնիքի կազմում: Յետագայում Նախիջեւանը, հարեւան միւս գաւառների նման, մինչեւ 1828-ը եղել է սելջուկների ու թաթար մոնղոլների, պարսիկների ու թուրքերի տիրապետութիւնների տակ եւ ենթարկուել է բազում հրկիզումների ու աւերումների: Գաւառը տարածւում էր Նախճաւան եւ Արաքս գետերի մերձակայ հարթութիւններում (պատկ.550): հիւսիս-արեւելքից սահմանակից էր Ծահապոնք եւ Երնջակ գաւառներին, հարաւ-արեւելքից՝ Գողթնին, հարաւից՝ Վասպուրականին: Նախիջեւանի յայտնի բնակավայրերից են Խրամը, Աստապատը, Ազնաբերդը, Հաջիվարը, Տամբատը, բերդերից՝ Նախճաւանը, Խրամը, Ազնաբերդը, Ագարակը, Մոխրաբլուրը:

470. Ա. Աբրահամյան, *Անանիա Շիրակացու մատենագիտութիւնը*, Երեւան, 1944, էջ 350:

471. Թովմա Արծրունի, նշ. աշխ., էջ 404:

5.30. Խրամ ամրոց, 38°59’25”N 45°27’09”E, բ.ծ.մ. 947 մ (?)

Ամրոցն առաջին անգամ յիշատակում է Մովսէս Խորենացին, յետագայում՝ Սեբէոսն ու Ղեւոնդ Ալիշանը: Պատմիչները փաստում են, որ 643-ին արաբները Նախիջեւան արշաւանքի ժամանակ պաշարում են Խրամ ամրոցը՝ գերեւարելով մեծ թուով

կանանց ու երեխաների[472]: 689-ին արաբները նորից ներխուժում են Հայաստան եւ աւերում Խրամը, Ջուղան եւ բնակիչներին պարտադրում ծանր հարկեր: Արաբ պատմիչ Մուհամեդ իբն-Մրվանն այս պատերազմի կապակցութեամբ յիշատակում է Նախճաւան քաղաքն ու Խլաթը, որ Ս. Մելիք-Բախշյանի կարծիքով՝ նոյն Խրամն է[473] (պատկ.551):

Աշոտ Բագրատունուն յաջողւում է համալրել հայկական զօրքը եւ ազատագրել արաբների պաշարած բնակավայրերն ու բերդերը եւ արաբներին հեռացնել Հայաստանից[474]: 703–704-ին Նախճաւան քաղաքը եւ Խրամ ամրոցը նորից ենթարկւում են Հայաստան ներխուժած արաբական զօրքերի աւերածութիւններին: Ղեւոնդ Ալիշանը փաստում է, որ արաբ Կասըմը խանը հայ նախարարներին ձերբակալել ու ողջակիզել է Նախիջեւանի, Խրամի եկեղեցիներում: Այնուհետեւ Խրամի մասին յիշւում է 972-ին, երբ աւերուած գիւղից տեղափոխուել է Սբ Յովհաննէս Կարապետի նշխարաց մագաղաթեայ յիշատակարանը: Խրամ բերդի տեղադրութեան մասին ունենք հետեւեալ պատմական վկայութիւնը. «... խաբէութեամբ ձերբակալեց Հայոց աշխարհի նախարարներին եւ բոլորին այրեց Նախճաւան քաղաքում ու Խրամ աւանում, որը Աստապատի վանքի ներսում է՝ Երասխի ափին»[475] (պատկ.552): Մովսէս Խորենացին նոյնպէս յիշատակում է ամրոցը՝ գրելով. «...մինչեւ Նախճաւան ամրոցի դէմուդէմը: Նրանց է թողնում նաեւ երեք աւաններ – Խրամ, Ջուղայ, Խո(ր)շակունիք՝ գետի միւս կողմում...»[476]: Ա. Այվազյանը բերդը տե- ղադրում է քաղաքատեղիի հիւսիս-արեւելեան մասում՝ յարմարաւէտ բարձունքի վրայ (պատկ.553): Վաղմիջնադարեան Հայաստանի այս նշանաւոր բերդից այժմ աննշան աւերակների հետքեր են միայն նշմարւում[477]: Խրամը նոյնացուել է նաեւ Դարաշամբի (Տարաշամբ) հետ՝ Առաքել Դավրիժեցու Սբ Յովհաննէսի նշխարները յայտնաբերելու առիթով տուփի մէջ գտնուած գրութեան համաձայն[478]: Ղ. Ինճիճեանը հետաքրքիր տեղեկութիւններ է յայտնել Խրամի այլ անունների կիրառման կապակցութեամբ՝ նշելով, որ բերդը կոչուել է նաեւ Շամբ, Տարա, Տերէ, որ նոյն Խրամն է[479]: Ա.Այվազյանի գրառումների համաձայն՝ բերդի աննշան աւերակները բերդատեղիի բարձունքում են եւ հազիւ են նշմարւում[480]:

472. Սեբէոսի Եպիսկոպոսի *Պատմութիւն*, առաջաբան, ծանոթագրություն՝ Ս. Տ. Մալխասեանցի, Երեւան, 1939, էջ 119–120:

473. Ս. Մելիք-Բախշյան, *Հայաստանը VII–IX դարերում*, «Միտք» հրատարակչութիւն, Երեւան, 1968, էջ 128–129:

474. Ս. Մելիք-Բախշյան, նշ. աշխ., էջ 94–95:

5.31. Ազնաբերդ ամրոց, 39°29’17”N 45°16’33”E, բ.ծ.մ. 2.038 մ

Հայկական Ազնաբերդ գիւղը, այժմ՝ Չալխանի բերդ (Չալխանկալա՝ այսպէս են անուանում տեղացիները Ճահուկ բերդը)[481], գտնւում է Նախիջեւանի ԻՀ Քենգերլիի շրջանում (պատկ. 554): Ազնաբերդ անունն ստուգաբանւում է գրաբարի ազն (տոհմ, սերունդ, ցեղ, ազգ) եւ բերդ արմատներով (բառացի՝ «ազգի բերդ»), իսկ աղըր-բեջանցիների յօրինած Չալխանկալան գիւղի տարածքում գտնուող հնագոյն հայկական Ճահուկ կամ Ճահկայ բերդի անունն է՝ գումարած արաբա-պարսկական կալա (բերդ) արմատը[482]: Ղեւոնդ Ալիշանն Ազնաբերդի մասին յիշատակում է. «Նոյնչափ հեռի է յիւրմէն Ազնաբերդ, Ազնապիւրտ կոչեցեալ յայլազգեաց, ի կիցն երկուց վտակաց գետակին. անունն եւ աւերակք շինից կամ փոքրիկ գիւղից՝ ի Հս. կուսէ նորին, յայտ առնեն զի նշանաւոր բերդ եւ աւան եղեալ է ի հնումն, թէպէտ եւ ոչ ի հին ցուցակին եւ ոչ առ պատմիչս գտանեմք զդա յիշատակեալ....»[483]: Ազնաբերդ տեղանուան ամենահին յիշատակութեան մասին տեղեկութիւն է տալիս Ղ. Ալիշանը՝ նշելով Իտալիայի Ջենովա քաղաքի Սուրբ Բարդուղիմեոս հայկական եկեղեցու բակում գտնուող ազնաբերդցի մի վաճառականի՝ Անանիայի որդի Հայրապետի 1697-ին թուագրուող տապանաքարից: Ալիշանը միաժամանակ նշում է, որ թէեւ հնագոյն սկզբնաղբիւրներում յիշատակուած չէ Ազնաբերդի անունը, այնուամենայնիւ գիւղը հայկական շատ հին բնակավայր է[484] (պատկ.555): Արգամ Այվազյանը նշում է, որ բերդը զետեղուած է համանուն գիւղից 4–5կմ հիւսիս՝ անմատչելի լեռան վրայ: Պահպանուել են քարաշէն աւերակ պարիսպների հետքեր[485]:

475 Թովմա Արծրունի և Անանուն. *Պատմութիւն Արծրունյաց տան*, ներածութիւնը, թարգմանութիւնը և ծանօթագրութիւնները՝ Վրեժ Վարդանյանի, «Սովետական գրող» հրատարակչութիւն, Երեւան, 1978, էջ 122:

476. Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, թարգմանութիւնը, ներածութիւնը և ծանօթագրութիւնները՝ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, «Հայաստան» հրատարակչութիւն, Երեւան, 1968, էջ 118:

477. Արգամ Այվազյան, նշ. աշխ., էջ 111:

478. Առաքել Դավրիժեցի, *Պատմութիւն*, Վաղարշապատ, 1896, էջ 523–524:

479. Ղ. Ինճիճեան, *Նոր Հայաստան*, Վենետիկ, 1806, էջ 269:

480. Արգամ Այվազյան, նշ. աշխ., էջ 111:

481. *Հայաստանի եւ յարակից շրջ...*, հ. 3, Երեւան, 1991, էջ 197:

482. Արտակ Վարդանյան, *Ազնաբերդ. նախիջեւանահայութեան վերջին ամրոցը*, «Նախիջեւան» հրատարակչութիւն, Երեւան, 2000, էջ 6:

483. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 505:


484. Նոին տեղում:

485. Արգամ Այվազյան, նշ. աշխ., էջ 120:



Պատկ. 536
Ճահուկ ու Շահապոնք գաւառների բերդերը եւ բնակավայրերը, գծագիրը՝ հեղինակի

536



Պատկ. 537
Նախիջեւանի ԻՀ քարտէզը՝ ըստ Collage Ltd-ի, 2002

537



538

Պատկ. 538
Ճահուկ ամրոցի դիրքադրությունը՝
ըստ Google Earth-ի



539

Պատկ. 539
Ամրոցի հիւսիսային լեռնաշղթայի
բարձունքը



540




541

Պատկ. 540, 542
Ամրոցի երկայնական պարսպապատի պահպանուած հատուածը

Պատկ. 541
Ամրոցի պարսպապատի որմնահեցի ու պատի շարուածքի մանրամաս



542



Պատկ. 543
Ձահուկ ամրոցի պարսպապատի յատակագծերը
2. Որմնահեցերի տեղադրութիւնը պարսպապատի երկայնքին
3,4. Մուտքային հանգոյցների ռազմավարական լուծումները

543



Պատկ. 544
Ամրոցի մուտքի պահպանուած հանգոյցը

544



545

Պատկ. 545
Շահապոնք ամրոցի դիրքադրութիւնը՝ ըստ Google Earth-ի



Պատկ. 546
Բնական ժայռերից կազմուած լեռնաշղթան՝ ամրոցի տեղընտրութեան համար

546



547



548

Պատկ. 547, 548
Ձահուկ ամրոցի ժայռապատը



549

Պատկ. 549
Նախիջեւանի Իշ քարտէզը



550

Պատկ. 550
Նախիջեւանի ԻՍՍՀ պատմութեան եւ մշակոյթի հայկական հիմնական յուշարձանները՝ ըստ Արգամ Այվազեանի կազմած քարտէզի



551

Պատկ. 551
Խրամ ամրոցի դիրքադրությունը՝
ըստ Google Earth-ի



552

Պատկ. 552
Երասխ գետի ձորը՝ ամրոցի
շրջակայքից

Պատկ. 553
Ամրոցի տեղընտրութիւնը
լեռնապարանոցի
համայնապատկերում

Պատկ. 554
Ազնաբերդ ամրոցի
դիրքադրութիւնը՝
ըստ Google Earth-ի

Պատկ. 554.1
Ազնաբերդ գիւղի
համայնապատկերը՝ ամրոցի
շրջակայքում



554.1



553



554

5.32. ԱՄՐՈՑԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԻՒՆԻՔԻ ԲԵՐԴԱՄՐՈՑՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ 17 ԲՆՈՐՈՇ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ

Հայաստանում ճարտարապետաշինարարական գործունէութիւնն ընթացել է իրար յաջորդող ընդմիջումներով, քանզի, լինելով օտար նուաճողների դէմ անընդհատ պայքարի մէջ, հայ շինականը կերտել է իր պալատները, հիմնել քաղաքներ, ծաւալել եկեղեցական համալիրների շինարարութիւնը մի բԱրբարոս ցեղերի ընդվզումներից մինչեւ միւսի յարձակումներն ընկած ժամանակահատուածներում: Ճարտարապետաշինարարական գործունէութիւնն ամբողջութեամբ բաւական ընդարձակ եւ բազմաբնոյթ է, սակայն կարելի է տարբերել հիմնական երեք ուղղութիւն՝ արքայական, տաճարային, ռազմական[486]: Արքայականը քաղաքաստեղծ բնոյթ ունի, ինչպէս նշում է Ս.Ե. Հակոբյանը, «Աւանները եւ ագարակները կարող էին կառուցել թագաւորները, մեծ իշխանները»[487]: Տաճարայինը ծրագրել է եկեղեցական բարձրագոյն դասը, որն ունէր վարչամշակութային եւ հոգեւոր նշանակութիւն: Այն հիմնել է հոգեւոր կենտրոններ՝ եկեղեցիներ, վանական հաստատութիւններ, անապատներ, վանք-ամրոցներ: Ռազմականը բարձր դասի զինուորականների, իշխանական տոհմերի մենաշնորհն էր: «Ռազմական շինութիւնները կառուցելու իրաւունքն անվերապահօրէն պատկանում էր իշխաններին»[488]: Ռազմարուեստը, ի տարբերութիւն աշխարհիկ եւ հոգեւոր ճարտարապետութիւնների, ենթարկուել է որոշակի միջազգայնացուած օրենքների ու կանոնադրութեան, ուստի ռազմագիտական շինարարութիւնը, անշուշտ, կարող է լինել ազգային եւ ունենալ ուրոյն արտայայտչամիջոցներ, բայց պէտք է համապատասխանի մարտ վարելու ու պաշտպանուելու ռազմարուեստի պահանջներին: «Ռազմական արուեստի զարգացումը բոլոր եկրներում, այդ թւում եւ Հայաստանում, սերտօրէն կապուած է արտադրութեան, ինչպէս եւ հաղորդակցութեան միջոցների զարգացման հետ»[489]: Այստեղ հարկ է նշել, որ հայ ժողովուրդը միջին դարերում վարել է միայն պաշտպանողական, այլ ոչ նուաճողական ռազմական գործողութիւններ: Դրանով է բացատրւում բազմաթիւ բերդերի ու ամրոցների առկայութիւնը Սիւնիքի տարածքում, որոնց յօրինուածքը պայմանաւորուած է այս կարեւոր հանգամանքով:

Ամրոցի կառուցապատումն առանձնապէս հմուտ ու կատարեալ էր, նամանաւանդ երբ խօսքը մայրաքաղաքի պաշտպանական համակարգի մասին էր: Օրինակ՝ Մովսէս Խորենացին Երուանդաշատ մայրաքաղաքի պաշտպանութեան մասին ունի հետեւեալ յիշատակութիւնը (պատկ.440). «...բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջեցնում է մինչեւ բլուրի յատակը, գետին հաւասար, այնպէս որ գետից ջրերը հոսեն այդ փորուած տեղը, խմելու ջուրը մատակարարելով: Միջնաբերդն ամրացնում է բարձր պարիսպներով, պարիսպների մէջ պղնձէ դռներ է դնում ու երկաթե սանդուղքներ՝ ներքեւից մինչեւ վեր, մինչեւ դուռը. սանդուղքի վրայ, աստիճանների միջեւ, թաքնուած որոգայթներ է շինում, որպէսզի եթէ մէկը կամենայ գաղտնի բարձրանալ թագաւորին դավելու նպատակով, բռնուի ...»[490]: Կարեւոր նշանակութիւն ունեցող ամրոցները, որոնք հարկադրուած էին լինում երկարատեւ պաշարողական մարտ վարելու, ապահովուած էին խմելու ջրի, սննդամթերքի, զէնքի պահեստներով եւ ապրուստի համար անհրաժեշտ ամէն պարագաներով ու շինութիւններով[491]: Տիգրանակերտ մայրաքաղաքի պաշտպանական համակարգի մասին տեղեակ ենք, որ «...միջնաբերդը կառուցուած է եղել բարձր վայրում եւ երեք կողմից՝ հիւսիս-արեւելքից, հիւսիսից ու հիւսիս-արեւմուտքից Տիգրանակերտը պաշտպանել են ժամանակակից Իլիջայի լեռները, իսկ հարաւից՝ խոր կիրճն ու Նիկեփորիոն գետափի անմատչելի, բարձր եւ ուղղաձիգ ժայռերը, որոնք ստեղծել են շրջապատող տեղանքի վրայ իշխող դրութիւն: Տիգրանակերտը շրջապատուած է եղել 50 կանգուն (20 մետր) բարձրութիւն ունեցող

486. Արմէն Զարեան, նշ. աշխ., էջ 36:

487. Ս.Ե. Հակոբյան, *Հայ գյուղացիական պատմութիւն*, Երեւան, 1957, էջ 163:

488. Արմէն Զարեան, նշ. աշխ., էջ 91:

489. Ս.Վ. Սարգսյան, *Հայ ռազմական արուեստի պատմութիւնից*, Երեւան, 1969, էջ 6:

490. Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, 2014, էջ 196:

491. Ս.Վ. Սարգսեան, նույն տեղում, էջ 6:

պարիսպներով, որոնց լայնութիւնն այնքան մեծ է եղել, որ տեղաւորել են պահեստները, ախոռները եւ ծառայել են (որպէս, Ա.Զ.կրտ.) աշտարակների կայազօրի տեղաշարժերի ուղի»[492]:

492. Ս.Վ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 63:

Ամրոցաշինութեան բնագաւառում տեղանքի դիրքի ամրապատման նպատակը կարող է լինել օրգանական, մարտավարական եւ ռազմավարական: Օրգանական է, երբ դիրքը մշտական հենակէտ է, այսինքն՝ վերաբերում է պետութեան սահմանների ընդհանուր պաշտպանութեանը: Մարտավարական է, երբ խօսքը զօրութենական ռազմավարական հենակէտի մասին է, որը վերաբերում է ռազմական գործողութիւնների հանգոյցի պաշտպանութեանը, եւ որը նպաստում է զօրքերի կանոնաւոր տեղաշարժին: Ռազմավարական է, երբ դիրքորոշման կարեւորութիւնը դրսեւորւում կամ ակնկալւում է պատերազմող կողմերի հնարաւոր բախումների միջոցով, այսինքն՝ երբ խօսքը մարտավարական ստոյգ հանգոյցի մասին է: Ամեն դէպքում ամրոցի նպատակը եւ դրանից բխող ճարտարապետական ու յօրինուածքային տեսակը պէտք է ուսումնասիրուեն իրենց ամբողջականութեան մէջ, որպէսզի ամրոցը բաւարարի մարտավարական բոլոր կարիքները, քանի որ, երբ այն ռազմական ընդհարումային գործողութիւնների մէջ է, պէտք է նպաստի պաշտպանական մարտական տարատեսակ խնդիրների լուծմանը: Օրգանական նպատակով կառուցուած ամրոցը կատարում է նաեւ ռազմավարական ծառայութիւն այն ժամանակ, երբ գտնւում է պատերազմական ընդհարման թատերաբեմում:

Հայաստանի Թ–ԺԱ դարերի ճարտարապետական մշակոյթն ընդունուած է բաժանել 4 հիմնական դպրոցների՝ Սիւնիքի, Վասպուրականի, Այրարատ-Շիրակի եւ Տաշիր-Ձորագէտի[493]: Սիւնիքի դպրոցն ունի իր առանձնայատուկ տեղը հայկական ճարտարապետութեան մէջ եւ առանձին ուսումնասիրութեան առարկայ է դարձել մի

493. Ս.Խ. Մնացականյան, *Սիւնիքի ճարտարապետական դպրոցը*, Երեւան, 1960, էջ 11:

շարք արդի հայ եւ օտար գիտնականների համար[494]: Եթէ հնարաւոր է առանձնացնել պաշտամունքային, ժողովրդական, աշխարհիկ ճարտարապետութիւններն ըստ առանձին կենտրոնների եւ վերլուծել տարբեր ուղղութիւնների տարածման, փոխներազդման, յետագայ զարգացման ընթացքը, ապա ամրոցաշինութեան բնագաւառում նման վերլուծութիւնն այժմ անհնար է: Սիւնիքի դպրոցը, լինելով առանձին, ինքնատիպ ուղղութիւն հայկական ճարտարապետութեան մէջ, եւս ունի իրեն մասնայատուկ կենտրոնները եւ շինարուեստի, առանձին ճարտարապետական կառուցուածքների ու մանրամասների տարածման, զարգացման աշխարհագրութիւնը:

494. Վ.Մ. Հարությունյան, Ս.Խ. Մնացականյան, Մ.Մ. Հասրաթյան, Ն.Ծ. Պապուխյան, Պաոլո Կունեո, Ադրիանո Ալպագո Նովելլո, Լալա Կոմնենո, Արա Բերքյան, Հ.Միքայէլ Յովհաննէսեան:

Այսպէս, օրինակ՝ Սեւանի աւազանի ճարտարապետական համալիրների առանձին կառոյցներ՝ Կոթավանք, Մաքենեաց վանք, Վանեւան, Հացառատ, Հայրավանք, իրենց ծաւալային համաչափութիւններով յարդարանքի բնոյթով, պատերի քարերի մշակման արուեստով տարբերւում են, ասենք, Զանգեզուրի ճարտարապետական նոյն յօրինուածքն ունեցող (եռանաւ, քառախորան, կենտրոնագմբէթ) Որոտնավանք, Վահանավանք, Տաթեւ համալիրներից: Սիւնիքի տարածքում պահպանուած ամրոցների ու բերդերի վիճակն այնքան վատթար է եւ քիչ ուսումնասիրուած, որ հնարաւոր չէ կատարել նման վերլուծութիւններ, սակայն ակնյայտ է այն փաստը, որ Սիւնիքում պաշտպանական շինութիւնները կառուցուել են որոշակի սկզբունքներով եւ օրինաչափութիւններով: Մեր ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն է տալիս պարզելու այն ընդհանուր սկզբունքները, որոնք բնորոշ են Սիւնիքի պաշտպանական ճարտարապետութեանը եւ ընդհանրապէս հայկական ամրոցաշինութեանը: Սիւնիքի տարածքում կառուցուած ամրոցներին ճարտարապետա-շինարարական տեսակէտից բնորոշ են հետեւեալ գործօնները.

1. Ամրոցների կառուցման համար ընտրուել են բնականից անառիկ եռանկիւնաձեւ սարաւանդներ, որոնք դիրքորոշուած էին առաւելապէս գետահովիտների բարձրադիր, գերիշխող տեղերում (Սմբատաբերդ, Որոտնաբերդ, Բաղաբերդ, Բորոտն, Տանձավայր, Հրասեկայ, Էրթիչ, Վայս, Քաշաթաղ, Բարկուշատ, պատկ.556):

2. Ամրոցների յատակագծային լուծումները բխել են տեղանքի առանձնայատկութիւններից, իսկ միջնաբերդը պարսպապատուել է ազատ կառուցապատման սկզբունքով (Ողոտնաբերդ, Բորոտն, Բաղաբերդ, Բոլորաբերդ, Սմբատաբերդ, Խոժոռաբերդ, պատկ.557):

3. Պարսպապատերը գծագրուել են այնպէս, որ բնական ժայռերն ու խոշոր քարաբեկորներն ընդգրկուել են կրաշաղախ պատերի մէջ եւ կազմել պաշտպանական համակարգի բաղկացուցիչ մասը (Բոլորաբերդ, Ողոտնաբերդ, Վասակաշատ, Ագարակաձոր, Անդոկաբերդ, Պահու բերդ, պատկ.558):

4. Պարսպապատերի բեկեալների հատուածներում՝ բրգաձեւ պատերին ամրութիւն հաղորդելու նպատակով, տեղադրուել են որմնահեց-աշտարակներ (Բաղաբերդ, Սմբատաբերդ, Բոլորաբերդ, պատկ.559):

5. Պատերը, բուրգերը եւ աշտարակները կառուցուել են կոպտատաշ, առաւելապէս կանոնաւոր քառանկիւն բազալտէ, միջին չափերի քարերից՝ թեթեւ կրաբետոնով եւ պարտադիր բրգաձեւ, որը մեծացնում էր տարրերի կառուցողական կայունութիւնը (Ոլորաբերդ, Սմբատաբերդ, Բաղաբերդ, Պահու բերդ, Խոժոռաբերդ, Անդոկաբերդ, պատկ.560):

6. Խոշոր ամրոցներում օգտագործուել են շրջապատնէշներ եւ միջնաբերդի տարածքը բաժանող պարիսպներ, որոնք լրացուցիչ արգելք էին թշնամու համար այն դէպքում, եթէ նրան յաջողւում էր գրաւել առաջին կամ երկրորդ պաշտպանական գիծը (Սմբատաբերդ, Բաղաբերդ, Պահու բերդ, Քաշաթաղ, Երնջակ, պատկ.561):

7. Պարսպապատերի բոլորաձեւ որմնահեց-բուրգերը երեք տիպի են. կիսաշրջան, պայտաձեւ եւ արտաքուստ ձգուած կիսաշրջանաձեւ, որոնք տեղաւորւում են որոշակի յաճախականութեամբ եւ յաճախ կազմում են ուղղաձիգ ժայռերի ներդաշնակ շարունակութիւնը (Բոլորաբերդ, Բաղաբերդ, Բերդկունք, Անդոկաբերդ, պատկ.562): Այս բուրգերի յօրինուածքն ունի ինչպէս կառուցողական, այնպէս էլ պաշտպանական-ռազմավարական նշանակութիւն: Բուրգերն ու աշտարակները կառուցուել են սնամէջ կամ հոծ: Սնամէջ բուրգերն ունեն կառուցողական նշանակութիւն, իսկ հոծ բուրգերը՝ օգտագործուել են որպէս դիտաշտարակներ եւ պահակակէտեր:

8. Սիւնիքի տարածքում ամրոցների պարսպապատերի վերին հատուածները չեն պահպանուել, սակայն Հայաստանի այլ նահանգներում մեզ հասած օրինակներից (Յիլան, Կարին, Կարս, Անամուր, Կում, Ամիդ, պատկ.563) կարող ենք ենթադրել, որ այստեղ նոյնպէս, մարտ վարելու ռազմավարութեանը համապատասխան, պատերի վերին հատուածներն աւարտուել են *բրուստվերային* ատամնաշարով, որոնց գագաթներն ուղղանկիւն են, կիսաշրջան կամ եռանկիւն: (Մարտ վարելու հետ կապուած այս տարրերը եղել են կառուցողական տեսակէտից թոյլ հանգոյցներ, այդ իսկ պատճառով չեն պահպանուել):

9. Ի տարբերութիւն հայկական այլ ամրոցների՝ Սիւնիքում բերդերի շուրջ պարագծային ջրախրամատներ չեն կառուցուել, քանի որ պարսպապատերը տեղադրուել են բնականից անառիկ ժայռերի վերին եզրագծերով, որոնց ստորոտներով, յաճախ՝ շրջադարձ ոլորաններով հոսում էր գետը (Բաղաբերդ, Ագարակաձոր, Ողոտնաբերդ, Անդոկաբերդ, Պահու բերդ, պատկ.564):

10. Ամրոցների մուտքերը յաճախ տեղադրուել են պարսպապատերի բեկման անկիւններում եւ պարտադիր կերպով պաշտպանուել միակողմանի (Բաղաբերդ, Ողոտնաբերդ, Բոլորաբերդ) կամ երկկողմանի (Սմբատաբերդ, Պահու բերդ) հսկիչ-մարտաշտարակներով: Մուտքային հանգոյցները յաճախ լուծուած են քարաշէն, թաղակապ, յատակագծում՝ քառանկիւն անցախուցերով (Ոլորաբերդ) կամ բնական ուղղանկիւն միջանցքներով (Բաղաբերդ, պատկ.565):

11. Գլխաւոր մուտքերը տեղադրուել են բնական արգելքների մօտ, եղել են թաղակապ, սրահաւոր եւ ունեցել են կրկնակի դարպասներ, որոնց դռներն ամրացուել են պա-

տերի մէջ խաչաձեւ կամ հորիզոնական գերան-փականներով (Սմբատաբերդ, Պահու բերդ, Երնջակ, պատկ.566)։

12. Ամրոցապատերի հաստութեան մէջ կառուցուել են հրակնատներ, որոնց ուղղանկիւն, դէպի ներս լայնացող բացուածքները պսակուել են կոնաձեւ թաղերով (այստեղ օգտագործուել է հայկական եկեղեցիների լուսամուտների յօրինուածքային լուծումը՝ Բաղաբերդ, Մեղրի)։ Ամրապատ եկեղեցիներում պահպանուած հրակնատների բացուածքների վերին հատուածները քօղարկուած են 1/2 կոնաձեւ սնամէջ, կրաբետոնե զրահավահաններով, որոնք ռազմիկին պաշտպանում էին թշնամու արտաքին գրոհներից եւ ապահովում ռազմական գործողութիւններն ամրոցի ներսից (Տաթեւի վանքային համալիրի հարաւային պարսպապատ, Աշտարակի Ծիրանաւոր, Փարպիի Ծիրանաւոր, Զրափի, Աշնակ, պատկ.567)։

13. Սիւնեաց աշխարհի ամրոցները պարտադիր կերպով ապահովուած են եղել ջրամատակարարման յուսալի համակարգերով։ Որոշ ամրոցներում պահպանուել են կավէ ջրատար խողովակաշարերի մնացորդներ (Սմբատաբերդ, Բաղաբերդ, Որոտնաբերդ), որոնք միացուած են եղել ջրահաւաք վտակներին, ջրափոսերին։ Ջրի պաշարները կուտակւում էին ջրի առանձին շտեմարաններում, ջրամբարներում (Բոլորաբերդ, Որոտնաբերդ, Երնջակ, Բարկուշատ, պատկ.568)։ Բոլորաբերդում պահպանուած ջրամբարը գետնափոր է՝ կառուցուած սրբատաշ բազալտ քարերից, հարթ յատակով եւ կոնաձեւ կտրուածքով։ Այն տեղադրուած է միջնաբերդի միջին հատուածում՝ ժայռերի մեծաչափ քարաբեկորներին կից։

14. Ամրոցների միջնաբերդերում, յատկապէս՝ դղեակներում, իշխանական ռազմակայաններում կառուցուել են փոքր, միանաւ մատուռներ (կիսաւեր պահպանուել են Բոլորաբերդում, հաւանաբար՝ նաեւ Սմբատաբերդում, Երնջակում, պատկ.569)։

15. Ամրոցների միջնաբերդերը կառուցապատուել են ռազմական եւ աշխարհիկ բազմաբնոյթ շինութիւններով՝ զինանոցներ, բանտախցեր, մարտահարթակներ, մթերանոցներ, շտեմարաններ, ջրամբարներ, բնակելի սենեակներ, զօրակայաններ, պահակակէտեր, դիտահարթակներ եւ այլն (նման կառոյցների հետքեր պահպանուել են Սմբատաաբերդում, Որոտնաբերդում, Վասակաշատում, Բերդկունքում, Տանձավայրում, Երնջակում, Անդոկաբերդում, Քաշունիի բերդում, պատկ.570)։

16. Ամրոցներին կից յաճախ եղել են գերեզմանոցներ, որտեղ կառուցուել են իշխանական դամբարանները (Սմբատաբերդ, Բոլորաբերդ, Բարկուշատ, Գրհամ, պատկ.571)։

17. Ամրոցներն ու բերդերն ապահովուած են եղել ստորգետնեայ հաղորդակցութեամբ, գետնուղիներով, գաղտնուղիներով, գաղտնարաններով (Սմբատաբերդ, Որոտնաբերդ, Բաղաբերդ, Երնջակ, Քաշունի ամրոց, Անդոկաբերդ, պատկ.572), որոնք ծառայել են որպէս կապի միջոցներ արտաքին աշխարհի հետ՝ թշնամու երկարատեւ պաշարումների ժամանակ։

Սիւնեաց ամրոցների վերը նշուած բնորոշ գործօններն ընդհանուր են հայկական բերդաշինութեան համար եւ բնորոշ են նաեւ Հայաստանի այլ նահանգների պաշտպանական ճարտարապետութեանը։ Պաշտպանական կառոյցների արուեստը Հայաստանում ունի շատ հին աւանդոյթներ. Սիւնիքի Թ–ԺԴ դարերի ամրոցների եւ բերդերի ճարտարապետական լուծումներն ու առանձնայատկութիւնները՝ վաղմիջնադարեան հայկական ամրոցաշինութեան որոշ սկզբունքներ եւ ձեւաստեղծ նախադրեալներ, տարածուել են տարբեր նահանգներում։ Ամրոցների, բերդերի ու դղեակների կառուցման համար ընտրուել են այնպիսի անառիկ դիրքեր, որոնք իրենց նշանակութիւնը շարունակել են պահպանել անկախ երկրի քաղաքական ու ռազմական իրավիճակներից ապահովելով թագաւորութեան, իշխանական կալուածների սահմանները։



555



556

Պատկ. 555
Էրդիչ ամրոցը

Պատկ. 556
Սմբատաբերդ ամրոցը



557



558

Պատկ. 557
Որոտնաբերդ ամրոցը

Պատկ. 558
Բոլորաբերդ ամրոցը



559



560

Պատկ. 559
Ամրոցի գաղտնուղու մուտքը

Պատկ. 560
Ամրոցի համայնապատկերը՝
արեւելքից



561



562

Պատկ. 561
Երնջակ ամրոցը

Պատկ. 562
Բերդկունք ամրոցը

Պատկ. 563
Կիլիկիայի Անամուր ամրոցը

Պատկ. 564
Պահու բերդ ամրոցը

Պատկ. 565
Ռրոտնաբերդ ամրոցը

Պատկ. 566
Պահու բերդ ամրոցը

Պատկ. 567
Փարպիի Ծիրանաւոր
ամրոց-եկեղեցին

Պատկ. 568
Բարկուշատ ամրոցը

Պատկ. 569
Սմբատաբերդ ամրոցը

Պատկ. 570
Վասակաշատ ամրոցը

Պատկ. 571
Բոլորաբերդ ամրոցը


563


564


565


566


569


567


568


572


570


571

5.33. ՍԻՒՆԵԱՑ ԱՄՐՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԱՅԻՆ ԵՒ ՅԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՅՕՐԻՆՈՒԱԾՔԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ (ՉՈՐՍ ՅՕՐԻՆՈՒԱԾՔԱՅԻՆ ԵՒ ԵՐԵՔ ՅԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ)

Քննութեան առնենք Սիւնիքում հանդիպող ամրոցների կառուցուածքային յօրինուածքները: Ամրոցի տիպը բխում է նրա ռազմական նպատակից, որից եւ առաջանում է ճարտարապետական յօրինուածքը՝ ռազմագիտութեան պահանջներից ելնելով: Եթէ եկեղեցական ճարտարապետութեան մէջ հնարաւոր է կատարել յօրինուածքային մանրակրկիտ ուսումնասիրութիւն եւ վերլուծել ոչ միայն առանձին տիպի շինութեան առաջացումն ու զարգացումը, ապա Սիւնիքի պաշտպանական կառոյցների ճարտարապետութեան բնագաւառում այդ անելը կապուած է մեծ դժուարութիւնների հետ: Պատճառները մի քանիսն են: Նախ՝ ուսումնասիրութեան համար անհրաժեշտ չափով պահպանուած ամրոցները քիչ են, իսկ նրանցում եղած ռազմական, կենցաղային եւ հոգեւոր նպատակներին ծառայող կառոյցները կամ կործանուել են, կամ ուսումնասիրութեան համար անբաւարար չափով են պահպանուել: Բացի դրանից՝ անհրաժեշտ է կատարել մանրակրկիտ հնագիտական պեղումներ, որպէսզի հնարաւոր լինի պարզաբանել կիսաւեր կառոյցների ճարտարապետահնագիտական արժէքը: Ըստ պահպանուած պաշտպանական կառոյցների ուսումնասիրութեան՝ կարելի է ասել, որ տիպաբանօրէն նրանք բաժանւում են չորս հիմնական խմբերի.

ա. պահակակէտեր կամ դիտակէտեր, դիտանոցներ,

բ. իշխանանիստ ամրոց-դղեակներ,

գ. մշտական կայազօր ունեցող ռազմական բերդամրոցներ,

դ. ռազմական նպատակներին ծառայող այլ պաշտպանական կառոյցներ:

Պահակակէտ-դիտակէտերը փոքր աշտարակաձեւ կառոյցներ են՝ նախատեսուած փոքրաքանակ զօրախմբերի համար: Այս տիպի կառոյցների հիմնական նպատակը թշնամու զորաշարժերի յայտնաբերումն էր եւ սպասուող յարձակման ուղղութեան կանխատեսումն ու ժամանակին բացայայտումը: Այս աշտարակները կառուցւում էին ռազմավարական կարեւոր հանգոյցներում եւ կապ ունէին կենտրոնական բերդերի ու ամրոցների հետ: Աշտարակաձեւ պահակակէտ-դիտակէտերը կարող են լինել կամ միայնակ կառոյցներ, կամ մաս կազմել ընդարձակ տարածքի վրայ կառուցուած ամրոցների համակարգերի՝ Մեղրի, Կկոց Կար (պատկ.573): Տեղադրւում էին միջնաբերդից անջատ՝ ժայռալանջերի անմատչելի հատուածներում, որտեղից կարելի էր հսկել ընդարձակ տարածութիւններ: Աշտարակ-դիտակէտերը յատակագծում ունեն կիսաշրջանի, պայտաձեւ կամ ձգուած կիսաշրջանի տեսք, նրանց պատերը բրգաձեւ են, յաճախ՝ լծորդուած պատերի ուղիղ կամ բեկեալ կազմող հատուածներին: Դիտաշտարակներն ունեն դիտանցքեր եւ հրակնատներ, որոնց բացուածքները դրսում նեղ են ու ձգուած, իսկ ներսում՝ լայն եւ վերնամասում՝ կամարակապ: Միջնաբերդից դուրս տեղադրուած դիտաշտարակներ կան Բաղաբերդում (պատկ.574), Որոտնաբերդում (այստեղ դիտաշտարակները պարսպապատերի առանձին գօտիների շարունակութեան մաս են կազմում, պատկ.575):

Բերդի ներսում երկու քառանկիւն աշտարակների առկայութեան լաւ օրինակ է Խերթիսի ամրոցը (1354)՝ Վրաստանի Մեսխեթիա մարզում՝ Վարձիայ տանող ճանա-

պարիսին՝ բարձր բլրի վրայ՝ Կուր եւ Փարաւանի գետերի միախառնման վայրում (պատկ. 576)։ Ամրոցի լաւագոյն տեսարանը բացւում է գլխաւոր ճանապարհից։ Բերդն ունի կատարեալ ռազմավարական դիրք։ Այստեղ հատւում են երեք ճանապարհներ. առաջինը տանում է Թուրքիա, երկրորդը՝ Սեւ ծով, երրորդը՝ Թբիլիսի։ Առեւտրի գլխաւոր ճանապարհը դարեր շարունակ այստեղով է անցել։

Իշխանանիստ ամրոց-դղեակները միջնադարում բաւական տարածուած պաշտպանական կառոյցներից էին։ Հայաստանում նշանաւոր են եղել Ամբերդի (պատկ.577), Կայանի, Չախալաբերդի, Բերդաւանի, Գուսանագիւղի՝ Գուգարքում (պատկ.578), Անամուրի (պատկ.579), Թիլի (պատկ.580), Կոռիկոսի՝ Կիլիկիայում (պատկ.581), Սմբատաբերդի, Որոտնաբերդի, Բոլորաբերդի՝ Սիւնիքում (պատկ.582), դղեակ-ամրոցները։ Ի տարբերութիւն հռոմէական եւ բիւզանդական դղեակների, որոնք ունեն կանոնաւոր յատակագիծ (առաւելապէս՝ ուղղանկիւն կամ քառանկիւն, պատկ.583), Սիւնիքում դղեակները կառուցուել են ազատ յատակագծման սկզբունքով, այսինքն՝ ընտրուել են բնականից անառիկ դիրք ունեցող եռանկիւնաձեւ հրուանդանները, եւ պարսպատուել են այն հատուածները, որոնք թշնամու համար եղել են մատչելի։ Այս կառոյցները եղել են անառիկ ու յարմարեցուած ապրելու եւ մարտնչելու համար։ Հնարաւոր է՝ այստեղ եղել են պալատական համալիրներ, եկեղեցի, օրինակ՝ Բոլորաբերդում (պատկ.584), քանի որ իշխանական գերդաստանները դղեակներում ապրել եւ անհրաժեշտութեան դէպքում երկարատեւ պաշտպանուել են թշնամու յարձակումներից։ Այս տիպի պաշտպանական կառոյցներին համարժէք են նաեւ արքունի ամառանոցները, ձմեռանոցները, որտեղ իրենց ժամանակայարմար հանգիստն են անցկացրել թագաւորական կամ իշխանական գերդաստանների անդամները։

Վրաստանում դղեակ-ամրոցի լաւ օրինակ է Քսանի (Մտկվարի, 1512) բերդը՝ Սարկինեթի լեռան գագաթին (600մ բարձրութեամբ)՝ Քսանիի ձախ ափին՝ Մցխեթա-Մթիանեթի շրջանի Ցիխիսձիրի գիւղի շրջակայքում (պատկ.585)՝ Քսանի եւ Մտկվարի գետերի միախառնման վայրում՝ ռազմավարական դիրքում։ Հասանելի է միայն հարաւ-արեւմուտքից եւ, շնորհիւ իր գերիշխող դիրքի, տեսանելի է Վրաստանի գլխաւոր՝ արեւելք–արեւմուտք մայրուղուց։ Այն կառուցել է Բագրատ իշխանը, որը, խլելով իր աւագ եղբայր Քարթլիի թագաւոր Դաւիթ X-ից Մուխրանիի շրջանը, իր համար նոր իշխանութիւն է կազմաւորել։ Բերդն անմիջապէս դարձել է տիրակալ Գեորգի II Կախեթացու թիրախը, որը շուտով պաշարել է այն։ Ամրոցը կառուցուել է լեռան ժայռալանջ գագաթին, որի սեղանաձեւ յատակագծի անկիւններն ամրացուած են շրջանաձեւ աշտարակներին։ Որպէս շինանիւթ՝ օգտագործուել է գետի գլաքարը, իսկ վերանորոգումներն աղիւսաշէն են։

Մշտական կայազօր ունեցող ռազմական բերդամրոցները եղել են երկրի համապետական նշանակութեան պաշտպանական կառոյցներ, որոնք կոչուած էին անառիկ պահելու նահանգի ռազմավարական կարեւոր հանգոյցները։ Այս ամրոցները կառուցուել են միասնական մտայղացմամբ՝ արքունիքի, իշխանների եւ ռազմագէտների պատուէրներով։ Յաճախ այս ամրոցները եղել են երկրի, նահանգի կամ իշխանական տան վարչական կենտրոնները։ Այս դէպքում ամրոցներում հաստատուել են բարձրագոյն դասի ներկայացուցիչները եւ ընտրեալ կայազօրը։ Ճարտարապետական տեսակէտից այս ամրոցները յատակագծուել են ընդարձակ տարածքներում կառուցելու համար,

կազմուած են եղել բուրգերով ամրացուած բազմաշար պարսպապատերից, ունեցել են մէկ կամ մի քանի մուտք, ռազմական նշանակութեան կառոյցներ եւ աշխարհիկ շինութիւններ: Ամրոցների տեղադրութեան համար օգտագործուել են վաղ շրջանում հիմնադրուած դիրքերը կամ բնականից անառիկ այն եռանկիւնաձեւ հրուանդանները, որոնք եղել են գետերի շրջապտոյտների հատուածներում, օրինակ՝ Սմբատաբերդը (պատկ.586), Բաղաբերդը (պատկ.587), Վասակաշատը (պատկ.588), Բորտին, Երնջակը (պատկ.589):

Ռազմական նպատակներին ծառայող պաշտպանական այլ կառոյցներից են քարաւանատները, մելիքական ամրապատ ապարանքները, վանք-ամրոցները, ամրապատ եկեղեցական համալիրները, ամրոց-եկեղեցիները: Այս կառոյցներն ունեն ամրոցներին բնորոշ տարբեր բաղադրամասեր եւ առանձնայատուկ յատակագծային յօրինուածքներ, որոնք առաջին հերթին բխում են ռազմապաշտպանական նկա- տառումներից:

Ըստ յատակագծային յօրինուածքի՝ Սիւնիքի պաշտպանական կառոյցները բաժանւում են հետեւեալ տիպերի.

ա. միակողմանի պարսպապատերով կառուցապատուած ամրոցներ (միաշերտ եւ բազմաշերտ),

բ. ներփակ, բազմանիստ պարսպապատերով կառուցապատուած ամրոցներ (միաշերտ եւ բազմաշերտ),

գ. ժայռապատերին առանձին կանգնած բուրգերից կազմուած ամրոցներ:

Միակողմանի պարսպապատերով կառուցապատուած ամրոցների տիպը բխում է տեղանքի առանձնայատկութիւններից եւ պայմանաւորուած է այն հանգամանքով, որ տեղանքի մի կողմի դէպի ձորն ուղղահայեաց իջնող ժայռապատերն արդէն անառիկ էին դարձնում միջնաբերդի չկառուցապատուած հատուածը, եւ անհրաժեշտ էր քարաշէն պարիսպներով ամրակայել բերդի միայն խոցելի հատուածը: Այս դէպքում պարըսպապատերը կառուցուել են մէկ կամ երկու շարքով՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով մուտքի հանգոյցների կառուցապատմանն ու անառիկութեանը: Միակողմանի պարըսպապատերով ամրացումները կարող են լինել գծային, շրջանաձեւ, աղեղնաձեւ, անկանոն, եռանկիւնաձեւ, եռակողմանի: Բոլոր դէպքերում պարսպապատերի ուղիղ ընթացող կամ անկիւններ կազմող հատուածներն ամրացուած են եղել կիսաշրջան, ձուաձեւ, ուղղանկիւն սնամէջ կամ հոծ աշտարակներից՝ Բաղաբերդ, Սմբատաբերդ (պատկ.590): Ներփակ, բազմանիստ պարսպապատերով կառուցապատուած ռազմական շինութիւնները բնորոշ են դղեակներին, ամառանոցներին ու ռազմական ոչ մնայուն կայազօր ունեցող բերդերին, որոնց՝ քառակուսուն մօտեցող, ուղղանկիւն կամ բազմանիստ յատակագծում՝ բեկեալների անկիւններում ու միջնամասում ամրացուած են հսկիչ աշտարակներ՝ Բոլորաբերդ, Որոտնաբերդ (պատկ.591), Չարդակ Կիլիկիայում (պատկ.592): Ժայռապատերին առանձին կանգնած բուրգերի եւ աշտարակների տարբերակը կառուցուել է ձորահովիտների ու ճանապարհների երկայնքին՝ հսկելու հակառակորդի առաջխաղացումն ու ապահովելու քարաւանների տեղաշարժերը թագաւորութեան, իշխանութան մի սահմանից միւսը: Բուրգերը ներսից եղել են բազմահարկ՝ երկայնական պատերին բացուած բազմաթիւ հրակնատներով ու դիտանցքերով, օրինակ՝ Մեղրիի ամրոցը (պատկ.593), Կիլիկիայի Յուրեղին (Գոկվելիողլու, պատկ.594):



573

Պատկ. 573
Մեղրի ամրոց



574

Պատկ. 574
Բաղաբերդ ամրոց



575



576

Պատկ. 575
Բաղաբերդ ամրոց

Պատկ. 576
Վրաստանի Խէրթիսի ամրոց



577



578

Պատկ. 577
Ամբերդ ամրոց

Պատկ. 578
Գուսանագիւղի ամրոց



579



580

Պատկ. 579
Կիլիկիայի Անամուրի ամրոց

Պատկ. 580
Կիլիկիայի Թիլ ամրոց



581



582

Պատկ. 581
Կիլիկիայի Կոռիկոս ամրոց

Պատկ. 582
Սմբատաբերդ



583

Պատկ. 583
Limes arabicus հռոմէական ամրոցը
Ջիորդանիայի տափաստանում



584

Պատկ. 584
Բոլորաբերդ-Պոծաբերդ ամրոց



585

Պատկ. 585
Վրաստանի Քսանի ամրոց



586

Պատկ. 586
Սմբատաբերդ ամրոց



587

Պատկ. 587
Սմբատաբերդ ամրոց



588

Պատկ. 588
Վասակաշատ ամրոց



589

Պատկ. 589
Երնջակ ամրոց



590

Պատկ. 590
Սմբատաբերդ ամրոց



591

Պատկ. 591
Բաղաբերդ ամրոց



592

Պատկ. 592
Կիլիկիայի Արդակ ամրոց



593

Պատկ. 593
Մեղրի ամրոց



594

Պատկ. 594
Կիլիկիայի Գոկուելաղլի ամրոց



Թանահատ, Պոռշեան իշխանատան բարձրաքանդակը մուտքի լուսնաքարին

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՄՐՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ

6.1. ԱՄՐՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ
6.2. Պարսպապատեր
6.3. Բուրգեր, աշտարակներ
6.4. Մուտքեր
6.5 Դիտանոցեր, հրակնատներ, նետանցքեր
6.6 Մարտահարթակներ
6.7 Ձինանոցներ, պահակակէտեր,
շտեմարաններ, մշտական կայազօրի համար նախատեսուած կացարաններ,
պալատական համալիրներ, մթերանոցներ, ջրամբարներ,
ջրատարներ, գաղտնուղիներ, անցախուցեր, գաղտնարաններ,
գետնափոր պահեստարաններ, ստորգետնեայ անցումներ, բանտեր

6.1. Ամրոցների պաշտպանական տարրեր

Ամրոցների յատակագծային սկզբունքների համընդհանրութեան պարագան կապած է տեղանքի աշխարհագրական առանձնայատկութիւնների՝ լեռնային, ցամաքային, հարթավայրային, ծովային, մարտավարական արհեստավարժութեան՝ սառը զէնքի, հրազէնի օգտագործում, ամրոցների տեսակի՝ պահակային, ձորապահակ, դղեակ, դաշտային, յօրինուածքի՝ պարսպապատերի պարագծային, ուղղանկիւն, անկանոն, կէտային, ու դրանց կառուցման նպատակի՝ քաղաքաշինական, պաշտանմունքային, ճանապարհային, պահակային եւ այլն: Ամրոցների այս բոլոր առանձնայատկութիւններից անկախ՝ դրանցում կիրառուող պաշտպանական տարրերը ընդհանուր են եւ դարերի ընթացքում փոփոխուել են՝ կապուած մարտավարական առաջընթացի եւ զինատեսակի կատարելագործման հետ: Ամրոցների ու բերդերի պաշտպանական հիմնական տարրերն են՝ պարսպապատեր, բուրգեր, աշտարակներ, մուտքեր, գաղտնադռներ, փականով դարպասներ, անցումներ, դիտանցքեր, հրակնատներ, շարժակամուրջներ, հրաձգարաններ, նետաձգարաններ, դիտանոցներ, պահակատներ, մարտահարթակներ, դիտաշտարակներ: Ամրոցներն իրենց ներքին տարածքներում ունեցել են նաեւ ռազմական, աշխարհիկ, կենցաղային, հաղորդակցային նշանակութեան բազմաթիւ այլ կառոյցներ՝ ռազմամթերքի պահեստներ, ամբարներ, շտեմարաններ, մշտական կայազօրի համար նախատեսուած կացարաններ, ջրամբարներ, ջրատարներ, գաղտնուղիներ, անցախուցեր, կամրջակներ, գաղտնարաններ, զինանոցներ, շտեմարաններ, գետնափոր պահեստարաններ, բանտեր: Իշխանական դղեակներում, ամառանոց-ձմեռանոցներում ամրոցներն ունէին նաեւ փոքր մատուռներ, ամրապատ բնակարաններ, պահակախմբերի կացարաններ, հրապարակներ, կենցաղային սպասարկման համար կառոյցներ եւ այլն:

Ճարտարապետաշինարարական յօրինուածքի առումով ամրոցների պաշտպանական տարրերը կապուած են եղել նաեւ տուեալ ժամանակաշրջանի զէնքերի տեսակներին: Հայ զինուորների օգտագործած զէնքերի տեսականու մասին հետաքրքիր նկատառում ունի Ս. Վ. Սարգսյանը. «Ըստ Հերոդոտի, հայոց զօրքերը զինուած են եղել փոյուգիացիների եւ պափլագոնիացիների (սակաւ տարբերութեամբ) փոքրիկ վահաններով, կարճ նիզակներով, տեգերով եւ սրերով (Հերոդոտ, Պատմութիւն ինը գրքից, թարգմանութիւնը Սիմոն Կրկաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1986, էջ 407-408): Քսենոֆոնի «Անաբազիս»-ից երեւում է, որ հայկական զօրքերը, որոնց հրամանատարն էր Օրոնտասը (Երուանդը՝ Երուանդեանների հարստութիւնից), զինուած էին խոշոր վահաններով եւ երկար նիզակներով[495]:

495. Ս.Վ. Սարգսյան, նշ. աշխ., էջ 12: Քսենոֆոն, *Անաբասիս*, թարգմանութիւնը Սիմոն Կրկաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1970, էջ 75:

6.2. Պարսպապատեր

Պարսպապատերն ամրոցների ամենակարեւոր պաշտպանական գործօնն են, որոնց դիրքադրութիւնից, կառուցուածքից, շինարարական հմտութիւնից եւ կառուցողական որակից կախուած էին բերդի անառիկութիւնն ու ապահովութիւնը: Պարսպապատերը կառուցուել են ստոյգ սկզբունքներով ու յարմարեցուել բարձունքի ժայռազանգուածներին այնպէս, որ հնարաւոր լինէր առաւելագոյնս օգտագործել բնական խոչընդոտներն ու արգելքները (Որոտնաբերդ, Բոլորաբերդ, Բաղաբերդ, Վասակաբերդ, Երնջակ, Քաշունի, Պահուեւ այլն, պատկ.595): Յատակագծայինյօրինուածքովամրոցների աշտարակաւոր պարսպաշարերն ունեցել են հետեւեալ առանձնայատկութիւնները՝ գծային, շրջանաձեւ, եռանկիւնաձեւ, եռակողմ, շուրջբոլոր, քառակուսի, ուղղանկիւն, բազմանիստ եւ անկանոն (պատկ.596): Ամրոցների տեսակով պայմանաւորուած՝ պարսպաշարքերը տեղադրուել են հետեւեալ սկզբունքով՝ առաջնապարիսպ, միջնապարիսպ եւ ներքնապարիսպ (պատկ.597): Եռաշերտ այս յօրինուածքը բնորոշ է մայրա-

քաղաքներին կամ թագաւորանիստ, կաթողիկոսանիստ կենտրոններին, որոնք կարիք ունէին առաւել կայուն ու վստահելի պաշտպանութեան համակարգերի, որպիսիք էին Տիգրանակերտ, Դուին, Անի մայրաքաղաքները (պատկ.598)։ Պարսպաշարքերի իրարից հեռաւորութիւնը կարող էր հասնել նոյնիսկ 100–110մ, ինչպէս եղել է Երնջակ ամրոցում[496]։ Բազմաթիւ ամրոցներ կառուցուել են նախաքրիստոնէական բերդշէնների, ուրարտական ռազմական կառոյցների աւերակների տեղերում՝ օգտագործելով նախկինում ընտրուած մարտավարական սկզբունքներն ու օրինաչափութիւնները (Բերդաւան, Որոտնաբերդ, Երնջակ, Խոժոռաբերդ, Անդոկաբերդ)։ Պարիսպները եղել են եռաշերտ (Բաղաբերդ), երկշերտ (Բոլորաբերդ), միաշերտ (Բերդկունք, պատկ.599), բազմաշերտ (Անդոկաբերդ, պատկ.600)։ Երբեմն ամրոցի ներսում՝ անառիկ բարձրադիր դիրքում կառուցուել է միջնաբերդը, որտեղ գտնուում էր երկրի վարչական, կրօնական ու ռազմական վերնախաւը (Բոլորաբերդ, Սմբատաբերդ, Բաղաբերդ, Երնջակ)։ Պարսպապատերը կառուցուել են բազալտէ որձաքարերից՝ կանոնաւոր կամ անկանոն շարուածքով՝ միդիս եռաշերտ սկզբունքով՝ կրաշաղախի, երբեմն՝ կաւաշաղախի միջնամասով, հիմքի մօտ՝ շատ հաստ (3–4մ), վերին աւարտամասում՝ աւելի նեղ (2,5–2մ) բրգաձեւ, ներքուստ՝ ուղղահայեաց, արտաքուստ՝ դէպի վեր թեքադիր (պատկ.601)։ Շարուածքը եղել է հորիզոնական կարաններով (Սմբատաբերդ, Պահու բերդ, պատկ.602), եւ պատի ամրութիւնն ուժեղացնելու նպատակով երբեմն արուել է մշակուած քարերով՝ «ձկան ողնաշարի» կամ «եղեւնաձեւ» յօրինուածքով (Բոլորաբերդ, Որոտնաբերդ, պատկ.603)։ Պարսպապատերին հպուած, ներսից, կառուցուել են խցեր, պահեստներ, կենցաղային կառոյցներ, զինանոցներ եւ այլն։ Պարսպապատերի ներքին մարտահարթակների մակարդակին տեղադրուել են տարբեր զէնքերի՝ նետ, աղեղ, նի- զակ, ռմբանետ, հրազէնի համար նախատեսուած տարբեր յօրինուածք ունեցող հրակնատ-բացուածքներ, դիտանցքեր (պատկ.604)[497]։

496. Արգամ Այվազյան, *Երնջակ բերդը*, «ԼՀԳ», № 2, Երեւան, 1979, էջ 69։

497. Ս.Վ. Սարգսյան, նշ. աշխ., էջ 12–15։

6.3. Բուրգեր, աշտարակներ

Բուրգերն ու աշտարակները հիմնական երկու նպատակի են ծառայել։ Տեղադրուել են պարսպապատերի բեկման անկիւններում, պատերի երկայնաձիգ միջանկեալ տարածքներում, մուտքերի կողերին՝ ելնելով կառուցողական-ամրաշինական-երկրաշարժակայուն նպատակներից (Բաղաբերդ, Սմբատաբերդ, Պահու բերդ, պատկ.605)։ Նոյն այս նպատակին են ծառայել նաեւ պարսպաշարքերին իրարից որոշակի հեռաւորութեան վրայ տեղադրուած որմնահեցերը (Երնջակ, Քաշաթաղ, Որոտնաբերդ, Սմբատաբերդ, պատկ.606)։ Միւս նպատակը ռազմավարական-հետախուզական-պահակայինն էր, ուստի դրանք տեղադրուել են բերդամրոցների այնպիսի հատուածներում, որտեղից բարենպաստ եղանակին հնարաւոր էր հսկել թշնամու զօրաշարժերը եւ կապ հաստատել պաշտպանական համակարգի այլ կառոյցների հետ (Բաղաբերդ, Պահու բերդ, Բարկուշատի բերդ, պատկ.607)։ Աշտարակներն անպայմանօրէն տեղադրուել են ամրոցների տարբեր մուտքերի կողերին (մէկ կամ երկու կողմից)՝ ապահովելով մուտքի պաշտպանութիւնն ու հսկումը կայազօրի կողմից (Բաղաբերդ, Սմբատաբերդ, Երնջակ, Պահու բերդ, պատկ.608)։ Բուրգ-աշտարակները յատակագծում եղել են կլոր, բոլորակ, քառանկիւն, ուղղանկիւն, պայտաձեւ, կիսաշրջանաձեւ (Բոլորաբերդ, Սմբատաբերդ, Բաղաբերդ, Մեղրի, Պահու բերդ, պատկ.609)։ Տեղադրւում են պարսպապատերին ագուցուած կամ առանձին կանգնած (Մեղրի, պատկ.610)։ Ներքին պատերն ուղղահայեաց են, արտաքուստ՝ բրգաձեւ՝ դէպի վեր նեղացող։ Աշտարակները վերին մասում աւարտւում են ատամնաշարերով (Կիլիկեան Հայաստանի Անաւարձա, Անարզաբա, պատկ.611), ունեցել են հրակնատներ, դիտանցքեր, տարբեր

մակարդակներում՝ մարտահարթակներ, ներքին աստիճաններ, ամբարձիչներ (Շատինի, Տաթեւի վանք-ամրոցներ, Ախթալան՝ Լոռիում, Ծիրանաւորը՝ Այրարատում, պատկ.612)։ Աշտարակների պատերի շարուածքներն ու քարի ընտրութիւնը նոյնն են, ինչ պարսպապատերինը։

Յատակագծային յօրինուածքի բերումով՝ աշտարակները հիմնականում եղել են քառանկիւն կամ շրջանաձեւ (նաեւ ձվաձեւ)։ Ամենից հին ու տարածուած տարբերակը քառանկիւն աշտարակներն են (Էրեբունի, Արին բերդ, Լճաշէն , պատկ.613)։ Շրջանաձեւ աշտարակներն սկսել են տարածուել միջնադարում՝ հրետանու կամ բերդ քանդող մեքենաների օգտագործման հետեւանքով։ Քառանկիւն յատակագծով աշտարակներին հարուածելիս վնասը համեմատաբար աւելի ակնյայտ էր, քան շրջանաձեւ յօրինուածքով աշտարակների դէպքում, որտեղ հարուածի ուժը տեղաբաշխվում էր հաւասարապէս (պատկ.614)։ Շրջանաձեւ աշտարակների վրայ տեղադրուած հրակնատներն ունէին աւելի լայն տեսադաշտ, քան քառանկիւն աշտարակներինը։

6.4. Մուտքեր

Ամրոցների մուտքերը տեղադրուել են բերդի պաշտպանների համար յարմար հսկողութեան տեսադաշտում՝ արտաքին ու ներքին պարսպապատերի դիրքադրութեան համեմատ իրարից շեղուած համակարգով (Քաղաբերդ, պատկ.615)։ Դէպի ամրոց տանող կարեւոր դարպասը սալայատակ, թաղակապ սրահ ունի, որի ընդարձակ մուտքը քօղարկվում էր մետաղական ճաղացանցով եւ երկու կողմից հսկւում էր հրակնատներ, դիտանցքեր ունեցող պահակ-աշտարակների միջոցով (Սմբատաբերդ, Պահու բերդ, Կիլիկիայի Թումլու, պատկ.616)։ Մուտքի կողային բուրգերը կարող էին ունենալ նաեւ պահակային ու հարկային ծառայութիւններ։ Այս դէպքում նրանք կառուցւում էին մի գծի երկայնքով (Սմբատաբերդ, պատկ.617)։ Մուտքերին մօտենում էին ժայռի մէջ փորուած աստիճաններով (Երնջակ)։ Պահպանուած մուտքի օրինակում մուտքի բացուածքի բարձրութիւնը հնարաւորութիւն է տուել ներս մտնելու ձի հեծած (Սմբատաբերդ, պատկ.618)։ Մուտքերը տեղադրուել են նաեւ առանց աշտարակների՝ պարսպապատերի երկայնական գծի ընդհատման ու իրար նկատմամբ շեղակի դասաւորուած պարսպապատերի հանգոյցում (Քաշունի բերդ, Անդոկաբերդ, պատկ.619)։

6.5. Դիտանոցներ, հրակնատներ, նետանցքեր

Մարտավարական այս տարրերը տեղադրուել են պարսպապատերի եւ բուրգաշտարակների քիչ տեսանելի հատուածներում, որոնց նպատակը քօղարկուած, աննկատ ձեւով թշնամու տեղաշարժերին հետեւել էր. թոյլ էին տալիս մօտենալ պարսպապատերին եւ անակնկալ ձեւով խոցում ու ոչնչացնում էին նրան։ Հրակնատներն արտաքուստ ունեն երկարաւուն ուղղահայեաց նեղ բացուածքներ, որոնք դէպի ներս լայնանում են այնքանով, որքանով անհրաժեշտ է զէնքի տարբեր տեսակներ օգտագործելու համար՝ միեւնոյն ժամանակ մնալով պատսպարուած եւ հնարաւորինս անխոցելի արտաքին թշնամու հարուածներից (պատկ.620, 621)։ Հրակնատները երբեմն ունեն արտաքուստ դէպի դուրս արտայայտուած կիսակոր վահանակներ, որոնք պաշտպանում էին հետեւում գտնուող մարտիկին արտաքին նետաձգութիւններից ու հարուածներից (պահպանուել են Աշտարակի եւ Փարպիի Ծիրանաւոր եկեղեցիների պատերին, Տաթեւի վանք-ամրոցի պարսպապատի աշտարակներում, պատկ.622)։ Վահանակների կրող տարրերը փայտից էին, թաղանթը՝ կիրաւազային սուաղից։ Զէնքի օգտագործման նպատակից ելնելով բացուածքները տարբեր տեսակի ու յօրինուածքի են եղել եւ յարմարեցուել են հետեւեալ նպատակներին. աղեղնաւոր նետաձիգութեան, նիզակահարութեան, նետահարութեան,

շիկացած հեղուկի, գնդացիրի, ականանետութեան համար: Պարսպապատերի ու պահակ-աշտարակների պատերին բացուած հրակնատները տեղադրուել են՝ ելնելով ամրոցի մարտավարութեան ուսմունքներից ու փորձառութիւնից եւ հաշուի առնելով ներքին մարտահարթակների մակարդակները (պատկ.623):

6.6. Մարտահարթակներ

Մարտահարթակներն անհրաժեշտ էին պարսպապատերի, բուրգ-աշտարակների տարբեր յարկերից հրակնատների, դիտանցքերի միջոցով մարտավարութիւն կազմակերպելու համար: Դրանք իրականացուել են պարսպապատերի ու աշտարակների պատի հաստութեան հաշուին (Սմբատաբերդ, պատկ.624) կամ առանձին դէպքերում դրանք կառուցուել են պատերին հենուած փայտէ առանձին տարրերից, որտեղ կարելի էր բարձրանալ պատին հենուած բարձակ աստիճանների միջոցով: Առանձին կանգնած խոշորածաւալ աշտարակների մարտահարթակները բազմայարկ էին եւ հաղորդակցւում էին պատի հաստութեան մէջ արուած քարէ աստիճաններով (Մեղրի, Ախթալայ, պատկ.625): Փայտէ մարտահարթակների կրող շինութեան գերաններն ամրացուել են պատի հաստութեան մէջ: Այսօր կարելի է տեսնել պատերի մէջ թողնուած աւերուած փայտէ մարտահարթակների գերանների անցքեր (Բաղաբերդ, Մեղրի, պատկ.626):

6.7. Զինանոցներ, պահակակէտեր, շտեմարաններ, մշտական կայազօրի համար նախատեսուած կացարաններ, պալատական համալիրներ, մթերանոցներ, ջրամբարներ, ջրատարներ, գաղտնուղիներ, անցախուցեր, գաղտնարաններ, գետնափոր պահեստարաններ, ստորգետնեայ անցումներ, բանտեր

Մշտական կայազօր ունեցող կամ ժամանակաւոր օգտագործման ամրոցաշինական որեւիցէ կառոյց, պարսպապատերի ներսում ունեցել է ռազմական (զինանոցներ, պահակակէտեր, բանտեր), հաղորդակցական (գաղտնուղիներ, գետնափոր պահեստարաններ, ստորգետնեայ անցումներ, մուտքեր), կենցաղային (պալատական կառոյցներ, կացարաններ, մթերանոցներ, շտեմարաններ, ջրամբարներ), կրօնական նպատակներին ծառայող շինութիւններ (մատուռներ, եկեղեցիներ), որոնք կառուցուել են ամրոցապատերի, բուրգերի, մուտքերի հետ միասին կամ ժամանակի ընթացքում, երբ նրանք ընդարձակուել կամ վերանորոգուել են: Ամրոցապատկան ներքին տարածութեան ռազմական նշանակութեան բոլոր շինութիւնները հիմնականում կառուցուել են պարսպապատերի երկայնքին՝ պատերին անմիջապէս հպուած (Սմբատաբերդ, Բաղաբերդ, Երնջակ, Քաշունի, Որոտնաբերդ, պատկ.627). Պատաշարերին հպուած շինութիւնների տանիքները յաճախ օգտագործուել են որպէս բերդամրոցների մարտահարթակներ, ուր կարելի էր բարձրանալ քարաշէն կամ փայտաշէն աստիճաններով: Այս կառոյցների յօրինուածքային, յատակագծային ու ճարտարապետական լուծումների մասին ստոյգ տեղեկութիւններ կարելի է ունենալ միայն հնագիտական պեղումներից յետոյ: Այսօր պահպանուել են նրանց մնացորդները՝ պարագծային եզրապատերի ու փոսորակների տեսքով: Կարեւոր ռազմական ամրոցների ներսի տարածքում՝ բարձրադիր եւ բնականից լաւ պաշտպանուած բարձունքներին զետեղուել են միջնաբերդերը, որոնք, առաջնապարիսպն ու ներքնապարիսպը թշնամու գրաւումից յետոյ, եղել են ամրոցների վերջին պաշտպանական հենակէտերը: Միջնաբերդում են տեղակայուել հիմնականում ռազմական ու կենցաղային շինութիւնները, գաղտնարանները, ստորգետնեայ անցուղիներն ու ջրամբարը: Միջնաբերդում են կառուցուել նաեւ իշխանական պալատը, բաղնիքը, մատուռը եւ տեղակայուել կայազօրը:



595


Պատկ. 595
Բոլորաբերդ-Պոօշաբերդ ամրոցի
ընդհանուր տեսքը



597

Պատկ. 597
Կիլիկիայի Կոռիկոս ամրոցի
յատակագիծը՝ ըստ Հերցֆելդի եւ
Գույերի

Պատկ. 598
Դուինն մայրաքաղաքի եռաչափ
վերակազմութիւնը՝ ըստ
Ճարտարապետ
Պարգեւ Ֆրանկեանի




596

Պատկ. 596
Ամրոցապատերի յատակագծային յօրինուածքները, Ա. Միակողմանի պարսպապատով կառուցապատում
Ա1. Գծային
Ա2. Շրջանաձեւ
Ա3. Եռանկիւնաձեւ
Ա4. Եռակողմանի
Բ. Շուրջբոլոր պարսպապատերով կառուցապատում
Բ1. Քառակուսի
Բ2. Ուղղանկիւն
Բ3. Բազմանիստ
1. Առաջնապարիսպ
2. Ցետնապարիսպ




598



599

Պատկ. 599
Բերդկունք ամրոցի զենիթային լուսանկարը



600

Պատկ. 600
Անդոկաբերդ ամրոցի տեղահանոյթն ու ընդհանուր յատակագիծը, հեղինակ՝ Գ. Սարգսեան



601

Պատկ. 601
Սմբատաբերդ ամրոցի
պարսպապատի հատուած



602

Պատկ. 602
Սմբատաբերդ ամրոցի զոյգ
աշտարակներով մուտքը



603

Պատկ. 603
Բոլորաբերդ-Պոռշաբերդ ամրոցի
պարսպապատի «ձկան ողնաշար»
շարուածքի մանրամաս



604

Պատկ. 604
Մեղրի ամրոցի շրջանաձեւ
աշտարակներից



605

Պատկ. 605
Բաղաբերդ ամրոցի կիսաբոլոր աշտարակներից



607

Պատկ. 607
Բաղաբերդ ամրոցի հսկիչ-աշտարակը



606



611

Պատկ. 606
Սմբատաբերդ ամրոցի որմնահեց-
աշտարակներից

Պատկ. 611
Կիլիկիայի Անավարզայ
ամրոցի բոլորաձեւ աշտարակի
պահպանուած ատամնաշարը



608

Պատկ. 608
Սմբատաբերդ ամրոցի մուտքի
կողային աշտարակ-բուրգերը



609

Պատկ. 609
Բոլորաբերդ-Պռոշաբերդ ամրոցի
պարսպապատի շարուածքի
մանրամաս

Պատկ. 610
Մեղրի ամրոցի բոլորակ բուրգի
պատի շարուածքի
մանրամաս

Պատկ. 612
Ծատին վանք-ամրոցի շրջանաձեւ
աշտարակներից



610




612



613

Պատկ. 613
Էրեբունի ամրոցի ուղղանկիւն
որմնահեցերով պարսպապատը



614

Պատկ. 614
Բջնի ամրոցի երկշերտ՝ բուրգ-
որմնահեցերով ամրացուած
պարսպապատերը




615

Պատկ. 615
Կիլիկիայի Ամուդայ ամրոցի ուղղանկիւն աշտարակ-բուրգը



616

Պատկ. 616
Բաղաբերդ ամրոցի մուտքը



617



617.ա

Պատկ. 617
Կիլիկիայի Թռւմիւ ամրոցի աւերակ մուտքը

Պատկ. 617.ա
Կիլիկիայի Սինապ ամրոցի պահպանուած հրակնատը ներսից



618

Պատկ. 418
Սմբատաբերդ ամրոցի կողային աշրատակ-բուրգերով մուտքը՝ վերակառուցումից յետոյ



619

Պատկ. 619
Սմբատաբերդ ամրոցի մուտքը ներսից՝ վերակառուցումից յետոյ



620

Պատկ. 620
Հալիձոր վանք-ամրոցի մուտքը



621



622

Պատկ. 621
Տաթեւի վանք-ամրոցի պարսպապատի անկիւնային բոլորաձեւ աշտարակի հրակնատների վահանակները՝ վերանորոգելուց յետոյ

Պատկ. 622
Կիլիկիայի Սիս ամրոցի լաւ պահպանուած հրակնատները՝ արտաքուստ



623

Պատկ. 623
Ախթալայ վանք-ամրոցի մուտքի աշտարակի երկրորդ հարկի փլուած ծածկը կրող կամարները

Պատկ. 624
Սմբատաբերդ ամրոցի ներսից պարսպապատին կից աշխարհիկ շինութիւնների հետքերը



624

Պատկ. 625
Մեղրի ամրոցի բոլորաձեւ աշտարակը



625



626

Պատկ. 626
Սմբատաբերդ ամրոցի վերանորոգուած պարսպապատերը եւ ներսից կից շինութիւնների աւերակները



627

Պատկ. 627
Բերդկունք ամրոցի աշխարհիկ շինութիւնների աւերակները՝ մինչեւ պեղումները



Հառիճավանք, մարդագլուխ կենդանակերպի բարձրաքանդակը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ
ABSTRACT/RIASSUNTO
SUMMARY
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԻՒՆ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԱԾ ՔԱՐՏԵԶՆԷՐ
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ
ԳԾԱԳՐԵՐ, ՀԱՆՈՅԹՆԵՐ, ՉԱՓԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՔԱՐՏԷԶՆԵՐ
ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ
ԱՄՐՈՑՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Սիւնեաց աշխարհի բերդերը, ամրոցները, Սիւնիքի թագաւորութեան պաշտպանական համակարգը, գաւառներով անցնող ռազմական նշանակութեան ճանապարհների պաշտպանական համակարգերը, առանձին իշխանական տիրոյթների ռազմապաշտպանական համակարգերը, ամրոցապատ վանքերի, մելիքական ապարանքների, քարաւանատների, դիտաշտարակների եւ դղեակների աւերակների առկայութիւնն ու պատմական Սիւնիք նահանգի գաւառների մեծ մասի՝ Հայաստանի Հանրապետութեան տարածքում տեղակայումը հնարաւորութիւն են ստեղծել ուսումնասիրելու, հետազօտելու, չափագրելու, փաստագրելու եւ լուսանկարելու ռազմարուեստի այս առանձնայատուկ՝ եւ քիչ ուսումնասիրուած շինութիւնները:

Պատմական կարեւոր եւ ստոյգ փաստագրութիւններն օգտակար եղան ամրոցների փլատակների տեղերը վերագտնելուն: Ուսումնասիրուել ու յայտնաբերուել են դրանց շինարուեստի զանազան բնութագրերը եւ, որ չափազանց կարեւոր է, վերականգնուել են երկրի տարբեր շրջաններում պաշտպանական, ռազմավարական այն համակարգերը, որոնց միջոցով ամրացուել ու պաշտպանուել են նախարարութիւնները, բդեշխութիւնները, առանձին մելիքական կալուածները, վանական հաստատութիւնները եւ վերջապէս՝ Սիւնիքի թագաւորութիւնը (987–1170): Մանրամասն ուսումնասիրուել են Սիւնիքի իշխանական տների սահմանները Է–ԺԴ դարերում, եւ պատմական տուեալների առկայութեան պարագայում վերակառուցուել են նրանց սահմանները՝ վերստեղծելու համար առանձին իշխանական տների՝ ռազմավարական նպատակով ամրոցների տեղակայումն ու դրանց միջոցով պաշտպանական համակարգերի ստեղծման անհրաժեշտութիւնն ու կարեւորութիւնը: Յատկապէս հետաքրքիր են Սիւնիքի իշխանական տների փաստագրութիւնները Օրբէլեանների գերիշխանութեան ժամանակաշրջանում (ԺԳ–ԺԴ դարեր), երբ նահանգը թագաւորութեան վերացումից յետոյ բաժանուել է Օրբէլեանների, Պռոշեանների, Դոփեանների, Մահեւանեանների ու Շահուռնեցիների միջեւ: Այս շրջանում Սիւնեաց իշխանները, քաջատեղեակ լինելով տեղանքի աշխարհագրական, բնական արգելքներին եւ նախնիների կառուցած ու հիմնած ռազմական շինութիւններին, հմտօրէն եզրագծել են իրենց ու իշխանական տիրոյթների սահմանները՝ անառիկ դարձնելով դրանք արտաքին թշնամու հնարաւոր յարձակումներից:

Սիւնեաց աշխարհի բերդամրոցների մասին պատմական աղբիւրների ուսումնասիրութիւնը չափազանց կարեւոր տեղեկութիւններ հաղորդեց բերդերի անուանումների, նրանց տեղադրման, ռազմական բազմաթիւ ընդհարումների պատրուակով նրանց յիշատակման առումով: Այս իմաստով՝ ամենից կարեւոր աշխատութիւնը ԺԳ. դարի երկրորդ կեսի եւ ԺԴ. դարի առաջին տարիների Սիւնեաց տան պատմիչ՝ Ստեփանոս Օրբէլեանի՝ Ա.Ա.Աբրահամյանի կազմած «Սիւնիքի պատմութիւն» աշխարհաբար հրատարակութիւնն է (Երեւան, 1986), որտեղ յիշատակւում են Սիւնիքի տասներկու գաւառների բոլոր այն բնակավայրերի անունները, որոնք ընգրկուած էին եկեղեցու հարկացուցակում: Մեզ համար առաւել կարեւոր են աշխատութիւնում յիշատակուած 43 բերդերի անունները: Թեմային առնչուող արդի գիտնականներից յոյժ կարեւոր են Գ. Մ. Գրիգորյանի «Սիւնիքը Օրբէլեանների օրոք», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1981, Թ.Խ. Յակոբյանի «Սիւնիքի թագաւորութիւնը», «Մինք» հրատարակչութիւն, Երեւան, 1966, Տ. Մ. Սահակեանի, «Սիւնիքը XIII-XIV դարերում», Երեւան, 1973, Հ. Մ. Ութմազյանի «Սիւնիքը IX–X դդ.», Երեւան, 1958 եւ այլ գրքեր:

Սիւնեաց աշխարհի բերդերի ուսումնասիրութեան արդիւնքում հնարաւոր եղաւ դասակարգել, տեսակաւորել, համախմբել, տարանջատել տարբեր բերդամրոցների յօրինուածքային, ճարտարապետական, շինարուեստի եւ դրանց կառուցման ու

տեղընտրութեան նպատակներն ու գործառութեան նշանակութիւնները, համաձայն որոնց՝ ռազմական բոլոր շինութիւնները տեսակաւորել ու խմբաւորել եմ ըստ պատկանելիութեան: Հնարաւորի սահմաններում վերլուծել եմ ամրոցների պաշտպանական տարրերի՝ պարսպապատեր, աշտարակներ, մուտքեր, կենցաղային, հոգեւոր նշանակութեան կառոյցներ, անցուղիներ, ռազմական շինութիւններ, ջրամբարներ, գետնուղիներ, հրակնատներ, տեղադրութիւնը եւ դրանց ճարտարապետական ու շինարարական առանձնայատկութիւնները: Քննարկել եմ նաեւ Մեծ Հայքի թագաւորութեան պաշտպանական համակարգերը՝ կապուած Սասանեան Պարսկաստանի եւ Հռոմէական կայսրութեան տարանջատիչ քաղաքականութեան հետ վարչատնտեսական կարեւոր կենտրոնների, հաղորդակցական ուղիների, սահմանամերձ շրջանների ռազմապաշտպանական ծրագրերը: Առանձնացրել եմ պատմական Սիւնիքի բերդամրոցների ճարտարապետաշինարարական 17 բնորոշ գործօնները, պաշտպանական կառոյցների ամրոցաշինական 11 սկզբունքները՝ ըստ նշանակութեան ու գործառութեան, եւ ամրոցների կառուցուածքային, յատակագծային յօրինուածքի 4 տիպային ու 3 յատակագծային յատկանիշները: Առանձին-առանձին ներկայացրել եմ Սեւանի միակենտրոն պաշտպանական համակարգը, Որոտնաբերդ-Որոտնավանք երկկենտրոն պաշտպանական համակարգը, Պռոշեան իշխանական տիրոյթի պաշտպանական համակարգը, Բաղաբերդ ամրոցի ու Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգը, Դուին–Պարտաւ ճանապարհի Վայոց ձորով անցնող ռազմական ճանապարհի պաշտպանական համակարգը, Շաղատ քաղաքաւանի պաշտպանական համակարգը եւ 32 բերդամրոցների առանձին ուսումնասիրութիւններ: Կազմել եմ ամրոցների տերմինաբանական պատկերազարդ բառարան, որտեղ ներկայացրել եմ ամրոցների բուրգերի, աշտարակների, հենապատերի, անցուղիների, ջրամբարների, դարպասների, հրակնատների եւ այլ առանձին տարրերի մասին մանրամասն բացատրութիւններ: Աշխատութիւնում առանձին ենթավերնագրով անդրադարձ է կատարուել հայկական միջնադարեան ձեռագրերում եւ մասնաւորապէս Սիւնիքի մանրանկարչական դպրոցի օրինակներում պատկերագրութիւնների հետնախորքում առկայ ամրոցների տարրերի՝ աշտարակներ, դարպասներ, մուտքեր, պարսպապատեր, պատի շարուածքներ, նկարչական ձեւաւորումներ, որոնք յստակօրէն հիմնաւորում են հայկական ամրոցաշինութեան կարեւորութիւնն ու առկայութիւնը միջնադարում: Այս անդրադարձը յուսամ կը հետաքրքրի միջնադարեան ձեռագրերով զբաղուող մասնագէտներին եւ վստահ եմ, որ կը դառնայ առանձին ուսումնասիրութեան առարկայ: Աշխատութեան վերջում զետեղել եմ տեքստում օգտագործուած գրականութեան ծանօթագրութիւնները, լուսանկարների, գծագրերի, քարտէզների, տեղանունների, անձնանունների ցանկերը: Գիրքն աւարտել եմ երախտագիտութեան խօսքով, որտեղ յիշել եմ ուսումնասիրութիւնն առաջարկողին, գիտական ղեկավարին եւ բոլոր նրանց, ովքեր օգնել են խորհրդով, մասնակցել են գիտարշաւներին, աջակցել չափագրական ու լուսանկարչական աշխատանքներին:

Մաղթում եմ, որ Սիւնիքի պաշտպանական ճարտարապետութեանը նուիրուած այս առաջին համապարփակ ուսումնասիրութիւնը լաւ առիթ լինի շարունակելու եւ ամբողջացնելու նահանգի բերդերի ու ամրոցների մասին հետազօտութիւնը, որի համար անհրաժեշտ կը լինեն ժամանակակից սարքաւորումներով ճշգրիտ նկարահանումներ ու հնագիտական պեղումներ: Կարեւոր է առանց ժամանակ կորցնելու գործը շարունակել այն պարզ պատճառով, որ Նախիջեւան ու Արցախ նահանգների մասին այժմ լրացուցիչ ուսումնասիրութիւններ կատարելը առայժմ անհնար է:

ABSTRACT

The 9th of the 15 Provinces of Historical Armenia - Syunik, currently occupies most of the Syunik Region of the Republic of Armenia, the Kashatagh Region of the Republic of Artsakh (until 2022, and currently conquered by Azerbaijan), located to the north-east, while the Regions of Tchahouk-Shahaponk and Yerndjak are located in the territory of the Autonomous Republic of Nakhidjevan which belongs to Azerbaijan. The morphology and geography of the mountainous terrain, with deep valleys and peaks reaching 3.000 m a.s.l., lend themselves easily to the placement of fortresses and military architectures necessary exclusively for the organization of defense against the numerous attacks of enemies. Over the centuries, these included the Romans, the Persians, the Arabs, the Byzantines, the Mongols, the Seljuks and the Turks. Before analyzing the military architecture and defensive systems of Syunik Province, it was deemed necessary to present the vast defensive systems of the Kingdom of Greater Armenia during the period of the division of its territory between the Roman and Sassanid Empires in 387 CE. Military architecture in Syunik has very ancient roots. Cyclopean fortresses from the Neolithic and Urartian periods have been preserved, often used even in the Middle Ages with modifications and updates of newer military science. The historical sources provided interesting information for the reconstruction of the names and their location in the territory of our interest. The official historian of the Province of Syunik, Stepanos Orbelyan (1250-1303), mentions in his work The history of the Province of Sissakan 24 well-known fortresses. The Venetian historian of Armenian origin Ghevond Alishan (1820-1901) completes the list in his work Sissakan where he lists 69 names of fortresses not all of which were identified. Historiographers do not always provide precise information on the location of the fortresses. Our research on the mountains of the Syunik Region in the Republic of Armenia brought to light numerous confirmations and also new discoveries of fortresses and military structures. 11 formative principles of military structures, 17 constructional and architectural factors and 4 design typologies have been classified. The main characteristic of Armenian fortresses, in general, occurs with the ability to adapt the rocky terrain by making the most of the presence of natural, insurmountable walls, which completed the trend of the built wall parameter by reinforcing it with towers and buttresses on the corners and/or perimeter of the fortified walls built from well-hewn stones and laid with mortar. In situ surveys, drawings of details and photo documentation of the following fortresses were carried out: Smbataberd, Berdkuonk, Baghaberd, Arba, Vasakaberd, Vorotnaberd, Meghri, Yeghegnadzor, Sulema, Kyoshk, Vays, Boloraberd, Agarakadzor. We have analyzed civil buildings which assume elements and characteristics of military architecture such as: the caravanserais (Zor, Vagharshavan, Hatchen), the aparank' of the melik' (fortified princely residences, Melik Barkhoudar, Kashatagh, Khnatzakh), the churches transformed into fortresses (Tziranavor in Ashtarak, Region of Aragatzotn, Yerazgavor of Shirakavan, Region of Shirak, Sourb Karapet of Ashnak Region of Aragatzotn), fortified monasteries (Vorotnavank, Shaghat, the Anapat of Tatev). The defensive systems of military importance of cities, urban sites, the capital of the Kingdom of Ghapan, the defensive systems of military roads such as Dvin-Partav, Kot-Sissadjan were also surveyed. Of particular interest is the analysis of the military defensive systems such as the bicentric one of Sevan, the monocentric one of Vorotnavank-Vorotnaberd, of Tzakhats kar-Proshaberd, of Syouni-Baghaberd, the linear one of Syouni, the horseshoe one of the city of Kapan, the perimeter of the Region of Baghk in the Province of Syunik and the radial one of the city of Kapan. The borders of the properties of the Melik and the Armenian princes of the Province of Syunik from the 9th to the 14th centuries have been reconstructed which, thanks to a detailed analysis, have highlighted the military defensive systems adopted for their safety and security. Individual fortresses throughout the region have been presented with reliefs, floor plans, sections, construction details and numerous live and historical photos found in the Archive of the History Museum of Armenia in Yerevan. Finally, an illustrated glossary of terms and elements of fortresses is included, along with lists of photos, maps, proper names and geographical names and abbreviations.

RIASSUNTO

La 9° Provincia delle 15 dell'Armenia Storica - Syunik', attualmente occupa la maggior parte della Regione di Syunik della Repubblica di Armenia, la Regione di Kashat'agh della Repubblica dell'Artsakh (fino al 2022), situata a nord-est (attualmente riconquistata dall'Azerbaigian) mentre le Regioni di Dchahùk-Shahaponk e Jerndjàk si trovano nel territorio della Repubblica Autonoma del Nakhidjevan che appartiene all'Azerbaigian. Morfologia e geografia del suolo montuoso, con profonde valli e vette che raggiungono otre i 3.000 m.s.i.m., si prestano agevolmente per il collocamento di fortezze e architetture militari necessarie esclusivamente per l'organizzazione della difesa dagli numerosi attacchi dei nemici nei secoli come i romani, persiani, gli arabi, i bizantini, i mongoli, i selgiuchidi, i turchi. Prima di analizzare l'architettura militare e i sistemi difensivi della Provincia del Syunik', si è presa cura di presentare i vasti sistemi difensivi del Grande Regno d'Armenia durante la divisione del territorio da parte dell'Impero Romano e quello Sassanide nel 387. L'architettura militare nell'Syunik' a radici molto antiche. Si sono conservate fortezze ciclopiche del periodo neolitico e urarteo spesso utilizzate anche nel medioevo con modifiche e aggiornamenti della scienza militare. Le fonti storiche forniscono informazioni interessanti per la ricostruzione dei nomi e la loro collocazione sul territorio di nostro interesse. Lo storico ufficiale della Provincia di Syunik' Step'anos Orbelian (1250-1303), cita nella sua opera "La storia della Provincia di Sisakan" 24 note fortezze. A completare l'elenco ci pensa lo storiografo veneziano di origine armena Ghevond Alishan (1820-1901) nella sua opera "Sissakan" dove elenca 69 nomi di fortezze non tutte identificate. I storiografi non sempre forniscono informazioni precise della collocazione delle fortezze. La nostra, ricerca sulle montagne della Regione del Syunik' nella Repubblica di Armenia, a portato alla luce numerose conferme e anche nuove scoperte di fortezze e di strutture militari. Sono state classificate 11 principi formativi delle strutture militari, 17 fattori costruttivi e architettonici e 4 tipologie progettuali. La caratteristica principale delle fortezze armene, in generale, si verifica con l'abilità di adattamento del suolo roccioso sfruttando al massimo la presenza di pareti naturali, invalicabili, che completavano l'andamento del parametro murario costruito rinforzandolo da torri e contrafforti sugli angoli e/o perimetro delle mura fortificate costruite da pietre ben squadrate e posate con la malta. Sono stati eseguiti in situ rilievi, disegni dei particolari e la foto documentazione delle seguenti fortezze: Smbataberd, Berdkuonk', Baghaberd, Arbà, Vasakaberd, Vorotnaberd, Meghrì, Jeghegnadzor, Sulemà, Kyoshk', Vays, Boloraberd, Agarakadzor. Abbiamo analizzato edifici civili che assumono elementi e caratteristiche dell'architettura militare come: i caravanserragli (Zor, Vagharshavan, Hatchen), gli *aparank'* dei *melik'* (residenze principesche fortificate, Melik' Barkhoudar, Kashat'agh, Khnatzakh), le chiese trasformate in fortezza (Tziranavor ad Ashtarak, Regione di Aragatzotn, Jerazgavor di Shirakavan, Regione di Shirak, Sourb Karapet di Ashnak Regione di Aragatzotn), i monasteri fortificati (Vorotnavank', Shaghat, l'Anapat di Tat'ev). Sono stati rilevati anche i sistemi difensivi d'importanza militare delle città, dei siti urbanistici, della capitale del Regno di Ghapan, i sistemi difensivi delle strade militari come Dvin-Partav, Kot'-Sissadjan. Interessante risulta l'analisi dei sistemi difensivi militari come quello bipolare di Sevan, quello monopolare di Vorotnavank'-Vorotnaberd, di Tzakhats kar-Proshaberd, di Syounì-Baghaberd, quello lineare del Syounì, quello a ferro di cavallo della città di Kapan, quello perimetrale della Regione di Baghk nella Provincia del Syunik', quello radiale della città di Kapan. Sono stati ricostruiti i confini delle proprietà dei melik e dei principi armeni della Provincia del Syunik' dal IX al XIV secoli che grazie ha una analisi dettagliata hanno evidenziato i sistemi difensivi militari addottati per la loro incolumità e sicurezza. Singole fortezze in tutta la regione sono state presentate con rilievi, piantine, sezioni, particolari costruttivi e numerose foto scattate dal vivo e quelle storiche trovate nell'Archivio del Museo della Storia dell'Armenia a Jerevan. In fine si propone un glossario illustrato dei termini e dei elementi delle fortezze, elenchi delle foto, delle cartine, dei nomi propri e nomi geografici e abbreviazioni.

SUMMARY

Based on the original Armenian preface by Prof. Ashot Grigoryan

Ara Zarian's research volume, *Fortresses of Syunik: 9th–14th Centuries*, is based on meticulous measurements, extensive fieldwork, and comprehensive studies of historical materials. This work also incorporates rich photographic documentation and a collection of invaluable research materials.

The study focuses on the fortresses of the Syunik region in medieval Armenia, along with their defensive systems, which, until now, had not been thoroughly or comprehensively studied. Zarian's research is groundbreaking in this regard.

Content Description

1. **Formation of Fortresses and Defense Systems**
   Examines the development of strategic fortifications alongside the rise of Syunik's princely houses, feudal centers, and state institutions.
   Discusses historical and geographical influences on fortress construction.
   Analyzes references to Syunik fortresses in historical sources and modern research.
   Clarifies national and strategic defense programs of early medieval Armenia, including the military-defense strategies of Greater Armenia and its respons es to the divisive policies of Sassanian Persia and the Eastern Roman Empire (Byzantian).
2. **Strategic and Defensive Principles**
   Analyzes national, intra-provincial, and inter-provincial military-defense strat egies.
   Defines 11 principles of fortress construction based on their strategic signifi cance.
   Identifies 4 structural typologies and 3 key planning features of Syunik for tresses.
3. **Fortresses of the Gegharkunik Province**
   Examines administrative and geographical characteristics of Gegharkunik and Sot(d)q regions.
   Provides detailed studies of the fortresses of Sevan, Berdkunq, Makenyats Monastery-Fortress and others.
4. **Strategic Systems and Fortresses of the Vayots Dzor Province**
   Discusses the administrative-geographical characteristics and key strategic fortifications in Vayots Dzor, including Arba, Arpa, Erdich, Norashen, Apana, and Boloraberd.
5. **Southern Syunik and Its Defensive Structures**
   Covers fortresses in Tsghkunk (Aylakh), Aghahech(j)q (Qashatagh), Haband, Baghq, Dzork, Arevik (Dashton), Kovsakan, Chahuk (Shahaponk), Yerenjak, and Nakhijevan.
   Analyzes the defensive and architectural features of key strongholds such as Shaghat, Syunik, Bort, Vorotnaberd, and Vasakaberd.
   Presents 17 characteristic factors of Syunik fortress construction, identify ing patterns and principles behind their design and their strategic functions and roles.
6. **Defensive Elements of the Fortresses**
   Examines the structural components of fortresses, including walls, towers, entrances, watchtowers, loopholes, archways, and defensive platforms.
   Compares Syunik's military-defense systems with similar fortifications from the 10th–14th centuries.

Contributions and Key Findings

Classifies, sorts, and categorizes Syunik fortresses based on their composi tional, architectural, and functional characteristics.
Analyzes 17 architectural and constructional factors of historical Syunik for tresses.
Identifies 11 fundamental principles of fortress construction.
Examines 4 structural typologies and 3 key planning features.
Investigates specific defense systems, such as:
The monocentric defense system of Sevan.
The bicentric defense system of Vorotnaberd-Vorotnavank.
The defense system of the Proshyan princely domain.
The defense system of the Baghaberd fortress and the capital of Kapan.
The military road defense system of Dvin-Partav through Vayots Dzor.
The defense system of Shaghat town.
Includes a terminological illustrated dictionary detailing key architectural el ements such as fortresses, towers, retaining walls, reservoirs, and gates.
Supporting Materials

The study is supplemented by an extensive bibliography, maps, original drawings, photographs, terminological dictionaries, and summaries. These elements demonstrate the depth of the architect’s research and his professional dedication to the subject.
Conclusion.

This significant study by Ara Zarian represents a major contribution to the scientific study of Armenian architecture. Through extensive research and analysis, it provides a deeper understanding of medieval Armenia’s military-defense systems, their theoretical foundations, and future investment potential. The book reaffirms Zarian as a dedicated scholar and architect-researcher, continuing the esteemed legacy of the Zarian family.



628

Պատկ. 628
Երկրագունդը, մոլորակները եւ կենդանակերպի նշանները ըստ Պտղոմէոսի «Աշխարհագրութեան», 2-րդ դար, ձեռ. № 1617, Մատենադարան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա., *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, Հայպետհրատ, Երեւան, 1944։

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա.Ա., *Ստեփանոս Օրբէլեան, Սիւնիքի պատմութիւն*, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները, Երեւան, 1986։

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա.Գ., *Սիւնիքի 18-րդ դարի ազատագրական շարժման պատմութեան շուրջ*, «ՊԲՀ», №4, Երեւան, 1972։

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ, *Առաքելոց եւ Գետակից վանական համալիրների պաշտպանական համակարգերը հայ միջնադարեան ճարտարապետութեան համատեքստում*, Ամրոցները եւ պաշտպանական համակարգերը առաջաւոր Ասիայում, Միջազգային գիտաժողով, Երեւան, 23-25 հոկտեմբեր, 2025։

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Վ., *Արհեստները Հայաստանում IV-XIII դդ.*, Երեւան, 1955։

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Վ., *Միջնադարյան Հայաստանի զենքի տեսակները*, Աշխատութիւններ ՀՍՍՌ ԴԱ պատմական թանգարանի, հ.2, Երեւան, 1949։

ԱԴԱՄՅԱՆ ԱԻԴԱ, *Հայկական քարտէզագրական հրատարակութիւնների մատենագիտութիւն*, Երեւան, 2018։

ԱԴԵԼՅԱՆ Գ.Ե., ՂԱՖԱԴԱՐՅԱՆ Կ.Կ., *Հայկական ճարտարապետութեան պատմութիւն*, հատոր առաջին, գլուխ երրորդ, ՀՀ ԳԱԱ, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1996։

ԱԴՈՆՑ Ն., *Հայաստանը Յուստինիանոսի ժամանակաշրջանում*, Երեւան, 1987։

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ, *Յակոբ Ա. Եպիսկոպոս Սիւնեցու գործունէութեան շուրջ (918–958 թթ.)*, «ՊԲՀ», № 3, Երեւան, 2014։

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ, *Սիւնեաց աթոռը X դ. վերջի գիւղացիական ընդվզումների ժամանակաշրջանում*, «ՊԲՀ», № 3, Երեւան, 2014։

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ, *Սիւնեաց աթոռի մետրոպոլիտական աստիճանի վերահաստատումը XI դարում*, ԵՊՀ Իջեւանի մասնաճիւղի հայոց պատմութեան եւ հասարակագիտութեան ամբիոն, Իջեւան, 2020։

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ, *Միջնադարեան յուշարձանների ուսումնասիրութիւնը Խաչենի իշխանութեան տարածքում*, Երկիր եւ մշակոյթ, Երեւան, 2022։

ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՏԻԳՐԱՆ, *Բերդի տարածաշրջանի միջնադարեան ամրաշինական համակարգը*, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, սեղմագիր, Երեւան, 2026

ԱՂԱԲԵԿՅԱՆ Հ.Օ., *Հայ ռազմական արուեստի պատմութիւնից*, Երեւան, 1969։

ԱՅՎԱՉՅԱՆ Ա., *Նախիջեւանի ԻՍՍՀ Հայկական յուշարձանները*, Երեւան, 1986։

ԱՅՎԱՉՅԱՆ ԱՐԳԱՄ, *Արբայ եւ Ճահուկ բերդերը*, «ԼՀԳ», № 9, Երեւան, 1976։

ԱՅՎԱՉՅԱՆ ԱՐԳԱՄ, *Երնջակ բերդը*, «ԼՀԳ», № 2, Երեւան, 1979։

ԱՅՎԱՉՅԱՆ ԱՐԳԱՄ, *Նախիջեւան. Բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ*, Երեւան, 1995։

ԱՅՎԱՉՅԱՆ ԱՐԳԱՄ, *Նախիջեւանի որմնանկարչական արուեստը*, Երեւան, 1998։

ԱՅՎԱՉՅԱՆ, Ա., *Նախիջեւան, պատմական վկայութիւնների պատկերացոյց*, Երեւան, 2007։

ԱՅՐԻՎԱՆԵՑԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ, *Պատմութիւն հայոց*, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկւա, 1860։

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896։

ԱՌԱՔԵԼԵԱՆ Բ., *Հանրագիտարան*, Թիֆլիս, 1916։

ԱՌԱՔԵԼՅԱՆ Բ., *Քաղաքները եւ արհեստները Հայաստանում, 9-13 դարերում*, Երեւան, 1958։

ԱՌԱՔԵԼՅԱՆ Բ. Ն., *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ 2, Երեւան, 1960։

ԱՍԼԱՆՅԱՆ Ա.Ա., Խ.Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, *Զանգեզուր*, Երեւան, 1975։

ԱՍՈՂԻԿ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏԱՐՕՆԵՑԻ, *Պատմութին տիեզերական*, Սանկտ Պետերբուրգ, 1885։

ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ Խ., *Հայաստանի Հանրապետութեան քարտէզ*, Երեւան, 1932։

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ա.Ն., *Հայկական մանրանկարչութեան Գլաձորի դպրոցը*, Երեւան, 1971։

ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ., ԳՆՈՒՆԻ Ա., ԲՈՔՈԽՅԱՆ Ա., ՍԱՐԳՍՅԱՆ Գ., *Բրոնզ-երկաթեդարեան Սիւնիքի սրբազան լանդշաֆտը*, ԵՊՀ, ՀՀԻ, Երեւան, 2015։

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Ա., ՖՐԱՆԿԼԻՆ Ք., *Միջնադարեան Արփան՝քարաւանային ճանապարհների խաչմերուկին, Վայոց-ձոր. Պատմամշակութային ժառանգութեան տուեալներ, հաւաքական մէկնաբանութիւն*, «ՀՍԻ» հրատ., Երեւան, 2021։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՇԱՊՈՒՀ, *«ԶԱրեւիկ եւ զԲաղս»*, *Պատմութիւն*, Էջմիածին, 1921։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՇԱՊՈՒՀ, *Պատմութիւն*, Էջմիածին, 1921։

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ա.Բ., *Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրութիւն*, Երեւան, 1971։

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Ս., *Խորհրդային Հայաստանի նիւթական կուլտուրայի յուշարձանները*, Երեւան, 1935։

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Ս.Գ., *Հայ վիմագրութիւն*, հ.2, Երեւան, 1967։

ԲԱՐՍԵՂՅԱՆ Լ.Ա., ԽԱՉԱՏՐՅԱՆ Ժ.Դ., *Միջնադարեան Հայաստանի երկու ամրոցների մասին*, «Տեղեկագիր» ՍՍՌ ԳԱ, № 7, Երեւան, 1962:

ԲԱՐՋՐԱԲԵՐԴՑԻ ՎԱՐԴԱՆ, *«Պատմութիւն տիեզերական»*, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1961:

ԲԻՒԶԱՆԴ Հ., *Հայոց պատմութիւն*, հ. Դ, ՃԸ, Գահիրէ 1954:

ԲՈՅԱՆ ՎԵՌԱ, *Միւնիքը որպէս առեւտրական եւ մշակութային խաչմերուկ (Ըստ դրամական գանձերի)*, Աշխատասիրութիւններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ.2, Երեւան, 2022:

ԲՈՒՌՆԱԶՅԱՆ Ս.Վ., *Հայաստանը եւ Սելջուկները IX-XII դդ.*, Երեւան, 1980:

ԳԱԼԱԼԵԱՆՑ ՍԱՐԳԻՍ, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, մաս Բ,
Տփխիս, 1858:

ԳԱԼՉԵԱՆ ՌՈՒԲԵՆ, *Հայաստանը համաշխարհային քարտէզագրութեան մէջ*, Երեւան, 2005:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Խաղրակեանք կամ Պոօշեանք Հայոց պատմութեան մէջ*, մասն առաջին, Վաղարշապատ, 1928:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Պոռշեանք եւ Խաղրակեանք Հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս-Լիբանան, 1969:

ԳԻՏԵՐԲՈՔ Կ., *Բիւզանդիոն եւ Պարսկաստան*, «Հանդէս ամսօրեայ», ԻԲ տարի 1908-ԻԳ տարի 1909:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա., *Նոր հետազօտութիւններ Սոթքում եւ Չաութիս կայան-քարաւանատան տեղադրութեան խնդիր*, «Հայաստանը եւ արեւելաքրիստոնէական քաղաքակրթութիւնը», միջազգային գիտաժողովի նիւթեր, 12-13 դեկտեմբեր, Երեւան, 2016:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Լ., *Սոթք –1 ամրոցը եւ Դուին-Պարտաւ առեւտրական ճանապարհի սոթքեան հատուածը*, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ, № 3, «Հայի» հրատ., Երեւան, 2019:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա., *Պատմական Սոթքի վերաբերեալ միջնադարեան հայ պատմիչների յիշատակութիւնները*, «ՊԲՀ», № 3, Երեւան, 2020:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ, ՎԱՍԻԼՅԱՆ ԼԵՒՈՆ, ԴԱՆԻԵԼՅԱՆ ՀԱՅԿ, ՄԿՐՏՉՅԱՆ ԼԵՒՈՆ, ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀԵ, ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ, *Բաղաբերդ ամրոցի դերը միջնադարեան Սիւնիքի պաշտպանական համակարգում*, Ամրոցները եւ պաշտպանական համակարգերը առաջաւոր Ասիաիում, Միջազգային գիտաժողով, Երեւան, 23-25 հոկտեմբեր, 2025:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ.Մ., *Պատմական Սիւնիքի մի շարք գիւղերի տեղադրութեան հարցի շուրջ*, «ՊԲՀ», № 4, Երեւան, 1966:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ.Մ., *Սիւնիքը Օրբէլեանների օրոք*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐ., *Սիւնիքի վանական կալուածատիրութիւնը IX–XIII դարերում*, Երեւան, 1973:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐ., ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Ս., *Սիւնիքի պատմութիւն*, Երեւան, «Հրազդան» հրատ., 2001:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ, *Սիւնիքի թագաւորութիւնը*, «ՊԲՀ», № 2, Երեւան, 2006:

ԴԱՆԻԵԼՅԱՆ Հ., *Հայաստանի կիկլոպեան ամրոցների հետազօտութեան հիմնական փուլերը, Մերձաւոր Արեւելք*. Պատմութիւն, քաղաքականութիւն, մշակոյթ, XIII յօդուածների ժողոուածու, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ. Երեւան, 2018:

ԴԱՎԹԵԱՆ ԾՂՈՐՍ, *Սիսիանի բնակավայրերի պատմութիւնը*, Երեւան, 1997:

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԵՑԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ, *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ, *Սմբատ Բ. Տիեզերակալ թագաւոր հայոց*, Երեւանի պետական համալսարան հրատ., Երեւան, 2021:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ., *Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի յուշարձանները*, Երեւան, 1955:

ԵՂԻՇԷ, *Վարդանանց Պատմութիւն*, Գահիրէ, 1950:

ԵՂԻՇԷ-ի *Վարդանանց պատմութիւնը*, թարգմանութեամբ եւ ծանօթագրութիւններով պրոֆ., դ-ր Ե. Տեր-Մինասյանի, Երեւան, Հայպետհրատ, 1958:

ԵՂԻՇԷ, *Վարդանանց պատմութիւն*, Երեւան, 1970:

ԵՂԻՇԷ, Է. դար, *Վարդանի ու Հայոց պատմութեան մասին*, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Երուանդ Տեր-Մինասյանի, Երեւան, «Հայաստան», 1994:

ԵՐԵՄՅԱՆ Ս.Ա., *Չանգեզուրի վաղ հնագիտական յուշարձանները*, «ԼՀԳ», № 4, Երեւան, 1972:

ԵՐԵՄՅԱՆ Ս.Տ., *Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Պատմութեան ինստիտուտ, Երեւան, 1963:

ԵՐԵՄՅԱՆ Ս.Տ., *Մեծ Հայքի թագաւորութիւնը IV դարում*, քարտէզ, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1979:

ԵՍԱՅԱՆ Ս., ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Գ., *Նիւթեր Նախիջեւանի հայկական պատմական յուշարձանների վերաբերեալ*, «ՊԲՀ», № 2, Երեւան, 1971:

ՉԱՐԴԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ, *Արմավիր-Արտաշատ-Գառնի. Անտիկ Հայաստանի ամրաշինութիւնը եւ նրա փուլային փոխակերպումները*, Ամրոցները եւ պաշտպանական համակարգերը առաջաւոր Ասիայում, Միջազգային գիտաժողով, Երեւան, 23-25 հոկտեմբեր, 2025:

ՉԱՐԵԱՆ Ա. (կրտսեր), *Ողոտնաբերդ-Ողոտնավանք պաշտպանական համակարգը*, «ԼՀԳ», № 10, Երեւան, 1986:
ՉԱՐԵԱՆ Ա. կրտ., *Պաշտպանական կառոյցներ*, «Գիտութիւն եւ տեխնիկա», № 2, Երեւան, 1988:
ՉԱՐԵԱՆ Ա. կրտ., *Դուին-Պարտաւ ճանապարհի Շարուրի դաշտ-Սուլեմա (Սելիմ) լեռնանցք ճանապարհահատուածի պաշտպանական համակարգը*, «Բանբեր» ԵՊՀ-ի, № 1 (73), Երեւան 1991թ:
ՉԱՐԵԱՆ Ա. կրտ., *Բոլորաբերդ ամրոցը*, «ԼՀԳ», № 2, Երեւան, 1993:
ՉԱՐԵԱՆ Ա. կրտ., *Բոլորաբերդ (Պռոշաբերդ) ամրոցը*, Բազմավէպ, Վենետիկ, 1995:
ՉԱՐԵԱՆ Ա.Ա., ԲՈՉՈՅԱՆ Ա.Ա., Ռոբերդս Էդվարդս, *Հայկական Կիլիկիայի ամրութիւնները*, գրախոսութիւն, «ՊԲՀ», № 4(119), Երեւան, 1987:
ՉԱՐԵԱՆ Ա.Ա., *Միւնիքի ամրոցաշինական որոշ սկզբունքների մասին*, «ՊԲՀ», № 1 (120), Երեւան, 1988:
ՉԱՐԵԱՆ ԱՐԱ, *Բաղաբերդ ամրոցը*, «ԼՀԳ», № 12, Երեւան, 1987:
ՉԱՐԵԱՆ ԱՐԱ, *Մեծ Հայքի ռազմապաշտպանական համակարգերը, Ճարտարապետա-քաղաքական մտաւոր ժառանգութեան պահպանման խնդիրներն ու զարգացման հեռանկարները*, միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրոյթներ, Երեւան, 17-18 նոյեմբեր, 2011:
ՉԱՐԵԱՆ ԱՐԱ, *Միւռնիքի թագաւորութեան Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգը*, Ամրոցները եւ պաշտպանական համակարգերը առաջաւոր Ասիայում, Միջազգային գիտաժողով, 23-25 հոկտեմբեր, Երեւան, 2025:
ՉԱՐԵԱՆ ԱՐԱ, *Հայկական կիլիկիայի ռազմական ճարտարապետութիւնը*, Ճարտարապետութեան ժառանգութիւն, պահպանութիւն եւ հեռանկարներ միջազգային գիտաժողով, 13-14 հոկտեմբեր, Երեւան, 2025:
ՉԱՐԵԱՆ ԱՐՄԷՆ, *Ակնարկներ հին եւ միջնադարեան Հայաստանի քաղաքաշինութեան պատմութեան*, Երեւան, 1986:
ԷՄԻՆ ՄԿՐՏԻՉ, *Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական*, Մոսկվա, 1961:
ԹԱԹԻԿՅԱՆ Ա., *Միջնադարեան Հայաստանի աշխարհագրութիւնը*, հ. II, Երեւան, 1956:
ԹԱՐՈՒՄՅԱՆ ՌՈՒԲԷՆ, *Հայքի ճանապարհները*, ՍԺԴ-ՍԺՉ, Երեւան, 2016:
ԹՈՍՈՒՆՅԱՆ Գ.Բ., *Վարդան Արեւելցի*, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 2001:
ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ, *Պատմութիւն Տանն Արծրունեաց*, Կ.Պոլիս, 1852:
ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ, *Պատմութիւն Տանն Արծրունեաց*, Թիֆլիս, 1917:
ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ԱՆԱՆՈՒՆ. *Պատմութիւն Արծրունեաց տան*, ներածութիւնը, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Վրեժ Վարդանյանի, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1978:
ԹՈՎՄԱՍՅԱՆ Ն.Ռ., *Հայ սոցիալ-տնտեսական միտքը վաղ միջնադարում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Տնտեսագիտութեան ինստիտուտ, Երեւան, 1973:
ԹՈՐԱՄԱՆՅԱՆ Ա.Խ., *Մոլդավիայի ամրոցների ճարտարապետութեան մասին*, «ՊԲՀ», № 3, Երեւան, 1974:
ԹՈՐԱՄԱՆՅԱՆ Թ., *Նիւթեր հայ ճարտարապետութեան պատմութեան*, հ. 2, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1948:
ԹՈՐԱՄԱՆՅԱՆ ԹՈՐՈՍ, *Հայկական ճարտարապետութիւնը*, ԱՐՄՖԱՆԻ հրատ., Երեւան, 1942:
ԻՆՃԻՃԵԱՆ Հ.Ղ., *Նոր Հայաստան*, Վենետիկ 1806:
ԻՆՃԻՃԵԱՆ Ղ., *Ստորագրութիւն Հին Հայաստանեայց*, ի տպարան Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1822:
ԻՆՃԻՃԵԱՆ Հ.Ղ., *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի*, հ. առաջին եւ երկրորդ, Վենետիկ, 1835:
ԼԱԼԱՅԵԱՆ Ե., *Սիսական*, «Ազգագրական հանդէս», № 1, Շուշի, 1898:
ԼԱԼԱՅԵԱՆ Ե., *Գեղարքունիք կամ Նոր Բայազէտի գաւառ*, Թիֆլիս, 1908:
ԼԱԼԱՅԵԱՆ Ե., *Զանգեզուրի գաւառ*, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, № 4, Երեւան, 1968.
ԼԱԼԱՅԵԱՆ Լ., *Սեւան*, Ազգագրական հանդէս, գիրք 17, Թիֆլիս, 1908:
ԼԱԼԱՅԵԱՆ Լ., *Վայոց ձոր*, Ազգագրական հանդէս, գիրք 26, Թիֆլիս, 1917:
ԽԱԼՓԱԽՉՅԱՆ Հ., *Եղեգնաձոր բերդ*, «Հայկական արուեստ», Երեւան, 1974:
ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.Օ., *Վայոց ձորի մի շարք պատմական բնակավայրերի տեղադրութեան մասին*, «ՊԲՀ», № 4, Երեւան, 1974:
ԽԱՉԱՏՐՅԱՆ Ժ.Դ., *Հայկական անտիկ շրջանի պաշտպանական կառոյցները*, «ՊԲՀ», № 4, Երեւան, 1987:
ԽԱՉԵՐՅԱՆ Լ., *Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ (XIII-XIV դդ.)*, «Լոյս» հրատ., Երեւան, 1973:
ԽԱՉԻԿՅԱՆ Լ., *Միւնեաց Օրբէլեանների Բուրթելեան ճիւղը*, «ԲՄ», № 9, Երեւան, 1969:
ԽԱՉԻԿԵԱՆ Լ.Ս., *ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Նիւթեր հայ ժողովրդի պատմութեան, Գ. 2, Պատմ. ին-տ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1950:
ԽԱՉԻԿՅԱՆ Լ.Ս., *ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, մաս Գ (1481–1555 թթ.), Երեւան, 1967:
ԽՈՐԵՆԱՑԻ Մ., *Պատմութիւն*, Վենետիկ, 1955:
ԽՈՐԵՆԱՑԻ ՄՈՎՍԷՍ, *Պատմութիւն հայոց*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1997:
ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ ՄՈՎՍԷՍ, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Երեւան, 1983:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ, *Դոփեանք եւ Մելիք-Շահնազարեանք*, Նիւթեր հայ մելիքութեան մասին, մասն Բ, Էջմիածին, 1914։

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, *Պատմութիւն*, Վենետիկ, 1865։

Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ՝ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961։

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՅՈՒԲԱ, *Արցախի Տիգրանակերտի եկեղեցու ճարտարապետութիւնը*, «ՊԲՀ», № 1, Երեւան, 2016։

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՅՈՒԲԱ, *Նորայայտ ամրոցը՝ Արցախի Տիգրանակերտի մերձակայքում*, Հայագիտական ուսումնասիրութիւններ, հ.4, Երեւան, 2013։

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՅՈՒԲԱ, *Վաղմիջնադարեան ամրոց-բնակատեղիների ամրաշինութեան հարցեր*, ՀՀ 1993-1995 թթ. Հնագիտական հետազօտութիւնների արդիւնքներին նուիրուած 10-րդ գիտական նստաշրջան, ԵՊՀ, Երեւան, 1996։

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՅՈՒԲԱ, *Արցախի Տիգրանակերտի պաշտպանական համակարգը հելլենիստական ամրաշինութեան համատեքստում*, «ՀՇՀԱՀ», I, Երեւան, 2016։

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԱՐՄԵՆԻ, *Ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգութեան պահպանման եւ օգտագործման հարցերը Հայաստանի Հանրապետութիւնում*, «ՀՇ», 24.07, Երեւան, 2018։

ԿՈՍՏԱՆՅԱՆՑ ԿԱՐԱՊԵՏ, *Ստ. Օրպէլեան, Ողբ ի սուրբ Կաթողիկոսէն*, բնագիրը յառաջաբանով եւ ծանօթութիւններով հրատարակեց, գլ. ԺԳ, Թիֆլիս, 1885։

ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ ԴՈԿՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ, *Գողթն գաւառ*, Անթիլիաս, 1987։

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՐԳԵՅ, *Մեծ Հայքի Սիւնիք նահանգի Հաբանդ գաւառանուան ստուգաբանութեան նոր փորձ*, «Հայոց պատմութեան հարցեր», հ.8, Երեւան, 2007։

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՐԳԵՅ, *Ուրուագծեր Սիւնիքի Քաշաթաղի մելիքութեան պատմութիւնից*, «Հայոց պատմութեան հարցեր», հ.9, Երեւան, 2008։

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ, *Կրկին Հայոց բղեշխութիւնների գլխաւոր հորձառոյթի մասին*, «Բահ», հ.1/2, Երեւան, 2021։

ՀԱԿՈԲՅԱՆ Թ., *Սովետական Հայաստանի տեսարժան վայրերը*, Երեւան, 1959։

ՀԱԿՈԲՅԱՆ Թ., *Ուրուագծեր Հայաստանի պատմական աշխարհագրութեան*, Երեւան, 1966։

ՀԱԿՈԲՅԱՆ Թ., *Սիւնիքի թագաւորութիւնը պատմա-աշխարհագրական առումով*, Երեւան, 1966։

ՀԱԿՈԲՅԱՆ Թ.Խ., *Ջորք կամ Կապան*, «Տեղեկագիր», Երեւան, 1950։

ՀԱԿՈԲՅԱՆ Թ.Խ., *Դիտողութիւններ VII դարի «Աշխարհացոյցի» մասին*, Երեւանի «Պետական համալսարանի գիտաշխատութիւններ», հ.43, Երեւան, 1954։

ՀԱԿՈԲՅԱՆ Թ.Խ., *Սիւնիքի թագաւորութեան տերիտորիան*, «Երեւանի Պետական համալսարանի գիտաշխատութիւններ», հ.43, Երեւան, 1955։

ՀԱԿՈԲՅԱՆ Թ. Խ., *Հայաստանի պատմական աշխարհագրութիւն*, Երեւան, 1968։

ՀԱԿՈԲՅԱՆ Թ. Խ., *Հայ ժողովրդի պատմութեան յիշարժան վայրերը*, Երեւան, 1973։

ՀԱԿՈԲՅԱՆ Թ.Խ., *Անի*, Երեւան, 1980։

ՀԱԿՈԲՅԱՆ Հ., *Ուղեգրութիւններ*, հ. Ա, ԺԳ–ԺՉ դդ., Երեւան, 1932։

ՀԱԿՈԲՅԱՆ Հ., *Վաղմիջնադարեան ամրոց-բնակատեղիների ամրաշինութեան հարցեր*, ՀՀ 1993–95 թթ. հնագիտական հետազօտութիւնների արդիւնքներին նուիրուած 10-րդ գիտական նստաշրջան, զեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1996։

ՀԱԿՈԲՅԱՆ Հ.Պ., Մեծ եւ Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմէական ամրութիւնների համակարգը, «ՊԲՀ», № 4, Երեւան, 1986։

ՀԱԿՈԲՅԱՆ Ս.Ե., *Հայ գիւղացիական պատմութիւն*, Երեւան, 1957։

ՀԱԿՈԲՅԱՆ Վ.Ա., *Մանր ժամանակագրութիւններ*, հ. 2, Երեւան, 1956։

ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՐՈՒՍ, *Պատմահնագիտական ուսումնասիրութիւններ*, Երեւան, 1985։

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ.Մ., *Հալիձոր բերդը*, «ԳՏ», № 12, Երեւան, 1968։

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ.Մ., *Մեղրու բերդը*, «ԼՀԳ», № 1, Երեւան, 1968։

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ.Մ., *Տաթեւի Մեծ անապատի ճարտարապետական անսամբլը*, «ԲԵՀ», № 1, Երեւան, 1968։

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ.Մ., *Սիւնիքի XVII-XVIII դարերի վանք-ամրոցները*, «ԼՀԳ», № 2, Երեւան, 1969։

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ.Մ., *Հալիձոր բերդը*, «ՀՀՀ», հ.3, Պէյրութ, 1972։

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ.Մ., *Սիւնիքի XVII–XVIII դդ. ճարտարապետական համալիրները*, Երեւան, 1973։

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ.Մ., *Հայաստանի արտաքուստ շեշտուած աբսիդով միանաւ յուշարձանները*, «Լրաբեր», № 11, Երեւան, 1976։

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ.Մ., *Մեղրու շրջանի յուշարձանները*, Երեւան, 1987։

ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, *Միջնադարեան Հայաստանի բերդ-եկեղեցիները*, «ՎԷՄ» համակայական հանդէս, Ժ(ՉԺ) տարի, թիւ 1 (61), յունուար-մարտ, 2018։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ., *Դուին–Պարտաւ ճանապարհի Sisajan–Gilakuni գծամասը*, «ՊԲՀ», № 1, Երեւան, 1968։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ., *Մեծ Հայքի Սիւնիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի*, «ՊԲՀ», № 1, Երեւան, 2003։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ.Հ., *Միւնիքի թագաւորութեան հիմնադրման տարեթիւը*, «ԲԵՀ», № 1, Երեւան, 1969։
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ.Հ., *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. 3, Երեւան, 1976։
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ., *Փարպիի Ծիրանաւոր*, «ԼՀԳ», № 11, Երեւան, 1976։
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս.Վ., *Անբերդ*, ՀՍՍՀ ԳԱ Հնագիտ. եւ ազգագր. Ին-տ., Երեւան, 1978։
ՍՍՌ ատլաս, Երեւան–Մոսկվա, 1961, էջ 42) –46
Պատկ. 8 Սիւնիքի իշխանական տները Է. դարի
սկզբից մինչեւ 821թ, գծագիրը՝ հեղինակի –47
Պատկ. 9 Սիւնիքի իշխանական տները, 821-844
թթ, գծագիրը՝ հեղինակի –47
Պատկ. 10 Սիւնիքի իշխանական տները,
844-909թթ, գծագիրը՝ հեղինակի –47
Պատկ. 11 Սիւնիքի իշխանական տները, 909-
941/49 թթ, գծագիրը՝ հեղինակի –47
Պատկ. 12 Սիւնիքի իշխանական տները
941/49-970թթ, գծագիրը՝ հեղինակի –48
Պատկ. 13 Սիւնիքի գաւառաբաժանումը, Ժ.
դարում չորս իշխանական տների, գծագիրը՝

հեղինակի –48

Պատկ. 14 Սիւնիքի իշխանական տները, 970-998թթ, գծագիրը՝ հեղինակի –48

Պատկ. 15 Սիւնիքի իշխանական տները Կապանի թագաւորութեան ժամանակ, 998–1170թթ, գծագիրը՝ հեղինակի –48

Պատկ. 16 Սիւնիքի իշխանական տները Օրբէլեանների գերիշխանութեան ժամանակ, ԺԳ–ԺԴ դարեր, գծագիրը՝ հեղինակի –48

Պատկ. 17 Մաքենեաց վանք-ամրոցը, Է-ԺԳ դարեր, գծագիրը՝ հեղինակի –48

Պատկ. 18 Ցաղաց քար վանական համալիրը, Ժ. դար, հետնախորքում՝ Սմբատաբերդ ամրոցը –49

Պատկ. 21 Սիւնիքի թագաւորութիւնը, 987–1170 (աղբիւրը՝ wikipedia.org) –51

Պատկ. 24 Սիւնեաց նահանգի իշխանական տներն Օրբէլեանների գերիշխանութեան, ժամանակաշրջանում, ԺԳ–ԺԴ դարեր, գծագիրը՝ հեղինակի –52

Պատկ. 25 Դուին-Կասպից ծով ճանապարհը, գծագիրը՝ հեղինակի –54

Պատկ. 27 Սիւնեաց նահանգի հարաւարեւմտեան մասի ճանապարհները (աշխատանքային քարտէզ, հեղինակ՝ Արմեն Ղարագյոզյան) –54

Պատկ. 30 Ղ. Ալիշան, «Սիսական», 1:500.000 բնամղոն, Վենետիկի, Ս. Ղազար, 1893 –55

Սիւնիքի թագաւորութեան բաժանումը 12 գաւառների՝ ըստ Սուրեն Երեմյանի (բնօրինակ աշխատանքային քարտէզ) –55

Պատկ. 31.1 Հայաստանն ըստ Աշխարհացոյցի, քարտէզի հեղինակ՝ պ.գ.դ. Ալեքսան Յակոբեան,քարտէզագիր՝ պ.գ.դ. Հենրիկ Խաչատրյան, Մասշտաբ 1:2 300 000 (1սմ=23կմ) –58

Պատկ. 32 Սիւնեաց նահանգի գաւառաբաժանումը՝ ըստ Սուրեն Երեմյանի (բնօրինակ աշխատանքային քարտէզ –56

Պատկ. 33 Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի –56

Պատկ. 34 Սիւնիքի թագաւորութիւնը ԺԱ դարում՝ ըստ Թ.Խ. Յակոբյանի, «Սիւնիքի թագաւորութիւնը», Երեւան, 1966, «Միտք» հրատարակչութիւն –57

Պատկ. 35 Ղ. Ալիշանի «Սիսական» աշխատութեան քարտէզի վրայ հեղինակի նշած ու մեր տեղադրած ամրոցները, գծագիրը՝ հեղինակի –64

Պատկ. 36 Սիւնիքի պաշտպանական ճարտարապետութիւնը Ժ–ԺԴ դարերում, քարտէզը կազմել ու նկարել է ճարտարապետ Արա Չարեանը՝ 1983–90-ին հաւաքելով բոլոր աղբիւրների բերդերի յիշատակութիւնները, գծագիրը՝ հեղինակի –65

Պատկ. 38 Ջերոմի «Ասիայի քարտէզ»-ը՝ պատրաստուած 420-ին, բայց մեզ հասել է միայն դրա ԺԲր դարի պատճենը: Կարտէզում հիւսիսը ձախում է, Հայաստանը՝ Սեւ եւ Կասպից ծովերի միջեւ, իսկ Հայաստանի դարպասները armenia pile լեռներն են, որտեղից սկիզբ են առնում մէկ կողմից Արաքսը, միւս կողմից՝ Տիգրիսը: Բրիտանական գրադարան, Additional MS 109049 tol.64 –76

Պատկ. 38.ա Մապպա Մունդին, որը գտնւում է Անգլիայի Հերեֆորդ քաղաքի մայր տաճարում, պատրաստել է Ռոֆեր դե Բոլլոն շուրջ 1300-ին: Սա միջնադարեան ձեռագիր շրջանաձեւ քարտէզ է՝ գծուած մագաղաթի վրայ: Երուսաղէմը քարտէզի կենտրոնում է, իսկ երկրային դրախտը՝ Եդեմը, վերեւում, որը քարտէզի արեւելքն է: Հայաստանը պատկերուած է ժամացոյցի սլաքի ժամը 10-ի ուղղութեամբ՝ շառաւիղի կէսի վրայ: Այստեղ է Նոյեան տապանը, ձախ կողմում Փոքր Հայքն է, իսկ դէպի աջ՝ կողքի վրայ թեքուած ամրոցի մօտ բուն Հայաստանն է (Armenia) –77

Պատկ. 38.բ Այս քարտէզը կոչւում է «Ջեմոնայի ձուածիր պորտոլան», պորտոլանների մէջ ունի իր իւրայատուկ տեղը: Քարտէզը ձուածիր է, հիմնւում է միաժամանակ պտղոմեոսյան եւ կրոնական քարտէզների վրայ: Գծուած է ամբողջութեամբ մէկ մագաղաթի վրայ, բայց ունի հետաքրքիր ձեւ, այսինքն՝ սուր ծայրերով ձուածիր է կամ աւելի շուտ ունի ոսպի տեսք: Հայաստանը նշուած է Սեւ ու Կասպից ծովերի միջեւ՝ Կովկասեան լեռների հարաւում՝ գլխիվայր պատկերուած ամրոցի ներքեւում: Հայաստանի հարաւ-արեւելքում կանաչագոյն ներկուած Արարատի վրայ նստած է Նոյեան տապանը՝ պատկերուած տան նման՝ նոյնպէս գլխիվայր: Ֆլորէնցիայի Ազգային կենտրոնական գրադարան, Port.1 –78

Պատկ. 46 Մեծ Հայքի թագաւորութիւնը, Դ. դարում (298-385թթ) –81

Պատկ. 47 Հայաստանի ռազմավարական ծրագրերը վաղ միջնադարաում,

գծագիրը՝ հեղինակի –81
Պատկ. 48 Մեծ եւ Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմէական ամրութիւնների համակարգը՝ ըստ Հ.Պ. Հակոբյանի –82
Պատկ. 56 Սիւնեաց նականգի գաւառների քարտէզ, գծագիրը՝ հեղինակի –92
Պատկ. 57 Սիւնիքի հիւսիսային շրջան՝ Գեղարքունիք (Գեղարքունիք եւ Սոդք գաւառներ), գծագիրը՝ հեղինակի –93
Պատկ. 58 Սիւնիքի կենտրոնական շրջան՝ Վայոց ձոր գաւառ, գծագիրը՝ հեղինակի –94
Պատկ. 59 Սիւնիքի հարաւային շրջան՝ Ծղուկք, Աղահեճք, Հաբանդ, Բաղք, Ձորք, Կովսական, Արեւիք, Երնջակ, Ճահուկ գաւառներ, գծագիրը՝ հեղինակի –95
Պատկ. 123 Գեղարքունիք ու Սոդք գաւառների տեղադրութիւնը՝ ըստ Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» աշխատութեան, Վենետիկ, Սբ Ղազար, 1893 –147
126 Հայկական ԽՍՀ քարտէզը (ռուսերէն), Երեւան, 1978 –148
Պատկ. 128 Հայաստանի Հանրապետութեան վարչական քարտէզը, Երեւան, 2024 –149
Պատկ. 129 Հայաստանի Հանրապետութեան Գեղարքունիքի մարզի ճանապարհները –149
Պատկ. 165 Սիւնեաց Վայոց ձոր նահանգի քարտէզը՝ ըստ Ղ. Ալիշանի «Սիսական»-ի, Վենետիկ, Սբ Ղազար, 1893 –175
Պատկ. 166 ՀՀ Վայոց ձոր մարզի քարտէզը –176
Սիւնիքի Ծղուկք գաւառի քարտէզը՝ ըստ Ղ. Ալիշանի «Սիսական»-ի, Վենետիկ, Սբ Ղազար, 1893 –175
Պատկ. 329 Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան վարչական քարտէզը, 2020 –267
Պատկ. 330 Պատմական Սիւնեաց նահանգի տեղադրութիւնը՝ Հայաստանի տասնհինգ նահանգների քարտէզում –268
Պատկ. 333 Սիւնիքի Ծղուկք գաւառի ամրոցների տեղադրութեան քարտէզը՝ ըստ հեղինակի –270
Պատկ. 337 Ծղուկք գաւառի բնակավայրերի, բերդերի, վանքերի, լեռնագագաթների, ճանապարհների աշխատանքային քարտէզը (հեղինակներ՝ ճարտարապետ Արա Զարեան, պատմաբան Արմեն Ղարագյոզյան), 1985 –273
Պատկ. 343 Սիւնիքի թագաւորութեան, ԺՆ-ԺԳ դարեր, աշխատանքային քարտէզ,հեղինակներ ճարտարապետ Արա Զարեան, պատմաբան Արմեն Ղարագյոզյան, 1985 –276
Պատկ. 395 Արցախի Հանրապետութեան (մինչեւ 2020-ը) եւ Հայաստանի Հանրապետութեան քարտէզները, որոնք համընկնում են Սիւնիքի պատմական Աղահեճք ու Հաբանդ գաւառներին –316
Պատկ. 396 Սիւնեաց նահանգի Աղահեճք ու Հաբանդայ գաւառների ամրոցները՝ ըստ հեղինակի –316
Պատկ. 450 Ցարական Ռուսաստանի քարտէզ՝ “Тифлисск. Елисаветопольск. и Эриванская губерній– сентябрь, 1, 1906г. –343
Պատկ. 451 Սիւնիքի Ձորք եւ Բաղք գաւառները՝ ըստ հեղինակի –344
Պատկ. 452 ՀՍՍՀ Ղափանի շրջանի քարտէզի վրայ՝ Սիւնիքի Բաղք գաւառի աշխատանքային քարտէզը՝ ըստ հեղինակի –344
Պատկ. 455 Ձորք եւ Բաղք գաւառների լեռնագրութիւնը –345
Պատկ. 488 Սիւնիքի Արեւիկ ու Կովսական գաւառների տեղադրութիւնը՝ ըստ Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» աշխատութեան, Վենետիկ, Սբ Ղազար, 1895 –366
Պատկ. 489 Արեւիկ ու Կովսական գաւառների բերդերն ու բնակավայրերը՝ գծագիրը հեղինակի –367
Պատկ. 490 Արեւիկ եւ Կովսական գաւառները՝ համաձայն արդի քարտէզագրութեան (Collage Ltd, 2002) –367
Պատկ. 517 Սիւնիքի Գողթն ու Երնջակ գաւառների դիրքորոշումը՝ «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան քարտէզ»-ում, կազմեց՝ Խ. Ավդալբեկեան, Պետական Հրատարակչութիւն, Ցերեւան, 1932 –385
Պատկ. Գողթն ու Երնջակ գաւառների բերդերն ու բնակավայրերը՝ գծագիրը 518 հեղինակի –385
Պատկ. 536 Ճահուկ ու Ծահապոնք գաւառների բերդերը եւ բնակավայրերը՝ գծագիրը հեղինակի –394
Պատկ. 537 Նախիջեւանի ԻՀ քարտէզը՝ ըստ Collage Ltd-ի, 2002 –399
Պատկ. 549 Նախիջեւանի ԻՀ քարտէզը
Պատկ. 550 Նախիջեւանի ԻՍՍՀ պատմութեան եւ մշակոյթի հայկական հիմնական յուշարձանները՝ ըստ Արգամ Այվազյանի կազմած քարտէզի –405



Պատկ. 629
Մուտք Երուսաղէմ,
ձեռ.137v, Մատենադարան

629

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Պատմական Սիւնիք նահանգի ամրոցներն սկսել եմ ուսումնասիրել Երեւանի Կ. Մարքսի անուան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետութեան ֆակուլտետը 1980-ին աւարտելուց յետոյ, երբ հօրս՝ ճարտարապետ Արմէն Զարեանի խորհրդով որոշեցի ուսումս շարունակել: 1983-ին ընդունուեցի ՀԽՍՀ ԳԱ Արուեստի ինստիտուտի ասպիրանտուրայի (աշխատանքից չկտրուած) հայ ճարտարապետութեան պատմութեան ու տեսութեան բաժինը: Մեծ ջանքերով, դժուարութիւններով ու տարբեր ընդհատումներով կատարած ընդարձակ աշխատանքի համար շնորհակալ ու պարտական եմ առաջին հերթին հօրս՝ Արմէն Զարեանին: Ինձ բախտ վիճակուեց, որպէս ղեկավար ունենալու ժամանակի ամենահեղինակաւոր, վաստակաշատ ճարտարապետ, գիտնական, հետազօտող ու վերլուծաբան Ստեփան Մնացականյանին, որն առաջարկեց ու կազմեց Սիւնիքի ռազմական ճարտարապետութեան ուսումնասիրման իմ գիտական աշխատութեան բովանդակութիւնը: Այն պահել եմ գրեթէ անփոփոխ՝ հետեւելով գիտական ղեկավարիս բոլոր ցուցումներին ու խորհուրդներին մինչեւ նրա վախճանը՝ 1994-ին: Երախտապարտ ու շնորհակալ եմ իմ գիտական ղեկավար Ստեփան Մնացականյանին՝ գիտուն, բարեխիղճ, հետեւողամիտ համագործակցութեան համար: Վստահ եմ, որ պէտք է գոհունակ լիներ՝ տեսնելով իմ հետազօտութեան այդքան ձգձգուած, բայց բարեյաջող աւարտի արդիւնքները:

Դաշտային հետազօտութիւնների բերումով՝ բախտ եմ ունեցել հանդիպելու, ծանօթանալու ու ընկերանալու հմուտ, ուսեալ ու աջալուրջ պատմաբան Արմեն Ղարա- գյոզյանի հետ. միասին Սիւնիքում կազմակերպել ենք մի քանի արշաւներ: Նա ինձ շատ բան սովորեցրեց՝ ցուցանելով Սիւնեաց լեռնաշխարհում զետեղուած ու քօղարկուած շատ ամրոցների տեղերը՝ վերականգնելով նրանց պատմական անուններն ու բացատրելով դրանց ծագումնաբանութիւնը: Իմ հերթին, օգնել եմ կազմելու բազմաթիւ քարտէզներ իր յօդուածների եւ ուսումնասիրութիւնների համար: Արմենին շատ եմ պարտական մարդկային, անշահախնդիր համագործակցութեան համար: Ափսոս, որ իմ այս աշխատանքի վերջնական արդիւնքն անձամբ չի կարողանալու տեսնել՝ կեանքից վաղաժամ հեռանալու պատճառով: Արմենին միշտ կը յիշեմ մեր արդիւնաւետ համագործակցութեան շնորհիւ:


Հայոեստավրացիանախագիծ ինստիտուտում աշխատելիս՝ 1980–1990-ին, «Զանգեզուր» արուեստանոցի գլխաւոր ճարտարապետ Աշոտ Յովսէփեանի համաձայնութեամբ, Սիւնիքի բերդերը չափագրելու համար յաճախ գործուղման եմ մեկնել արուեստանոցի երիտասարդ ճարտարապետների հետ, որոնք տեղում օգնել են ինձ: Սիրով ու երախտագիտութեամբ եմ հիշում ճարտարապետներ Ն. Այվազյանին, Ա. Հովհաննիսյանին, Ա. Լազարյանին, Վ. Թադեւոսյանին, Ա. Ասլանյանին: Շնորհակալ եմ նաեւ Երեւանի Աբովյան փողոցից իմ լաւ ընկեր, այժմ՝ կալիֆոռնիաբնակ Ռուբեն Նալբանդյանին, որի հետ 1985-ին չափագրել եմ Սեւանի Բերդկունք ամրոցը:

Վերջում ուզում եմ խորին շնորհակալութիւնս յայտնել իմ լաւ ընկերուհի, հայ մշակոյթով ու պատմութեամբ տարուած, որմնանկարի արհեստավարժ վերականգնող, ազգութեամբ՝ բելգիուհի, իտալաբնակ Քրիստին Լամուրէին, որի հետ վերջին տասը տարիներին համագործակցել եմ՝ Հայաստանի ու Արցախի Հանրապետութիւնների տարբեր շրջանների եկեղեցիներում ուսումնասիրելու, վերականգնելու եւ պահպանելու հայկական մէկ տասնեակի հասնող որմնանկարներ: Շնորհակալ ու երախտապարտ եմ Սիւնիքի բերդերի վերաբերեալ ուսումնասիրութեան ընթացքում տարիներ շարունակ ինձ քաջալերելու, օգնելու ու հովանաւորելու համար: Եթէ չլինէր իր այս հետեւողամիտ ոգեւորութիւնն ու խրախուսանքը, դժուար թէ կարողանայի վերջացնել տարիներ առաջ սկսած ու տարբեր պատճառներով յետաձգուած այս աշխատութիւնը: Սրտագին շնորհակալութիւններս Քրիստին Լամուրէին:

Շնորհակալ եմ նաեւ իմ երեւանեան երիտասարդութեան լաւ ընկեր ու երաժշտասէր Տիգրան Սիրավյանին երկար տարիների ընթացքում ընտիր ու յաճախ հազուադէպ՝ ջազային ու դասական երաժշտութիւն խորհրդատելու ու տրամադրելու համար: Աշխատանքային ամիսների ընթացքում երաժշտութիւնը եղել է իմ մշտական ուղեկիցը, քաջալերողն ու աջակիցը քանզի աշխատասիրութեան վերջնական մասը գրել եմ հայրենիքից հեռու, իսկ գրքի ամբողջական էջադրումն ու ձեւաւորումը արել եմ Իտալիայի իմ աշխատանոցում:

Անչափ շնորհակալ եմ նաեւ իմ կրտսեր զաւակ՝ Մարտինին, branding design-ի լաւ մասնագէտ ու հմուտ գիտակ, որը բազմիցս օգնել է գրաֆիկական խնդիրների հետ լուծումներ գտնելու ժամանակ ու խորհուրդներ է տուել ժամանակակից դիզայնի ընդունուած ու տարածուած գաղափարների իմաստով:

Ամենից կարեւոր երախտագիտական խօսքն ու գնահատանքը գնում է անշուշտ Հ.Ք.Ը. Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամին, նրա գնահատիչ յանձնախմբի անդամներին, բարդ ու պատասխանատու աշխատանքային ընթացքի համադրող Ցոլակ Ապտալեանին, բոլորի կողմից իմ նկատմամբ վստահութեան եւ այս գրքի տպագրութեան հոգսերն ու ծախսերը հոգալու համար: Յատուկ շնորհակալութիւն եմ յայտնում իմ հնամի բարեկամ ու ընկեր Վիգէն Լեւոն Աղդարեանին, որ ամիսներ տեւած հեռավար մասնագիտական աշխատանքի շնորհիւ՝ գիրքի ամբողջ տեքստը խմբագրեց ու փոխարկեց հայերէն դասական ուղղագրութեամբ:



630

Պատկ. 630
Աշխարհացոյց
Սուրբ Դենիսի տարեգրութիւն
Աստուածաշնչի ձեռագիր
Փարիզ, Սուրբ Ժրընեվիեւ,
1364-1372

ԱՄՐՈՑՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Ամրոցապատ եկեղեցի

Ռազմական ժամանակաւոր հենակէտերի վերափոխուած կիսաւեր, միանաւ կամ եռանաւ բազիլիկ կամ գմբէթաւոր եկեղեցիներ, որոնք յարմարեցուել են մարտ վարելու պայմաններին՝ թշնամու հնարաւոր սպառնալիքի ժամանակ: Յաճախ եկեղեցու շուրջբոլոր պատերն արտաքինից ամրացուել են լրացուցիչ բերդապատերով, որոնք ունեցել են հրակնատներ ու ներսում՝ փայտէ մարտահարթակներ. բազիլիկ տիպի են Փարպիի Ծիրանաւորը, Բիւրականի Սբ Յովհաննէսը (երկուսն էլ՝ Ե. դար), Աշտարակի Ծիրանաւորը (Է. դար), Շիրակաւանի Երազգաւորը (Է–Թ դարեր), գմբէթաւոր սրահ տիպի են Աշնակի Սբ Կարապետը (Դ–Ե դարեր), Մաստարայի Սբ Յովհաննէսը (Է դար), Երիցավանքը (Ժ–ԺԱ դարեր), Աշնակը (Ժ–ԺԱ դարեր): Մէկ այլ սկզբունք էլ կիրառուել է պաշտամունքային կառոյցների շինարարութեան ժամանակ, երբ եկեղեցին ի սկզբանէ ունեցել է պաշտպանական կառոյցներին բնորոշ ռազմավարական արհեստին յատուկ տարրեր, ինչպէս տեսնում ենք Ագարակի միանաւ դահլիճ եկեղեցում (Դ–Է դարեր), Իջեւանի Սբ Առաքելոց վանքում (ԺԳ. դար): Եկեղեցիները յաճախ օգտագործուել են որպէս ժամանակաւոր ապաստարաններ՝ թշնամու անակնկալ հարձակումների ժամանակ: Այս հանգամանքից ելնելով՝ հոգեւոր կառոյցների մուտքերն ու լուսամուտները եղել են փոքր չափերի. լուսամուտները դրսում՝ նեղ ու ձգուած, ներսում՝ լայնացող ու վերնակամարով: Հետաքրքիր օրինակ է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Վանք գիւղի ԺԴ. դարի Սպիտակ Խաչ եկեղեցին, որի արեւմտեան ճակատի մուտքի վերեւում զետեղվել է ամրոցների հրակնատներին բնորոշ լուսամուտ (2020-ի 44-օրեայ պատերազմի աւարտին եկեղեցին հիմնովին քանդել են ազերի զինուորականները):




Ամրապատ կամուրջ

Միջնադարեան Հայաստանում կամուրջները ծառայել են ոչ միայն առեւտրական քարաւանների հարկային գործառոյթներն ապահովելու համար, այլեւ եղել են նաեւ այն կարեւոր ռազմավարական տարրերը, որոնք խոչընդոտել կամ նպաստել են թշնամու առաջընթացին, ուստի յաճախ եղել են ամրոցների հսկողութեան տակ: Կամուրջներն իրենց ներսում ունեցել են պահակախմբի համար նախատեսուած կացարաններ ու պաշտպանական ճարտարապետութեանը բնորոշ տարրեր (աշտարակներ, դարպասներ, ատամնաւոր պարսպաշարեր): Զգալի թռիչքային բարձրութիւն եւ երկարութիւն ունեցող կամուրջներն ունեցել են հակաերկրաշարժային կրկնակամարներ: Գետերի յատակներին յենուող կամարների խելերի դիմակայունութիւնը բարձրացնելու նպատակով կառուցուել են խելերի միակողմ կամ երկկողմ, յատակագծում՝ կիսաբոլորակ աշտարակ հիշեցնող եւ ամրոցներին յատուկ որմնահեցեր: Շատ առանձնայատուկ ու հետաքրքիր է Անի քաղաքի՝ Ախուրեանի ձորում, Սբ Գրիգոր եկեղեցուց հիւսիս, ԺԱ. դարի քարաշէն կամուրջը, որի մէջտեղի հատուածում եղել է փայտէ շարժական անցուղի, որը ներս քաշելու միջոցով արգելափակուել է կամրջի բանուկ մասը:



Ամրոցապատ քաղաք

Քաղաքաշինական այս սկզբունքը շատ տարածուած է եղել ուրարտական ժամանակաշրջանում եւ Հայոց թագաւորութեան շրջանում: Վանի Արարատեան թագաւորութիւնում ամրոցապատ քաղաքներ շարունակել են հիմնադրել Երուանդունի, Արտաշէսեան եւ Արշակունեաց արքայ ները: Ուրարտական քաղաք-ամրոցի լաւագոյն օրինակներից է Էրեբունի բերդաքաղաքը, որի հնագիտական պեղումները դեռ շարու-



նակւում են: Այն Ք. ա. 782-ին կառուցել է ուրարտական տերութեան հզօրագոյն արքաներից մէկը՝ Արգիշտի Ա-ն (Ք. ա. 786–764): Քաղաքատեղիի հիւսիս-արեւելեան պարագիծը եզրագծուած է տուֆաշէն հաստահեղուկս որմնահեցերի համաչափ շարքով եւ կանոնաւոր քառակուսի քարերից շարուած պարսպապատով:

Հելլենիստական շրջանի հայկական քաղաք-ամրոցների կարեւոր օրինակներից է Արտաշատ բերդաքաղաքը, որի եռանկիւնաձեւ հրուանդանը շուրջբոլոր պարսպապատ է: Կառուցել է հայոց Արտաշէս Ա. արքան Ք.ա. 176-ին, որը Մեծ Հայքի մայրաքաղաքն էր Ք.ա. 185–Ք.հ. 120-ին: Հարաւարեւելեան մուտքն ամրացուած էր երկու հզօր հոծ աշտարակներով, որոնք եղել են նաեւ եռանկիւն յատակագծի երկու անկիւններում:

Քրիստոնեայ Հայաստանի մայրաքաղաք Դուին բերդաքաղաքը հիմնադրուել է Դ դարի 30-ական թուականներին՝ Տրդատ Գ-ի որդի Խոսրով Բ. Կոտակի օրոք: 330–331-ին Խոսրով Բ. թագաւորը հայոց արքունիքն Արտաշատից տեղափոխել է հիւսիս՝ Դուին բլրի վրայ՝ Արփայ գետի հունի մօտ: 470-ին Գիւտ Ա. Արահեզացի կաթողիկոսի օրոք Վաղարշապատից Դուին է տեղափոխուել նաեւ կաթողիկոսանիստը: Դուինն ունեցել է ժամանակի զարգացած քաղաքներին բնորոշ քաղաքաշինական նկարագիր: Միջնաբերդը կառուցուել է ընդարձակ հարթավայրի հիւսիս-արեւելեան կողմում՝ բլրի գագաթին, իսկ բուն քաղաքը՝ շահաստանը, կառուցապատուել է բլրի փեշերին՝ դէպի հարաւ-արեւմուտք ձգուած հարթավայրի վրայ: Միջնաբերդի եւ քաղաքի միջեւ կապն ապահովուել է երկու կամուրջների միջոցով, մէկը՝ միջնաբերդի հարաւից, միւսը՝ արեւելքից: Միջնաբերդը եւ քաղաքը շրջափակուել են կիսաշրջանաձեւ աշտարակներով եւ հզօր բուրգերով համալրուած պարիսպներով:



Ամրացուած դարպաս

Իւրաքանչիւր ամրոցի կամ պաշտպանական կառոյցի ամենախոցելի հատուածը, որը տեղադրւում է ամրոցի կառուցման համար ընտրուած ժայռապատ տեղանքի դժուարամատչելի հատուածում այնպէս, որ լինի կայազօրի մշտական հսկողութեան տակ: Մուտքերն ու դարպասներն ամրացուած են եղել երկու կամ մէկ կողմում տեղադրուած սնամէջ, ներսում՝ բազմահարկ եւ տարբեր բարձրութիւնների վրայ տեղադրուած մարտահարթակներով, կիսաշրջան կամ ուղղանկիւն հրակնատներ ունեցող աշտարակներով: Յաճախ աշտարակաւոր դարպասներից ներս տեղադրուել են լրացուցիչ պատնէշներ կամ աշտարակներ՝ դարպասով ներխուժած թշնամուն անակնկալի բերելու համար: Կողային աշտարակներով դարպասները եղել են սրահաւոր՝ կամարակապ, որի բանուկ հատուածը փակուել է ծանր երկփեղկանի կամ վերեւից ներքեւ սահող փայտէ դռներով ու մետաղե ճաղացանցով:

Ամրոց, բերդ

Բոլոր կողմերից պաշտպանուած եւ պաշարման պայմաններում երկարատեւ պայքարի նպատակով ամրացուած ռազմական կառոյց, որի ճարտարապետութիւնն ու շինարարական լուծումների ընտրութիւնը ռազմավարների ու իշխանների մենաշնորհն էր: Հնագոյն ամրոցներն իրար յաջորդող կիսակլոր կամ ուղղանկիւն աշտարակներով եւ ամրացուած մուտքերով աղիւսից, քարից, փայտից կառուցուած պաշտպանական շրջապարիսպներ էին, որոնց ներսում սովորաբար կառուցւում էին միջնաբերդը, դղեակը, մատուռը եւ Չինուորական կայազօրի համար անհրաժեշտ կենցաղային ու ռազմական շինութիւնները:


Ամրոցները կառուցուել են կենսական (օրգանական), սպասարկողական

(լոգիստիկ) կամ մարտավարական նպատակով: Կենսական է, երբ զինուորական դիրքը մշտական ռազմավարական յենակէտ է, այսինքն՝ խօսքը վերաբերում է պետութեան ընդհանուր պաշտպանութեանը: Սպասարկողական է, երբ խօսքը վերաբերում է հնարաւոր ռազմավարական յենակէտին, այսինքն՝ ռազմական գործողութիւնների ստոյգ թատերաբեմի պաշտպանութեանը, սպասարկմանը, մատակարարմանը, պարենաւորմանը, ռազմամթերքի ապահովմանը: Մարտավարական է, երբ դիրքի կարեւորութիւնը դրսեւորւում է միայն այն ժամանակ, երբ տեղի են ունենում կամ ակնկալւում են բախումներ պատերազմող կողմերի միջեւ, այսինքն՝ երբ դա մարտավարական, ռազմական յենակէտ է: Ամէն դէպքում ամրոցի նպատակը եւ ճարտարապետական ձեւերը պէտք է ուսումնասիրուէին մարտավարական կարիքները բաւարարելու համար, քանի որ երբ ամրոցը մտնում էր ռազմական ընդհարումների մէջ, պէտք է նպաստէր մարտական բոլոր կարեւոր գործողութիւնների բարեյաջող աւարտին: Կենսական նպատակով կառուցուած ամրոցը բաւարարում էր նաեւ սպասարկողական պահանջները:




Ամրոցի ներքին բակ

Ամրոցաշինական կառոյցների ազատ եւ շուրջբոլոր պարսպապատերով պաշտպանուած տարածք, որտեղ տեղի էին ունենում անձնակազմի տարանցումներ, սպայազօրի խորհրդակցութիւններ ու զինավարժութիւններ, տարբեր զէնքերի օգտագործում եւ փորձարկումներ:




Աշտարակ, բուրգ

Միջնադարեան ամրոցներում աշտարակներն ու բուրգերը սովորաբար կառուցուել են քարից, նաեւ՝ աղիւսի օգտագործմամբ: Յաճախ վեր բարձրացող պատերի վերին հատուածներն ամբողջութեամբ եղել են ատամնաշարերով, որոնց նկարչական յօրինուածքը կախուած է եղել մարտ վարելու բնոյթից եւ օգտագործուած զինատեսակից: Սողանցք յիշեցնող հրակնատները տեղադրուել են պատերին ուղղահայեաց՝ ճեղքերի տեսքով, որոնց ներսից նետաձիգները կարող էին նետեր արձակել յարձակուողների վրայ: Պարսպապատերի երկայնքին աշտարակների տեղադրութիւնը կախուած է եղել տեղանքի առանձնայատկութիւններից եւ ամրոցի տեսակից: Աշտարակները եղել են սնամէջ կամ հոծ, կիսաշրջան, աղեղնաձեւ, ձուաձիր, ուղղանկիւն, քառակող: Սնամէջ աշտարակների դէպքում միջյարկային հաղորդակցութիւնն ապահովուել է ներքին փայտէ աստիճանների ու հարթակների միջոցով:




Աշտարակ-դիտակէտ

Մենաւոր դիտակէտ-աշտարակները եղել են կլոր, ձուաձիր կամ քառանկիւն յատակագծով եւ տեղադրուել են ռազմավարական կարեւոր հանգոյցների բարձրադիր ու անխոցելի բնական բարձունքների վրայ, որոնց նպատակը պաշտպանուողներին հսկելն էր, թշնամու հնարաւոր տեղաշարժներն ու մարտավարական զօրաշարժերը հաղորդելը եւ անհրաժեշտ մարտավարական որոշումների ձեռնարկումները կանխատեսելը: Աշտարակ-դիտակէտերը տեղադրուել են իրարից որոշակի հեռաւորութեան վրայ այնպէս, որ հնարաւոր լիներ տեսնել լուսային ազդանշանները եւ ազդարարել հնարաւոր մօտեցող վտանգը:



Ամրապարիսպ

Ռազմական կառոյցի տեսակից, դիրքից, նպատակից կախուած՝ բերդամրոցները կարող են ունենալ մէկ շուրջբոլոր ներփակ, միակողմանի պաշտպանապատ, որը



բնորոշ է տեղական՝ իշխանական նշանակութիւն ունեցող ամրոցներին: Աւելի ընդարձակ, կարեւոր քաղաքների պաշտպանական համակարգի մաս կազմող ամրոցները սովորաբար ունեն մէկ, երկու, մինչեւ երեք շարք պարսպագիծ ունեցող պարսպապատեր: Դրանց տեղադրութիւնը, իրար նկատմամբ յարաբերութիւնը, նրանց միջեւ փոխկապակցուածութիւնն ու մի պարսպից միւսն անցնելու հնարքները կախուած են տեղի աշխարհագրական բնութագրերից ու ամրոցի ռազմավարական նշանակութիւնից: Երնջակ ամրոցն ունեցել է մինչեւ 8 պարսպաշարք՝ իրենց համապատասխան նոյնաքանակ մուտքերով:




Գաղտնամուտք

Այս մուտքերը սովորաբար եղել են քօղարկուած կամ գաղտնապահուած, քանզի դրանց միջոցով կարելի էր մտնել գաղտնուղի, որը տանում էր բաց տեղ, յաճախ՝ դէպի գետահովիտ: թէ ամրոցի ներսում եւ թէ ամրոցից դուրս տանող մուտքերը սովորաբար քիչ նկատելի են եղել, եւ դրանց տեղերը գիտէին միայն պահակ-հսկիչները:




Գաղտնուղի

Բոլոր ամրոցները պարտադիր ունեցել են ստորգետնեայ գաղտնուղիներ՝ երկարատեւ պաշարումների ժամանակ ամրոցի բնակիչներին անհրաժեշտ ծառայութիւններն ապահովելու համար: Գաղտնուղիները հաղորդակցական կապ են հաստատել ամրոցի միջնաբերդի եւ ամրոցի ժայռալանջի ստորոտով անցնող գետահովիտի կամ վտակի ավազանի հետ: Դրանց չափերն ու անցուղին դժուար է վերականգնել, քանզի հիմնականում փլուզուել կամ քանդուել են դարերի ընթացքում: Ստորգետնեայ գաղտնուղիներ են ունեցել նաեւ վանք-ամրոցները, օրինակ՝ Տաթեւի, Ծատինի, Հառիճավանքի, Ախթալայի վանական համալիրները:



Դարպաս

Դարպասը եղել է ամրոցի գլխաւոր եւ յաղթական մուտքը՝ կամարակապ ու թաղակապ, անհրաժեշտութեան դէպքում՝ պաշտպանական նկատառումներից ելնելով՝ շարժական կամրջակով: Դարպասները փակուել են հաստահեղոյս փայտէ դռներով ու մետաղական ճաղացանցերով: Դարպասները հսկուել են կողային աշտարակների միջոցով, որտեղ տեղակայւում էր մշտական կայազօրը: Երբեմն, առաջին դարպասից յետոյ, նեղ միջանցքը տանում էր դէպի ամրոցի մէկ այլ դարպաս, որը նոյնպէս պաշտպանուած էր աշտարակներով:




Դիտակէտ

Ամրոցների ռազմավարական կարեւոր կառոյցներից, որը կարող էր տեղադրուել ամրոցապատերից ներս՝ առանձին դիրքորոշուած, կամ ամրոցապատերից դուրս՝ ռազմավարական կարեւոր ու անհրաժեշտ դիրքում: Դիտակէտեր տեղադրուել են նաեւ ամրոցի պարսպապատերի բեկման անկիւններում՝ հնարաւորութիւն ստեղծելով ունենալու աւելի ընդարձակ դիտադաշտ: Դիտակէտերում եղել է մնայուն անձնակազմ, որը սահմանել է շուրջօրեայ հսկողութիւն:

Դիտաշտարակ

Հիմնականում առանձին կառուցուած, ուղղաձիգ, հաստահեղոյս պատերով ու զանազան յատակագծային լուծում ունեցող ուղղահայեաց ռազմական շինութիւններ,

որոնք տեսանելի էին թշնամու զորաշարժի ժամանակ. կառուցւում էին անհասանելի տեղերում եւ խոցելի էին դժուարութեամբ: Հիմնական նպատակը եղել է ընդարձակ տարածքների, հովիտների, գետաձորերի երկայնքով ընթացող ճանապարհներով թշնամու առաջխաղացումները հսկելը: Դիտաշտարակներն ունեցել են լուսային ազդանշաններ արձակելու հնարաւորութիւն, որոնց միջոցով մօտակայ ամրոցներում զօրակայած մարտիկներին հաղորդւում էին հնարաւոր տագնապի մասին տուեալներ:



Դղեակ (castel)

Աշտարակներով ու պարիսպներով շրջապատուած ամրացուած կառոյցի տեսակ. կառուցուել է յատկապէս միջնադարում՝ ազնուական կալուածատէրերի եւ իշխանական գերդաստանների բնակութեան ու պաշտպանութեան համար: Դղեակը թագաւորական ընտանիքի, տիրոջ կամ ազնուականի մասնաւոր ամրացուած նստավայր է, որտեղ պատերազմական պայմաններում կարող էր ապաստանել բնակչութեան ընդարձակ շրջանակ: Դղեակներում կառուցուել են բոլոր այն անհրաժեշտ ռազմական, կենցաղային, սպասարկողական, ծառայողական շինութիւնները, որոնք ապահովել են երկարատեւ բնակութիւն եւ ապահով պաշտպանութիւն:




Զինահարթակ

Ամրոցների զինահարթակները տեղադրուել են երկայնական պարսպապատերի վերին հատուածներում՝ աստիճանաձեւ տեղադրուած ատամնաշարի հետնամասում: Այս հարթակներ բարձրանում էին փայտէ կամ քարաշէն ներքին աստիճաններով: Որոշ ռազմական կառոյցների, օրինակ՝ ամրոց-եկեղեցիների մարտահարթակները նոյնպէս փայտաշէն են եղել: Աշտարակների մարտահարթակները եղել են բազմայարկ, ներքին աստիճաններով, որոնք տանում էին տարբեր մակարդակներում տեղակայուած մարտական դիրքեր:




Խրամատ

Հիմնականում կիրառուել է Կիլիկեան ամրոցներում: Կարող էր լինել թմբապատնէշի տեսքով՝ հիմնական ամրոցի կամ միջնաբերդի պարիսպների շուրջբոլորը, կամ տեղանքի առանձնայատկութիւններից ելնելով՝ միայն որոշ կողմերում: Ռազմական նպատակը պաշտպանական է. լրացուցիչ արգելք է թշնամու ցամաքային, զանգուածային գրոհը կասեցնելու համար: Ելնելով ամրոցի մեծութիւնից ու նշանակութիւնից՝ խրամատը կա- րող էր լինել միաշերտ կամ բազմաշերտ: Խրամատները նաեւ կարող էին լցուել ջրով եւ լինել նաւարկելի:




Յենապատ

Յենապատերը տեղադրուել են պարսպապատերի արտաքին մասերում՝ պաշտպանական պատերի ամրութիւնն ու երկրաշարժադիմացկունութիւնն ապահովելու համար: Դրանք եղել են նաեւ հոծ բուրգերի տեսքով, բայց բոլոր դէպքերում՝ բրգաձեւ, պատերի ստորին մասերում՝ աւելի հաստ, որոնք, դէպի վեր բարձրանալով, նեղանում են:




Հրակնատ

Արուել են ամրոցապատի կամ աշտարակի պատի հաստութեան մէջ՝ մարտահարթակին կից՝ զէնքի տեսակին համապատասխան ուրուագծով արուած անցքերով ու հո-




րերով, որոնք կիրառուել են թշնամու դէմ սառը զէնքի կամ հրազէնի օգտագործման համար: Հրակնատի մօտ գտնուող մարտիկը, լինելով պաշտպանուած ու դրսից քիչ խոցելի, հնարաւորութիւն ունէր դէպի դուրս դիտելու եւ թիրախաւորելու թշնամուն: Հրակնատների տեսակները բազմաթիւ են՝ ուղղանկիւն, կլոր, շրջանաձեւ, խաչաձեւ: Ամրոցապատի մէջ փորուած հրակնատն արտաքինից շատ աւելի նեղ էր, քան ներքինից: Պատն արտաքինից յաճախ պաշտպանուել է կիսակլոր, եռանկիւնաձեւ վահաններով: Ծանր հրազէնի օգտագործման դէպքում հրակնատների մօտ, ներքինից, արուել են թաղակապ սրահներ:



Հրանգարան

Հրակնատներից բացի՝ ամրոցապատերի վերին մասերում կառուցուած ատամնաշարերի բաց տեղերում զետեղուել են հրանգարաններ՝ թշնամուն վերեւից խոցելու համար:



Մելիքական ապարանք

Պաշտպանական կառոյցներին իւրայատուկ տարրերով հագեցած բնակելի համալիրներ, որոնք ծառայել են ոչ միայն բնակութեան, տնտեսութիւն վարելու համար, այլեւ օգտագործուել են որպէս ապահով թաքստավայրեր՝ թշնամու ներխուժումների ժամանակ: Մելիքական ապարանքները հիմնականում ցածրահարկ են եւ կառուցուել են բնակավայրերում: Ապարանքների կառուցապատումը շրջապատուել է հոծ կամ սնամէջ անկիւնային աշտարակներ ունեցող ամուր պարիսպներով: Ապարանքների դարպասները յուսալի պաշտպանուել են ամրակուռ դարպասներով ու դռներով: Աշտարակներն ունեցել են դիտանցքեր ու հրակնատներ:



Միջնաբերդ

Միջնաբերդն ամրոցի կենտրոնական, առաւել անառիկ, բարձրադիր, պարըսպապատ, ամենակարեւոր միջուկն է, որն ինքնուրոյն պաշտպանութեան համար յարմարեցուած եւ խիստ ամրացուած դիրք է ամրոցի կամ քաղաքի մէջ: Միջնաբերդում էին թագաւորի կամ իշխանի եւ աւագանու պալատական, բնակելի կառոյցները, պաշտամունքային, վարչական ու տնտեսական շինութիւններն ու զօրանոցները: Ամրոցի կամ քաղաքի բնակելի թաղամասերի գրաւման դէպքում բնակչութիւնը պատսպարւում էր միջնաբերդում, որտեղ նախապէս ամբարում էին սննդամթերքը, խմելու ջուրը, զինամթերքը: Միջնաբերդն ունենում էր նաեւ ստորգետնեայ գաղտնուղի՝ արտաքին աշխարհի հետ կապի, թշնամուն թիկունքից հարուածելու եւ, անհրաժեշտութեան դէպքում, փախուստի դիմելու համար:



Միջնապատ

Խոշոր ու կարեւոր ամրոցները պաշտպանուած են եղել աշտարակներով ամրացուած մի քանի շարք պարսպապատերով, որոնք նախագծուել ու կառուցուել են՝ ելնելով տեղի աշխարհագրական առանձնայատկութիւններից: Կառուցուած լինելով հիմնականում ժայռացից սարաւանդների վրայ՝ ամրոցների շարքերը յարմարեցուել են բնական անառիկ արգելքներին, ուստի կառուցապատուել են միայն այն տեղերում, որտեղ բնական խոչընդոտներն առաւել պակաս էին: Միջնապատերը կարող էին ունենալ նաեւ իրենց առանձին մուտքերն ու պաշտպանական ինքնուրոյն համակարգը:

Մուտքային անցում




Կառուցուել են ինչպէս դժուարամատչելի, այնպէս էլ առանձին կառուցուած ճանապարհների ու արահետների ուղղութեամբ. առաջինները՝ թշնամուց աւելի ապահով պաշտպանուելու համար, երկրորդները՝ հիւրերին կամ յաղթարշաւից վերադարձող մարտիկներին ամրոց ընդունելու համար: Եղել են նաեւ քօղարկուած մուտքային հանգոյցներ, որոնք օգտագործուել են մարտավարական յատուկ իրավիճակներում:

Նետաձգարան



Օգտագործուել է մինչեւ հրազէնի յայտնաբերումն ու կիրառումը (ԺԲ. դար): Նետաձգութեան ժամանակ աղեղն ու նետն ուղղել են դէպի վեր, եւ նետը վերեւից կամարաձեւ իջել է ցած ու խոցել նշանակէտը: Այս դէպքում նետաձիգները կանգնել են ամրոցապատերի մարտահարթակների վերին բաց մասերում: Դիպուկ նետաձգութեան համար եղել են նետաձգարաններ, որոնք քօղարկուած էին պարիսպների պատերի հաստութեան մէջ եւ ունէին ուղղանկիւն նեղ բացուածք դրսում ու դէպի ներս բացուող եռանկիւն յատակագծով անցքեր:

Ճարժական կամուրջ




Օգտագործուել են հիմնականում Կիլիկիայի հայկական ամրոցներում: Դա պայմանաւորուած էր նրանով, որ Կիլիկիայի ամրոցներից շատերը, որպէս լրացուցիչ պաշտպանական միջոց, պարսպապատերի շուրջ ունեցել են պարագծային ջրախրամատներ, որոնց վրայ կառուցուել են շարժական փայտէ կամուրջներ: Վտանգի դէպքում կամուրջները վեր են քաշել ճոպանների ու ատամնաւոր անիվների համակարգերով՝ անհասանելի դարձնելով ամրոցի մուտքը թշնամու համար:

Որմնահեց




Ամրոցապատին դիմացկունութիւն տվող ուղղահայեաց ելուստ, որմնանեցուկ, որը, իր վրայ կրելով հիմնականում հորիզոնական հրող ուժերը, ամրացնում է հիմնական կրող կառուցուածքը: Հրող մեծ ուժերի դէպքում սովորաբար որմնահեցի հորիզոնական հատուածքի չափերը, դէպի հիմքը գնալով, մեծանում են: Պարսպապատի երկայնքով որմնահեցերի տեղընտրութիւնը բխել է ժայռազանգուածի տեղադրութիւնից եւ պատերի հատուածների գծային երկարութիւնից: Որմնահեցերը կառուցուել են ամրոցի պատի ողջ բարձրութեամբ ու եղել են հոծ, կիսակլոր կամ ուղղանկիւն հիմքով:

Որմնանցք



Ամրապատերի զանազան տեղերում պատի հաստութեան մէջ թողնուած եւ մէկ ընդհանուր հորիզոնական բարձրութիւն ունեցող քառակուսի անցքեր, որոնք առաջացել են քարէ պարսպապատը շարելու համար փայտէ տախտակամածի գերանների տեղերից: Դրանց հեռաւորութիւնը իրարից սովորաբար եղել է 1,5–2 մ:

Որմնաձորանցք




Նախատեսուել են թշնամու վրայ շիկացած հեղուկ կամ մանրաքարեր թափելու համար: Արուել են պարսպապատերի մէջ՝ մարտահարթակների մակարդակին, եւ արտաքուստ պաշտպանուել են քարէ կամ փայտէ վահաններով: Որմնաձորանցքերն արուել են նաեւ մուտքերի կամարակապ առաստաղներին՝ աննկատելի տեղերում:









Պահակ-աշտարակ

Տեղադրուել են հիմնականում մայրուղիների, առեւտրական ճանապարհների լեռնանցքներով անցնող մասերում՝ քարաւանային առեւտուրը կարգաւորելու եւ տուրք գանձելու նպատակով: Օգտագործուել են նաեւ ռազմական տեղաշարժերը գրանցելու եւ հսկելու համար:



Պահակակէտ

Ամրոցների հսկողութեան տակ գտնուող մուտքերի կողային աշտարակների ներսում տեղադրուած են եղել մշտական կայազօր ունեցող պահակակէտեր, որոնք հսկել են ամրոցի մուտքն ու ելքը:


Պարապետ

Ամրոցի պաշտպանական կարեւոր տարր. ընթացել է ամրոցապատի վերին երկարութեամբ՝ զուգահեռ մարտահարթակին, որտեղից կարելի էր հսկել շուրջբոլորը: Պարապետը յաճախ ունեցել է ատամնաշարեր, որոնք անհրաժեշտութեան դէպքում ծառայել են թաքնուելու, պատսպարուելու եւ երկու ատամնաշարի բաց արանքից մարտական գործողութիւններ վարելու համար: Ատամնաշարերի վերին նկարուածքը եղել է ուղղանկիւն, կիսակոր (նաեւ ուղղահայեաց առանցքով ելուստաւոր կամ կորի երկու հատուածները շրջուած դէպի ներս), եռանկիւնաձեւ եւ այլն:



Վանք-ամրոց

Հայկական լեռնաշխարհում կառուցուած շատ վանքեր ծառայել են ոչ միայն հոգեւոր կեանքի պահպանման ու զարգացման համար, այլեւ եղել են գիտութեան, արուեստի, մշակոյթի, կրթական օջախներ, որտեղ ուսանում էին կրօնի պատմութիւն, գիտութիւններ եւ ստեղծում էին հրաշալի մանրանկարներ: Այս պատճառով թշնամու՝ երկիր ներխուժելուց յետոյ վանքերը եղել են նրանց մշտական ուշադրութեան շրջանակներում եւ յաճախ ենթարկուել յարձակման, աւերի ու հրկիզման: Այդ պատճառով շատ վանքեր պարսպապատուել են ամրակուռ պատերով, աշտարակներով եւ ապահով դարպասներով: Վանք-ամրոցներն ունեցել են բերդերին յատուկ բոլոր տարրերը եւ մարտավարական սկզբունքներին համապատասխան շինութիւններ:



Ջրամբար

Ամրոցներում երկարատեւ գործունէութիւնն ապահովելու համար ամրոցի ներսում, մարտ վարելու պահանջներից բացի, անհրաժեշտ էր ունենալ կենցաղային բոլոր յարմարութիւնները տեւական ժամանակաշրջանի համար: Ջրի ապահովման հարցը եղել է առաջնային, այդ իսկ պատճառով բոլոր կարեւոր ամրոցներում անձրեւաջրերի հաւաքման համար կառուցուել են ջրամբարներ՝ գետնափոր, ջրհաւաք անկիւններում եւ ստուերոտ տեղանքում: Ջրամբարները կառուցուել են քարէ պատերով, յատակագծում եղել են շրջանաձեւ, կտրուածքում՝ գլանաձեւ, որոնց մակերեսը խնամքով ջրամեկուսացուել է սուաղով: Հաւանական է, որ արտաքին մակերեսը փակուած լիներ փայտէ մեծաղիր կափարիչներով:

Քաղաք-ամրոց


Քաղաք-ամրոցի միջնադարեան ամենահետաքրքիր օրինակներից է Անի բերդաքաղաքը: 963–964-ին Աշոտ Գ. Ողորմածն Անին կառուցապատում է Աշոտաշէն


պարիսպներով, որոնք շրջափակում էին շահաստանը: Անիի արագօրէն ընդարձակուող թաղամասերը պարսպապատելու նպատակով Սմբատ Տիեզերականի կառուցած Սմբատաշէն պարիսպները (2.500մ) Գայլաձոր–Իգաձոր հատուածում կրկնակի էին՝ 8–10մ բարձրութեամբ եւ արտաքին կողմից պաշտպանուած խորը, աւելի քան 500մ երկարութեամբ ջրով լի խրամով: ԺԱ–ԺԳ դարերում Սմբատաշէն պարիսպներն յաճախ նորոգել են Շադդադեանները եւ Զաքարեանները: Պահպանուած արձանագրութիւններից յայտնի է, որ աշտարակներ են կանգնեցրել Մամախաթունը (92-րդ աշտարակ), Շանուշէն (46-րդ աշտարակ) եւ ուրիշներ: Բոլոր աշտարակները, բացի Ծաղկոցաձորի եւ Գայլաձորի աշտարակներից, կլոր են: Դրանց մի մասը ներքուստ երկու–երեքյարկանի է եղել, որտեղ տեղաւորուել է պահակազորը: Աշտարակներն ունեցել են հրակնատներ եւ ատամնաւոր վերջաւորութիւններ: Անիի 40 դռներից իւրաքանչիւրն ունեցել է իր անունը: Ելումուտը կարգաւորելու եւ փողոցները մաքուր պահելու նպատակով ծանր բեռներով սայլերն ու կառքերը քաղաք են մտել առանձին դռներով: Արտաքին պարիսպների երեք մեծ մուտքերը՝ Կարուց, Դւնոյ, Աւագ, որոնց դռները երկաթագամ արտաքին երես են ունեցել, համարուել են անխորտակելի: Եղել են նաեւ դռնակներ: Միջնաբերդի բարձրադիր մասում տեղադրուած էր արքունի ընդարձակ պալատը, որը կրում էր շուրջ չորսդարեայ շինարարական գործունեութեան հետքեր: Պատմիչների նկարագրած ոսկեզօծ որմնանկարներով ձեւաւորուած 3.500–4.000 քառակուսի մետրանոց պալատի դահլիճներից մեզ են հասել չնչին մնացորդներ. երկար միջանցքը (50մ), որի արեւմտեան ծայրին, Ծաղկոցաձորի կողմից, բացուել է գլխաւոր մուտքը՝ պալատը բաժանելով երկու թեւի՝ հիւսիսային եւ հարաւային: հարաւային թեւում էր Կամսարականների *բագինիկ* եկեղեցին, որը դարձել էր պալատական համալիրի բաղկացուցիչ մասը: Հիւսիսային թեւի որոշ հատուածներ երկյարկանի էին. երկրորդ յարկում տեղադրուած էին հանդիսասրահները: Հիւսիս-արեւելեան սրահում եղել են գիպսէ յարդարանքի մասեր՝ որսի տեսարանով:



Քարաւանատուն

Մետաքսի ճանապարհին տեղադրուած Հայկական բարձրաւանդակով անցնող բազմաթիւ միջազգային եւ տեղական նշանակութեան առեւտրական ճանապարհների երկայնքին, իրարից այնպիսի հեռաւորութեամբ, որը քարաւանը կարող էր անցնել օրուայ լուսային ժամերին, կառուցուել են քարաւանատներ, որտեղ իջեւանել են քարաւանների անձնակազմը, ուղեկցողները՝ իրենց բեռներով եւ անասուններով: Քաղաքների եւ արհեստների զարգացման եւ ապրանքափոխանակութիւնը ապահովելու համար, քարաւանատները ունեցել են առաջնային նշանակութիւն: Քարաւանատների ու ճանապարհների երկայնքին գետերի առկայութեան դէպքում կամուրջների շինարարութեան ծրագրաւորումն ու շինարարութիւնը, կատարւում էր երկրի կառավարիչների՝ իշխանների որոշմամբ ու միջոցներով: Քարաւանատները յատակագծում եղել են միանաւ, եռանաւ կամ ուղղանկիւն ներքին բակով: Քարաւանատների ճարտարապետական յօրինուածքը պարունակում է նաեւ ամրոցներին իւրայատուկ տարրեր՝ անկիւնային աշտարակներ, ամրապատ դարպասներ, զենիթային լուսաւորութիւն, քանի որ յաճախ ենթարկուել են աւազակախմբերի յարձակումներին ու կողոպուտին:





631

Պատկ. 631
Լուսանկարում՝
Արա Չարեանը Բաղաբերդ ամրոցի
չափագրութեանը, 1984։

Խմբագիր	**Մովսէս Նաճարեան**
Վերստուգող խմբագիր	**Վիգէն Լ. Ադդարեան** (կամաւոր եւ սիրայօժար)
Արեւելահայերէն ոճաբան-խմբագիր	**Օֆելյա Միքայելեան**
Սրբագրիչ	**Աննա Ղազարեան**
Ձեւաւորում, էջադրում եւ կազմ	**Արա Զարեան**
Գեղագիտական վերստուգում	**Մարտին Զարեան Factory**[39]
Անգլերէնի Թարգմանութիւն	**Վիգէն Լ. Ադդարեան եւ Դոկտ. Վաչէ Ղազարեան**
Գծագրեր, չափագրութիւններ, քարտէզներ	**Արա Զարեան, Լեւոն Վասիլեան, Ռոբերտ Վ. Էդվարդս**
Հանոյթներ	**Գ. Սարգսեան**
Լուսանկարներ	**Արա Զարեան, Լեւոն Մկրտչեան, Ռոբերտ Վ. Էդվարդս, ՀԹՊ դիւան**

Հեղինակի հասցէն՝
Paolo Arà Zarian Doctor in Architecture
arazarian@gmail.com

ISBN 978-9939-976-41-9

© ԱՐԱ ԶԱՐԵԱՆ, 2026

Հ.Ք.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ԱՊՏԱԼԵԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիւ 1. **ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ «ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ»**, 1984
խմբագրութիւն՝ Վաչէ Ղազարեան

Թիւ 2. **ԷՋԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՄՏԱԾՈՒՄԷՆ**, 1986
հեղինակ՝ Դոկտ. Սեդա Պարսումեան-Տատոյեան

Թիւ 3. **ԳՈՅԱՊԱՅՔԱՐ**, 1987
հեղինակ՝ Ենովա Պետեան

Թիւ 4. **ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱԼԷՊԻ ՕԹԵԼ ՊԱՐՈՆԻ ԱՐՄԵՆ ՄԱՂԼՈՒՄԵԱՆԻ (ՊԱՐՈՆ) ՆԱՄԱԿԱՆԻՆ**, 1987
հեղինակ՝ Տոքթ. Թորոս Թորանեան

Թիւ 5. **ԱՐՄԵՆԻԱ, ՍՈՒԲԱՐՏՈՒ ԵՒ ՍՈՒՄԵՐ Հնդեւրոպական հայրենիքը եւ Հին Միջագետք**, 1988
հեղինակ՝ Մարտիրոս Գաւուքճեան

Թիւ 6. **ԲՐԻՏԱՆԻԱ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1915-1923**, 1994
հեղինակ՝ Դոկտ. Ագապի Նասիպեան

Թիւ 7. **ՎԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՐՈՇ ԵՐԳԱՅԻՆ ՆՄՈՒՇՆԵՐ**
(հեղինակի հաւաքածոյէն), 2015
հեղինակ՝ Պետրոս Յ. Ալահայտոյեան

Թիւ 8. **ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԳԱՆՁԱՐԱՆԸ**, ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ, 2016
հեղինակ՝ Հենրիկ Բախչինեան

Թիւ 9. **ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1915-1916**, 2017
խմբագրութիւն՝ Դոկտ. Վաչէ Ղազարեան

Թիւ 10. **ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹԻՒԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ**
(Վիճակագրական աղբիւրների համեմատական վերլուծութիւն), 2022
հեղինակ՝ Ռոբերտ Թաթոյեան

Թիւ 11. **ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ**, 2023
հեղինակ՝ Աշոտ Հայկազուն Գրիգորեան

Թիւ 12. **ՍԻՒՆԵԱՑ ԱՇԽԱՐՀԻ ԲԵՐԴԵՐԸ, Թ-ԺԴ ԴԱՐԵՐ**, 2026
հեղինակ՝ Դոկտ. Ճարտ. Արա Չարեան

Սկիզբ տպագրութեան՝ 23.04.2026
Աւարտ տպագրութեան՝ 30.04.2026
Տպաքանակ՝ 150

Տպագրութիւն՝ Օֆսեթ։
Չափսը՝ 64x90 1/6։
Ծաւալը՝ 86 տպ մամուլ։

Տպագրուել է «Տիգրան Մեծ» հրատարակչութիւն ՓԲԸ տպարանում

ՀՀ, 0051, Երեւան, Արշակունեաց, 2
Կայքէջ՝ www.tigran-mets.am
Printed in Armenia, 2026

ՍՅՈՒՆԻՔ

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ IX·XIV ԴԱՐԵՐՈՒՄ

ОБОРОНИТЕЛЬНАЯ АРХИТЕКТУРА СЮНИКА В IX·XIV ВВ.

Defensive Architecture of Syunik in the 9th-14th Centuries

Author: Architect Arà Zarian



ՄԵՅ ՀԱՅՏԻ ԹԱՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՐԸՆԴԵՐԸ

- ՄԱՅՏԱՔԱՂԱՔ
- ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ
- ԲԵՆԱՎԱՅՐԵՐ
- ԱՎԱՆՆԵՐ
- ԱՄՐՈՑՆԵՐ
- ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐ
- ՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ
- ԵՒ ՀԻՊԵԳՆԵՐԻ ՍԱ ՀՄԱՆՆԵՐ
- ԼԵՌՆԱՀԱՐՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ

ՍՅՈՒՆԻՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ՔԱՂԱՔՆԵՐ
- ԲՆԱՎԱՅՐԵՐ
- ԱՄՐՈՑՆԵՐ
- ՔԱՐԱՎԱՆՍԱՏՆԵՐ
- ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
- ԼԵՌՆԱՆՑՔԵՐ
- ԼԵՌՆԱՊԱՏԱԿՆԵՐ
- ԿԱՄՈՒՐՋՆԵՐ
- ՀԱՂՈՐԴԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ
- ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ
- ԶԱՎԱԽՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ
- ՀԱՂԹԵՐ 1 ՍԱՀ.ՓՈՍ

ՄԱՍՇՏԱԲ 1:200.000

ՔԱՐՏԵԶԻ ՀԵՂԻՆԱԿ ՀԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՐԻԱԶԱՐՅԱՆ
ԵՐԵՎԱՆ 1986 – ՄԻԱՑՈՒՄ 2026

About the Author

This study is not the first major work of Ara Zarian's academic and creative career. After graduating from the Faculty of Architecture at the Yerevan Polytechnic Institute in 1980, he worked at the "Armenian Restoration Project" Institute, contributing to the restoration of approximately 25 architectural monuments. His restoration projects include:

The 10th-century Kotavank Monastery Church
The 7th-century Makenis Monastery Basilica
The Vanevan Monastery Basilica (7th century)
The St. Gevorg Church and refectory of Dapnotsvank Monastery
The Holy Mother of God Church of Makravank Monastery (13th century)
The Solak Mayravank Church (13th century)
The Vorotnavank and Vahanavank Monastery complex es (7th–13th centuries)


In 1996, he earned a second Doctorate in Architecture from the University of Venice, focusing on "The Natural Environment of the Armenian Plateau and the Interaction of the Environment and Architecture." He is a member of the Chamber of Architects of Armenia and the Association of Architects of Veneto Region.

Since 1996, he has coordinated five editions of the Armenian Pavilion at the Venice Architecture Biennale and has organized several editions of photographic exhibitions in Italy showcasing the conservation and restoration of Armenian frescoes. He has also delivered numerous lectures on this subject in collaboration with Belgian fresco restorer Christine Lamoureux with whom he conducted research and participated in the restoration of mural paintings in the following churches:

Lmbatavank, 7th century
Mastara, 7th century
Karmravor, 7th century
Atik, 7th century
Haghbat Monastery, 10th-13th centuries
Dadivank Monastery, 13th century

Since 1995, he has led cultural trips to Armenia, Arsakh, and historical Armenian regions in Turkey, Iran, and Georgia, introducing Armenian history, archaeology, and architecture to Italian audiences. In 1997, he founded his architectural studio in Venice-Mirano.

Ashot Haykazun Grigoryan
Doctor of Architecture, Professor



ISBN 978-9939-976-41-9

9 789939 976419